ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ДУБЛЕТ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

3

A II 90558

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН 2002

Ժողովածուն տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյան
Խմբագրական կոլեգիա՝ պ. գ. դ. Է. Լ. Դանիելյան
պ. գ. թ. Ա. Ա. Մելքոնյան
պ. գ. թ. Կ. Հ. Խաչատրյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական հոդվածների ժողովածու/
ՀՀ ԳԱԱ- Եր., ՀՀ «Գիտություն»

Հ 282 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների երրորդ ժողովածուում տեղ են գտել հանրապետության երիտասարդ պատմաբանների ուշագրավ հոդվածները:
Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, հայագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Հ 0503020913 / 703/02/-2002 2002 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8080-0020-3
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002

ХАЧАТРЯН ЖОРЕС, МАРГАРЯН АСМИК

ЭРЕБУНИЙСКИЙ РИТОН СО ВСАДНИКОМ

Найденный у подножья цитадели урартского города Эребуни серебряный ритон с протомой в виде всадника на коне сразу же был отнесен к кругу ахеменидского искусства. Ярко выраженные характерные черты и форма сосуда, а также парадная поза и внешность наездника сразу же приводили ученых к известным образцам монументальной и мелкой пластики, изделиям торевтики ахеменидского придворного стиля V-IV вв. до н.э. При сравнительном анализе эребуинийского ритона с аналогичными культовыми сосудами, оказалось, что в типологическом отношении он значительно отличается от серии рогообразных сосудов ахеменидского времени и фактически, второго подобного ритона с цельной фигурой человека на коне и дополненного кубком, неизвестно. Первый исследователь этой находки Б.Н. Аракелян пишет, что в переднеазиатской художественной металлообработке ритон с протомой всадника встречается впервые[1] (рис. 1,2).

В ахеменидском искусстве известны две ведущие формы ритонов – конический сосуд с венчающей его головой животного, и ритон в виде рога с зооморфной протомой – то есть головой, передними лапами и передней половиной туловища. Эребунийскин ритон типологически близок ко второму виду рогообразных сосудов[2]. Однако при всей стилистической и типологической общности отдельных его форм, исследуемый сосуд сильно отличается от всех известных изделий этого вида не только ахеменидского времени, но и в дальнейшей эволюции этой формы кубкообразных ритонов эллинистического и сасанидского периодов.

Обращаясь к ахеменидскому изобразительному искусству (как придворного стиля, так и периферийных школ), мы замечаем, что в целом в нем крайне редко встречаются образцы объемных, скульптурно выполненных изображений человеческой фигуры. Ахеменидская монументальная каменная пластика представлена в целом рельефными изображениями известными по знаменитым памятникам Пасаргад, Суз, Персеполя, Накш-и-Рустама. Исключение составляют лишь единичные памятники, выполненные либо представителями других народов, либо под определенным влиянием стиля других культур. Это колоссальная фигура Дария из Суз, выполненная египетским мастером в египетском стиле и с египетской иероглифической -

---

[1] *Բ.Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, стр. 42.*

[2] *Формы иранских и ахеменидских ритонов см. в работе Р. Гиршмана. Notes Iraniennes XI. Le rhyton en Iran. Artibus Asiae, vol. 25, 1962.*

надписью на платье[1], а также голова знатного перса из собрания Стоклет-Фернан в Бельгии[2], выдающая определенное влияние классического искусства Греции. Мелкая объемная скульптура также известна по немногочисленным примерам из разных музеев мира – бронзовая фигурка мидийца из частного совраниия в Иране[3], лазуритовая фигурка мидийца со львенком в Кливленде, бронзовая голова царевича в Тегеране[4], а также фигурки из знаменитого Аму-Дарьинского клада[5].

Эревунийский ритон, фактически, не только дополняет ряд ахеменидских объемных, трехмерных скульптур, но является пока единственным среди них изображением мужчины на коне.

Цельная фигура сидящей лошади с подогнутыми передними и задними ногами постепенно переходит в пологий, длинный и узкий кубок с гладкими стенками. Подобное композиционное решение формы сосуда выбрано с целью трехстороннего обозрения и восприятия сидящей человеческой фигуры, которая является центром всей композиции, а длинный и высокий кубок при этом обеспечивает форму традиционного культового сосуда. Следует отметить, что в ахеменидской торевтике в отличие от строгой каноничности других видов искусства наблюдается определенная свобода выбора образов, сюжетов и композиционных мотивов. В сущности, мастер здесь распоряжается всем арсеналом древневосточного искусства, выбирая любые образы и переосмысливая их символику.

Мотив сидящих с подогнутыми передними и задними ногами парнокопытных животных – быков, козлов, лошадей со стоящей на ней человеческой фигурой и относящийся к овласти культовой символики, является одной из основополагающих схем древневосточного изобразительного искусства Месопотамии, Урарту и Хеттского царства. При внимательном и подробном анализе этого мотива выясняется, что поза сидящей лошади ритуально подогнутыми ногами и восседающей на ней мужской фигуры является одним из вариантов культовой схемы священного животного и божественного всадника. Этот овраз, а также стилистическое исполнение фигуры уводит исследователя в искусство Урарту, роль и традиции которого в формировании ахеменидского придворного искусства хорошо известны.

При сопоставлении известных образцов урартской бронзовой пластики, как например бога Халди на сидящем рогатом льве с ногами быка из Лувра (рис. 3), а также вога Тейщевы на выке из Нью-Йорка с эревунийским ритоном мы видим не только общий мотив человеческой фигуры на парнокопытном животном (независимо от позы человека – стоящей или сидящей), но и

---

[1] *В.Г. Луконин, Искусство древнего Ирана, М, 1977, стр. 71.*
[2] *Искусство древнего Востока, М, 1968, ил. 316а.*
[3] *М.А. Дандамаев, В.Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, М, 1980, рис. 24.*
[4] *Искусство..., ил. 316 б, 316 в.*
[5] *Аму-Дарьинский клад, каталог выставки, Л, 1979, рис. на стр. 34-40.*

поразительное стилистическое сходство как в трактовке пропорций коротких ног и низко посаженного корпуса животного, с акцентом на сравнительно широкую грудь, шею и голову животного. Как в урартских, так и в ахеменидской статуэтке налицо объемная, трехмерная верхняя часть фигур с переходом на невысокий рельеф в изображении ног, обозначенных на туловище животных. И в первом, и во втором случаях несмотря на трехмерную лепку фигур, взгляд зрителя удерживается на их двух профильных сторонах. Этот элемент является одним из основополагающих канонов древневосточного искусства, согласно которому статуи должны выли рассматриваться либо только фронтально, либо продольно с боковых сторон. В этой связи любопытно проследить еще одну стилистическую деталь в исполнении эребунийской статуэтки. Профильное восприятие наездника и коня усиливается изображениями геральдических пар козлов и быков на двух сторонах чепрака всадника, как вы повторяющих образ и стиль сидящего коня протомы (рис. 1).

Анализ мотива сидящей лошади невольно подводит нас к размышлениям исследователей о породе коня, изображенного на протоме ритона[1]. Несмотря - на определенные реалистические черты в исполнении фигуры и головы коня, однако трудно согласиться с высказанными мнениями об изображении той или иной породы низкорослых лошадей, которая прослеживается в коротких ногах, короткой прямой шее и низко посаженном корпусе. На наш взгляд, здесь налицо древневосточная каноническая схема изображения бога, героя, обожествленного царя или царственной персоны на животном с подобранными ногами, где фигура наездника своими размерами должна значительно превышать фигуру животного, в результате чего конь кажется низкорослым и - маленьким. Перед нами встает образ обожествленной особы из царского рода, который всей своей позой, внешностью и атрибутикой еще раз подчеркивает ритуальный характер самого предмета.

Возвращаясь к теме породы лошади, таким образом следует отметить, что проблема состоит не в реалистическом и натуралистическом исполнении той или иной породы, а в определении той художественной и идеологической концепции, в которой выполнена наша скульптура.

Касаясь мотива божественного всадника и его художественного исполнения, на этом примере еще раз хотелось бы подчеркнуть о значении и роли урартской культуры в формировании искусства Ахеменидского Ирана.

Предметом отдельного исследования является скульптура всадника. Присоединяясь к не раз высказанному и утвердившемуся мнению ученых о том, что здесь изображен высокопоставленных миднец, состояний при дворе ахеменидских царей, возможно сатрап, а также лицо, связанное родственными

---

[1] *Г.А. Тирацян, Культура древней Армении, Ереван, 1988, стр. 53; Ф. Тер-Мартиросов, Портрет Оронта, тезисы доклада «Հայոց պատմության և մշակույթի հարցեր»: Գիտական նստաշրջան, Երևան, 1997, стр. 6-37. Его же, Кубок ритон в виде всадника в мидийском костюме. Оронт I, в каталоге Armenie, Tresors de l'Armenie ancienne № 182.*

узами с царской фамилией, о чем свидетельствуют выгравированные орлы на двух сторонах круглой миднйской шапки[1], мы вновь обратимся к известным памятникам ахеменидского искусства, в частности рельефам Персеполя. Рельефы Персеполя разворачивают перед нами всю галерею образов ахеменидского двора и подвластных народов империи. Здесь социальный статус и этническая принадлежность изображенных переданы не только деталями вооружения, костюмов, головных уборов, причесок, но и канонически четким, строго иерархическим и последовательным распределением фигур в вытянутых длинными шеренгами композициях. Вот почему эти рельефы являются для нас незаменимым источником для наиболее полного иконографического и стилистического анализа нашей статуэтки.

При сопоставлении фигуры всадника мидийскими данниками бросается в глаза одинаковое, почти детальное совпадение в изображении костюмов и головных уборов. Эребунийский всаднк одет в короткий, едва доходящий до колен кафтан, подпоясанный узким кушаком. Из-под коротких рукавов кафтана видны длинные до запястий рукава нижней рубахи, окаймленные зигзагообразным кантом, а полы кафтана и его ворот украшены точечным узором. На нем суживающиеся штаны, украшенные косой клеткой и заправленные в мягкую обувь с перевязями. Костюм всадника, таким образом, в целом, с незначительными различиями соответствует персидско-иранскому комплексу одежды[2], который в свою очередь во всех элементах совпадает с мидийским, в котором предстоят мидийские данники с рельефов Персеполя. Здесь главный этнический показатель – это головной убор Общепризнанно, что круглые шапки, которую ми видим на нашем всаднике носили мидийцы. Шапка всадника не только полностью соответствует мидийскому образцу, но и в деталях повторяет ее формы, что нельзя проследить на персепольских барельефных изображениях. Так, благодаря ритону из Эребуни, точно устанавливается, что форма шапок и верхушек башлыков из плотного материала выла не чисто полусферической, но несколько сдавленной с боков, образуя наверху ребро от лба к затылку[3]. Следуя наблюдениям и исследованиям персидско-мидийского костюма по рельефам Персеполя и Накш-и-Рустама, уже с конца V-начала IV в до н.э. у персов возобладали мягкие башлыки, а жесткие, торчащие архаичные уборы остались лишь в комплексе царского костюма[4]. Такой жесткий головной убор, к тому же с отличительными эмблемами мы видим у эребунийского всадника, что в лишний раз подтверждает мысль о том, что перед нами

---

[1] *Г.А. Тирацян, Культура..., стр. 52-53, Բ. Ն. Առաքելյան, ук. соч., стр. 42.*

[2] *М.Г. Горелик. К этнической идентификации персонажей, изображенных на предметах Аму-Дарьинского клада, стр. 38 в сб. Художественные памятники и проблемы культуры Востока, М. 1985.*

[3] *М.Г. Горелик. ук. соч., стр. 41-43.*

[4] *Urartu. A metalworking center in the first millenium B.C.E. The Israel Museum, Jerusalem, 1991, рис. 6, 3 на стр. 280, 278.*

представитель высшей персидской знати, скорее всего сатрап. О том же свидетельствует петля на затылочной части шапки, через которую проходила налобная повязка и завязывающаяся узлом с двумя длинными концами на затылке, что мы видим у знатных мидийцев с барельефов Персеполя. Эти повязки Ксенофонт называет диадемами, которые являются отличительными знаками царя и его родичей[1]. Высокий социальный ранг всадника подчеркивается также коротким мечом акинаком, пристегнутым к поясу, богатством конского снаряжения, а также чепраком, представляющим совой дорогой ворсовый ковер, украшенный изображениями сидящих друг против друга козлов и быков, с подогнутыми ногами. Этот мотив также является характерным для ахеменидского искусства. Другим «ахеменидизмом» на чепраке считается бахрома в виде трехступенчатых вашенок. Этот чепрак находит прямые аналогии с ворсовым ковром из V Пазырыкского кургана на Алтае, а также с аналогичным орнаментом ковров на расписных сосудах в виде коня из Маку и Персеполя[2].

Профессор Будапештского университета Я. Харматта, в своем докладе, посвященном эревунийскому ритону, сравнивая одежду всадника с гладкой одеждой мидийцев с персепольских рельефов, высказал мнение о том, что украшения на одежде эребунийского вельможи указывает на высокий социальный ранг изображенной персоны, так как на одежде мидийских данников с Персеполя они отсутствуют[3]. На наш взгляд, вычленение именно этой детали в одежде не может выть характеризующей, так как подобная отделка штанов, боковых швов, плечевой одежды, вертикальных вставок на груди и спине узорчатыми тканями является неотъемлемой частью и обязательным элементом всего персидско-иранского комплекса одежды, как царской, так и одежды рядовых иранцев. Так например, подобный навор элементов можно увидеть на изображении рядовых персов-воинов па ворсовом ковре из Пазырыка[4] или серебряной фигурке наездника из Аму-Дарьинского клада[5]. Что же касается гладкой одежды мидийских данников, то весь комплекс персональных изображений отличается определенным унифицированным стилем, где основной акцент поставлен на овщих контурах и складках одежды, без выделения мелких элементов декорировки. Одежда самих придворных и гвардейцев персидского царя, которые могли быть как персами так и мидийцами, совершено не отличаются от одежды данников ни особой отделкой, ни богатством декорировки. Представители знати отмечены здесь только оружием

---

[1] *Ксенофонт, Киропедия, М., 1976, с. VIII, III, 10. М.Г. Горелик. ук. соч., стр. 41.*

[2] *Руденко. Искусство Алтая и Передней Азии, М., 1961. рис. 14, стр. 24. D. Stronach. Achemenid village I at Susa and the Persian migration to Fars. Iraq, XXXVI, 1974, стр. 244, пл. LIII 1-4.*

[3] *J. Harmatta. The Motive of the two eagles in Erebuni and in Nimrud. Dao., доклад прочитанный на втором международном симпозиуме по армянскому искусству в Ереване, 1976 году.*

[4] *Руденко. ук. соч. рис. 14.*

[5] *Аму-Дарьинский клад, рис. 7б на стр. 38.*

(акинаками, луками, копьями, щитами), покроем одежды – длиннополыми кандисами, характерными зубчатыми тиарами, а также занимаемым местом в композиционном построении длинных верениц человеческих фигур, где они возглавляют шеренги и ведут за руку предводителей делегаций подвластных народов[1]. Таким образом, сказанное приходит на помощь с тем, что в данном случае сама по себе узорчатая отделка одежды эребунийского сатрапа не может являться знаками отличия и признаками высокого сана.

Кроме украшений на одежде символами знатного происхождения здесь являются в первую очередь орлы на круглой шапке, акинак, а также некоторые другие детали в изображении сатрапа, о которых будет изложено далее. Что же касается гравированных деталей узора на одежде, то это скорее всего, можно отнести к области художественного стиля и манере, а также технических особенностей металлообработки. Мелкие детали на одежде, которые совсем не обязательно было передавать в камне, с мельчайшими подробностями передавались в драгоценных металлах и резных камнях. Примерами к сказанному могут послужить мельчайшие детали узоров одежды фигурок из Аму-Дарьинского клада, а также изображений на геммах греко-персидского стиля[2].

Особой статьей в иконографии эребунийского вельможи и символом его знатности является характерная стилизация бороды. Короткая заостряющаяся книзу борода изображена пятью выпуклыми горизонтальными рядами. Первый передан в виде спиралевидно закручивающихся аккуратных завитков, остальные четыре – вертикальными волнистыми линиями. Подобная стилизация в изображении бороды хорошо известный прием в древневосточном искусстве и является символом божества, царя или властителя. Длинная окладистая борода, подчеркнутая горизонтальными регистрами наравне с другими характерными символами являлась неизменным атрибутом и указателем божественного или царского ранга изображенный персоны. Достаточно вспомнить некоторые знаменитые произведения ближневосточной скульптуры, как например, бронзовую голову аккадского царя Саргона I (ок. 2300 г. до н.э.), изображения вавилонского царя Хаммурапи и бога солнца Шамаша на знаменитой стеле из Лувра (XVIII в. до н.э.), портрет ассирийского царя Ашшурнасирпала с алебастровой стелы из Нимруда (IX в. до н.э.), бородатых ассирийских шеду дворца ассирийских царей в Нимруде и т.д.[3] Хотелось бы особо подчеркнуть эту деталь в иконографии урартских богов и царей. По немногим сохранившимся предметам урартской объемной пластики, каменным рельефам, а также составляющим довольно значительное количество изображениям на бронзовых пластинах и поясах, можно заметить, что урартские мужские

---

[1] *Искусство древнего..., ил. 286-300.*

[2] *Аму-Дарьинский..., ил. на стр. 34, 35, 38, 50-64.*

[3] *M.-P. Fouchet. L' art de l'Egypte et du Moyen-Orient. Paris, Bruxelles, 1978, ил. на стр. 336, 337, 362, 363.*

божества отмечены не только каноническим набором определенных атрибутов (бык, лев, цветки и бутоны лотоса, ветки дерева, священное дерево, оружие и т.д.), определенной одеждой и головным убором, а также окладистой длинной бородой, изображенной горизонтальными рядами. В этом смысле очень характерна бронзовая фигурка верховного бога Халди, хранящаяся в Британском музее[1] длинная, доходящая до середины груди с прямо срезанным концом борода изображена в четыре ряда при помощи врезанных горизонтальных канавок.

Такую же стилизацию бороды мы видим у божества, поддерживающего крылатый солнечный диск и стоящую на быке (бог солнца Шивани), изображение которого сохранилось на многочисленных бронзовых пластинах, поясах, предметах вооружения и мелких вещах. Такую же бороду носят различные божества и фантастические существа, которыми украшены различные металлические предметы как культового значения, так и предметы вооружения[2].

Обращаясь к ахеменидскому дворцовому стилю, который наиболее полно отражен в рельефах царской резиденции Персеполя, мы замечаем, что длинную бороду с характерной стилизацией горизонтальными рядами носят только божества и царствующие особы[3]; Прочие же фигуры, как к примеру гвардейцы, прислужники, солдаты и данники в основном носят бороды на персидский манер, однако другой формы – короткие, заостряющиеся книзу и переданные сплошными рядами завитков или волнистых линий[4].

Подобную стилизацию мы видим у эревунийского всадника, которая однако короткая и заостряющаяся как например, прямые волосы вактрийцев или толстые гувы нубийцев мы можем охарактеризовать как передачу овщего этнического овлика, однако подчиненной единой художественной концепции и стилю. Черты индивидуализации нельзя заметить даже на лицах самих царей – Дария и Ксеркса, которых отличает от остальных лишь одежда, зувчатая корона, атрибутика царской власти, знаки божественной символики, как то знак Ахурамазды, поза и большие по сравнению с остальными фигурками размеры сидящего на троне царя.

Таким образом, рассмотрение всех этих изображений дает право утверждать, что на протоме ритона представлен обовщенный тип бородатого мужчины, чей высокий сан сатрапа отмечен богатством и разнообразием элементов и атривутов – оружием, головным убором, прической и костюмом, а

---

[1] *Пиотровский Б.Б., Искусство Урарту, Л., 1962, рис. 46.*

[2] *Urartu… рис. 29 на стр. 76. рис. 42 на стр. 86, рис. 48 на стр. 90. рис. 78 на стр. 111.*

[3] *См. E. Schmidt. Persepolis, t. I. Chicago, 1953. шеду на пропилеях Ксеркса, табл. 11; знак Ахурамазды на вост. воротах гл. залы ападаны табл. 79; Дарий и Ксеркс, рельеф трипилона. табл. 144-146; царь и два прислужника. табл. 194: борьба героя с чудовищем. табл. 195, 196; в гареме Ксеркса изображение сфинкса и т.д.*

[4] *M.-P. Foucher, ук. соч. рис. на стр. 404-405.*

также парадной позой на украшенном дорогим снаряжением коне. Одним словом, перед нами встает идеальный овраз знатного перса и государственного деятеля империи.

В свете вышесказанного и перечисленных деталей иконографического плана на кажется неубедительной попытка индивидуализировать эту персону и отождествить фигуру наездника с конкретной исторической личностью – сатрапом Армении Оронтом I, сыном вактрийского царя Арташира и зятем ахеменидского царя Артаксеркса II[1].

Стиль и манера исполнения эревуннйской статуэтки, как уже говорилось, характеризуются как чисто ахеменидскпн. Это относится не только к самому овразу сатрапа, который отличается парадностью позы и всеми деталями богатого убора. Он является фактически прямой цитатой с персепольских рельефов – школы для подражания многих художников. В то же время манера и некоторые детали ее исполнения выдают руку мастера периферийной школы.

При сравнении эревунийского ритона с немногочисленными образцами столичной школы, то обнаруживается, что наша статуэтка отличается довольно заметными нарушениями в пропорциях фигуры – большой тяжелой головы прями посаженной на короткий торс вез изображения шеи, коротких руках, плотно прижатых к телу, маленьких, почти схематических ладонях рук и ступней ног. Скованность позы и почти полное отсутствие движения придает статуэтке полную статичность. В этом плане ее можно сравнить с серебряной фигуркой наездника из Аму-Дарьинского клада[2], несмотря на то, что эревунийский ритон, тем не менее, отличается более свободной манерой и - высоким художественным уровнем, о чем свидетельствует сложность и цельность композиционной группы.

Весьма сложной задачей является уточнения ритона изготовления и выделение художественной школы. Учитывая место ее обнаружения – это центр XVIII сатрапии Ахеменидской империи, город Эревунн, некоторые характерные детали и черты, выдающие непосредственное влияние изобразительных традиций художественной металлооврвотки Урарту, то можно согласиться с мнением Б.И. Аракеляна о том, что ритон мог быть изготовлен в одной из мастерских северо-западного Ирана или самой Армении[3]. В этой связи нам вы хотелось подчеркнуть еще один факт. Из известных двенадцати металлических ахеменидских ритонов, шесть экземпляров найдено на территории исторической Армении, а остальные в северо-западном Иране, территории, непосредственно граничащих с Арменией. Указанные территории в период усиления военной мощи Урарту, часто находились в зоне его

---

[1] *Ф. Тер Мартиросов. ук, соч..*
[2] *Аму-Дарьинский..., рис. на стр. 38.*
[3] *Բ.Ն. Առաքելյան, ук. соч. стр. 52-53.*

политического и культурного влияния. Именно этим можно объяснить продолжение традиций художественной металлообработки в том регионе.

Далее, касаясь вопросов конкретной датировки эребунийского ритона, следует наиболее приемлемой считать первую половину IV в. до н.э. Предложенная нами такая датировка может быть подкреплена следующими аргументами. Об этом свидетельствует эклектичная форма сосуда, соединяющая в севе отдельную форму кубкоовразного рога с отдельной цельной скульптурной группой, что является признаком трансформации традиций в изготовлении ритонов[1]. Обращая внимание на это обстоятельство, следует подчеркнуть еще один немаловажные факт. Бесспорно, что этот сосуд, выбывающий из серии ритонов традиционной формы с зооморфной протомой, был выполнен по особому заказу с целью увековечения овраза на культовом сосуде и выл связан с идеей божественности власти и государства.

Во вторых довольно крупные размеры сосуда, значительно превышающие более ранние аналогичные ритоны, также свидетельствуют о том, что он изготовлен позднее V в. до н.э. Уже в эллинистическое время, во II-I вв. до н.э. на примере знаменитых костяных ритонов из Нисы можно убедиться, что - размеры ритонов значительно увеличивается. Длина рогов нисийских ритонов колеблется от 30-и до 60-и сантиметров, а емкость достигает полутора литров[2].

В третьих, на более позднюю датировку указывают гладкие, вез украшений стенки кубка, которые в более ранний период обычно бывают орнаментированы горизонтальными каннелюрами и растительным фризом из цветков и вутонов лотоса. Украшение вставками из камней на коленях передних ног лошади весьма необычно для ахеменидского искусства более раннего периода, когда вставками из цветных камней или смальты украшались глаза животного. Подовное перерождение и изменение восточной традиции декорировки камнями и пластами становится закономерностью уже в эллинистический период, в III-IV вв. до н.э., когда в подобном стиле украшалась вся поверхность изделия. Вышеуказанная особенность также может послужить очередным, четвертым аргументом в пользу датировки ритона I половиной IV в. до н.э. И наконец, сам факт обнаружения этого изделия ахеменидской торевтики вместе с двумя другими ритонами IV в. до н.э. в лишний раз подтверждают наши аргументации в пользу датировки фигурки сатрапа I половиной IV в. до н.э., то есть периода наибольшего расцвета провинциальных художественных школ и мастерских.

---

[1] *Такую эклетичную форму мы видим в каменном сосуде с подставкой в виде горных козлов, датирусмом авторами V-IV вв. до н.э., однако по нашему мнению, ее наиболее вероятной датировкой является I пол. IV в. до н.э. См. Искусство древнего... рис. 320.*

[2] *М.Е. Массон, Г.А. Пугаченкова, Парфянские ритоны Нисы. М., 1956, стр 5.*
В.Г. Луконин. Искусство..., ил. 91, 82, 84.

1

2

3

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. Բ. ՌԱՆՈՎԻՉԻ «ՀԵԼԼԵՆԻԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԾԱՐԾՎՈՂ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. Բ. Ռանովիչի հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում էր հին աշխարհի արվեստը և կրոնը, վաղ քրիստոնեության պատմությունը, արևելյան ստրկատիրության առանձնահատկությունները, հռոմեական կոլոնատի ծագման խնդիրները, ռազմական արվեստի պատմությունը և հին աշխարհի պատմության շատ այլ խնդիրներ, ինչը նրան հնարավորություն էր ընձեռում առածին երևույթները դիտարկել շարունակական զարգացումների համատեքստում, բացահայտել դրանց միջև առկա պատճառահետևանքային կապերը:

Ռանովիչը չցանկացավ ընդունել այն բացը, որ տեղ էր գտել հին աշխարհի պատմության շղթայում: Ալեքսանդր Մակեդոնացու հռչակավոր արշավանքները ներկայացնելուց հետո պատմաբաններն անմիջապես անցում էին կատարում անկում ապրած Հունական աշխարհի և Արևելքի նվաճմանը՝ «կենսունակ» Հռոմի կողմից, չխորանալով վերոհիշյալ անկման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների մեջ, ինչը տուրք էր հին աշխարհի պատմության մեկնաբանության իր դարն ապրած հեգելյան բանաձևին: Սակայն տասնամյակների ընթացքում բացահայտված հսկայածավալ և արժեքավոր հնագիտական նյութը, արձանագրությունները և պապիրուսները, ինչպես նաև պատմաբանների կատարած արժեքավոր վերլուծությունները լայն հնարավորություններ ստեղծեցին վերականգնելու համար հին աշխարհի պատմության այն անտեսված էջը, որն արտացոլում է շուրջ երեք հարյուրամյակների արժեքավոր պատմություն: Դրանք լույս սփռեցին ոչ միայն քաղաքական անցքերի, այլ նաև՝ ժամանակի ամենօրյա հասարակական-տնտեսական կյանքի ամենատարբեր կողմերի վրա. «Այսպիսով, էպիգրաֆիկայի և պապիրոլոգիայի ձեռքբերումների շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին գրելու համար ոչ՛ թե թագավորների և զորավարների, այլ՝ հելլենիզմի շրջանում ապրած և գործած բուն արտադրողների պատմությունը»:[1]

Ռանովիչը, հստակեցնելու համար սույն մենագրության մեջ իր առջև դրված խնդիրները, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի հին պատմության սեկտորին գրած նամակում նշում է. «... Ես ինձ համար խնդիր չեմ դրել տալ հելլենիզմի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության համակարգված, ամբողջական շարադրումը: Իմ խնդիրը եղել է այլ՝ հետազոտել հելլենիզմի պատմության օրինաչափությունները, որոշել հելլենիզմի տեղը և նշանակությունը հին ստրկատիրական հասարակության պատմության մեջ, հելլենիզմը ներգրավել հին ժողովուրդների պատմության զարգացման օրինաչափ գործընթաց: Այդ իմաստով իմ մենագրությունը որքան որ պատմական, նույնքան և՝ փիլիսոփայական բնույթի է: Այդ իսկ պատճառով էլ ես չեմ ձգտել շարադրման հավասարաչափության և ամբողջականության. ես մեծ ուշադրություն եմ հատկացրել մի քանի հատուկ հարցերի, պրոբլեմատիկ բնույթի թեմաների և ո-

---

[1] *А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, изд. АН СССР, Москва-Ленинград, 1950, стр. 5.*

րոշ դեպքերում սահմանափակվել եմ քաղաքական պատմության կարճամփոփ շարադրմամբ, որը հատուկ տեսական հետազոտություն չի պահանջում:
Ա. Ռանովիչ 5/ 1 1948թ.»:[1]

Մենագրության առաջին գլխում Ռանովիչն ընդհանուր առմամբ ներկայացնում է հելլենիզմի պատմության առանցքային հիմնախնդիրները. և դրանց տալիս մի շարք հետաքրքիր և գիտական արժեք պարունակող մեկնաբանություններ՝ հատկապես կանգ առնելով մի շարք հայտնի պատմաբանների կարծիքների գիտական քննադատության վրա:

Կարևորագույն խնդիրներից մեկը, որ կարելի է դիտարկել Ա. Բ. Ռանովիչի «Հելլենիզմը և նրա պատմական դերը» մենագրության ողջ շարադրանքում, հելլենիզմը որպես ժամանակի համաշխարհային գործընթաց դիտարկելն է, ինչպես նաև այն խնդիրները, թե որքանով էր գիտակցվում հելլենիզմի դերն ու նշանակությունն այն կազմակերպողների և իրագործողների իսկ կողմից. և ինչպիսի ազդեցություն ունեցավ այն մարդկության պատմության հետագա ողջ ընթացքի վրա: Ռանովիչն ընդգծում է . «... Այն (հելլենիզմը – նշումը մերն է) ընդգրկում է իր ժամանակի գրեթե ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Սիկիլիայից մինչև Հնդկաստան, Նուբիայից մինչև Բոսպոր և Սկյութիա, նրա ազդեցությունը արևմուտքում թափանցեց մինչև Իտալիա և Իսպանիա, արևելքում՝ մինչև Չինաստան: Կարելի է ասել, որ հելլենիզմի պատմությունը դա այն ժամանակի համաշխարհային պատմությունն է: Այստեղ ծնվեցին գաղափարներ՝ գիտական, փիլիսոփայական, էթիկական, կրոնական, որոնք դարերով իշխում էին աշխարհում: Նշանակալից տեղաշարժեր տեղի ունեցան տնտեսության, քաղաքական ձևերի, հասարակական գիտակցության, մշակույթի մեջ»:[2]

Ուշագրավ է, որ նմանատիպ մտքեր են ընդգծվում նաև Պոլիբիոսի աշխատություններում Հռոմեական կայսրության վերաբերյալ:

Քննադատելով «ի՞նչ է հելլենիզմը» հարցին Տառնի տված պատասխանը՝ ըստ որի հելլենիզմն ընկալվում է որպես զուտ մշակութային երևույթ, Ռանովիչն ընդգծում է , որ մշակույթն ինքը պահանջում է կյանքի նյութական պայմաններից բխող բացատրություն և շարունակում. «Ինչևիցե, շարադրման ընթացքում Տառնը կատարում է ոչ քիչ հետաքրքիր դիտարկումներ: Մասնավորապես հարկ է ընդգծել այն նշանակությունը, որ Տառնը հատկացնում է ստրկությանը: Նա հելլենիզմի արմատական տարբերությունը կապիտալիստական աշխարհից համարում է այն, որ հելլենիստական աշխարհը *"զուրկ էր մեքենաներից և լի էր ստրուկներով": "Տեսնելու համար հելլենիստական հասարակությունը, թե ինչպիսին է եղել այն իրականում, հարկ է ոչ մի ակնթարթ տեսադաշտից դուրս չթողնել նրա ստրկատիրական ատաղը" (the slave background):* Բայց այս թեզիսից Տառնը պատշաճ հետևություններ չի անում և այն չի զարգացնում»:[3]

Ռանովիչը պատմական մատերիալիզմի տեսակետից քննարկում է նաև Մեյերի, Խվոստովի, Ռոստովցևի մոտեցումները և փորձում մատնացույց անել դրանց միջև առկա հակասությունները չխուսափելով համաձայնվել նրանց կողմից առաջադրված ընդունելի տեսակետների հետ:
Գնահատելով այն փաստը, որ Ռոստովցևը, ի տարբերություն արևմտյան պատմաբաններից շատերի, իր «Հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[3]Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 12:

պատմությունը» ծավալուն աշխատության մեջ հելլենիստական աշխարհը դիտում է որպես քաղաքական և տնտեսական ամբողջություն, նկատում է մի շարք սկզբունքային բացթողումներ. «Չնայած իր ողջ աշխատանքի ընթացքում Ռոստովցևը տալիս է հելլենիզմի բոլոր փուլերում զանազան հելլենիստական պետությունների տնտեսական կյանքին և սոցիալական հարաբերություններին վերաբերվող մանրամասն տեղեկություններ, այնուամենայնիվ նա չի կարողացել հայտնաբերել և ցույց տալ ինչ-որ օրինաչափություններ, ի հայտ բերել հելլենիստական զարգացման հիմնական գիծը: Դա նրանից չէ, որ Ռոստովցևը չի զգում դրա անհրաժեշտությունը: Իր գրքում նա փորձում է առանձնացնել հիմնական առաջատար «գործոնները», իմաստավորել պատմական գործընթացը, ցույց տալ հելլենիզմի տնտեսական հիմքը: Բայց այդ խնդիրը վեր է նրա ուժերից իր ստեղծագործական հնարավորությունների բուրժուական սահմանափակության հետևանքով: Ինչպես և բոլոր բուրժուական պատմաբանները, Ռոստովցևը չի տեսնում հիմնականը. հասարակությունների զարգացումը որոշվում է արտադրողական ուժերի զարգացմամբ: Նա չի ըմբռնում սոցիալ-տնտեսական ֆորմացիաների մասին ուսմունքը, այստեղից առանձին երևույթները համակարգ մտցնելու, դրանց միասնությունն ապահովող տարբեր և հակասական գործոնների հետևելու, և ընդհակառակը՝ արտաքնապես նման երևույթների առանձնահատկությունն ու տարբերությունը նկատելու անկարողությունը»:[1]

Իհարկե, Ռանովիչի նման գնահատականը Ռոստովցևի գիտական հնարավորություններին խիստ վիճելի է, քանի-որ այն նույնպես զերծ չէ սուբյեկտիվ գաղափարախոսական հիմքից և ակնհայտ է կանխակալ վերաբերմունքը «բուրժուական պատմաբանների» նկատմամբ: Ռանովիչը վերջիններիս է վերագրում հին աշխարհի պատմությունը մոդեռնացնելու, ֆեոդալական և բուրժուական հարաբերությունները արհեստականորեն անտիկ աշխարհ տեղափոխելու արատավոր միտումները: Նա նկատում է, որ Տառնը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում հելլենիզմի ուսումնասիրության ընթացքում տեսադաշտից դուրս չթողնել ստրկության գոյության վճռորոշ փաստը, մինչդեռ Ռոստովցևը տարբերություն չի տեսնում ազատ և ստրկական աշխատանքների միջև: Ռանովիչը պատմաբաններից պահանջում է կիրառել եզակին ընդհանուրի մեջ դիտարկելու և պատճառահետևանքային կապերը բացահայտելու սկզբունքները պատմական իրադարձությունները վերծանելու պրոցեսում և քննադատում զուտ մեխանիկական մոտեցումը փաստերին. «Հնարավոր չէ հելլենիզմն ուսումնասիրել որպես պատմական դարաշրջան և հասկանալ այն իր ողջ ինքնատիպությամբ, առանց հաշվի առնելու այն հիմնական փաստը, որ հելլենիզմը փուլ է անտիկ ստրկատիրական հասարակության պատմության մեջ, որ այն, հետևաբար, չի ներկայացնում պատահականությունների ինչ-որ անքնին կցորդումներ, այլ եղել է անտիկ Հունաստանի նախորդ ողջ զարգացման պատմականորեն անհրաժեշտ արդյունքը՝ ստրկատիրական կարգին առանձնահատուկ օրինաչափություններով: Իհարկե հելլենիզմը շատ բան պահպանել է դասական շրջանից: Հելլենիզմն ինքը, չնայած ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում էր հասարակական շրջադարձ, բայց ոչ՝ հեղափոխություն, քանի-որ անձեռնմխելի թողեց հասարակության հիմնական կառուցվածքը և այն հարկ է ուսումնասիրել ստրկատիրական հասարկության հետ կապի մեջ ընդհանուր առմամբ»:[2]

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

Նկատենք, որ հելլենիզմը ոչ միայն անտիկ Հունաստանի, այլ նաև՝ անտիկ Արևելքի նախորդ ողջ պատմության պատմականորեն անհրաժեշտ զարգացումների արդյունքն էր, քանի-որ այն կայացավ Արևելքում ծավալվելու և դրսևորման հնարավորություններ գտնելու շնորհիվ: Ինչ վերաբերվում է այն խնդրին, թե հելլենիզմը հեղափոխություն չէր և անձեռնմխելի թողեց հասարակության հիմնական կառուցվածքը, ցանկանում ենք նշել, որ մեր կարծիքով այն նույնիսկ չէր կարող իր առջև նման խնդիրներ դրած լինել, քանի-որ հելլենիզմը սկիզբ առավ արիստոկրատիայի՝ հասարակության վերին խավի նախաձեռնությամբ (սկիզբը պայմանականորեն համարենք Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները), իսկ նրանք միշտ պահպանողական են եղել և չէին կարող սեփական սոցիալական դիրքերը վտանգող այնպիսի խնդիր առաջադրել, ինչպիսին հասարակության հիերարխիկ կառույցի բարեփոխումն է: Մեր կարծիքով հասարակական կառույցը փոխելու նպատակ հետապնդող հեղափոխությունները զգալի չափով հենվում են ոչ միայն տնտեսական գործոնների, ինչպես ներկայացնում է Ռանովիչը, այլ նաև՝ ցածր, շահագործվող խավերի ազատության ձգտման վրա: Հելլենիզմի ծավալման սկզբնական շրջանում ցածր խավերը մեծ դերակատարում չունեին, իսկ նրանք , ովքեր մասնակցում էին արշավանքներին, նոր պայմաններում գտնում էին իրենց սոցիալական խնդիրների լուծումը, հետևաբար իմաստ չէին տեսնում արմատական փոփոխությունների խնդիր առաջադրել:

«Պոլիսի քաղաքական ճգնաժամը գիտակցվեց ամենից առաջ: Սկզբում դա արտացոլվեց միայն փիլիսոփայական գաղափարներում և հրապարակախոսության մեջ՝ նախատեսված ստրկատեր դասակարգի նեղ շրջանի համար: Արդեն սոֆիստ Գորգիասը իր ելույթում հույներին համակարծության (omonoia), ընդհանուր թշնամու՝ պարսիկների, դեմ համախմբվելու կոչ արեց:

Արիստոտելը, որ պոլիսը համարում էր պետական կազմակերպության նորմալ և ճշմարիտ ձև, նշում է սակայն "Պոլիտիկայում" (IV, 6). "Հելլենականությունը կարող էր տիրել աշխարհին, եթե հասներ միասնական պետական կարգի": Իսկ Իսոկրատեսը Ֆիլիպ Մակեդոնացուն ուղղված իր ստեղծագործության մեջ նրան արդեն ուղղակիորեն կոչ է անում դառնալ միջնորդ դատավոր բոլոր հունական գործերով:

Զենոն ստոիկի մոտ միասնության գաղափարը, և ոչ միայն հույների, այլև ողջ մարդկության, ընդունեց սոցիալական ուտոպիայի բնույթ. Պլուտարքոսի խոսքերով. "ստոիկների դպրոցի հիմնադրի զարմանքի արժանի պոլիտիան հանգեցնում է այն բանին, որպեսզի մենք ոչ թե ապրենք պոլիսներով և դեմերով, ամենքս տարբերվելով մեր հատուկ օրենքներով (dikaiois), այլ որպեսզի մենք բոլոր մարդկանց համարենք դեմոտներ և քաղաքացիներ, որպեսզի լինի կյանքի մեկ ձև և կարգ(kosmos), նման այն բանին, ինչպես հոտն ընդհանուր օրենքներով օգտվում է ընդհանուր արոտից" (de fort. Alex. I, 6)»:[1]

Մատնանշելով մի շարք այլ հեղինակների համահունչ մտքեր՝ Ռանովիչն ընդգծում է, որ դրանք հիմք հանդիսացան, որպեսզի Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա հաջորդներին վերագրվեր միասնական համաշխարհային մշակույթի ստեղծման նպատակով Արևելքի և Արևմուտքի միավորման գիտակցված ծրագիր: Պատասխանելով Պլուտարքոսից մեզ հասած այն կարծիքին, թե Ալեքսանդրը, մի կրատերի մեջ խառնելով մարդկանց բոլոր ծագերից, խառնեց կենցաղը և բարքերը, ամուսնությունները, կարգադրեց հայրենիք համարել տիեզերքը, հելլենակա-

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 21:*

նությունն ընդունել որպես առաքինություն և բարբարոսությունը արատ, կատարում էր աստծո կամքով իրեն վերագրված կազմակերպչի և հաշտեցնողի դեր, Ռանովիչն արդարացիորեն գրում է. «Հազիվ թե Ալեքսանդրն իսկապես հստակ ձևակերպել էր այն խնդիրները, որոնք նրան է վերագրում Պլուտարքոսը, սակայն Ալեքսանդրի նվաճումների օբյեկտիվ արդյունքները հենց այդպիսին էին: Ընդհանրապես հարցն այն մասին, թե ի՞նչ չափով էր Ալեքսանդրը գիտակցաբար ստեղծում պատմությունը, չի կարող վերջնականապես վճռվել: "Պատմություն Ալեքսանդր Մեծի" իր առաջին աշխատությունում Ի. Դրոյզենը հայտարարում է. "Ալեքսանդր անունը նշանավորում է մի համաշխարհային դարաշրջանի ավարտը և նորի սկիզբը": Գրեթե նույնն է ասում Ու. Վիլկենը... Դրա հետ կարելի է համաձայնվել, եթե "Ալեքսանդրի կյանքի գործի" տակ հասկանանք նրա գործունեության օբյեկտիվ հետևանքները ընդգրկված այն ժամանակի պայմանների շրջանակների մեջ, որն առաջ քաշեց և ստեղծեց Ալեքսանդրին: Բայց Վիլկենը, ինչպես նաև Ալեքսանդրի մյուս երկրպագուները, հակված է հելլենիզմը վերագրել Ալեքսանդրի անձնական հանճարին և նրա պատմական հեռատեսությանը, իսկ նման պնդման համար տվյալներ չկան»:[1]

Ռանովիչը համերաշխություն է հայտնում Ֆ. Միշչենկոյի հետ այն խնդրի շուրջ, որ Ալեքսանդրի և իր հաջորդների գործունեությունը կառուցված չէր հեռագնա ծրագրերի հիմքի վրա և հանդիսանում էր օբյեկտիվ զարգացումների տրամաբանական արդյունք: Նա անիմաստ է համարում գուշակություններ անել այն հարցի շուրջ, թե ինչպիսին կլիներ իրադարձությունների հետագա ընթացքը, եթե մ.թ.ա. 336թ. չսպանվեր Ֆիլիպ երկրորդը և Ալեքսանդրը չղեկավարեր արշավանքը դեպի Արևելք: Կարևոր է այն, որ Արևելքի նվաճման խնդիրը մտել էր օրակարգ և Ալեքսանդրը տվեց դրա հաջող լուծումը: Մեր կարծիքով, հակառակ դեպքում ժողովրդավարական կարգեր ստեղծած մի ժողովրդի դժվար կլիներ առաջնորդել դեպի հաղթանակ, եթե Արևելքի նվաճման խնդիրը տասնամյակների ընթացքում (գուցե և ավելի երկար) խմորված չլիներ այդ ժողովրդի ներքին ինքնագիտակցության տարբեր շերտերում: «Անաբասիսը» նույնպես հետաքրքիր փաստեր է ներկայացնում այս տեսակետից:

Ի հակադրություն վերոհիշյալ պնդումների, Ռանովիչը համերաշխություն է հայտնում Ժուգեի այն տեսակետին, ըստ որի Ալեքսանդրն ամենևին էլ չէր ցանկանում հելլենիզացնել բոլոր բարբարոսներին, այլ իր տերության մի շարք շրջաններում, որտեղ նա ինքը ցանկանում էր լինել արևելյան բռնապետ, անձեռնմխելի թողեց պետական կառույցները և այդ կերպ էին վարվում նաև նրա հաջորդները: Ուստիև սա մեզ ենթադրելու հիմք է տալիս, որ Ալեքսանդրի նպատակը ոչ թե համաստեռ հսկայածավալ պետության ստեղծումն էր, այլ նա պարզապես կարողանում էր արդյունավետ կերպով արձագանքել իր ազդեցությունն ընդլայնելու հնարավորություն ենթադրող իրավիճակներին: Ալեքսանդրի մահից հետո ստեղծված անորոշ վիճակը նույնպես, մեր կարծիքով, խոսում է նրա օրոք երկար ժամանակի համար նախատեսված ընդհանուր ռազմավարական գծի բացակայության մասին:

Ռանովիչն արդարացիորեն ընդգծում է հելլենիզմի ունեցած կարևոր էթնոգրաֆիկ դերը, քանի-որ այն ապահովեց հունական աշխարհի միմյանցից գրեթե մեկուսացած շրջանների, ինչպես նաև՝ Արևելքի ժողովուրդների միախառնման գործընթացի իրականացումը, ինչը թույլ տվեց հաղթահարել դեռևս տոհմատիրա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 22:

90558

կան և ցեղային կարգերից եկող վերապրուկները. «Հելլենիզմի և իր մշակույթի պատմական նշանակությունը հիմնականում նրանում է կայանում, որ այդ շրջանում մարդն ավելի է կտրվում "տոհմատիրական կապերի պորտալարից", որ տեղի է ունենում, թեև ամենևին էլ չի ավարտվում, էթնիկական, կրոնական, համայնքային, պոլիսային պարփակվածության, մեկուսացվածության հաղթահարման գործընթացը, և ավելի ու ավելի ակնհայտորեն է ուրվագծվում հասարակության դասակարգային բևեռացումը, ուժեղանում և սրվում է դասակարգային պայքարը:

Գրականության մեջ վեճեր են տարվում այն հարցի շուրջ, թե ու՞մ է պատկանում "համակարծության" (omonoia) գաղափարի առաջնությունը՝ Ալեքսանդր Մակեդոնացու՞ն, թե՝ փիլիսոփաներին, հիմնականում՝ ստոիկներին»:[1]

Հելլենիզմի արդյունքում հստակ ձևավորվեց համահունական լեզուն koine-ն, որը դարձավ հիմնական կիրառական լեզուն, թեև դասական լեզուն մնում էր կիրառության մեջ՝ հիմնականում գիտական շրջաններում: Այն կիրառելի դարձավ նաև Արևելքում և դրանով արևելյան ժողովուրդներն իրենց ավանդն էին բերում հելլենիստական մշակույթի գանձարանին: Այսուհանդերձ, Ռանովիչն արձանագրում է. «Ինչպես տնտեսության և քաղաքականության բնագավառներում, այնպես էլ մտավոր կյանքում հելլենիզմն ավարտին չհասցրեց այն հիմնական դրույթները, որոնք ուրվագծվել էին Ալեքսանդրի նվաճումներից հետո: Մի կողմից՝ հունական մշակույթը բավականին զորեղ էր ոչ միայն այն բանի համար, որ հակադրվեր Արևելքի մշակույթին, այլ նաև՝ Հռոմի իշխանության ներքո պահպանվելու և բյուզանդական մշակույթի հիմքը դառնալու համար: Մյուս կողմից՝ նաև Արևելքի երկրները՝ Սիրիան, Պաղեստինը, Արաբիան, Պարթևստանը, Հայաստանը, նույնիսկ Եգիպտոսը, ներծծված չէին հելլենիզմով, այլ պահպանում էին իրենց նախասկզբնական գծերը, իրենց լեզուները, կրոնները, պատմական ավանդույթները: Մանեթոնը գրում է հունարեն լեզվով, բայց իր՝ եգիպտական ժողովրդի պատմությունը: Պարթևստանում և նույնիսկ Հնդկաստանում հատվում է հունական տիպի և նույնիսկ՝ հունական լեգենդով դրամ, բայց այս երկրները պահպանում են իրենց քաղաքական անկախությունը և յուրացնում են հելլենիզմի ժառանգությունը, որպեսզի ստեղծեն և զարգացնեն իրենց մշակույթը»:[2]

Ռանովիչը պնդում է, թե տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքում փոփոխությունները ամուր և խոր չէին և չէին կարող լինել, քանի-որ ստրկատիրական համակարգի ճգնաժամի լուծումն իր հելլենիստական փուլում կարող էր միայն կարճատև լինել և հանգեցրեց նոր ճգնաժամի: Այդ պատճառով էլ մշակույթի բնագավառում շատ բան ուրվագծվեց, սակայն չհասցվեց ավարտին:

Մեր կարծիքով, Ռանովիչն անտեսում է այն փաստը, որ հելլենիզմի հիմնական գործընթացները, ինչպես վերը նշել ենք, հիմնականում ընթացք էին ստանում արիստոկրատիայի՝ ստրկատեր դասակարգի, նախաձեռնությամբ, հետևաբար այն չէր կարող հասարակական հիերարխիայում իր բարձր դիրքին սպառնացող այնպիսի նպատակներ առաջադրել, ինչպիսին նոր հասարակական-տնտեսական ֆորմացիայի ստեղծումն էր: Ընդ որում, չենք մերժում այն տեսակետը, թե հնարավոր է, որ հելլենիզմը դրա համար հանդիսանում էր չգիտակցված նախապատրաստ[illegible] փուլ, գուցե ռեֆորմ, բայց ոչ երբեք՝ հեղափոխություն:

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 340:*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 34:*

Հեղինակը շարադրանքի ողջ ընթացքում հստակ մատնանշում է, որ հելլենիզմի ձախողման հիմքում ընկած էր երկու հիմնական գործոն, առաջինը ստրկատիրությունն էր, երկրորդը հունական պոլիսն իր սահմանափակ հետաքրքրություններով և կաղապարված քաղաքական կառույցով. «Հելլենիզմը պետության այլ ձևեր էր հաստատում արևելյան բռնապետության և հելլենական պոլիսի փոխարեն: Սակայն հելլենիստական միապետություններն Արևելքում, Մակեդոնական կոալիցիան, Աքայական և Էտոլիական միությունները Բալկաններում չվերացրին հունական պոլիսն իր նեղ հետաքրքրություններով: Ինքը՝ Արևելքի հելլենիզացման գործընթացն իրականացվում էր պոլիսների կազմակերպման ճանապարհով: Իհարկե, դրանք անկախ քաղաք-պետություններ չէին, այլ միայն մեծ կամ փոքր ինքնավարությամբ օժտված քաղաքներ, բայց դրանց գոյությունը քաղաքացիներին կապում էր պոլիսի դեռևս հին հաստատությունների հետ, նպաստում էր տեղական հայրենասիրությանը, որը բուն հասարակական կյանքի բացակայության հետևանքով ընդունում էր անճոռնի ձևեր, իսկ նոր քաղաքներում և հունամակեդոնական գաղութներում հունական նոր բնակիչները երկար հարաբերություններ էին պահում հայրենիքի հետ, ստեղծում հայրենակցական միություններ, պաշտամունքային միավորումներ և այլն»:[1]

Ռանովիչը պոլիսների անկմանը զուգահեռ դիտարկում է նաև դրանց աստվածությունների անկում և մեջ բերում Պ. Վենդլանդի տեսակետը. «Էթնիկապես սահմանափակված աստվածները կիսում էին իրենց ժողովուրդների ճակատագիրը»: Քաղաքական զարգացումներին զուգահեռ կրոնի նկատմամբ վերաբերմունքն, ըստ Ռանովիչի, ևս զգալի որակական փոփոխություն է կրում, ինչի արդյունքում անհատն աստվածներից խնդրում է ոչ թե հարազատ պոլիսի կամ երկրի բարեկեցություն, այլ՝ սեփական անձի փրկություն: Այսպիսով՝ Ռանովիչը հելլենիզմը հռչակում է կրոնական որոնումների ժամանակաշրջան, որտեղ ընդգծված էր միտումը առ միաստվածություն և նշում, որ այսուհանդերձ. «...Միասնական կրոնի ստեղծման համար հելլենիստական աշխարհը չէր տիրապետում բավարար տնտեսական և քաղաքական միասնության:

Հելլենիզմը բավարար հիմքեր չուներ համաշխարհային կրոնի ստեղծման համար, սակայն այն նախադրյալներ ստեղծեց դրա առաջացման համար, և քրիստոնեությունն իր ծագման փուլում, արդեն Հռոմեական կայսրության պայմաններում, ակնհայտորեն պատրաստ տեսքով, ուներ համաշխարհային կրոնի գրեթե բոլոր հիմնական տարրերը»:[2]

Մենագրության ողջ ընթացքում հատկապես շեշտադրվում է այն միտքը, թե հելլենիստական պետությունների թուլության հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ արտադրության հիմքը մնում էր նախկինը՝ ստրկական աշխատուժը. «Ստրկությունը սահմանափակում է արտադրության ծավալները և աճի տեմպերը, որն ըստ էության մնում էր բնատնտեսական, աշխատանքի հասարակական բաժանումը գոյություն ուներ լոկ սաղմնային տեսքով: Այդ պատճառով էլ առևտուրը Հին աշխարհում կրում է մեծ մասամբ միջնորդային բնույթ և դրա աճը եզակի դեպքերում է ուղեկցվում արդյունաբերության զարգացմամբ (Կորնթոսում և Փոքր Ասիայի որոշ քաղաքներում): Այս պայմաններում գործուն տնտեսական միասնության ստեղծումը, որը կխթաներ արտադրության ընդլայնումը, անհնարին էր. դրա համար պահանջվում էր արտադրության ստրկատիրական ձևի վերա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 30:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

ցում, այսինքն՝ արմատական սոցիալական հեղաշրջում, ինչին ընդունակ չէր հելլենիզմը (պատճառների մասին վերը հայտնել ենք մեր տեսակետը – նշումը մերն է): Ստրկատիրական հասարակության տնտեսության նոր ձևի արդյունքներն արտացոլվեցին առևտրի բնագավառում, սակայն այդ հասարակության արմատական թերություններն ուժի մեջ մնացին արտադրության բնագավառում»:[1]

Ռանովիչն արդարացիորեն հելլենիզմը համարում է անտիկ ստրկատիրական հասարակության կրկնություն առավել բարձր աստիճանում և պնդում է որ այն չլուծեց և չէր էլ կարող լուծել որևէ սոցիալական հակամարտութուն՝ չհարցնելով, արդյո՞ք այն իր առջև դրել էր նման խնդիր: Հելլենիզմի ծավալման գործընթացում Ռանովիչը թերագնահատում է Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքում ձևավորված կացությունը և երևույթը ներկայացնում որպես միայն Հին Հունաստանի պատմական զարգացման տրամաբանական և անհրաժեշտ արդյունք: Սակայն հարկ է ընդգծել այն անուրանալի փաստը, որ հելլենիզմը դրսևորման և իրագործման ասպարեզ գտավ միայն և միայն Արևելքի ընձեռած հնարավորությունների հաշվին:

Անդրադառնալով հելլենիստական մշակույթին՝ հեղինակը քննադատում է այն պատմաբաններին, որոնք հիմք ընդունելով հելլենիստական պետությունների համեմատությամբ հելլենիստական մշակույթի առավել տևական գոյությունը, գտնում են, որ հելլենիզմի կողմից ստեղծված մշակութային արժեքների մեջ էլ հենց կայանում է նրա բուն էությունը: Մինչդեռ ինքը՝ Ռանովիչը, հելլենիզմի հիմքում տեսնում է Արևելյան Միջերկրածովքի ստրկատիրական հասարակությունների տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքում տեղի ունեցած լուրջ փոփոխությունները, միաժամանակ հաստատելով. «Մշակույթի բոլոր բնագավառներում հելլենիզմը նշանավորում է համաշխարհային նշանակության պատմական շրջադարձ: Շատ բաներ միայն ուրվագծված էին. հելլենիստական տնտեսությունը պայմաններ չստեղծեց դասական ժառանգության վերջնական մշակման և դրա հիման վրա նոր միասնական աշխարհայացքի, ամբողջական ներդաշնակ մշակույթի ստեղծման համար: Ստրկատիրական հասարակության հակամարտությունները շատ արագ արտահայտվեցին վերելքի կարճ շրջանից հետո և հանգեցրին այն բանին, որ զարգացումն ընթանում էր ջղաձիգ տեմպերով՝ կարճատև թռիչքներով և անկման երկարատև շրջաններով. որոշ բնագավառներում փիլիսոփայություն, գրականություն, անկումը խրոնիկական բնույթ ստացավ: Սակայն, ընդհանուր առմամբ, հելլենիստական մշակույթը դա մի նոր փուլ է մարդկության մշակութային պատմության մեջ, որն ազդել է դրա հետագա ողջ ընթացքի վրա»:[2]

Ա. Բ. Ռանովիչի «Հելլենիզմը և նրա պատմական դերը» մենագրության մեջ գիտական խորությամբ ներկայացված են մի շարք կարևոր խնդիրներ, այդ թվում հելլենիզմը որպես ժամանակի համաշխարհային պատմություն դիտարկելու, հելլենիզմի ճգնաժամի հիմքում ստրկատիրությունը և պոլիսի սահմանափակությունը տեսնելու, հելլենիզմը ոչ միայն որպես մշակութային, այլ առաջին հերթին՝ որպես հասարակական-տնտեսական և քաղաքական երևույթ ըմբռնելու, հելլենիզմի և կրոնի փոխազդեցության, դրա արդյունքում Արևելքի մարդու հոգևոր ազատագրման, անհատի և պատմական գործընթացների փոխհարաբերության և այլ կարևոր խնդիրներ, սակայն աշխատանքում առկա է նաև կանխակալ վերա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 337:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 38:

բերմունք "բուրժուական պատմաբանների" նկատմամբ, ակնհայտ է նրանց կարծիքն առանց լուրջ վերլուծության պիտակավորելու միտումը: Ընդգծված է նաև Ռանովիչի ձգտումը՝ պատմական գործընթացներն իմաստավորել մարքս-լենինյան փիլիսոփայության տեսանկյունից, ինչի արդյունքում նվաստացվում է անհատի դերը պատմական գործընթացներում. «Բուժուական պատմաբանները չեն կարողանում բացահայտել հելլենիստական պետությունների անկման օբյեկտիվ պատճառները նրա համար, որ նրանք անտիկ հասարակությունը պատկերացնում են կապիտալիստական հասարակության տերմիններով և կատեգորիաներով: Այդ պատճառով նրանք հելլենիստական պետությունների կործանման պատճառները փնտրում են դրանց տիրակալների բարոյական այլասերման, չարանենգության, կամ ընդհակառակը՝ Հռոմի նախախնամական դերի, հելլենների «ոգու» անկման, կամ այլ անբացատրելի բարբաջանքի մեջ: Մինչդեռ անտիկ հասարակությունները կործանվում են արտադրության ստրկատիրական ձևի ներքին հակամարտության արդյունքում»:[1]

Ամփոփելով իր արժեքավոր, հետաքրքիր և աննախադեպ մենագրությունը՝ Ռանովիչն, ի հակադրություն Պլուտարքոսի այն կարծիքի, թե հելլենիզմն «Արևելքի» և «Արևմուքի» պարզ միախառնում է, գրում է. «Որակական փոփոխություններ տեղի ունեցան հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Թեև Ալեքսանդրին և դիադոքներին չհաջողվեց ստեղծել ամուր միասնական պետություն, որը կընդգրկեր ողջ Արևելյան Միջերկրածովքը, այնուամենայնիվ նրանք ստեղծեցին տնտեսական ու քաղաքական միավորման մինչ այդ անհայտ, նոր ձև: Հունական պոլիսն իր տնտեսական ինքնաբավությամբ և քաղաքական անկախությամբ, ստրկատիրական հարաբերությունների աճն արգելակող, կարծրացած գյուղական համայնքի վրա հիմնված արևելյան բռնապետությունները, որպես հասարակության առաջատար ձևեր, հեռանում են ասպարեզից: Առաջանում են նոր պետություններ, որ չէին հանդիսանում ո՛չ պոլիսներ, ո՛չ բռնապետություններ, դուրս էին գալիս տնտեսական սահմանափակության շրջանակներից, փորձում ընդլայնել արտադրությունը և ամրացնել ստրկատեր դասի դիրքերը ստրկական աշխատանքի կիրառման ոլորտի ընդլայնման ճանապարհով, համայնատիրական կարգի և համայնական հողատիրության սահմանափակման ճանապահով, տնտեսական կյանքի կազմակերպմանն անմիջականորեն միջամտելու ճանապարհով: Դրանում է կայանում Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների, դիադոքների պատերազմների և հելլենիստական միապետությունների արտաքին և ներքին քաղաքականության օբյեկտիվ իմաստը և նշանակությունը»:[2]

Այսպիսով, Ռանովիչը նկատում է մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ հելլենիզմի դարբնոցում ձևավորված տնտեսական ու քաղաքական միավորման նախադեպը չունեցող ձևի ստեղծումը, որի օրինակով և հիման վրա հետագայում ստեղծվեցին մի շարք հսկայածավալ կայսրություններ: Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ կարող ենք ասել, որ մշակութային հզոր ժառանգությանը զուգահեռ, հելլենիզմն իր մեջ կրում է նաև հետագա հարյուրամյակներում ծավալվելիք համաշխարհային քաղաքական գործընթացների սաղմերը:

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 337:*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 336:*

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ (10-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

9-րդ դարում վերականգնված հայկական ինքնուրույն պետականությունը, թշնամաբար տրամադրված արաբա-բյուզանդական քաղաքական մրցակցության պայմաններում, չէր կարող կայուն լինել, քանի որ այն հիմնականում ուղղված էր Հայաստանի քաղաքական մասնատմանն ու թուլացմանը: Արդյունքում` պետականության գլուխ կանգնած Բագրատունյաց հարստության թագավորները ստիպված էին պարբերաբար պայքար մղել Հայաստանի հզորացմանը խոչընդոտող թշնամական տերությունների կողմից հովանավորվող կենտրոնախույս ուժերի դեմ: Սակայն, այնուհանդերձ ստեղծվեցին հայկական մի շարք իշխանություններ, որոնք աստիճանաբար ձեռք էին բերում թագավորության կարգավիճակ: Դրանց շարքին էր պատկանում Աղվանքի կամ Հայոց արևելից կողմերի իշխանությունը, որի գլուխ կանգնած Բագրատունիները ևս ձեռք էին բերել թագ կրելու իրավունք, հանձինս Համամ Արևելցու[1]:

Քաղաքական այս մասնատումը, բնականաբար, լուրջ վտանգ էր ներկայացնում նաև եկեղեցական հաստատության համար: Սակայն, ինչպես վկայում են պահպանված փաստերը, Հայոց կաթողիկոսությունն իր բոլոր հնարավորություններով շարունակում էր պայքարել Հայոց եկեղեցու ներսում երբեմն դրսևորվող մասնատողական փորձերի դեմ:

902 թվականին վախճանվում է Հովհանը և կաթողիկոս է ձեռնադրվում Սիմեոն Բ-ն` Աղվանից կաթողիկոսարանի եպիսկոպոսը: Առկա բոլոր աղբյուրները դրականորեն են խոսում Սիմեոն Բ կաթողիկոսի գործունեության վերաբերյալ: Պատմագիրը համառոտակի հետևյալն է նշել. «...առաւել զարդարեաց սպասիւք զՍուրբ խաչն»[2]:

Ստ.Օրբելյանը Տեր Սիմեոնի մասին հիշատակում է «Տաթևի շրջակա սահմանների «մասին վավերագրի կազմման հետ կապված, որ տեղի է ունեցել»- հայոց երեք հարյուր հիսունհինգ թվականին»[3]: Սյունյաց հոգևոր թեմի համար պատմական նշանակություն ունեցող այդ փաստաթղթի տակ ստորագրել են. «Ես Հովհաննեսս, Աստծու շնորհիվ հայոց կաթողիկոս, վկա եմ այս անխախտ ու անխափան որոշմանը, որ կայացվեց Սյունյաց մեծ իշխանների կողմից. և [փաստաթուղթը կնքեցի իմ սովորական մատանիով: Ես Հայոց թագավոր Սմբատ Բագրատունիս, իմ ձեռքով հաստատեցի այս որոշումը և վճռագրի վրա, ներքևում դրոշմեցի իմ թագավորական մատանին:..»[4]: Այնուհետև հիշատակվում են Վասպուրականի Արծրունյաց իշխանների անունները և «Ես` աստծո նվաստ ծառա Աղվանքի արքեպիսկոպոս Տեր-Սիմեոնս, վկա եմ այս որոշմանը և իմ մատանիով կնքեցի այս վճռագիրը...»[5]: Ինքն իրեն «արքեպիսկոպոս» ձևով հիշա-

---

[1] Տես` Դ.Ա.Հարությունյան, Հայաստանը IX-XIդդ., Եր., 1959, էջ 31:
[2] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 346:
[3] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 212:
[4] Նույն տեղում, էջ 213:
[5] Նույն տեղում, էջ 214:

տակող կաթողիկոսի վկայությունը, կարծում ենք, ևս բավարար փաստ պետք է ընդունել Աղվանից կաթողիկոսությունը հիշյալ ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու ենթակայության տակ գտնվելու մասին:

Սակայն Սիմեոն Բ-ի կաթողիկոսությունը նսեմացնող մեկ հանգամանք գոյություն ուներ. նա ձեռնադրությունը ստացել էր իր միայն ենթակա եպիսկոպոսներից և ոչ, ընդունված կարգի համաձայն, Հայոց կաթողիկոսից: Դա էլ, թերևս, պետք է բացատրել երկրում տիրող քաղաքական անբարենպաստ պայմանների թելադրանքով կատարված հարկադրական քայլ, բայց ոչ անջատողական միտում:

Սիմեոն Բ-ն 21 տարի առաջնորդեց կաթողիկոսական աթոռը և 923 թվականին կնքեց իր մահկանացուն: Աղվանից կաթողիկոսական աթոռին տիրացավ Փառիսուփ առաջնորդարանի Տեր Դավիթը (923-929թթ.), որին էլ հաջորդեց Տեր Սահակը (929-948թթ.):

929 թվականից Հայոց Աղվանից կաթողիկոսական աթոռը առաջնորդած Տեր Սահակի մասին և Մ. Դասխուրանցին և Կ. Գանձակեցին որևէ այլ տեղեկություն չեն հաղորդում: Ստ. Օրբելյանը, խոսելով Սյունյաց և Հայոց արևելից եկեղեցական թեմերի հիշյալ շրջանում գոյություն ունեցող հարաբերությունների մասին, նշում է, որ «Աղվանքում Սահակ անունով կաթողիկոս կար, որը հոգևոր սիրով կապված էր Տեր-Հակոբի հետ: Նրանք համախոհներ էին ու միմյանց խիստ մոտ»[1]: Պատմիչը միանշանակորեն դրականորեն է գնահատում երկու հոգևոր թեմերի «խիստ մոտ» հարաբերությունը, ու միաժամանակ ներկայացնելով դրա օբյեկտիվ պատճառները, որևէ ակնարկ չի կատարում հիշյալ թեմերի մերձեցումը վերագրելու որպես Ամենայն Հայոց Աթոռից անջատվելուն ուղղված ձեռնարկում:

Սահակ կաթողիկոսի անունը այնուհետև աղբյուրներում հիշատակվում է կապված Անանիա Մոկացու Հայրապետական գործունեության հետ. «Տէր Անանիա Առկացին ամս ԻԲ: Ե ում յԱղթամար և ԺԷ ում ի Վարագ եկաց»: Իւր Թղթերում չեն յիշւում ոչ Աղթամարը ո՛չ Վարագը և ոչ Արգինան, միայն այսչափն է երևում, որ իւր առաջին հրովարտակը (=կոնդակ), ուղղուած Աղուանց Սահակ կաթողիկոսին, գրել է Գագիկ Արծրունի թագաւորի հաւանութեամբ և խորհրդով, ուրեմն և Վասպուրականում: Յաջորդ տարին մեռնում է Գագիկը (943թ.)...»[2]: Ուրեմն Հայոց Հայրապետի առաջին հրովարտակը ուղղված էր Աղվանից Սահակ կաթողիկոսին և գրվել է 942 թվականին:

948 թվականին Սահակ կաթողիկոսին հաջորդեց Գարդման գավառի եպիսկոպոս Տեր Գագիկը, որ աթոռակալեց «տասնչորս տարի. սրա չորրորդ տարում լրացավ Հայոց չորս հարյուր թվականը»[3]: Ինչպես Մ. Դասխուրանցին, այնպես և Կ. Գանձակեցին տարաբախտաբար, Տեր Գագիկի գործունեության վերաբերյալ առանձին տեղեկություններ չեն հաղորդում, որի պատճառով և ստիպված ենք բավարարվել միայն Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններով, որոնք որ պահանջում են քննական մոտեցում ունենալ խնդրո առարկա հանդիսացող հարցի կապակցությամբ, քանի որ հիշյալ նույն աղբյուրի մեջ կան հակասական տեսակետներ:

Պատմագիրը նշում է, որ «Սահակից հետո առաջնորդեց նրա եղբայր Գագիկը, որը առավել համարձակ գտնվեց Սյունյաց եպիսկոպոս Հակոբի հետ ու-

---

[1] *Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 240:*
[2] *Յավելուած Արարատի, 1897, փետրուար, էջ 91:*
[3] *Կիրակոս Կանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 146:*

նեցած միաբանական սիրո մեջ»[1]: Իսկ Ամենայն Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսը գրել է. «...վախճանէր ապա կարծեալ հայրապետն Աղուանից՝ Սահակն կոչեցեալ, և թողոյր փոխանակ ինքեան զիարազատ իւր՝ զԳագիկ՝ նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր ինքն ունէր առանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ աթոռակալացն. այր համեստ և գեղեցկադէմ և չափաւոր հասակաւ»[2]: Կարելի է նկատել, որ Հայոց Հայրապետը, այնուամենայնիվ, չի թաքցնում իր համակրանքը Աղվանից Գագիկ կաթողիկոսի նկատմամբ, որ նույնպես անօրինական ձեռնադրություն ընդունած կաթողիկոսների թվին է պատկանում:

Ահա այսպես, տակավին Հովնան եպիսկոպոսից սկսած Աղվանից կաթողիկոսական աթոռին մեկը մյուսի ետևից բազմեցին կաթողիկոսներ, որոնք օրինական ձեռնադրություն չէին ստացել Հայոց Հայրապետից: Պահպանված աղբյուրներում Հայոց արևելից հիշյալ կաթողիկոսների ձեռնադրությունը իրենց ենթակա եպիսկոպոսներից գնահատվում է որպես Հայոց եկեղեցական ընդհանուր օրենքին հակասող երևույթ, քանի որ ընդունված կարգի համաձայն նրանք պետք է ձեռնադրություն ստանային Հայոց հայրապետներից, մի կարգ, որ գոյություն ուներ եկեղեցական հաստատության հիմնադրման պահից ի վեր:

Արդարև, առաջին իսկ պահից Հայոց արևելից հիշատակված կաթողիկոսների ընդունված կարգին հակասող ձեռնադրությունը պետք է ընդունել որպես անընդունելի, անգամ դատապարտելի քայլ, քանի որ այն իր հերթին կդառնար արաբա-բյուզանդական կողմերի՝ Հայաստանը քաղաքականապես մասնատելուն ուղղված քաղաքականության իրագործման համար լուրջ խթան:

Հայ ժողովրդի պատմությունը շարադրած հայ վարդապետ-պատմաբանները միանշանակորեն սերունդներին ավանդել են այն պարզ ճշմարտությունը, որ ազգի հզորության աղբյուրը նրա հոգևոր ու բարոյական միասնության մեջ է: Այդ գիտակցությամբ էլ մեր հոգևոր նվիրապետները մշտապես աշխատել են հնարավորինս կայուն պահել ժողովրդի հոգևոր-բարոյական միասնությունն անգամ քաղաքական մասնատվածության պայմաններում, հիշյալ ասպարեզում ամեն մի, թեկուզ աննշան խախտում որակելով որպես դավաճանության համահավասար արարք, որ և դատապարտվել է Հայոց Մայր եկեղեցու նվիրապետների կողմից: Բայց միաժամանակ պետք է նշել, որ նրանք թերևս երբեմն անտեսում էին երկրում տիրող քաղաքական իրավիճակը, և բավական անզիջում կեցվածք ընդունում եկեղեցական թեմերի ինքնուրույն գործունեության նկատմամբ:

Այս տեսանկյունով կարելի է մեկնաբանել նաև 10-րդ դարի սկզբին ստեղծված կացությունը, երբ Հայոց արևելից կաթողիկոսները պարզապես ստիպված էին ձեռնադրություն ընդունել միայն իրենց ենթակա եպիսկոպոսներից, քանի որ նույն ժամանակներում աստանդական վիճակում էին հայտնվել նաև Ամենայն Հայոց Հայրապետները՝ Մայր Աթոռին սպառնացող քաղաքական արհավիրքների պատճառով: Այդպես էին Գևորգ Բ Գառնեցու, Մաշտոց Եղվարդեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Բ Ռշտունու, Թեոդորոս Ա Ռշտունու ժամանակներում[3]: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսը իր «Պատմութիւն Յովհաննու Կաթողիկոսի» հայտնի աշխատության

---

[1] *Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ. էջ 240:*
[2] *Տեառն Անանիայի Հայոց Կաթողիկոսի, Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիին արտաքոյ սուրբ· Լուսավորչի աթոռոյն, «Արարատ», 1897, էջ 133:*
[3] *Տես՝ Ոռլուբաբյան Բ., Հայոց արևելից եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 165:*

մեջ տվել է հանգամանալից ու հավաստի նկարագրությունն այն ժամանակների վերաբերյալ, երբ աստանդական վիճակում հայտնված կաթողիկոսն ստիպված էր շրջագայել նաև Արցախ-Ուտիքյան հայաշխարհի և Անդրկուրյան հայկական գավառների մենաստաններում:

Թերևս նշված և տվյալ ժամանակների հետ առնչվող նաև մի շարք ուրիշ փաստարկներից պետք է նկատել, որ Հայոց եկեղեցու Արևելյան թևի կաթողիկոսների ընդունված կարգին հակառակ ձեռնադրությունը բացատրվում է լոկ քաղաքական աննպաստ պայմաններով. աստանդական վիճակում հայտնված Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից ձեռնադրություն ընդունելու անհնարինության և կամ, երբեմն մեծ դժվարությունների հետ կապված լինելով, բայց ոչ Հայոց եկեղեցուց անջատվելու միտումով: Իսկ եթե քննարկման նյութ դարձնենք Ստ. Օրբելյանի հիշյալ փաստի կապակցությամբ գրառումը. «Քանի որ այն ժամանակներում Հայոց կաթողիկոսները հեռացած էին իսմայելացիների ավազակային մշտական հարձակումների պատճառով, Դվինի Աթոռը թողել ու Հայոց թագավորների հետ շրջում էին այստեղ ու այնտեղ՝ երբեմն բնակվելով Վասպուրականի թագավոր Գագիկի մոտ, Վանա ծովի կղզում, որտեղ կային սուրբ Գրիգորի սեղանը, աթոռն ու գավազանը, երբեմն՝ Շիրակի գավառի Արգինայի վանքում այսպես տարուբերվելով, այլև վախճանվել էր Հայոց Թեոդորոս կաթողիկոսը, նրան հաջորդել Անանիա Մոկացին՝ երեք հարյուր իննսուն թվականին. այս Հակոբը հեռավորության պատճառով չէր կարողանում ամեն տարի գնալ Հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն վերցնելու, ուստի հարկ եղավ մեռոնը խնդրելու Աղվանքի կաթողիկոսից»[1]. Բացատրելով օբյեկտիվ քաղաքական հանգամանքները, պատմագիրը, այնուամենայնիվ, չի արդարացնում այն և համարում է «մեծ մոլորություն ու անկանգնելի գլորում»[2]: Եվ անդրադառնալով Աղվանքի հոգևոր առաջնորդության կողմից Սյունիքի եպիսկոպոսի խնդրանքը անմիջապես իրագործելու, ինչպես նաև, հենց իրենց ձեռնադրության ընդունման հանգամանքին, պատմագիրը իրավացիորեն նշել է. «Աղվանքի արքեպիսկոպոսները հայոց կաթողիկոսներից էին ձեռնադրություն ստանում. բայց դրանից քիչ տարիներ առաջ ետ էին կանգնել՝ Գևորգ կաթողիկոսի վախճանից մինչև այս Անանիայի ժամանակները»[3]: Նույն Օրբելյանը, կարծես ինքն իրեն լրացնելու, թերևս նաև, ուղղելու մտայնությամբ, հետևյալն է գրել. «...երբ Գևորգ կաթողիկոսը վախճանվեց, մեր աշխարհին իսմայելացիների կողմից վրա հասած դառն ու տեսակ-տեսակ անցքերի պատճառով աղվանքցիները չէին կարողանում հասնել հայոց հայրապետների մոտ, նույնպես և Աղվանքըն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսմայելական սրից ազատ մնալու համար: Ապա Հովնանից հետո Աղվանքի կաթողիկոս են ձեռնադրում նրա Սիմեոն անունով եղբորը, այնուհետև՝ Դավթին, ապա՝ Սահակին, ապա՝ հիշյալ Գակիկին: Եվ այսպես վաթսուն ինը տարի տևեց նրանց ինքնագլուխ ու ինքնաձեռնադրական թերակատար օծումը»[4]: Ուրեմն պատմիչը քաղաքական փաստարկներով հիմնավորում է Աղվանից կաթողիկոսների «ինքնաձեռնադրական թերակատար օծումը»: Միաժամանակ չարդարացնելով այն, սակայն չի համարում Ամենայն Հայոց կաթողիկոսությունից երես դարձնելու կամ լրիվությամբ

---

[1] *Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 240:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում, էջ 241:*
[4] *Նույն տեղում. էջ 245:*

անջատվելու միտում, որպիսին ներկայացված է Աբրահամ Զամ.վարդապետի «Հայոց եկեղեցու պատմութիւն» աշխատության մեջ. «Իսկ Աղուանք մօտ 70 տարի արդէն դադարել էին Հայոց կաթողիկոսներից ձեռնադրութիւն առնել... Արդ Անանիա կաթողիկոսը Գագիկ ու Աբաս թագաւորների յորդորներից քաջալերուած վճռում է ս. Լուսաւորչի հօտից բաժանուած ու օտարացած ժողովրդին կրկին միացնել Հայոց եկեղեցու հետ և նրա նախնական միութիւնը անխախտ պահպանել»[1]: Հետաքրքիր է, որ «օտարացած ժողովրդի» մասին է խոսքը և կամ ուրիշ ինչ փաստարկներ կան այդ «օտարանալու» վերաբերյալ: Երկիրը կարող է ենթարկվել քաղաքական մասնատման, օտարի տիրապետության, բայց ժողովուրդը «օտարանալ» ինքն իրենից թերևս անգամ տրամաբանական չէ, որովհետև այդ նույն ժողովուրդը մշտապես հավատարիմ է մնացել իր հավատքին, հետևաբար նաև իր արմատներին:

Այդպիսի հակասական տեսակետ զարմանալիորեն արտահայտել է նաև Մաղաքիա Օրմայանը, գրելով. «Շատոնց ծանօթ էր Աղվանից աթոռին հակամիտությունը, որ Հայոց հայրապետութեան հետ ունեցած կապակցութիւնը խզե և ինքնագլուխ կաթողիկոս ըլլա և ոչ թե Հայոց աթոռին ներքև՝ իբրև լոկ արքեպիսկոպոսություն սեպուի»[2]: Հարցի քննությունը պահպանված աղբյուրների հիման վրա, սակայն, երբեք այդպիսի լուծման չի հանգեցնում: Համենայնդեպս, եթե երբեմն Աղվանից աթոռի կողմից դրսևորվել են որոշակի շեղումներ (դրանց մասին արդեն հիշատակվել են մեր կողմից-Ա. Բ.), ապա երբեք համընդհանուր ու նպատակային անջատողական միտումներ չեն եղել: Աղբյուրների հաղորդման համաձայն, ինքը՝ Հայոց Մայր Աթոռը երբեմն որոշ կաթողիկոսների ազդեցության տակ, կարծես դեպի քաղկեդոնականությունը թեքվելու, բայց ոչ լրիվությամբ ընկրկելու փորձության է ենթարկվել, որ համենայնդեպս հիմք չի տալիս պնդելու, թե Հայոց եկեղեցին հակվել է դեպի քաղկեդոնականությունը: Նույն դրությունն էր նաև Հայոց արևելից եկեղեցու համար և դա հիմնավորել ու ներկայացնել, թե Աղվանից կաթողիկոսությունը միշտ էլ փորձում էր դուրս գալ Ամենայն Հայոց նվիրապետության ենթակայությունից, կարծում ենք, որ այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Հայոց արևելից եկեղեցին Հայոց եկեղեցական հաստատությունից անջատվելու վերաբերյալ ունեցած մտադրությունների վերաբերյալ որևէ արժանահավատ աղբյուր չի հանդիպել հավանաբար գոյություն էլ չունի: Ինքը՝ Մ.Օրմանյանը, այդ տեսակետը արտահայտել է լոկ ընդհանուր երևույթների ազդեցության տակ, առանց վկայակոչելու որևէ հիմնավոր աղբյուր:

Չպետք է մոռանալ նաև մեկ այլ հանգամանք, որ եթե Հայոց արևելից կաթողիկոսությունը որևէ կերպ անջատողական ձգտում ունենար, ապա դրան նպաստող քաղաքական պայմանները թերևս առկա էին. նախ և առաջ երկրի քաղաքական մասնատվածության հետևանքով ստեղծված ինքնուրույն թագավորություններից էր Հայոց արևելից Համամ-Բագրատունու իշխանությունը, որ ինքնուրույն կաթողիկոսության հիմնավոր պատվարներից էր և որը, սակայն, պատմագրի վկայությամբ, երբևէ չի ընդունել Հայոց եկեղեցական հաստատությունից որևէ կերպ ինքնուրույնություն ունենալու տարբերակը:

Ասվածի վկայություններից պետք է ընդունել վերը նշված մեջբերումը՝ կապված Սամվել եպիսկոպոսի ինքնուրույն ձեռնադրության հետ, որի դեմ ըմբոս-

---

[1] *Հայոց եկեղեցու պատմութիւն, կազմեց Աբր. Զամ., Նոր Նախիջևան, 1908, էջ 167:*
[2] *Օրմանյան Մ., Ազգապատում, h.Ա, մաս Գ, Բեյրութ, 1959, էջ 1088:*

տացել էին Աղվանից աշխարհիկ տերերը: Պակաս համոզիչ վկայություն չէ նաև հենց ինքնուրույն թագավորության հիմնադիր Համամ Բարեպաշտի վերաբերմունքը հիշյալ խնդրի առնչությամբ, երբ Հայոց արևելից իշխանի թախանձանքով Գևորգ Բ Գառնեցին վերահաստատեց ինքնուրույն կաթողիկոս հռչակված Հովնանին: ԵՎ երկրորդ, ինչպես Ստ. Օրբելյանն է իրավացիորեն նշել. «Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսմայելական սրից ազատ մնալու համար»[1]:

Իր տեսակետը կարծես հիմնավորելու միտումով, Մ.Օրմանյանը այնուհետև շարունակել է. «Հայաստանի շփոթ և ընկճյալ վիճակը և կաթողիկոսներուն տարտամ և թափառական աստանդականությունը և իրենց ազդեցության նըվազիլը նոր պատեհ ընծայեցին աղվաններուն՝ իրենց հնամենի ջանքը վերսկսելու, և Սահակ Աղվանից կաթողիկոս նորեն ույժ տվավ այդ նպատակին: Որպեսզի ավելի զորավոր ընե իր գործը իրեն օգնականներ ալ սկսավ որսալ և Հայաստանի հյուսիսային կողմերը իր ազդեցութեան ներքեւ առնել»[2]: Ակնհայտ է, որ «Հայաստանի հյուսիսային կողմերը» ասելով նա ի նկատի ուներ Սյունյաց թեմի առաջնորդ Հակոբի ձեռնադրությունը Աղվանից կաթողիկոսից, որի նկատմամբ, թեկուզ քննական մոտեցում է ունեցել նաև Սյունիքի պատմության շարահարողը, սակայն ճշմարտացիորեն ներկայացրել է նաև արդարացուցիչ հանգամանքներ պարունակող քաղաքական կացությունը: Հիշյալի կապակցությամբ շատ բնորոշ ու արտահայտիչ ձևակերպում է կատարել Բ.Ուլուբաբյանը, որ նշել է. «Այդ կաթողիկոսները բառացիորեն թափառական էին, գավառից գավառ էին փախչում, վանքիցվանք և իրենք իսկ չգիտեին, թե որտեղ են գլուխ դնելու հաջորդ օրը... Այս դեպքում նրանց որտե՞ղ այցելեին այս Արցախի ու Սյունիքի ամբարտավանացած առաջնորդները»[3]: Ինչ վերաբերում է Մ.Օրմանյանին, ապա, ինչպես նշեցինք, այս վերջին միտքը նա նորից շարադրել է՝ կրկին իր տեսակետը հիմնավորելու միտումով. «Մյուս կողմեն այդ կողմի իշխանները, ամենքն ալ Բագրատունի սերունդե, չէին սիրեր անուղղակի կերպով Արծրունի իշխաններու ազդեցության ներքև ըլլալ, որոնց հովանավորության ենթարկյալ էին Ախթամար նստող վերջին կաթողիկոսները»[4]: Բնականաբար խոսքը վերաբերում է Հայոց արևելից իշխաններին, սակայն պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր աղբյուրն է հաղորդում Հայոց արևելից իշխանների ու Արծրունիների միջև գոյություն ունեցող որևէ հակասության մասին: Իսկ ինչ վերաբերում է նրանց կողմից տեղի հոգևոր նվիրապետներին Ամենայն Հայոց Մայր Աթոռին հակադրելու միտումներին, ապա այստեղ փաստերը բոլորովին հակառակն են հաղորդում: Հայոց արևելից Համամ Բագրատունի իշխանի արարքը, կապված Ամենայն Հայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին գերությունից ազատելուն, արժանի է միայն գովեստի ու մեծարման, վկայություն է Ամենայն Հայոց Հայրապետի նկատմամբ տածած անսահման նվիրվածության ու խոնարհումի: Իսկ Գևորգ Բ Գառնեցու հաջորդ և նույնպես աստանդական վիճակում հայտնված ու Հայոց արևելից կողմերում որոշ ժամանակ ապրած Հովհաննես Դրասխանակերտցի պատ-

---

[1] *ՍտեփանոսՕրբելյան, նշվ. աշխ., էջ 245:*
[2] *Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1088:*
[3] *Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 164:*
[4] *Օրմանյան Մ., նշդ. աշխ., էջ 431:*

միչ-կաթողիկոսը որևէ ակնարկ անգամ չի կատարել հիշյալ երկրամասի աշխարհիկ տերերի կողմից հանդես բերած անբարյացակամ վերաբերմունքի մասին: «Եւ վասնզի զարացն գերչաց չար հէնք սաստկապէս դեռևս մածեալ ունէր զաշխարհս մեր. խակս այնորիկ և ես ըստ տէրունեանն հրամանի հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արևելեաց Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին: Եւ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպետս ամենացունց»[1]: Կարծում ենք հիշյալից դժվար չէ ենթադրել, որ Հայոց Հայրապետը անգամ իր գոհունակությունն է հայտնում Հայոց արևելյան աշխարհիկ տերերին, որոնք չէին խնայում իրենց միջոցները ներդնելու աստանդական վիճակում հայտնված հոգևոր առաջնորդարանի կարիքների համար: Ինչ վերաբերում է Հայոց Աղվանից եկեղեցու հիշյալ շրջանում ունեցած անջատական ձգտումներին, ապա դրանց փաստացի առկայության պայմաններում անհնար էր, որ պատմիչ կաթողիկոսը որևէ ակնարկ չկատարեր այդ մասին:

Հիշյալ տեսակետը հիմնավորող վկայություն, բարեբախտաբար, հանդիպում ենք նաև հենց քննարկվող ժամանակաշրջանում Հայոց Մայր Աթոռը առաջնորդած Անանիա Մոկացու մոտ. «Իսկ մենք՝ վասնզի ոչ էր ըստ հրամանի աստուծոյ և ոչ ունէր ձեռնադրութիւն ի մէնջ՝ ոչ ընկալաք զնա և ոչ հրաման տուաք ուրուք յիշխանաց ընդունել զնա: Իսկ զնախնեացն բարեմտութիւն և զհարցն դաւանութիւն, որ կայր յԱղուանից Պատմութեանն, գիտելով իշխանացն Աղուանից, որ լինեալ էր առ նախնեօք ընդ այլ սրբոյ Լուսաւորչին աթո-(Բ)ռակալաց, ոչ ընկալան զնա»[2]: Իսկ ինչ վերաբերում է Հայոց Արևելյան աշխարհիկ տերերի ու Արծրունիների միջև գոյություն ունեցած հակակրանքին կամ հակասությանը, ապա ժամանակակից պատմիչներն այն հաստատող որևէ ակնարկ անգամ չեն կատարել, դեռ ավելին. Արծրունիների տան պատմիչ Թովմա Արծրունին հիացմունքով ու գովեստով է նկարագրել Հայոց արևելից իշխանների մղած հերոսական պայքարը արաբների դեմ[3]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած քաղաքական հանգամանքների թելադրանքով թուլացել էին կապերը մի կողմից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության, մյուս կողմից՝ ծայրամասային թեմերի միջև: Արդյունքում. ծայրամասային որոշ թեմեր, այդ թվում Հայոց արևելից կողմանց կամ Աղվանից և Սյունյաց թեմերը ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, որը սակայն երբեք չի հասցրել ամբողջական մեկուսացման կամ անջատման: 10-րդ դարում, կապված Բագրատունյաց հայկական թագավորական իշխանության հզորացման հետ, վերստին կանոնակարգվեց Հայոց Մայր Աթոռի գործունեությունը:

---

[1] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1996, էջ 220:*
[2] *Անանիա Մոկացի. Նշվ. աշխ., էջ 133:*
[3] *Թովման Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 278-279:*

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ (X – XIVԴԴ.)

Սույն հոդվածում փորձ է արվում քննության առնել Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատուներին, խորամուխ լինել նրանց սոցիալական շերտերի մեջ: Քննարկվող հարցի սկզբնաղբյուրները հիմնականում քաղաքի եկեղեցիների ու վանքերի վեմերին պահպանված արձանագրություններն են, որոնց մեջ առանձնանում են նվիրագրերն ու հիշատակագրերը: Սրանց հեղինակները երբեմն պատմական տարբեր իրադարձությունների մասին կարճառոտ տեղեկություններ հաղորդելով՝ իրազեկում են կրոնական հաստատություններին անշարժ կալվածքներ և շարժական գույք նվիրելու փաստեր: Հիշյալ վավերագրերից մի քանիսը կողմերի միջև կնքված պայմանագրեր են՝ երկուստեք պարտավորությունների ստանձնումով: Եթե նվիրատուները հիշատակում են նվիրաբերված արժեքների նկատմամբ իրենց ունեցած իրավունքի ձևերը, դրանց ձեռք բերելու ուղիները և օտարման պայմանները, ապա հոգևոր հաստատությունների սպասավորները հանձն են առնում որոշ քանակի արարողությունների կատարումը: Իրավական այս փաստագրերը կանոնակարգվում ու ամրագրվում էին երդումների ու անեծքների բանաձևերով և կամ վկաների հաստատումով:

Քաջ հայտնի է, որ Անիի վիմագրերի զգալի մասը մասամբ եղծվել է, մասամբ էլ ոչնչացվել, ուստի դրանք անհասանելի են հետազոտողներին: Ուսումնասիրության առումով խնդիրներ են հարուցում մասնակիորեն խաթարվածները, որոնցում բացակայում են կամ նվիրատուների անունները, կամ նվիրաբերված արժեքները կամ արձանագրությունների կազմման թվականները և այլ փաստեր:

Հարուցված խնդիրը երբեմն չեն լուծում նաև անխաթար պահպանված արձանագրությունները, որովհետև նրանցում ոչ բոլոր նվիրատուների սոցիալական դիրքը բացահայտող տվյալներ են պարունակում: Այս պարագայում հարկ է լինում կողմնակի թվացող փաստերից կռահումներ կատարել՝ ի մասնավորի նախաբանային բանաձևերից, նվիրաբերված կալքերի տիպերից, հատկացված արարողությունների թվից, հոգևոր հաստատությունների սպասավորների վրա դրված պարտավորությունների լեզվաոճական ձևակերպումներից և ուրիշ «մանրունքներից»:

Քննության նյութ դարձած թեմայի ժամանակագրական սահմանները թեև ընդգրկում են շուրջ երեք և կես հարյուրամյակ, սակայն հայտնի են շուրջ հինգ տասնյակի հասնող նվիրատվություններ՝ այն էլ ոչ կանոնավոր, ժամանակագրական մեծ խզումով, որպես հետևանք երկրի խռովահույզ վիճակի: Ինչպես նշվեց, նվիրագրերից մի քանիսը հնարավորություն չեն ընձեռում նվիրատուների սոցիալական կարգավիճակը պարզել, այդ պատճառով որոշ դրույթներ հնարավոր է, որ հապճեպ ու վիճահարույց լինեն: Այսուհանդերձ, խնդրո առարկա նյութն Անիի եկեղեցիների նվիրատուների մասին մեզ պատկերացում տալիս է:

Անիի վիմագրերը հրատարակվել են բազմիցս: Դրանց մի մասը թարգմանվել է նաև օտար լեզուներով[1]: Քաղաքի հնագիտական նյութերը պեղելու և ուսումնասիրելու գործում անգնահատելի է Ն. Յա. Մառի դերը, որի ղեկավարությամբ սկսվեցին պեղումները, որոնք ընդմիջումներով 1892թ. տևեցին մինչև 1917թ.: Այս աշխատանքների հանրագումարը հեղինակի 1934թ. ռուսերեն հրատարակած «Ани» աշխատությունն էր:

Հարկ է նշել, որ տեղի սղությունը հնարավորություն չտվեց մեզ վիմական վկայությունները մեջ բերել անբողջովին և անդրադառնալ դրանց հանգամանալից մեկնություններին:

1. Ժամանակագրական առումով Անիի եկեղեցիների առաջին նվիրատուն Շուշան Պահլավունին է, որի նվիրագրերը պահպանվել են Ս. Գրիգոր /Գրիգոր Պահլավունու/ եկեղեցու վրա[2]: Սրանցից մեկում Շուշանն իրեն հորջորջում է «Տիկնաց տիկին» և հաղորդում Ս. Գրիգորին Մրվանի կրպակը ու 80 դրամ նվիրելու մասին: Երկրորդը թվագրված է 994թ. և իր «տիկնաց տիկին» տիտղոսին հավելում է «զուգակից Գրիգորո իշխանի», նշում Մրվանի կրպակների նվիրատվությունը՝ անեծքի բանաձևով[3]:

Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու /988-1029/ կառուցողներն ու նվիրատուները Շուշան Պահլավունին ու իր որդիներն են: Այստեղ նրան ճանաչում ենք «Շուշանիկ հայոց տիկնաց տիկին» տիտղոսով: Անտարակույս վերջինս կապվում է նրա ամուսնու՝ հայոց իշխան Գրիգոր Պահլավունու տիտղոսի հետ: Գրիգոր Պահլավունին հայտնի է նաև Համզէ անունով: Շուշանն ուներ չորս որդիներ՝ Վահրամ, Վասակ, Ապլղարիբ, Համզէ և մեկ դուստր՝ Սեդա անուններով[4]: 1037թ. նա այլևս ողջ չէր, որովհետև նրա հիշատակին արարողություններ են պահանջվել:

1040թ. Ապլղարիբը կառուցում է մատուռ-հանգստարաններ՝ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր, առաջինը ծնողների, իսկ երկրորդը եղբոր՝ Համզէի ու քրոջ՝ Սեդայի համար[5]: Շուշան Պահլավունու մարմինն ամփոփվել է Մարմաշենում՝ նրանց տոհմական դամբարանում:

2. Կատրանիդե հայոց թագուհի: Գագիկ Ա Բագրատունու /990-1020/ տիկինը, Սյունիքի Վասակ թագավորի դուստրը, ուներ Սմբատ, Աբաս և Աշոտ անուններով որդիներ: 1001թ. Գագիկ Ա-ի հրամանով ավարտել է Անիի Մայր տաճարի շինարարությունը, որն սկսել էր Սմբատ Բ-ը /977-990/: Թագուհին Մայր տաճարին

---

[1] Ն. Սարգիսյան. Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864; Շիրակ. Տեղեկագրութիւն պատկերացոյց. հաւաքեաց Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1831; Эмин Н. Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего. Москва. 1881; Կ. Բասմաջեան. Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշինու, Պարիս. 1931; Վիմական տարեգիր. կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913; Դիվան հայ վիմագրության, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, պրակ 1, Երևան, 1966: Սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները միայն սկզբում են լրիվ վկայակոչվում:

[2] Հ. Օրբելին Դիվանում Անիի եկեղեցիներից մի քանիսը հիշատակում է դրանց կառուցողների կամ հովանավորների անուններով: Մենք հետևել ենք նրան՝ փակագծերում նշել նաև այդ անձանց:

[3] Դիվան I, էջ 31-32:

[4] И. А. Орбели. Надписи Мармашена, Избранные труды. Ереван. 1963. с. 442

[5] Դիվան I, էջ 33:

է նվիրել թանկագին զարդեր[1]: Այս նվիրատվությունների վերոբերյալ համեմատաբար հանգամանալից է խոսում Ստեփանոս Ասողիկը[2]:

Մարմաշենի արձանագրություններից մեկի մեջ նրա թոռը «ափխազաց և հայոց թագուհի» Մարիամը Կատրանիդեին հիշատակում է Կատա ձևով[3]: Տեկորի տաճարի 1008թ. արտոնագրով տեղի բնակչությանը նա ազատել է հարկատվությունից[4]: Կատրանիդեի տապանատուն մատուռը գտնվել է Մայր տաճարից արևելք: Պեղումները պարզել են, որ թագուհու գերեզմանն ավելի վաղ կողոպտված է եղել:

3. 1031թ. հայոց իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու որդին՝ Աբուղամրը իր եղբոր՝ Գրիգորի առողջության և երկարակեցության համար Առաքելոց եկեղեցուն է նվիրել Կառնուտի արտը[5]:

4. Աբուղամրի արձանագրությանը կից Խաչատուրի անթվական վիմագիրն է, որով նա նույն եկեղեցուն է նվիրել իր գանձագին *սարաւոյթով*[6] տունը: *Սարաւոյթն* ունի մի քանի իմաստներ, բայց տվյալ համատեքստում ցույց է տալիս բարձրաշեն կամ բարձր պատշգամբով առանձնատուն: Այս տան հորինվածքի կամ դիրքի շեշտումը թույլ է տալիս այն դասել ոչ սովորական առանձնատների կարգին: Խաչատուրի նվիրագիրը հարում է Անիի ավագանու կամ ընչեղենների այն նվիրագրերին, որոնցում բանեցված է եկեղեցու սպասավորների վրա դրված խիստ պարտադրանքն ու հատկապես անեծքի պահանջկոտ բանաձևը:

5. Ապլղարիբ Պահլավունի, որդին էր Գրիգոր-Համզէ և Շուշան Պահլավունիների, թոռը Աբուղամրի: 1035թ. Սմբատ Բ Բագրատունու հանձնարարությամբ նա Բյուզանդիայի կայսր Միքայել Դ-ին /1034-1041/ էր տարել թագավորի հրովարտակը: Կ. Պոլսից բերել էր տերունական խաչի մասունքը և 1036թ. կառուցել Ս. Փրկիչ եկեղեցին: Վաղ ժամանակներից կորցրել էր հորը: Հոր, մոր, եղբոր և քրոջ համար կառուցել էր Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռները:

Ապլղարիբը Ս. Փրկչին նվիրել է կրպակներ, ձիթհանք, այգի, հողեր, այլ ընծաներ: Նա իրականացրել է նաև ուրիշ կառույցներ, նվիրատվություններ կատարել Ս. Հակոբ /Շուշան Պահլավունու/ եկեղեցուն:

Ապլղարիբը Անիի վիմագրերում հիշվում է *մարզպան*[7]: Խնդրո առարկա ժամանակաշրջանում մատենագրական տվյալները մարզպանների համար նշում են մի քանի գործառություններ: Նրանք ղեկավարում էին երկրի զինված ուժերը, հանդես գալիս կողմնապահների դերում, զբաղվում արտաքին հարաբերություններով: Այսուհանդերձ մարզպանների գործունեությունը նաև կարող էր զերծ լինել որևէ սահմանափակությունից՝ նայած տեղին, հանգամանքերին ու պայմաններին:

6. Վահրամ Պահլավունին իր Աբուղամր որդու «ոգեբաժնով» երկու կրպակ է գնել ու նվիրել Ս. Գրիգոր / Գրիգոր Պահլավունու/ եկեղեցուն[8]: Այս վիմագիրը դիտվել է 1031-1033թթ. գրություն: Նրա ծննդյան թվական է նշվում 967-ը:

---

[1] *Անդ, էջ 35:*

[2] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 256:*

[3] *И. А. Орбели. Надписи Мармашена, с. 444.*

[4] *Վիմական տարեգիր, էջ 13:*

[5] *Դիվան I, էջ 12:*

[6] *Անդ:*

[7] *Դիվան I, էջ 44-45, 46:*

[8] *Դիվան I, էջ 32:*

Ըստ ժամանակի Վահրամ Պահլավունու մասին առաջին հաղորդումը քաղում ենք վերը նշված Մարմաշենի արձանագրությունից:

Վահրամ Պահլավունին սկզբնաղբյուրներում հիշվում է *հայոց մեծ իշխան, իշխանաց իշխան, մեծ սպարապետ* և բյուզանդական *անթիպատ պատրիկ* տիտղոսներով, բայց առավել տարածվածը իշխանաց իշխանն է: Հայոց իշխանի տիտղոսը Պահլավունիների տոհմի մենաշնորհն է եղել: Այդպես են ճանաչվել Վահրամի հայրը և պապը:

Արաբական տիրապետության օրոք հայոց իշխանի դերը պարզաբանված է[1]: Հայոց իշխանը միջնորդի դեր էր խաղում խալիֆայության և հայ իշխանների միջև: Նրա գերիշխանությունը ճանաչում էին Հայաստանի, երբեմն նաև Վիրքի ու Աղվանքի ավատատերերը: Ճիշտ է, Բագրատունիների պետականության վերականգնումից հետո հայոց իշխանի իրավունքներն որոշ չափով սահմանափակվեցին թագավորների գործառույթյուններով, այդուհանդերձ, նրանք երկրի ներքին և արտաքին կյանքում իրենց ծանրակշիռ տեղը պահպանեցին, հատկապես զինված ուժերի ղեկավարության ասպարեզում: Այս առումով խոսուն է Վահրամ Պահլավունու դերը:

Ամբերդի եկեղեցու1026թ. Վահրամ Պահլավունու վիմագիրը տեղեկացնում է նրա կողմից գլխավոր տաճար կառուցելու, եպիսկոպոսական աթոռ հիմնելու և ծխերից գանձվող հարկի ու հասույթների չափը սահմանելու մասին: Նորահաստատ հոգևոր աթոռի սահմաններն ընդգրկում էին Նիգ գավառը, Արագածոտնը և Վաղարշապատի շրջանը, որոնք վարչականորեն մտնում էին Վահրամ Պահլավունու իշխանության մեջ[2]: Հետևաբար, հայոց այս իշխանը զինվորական իշխանությունից զատ որոշակի ավատի սահմաններում մարմնավորում էր նաև քաղաքացիական իշխանություն, որի կենտրոնը Ամբերդն էր:

Վահրամ Պահլավունու գործունեության հաջորդ դրվագը համընկավ երկրի քաղաքական կյանքի կորստյան հետ, երբ հայոց թագավորությունը կորստից փրկելու նրա անդուլ ջանքերն ի դերև եղան: Պահլավունի իշխանը մնաց Մեծ Հայքի ռազմական ուժերի հրամանատար և միացած իր երեկվա հակառակորդի՝ Բյուզանդիայի հետ հարկադրված էր կռվելու նրա նախկին դաշնակցի՝ Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ: 1045թ. Դվինում հայ-բյուզանդական ուժերին վիճակված էր անհաջողություն: Մարտում սպանվեցին Վահրամ Պահլավունին և նրա որդին՝ Գրիգորը[3]: Հայոց սպարապետի մարմինն ամփոփվեց Մարմաշենում[4]: Այնտեղ՝ Մայր տաճարի գերեզմանոցում է ամփոփված նրա տիկնոջ Սոփիայի՝

---

[1] *Տես Ա. Տեր-Ղևոնդյան. «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 1964, թ. 2, էջ 121-134:*

[2] *Արձանագրության վերջին վերծանության ու մեկնության հեղինակը Ս. Ավագյանն է /տես նրա Վահրամ Պահլավունու 1026թ. արձանագրությունը Ամբերդում և եկեղեցական պտղին միջնադարյան Հայաստանում հոդվածը հեղինակի «Վիմական պրպտումներ» ուսումնասիրության մեջ, էջ 45-62/:*

[3] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 148-149; Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 63; Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 98:*

[4] *И. А. Орбели. Надпись Мармашена, с. 449.*

Անձևացյաց տեր, հայոց մարզպան Տիգրանի դստեր մարմինը, որը վախճանվել էր ավելի վաղ 1015թ.[1]:

7. Ոմն Շահիկն ու իր որդի Վարդը 1050թ,. Ս. Փրկիչ եկեղեցուն տվել են իրենց տունն ու տան բակը[2]: Արձանագրությունից չի պարզվում նրանց սոցիալական դիրքը:

8. Քրիստափոր անունով մեկը 1050թ. Ս. Փրկչին նվիրել է իր գանձագին յոթ տները պահանջելով տարեկան 24 ժամերգություն[3]:

Արձանագրության տեղը, ոճը, նվիրաբերված արժեքները, ստացված արարողությունների թիվը թույլ են տալիս եզրակացնելու, որ նվիրատուն սոցիալական վերին շերտերի ներկայացուցիչ էր, ազնվական տոհմից:

9. Յովհաննեսը՝ Սողոմոնի որդին Ս. Աստվածածին /Խամբուշենց/ եկեղեցուն 1054թ. ընծայել է 20 դահեկան[4]: Այս արձանագրությունը ոչինչ չի ասում նվիրատուի դիրքի մասին: Բայց նրա կողմից թելադրված «եդի լուծ ի վերա սպասաւորաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ Յովհաննեսն ևս հարում էր բարձր խավերին: Նման կամ նմանատիպ բանաձևերով էին իրենց նվիրագրերը ամփոփում հայ հասարակության մեջ բարձր դիրք գրավողները:

10. Այս եկեղեցուն Գարեգոյնը նվիրել է իր գանձագին արտը[5]: Նվիրատվության թվականն անհայտ է:

11. Գրիգոր անունով նվիրատուի Խամբաշենց եկեղեցու անհայտ նվիրատվության դիմաց ժամերգության քանակը մեկն է[6]:

12. Վարդը և իր կին Ճոխը արձանագրության մեջ չպահպանված թվականին Խամբուշենց եկեղեցուն նվիրել են 40 դուկատ դրամ[7]:

13. Մխիթարիչը XI դարում անհայտ եկեղեցուն նվիրել է պղնձյա խաչ[8]:

14. Գրիգորը 1058թ. Ս. Առաքելոցին նվիրել է 400 դրամով գնած ավետարանը[9]: Գրիգորի մասին որոշակի բան ասելը դժվար է, եթե հաշվի չառնենք, որ ձեռագրի համար հատկացված գումարն առնվազն նշան է նրա ստացողի փարթամության: Ամենայն հավանականությամբ Գրիգորը Պահլավունիների իշխանական տոհմից էր:

Անիի հոգևոր հաստատությունների նվիրատուների խմբի մեջ ենք ներառում նաև նրանց, ովքեր քիչ միջոցներ չեն ծախսել եկեղեցիների նորոգման համար:

15. Սարկավագ քահանա, որը 1151 թ. նորոգել է Անիի Ս. Սարգիս եկեղեցին[10]: Յավանական է դիտվում, որ Սարկավագը Մայր տաճարի ավագերեց, հայտնի պատմագիր Սամուել Անեցու որդին էր[11]: Սարկավագի որդուն՝ Աբրահամ

---

[1] Անդ, էջ 445:
[2] Դիվան.I, էջ 43:
[3] Անդ:
[4] Անդ, էջ 51:
[5] Դվան.I, էջ 51:
[6] Անդ, էջ 54:
[7] Անդ, էջ 50:
[8] Յայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխ. Ե. Մուշեղյանի, պրակ I, Երևան, 1964, էջ 157:
[9] Դիվան.I. էջ 13:
[10] Անդ, էջ 56:
[11] Շիրակ, էջ 128, հմմտ. Կ. Մաթևոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 128:

երեցին, տեսնում ենք Անիում իր հոր գործի շարունակողին և Խծկոնքի եկեղեցու առատաձեռն նվիրատուին:

Սամուել Անեցու և նրա սերունդների քահանայագործությունը ցույց է տալիս մի շարք տոհմերի կայուն գործառությունները մեկից ավելի սերունդների համար:

16. Տեր-Սարգիսը 1164թ. Ս. Առաքելոցին նվիրել է գրակալ[1]:

17. Հայրապետը 1165թ. նորոգել է Ս. Աստվածածին /Խաքուշենց/ եկեղեցին[2]: Այլուստ ոչինչ հայտնի չէ նրա մասին, թեև եկեղեցու նորոգումը կարող է վկայել նրա նյութական ապահովածության մասին: Հայտնի է, որ եկեղեցիները խնդրո առարկա ժամանակաշրջանում կառուցվում կամ նորոգվում էին այն տոհմերի ներկայացուցիչների կողմից, որոնց իրավասության ներքո էին դրանք: Հետևաբար Հայրապետը կամ Խամբուշենց տոհմից էր, կամ էլ այդ տոհմի հետ առնչություն ուներ: Չի բացառվում, որ նա այդ եկեղեցու սպասավորներից լիներ:

18-19. Տրդատ քահանան և իր կին Խուշուշը Ս. Փրկչի 1193թ. նվիրագիր-հիշատակագրով նորոգում են իրենց «գանձագին հայրենիքը»՝ Ս. Փրկիչը, նրա մոտ կառուցում ժամատներ, եկեղեցուն նվիրում այգիներ, արտ ու տուն: Տրդատը նույնպես քահանայական տոհմից էր: Նա Արունճի ավագերեց Գեորգի որդի Սոսթենես քահանայի որդին էր: Տրդատն ու իր կինը տեր էին շարժական ու անշարժ մեծաքիվ հարստության[3]:

20-21. Սիթի Պահլավունի և նրա ամուսին Գրիգոր. Սիթի Պահլավունին 1210թ. իր ամուսնու՝ Գրիգորի միջոցներով նորոգել է Ս. Սարգիս /Սիթի Պահլավունու/ եկեղեցին[4]: Նրա «հարազատն» էր Ղարիփը, որը սպանվել էր 1225թ. Ջալալ էդ Դինի դեմ մղված Գառնիի ճակատամարտում: Այս Ղարիփը Անիի արքեպիսկոպոս Գրիգորի հարազատ եղբայրն էր, որն ի հիշատակ նրա, չեղյալ էր համարել քաղաքացիների մահվան կապակցությամբ քահանաներից գանձվող հարկը[5]:

22. Սարգիս Լարարար. Ս. Գրիգոր /Գրիգոր Պահլավունու/ եկեղեցու անթվական արձանագրությամբ նա այս եկեղեցուն է նվիրել իր տունը՝ իր հիշատակի համար՝ նրա սպասավորներից պահանջելով 15 օր ժամերգություն[6]: Լարարարը բացատրվել է հետևյալ կերպ. «Թուի քաջաձիգ աղեղանց»[7]: Այս բացատրությունն առարկելի է: Լարարարը թել, պարան կամ լար պատրաստող արհեստավորն էր: Սարգսի հիշատակին հատկացված մեկ և կես տասնյակ արարողությունները ընդգծում են նրա տան մեծ արժեքը և հետևաբար նրա տիրոջ հարուստ լինելը:

23. Զաքարե հեքիմի անթվական հիշատակագրությունը ծանուցում է Բազ փողոցում գտնվող նրա տունը կրպակով՝ արձանագրության մեջ անվանումը չպահպանված կրոնական ինչ-որ հաստատությանը նվիրելու մասին[8]:

24. Զաքարե Զաքարյան. որդին էր հայոց և վրաց զորքերի ամիրսպասալար /գլխավոր հրամանատար/ Սարգիս Զաքարյանի: Նրա մայրը Սահակա-

---

[1] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 60:
[2] Դիվան I, էջ 54:
[3] Դիվան I, էջ 47:
[4] Անդ, էջ 55:
[5] Անդ, էջ 18:
[6] Անդ, էջ 32:
[7] Շիրակ, էջ 53:
[8] Դվան I, էջ 68:

դուխտն էր՝ Կայենի ու Մահկանաբերդի տիրոջ՝ Տփղիսի ամիապետ Քուրդ Արծրունու քույրը: Անիի Աղջկաբերդի Ս. Աստվածածին կամ Կարմիր եկեղեցու պատին պահպանվել է Զաքարեի արձանագրությունը, որով նա հիշյալ եկեղեցուն է հատկացրել երեք գյուղ, ջրաղաց, այլ կայքեր: Այս արձանագրության մեջ Զաքարե Զաքարյանն իրեն անվանում է վրաց Թամար թագուհու /1184-1207/ «հավատարիմ ծառա», իսկ նույն եկեղեցու մեկ ուրիշ արձանագրությամբ Զաքարեին և նրա եղբայր Իվանեին տրվել է «հայոց թագավորներ» տիտղոսը[1]:

Զաքարե Զաքարյանի, նրա եղբոր Իվանեի և նրանց հոր՝ Սարգսի գործունեությունը լուսաբանվում է վրացական «Թագակիրների պատմությունը և գովաբանությունը» սկզբնաղբյուրում: Զաքարե Զաքարյանի և նրա եղբոր գործունեությունը համընկավ այն եզակի ժամանակշրջանին, երբ հայ զորքերը նրանց ղեկավարությամբ կռվեցին սելջուկյան ուժերի դեմ և երկրի զգալի մասն ազատագրեցին: Հայաստանում ստեղծվեց ավատական իշխանություն՝ Զաքարյանների ինքնիշխան տիրակալությամբ: Ծավալված մարտական գործողությունների արդյունքում ազատագրվեցին ռազմավարական այնպիսի կարևոր հենակետեր ինչպիսիք էին Գանձակը, Շամքորը, Առբերդը, Անին, Բջնին, Դվինը, Կարսը:

Զաքարե Զաքարյանի վերջին արշավանքը տեղի ունեցավ 1210/11թ., երբ նա հայ-վրացական ուժերով մեկնեց Մարանդ, Թավրիզ ու Ղազվին: Վերադարձին՝ 1212թ. նա հիվանդացավ ու վախճանվեց: Զաքարե Զաքարյանը թաղված է Սանահինի վանքում[2]:

25. Տիգրան Հոնենցը բացառիկ տեղ է գրավում Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատուների թվում՝ իր մեծաքանակ ու մեծարժեք հատկացումների շնորհիվ: 1215թ. նրա միջոցներով կառուցվել են Գրիգոր Լուսավորիչ /Տիգրան Հոնենց/ վանական համալիրը՝ համանուն եկեղեցիով և հարակից շինություններով: Գրիգոր Լուսավորչին նա հատկացրել է գյուղեր, արտեր, այգիներ, հյուրանոցներ և ուրիշ կայքեր:

Տիգրան Հոնենցը նորոգել է Բեխենց կոչված վանքը, Մայր տաճարի աստիճանները, վանքն ու տաճարը հարստացրել թանկարժեք ընծաներով[3]: Տիգրան Հոնենցի մեծաթիվ ու տարաբնույթ ձեռքբերումները աներկբա վկայությունն են նրա անբավ ընչավետության, որին նա տեր էր դարձել ընտրելով գործունեության մի բնագավառ, որը ներառում էր փոխանակային առևտրի բոլոր ձևերը՝ ի մասնավորի դրամականը: Այլ կերպ՝ Տիգրան Հոնենցը սեղանավոր էր՝ դրամավաճառ, վաշխառու հողատեր: Զաքարե Զաքարյանին ու նրա շառավիղներին Հոնենցն անվանում է իր «տերերը»: Այս հարուստ իշխանը տեր էր մեկ ուրիշի: 1222թ. արձանագրություններից մեկում ոմն Եղբայրիկ իրեն անվանում է «Ծառա տեառն իմոյ Տիգրանա»[4]: Ենթադրվում է, թե սա Հոնենցի շինարար ճարտարապետն է եղել[5]:

---

[1] Դիվան I, էջ 57, 58:

[2] Նրա մասին տես Խ. Թորոսյան «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992:

[3] Դիվան I, էջ 34, 63:

[4] Անդ, էջ 7:

[5] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 124:

Անի գետակի աջ ափին գտնվում են անձավային սենյակներ, որոնցում ամփոփվել են քաղաքի ունևորների մարմինները: Դրանց մեջ ուշագրավը Տիգրան Հոնենցի դամբարանն է, որն աչքի է ընկնում գեղազարդ որմնանկարներով[1]:

Ն. Յա. Մառը հերքել է նրա տոհմիկ հայ ազնվականության դասին պատկանելը: Ըստ նրա, Տիգրան Հոնենցը հայ ավագանու ներկայացուցիչ կարող էր եղած լինել, սակայն՝ օտար ծագումի, ինչը վկայում է նրա Հոն ազգանունը[2]: Որքան հայտնի է, Ն. Յա. Մառի այս մեկնությունն ուսումնասիրողներն անուշադրության են մատնել, միայն վերջերս Լ. Խաչիկյանը Տիգրան Հոնենցի ազգանունը առնչեց Ղրիմի արևելյան ծովափի հետ, որը ըստ նրա միջնադարյան հայերեն ձեռագիր հիշատակարաններում կոչվել է Հոնաց աշխարհ, որի հետ XIII դ. ու դրանից առաջ գործարար տնտեսական կապեր են ունեցել անեցիները: Այսպիսով, ըստ նրա ենթադրության՝ Հոնենց գերդաստանը համանուն աշխարհի հետ ունեցած սերտ կապերի, գուցե նաև սկզբնապես այնտեղ բնակված լինելու պատճառով ստացել է այդ տոհմանունը[3]: Վկայակոչված վարկածը հետաքրքիր լինելով հանդերձ կարոտ է փաստական հիմնավորման:

26. Սուրբ Աստվածածին /Հոռոմի/ եկեղեցուց հայտնաբերված միակ արձանագրությունը հիշատակում է 1217թ. Հոռոմ տիկնոջ կողմից այդ եկեղեցին նորոգելու մասին: Հոռոմի տիկին անվան բաղադրիչը ցույց է տալիս բարձր խավին նրա հարելու հանգամանքը: Անուշադրության չմատնենք նաև նրա կողմից եկեղեցու նորոգումը, որը կապված էր մեծ ներդրումների հետ, մի բան, որը սովորական մարդու ուժերից վեր էր: Հոռոմ տիկինը շեշտում է նաև իր որդու անձնանունը՝ Զենիշահ[4]: Քիչ հավանական է, որ այս անձնանունը կրեր ոչ արտոնյալ դասից մեկը: Հետևաբար, Հոռոմ տիկինը իր որդու հետ ներկայացնում էր քաղաքի ազնվական տոհմերից մեկը:

27. Անհայտ թվականին Արքա անունով մեկը Ս. Աստվածածին /Խամբուշենց/ եկեղեցուն նվիրել է 10 դահեկան[5]:

28. 1231թ. նույն եկեղեցուն Աթանասը տվել է իր գանձագին բնակելի տունը[6]:

29. Կարսեցի /բնագրում՝ Կարըցի/ Ջուհալը Մայր տաճարին 1235թ. նվիրել է Ավետարան, Եսայու մարգարեությունը, շուրջառ, վառ: Տարին մեկ պատարագի իրավունք ստացել[7]: Ջուհալի արձանագրությունը գրվել է զուսպ, առանց ավատատիրական աստիճանակարգություն արտահայտող բանաձևի: Արձանագրությունը չունի նաև անեծքի բանաձև: Ջուհալի ոչ մեծաթիվ, սակայն արժեքավոր նվերները ևս ապացույց են նրա հարստության, բայց զարմանք են հարուցում նրա ստացած սակավաթիվ պատարագները:

30. Առյուծ Հոգևորյանցը սալել է Ա. Առաքելոց եկեղեցու ժամատունը: Այս մասին տեղեկացնող արձանագրության թվականը չի պահպանվել[8]: Հոռոմոսի ե-

---

[1] *И. А. Орбели. Краткий путеводитель по городищу Ани, Избр. труды, с. 123.*

[2] *Н. Я. Марр, Ани, с. 34.*

[3] *Լ. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Մատենադարանի», 13, Երևան, 1980, էջ 28, ծանթ. 67:*

[4] *Դիվան I, էջ 66:*

[5] *Անդ, էջ 50:*

[6] *Անդ, էջ 51:*

[7] *Անդ, էջ 35-36:*

[8] *Դիվան I, էջ 20:*

կեղեցու նրա նվերագրերից հայտնի են դառնում ապրած և ժամանակաշրջանը, և՛ բարեգործությունները և՛ հարազատների անունները: Ըստ դրա, Առյուծ Հոգևորյանցը 1251թ. վերականգնել է Հռոոմոսի Ս. Հովհաննես եկեղեցու՝ թաթարների կողմից խափանած ջրամատակարարումը: Նա նաև եկեղեցուն նվիրել է իր սեփական կրպակը Անիում և բանջարանոց[1]:

Անիում սեփական կրպակ ունենալն ու նշված բարեգործությունները հաշվի առնելով կարելի է կարծել, որ Առյուծ Հոգևորյանցը պատկանում էր քաղաքի առևտրա-արհեստագործական դասին՝ թեև նրա ազգանունից կարելի է մակաբերել հոգևոր ծագում:

31. 1253թ. վնասված մի արձանագրությունից հասկացվում է, որ Մուզ Խաչատուրի որդի Ակեոն միջնաբերդում՝ Յուշապենց դռան հարևանությամբ եղած տունը նվիրել է Ս. Աստվածածնին /Խամբուշենց/ և ստացել մեկ պատարագ[2]: Իսկ մեկ ուրիշ վիմագիր, գրված Շահնշահի պարսպի վրա, հիշատակում է Շահնշահի պարոնին և նրա որդուն՝ Յուշիպին[3]: Անտարակույս Յուշապենց դուռը այն տեղն էր, որտեղ գտնվել է Յուշիպի տունը: Իսկ Յուշիպը Շահնշահի որդին էր՝ իր վասալների կողմից վերջինիս հորը տրվել է պարոն պատվատիտղոսը: Շահնշահը և նրա որդին ապրելիս են եղել քաղաքի արտոնյալ խավերի թաղամասում, ուր նրանց տան հարևանությամբ եղել է նույն դասից Մուզ Խաչատուրի որդու տունը:

32. 1291թ. Մխիթար Շեռացին Ս. Փրկչի համար զանգեր է բերել և կառուցել եկեղեցու զանգակատունը[4]: Նվիրատուի տոհմանունը Սալուքենց է: Հավաքական այս բառը ծագում է արաբերեն Saluk-ից, որ նշանակում է աղքատ, չունևոր, ընչազուրկ, թափառաշրջիկ[5]: Մխիթարի սոցիալական դիրքի վերաբերյալ բառի հիշյալ իմաստներից կռահում կատարելն, անշուշտ, համարձակ քայլ կլինի: Հավանաբար նա սոցիալական դիրքի առումով իր նախնիների համեմատ առաջընթաց քայլ կատարել է, սակայն ազգանվան հարցում մնացել պահպանողական: Մխիթար Շեռացին ըստ երևույթին ներկայացնում էր ունևորների միջին դասը:

33. Շահեր՝ վարդպետը Անիի Ս. Գրիգոր /Բախտաղեկի կամ Խաչուտի/ եկեղեցու նվիրատուներից էր, որի նվիրաբերածը արձանագրության մեջ հիշվել է ծիթագի/ն/ ձևով[6]: Արձանագրության թվագիրը վերծանվել է ՉԻ /1271/ կամ Չ/ 1251/: Նախապատվությունը տրվել է առաջինին: Ս. Բարխուդարյանի հավաստումով վարդպետ եզրույթը որոշ վիմագրագետներ վերծանել են վարդապետ, որը սխալ է: Ըստ նրա, միայն Հ. Օրբելին է ճիշտ վերծանել՝ վարդպետ: Որքան էլ զարմանալի է Հ. Օրբելու կազմած Դիվանում նշված բառը վերծանված ենք գտնում վարդապետ ձևով՝ հակառակ նրա գծապատկերում եղած վարդպետի:

Ս. Բարխուդարյանը ցույց է տվել, որ Ղ. Ալիշանը և Հ. Օրբելին վաղ շրջանի վիմագրերում շենքեր կառուցող վարդապետներին համարել են ճարտարապետ՝ շինարարներ, իսկ XIII դ. մինչև XIV դ. կեսերը նրանք ստորագրել են վարդպետ ձևով[7]:

---

[1] Վիմական տարեգիր, էջ 95:
[2] Անդ, էջ 52:
[3] Անդ, էջ 5:
[4] Անդ, էջ 43:
[5] Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էէջ 286:
[6] Դիվան I, էջ 60:
[7] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 18-24:

Այսպիսով, Շահերը XIII դ. Անիի հայտնի ճարտարապետներից էր, թեև անհայտ են մնում նրա հեղինակած կառույցները: Ոչինչ հայտնի չէ նաև նրա նյութական կարողության վերաբերյալ, բայց նույն դարաշրջանում ապրած մեկ ուրիշ ճարտարապետ Սիրանես վարդպետի աշխատանքների վարձատրությունները հայտնի են, որոնք ցույց են տալիս տվյալ բնագավառի բարձր վարձատրության հանգամանքը: Այս կապակցությամբ այլ տեղեկություններ ևս ունենք: Հետևաբար, Անիում, ուր լայն թափ էր ստացել շինարարությունը, ճարտարապետների մասնագիտությունը փնտրված ու արժավույն գնահատված էր, ուստի Շահերը քաղաքի նյութապես ապահովված անձանցից պիտի եղած լիներ:

34. Պարոն Գրիգորը 1272թ. անհայտ եկեղցուն է նվիրել մեկ գրակալ[1]:

35. Հյուսն Ավետիքը մի գրակալ է նվիրել Ս. Կարապետին[2]: Անհայտ են մնում թե նվիրատվության թվականը և թե հոգևոր հաստատությունը:

36-38. Եղբայրներ Ուքան Քարիմադինը, Պապքան Վախրադինն ու Քարիմադինի տիկինը՝ Դապտա խաթունը Անիի բարեգործներից էին: Նրանք կառուցել էին քաղաքի եկեղեցիներից մեկի զանգակատունը, կատարել շատ նվիրատվություններ[3]: Ուքանը, Պապքանը և Դապտան հարուստ փողատերեր էին: Այդ է հաստատում նրանց այգիներ, խանապարներ, կրպակներ, ջրաղացներ և շարժական ունեցվածք գնելն ու Անիի եկեղեցիներից մեկին, Կարմիր վանքին, Հոռոմոսին և Խաչենի Մեծաքանից վանքին նվիրելը[4]: Նշվածների հարստության հիմնական աղբյուրը մեծածախ առևտուրն էր:

Ըստ Գ. Հովսեփյանի այս եղբայրների անուններին հանդիպում ենք 1211թ. Սեբաստիայում գրված մի հիշատակարանում, որոնք այնտեղից գաղթել և հաստատվել էին Անիում:

Հ. Մանանդյանը Քարիմադինին համարում է ծագումով մանազկերտցի խոշոր առևտրական Ումեկի որդի: Ումեկը բնակվել էր Տփղիսում և օգտվում էր մի շարք առանձնաշնորհներից: Հ. Մանանդյանը մատնանշում է Ումեկի որդու՝ Ճարի կողմից 1283թ. 40 հազար կարմիր դուկատով Գոշավանքը և Հովքը գնելու փաստը[5]:

39. Դավթի որդի Ըռուբեն իր հոր հիշատակի համար 1286թ. Տիգրանի թոռներից գնել է ձիթհանք և նվիրել Մայր տաճարին[6]: Արձանագրության մեջ հիշված Տիգրանը հավանաբար Տիգրան Հոնենցն է: Ըռուբենի դասային պատկանելությունը որոշելիս նկատի առնելով նվիրատվությունը, նրան կարելի է համարել ունևոր խավերի միջին շերտի ներկայացուցիչ:

40-41. Քորգին և իր կին Աթէէսը 1271թ. կառուցել են տվել Անիի վիմափոր եկեղեցին[7]: Արանք եղել են Շահնշահ Բ Զաքարյանի վասալները: Եկեղեցի կառուցողներն, անշուշտ, նյութական միջոցներից զատ օժտված պետք է լինեին որոշակի իշխանությամբ:

---

[1] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 60:
[2] Անդ, էջ 62:
[3] Դիվան.I, էջ 65:
[4] Վիմական տարեգիր, էջ 112-113, 117:
[5] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 13-15, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ., Երևան, 1977, էջ 277-279:
[6] Դիվան.I, էջ 36:
[7] Անդ, էջ 68:

42-43. Մայր տաճարին պահպանված 1293թ. վիմագիրը տեղեկացնում է Մխիթարի և նրա ամուսնու՝ Դիմեթիի կողմից Անիի՝ Կարսի դռան մոտ եղած պահեզի *չարեքը* և մեկ շուրջառ այդ եկեղեցուն նվիրելու մասին[1]: Պահեզը պարտեզն է կամ բանջարանոցը, իսկ *չարեքը* կշռի չափ է, նաև հողատարածքի չափի միավոր: *Չարեքը* առնչվում էր հողի բնավարձակալության հետ: կալվածատիրոջ հողը մշակելու դիմաց գյուղացին նրան էր հանձնում ստացված բերքի 1/4-ը: Իբրև հողատարածքի չափի միավոր *չարեքը* հատկացվում էր գյուղական համայքնի 4 հոգուց բաղկացած գերդաստանին: Մեր օրինակում չարեքը հողատարածք էր, պարտեզ կամ բանջարանոց, որը հատկացվել էր Մայր տաճարին: Հետևաբար Մխիթարը և Դիմեթին կալվածատերեր էին:

44-46. 1310թ. Մաթեսը կնոջ՝ Սթենիի և եղբոր՝ Մարկոսի հետ նորոգել է Տիգրան Հոնենցի վանքի ջրատարը[2]: Նվիրատուները վանքը ստացել են Շահնշահ Բ Զաքարյանից: Մաթեսը իրեն համարում է «աթաբակ ամիրսպասալար Շահնշահի մծիկնաւբարթուխուցէս»: Վերջին տերմինը վրացերենից թարգմանվում է «դպիրների ավագ», «դպրապետ», որը պետք է հասկանալ Շահնշահ Բ-ի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի իմաստով:

47-48. Աթաբեկ Վահրամը և նրա վասալ Ասիլը 1342թ. նորոգել են Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթը: Արձանագրությունը գրվել է երկուսի անունից, այնինչ նորոգության ծախսերը հոգացել է Ասիլը, որը Վահրամին համարում է պատրոն և որի հրամանով էլ իրականացրել է ձեռնարկը[3]:

49.Շապադինը՝ Հովհաննեսի որդին, 1348թ. արձանագրությամբ 700 արծաթ վճարելով Ա. Առաքելոց եկեղեցուն է վերադարձրել նրան նախկինում պատկանած Ա. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով և կալերով: Շապադինը նշվածներից բացի գնել և Ա. Առաքելոցին է նվիրել արժեքավոր ուրիշ հարստություն: Արանց դիմաց նա ստացել է 12 օր պատարագ[4]: Կարելի է կարծել, որ Շապադինը բացի հարստությունից քաղաքում ունեցել է նաև իշխանություն:

Ի մի բերելով վերը շարադրվածը, Անիի եկեղեցիների ու վանքերի X-XIV դդ.. նվիրատուների հասարակական շերտերը կարելի է տարբերակել հետևյալ կերպ.

ա. երկրի /քաղաքի/ գերագույն իշխանությունը մարմնավորող թագավորական կամ իշխանական տան անդամներ /Կատրանիդե թագուհի, Զաքարե Զաքարյան, Շահնշահ Բ Զաքարյան, աթաբեկ Վահրամ Զաքարյան/

բ. Պետական իշխանության հետ սերտորեն կապված ռազմա-վարչական ավագանու ներկայացուցիչներ և նրանց տոհմակիցներ ու ավատատերեր /Շուշան Պահլավունի, Ապլղարիբ Պահլավունի, Վահրամ Պահլավունի, Աբուղամր Պահլավունի, Աիթի Պահլավունի, վերջինիս ամուսին Գրիգոր, պարոն Գրիգոր, Քորգիս, Աթէէս, Մաթես, Աթենի, Ասիլ, Հոռոմ տիկին/

գ. Խոշոր կալվածատերեր, առևտրականներ ու վաշխառուներ /Տիգրան Հոնենց, Ուքան Քարիմադին, Պապքան Վախրադին, Դապտա խաթուն, Քրիստափոր, Սողոմոնի որդի Հովհաննես, Գրիգոր, Առյուծ Հոգևորյանց/

դ. Հոգևորականներ ու նրանց ընտանիքի անդամներ /Տեր-Սարգիս, Սարկավագ քահանա, Տրդատ քահանա և նրա կին Խուշուշը/

---

[1] *Անդ, էջ 40:*
[2] *Անդ, էջ 63-64;*
[3] *Դիվան I, էջ 44:*
[4] *Անդ, էջ 29:*

ե. Միջին կարողության տեր անձիք՝ դատելով նրանց նվիրաբերումներից /Մթանաս, Ջուհալ, Մխիթար Շերացի, Դավթի որդի Ըռուբեն, Մուզ Խաչատուրի որդի Ակեո, Մխիթար և իր կին Դիմեթի/

զ. Տարբեր մասնագիտությունների տերեր /Մարգիս լարարար, Ջաքարե հեքիմ, Շահեր վարդպետ, հյուսն Ավետիք/:

Նվիրատուներից մի քանիսը միմյանց հետ կապված էին վասալա-սյուզերենային կապերով:

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1813 1823թթ.

Արտագաղթերն ու բռնագաղթերը, ինչը հատկապես բնորոշ է թուրքահպատակ արևմտահայությանը, դիմախեղեցին հայերի բնօրրան հանդիսացող Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառների ու նահանգների ժողովրդագրական պատկերը՝ իրենց բացասական ազդեցությունն ու հետևանքները թողնելով հետագա դարերի վրա: Այս գործընթացները պայմանավորված էին նաև հարևան երկրների, մասնավորապես Ռուսական կայսրության վարած ժողավրդագրական քաղաքականությամբ, որը նպատակ ուներ հնարավորինս արագ վերաբնակեցնել սահմանային նորանված տարածքները: Այդօրինակ երևույթներ նկատվեցին նաև Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ տասնամյակին՝ մասնավորապես 1820-1823թթ. թուրք-պարսկական պատերազմի ընթացքում:

1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական իշխանություններն ուժեղացրին ռուսներին օժանդակած արևմտահայության հալածանքները: 1813թ. հուլիսի 7-ին Կովկասի կառավարչապետ գեն. Ռտիշչևը բողոքի նոտա ներկայացրեց Թուրքիային՝ պահանջելով դադարեցնել հաշվեհարդարը հայ բնակչության նկատմամբ:[1] Սակայն արևմտահայության վիճակը գնալով շա-

[1] АКАК, т. 5, Тифлис, 1873, док. 932-933.

րունակում էր վատթարանալ: Բռնություններից զերծ չեն մնում նաև Կարսի հայերը:[1]

Փաստորեն գաղթողները ոչ միայն չէին վերադառնում, այլ ընդհակառակը, սաստկանում է արևմտահայերի արտագաղթը: 1814թ. Փամբակում ռուսական զինվորական մարմինները բազմաթիվ խնդրագրեր էին ստանում՝ Անդրկովկասի ռուսահպատակ մարզեր գաղթելու թույլտվություն ստանալու համար:[2] Բայց ի տարբերություն դարասկզբի, այժմ ռուսական կողմը խուսափում էր բացահայտորեն արևմտահայերի զանգվածային գաղթի կազմակերպումից՝ վախենալով վտանգել 1812թ. հաշտությամբ հաստատված խաղաղ իրավիճակը: Հայերը շարունակում էին գաղթել Կարսի փաշայությունից: Շատերը հաստատվում են Ղարաքիլիսայում:[3] Ավելի ուշ՝ 1828թ. ռուսների կողմից Կարսի գրավումից հետո իրենց հայրենի քաղաք, ապա ռուսական տարածքներ են տեղափոխվում պոլսահայ կարսեցիները:[4]

Նահանգի տարածքից դեպի ռուսական տիրույթներ արտագաղթի ուժեղացումից անհանգստացած՝ 1814թ. Կարսի Մահմադ փաշան և Մաղասբերդի Կարաբեկը գեներալ Ռտիշչևին խնդրում են Փամբակում և Շորագյալում բնակվող իրենց փաշայության բնակիչներին ուղարկել նախկին բնակության վայրերը՝ փորձելով այդ պահանջը հիմնավորել Բուխարեստի պայմանագրի այն դրույթով, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը: Ռուսական զինվորական իշխանություններն առերես համաձայնվում են թույլատրել կարսեցիների ետդարձը, բայց իրականում խոչընդոտում են այդ գործընթացը: Ռուսական պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ Ղարաքիլիսայում բնակվում էին 110 ընտանիք, Գյումրիում՝ 20, Բեկանտում՝ 50, Համամլուում՝ 10, Փոքր Ղարաքիլիսայում՝ 20, Լոռիում՝ 60, Ուզունլարում՝ 6, Ճոճկանում՝ 14, Թիֆլիսում՝ 30, Ղազախի և Շամշադինի տարածքում՝ 150, Կախեթում և Քարթլիում՝ 133, ընդամենը 603 ընտանիք: 1815թ. դրությամբ՝ Փամբակի և Շորագյալի գյուղերում վերաբնակված կարսեցիներից միայն 27 ընտանիք է ցանկություն հայտնում վերադառնալ Կարսի էյալեթ, իսկ մյուսները նպատակահարմար են գտնում ընդմիշտ մնալ Ռուսաստանի հպատակության տակ: Ռուսական պաշտոնյաներ Պեստելի և Արղուտինսկու ներկայացրած ցուցակների համաձայն, Կարս վերադառնալ ցանկանում էին Ղարաքիլիսայում բնակվողներից 3 ընտանիք, Լոռիից՝ 25-ը, Շամշադինի Ամիրլար գյուղից՝ մեկ թաթար ընտանիք, ընդամենը՝ 38 ընտանիք: Վրաստանում մնալու ցանկություն է հայտնել Ղարաքիլիսայում 22, Լոռիում 22, Համամլուում 5, Բեկանտում 18, Գյումրիում 13, Փոքր Ղարաքիլիսայում 75, ընդամենը 155 ընտանիք:

---

[1] Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի դիվան, թղթ. 163ա , վավ. 58, 64: Ներսես Աշտարակեցին Կարսի թեմակալ Պողոս արքեպիսկոպոսին դիմում է, որպեսզի ամեն կերպ աշխատի մեղմելու իրականացվող հալածանքներն ու բռնությունները (Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, 164բ, վավ. 773): Աշտարակեցին նաև հանգանակությունների միջոցով ջանում էր ազատել մահմեդականների մոտ գտնվող այն կարսեցիներին, որոնք ենթակա էին ուրացության (Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 250):

[2] Մելքոնյան Ա., Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, N. 5, էջ 16, նաև՝ Իրան-նամէ, 1998, թիվ 1-2-3, էջ 15:

[3] Записки Н. Н. Муравьева. Русский Архив, 1886. кн. I, с. 468.

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 342, ց.1, գ. 2, թ. 2: Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, 27 թղթ, վավ. 57:

Թիֆլիսի քաղաքային ոստիկանությունը հայտնում է, որ թուրքահպատակ տարածքներից Թիֆլիս գաղթած արևմտահայերը ցանկություն են հայտնում բնակվել պետական հողերում: Այստեղ 78 հոգուց 69-ը կարսեցիներ էին: 13 ընտանիք էլ բնակություն էր հաստատել Թելավում և Սղնախում:[1]

1817թ. գարնանը Կարսի հայերը և Երևանից աղալար Մաշադի Աբդուլլան 200 ընտանիքով Լոռի-Փամբակի ռուսական զորքերի հրամանատար, փոխգնդապետ Սավարսամիձեին խնդրում են թույլ տալ բնակության անցնել ռուսական տարածքներում: Սակայն Երմոլովը չցանկանալով հարաբերությունները սրել Պարսկաստանի և Թուրքիայի հետ, առժամանակ ձեռնպահ է մնում այդ ժամանակ ներգաղթի բացահայտ խրախուսումից: Միաժամանակ, Սավարսամիձեն հայերին «չվշտացնելու» համար զանազան բանավոր հավաստիացումներ է անում՝ հարմար առիթի դեպքում այդ բնակչությանը գաղթեցնելու իրենց հաստատակամության առնչությամբ և որ երբևէ, նրանց պահանջելու դեպքում, չեն հանձնի:[2]

1820թ. հոկտեմբերի 22-ին կայսր Ալեքսանդր 1-ինը հատուկ օրենքով ռուսական սահմանները գաղթածներին ազատում է հարկերից և պարհակներից, ինչպես նաև 3 տարով՝ զեմստվային պարտավորություններից:[3]

Թեև ռուսական իշխանությունները բացահայտորեն չէին խրախուսում ներգաղթը (կապված 1812թ. Բուխարեստի հաշտության պայմանների հետ), այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի գյուղերից և քաղաքներից գաղթ տեղի ունենում էր: Եվ այն կարծիքը, թե 1829-1830թթ. և հետո ընկած ժամանակաշրջանում է կատարվել հայաթափման գործընթացը Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, Կարսի նահանգում, ու դրանց հետևանքով են նոր միայն հայաշատ դարձել Արևելյան Հայաստանի շրջանները, իրականությանը չի համապատասխանում: Դրա վկայությունն են Մատենադարանում պահվող բազմաթիվ վավերագրերը:

1822թ. կազմված Շորագյալի, Փամբակի, Սանահինի, Շնողի, Շուլավերի, ինչպես և Սղնախի ու Վրաստանի մյուս գյուղերի չափաբերական մատյաններից պարզվում է, որ Շորագյալի Փոքր Ղարաքիլիսա գյուղում կային Կարսի նահանգի Շորագյալի գավառի Փարկիթ, Ղարախան, Ջումուշլու, Քեչեբորք, Քյադիկլար, Բաշ Շորագյալ, Համզաքեարաք, Ղզլչախչախ, Ճալա, Օպնի, Տեկոր, Տիկնիս գյուղերից և Կարս քաղաքից գաղթած հայեր, Հոռոմում՝ Քեչեբորքի գյուղացիներից: Կարսեցիներ կային նաև Շիրակի Ղալթաղչի և Ղշլաղ, Համամլուի Պարնի գյուղերում, որոնք բնակություն էին հաստատել կալվածատիրական հողերի վրա:[4] Շիրակի Բայանդուր գյուղում կային Ղզլչախչախից, Բաշ Շորագյալից, Ջռչիից, Օղուզլիից, Նախիջևանից, Կարսի գավառի Բենկլի Ահմետ, Կաղզվանի՝ Ղարաբաղ և Քերս գյուղերից եկածներ: Համամլուում հաստատված կարսեցիների, ղզլչախչախեցիների մի մասը բնակվում էին պետական հողերի վրա: Ղարաքիլիսա գյուղաքաղաքի կարսեցիների մի մասը հաստատվել էր պետական, իսկ մյուսները կալվածատիրական հողերի վրա: Ղարաքիլիսայի կալվածատիրական բնակիչնե-

---

[1] AKAK, т. 5, док. 952. Թիֆլիսում վերաբնակված Ղարսեցի տեր Իսրայելը, որը բնակվում էր Հավլաբար թաղում և քաղաքի քարափի փոքր եկեղեցու միաբաններից էր (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 31, վավ. 127, 130):

[2] AKAK, т. 6, ч. 2, Тифлис, 1875, док. 296.

[3] AKAK, т. 7, Тифлис, 1876, с. 847.

[4] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 43, վավ. 298բ:

րի թվում կային նաև կաղզվանցի հայեր:[1] Պարնի գյուղի կալվածատիրական բնակիչների թվում ևս կային կաղզվանցի հայեր, Համամլուում՝ Ղարաբաղ գյուղի հայեր:[2] 1822թ. հունիսից դեկտեմբեր Ստեփանոս վարդապետ Նախիջևանցու կողմից հավաքվում է «արդիւնք տէրունի ժողովրդաց եղելոց ի կողմանս Բամբակա, Լոռւոյ և Շիրակաւանայ»: Խլի Ղարաքիլիսայից հավաքում է տեկորցի, ծպնեցի մի քանի մահացածների և բաշ-շորագյալցի մեկ հոգու պսակի «արդիւնքն»:

Այս վավերագրում տրված է նաև Խլի Ղարաքիլիսա և Գյումրի «նորոգ եկեալ Ղզլչախչախեցւոց (Շորագյալի գավառի գյուղերից) արդիւնքն»: Այդպես է նաև Գյումրի եկած Քյուրակդարա գյուղացի դարբին Մանուկի, Բայանդարդմ Խար գյուղից, Չռչիից, Քոռողլիից, Քյադիկլարից եկածների պարագայում: Տեկորից և Համզագարակից Մեչիտլի գյուղում կային վերաբնակված հայեր, իսկ Ղանլուճայում՝ Ձերմալու գյուղից:[3] 1823թ. Առաքել արքեպիսկոպոսի հրամանով Սանահինի վանքի գործակալ տեր Հարություն Ղարաքեշիշենցու կողմից կազմված «տոմարագրութիւն ծնելոց և մկրտեցելոց, պսակեցելոց և ննջեցելոց է յընթացըս Փամբակայ ուեզդի սեպհական ժողովրդոց» տետրակում, որն ավարտում է 1824թ. հունվարի 15-ին, հանդիպում են Կարսի նահանգից վերաբնակվածների նոր անունների: Այսպես, Ղալթաղչի գյուղում, բացի տեր Աւքիաս Ղարսեցի քահանայից, հանդիպում ենք նաև տեր Վարդանի անվանը, Դարբաս գյուղում՝ տեր Հովհաննես Թքնիզեցուն: Ղշլաղ գյուղում կային Օղուզլու և Քերս գյուղից եկածներ:[4] 1823թ. Ստեփանոս վարդապետի Շիրակավանի և Բամբակաձորի ժողովրդից հավաքած եկեղեցական տուրքերի հաշվեմատյաններում ևս հանդիպում ենք Կարսի նահանգի Ղզլչախչախ, Աղջաղալա, Ճալա գյուղերից Խլի Ղարաքիլիսայում վերաբնակվածների, իսկ Բայանդուրում՝ Տիկնիս գյուղից եկածների:[5] Շիրակի գավառի և գյուղերի 1824թ. կազմված մատյանում նույնպես կան Գյումրիում վերաբնակված Կարսի հայ բնակիչների անուններ: «Տոմարագրության փոքր Ղարաքիլիսեու պսակեալոց սկսեալ յամի տեառն 1824 և յամսեն յունվար» խորագիրը կրող վավերագրից երևում է, որ այդ գյուղում հաստատվել են բազմաթիվ բենկլի ահմետցի հայեր՝ տեր Մկրտիչը իր ծխականների հետ:[6] Նույն պատկերն էր նաև Փամբակի Ղշլախ գյուղում:[7] Կարսի հայ բնակիչներ կային նույնիսկ Շուլավերում:[8]

Ներսես Աշտարակեցին ներկայացնելով 19-րդ դարի երկրորդ տասնամյակի հայ ժողովրդի կրած տառապանքները՝ 1821թ. հոկտեմբերի 17-ին Հովակիմ Լազարյանին ուղղված նամակում գրում է ՝ «վեհազնեայ ազգասէր այնոքիկ մեծագումար բազմութիւնք հայոց որք յամենայն սահմանս պայազիտոյ, վանայ, ղարսայ և շրջակայից նոցին, նաև ինքեան իսկ Կարնոյ մերձակայիցն այս իբրև ՚ի միջոցի 10 ամաց աննշմարելի աներևութացան աւելի քան 40 հազար տունք մերազանց ՚ի և ՚ի թուոյ այնոցիկ գուցէ իբրև 500 տունք գտանիցին անցեալ յայս սահման իշխանութեան մեր տէրութեանց»:[9]

---

[1] Նույն տեղում, վավ. 298գ:
[2] Նույն տեղում, վավ. 298դ:
[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 44, վավ. 349, թ 1-3:
[4] Նույն տեղում, թղթ. 46, վավ. 249:
[5] Նույն տեղում, թղթ. 47, վավ. 279:
[6] Նույն տեղում, թղթ. 50, վավ. 456:
[7] Նույն տեղում, վավ. 458:
[8] Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164, վավ. 1190:
[9] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ, 13 վավ. 173, թ. 2:

1823թ. մայիսի 7-ին Աշտարակեցին օրհնության և քաջալերության գրություն է հղում Կարսից Լոռի ապաստանած հայերին: «...Ահա գոհանամ զամենայն զի ձեր այդ փոփոխութիւնեն լի է տեղն բարութեամբ և մխիթարութեամբ և բազմապատիկ յուսով, քանզի անդէն ՚ի սահմանս Ղարսայ գոլով միշտ ՚ի ներքոյ բարբարոսական բռնաւորութեամբ ոչ երբեք ոչ ինչ բարութենէ յոյս ոչ կապէր լինել վասն քրիստոնէից հասարակութեան...»: Նամակում նա ընդգծում է Օսմանյան կայսրությունում հույների և բազմաթիվ հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները և գովաբանում ռուսական տիրապետությունը. «Ապաքեն թեպետ և նեղութենէ տեղափոխութեանց և կուրստեան տանց կրեալ դուք ևս բազում սրտացաւութենէ կարեն ձեզ պատճառել առ փոքր մի ժամանակի, բայց ողորմութենէ աստուծոյ յոյսն լաւութեաց և ապագայ բարութեաց վասն ձեր հաւատի է յոյժ, քանզի որպես ունիք զբազում օրինակս ձեզ զանթիւ հպատակս բազմութենէ հայոց և զանազան ազգաց որք ՚ի վաղուց ժամանակաց ապահովացեալք ՚ի ներքոյ բարերար հովանաւորութեաց հզոր թևոց քրիստոսապսակեալ մեծ Կայսերական ամենայն ռուսաց ... : ... Աստված, որ քաղցրացուցեալ էր զձեզ միշտ ի վրա կասկածելի կացութեանց ձերոց անդէն ի սահմանս Ղարսայ առաւել ևս ունի քաղցրացուցանել զձեզ այդր ՚ի ներքոյ ամենևին աներկիւղ հովանաւորութենէ հզօր և մեծ ամենաբարեպաշտ տէրութենէ»:[1]

1824թ. հունիսի 28-ին Ներսես Աշտարակեցին Կարսից Լոռի վերաբնակված ժողովրդին հորդորում է երկրի պետական օրենքների համաձայն կրոնավորներին ազատ կացուցանել պետական հարկերին մասնակցելուց. «...քրիստոնեայ ժողովուրդք ևս պարտաւոր են համաձայն կանոնաց քրիստոնեութեան և քրիստոնեաց թագաւորաց ճանաչել զպատիւ եկեղեցւոյ քրիստոսի և պատուել զեկեղեցականս և զքահանայս իւրեանց իբրև զպաշտոնեայս քրիստոսի և զմատուցանօղս սուրբ պատարագի վասն կենդանեաց և վասն ննջեցելոց իւրեանց»:[2] Բամբակաձորում վերաբնակված գաղթականները Աշտարակեցուն բողոքում են իրենց քահանաների անօրինությունների դեմ: Աշտարակեցին էլ 1824թ. սեպտեմբերի 2-ին մի քանի քեհյաների, ի պատասխան վերաբնակվածների գանգատագրի, պահանջում է իրական և մանրամասն ապացույցներ՝ խոստանալով խստիվ պատժել:[3]

Պարսկամերձ Արևմտյան Հայաստանի գավառներից գաղթի նոր ալիք է սկսվում 1820-1823թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ:[4] Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիան զբաղված էր հունական պատերազմով և Անատոլիական մեծաքանակ զորքերը տարվել են հույների դեմ, ինչպես նաև օտագործելով պարսիկ վաճառականներին կողոպտելու առիթը, պարսկական բանակներն անսպասելի մտնում են թուրքական տարածքներ: Աբաս Միրզան միաժամանակ կարծում էր, թե Ռուսաստանը պատերազմ կհայտարարի Թուրքիային՝ կապված հունական դեպքերի հետ, և դրանով էլ ավելի բարենպաստ պայմաններ

---

[1] Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 682:
[2] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166ա, վավ. 78:
[3] Նույն տեղում, վավ. 107:
[4] Այդ ժամանակահատվածի պարսկամերձ արևմտահայ գավառների ազգաբնակչության տեղաշարժերի և պարսիկների կազմակերպած բռնագաղթի մասին մանրամասն տես Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 123-128 և նույնի Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, հ. 5, էջ 17-19:

կստեղծվեն Օսմանյան կայսրության հետ ունեցած սահմանային վիճելի հարցերը ի օգուտ Պարսկաստանի լուծելու համար: Դեպքերի ժամանակակիցը գրում է «...երկուց ազգացն, օսմանցւոյն և պարսիցն խռովեալ ընդ միմիանսն, և վրդովեալ և զաղմուկս մեծամեծս յարուցանեալ, և այնու տալ առնէլ կոխան ոտից զերկիրսն այնր կողմանցն ամբոխեալ զօրաց և զօրապետաց»:[1] Երկու ամիս Աբաս Միրզան պաշարում է Բայազետը, որտեղ իր հիմնական ուժերով փակվել էր Բահլուլ փաշան: Նրան հակառակորդ Կարսի, Վանի, Մուշի փաշաները ոչ մի քայլ չեն ձեռնարկում քաղաքի պաշարումը վերացնելու ուղղությամբ:[2].

Դեռևս 1820թ. Իրանի հպատակ քրդեր, պարսիկ զինվորների հետ միասին, հարձակվում են Կարսի էյալեթի Կաղզվանի սանջակի վրա և բնակչությունից կողոպտած անասուններն ու ունեցվածքը տանում են Իրան:[3]

1821թ. նոյեմբերին, երբ վերսկսվում են ռազմական գործողությունները, Կարսի փաշայության բնակիչները, որոնք հաց էին վաճառում ռուսներին, վախենալով, որ պատերազմը կարող է խանգարել իրենց առևտրին, դիմում են ռուսական հրամանատարությանը խնդրելով զինական աջակցություն հացի առաքումն ապահովելու խնդրում: Ռուսական փոքրաթիվ մի զորաջոկատ մտնում է Կարսի նահանգի տարածք: Բնակիչները մեծ ուրախությամբ են ընդունում ռուսներին ու շարունակում իրենց առևտուրը:[4] Ռուսական զորքերի փաշայությունում գտնվելը նպաստում է նաև նրան, որ պարսիկները չեն համարձակվում ներթափանցել նահանգի խորքերը և կողոպուտ ու գերեվարություն իրականացնել: Այնուամենայնիվ, պարսիկներին հաջողվում է կատարել մասնակի գերեվարություն Կարսի Աղջաղալա գյուղից. «1821թ. պարսիկք ... յառաջացան մինչ ՚ի սահմանս դարսայ և մշու,-կարդում ենք վավերագրերում,- յայն ժամ բազումք գերեվարեցան ՚ի պարսից մեք յաղջաղալայ գիւղում էաք, ես ունեի ինձ եղբայր քահանայ տէր յարութիւն անուն, զսա սպանեցին և սորա որդի մանուկն գերի արարին ... »:[5] 1828թ. դեկտեմբերին վերոնշյալ գյուղից Ավետիք Հակոբյանը էջմիածնի հոգևոր իշխանությանը խնդրում է միջնորդել՝ 1821թ. պարսկա-թուրքական պատերազմի ռազմական գործողությունների ժամանակ գերի տարված և այժմ Երևանի Միրզա Ջաֆարի մոտ գտնվող իր եղբոր որդուն վերադարձնելու համար: Մինչ այդ՝ հաշտություն հաստատվելուց հետո նա և վերջինիս մայրը գալիս են Երևան և գտնում երեխային: Սկզբում ջանում են փողով և աղաչանքով ետ ստանալ տղային: Սակայն պարսիկ զիվորները նրանց վրա կրակ են բացում և անխնա ծեծի ենթարկում:

Նկարագրելով Բայազետի շրջանում Աբաս Միրզայի կատարած ասպատականությունները՝ Ներսես Աշտարակեցին Հովակիմ Լազարյանին գրում է. «ողորմելի բազմութիւն ազգի մերոյ ուր իցէ ժամանելուց, չափ վնասուց աւերութեանցն:[6] 1822թ. գարնանը Թոփրակ-կալեի մոտ թուրքական զորքերը կրում են

---

[1] *Մատենադարան, ձեռագիր, 10195, թ. 9ա:*

[2] *Երիցյան Ալ., Կովկասի Հայք ..., հ. Ա., էջ 404: էջմիածնի վանքի մի քանի եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոսներ «առ ՚ի զգուշութենէ մեզ» սարդարից թույլտվություն ստանալով՝ սկսում են արագացնել վանքի պարիսպների շինարարությունը (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 42, վավ. 79):*

[3] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյանը, հ.Ա. Ե., 1961, էջ 309:*

[4] *АКАК т. 6, ч. 2, док. 466, 470.*

[5] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 519:*

[6] *Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 173, թ. 2:*

ռազմական խոշոր պարտություն. «չափան օղլի փաշայն փախուստ լիսլ 'ի բուն բանակն իւր...»:[1] Իսկ Սիմեոն եպսիսկոպոս Բզնունյանցը Ներսես արքեպսիսկոպոսին հայտնում է ՝ «պարսիքն օսմանցւոց հետ Թօփրախ ղալա պատերազմելէն պարսիկքն յախտելէն փախուստ են դարձեալ ուր լինիլն յատնի չէ այսպէս գիր կա Փամպակիցն Ղարսու փաշէն որէ Խօսրով փաշէն լսելա օսմանցո կոտրվիլն որ ինքն զօրօք մերձ Ղօշավանքու նստած էր փախուստ է տվէլ գնացելա Ղաքսու բերթն է մտիլ և զմեծամեծաց գլուխ է կտրիլ որոց մեկն է ղօչալին Ղարսու...»:[2] Աշտարակեցին նկարագրելով այս դեպքերը՝ Հ. Լազարյանին հայտնում է՝ « ... և մտեալ յամրոց նորին սատակեալ է զբազումս 'ի գլխաւոր այլազգեաց եղելոց անդէն» :[3]

Խուճապի մատնված թուրքերը չեն կարողանում դիմադրություն ցույց տալ: Պարսկական զորքերն առաջանալով՝ մտնում են Կաղզվանի տարածք, ուր նրանց է հասնում Հասան խանը:[4] «...ձայնք պատերազմաց պարսից ընդ հզօր տերութիւնի օսմանցւոց բարձրանան օր ընդ օրէ...»:[5] Պարսկաստանի քուրդ ավազակների մի խումբ էլ, խախտելով սահմանը, մտնում է Կարսի մոտ գտնվող Քյոռ-Օղլի բերդը և այնտեղ ապաստան գտնում:[6]

1822թ. գարնանը իրավիճակը կտրուկ փոխվում է: Պարսկական զորքերը հանկարծակի հարձակվում են Կարսի փաշայության վրա և մեծ վնաս հասցնում: Ամենայն հավանականությամբ, ռուսները, չցանկանալով բախվել պարսիկների հետ, հետ են քաշվում նահանգից: Շորագյալի սանջակի մի քանի գյուղերի բնակիչներ իրենց ընտանիքներով և ունեցվածքով ապաստան են գտնում Գյումրիում: Կարսի Օսման փաշան մայիսի 9-ին պահանջում է Երմոլովից չխոչընդոտել իր հպատակների վերադարձին:[7] Մայիսի 26-ին Երմոլովը պատասխանում է, որ թեև դեմ չէ նրանց հետդարձին, սակայն կողմնակից չէ բռնամիջոցներ կիրառելուն, առավել ևս, որ գաղթականների մեջ քիչ չեն ռուսահպատակները:[8]

Մեծ խուճապ է սկսվում նաև Կարսի փաշայությունում: Տեղի բնակիչները խնդրում են Երմոլովին տիրել Կարսի բերդին: «Ես չէի կարող այն իրականացնել ներկա պայմաններում,- գրում է ռուսական զորքերի գլխավոր հրամանատարը,- սակայն շատ գյուղեր մենք փրկեցինք նրանով, որ գնված հացի պաշտպանության պատրվակի տակ գյուղերում փոքր ջոկատներ էինք տեղակայում: Շատ հայկական գյուղեր ընդմիշտ անցան մեր տարածքը, և թուրքերը դրան չխոչընդոտեցին»:[9] Գնդապետ Սավարսամիձեն, չկարողանալով Կարսից փախած 500 ընտանիքների ապահովել սննդով, 1822թ. հունիսին դիմում է Կարսի փաշային՝ խնդրելով թույլ տալ այդ բնակիչներին՝ վերցնել տեղում թողած իրենց ցորենը: Կարսեցիները, չհանդիպելով թուրքերի հարուցած խոչընդոտներին, բերում են մեծ քա-

---

[1] *Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 42, վավ. 78:*

[2] *Նույն տեղում, վավ. 77:*

[3] *Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ. 13, վավ. 192, թ. 2-3, նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 609:*

[4] *Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 42, վավ. 109, թղթ. 42, վավ. 29բ, նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 330:*

[5] *Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 42, վավ. 29դ:*

[6] *Թուրքական աղբյուրները, h.Ա. էջ 310:*

[7] *АКАК, т. 6, ч. 2, док. 772.*

[8] *Նույն տեղում, док. 773.*

[9] *Утверждение Русскаго владычества на Кавказе, Тифлис, 1906, т. 4, ч. 1, с. 39.*

նակի հաց:[1] Մյուս կողմից, մեր կարծիքով, ռուսների նկատմամբ այս բարեհաճ վերաբերմունքն ամենից առաջ պայմանավորված էր պարսիկների հետ անհաջող պատերազմական իրավիճակի առկայությամբ և հունական դեպքերի հետ:

1822թ. Կարս քաղաքի մերձակայքում պարսկական 12000 զորքը շրջապատում է թուրքական փոքրաթիվ զորաջոկատը: Հինգ օր կռվելուց հետո Կարսի բերդակալից օգնություն չստանալով՝ թուրքերն անձնատուր են լինում. «զորս մերկացուցեալ զոմանս արձակեն և զոմանս գերի վարեն»:[2] 1822թ. աշնանը Հասան խանին հաջողվում է ավերածություններ կատարել Կարսի փաշայությունում. քանդվում, ավերվում, մոխրակույտի է վերածվում Կաղզվանը, Կարսը ու 2000 տուն հայերով ու առատ ավարով խանը վերադառնում է Սարդարապատ, ուր և նրանց բնակեցնում է:[3]

Հասան խանը, կանգ չառնելով նույնիսկ խոլերայի հետևանքով սեփական բանակի մեծ կորուստների առջև, շարունակում է թալանն ու բնակչության գերեվարությունը: Գաղթեցվում են նաև Վանի և Կարսի նահանգների մի քանի գավառների բնակիչներ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հայ օրիորդները:[4] Այնուամենայնիվ, պատերազմի օրերին գտնվում են նաև արևմտահայերի խմբեր Կարսից, Կարինից, Բայազետից, Վանից, որոնք, վտանգելով իրենց կյանքը, կարողանում են հաստատվել Ռուսաստանի տարածքներում: 1822թ. օգոստոսի 9-ին Հովակիմ Լազարյանին հասցեագրված մեկ այլ նամակում, ռուսական տերության մարզերը գաղթած արևմտահայերի մասին Ներսես Աշտարակեցին գրում է. «...ողորմելի բազմութիւնք աղքատաց մերազնեաց տարածելոց ընդ ամենայն սահմանս նշանակեալ կողմանս (վերը նշված շրջանները՝ Հ.Մ.) առ ուր որ բարբարոսաց կռուան եղեալ, նկատելի է թէ յորպիսի հեծութիւնիս կայցեն առ հասարակ և բարեպաշտ համարեալ լինին որք մազապուրծ զանձինս և զընտանիս զօրեն արկանել մերկ ու բոկ ընդ հովանեաւ դրօշակի իւրոյ կայսէրական մեծութեան ամենայն ռուսաց ի Շիրակ գաւառ...»:[5] 1822թ. Շիրակի դաշտը գաղթածները մեծ թիվ են կազմել, ուստի նրանց տեղավորելու համար ռուսական զինվորական մարմինները հատուկ հանձնաժողով են ստեղծել, որի ջանքերով միայն Գյումրիում բնակեցվել է 500 ընտանիք:[6] Բացի Շիրակից, արևմտահայ գաղթականների մի մասը հաստատվել է Լոռիում:[7] Այդ տարվա օգոստոս-սեպտեմբերին Թուրքիայի արևել-

---

[1] AKAK, т. 6, ч. 2, док. 775. Այսպիսի անսպասելի հանդուրժողականությունը, որը իրոք հարգանքի էր արժանի, պարտավորեցնում է գեներալ Վելյամինովին հայտնել ցարին, որպեսզի փաշային մի նվեր ուղարկի կամ նամակով հայտնի առանձնահատուկ երախտագիտություն: Միանգամայն այլ էր Ախալցխայի փաշան, որը Վել յամինովի խնդրանքով Կվարելի գյուղից գերի տարված մի 15 տարեկան տղայի փնտրել ու գտնել էր Կարսում, պահանջում է 3300 դուռուշ: Ռուս գեներալը սա համարելով մեծ գումար՝ հրաժարվում է ու պահանջում առանց փրկագնի վերադարձնել: Հակառակ դեպքում խոստանում է տղայի հորը թույլ տալ Ախալցխայի առևտրականի կամ պաշտոնյայի պատանդ պահելու միջոցով ստանալ իր որդուն (AKAK, т. 6, ч. 2, док. 776):

[2] Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 432:

[3] Սուրատյանց Պ.Հ., Նկարագիր Ս. Հովհաննու վանուց և վիճակի նորին Բագրևանդա, Արարատ, 1889, թիւ Գ, էջ 152:

[4] Հայկունի Ա., Բագրևանդ..., էջ 214:

[5] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 609, նաև՝ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, թ. 2-3, տես նաև Մելքոնյան Ա., Էրզրում, Եր., 1994, էջ 127:

[6] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 127:

[7] Նույն տեղում:

յան շրջաններում ստեղծված ծանր վիճակի հետևանքով ռուսական սահմաններն են գաղթել մեծ թվով հույներ:[1] Վերը նշված հեղինակը գրում է՝ «...նա ինքն (Աստված՝ Հ.Մ.) հայեցեալ ի յանպատեհ ընթացս բնակելոցն յարևելյան կողմանս հայրագոր գրով ողորմութեանն իւրոյ կամեցաւ խնամիլ զնոսա...»:[2]

Այս պատերազմում Պարսկաստանը չկարողացավ օգտագործել ձեռք բերած ռազմական իր հաջողությունները: 1822թ. վերջերից անգլիացիների միջնորդությամբ էրզրումում սկսվում են բանակցություններ:[3] 1823թ. հուլիսի 28-ին կնքված հաշտությամբ վերականգնվում էին նախապատերազմյան սահմանները:[4]

1824թ. մարտի 12-ին Ներսես Աշտարակեցին, կատարելով Հակոբ Աստվածատրյանի խնդրանքը՝ տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի բարվոք դրության, պարսկաթուրքական պատերազմի հետևանքով երկու կողմերի բազմաթիվ քաղաքների ու գավառների ավերման, հայ ժողովրդի տառապանքների և գերության մատնվելու մասին: «Երկիր մեր որում հովանաւոր գտանի տէրութիւնեա ռուսաց, ... լի է ամենայն ապահովութեամբ և լրացեալ բիւրք խաղաղութեանց լիութեամբ ... : Սահմանք Հայաստանի որք ընդ տէրութեան օսմանցւոյ և պարսից հակառակ այնօցիկ լի են ամենայն տառապանօք գերութիւնք և աւերութիւնք անսպառք ի քանի ամաց հետէ, որովք ի մասին օսմանցւոյ պայազիտ, վան, մուշ, ալաշկերտ և դարս քաղաքք եպարքոսականք գրէթէ գտանին ամայացեալք և թշուառացեալք առ հասարակ հայք և այլ ազգիք: Եւ ի մասին պարսից բնակիչք մերձակայ սահմանաց օսմանցւոց նոյնպէս հարուածեալք և նեղեալք. և գերութիւն յերկուցունց բազում հարիւրաւորոք ...»:[5]

Այստեղ կուզենայինք մեջբերել մի հատված Եփրեմ կաթողիկոսի 1823թ. մարտի 22-ի կոնդակից՝ ուղղված Մելքոն Մանուկյանին (Կալկաթա), ուր նկարագրում է հայության վիճակը. «Մեծ բազմութիւնք ամենայն ազգի հայոց ահս դարաւոր ժամանակօք մաշին և հաշին ընդ ամենայն տարածութիւն լայնածոց իշխանութեան սարակինոսաց, իսկ շրջակայք Արարատեան աշխարհին հայոց որք ի մասին նոցա ՝ Կարս, Պայազիտ, Վան, Մուշ, Վաղարշկերտ, Բասենք և այլ գաւառք նոցին, որոց իբրև թե բնաւքն են հայկազնեայք, կոխան ոտից զորաց եղեալ՝ բնակութիւնք նոցին եղեն աւերակք, և ինքեանք առհասարակ ցրուեալք և տարագրեալք ըստ իւրաքանչիւր երեսաց կամ ըստ բռնաբարութեան վարչաց ողորմելի գտան առ հասարակ»:[6] Աշտարակեցին Թիֆլիսի և Հավլաբարի եկեղեցիների երեցփոխներին հանձնարարում է թուրք-պարսկական պատերազմի ընթացքում աղետի ենթարկվածների օգտին յուրաքանչյուր եկեղեցուց նպաստ հատկացնել: Տասնվեց եկեղեցիներից հավաքվում է 60000 ռուբլի:[7] Նկարագրելով Լոռվա գավառը՝ ռուս նշանավոր ռազմական պատմաբան Վ. Պոտտոն գրում է .« ... փարթամ Լոռու տափաստանն արդեն այն ժամանակ (1826թ.՝ Հ.Մ.) բավականին խիտ բնակեցված էր Թուրքիայից և Երևանի խանությունից գաղթական հայերով»:[8]

---

[1] Նույն տեղում:

[2] Մատենադարան, ձեռագիր 10195, թ. 9ա:

[3] Տես AKAK, т. 6, ч. 2, док. 464.

[4] Բայբուրդյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., Եր., 1974, էջ 9: Թուրք-պարսկական սահմանային վեճերի մասին մանրամասն տես այս գրքում:

[5] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166ա, վավ. 26:

[6] Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ., Թիֆլիս 1915, էջ 423:

[7] Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166ա, վավ. 22:

[8] Потто В., Персидская война 1826-1828, т. 3, вып. 1, с. 56. Նաև՝ Քոչարյան Ա., 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը, Երևան, 2000, էջ 22:

Այսպիսով, թուրքական դաժան տիրապետության պայմաններում հայ ստվար զանգվածները անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալիքով, ցանկություն էին հայտնում ինքնակամ արտագաղթել դեպի ռուսական հպատակություն ընդունած տարածքներ: Իրենց հերթին, ռուսական զինվորական իշխանությունները, նպատակ ունենալով վերականգնել, ամրապնդել և վերաբնակեցնել կայսրության նորահաստատ տարածքները, հնարավորինս նպաստում էին այդ գործընթացներին: Թուրք-պարսկական պատերազմի հետևանքով տուժեցին բազմաթիվ հայկական գավառներ, այդ թվում նաև Կարսի փաշայությունը, գլխավորապես Բայազետին սահմանակից հարավային սահմանները, որոնք դարձան սակավամարդ կամ լիովին հայաթափվեցին:

СЕРГЕЙ МИНАСЯН

УЧАСТИЕ АРМЯН ДЖАВАХКА В КРЫМСКОЙ ВОЙНЕ 1853-1856ГГ.

В многовековой истории Армении немало славных страниц было вписано и в 1853-1856гг., когда армяне приняли активное участие вместе с русскими войсками в боях с турецкой армией на Кавказском фронте Крымской войны. Немалую роль в этих боях сыграло и армянское население Джавахка. Как известно, еще в 1829г. по Адрианопольскому миру к Российской Империи была присоедена большая часть бывшего Ахалцихского пашалыка, находящегося на территории исторической армянской области Джанахк. В 1830г. десятки тысяч армян из Западной Армении, во главе со своим духовным предводителем архиепископом Карапетом Багратуни, с согласия русского правительства переселились в районы Ахалцха и Ахалкалака. Тем самым значительно увеличилось коренное армянское население исторического Джавахка, которое в результате многовекового турецкого владычества и особенно в результате русско-турецких войн первой трети 19 века сократилось. Одной из причин того, что русское правительство предпочло поселить выходцев из Западной Армении именно на территории бывшего Ахалцихского пашалыка, было стремление русских иметь на границе с Турцией верное и надежное армянское население[1].

Армянское население Джавахка и новые переселенцы из Западной Армении издавна славились своею храбростью и отвагой, и даже многовековое турецкое владычество не истребило в них природную воинственность. С самого начала присоединившия Джавахка к России они не только приняли активное участие в охране границ с Турцией, но и участвовали во многих войсках России на Кавказе и даже за его пределами. В 1831г. Главнокомандующий на Кавказе генерал-фельдмаршал И. Ф. Паскевич был назначен в Польшу, для подавления вспыхнувшего там восстания. Уезжая с Кавказа, Паскевич пожелал иметь с собой в Польше кавалерийский полк, составленный из народов Кавказа. Этот полк, названный из склонности Паскевича к экзотическим восточным наименованиям Особым Закавказским конно-мусульманским полком, был сформирован и уже в 1834г. прибыл в Польшу. Командиром полка был назначен представитель древней армянской княжеской династии полковник кн.Д.О.Бебутов /брат известого армянского генерала русской армии кн.В.О.Бебутова/. Под командованием полковника кн. Д. О. Бебутова Закавказский конно-мусульманский

[1] *Акты Кавказской Археографической Комиссии /АКАК/, т. VII, Тифлис, 1878, д. 819.*

полк принял участие в подавлении Венгерской революции 1848-1849гг.[1]. В составе Закавказского конно-мусульманского полка служило значительное количество армян. Сохранились свидетельства о том, что по особому указанию фельдмаршала И. Ф. Паскевича в полку служили также армяне из Джавахка и Западной Армении, многие из которых отличились еще во время русско-турецкой войны 1828-1829гг[2]. Армяне Джавахка также оказали большую помощь русским войскам и в подавлении восстания в Гурии в 1841г. 2 сотни Ахалцихской конной милиции, под командованием русского военного коменданта Ахалциха полковника кн. М. З. Арутинского-Долгорукого /героя русско-персидской войны 1826-1828гг., русско-турецкой войны 1828-1829гг. и Кавказско-горской войны, первого среди армянских офицеров достигшего звания генерал-адъютанта русской армии/, сыграли решающую роль в подавлении этого восстания[3].

Однако наиболее значительный и крупный вклад в победу русского оружия на Кавказе армяне Джавахка внесли во время боев с турецкими войсками во время Крымской войны 1853-1856гг.

Боевые действия на Кавказском фронте Крымской войны начались с вторжения турецких войск в русские владения на Кавказе. Пользуясь немногочисленностью русских войск, туркам удалось в ряде мест продвинуться вперед. 13 ноября 1853г. 15-тысячный корпус напал на Ахалцих. Несмотря на упорное сопротивление русских войск, туркам удалось в ряде мест прорваться в черту города. На помощь русским войскам выступило все армянское население Ахалциха, возглавляемое архиепископом Карапетом Багратуни. 14 мая 1853г. 7-тысячный отряд русских войск, вместе с местным армянским ополчением, перешел в контрнаступление. В ходе ожесточенных боев на подступах к Ахалциху и в районе села Суфлис турецкие войска потерпели тяжелое поражение и были вынуждены отступить[4].

В организации успешной обороны Ахалциха армянским населением города важную роль сыграл архиепископ Карапет Багратуни. В своем письме кн. Григору Бебутову /брату генерал-лейтенанта кн. В. О. Бевутова/, архиепископ Карапет указывал, что его долг состоял в том, чтобы в эту тяжелую минуту быть рядом со своим народом[5]. Большую роль в обороне города сыграли и другие представители армянского духовенства. Во время боев с турками особо отличился священник Акоп Суренянц, который, проявив большую храбрость, лично руководил отрядами армянского ополчения. В боях под Ахалцихом многие армянские ополченцы погибли, а десятки попали в плен. Архиепископ Карапет просил Наместника Кавказского кн. М. С. Воронцова особо отметить правительственными наградами Акопа Суренянца[6]. Многие армянские добровольцы и офицеры русской армии из числа армян за отличие в боях под Ахалцихом также были отмечены русскими военными орденами и наградами[7]. В память о знаменитой победе 14 ноября 1853г. под стенами Ахалциха известным ахалцихским

---

[1] *Подробнее о кн. Д. О. Бебутове и Особом Закавказском конно-мусульманском полке см. Генерал-лейтенант Давид Осипович Бебутов, СПБ., 1867.*

[2] *РГВИА, ф. ВУА, д. 1147, л.л. 13-13 ов.*

[3] *Подробнее о действиях ахалцихской милиции и М. З. Аргутинского-Долгорукого см. Кавказский сборник. т. XIV. Тифлис, 1890, стр. 212-303.*

[4] *АКАК, т. X, д. 733.*

[5] *Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 147, վ. 67:*

[6] *Նույն տեղում, թղթ. 147, վ. 66:*

[7] *Պողոսյան Ս. Ս, Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը, Եր. 1958, էջ 36-37:*

оружейным мастером М. Бурнусузяном была изготовлена и подарена от имени г. Ахалциха Наместнику Кавказскому, командиру Отдельного Кавказского корпуса, генералу от инфантерии кн. М. С. Воронцову украшенная золотом сабля из дамасской стали. Эта сабля представляла из себя точную копию аналогичной, подаренной отцом М. Бурнусузяна императору Николаю I при посещении последним Ахалциха в 1837г. Император, которому был подарен этот булатный клинок, раздвоенный на конце, был настолько изумлен искусством мастера, что сразу же присвоил Бурнусузяну офицерское звание и тот в дальнейшем долгое время работал в Петербургском Арсенале в звании штабс-капитана. Сабля, подаренная кн. М. С. Воронцову, хранилась в Кавказском военно-историческом музее[1].

Осенью 1853г. нападению турок подверглись и приграничные села Ахалкалакского участка Ахалцихского уезда, в результате чего были разрушены многие дома, разграблено 9 армянских церквей[2]. Нападению турок подверглись и села русских переселенцев-духоборцев, в результате чего многие были угнаны в плен. Духоборцы, исповедывающие старообрядческую религию, еще в 40-х годах 19 века основали несколько поселений в участке[3]. При вторжении турецких войск осенью 1853г. армянское население Ахалкалака также оказало содействие русским войскам. В частности, большую помощь русским военным властям оказал армянский священник Ахалкалака и Цалки Петрос Акопян, представленный к правительственной награде[4].

Через несколько дней после победы над турецкими войсками под Ахалцихом, русские войска Главного действующего корпуса, под командованием армянина, генерал-лейтенанта кн. В. О. Бебутова, 19 ноября 1853г. разгромили турецкие войска в битве под Кадакляром. Эти два тяжелых поражения турецких войск надолго предотвратили угрозу вторжения неприятеля в Закавказье. Они оказали большое впечатление и на турецкое население приграничных с русскими владениями территорий, которое в основном и участвовало в набегах на армянские и духоборские села. После известия о разгроме турок под Кадакляром, турецкие села Зарншатского и Шурагельского санджаков выразили покорность русским властям и возвратили несколько десятков пленных духоборцев и скот, угнанный ранее из Ахалкалакского участка[5].

С наступлением зимы активные боевые действия на Кавказском фронте прекратились. Они вновь возобновились лишь с весны 1854г. Несмотря на разгром турок в предыдущем году, кампания 1854г. началась для русских войск на Кавказе в неблагоприятных условиях. Вступление Англии и Франции в войну на стороне Турции, и в следствии этого, невозможность усиления и без того малочисленных войск Отдельного Кавказского корпуса, создали для русского командования сложную ситуацию. Сообщая о своих планах относительно обороны Ахалкалакского участка, командир Действующего корпуса генерал-лейтенант кн. В. О. Бебутов в своем докладе командиру Отдельного Кавказского корпуса генералу от кавалерии Реаду от 13 июля 1854г. указывал, что в случае вступления крупных неприятельских сил русский Ахалкалакский отряд, усилив гарнизон Ахалкалака 2 ротами, с остальными силами должен был, не вступая в бой, отступать в сторону Цалки и Манглиса. Оборону Ахалкалака должны

---

1 *Указатель по Кавказскому военно-историческому музею, Тифлис. 1907. стр. 112-113.*
2 *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 355, ց. 3, գ. 263, թ.թ. 1-9:*
3 *Մելքոնյան Ա., Ջավախք. Պատմության ուրվագծեր, Եր., 1999, էջ 16:*
4 *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 355, ց. 3, գ. 267, թ.թ. 1-3:*
5 *РГВИА. ф. ВУА. д. 5622, ч. 2, л.л. 83-83об.*

были осуществлять немногочисленный гарнизон города и местное армянское население[1]. Одновременно кн. В. О. Бебутов в своем письме к армянскому католикосу Нерсесу Аштаракеци писал о значительной материальной и моральной помощи, которую оказывали армяне Джавахка русским войскам. Генерал-лейтенант Бебутов просил особо отметить наградами многих старейшин и священников армянских сел Джавахка, в том числе Тер-Мелкона Мкртчяна из села Ганза, Тер-Григора из села Сатха и многих других[2].

С начала лета 1854г. турецкие войска предприняли несколько атак на приграничные армянские села и посты русских войск довольно значительными силами, но были отбиты русскими войсками и сформированным армянским ахалкалакским ополчением. 14 июня 1854г. турецкий кавалерийский отряд численностью в 800 человек напал на селение Сулда Ахалкалакского участка. Вначале неприятелю удалось отбить некоторое количество скота и угнать часть лошадей расквартированного в Сулде казачьего поста. Однако подоспевшие из Ахалкалака русские войска и армянская милиция отразили нападение турок. После чего, преследуя отступавшего неприятеля, войска Ахалкалакского отряда ворвались в села соседнего Чалдырского санджака. Приведя в покорность жителей с анджака и возвратив угнанный скот, русские войска вместе с армянской милицией возвратились обратно[3]. 19 июня благодаря деятельности Ахалцихского армянского ополчения была предотвращена попытка неприятельского отряда вторгнуться в окрестности Ахалциха. Армянские конные ополченцы, причинив турецкому отряду потери, вынудили его бежать[4]. 16 июля 1854г. крупная неприятельская кавалерийская группа 3 раза атаковала духоборское село Троицкое, но каждый раз была с потерями отбита находившейся в этом селе сотней Ахалкалакского армянского ополчения[5].

24 июля 1854г. у селения Кюрюк-дара /неподалеку от Гюмри/ русский 18-тысячный корпус под командованием генерал-лейтенанта кн. В. О. Бебутова наголову разгромил 60-тысячную турецкую армию. После этого поражения турецкие войска больше не решались на крупное наступление и угроза турецкого нашествия в Закавказье была полностью ликвидирована[6]. Однако русские войска в 1854г. также не смогли перейти в наступление в Западной Армении, из-за своей малочисленности. Участие армян Джавахка в этот период боевых действий вновь свелось к отражению грабительских набегов турецкой кавалерии на приграничные армянские селения. Хотя после Кюрюк-даринского сражения генерал-лейтенант кн. В. О. Бебутов планировал силами Ахалкалакского отряда и местной армянской милиции предпринять контрнаступление и занять Ардаган, однако известие о высадки новых турецких войск в Батуми и угроза вторжения неприятельских сил в Западную Грузию вынудило русское командование отказаться от этого намерения и перейти к активной обороне[7].

С лета 1854г. Ахалкалакская армянская милиция была расположена в приграничных армянских селах Карзах, Сулда, а также в ряде духоборских сел и активно

---

[1] *РГВИА, ф. ВУА, д. 5623, л. л. 179-180об.*
[2] *Սատենադարան, Ֆ. Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վ. 128:*
[3] *РГВИА, ф. ВУА, д. 5622, ч. 3, л. л. 28-32.*
[4] *Там же, л. л. 33-34.*
[5] *Там же, л. л. 138-140.*
[6] *АКАК, т. Х, д. 761.*
[7] *РГВИА, ф. ВУА, д. 5622, ч. 3, л. л. 245-249 об.*

несли сторожевую и дозорную службу. Вместе с этим, армянская милиция также участвовала в обеспечении спокойствия на территории соседнего Чалдырского санджака, осуществляя свор налогов и податей с турецких владений приграничных районов[1]. В Ахалцихе армянское конное ополчение также несло караульную и сторожевую службу, пересекая попытки разбойничьих набегов со стороны соседнего Поцховского санджака, нанося противнику потери[2].

Армяне Джавахка оказывали помощь русскому военному командованию и в ведении разведывательной деятельности в соседних турецких владениях, доставляя важную информацию о состоянии турецких войск, их численности, а также укреплениях. Так, например, в конце марта 1854г. ахалцихский житель Мкртыч Айвазян доставил важные сведения о неприятеле, в частности о состоянии крепостных укреплений Карса и количестве турецких войск, а также о прибытии в состав гарнизона крепости подкреплений из Аравии, вооруженных ударными ружьями[3]. Важные сведения о военно-политической ситуации в Эрзруме и состоянии турецкой армии сообщил Микаел Бакразян, боец Ахалцихского конного ополчения. ОН во время одного из боев попал в плен, был увезен в Эрзрум, затем находился в Хое, однако после он смог бежать и достигнув русского дипломатического представительства в Персии, доставил важные разведывательные сведения[4].

В начале 1855г. в руководстве русскими войсками на Кавказе произошли значительные изменения. Новым Наместником на Кавказе и Главнокомандующим Отдельным Кавказским корпусом был назначен генерал-адютант Н. Н. Муравьев. С прибытием Муравьева в Действующий корпус русские войска, получив значительные подкрепления, стали готовится к активным наступательным действиям против турок в западной Армении. По всему Закавказью началось формирование местных ополчений, в том числе вновь формировалось армянское ополчение в Джавахке /Согласно распространенной практике навора русским командованием местного ополчения на Кавказе оно обычно навиралось весной, а с приближением зимы, т. е. прекращением активных боевых действий, распускалось/. Армяне Джавахка сформировали как самостоятельные кавалерийские подразделения, так и выставили отдельную армянскую сотню в составе 3 конно-мусульманского полка, совранного из армян, курдов и карапапахов приграничных районов. Таким овразом, кроме армянской сотни 3 конно-мусульманского полка, в составе Ахалцихского отряда русских войск под командованием генерал-майора Ковальского состояли 2 сотни Ахалкалакской конной милиции, а для содержания пограничной стражи и разъездов находилось 2 сотни Ахалцихской армянской конной милиции[5]. При этом надо отметить, что наименование "конная сотня" в ополчении по штатам соответствовало эскадрону регулярной кавалерии, и насчитывал 120-130 человек. Таким овразом, численность только конного армянского ополчения Джавахка, участвовавшего в компании 1855г. в боях на Кавказском фронте Крымской войны, составила более 600 человек, что превышало численность регулярного кавалерийского полка русской армии.

---

[1] *Там же, л. л. 254-255 ов.*
[2] *Там же, л. л. 256-259 ов.*
[3] *ЦГИАГ, ф. 1087, оп.1, д. 462, л. 3.*
[4] *Там же, ф. 11, оп. 1, Д. 2889, л. л. 8-9 ов.*
[5] *Муравьев Н. Н., Война за Кавказом в 1855г., т. 1, СПБ., 1877, стр. 32.*

23 июня 1855г. крупный турецкий кавалерийский отряд напал на пограничный русский пост в Ахалкалакском участке. На помощь русским пограничникам вскоре прибыли из Ахалкалака части 3 конно-мусульманского полка под командованием полковника кн. Орбеляна и русские пехотинцы. Не понеся потерь убитыми, бойцы полка, в составе которого входили и ахалкалакские ополченцы, вместе с казаками и русскими солдатами разгромили турецкий отряд, который, потерял более 70 человек - убитыми, обратился в бегство[1]. В этом бою особенно отличился кавалерийский отряд под командованием Самсоняна[2].

В июле 1855г. Н. Н. Муравьев решил блокировать Карс, где были сосредоточены основные турецкие силы в Западной Армении. Согласно плану Муравьева, войска Отдельного Кавказского корпуса, вместе с местными ополчениями, должны были с флангов обойти Карс и тем самым, перерезав коммуникации с Эрзрумом, отрезать Карскую группировку от остальных турецких сил. На правом фланге русских войск эту задачу предстояло выполнить Ахалцихскому отряду. В авангарде этого отряда должен был действовать сформированный в Ахалкалаке особый летучий кавалерийский отряд, под командованием полковника барона Унгерн-Штернберга, которому предстояло занять Ардаган, для прекращения сообщений Карса с Батумом и Ардяганом. 20 июля 1855г. отряд барона Унгерн-Штернберага, в составе 3,5 сотен казаков, 3 сотен милиции 3 конно-мусульманского полка и 2 сотен Ахалкалакской армянской конной милиции, без особых трудностей занял Ардаган[3]. 26 июля отряд барона Унгерн-Штенберга соединился с отрядами генерал-майора Балканова, тем самым в тылу турецких войск оказалась крупная кавалерийская группировка, отрезавшая коммуникации турецкой армии[4]. Вскоре 1 сотня Ахалкалакской конной милиции вошла в состав особого отряда генерал-майора Балканова, перешедшего Саганлугский хребет для действий в глубоком тылу турецких войск в направлении Эрзрума[5]. Остальные части Ахалкалакской милиции должны были осуществлять блокаду Карса, а для несения караульной и дозорной службы в Ахалкалаке и Ахалцихе там были оставлены по сотне армянской милиции[6].

Блокада Карса была полностью завершена к 4 августа. Через несколько дней крупный турецкий неприятельский отряд попытался прорваться к Карсу для его деблокады. В ходе ночного боя русским войскам удалось разгромить часть турецкого отряда, оставшиеся в живых турецкие кавалеристы стали отступать по Самоватскому ущелью обратно" Однако там, почти на самой границе Гельского санджака их встретил отряд Ахалкалакского ополчения, скакавший по тревоге со стороны Айгер-гельского озера. Очевидец этого ночного боя так описывал действия армянской милиции: "Часть турок спешилась и на этот раз, окружив себя трупами убитых лошадей, держалась упорно, несмотря на отчаянную храбрость ахалкалакской сотни 3 конно-мусульманского полка. Рассказывали, что один из всадников этой сотни, Акоп-Назар Назаретов, получил две

---

[1] *Там же, стр. 117-118. а также Воспоминания о Закавказском походе 1855г., Кавказский сборник, т. XXV, Тифлис, 1906, стр. 49-50.*

[2] *Պողոսյան Ս. Մ., Նշվ. աշխ., էջ 67:*

[3] *Муравьев Н. Н., указ. соч., т. I. стр. 195.*

[4] *Там же, стр. 197.*

[5] *Записки генерала от артиллерии Э. В. Бриммера. Приложение, Кавказский сборник, т. XIV, Тифлис, 1899, стр. 500.*

[6] *Из записок и воспоминаний о походе в Азиатскую Турцию в 1855г., стр. 255, а также АКАК, т. XI, с. 385.*

тяжелые раны, но до тех пор оставался в бою, пока третья рана пулею в грудь навылет не сбросила его с лошади. В это время появилась рота Белевского полка и уже штыками покончила с неприятелем"[1]. В этом бою армянская милиция понесла большие потери, отряд Унгерн-Штернверга потерял до трети своей милиции, однако потери турок были намного больше. Точного числа убитых турок установить не удалось, однако были захвачены 5 турецких знамен, 400 пленных и более 800 лошадей убитых турецких всадников. Были также захвачены богатые трофеи и имущество, доставшиеся казакам и ополченцам[2].

После занятия русскими Поцховского и Чалдырского санджаков и основания там военными властями местных органов власти, их возглавили в основном армяне, занимавшие до этого государственные посты в Ахалкалаке и Ахалцихе, а также служившие в местной полиции. Так, начальником Чалдырского санджака был назначен Саркисов, его помощником был Ахалкалакский участковый заседатель прапорщик Агаларов[3]. В состав управления санджаком входили Иван Аветисов, Рафайел Сагателов. Карапет Лалаханов и другие[4]. Помощником начальника, а затем начальником Поцховского санджака является Ахалцихский полицмейстер, колежский регистр Гаспаров, русские войска в Ардаганской области обеспечивал продовольствием губернский секретарь Мелик Атамов[5]. Кроме управления этими областями им приходилось также обеспечивать армянское население Джавахка от попыток развоя и угона скота, которые совершали турки и аджарцы приграничных областей и не прекращавшиеся вплоть до окончания войны. Так, например, 18 сентября 1855г. 80 аджарцев напали на села Поцхвского санджака с целью разбоя. Посланный вдогонку за ними помощник управляющего санджаком Гаспаров с 10 казаками и 25 ахалцихскими конными милиционерами смог захватить нескольких из них в плен, предотвратив попытки грабежа со стороны аджарцев[6]. Попытки угона скота предпринимались мусульманским населением приграничных районов и в районе села Карзах Ахалкалакского участка, однако обычно удавалось их пресекать в основном силами местного населения и милиции[7].

Хотя в конце 1855г. русские войска заняли Карс и взяли в плен всю группировку турецких войск, однако события на других фронтах Крымской войны сложились для русских неблагополучно. Однако участие армянских ополчений, в том числе и сформированных в Джавахке. в Крымской войне 1853-1856г.г, несмотря на неудачный исход боевых действий, является одной из ярких страниц военной истории армянского народа.

---

[1] *Воспоминания о Закавказском походе..., стр. 107-108.*
[2] *Воспоминания о Закавказском походе ..., стр. 108.*
[3] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 353, ց. 1, գ. 5, թթ. 7-14:*
[4] *Նույն տեղում, գ. 1, թ. 37:*
[5] *Նույն տեղում, թ. թ. 6, 12-13, 22-23:*
[6] *Муравьев Н. Н., указ. соч., т. II. стр. 396.*
[7] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 353. ց. 1, գ. 9, թ.թ. 1-3:*

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ /19-ՐԴ ԴԱՐ/

18-րդ դարի վերջին երկու տասնամյակներին Անդրկովկասի ռազմաքաղաքական իրադրության համար բնութագրական էր այն, որ մինչ այդ Երևանի խանության կազմի մեջ գտնվող Շորագյալը (Արևելյան Շիրակ), ի թիվս այլ տարածքների, Երևանի խաների և Վրաստանի թագավորների միջև վերածվում է կռվախնձորի: Իրադրությունը սրվեց հատկապես 1779 թվականից, երբ Հերակլ Բ վրաց թագավորը հաջողված արշավանքի արդյունքում Երևանի խանությունից պոկեց Շորագյալը և այն միացրեց Վրաստանին՝ նրա սուլթան Ղահրամանին դարձնելով իրեն հպատակ[1]: Դրանից հետո Շորագյալը հետ վերցնելը դառնում է Երևանի խաների մշտական մտահոգության առարկան ընդհուպ մինչև դարավերջ, որովհետև պարսիկներին միայն 1800 թվականի վերջերին է բախտ վիճակվում Նախիջևանի Քյալբալի խանի գլխավորությամբ հաջողությամբ պսակել դեպի Շորագյալ արշավանքը: Քյալբալի խանը, նեղելով վրաց Գեորգի XII-ի կողմից Շորագյալի պաշտպանության համար ուղարկված իշխան Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ գործող 400-հոգանոց ջոկատին*, վերազավթում է այն:

Այս իրավիճակն անափոփոխ պահպանվում է մինչև 1805 թվականը, երբ ռուսական զորքերը գեներալ-մայոր Պ. Նեսվետաևի գլխավորությամբ Շորագյալը միացնում են Ռուսաստանին: Իսկ այս իրադարձությանը նախորդել էր հետևյալը. 1804 թվականի վերջերին իշխան Պ. Ցիցիանովը Շորագյալի Բուդաղ սուլթանին առաջարկել էր ընդունել ռուսական հպատակություն: Դրանից կարճ ժամանակ անց Բուդաղ սուլթանը Երևանի խանի կողմից պատանդ է տարվում: Օգտագործելով այս առիթը՝ Նեսվետաևը զորքեր է մտցնում Շորագյալի տարածք, և արդեն 1805 թվականի մարտի 3-ին այն միանում է ռուսական տերությանը[2]: Նույն թվականի օգոստոս ամսին գերությունից վերադարձած Բուդաղ սուլթանին այլ բան չէր մնում, քան ռուսահպատակ դառնալ[3]: Թեև Շորագյալի միացումը Ռուսաստանին վերջնականորեն կայացավ միայն 1813 թվականին, երբ նրա՝ Ռուսաստանին անցնելը վավերացվեց Գյուլիստանի պայմանագրով (1813թ.)[4], այնուամենայնիվ արդեն 1805 թվականից սկսած՝ Շորագյալը (Արևելյան Շիրակ), իբրև ռուսական տարածք, բնականաբար ենթակա է դառնում ռուսական իշխանությունների կողմից ամբողջ 19-րդ դարի ընթացքում պարբերաբար կատարվող վարչատարած-

---

[1] *Լ.Ա. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Եր., 1953, էջ 178:*

**Որոշ տեղեկությունների համաձայն Ցիցիանովին էր միանալու նաև Մելիք Աբովն իր ջոկատով.(տե՛ս АКАК т. I, Тифлис, 1866, стр. 158.)*

[2] *АКАК т. 2, Тифлис, 1868, стр. 574.*

[3] *Присоединение Восточной Армении к России, Сборник документов, том I(1801-1813г.г.), Ер., 1972, стр. 337-338, док. 276.*

[4] *Մաշտոցի անվան Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 9, էջ 6. տե՛ս նաև՝ Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը (1801-1879թթ.), Եր., 1959, էջ 30:*

քային բաժանումներին, որոնց բազմաքանակությունը առաջին հերթին հետևանք էր Անդրկովկասը ռուսների կողմից ոչ միանգամից, այլ աստիճանաբար և մաս-մաս յուրացնելու:

Այդ բաժանումներից առաջինը, որ ուղղակիորեն առնչվում էր Շիրակի հետ, Վրաստանի կազմում 1805 թվականին Փամբակ-Շորագյալի դիստանցիայի ստեղծումն էր Ռուսաստանին ավելի վաղ (1801թ.) միացած Փամբակի և Շորագյալի միավորմամբ[1]:

Անդրկովկասյան նվաճված տարածքների հաջորդ վարչատարածքային բաժանման համար (1829 թվական) հիմք ծառայեցին մի շարք նոր պատմաքաղաքական իրադարձություններ, որ տեղի ունեցան տարածաշրջանում՝ սկսած 1813 թվականից: Նախ Գյուլիստանի (1813թ.), իսկ հետո նաև Թուրքմենչայի (1828թ.) և Ադրիանապոլսի (1829թ.) պայմանագրերով Պարսկաստանը Ռուսաստանին էր զիջել Գյանջայի, Ղարաբաղի, Բաքվի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Երևանի, Նախիջևանի խանությունները, իսկ Թուրքիան՝ Ախալցխայի փաշայությունը, և այդ տարածքների վրա վարչատարածքային սույն բաժանմամբ[2] 1829թ. վերջերին ձևավորվում են ռուսական 7 նոր նահանգներ, ինչպես նաև Հայկական մարզը՝ բաղ-կացած երկու մասերից. դրանցից առաջինը ներառում էր Երևանը, Նոր Բայազետը, Էջմիածինը, Սուրմալուն, նաև՝ Շարուրի տարածքի մի հատվածը, իսկ երկրորդը՝ Շարուրի մնացած մասը և ամբողջ Նախիջևանը[3]:

Վերը ասվածից դժվար չէ եզրակացնել, և այդ են հավաստում նաև պատմա-կան աղբյուրները[4], որ վերոհիշյալ վարչատարածքային բաժանումը ռուսական իշխանությունների կողմից գերազանցապես լուծել է մեկ առաջնահերթ խնդիր՝ 1813-1829թթ. Ռուսաստանին անցած անդրկովկասյան նոր տարածքների վրա վարչական նոր միավորների ձևավորման հրատապ հարցը և նպատակ չի հետապնդել կատարե-լու նախկինում արդեն ստեղծվածների ներքին վերաձևումներ կամ վերջիններիս կազմի մեջ մտնող տարածքների փոխադրումներ նոր ձևավորվող վարչական միավորների մեջ:

Ի դեպ, այս բաժանմանը հաջորդող՝տասնամյակը հիրավի նշանակալից եղավ Շիրակի պատմության մեջ՝ շատ բանով կանխորոշելով տարածքի տեղը Անդրկովկասի հետագա վարչատարածքային բաժանումների համակարգում: Նկատի ունենք մասնավորապես այն, որ մինչ այդ շատ նոսր բնակեցված տարածքը, գերազանցապես արևմտահայության ներգաղթի պատճառով, շատ արագ համալրվեց հայ ազգաբնակչությամբ, որը 30-ական թվականների վերջերին արդեն բնակչության գերակշռող տարրն էր Շիրակում: Պակաս կարևոր նշանակություն չունեցավ նաև այն հանգամանքը, որ 1837 թվականին ավարտվել էր Գյումրու բերդի շինարարությունը, և Գյումրի գյուղը վերանվանվել էր Ալեքսանդրապոլ քաղաք[5], որը կարճ ժամանակ անց ձեռք էր բերել գավառային քաղաքի կարգավիճակ:

---

[1] *Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. I, СПб., 1885, стр. 360.*

[2] *Историческая записка об управлении Кавказом, т. I, С. Эсадзе, Тифлис, 1907, стр. 65.*

[3] *Иваненко В.Н., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого князя Михаила Николаевича, Тифлис, 1901, стр. 241-242.*

[4] *Историческая записка об управлении Кавказом, նույն տեղում:*

[5] *"Кавказский календарь на 1852 год", Тифлис, 1851, стр. 273.*

Տարածաշրջանում կուտակված բազմաթիվ ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական, նաև ազգային ու հոգևոր խնդիրների ավելի նպատակահարմար լուծումների որոնման անհրաժեշտությունը հանգեցրեց Անդրկովկասի վարչա-տարածքային նոր բաժանման, որն իրագործվեց 1840 թվականին: Այս գործում առաջնությունը պատկանում էր գեներալ Ի. Պասկևիչին: Վերջինս առաջարկում էր արմատապես փոխել Անդրկովկասի մինչ այդ գործող վարչատարածքային կառուցվածքը և բոլոր գրավյալ տարածքներից ստեղծել երկու նահանգ ու մեկ մարզ: Ընդ որում, Պասկևիչի նախագծի համաձայն, նահանգներից մեկը կոչվելու էր Վրացական, երկրորդի անունը որոշելու էր Ինքնակալ կայսրը, իսկ մարզն, ըստ նախագծի հեղինակի, պիտի անվանվեր Հայկական՝ Երևան կենտրոնով և ռաժանվեր չորս շրջանների՝ Փամբակ-Շորագյալի, Երևանի, Նախիջևանի, Կողբի[1]:

Այս առաջարկը, որն ավելի առաջադիմական էր մասնավորապես հայաշատ տարածքները մեկ վարչական միավորի կազմում ներառելու տեսակետից, անհրաժեշտ պաշտպանություն չի գտնում, և ընդունվում է Անդրկովկասի վարչատարածքային նոր կառուցվածքի վերաբերյալ սենատի անդամ բարոն Գանի ծրագիրը: Վերջինս անդամ էր ցարի հրամանով 1837 թվականին Անդրկովկաս ժամանած այն հատուկ հանձնաժողովի, որը պիտի զբաղվեր տեղաբնակ ժողովրդների բարքերի ու սովորությունների ուսումնասիրությամբ: Այս աշխատանքին զուգահեռ բարոն Գանը լրջորեն զբաղվում էր նաև մեկ այլ՝ Անդրկովկասի նոր վարչատարածքային բաժանման նախագծի մշակմամբ: 1838 թվականին վերոհիշյալ հանձնաժողովն ուշադրության է արժանացնում Գանի սույն նախագիծը՝ առաջարկելով նրանում կատարել մի շարք էական փոփոխություններ: 1838 թվականի վերջերին հանձնաժողովը վերստին անդրադարձավ այդ նախագծին, որի վերամշակված տարբերակը զգալիորեն տարբերվում էր առաջինից[2], և չնայած ընդդիմախոսների բավականին զորեղ դիմադրությանը, այնուամենայնիվ այն հանձնաժողովի դրական երաշխավորությամբ ներկայացվեց ցարին: 1840 թվականի ապրիլի 10-ի իր հրամանագրով Նիկոլայ Ա-ը վավերացրեց Անդրկովկասի վարչատարածքային նոր կառուցվածքը, որը կյանքի կոչվեց շատ կարճ ժամանակահատվածում՝ ռուսական Անդրկովկասը բաժանելով երկու հատվածի՝ Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի:

Հատկանշական է այն, որ հենց 1840 թվականի վերոհիշյալ կառուցվածքային բարեփոխման շնորհիվ էր, որ Անդրկովկասում ի հայտ եկավ նոր վարչատարածքային միավոր՝ Ալեքսանդրապոլի գավառը[3], որը ի թիվս տասը այլ գավառների (Թիֆլիսի, Թելավի, Գորիի, Բելոկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի, Նախիջևանի, Ախալցխայի և Գուրիայի) մտավ Վրացաիմերեթական նահանգի կազմի մեջ: Հարկ ենք համարում առանձնակի նշել այն հանգամանքը, որ անդրկովկասյան տարածքների վերաձևումը երկու հսկայական հատվածների և սրանց կազմում ընդհանուր հաշվով 18 գավառների առանձնացումը արմատապես փոխում էր Անդրկովկասի վարչատարածքային կառուցվածքը՝ հանգեցնելով նախկինում գոյություն ունեցած մի շարք միավորների լուծարման կամ նրանց տարածքային նկատելի ձևափոխումների: Ասվածի լավագույն վկայությունը հենց Ալեք-

---

[1] *АКАК, т. 7, док. 4, Тифлис, 1878, стр. 37-38.*

[2] *Историческая записка об управлении Кавказом, том I, С. Эсад[illegible]*

[3] *АКАК, т. IX, часть II, Тифлис 1884г., стр. 604-611,* նաև *К[illegible]казский календарь на 18[illegible] год, Тифлис 1851г., стр.273.*

սան-դրապոլի գավառն է, որը, որպես Վրացաիմերեթական նահանգի կազմում վարչա-տարածքային միավոր, ձևավորվեց Փամբակ-Շորագյալի դիստանցիայի տարածքին նախկին Բորչալուի գավառի մի հատվածի (Լոռի) և Ախալքալաքի[1] տեղամասի հավելումով:

Ընդամենը վեց տարի անց՝ 1846 թվականին իրագործվեց Անդրկովկասի հաջորդ թվով չորրորդ վարչատարածքային ձևափոխությունը: Արանում, անշուշտ, էական դեր խաղաց 1844 թվականին Կովկասի փոխարքայության ստեղծումը: Թեև վերջինիս ստեղծման իրական պատճառները ոչ մի տեղ չեն նշվում, այնուամենայնիվ, այդ մասին ակնարկվում է Նիկոլայ Ա-ի մի նամակում, ուր փոխարքայության ստեղծումն Անդրկովկասում ներկայացվում է որպես ցարի կողմից «լիակատար վստահության նշան» Վորոնցովին[2]: Իր փոխարքայության երկրորդ տարում արդեն Վորոնցովը իրականացրեց Անդրկովկասի նոր վարչատարածքային բարեփոխումը, որի համաձայն՝ 1846 թվականից ամբողջ երկրամասը տրոհվում էր նախկին երկուսի փոխարեն չորս նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Դերբենդի և Շամախու: Նահանգների քանակի ավելացումը փոխարքայի կողմից հիմնավորվում էր նահանգական իշխանությունները, ոստիկանական և դատական մարմինները բնակչությանն ավելի մոտեցնելու կենսական անհրաժեշտությամբ, մյուս կողմից այն պատճառաբանությամբ, որ համեմատաբար ավելի փոքրածավալ վարչատա-րածքային միավորները շատ խոշորների համեմատությամբ առավել հեշտ կառավարելի են: Այս անգամ Ալեքսանդրապոլի գավառն իր Լոռի, Փամբակ, Ախալքալաք և Շորագյալ գավառակներով հայտնվեց նոր ստեղծված Թիֆլիսի նահանգի կազմում[3]:

Երեք տարի անց Անդրկովկասը հայտնվեց այս անգամ արդեն թվով հինգերորդ վարչատարածքային բաժանման փաստի առջև: 1849 թվականի հունիսի 9-ին փոխարքայի հրամանով Թիֆլիսի և Շամախիի նահանգների որոշ տարածքների միավորումով ստեղծվեց Երևանի նահանգը՝ իր Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառներով: Ընդ որում, Ալեքսանդրապոլի գավառից դուրս հանվեց Ախալքալակի տեղամասը և առանձին գավառի կարգավիճակով միացվեց վերաձևված Թիֆլիսի նահանգին: Չնայած դրան, ակնհայտ է, որ սույն վարչատարածքային բաժանումը նպաստավոր պայմաններ էր ստեղծում Անդրկովկասի հայաշատ տարածքներն աստիճանաբար մեկ նահանգի մեջ հավաքելու, միավորելու համար, մանավանդ որ նորաստեղծ Երևանի նահանգի մեջ առնվեց նաև Շուշիի գավառի առավել հայաշատ մասը (Զանգեզուրյան հատվածը)[4], որը մինչև 1849թ. բաժանումը Շամախիի նահանգի գավառակներից մեկն էր:

Սակայն այսքանով չավարտվեցին Անդրկովկասի վարչատարածքային վերաձևումները 19-րդ դարում: Ընդհակառակը, 1859թ., ապա 1862 և 1868 թվականներին իրագործվում են վարչատարածքային բաժանման նոր փորձեր, որոնցից առաջինը հանգեցնում է Դաղստանի, իսկ վերջինը՝ Ելիզավետպոլի նահանգների ստեղծմանը: Վերոհիշյալ երեք փորձերից թերևս միայն երկրորդն էր (1862 թ.), որ

---

[1] *Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918г., стр. 85-86.*

[2] *Այդ մասին մանրամասն տե՛ս С. Эсадзе, նշվ. աշխ., էջ 83-84:*

[3] *Դ. Սարգսյան. Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը 19-րդ դարի վերջին, ՇՊ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. I, Գյումրի, 1998, էջ 141-143:*

[4] *К столетию присоединения Грузии к России. Утверждение русского владычества на Кавказе, том XII, Тифлис, 1901, стр. 376.*

որոշակիորեն առնչվում էր Ալեքսանդրապոլի գավառի հետ: Բանն այն է, որ եթե տասներեք տարի առաջ գավառի սահմաններից հանվել էր Ախալքալակի տեղամասը, ապա հիմա նրանից անջատվում է նաև Լոռին՝ միացվելով Թիֆլիսի նահանգին:

1878 թվականի ռուս-թուրքական պատերազմում տարած հաղթանակի արդյունքում Կարսի և Բաթումի ձեռքբերումը պատճառ հանդիսացավ Անդրկովկասում երկու նոր մարզերի ձևավորման համար:

Այսպիսով, եթե նկատի ունենանք նաև 1896 թվականին Սևծովյան նահանգի ստեղծումը Կուբանի մարզի ծովափնյա շրջանում, ապա կարելի է արձանագրել, որ 19-րդ դարում Ռուսաստանի կողմից Անդրկովկասի գրավյալ տարածքների վրա տեղի են ունեցել ընդհանուր առմամբ տասը վարչատարածքային բաժանումներ, որոնց համակարգում 19-րդ դարի մարդաթափ ու կիսավեր Շորագյալի սուլթանությունը ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական մի շարք կարևոր և էական հանգամանքների բերումով 19-րդ դարի կեսերից դարձավ նոր ձևավորված Երևանի նահանգի հայաշատ գավառներից մեկը, որն արդեն 19-րդ դարի վերջերին զբաղեցնում էր Երևանի նահանգի տարածքի 13%-ը (3680կմ քառ)[1] հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակցելով Թիֆլիսի նահանգին Ճըզխլարի (Ցողամարգ) և Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձոր) տեղամասերով, հարավից էջմիածնի գավառին Աղ-բուլաղի (Լուսաղբյուր) տեղամասով, արևելքից՝ Նոր Բայազետի գավառին Հոռոմի ու Մեծ Ղարաքիլիսայի տեղամասերով և արևմուտքից՝ Կարսի մարզին՝ սահմանագիծ ջրբաժան ունենալով Ախուրյան գետը[2]:

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

19-րդ դարի վերջին քառորդում գնալով ահագնանում էր օսմանյան իշխանությունների կողմից իրականացվող հայահալած քաղաքականությունը: Քաջ հայտնի է, որ սուլթան Համիդը հետամուտ էր հայության տնտեսական, հասարակական և կրոնական միասնության քայքայմանը, արևմտահայության տարբեր հատվածների անջրպետմանը, որով և ի զորու կլիներ լուծել իր առջև դրված խնդիրները, այն է՝ հայերի տնտեսական հզորության վերացում, ջարդերի իրականացում, ձուլում և բնաջնջում:

Կիլիկիայի և այլ շրջանների հայության միջև առաջին սեպը խրելու նպատակով սուլթանը հարվածեց հայ եկեղեցուն, քանզի իրավամբ այն դիտում էր որպես հայեցի կրթության և դաստիարակության, հայ մշակույթի, ավանդույթների, կենցաղի և բարքերի պահպանման, հետևաբար՝ հայապահպանության կարևորագույն գործոն: Համիդն ամենագործուն մասնակցությունը բերեց Կիլիկիայի (Սսի) կաթողիկոսի ընտրությանը, կամենալով Սսի կաթողիկոսությունը դուրս բերել

---

[1] Հ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ132-133:

[2] Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, h. I, Եր., 1986, էջ 74-ի քարտեզ:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի ենթակայությունից: Դա կոպիտ և մինչ այդ չեղած միջամտություն էր հայ եկեղեցու ներքին գործերին: Սուլթանի հիմնական նպատակն էր լիովին առանձնացնել, մեկուսացնել Կիլիկիան, կրոնական ճնշման հետ մեկտեղ առավել խստացնել քաղաքական, տնտեսական և մշակութային հալածանքները[1]: Անշուշտ, այս միջադեպը խոսուն փաստ է՝ վկայող Աբդուլ Համիդի և նրա վարչակարգի կողմից ամենակոպիտ միջամտության մեն մի օրինակը հայերի ներքին կրոնական գործերին: Խնդիրն ավելի էր բարդանում նրանով, որ Սսի կաթողիկոսական աթոռն օգտվում էր եկեղեցական որոշ իրավունքներից և արտոնություններից, որոնցից զրկված էին Կ.Պոլսի պատրիարքարանին ենթակա Աղթամարի կաթողիկոսությունն ու Երուսաղեմի պատրիարքությունը:

Ինչպես հայտնի է, 1440-1441թթ. Գրիգոր Մուսաբեկենց կաթողիկոսը հրաժարվել էր տեղափոխվել էջմիածին՝ հիմք դնելով «կաթողիկոսությանն տանն Կիլիկիո» և հավակնելով համայն հայության հոգևոր հովվի կարգավիճակին: Այդ պատճառով էլ, ինչպես նշել է Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Զինովևը Ռուսաստանի արտաքին գործոց նախարարություն հղած հաղորդագրությունում, Սսի կաթողիկոսները բազմիցս փորձել են ոչ միայն դուրս գալ Կ. Պոլսի պատրիարքարանի հովանավորությունից, այլև նույնիսկ համարձակվել են չընդունել էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսի գերադասությունը: Մի բան, որ, հասկանալի պատճառներով, հրահրվում էր օսմանյան կառավարության կողմից:

Այդ կապակցությամբ դեսպանն իրավացիորեն նշում էր, որ Սսի կաթողիկոսության ինքնուրույնության հաստատմամբ օսմանյան իշխանությունները հետամուտ էին կիլիկիահայերի և, ընդհանրապես, արևմտահայերի շրջանում էջմիածնի կաթողիկոսության, միաժամանակ՝ ռուսական ազդեցության թուլացմանը[2]:

1871թ., Մկրտիչ Խրիմյանի պատրիարքության օրոք, Կիլիկիո կաթողիկոս էր ընտրվել մարաշցի Մկրտիչ Քեֆսիզյանը, որի «կաթողիկոսությունը բոլորովին ապարդյուն անցավ Կիլիկիայի համար և Սսի աթոռը բոլորովին քայքայման վիճակի ենթարկեց»[3]:

1894թ., Մ. Քեֆսիզյանի մահից հետո, օսմանյան իշխանությունները որոշեցին միջամտել կաթողիկոսական ընտրություններին, պահը հարմար նկատելով իրենց մտադրությունների իրականացման համար: Արժե նշել, որ Մ. Քեֆսիզյանը մահացավ խիստ բախտորոշ ժամանակ, երբ նոր-նոր թափ էին առնում հայկական կոտորածները: Իսկ աշխարհիկ իշխանության բացակայության պայմաններում եկեղեցին ավելի էր կարևորվում հայ ժողովրդի համար, քանզի այդ ճակատագրական օրերին կարող էր հանդես գալ որպես համախմբող ուժ, բողոքել տիրող անարդարությունների և բնաջնջման քաղաքականության դեմ: Ուստի զարմանալի չէ, որ օսմանյան կառավարությունը կիլիկիահայությանը գլխատելու և հայակործան ծրագիրն իրագործելու համար ոչ միայն ամեն կերպ ցանկանում էր խոչընդոտել կաթողիկոսական ընտրությունները, այլև, օգտագործելով պատեհ առիթը, ընտրել ա'յն հոգևոր գործչին, որը կլիներ իր հլու կամակատարը: Օգտագործելով հոգևոր անիշխանությունը, օսմանյան վարչակարգն ավելի՛ էր խորացնում առ-

---

[1] Գասպարյան Ռ., Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1999թ., էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 8: Տես նաև Архив внешней политики России /далее- АБПР/, ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1900, д.27 л.280.

[3] ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.2, գ. 1820, թ.1:

կա տարաձայնությունները եկեղեցական և ազգային գործիչների միջև (hասկանալի է, որ նոր կաթողիկոսի ծգծգվող ընտրությունները լայն արձագանք էին գտել հայ հասարակական-քաղաքական շրջանակներում, որոնք հաճախ փորձում էին ազդել ընտրությունների ընթացքի վրա՝ պաշտպանելով թեկնածուներից որևէ մեկին), որն իր հերթին բացասաբար էր անդրադառնում կիլիկիահայության միասնության վրա:

1890-ական թթ. ջարդերի ժամանակ և հետո, երբ, ինչպես նշել է ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանը, կիլիկիահայությունն առավել կարոտ էր հոգևոր միասնության, Կիլիկիո չընտրված կաթողիկոսը չէր կարող ամոքել ժողովրդի արյունածոր վերքերը, թեթևացնել վիշտն ու տառապանքը, բողոքել ահագնացող կամայականությունների, տնտեսական դաժան շահագործման դեմ, համախմբել իր հոտը, կազմակերպել երկրամասի վերաշինությունը: «Կիլիկիո աշխարհեն ողբալի ու գուժաբեր թուղթեր հետզհետե հասնում են ձեռքս. այդ թուղթերը կարդալով ես վշտահար կը լինիմ, թուղթեր, որ ոչ միայն կ'աղաղակեն սով է, ս՜ով է, այլ առավել անտերունչ և անհովիվ ժողովրդի կացություն նկարագրում են», - գրել է Մ. Խրիմյանը Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանին իր 1899թ. փետրվարի 11-ի նամակում: Օգտագործելով այդ վիճակը, աշխույժ գործունեություն էին ծավալել միսիոներական կազմակերպությունները, որոնք ժողովրդին տրվող նպաստներով և նյութական օժանդակությամբ Կիլիկիայում տարածում էին իրենց կրոնական և գաղափարական ազդեցությունը՝ օտարելով կիլիկիահայությանն առաքելական եկեղեցուց: Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու ելքը Մ. Խրիմյանը տեսնում էր կաթողիկոսի, թեկուզ՝ ոչ լավագույնի, ընտրության մեջ, ինչպես ինքն էր վարվել իր պատրիարքության օրոք՝ Մ. Քեֆսիզյանի պարագայում[1]:

Ընդունված կարգի համաձայն՝ կաթողիկոսի թեկնածուների ցուցակը պետք է հաստատվեր և Կ.Պոլսի հայոց պատրիարքի, և հայոց Ազգային ժողովի կողմից, բայց, չհաստատելով Մ. Քեֆսիզյանի երկու անմիջական ժառանգորդներին, մասնավորապես՝ Գրիգորիս Ալեաթճյան եպիսկոպոսի ընտրությունը Ազգային ժողովի կողմից, Բ. Դուռը, ոտնահարելով ընդունված կարգը, պահանջեց թեկնածուների ցուցակը նախօրոք ներկայացնել արդարադատության նախարարություն՝ հաստատման համար:

«... Կառավարությունը նպատակ ուներ Կիլիկիո կաթողիկոսությունը անկախ ճանաչել Ազգային պատրիարքարանե. զենք մը պետք էր ինծ կամ հենարան մը գոնե, որով կարենայի այս պառակտման դեմ առնիլ և պաշտպանվիլ», - ամենայն հայոց կաթողիկոսի հետ իր մտորումներն է կիսել Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը[2]:

Կ.Պոլսի Ազգային վարչությունը որոշել էր կաթողիկոսական ընտրությունները կատարել 1895թ. գարնանը՝ Գրիգորիս եպիսկոպոս Հովհաննիսյանի նախագահությամբ, բայց, ինչպես նշել ենք, ներքին տարաձայնությունների և հակասությունների պատճառով Բ. Դուռը չճանաչեց Գր. Ալեաթճյանի իրավունքները կաթողիկոսական աթոռի նկատմամբ, չարտոնելով նաև նոր ընտրությունների կազմակերպումը: Ընտրությունների ձգձգմամբ Աբդուլ Համիդը միտում էր վերջնականապես պառակտել հայ եկեղեցու միասնությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Օրմանյանը ամենայն հա-

---

[1] *Նույն տեղում:*
[2] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 355, թ.3:*

յոց կաթողիկոսին հղված նամակում՝ «Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել կառավարության ընդհանուր դիմումին վրա, որ է Պատրիարքության ազդեցությունը նվազեցնել, և այս նպատակին հասնել Կիլիկիո կաթողիկոսությունը առանձին պատրիարքության վերածելով, Թուրքիո հայությունն երկփեղկելով և մայր թեմե անջատելով, ընդհանուր հայությունը ջլատել և յուր մասը ավելի կղզիացյալ և ավելի նկուն կազմել»[1]:

Ընտրությունները թույլատրելու համար Բ. Դուռն առաջ էր քաշում հետևյալ պահանջները.

1. Անկախ ճանաչել Ասի կաթողիկոսությունը Կ. Պոլսի.պատրիարքությունից.

2. Բացառել Կ.Պոլսի պատրիարքության մասնակցությունը և միջամտությունը ընտրություններին.

3. Կաթողիկոս ընտրել Կիլիկիո թեմի եպիսկոպոսներից մեկին.

4. Թեկնածուների ցուցակը նախօրոք ներկայացնել իր հաստատմանը:

Օսմանյան կառավարությունը ոչ միայն անտեսեց Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ իրեն ուղղված դիմումները վերոնշյալ պահանջները չեղյալ համարելու մասին, այլև, շրջանցելով պատրիարքարանին և անտեսելով Ազգային կենտրոնական վարչության ընդհանուր ժողովի ընդունած որոշումները /որով կաթողիկոսական թեկնածու էր առաջադրվել Երուսաղեմի լուսարարապետ Սահակ եպիսկոպոս Խապայանը/, ձեռնարկեց ընտրությունների կազմակերպումը:

1900թ. հունվարի 22-ին արդարադատության նախարարությունից պատրիարքին հայտնում են, որ Բ. Դուռն ընտրությունները կազմակերպելու և ընթացքին հետևելու համար Ադանա է ուղարկելու կառավարության ներկայացուցիչ Բեհա բեյին:

Ժամանելով Ադանա՝ Բեհա բեյը նահանգապետ Բահրի փաշայի հետ համախորհուրդ անմիջապես մեկուսացնում է պատրիարքարանի ներկայացուցիչ Սահակ եպիսկոպոսին և փետրվարի 14-ին Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդ Կիրակոս եպիսկոպոսին հայտարարում է, որ ինքն է նախագահելու առաջիկա ընտրական ժողովում՝ հանձնարարելով փութացնել ընտրությունները: Այլընտրանք չունեցող Կիրակոս եպիսկոպոսը հարկադրված ընտրությունները նշանակում է մարտի 10-ին[2]:

Այս ամենը հարուցեց Մ. Օրմանյանի դժգոհությունը և զայրույթը: Որպես բողոքի նշան նա 1900թ. մարտի սկզբին ներկայացրեց իր 2-րդ հրաժարականը պատրիարքական աթոռից: Ցանկանալով ետ պահել Օրմանյանին՝ սուլթանը դադարեցրեց ընտրությունները և արդարադատության և կրոնի նախարար Աբդուրահման փաշային հանձնարարեց պատրիարքին փոխադարձ զիջումների ճանապարհով հակել հաշտության: Վերջինս անհաջողության մատնվեց, քանզի Մ. Օրմանյանը հաստատ էր իր որոշման մեջ. կամ սուլթանը վավերացնում է իր հրաժարականը, կամ՝ հրաժարվում Կիլիկիո կաթողիկոսությունը պատրիարքարանի ենթակայությունից դուրս բերելու ծրագրից: Դեռ ավելին՝ պատրիարքը միաժամանակ սուլթանից պահանջեց վերացնել հայերից գանձվող անօրինական հարկերը և նրանց դեմ կիրառվող տարբեր ճնշիչ միջոցները: Մ. Օրմանյանը միամտորեն հույս էր տածում, թե հասարակական կարծիքը և արևելքի քրիստոնեությունը

---

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 2:

[2] АВПР, ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1900, д. 27, л.280: Տե՛ս նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 10:

հանդես կգան իր արդար դատի պաշտպանության դիրքերում[1]: Որպես պատասխան այդ ամենի՝ պատրիարքը Կիլիկիո կաթողիկոսական թեմերին (Ադանա, Մերսին, Մարաշ, Հալեպ, Այնթապ, Յոզղատ, Մալաթիա և այլն) և անձամբ կաթողիկոսական փոխանորդ Կիրակոս եպիսկոպոսին հղած հեռագրում հրահանգում է չշեղվել պատրիարքարանի և Կենտրոնական վարչության պահանջներից[2]: Կարծես ապացուցելու համար իր գործողությունների իրավացիությունը, նա գրում է. «Բոլոր թուրքաբնակ հայերը մի ազգ կը կազմեն, որու գլուխն է Կ.Պոլսո Պատրիարքն, ինչպես և կը կազմեն մի եկեղեցի, որու միակ գլուխն է Մ. էջմիածնի Հայրապետը և Կ.Պոլսո Պատրիարքը նրա լիազոր ներկայացուցիչն է ի Թուրքիա, և պետք է որ եկեղեցվո և Ազգի միությունը պաշտպանվի Կ. Պոլսո Պատրիարքին ընդհանուր իրավասությամբ»[3]:

Իր խոհերը կիսելով Մ. Խրիմյանի հետ՝ Մ. Օրմանյանը 1900թ. ապրիլի 21-ին գրում էր. «Կիլիկիո կաթողիկոսությունը պատրիարքութենե զատելով, հայոց ազգն, եկեղեցին կը վտանգվին, և ինձ հնար չէ այս պատասխանատվությունը ընդունիլ, և եթե ընդունիմ ալ հնար չէ արժանավոր կերպով պաշտոնավարել և ոչ իսկ ինձ ժողովրդյան սեպել տալ»[4]:

Հաշվի առնելով աստիճանաբար ուժգնացող բախումներն ու հակամարտությունները, ինչպես նաև՝ Մ. Օրմանյանի հրաժարականը և, կանխազգալով դեպքերի հավանական զարգացումը ոչ ի նպաստ իր ցանկության, Աբդուլ Համիդը կասեցնում է ընտրությունները՝ պատճառաբանելով, որ ոչ բոլոր պատգամավորներն են մեկնել Ադանա:

Ընտրությունների նոր օր է նշանակվում ապրիլի 3-ը: Ժողովի նախագահ է ընտրվում Կիրակոս եպիսկոպոսը, սակայն իրականում նախագահում էր Բեհա բեյը՝ ընտրությունների ընթացքը տանելով իր ցանկացած հունով: Զգալով, որ դեպքերը կարող են անցանկալի ընթացք ստանալ, Աահակ Խապայանն իր համախոհներով հրաժարվում է մասնակցել ընտրություններին՝ հիմնավորելով դա իշխանությունների կողմից ժողովի վրա գործադրվող ճնշումներով և պատգամավորների մի մասի բացակայությամբ: Ապրիլի 9-ին ժողովի աշխատանքներին մասնակցելուց հրաժարվում է և Կիրակոս եպիսկոպոսը, հայտարարելով, որ առանց պատրիարքարանի ներկայացուցչի ինքն իրավասու չէ անցկացնել ընտրություններ: Արդյունքում՝ «Կառավարությունը կը հայտարարէ թէ առանց ազգային միջամտութեան ընտրել տալու մտքէն կը հրաժարի, պայմանաւ որ ընտրելիներու ցանկը նախարարութեան (արդարադատության — Ռ.Գ.) ներկայացուի և զեղչեալ ցանկին վրայ միայն ընտրութիւն կատարուի»[5]:

Փաստերը վկայում են, որ Մ. Օրմանյանն ինքն էլ երբեմն ձգձգում էր ընտրությունները, ցանկանալով կանգ առնել այն թեկնածուի վրա, որը ոչ միայն կապահովեր հայ եկեղեցու միասնությունը և կընդուներ Կ. Պոլսի պատրիարքի գերադասությունը, այլև անձնապես նվիրված կլիներ իրեն: Իսկ իշխանությունները, համոզված, որ Բեհա բեյն իր ձեռքն է վերցրել ժողովի ղեկավարությունը և հարցը կլուծի ցանկալի կերպով, շտապեցնում էին ընտրությունները: Մայիսի 30-

---

[1] *АВПР, ф. Политархив, Азиатский департамент, г. 1909, д. 992, л. 465:*

[2] *Բաբկեն Ա կաթողիկոս, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո (1441են մինչև մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1990, էջ 776-777:*

[3] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ-57, ց.2, գ. 1821, թ.13:*

[4] *Նույն տեղում, թ. 14:*

[5] *Բաբկեն Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 778:*

ին արդարադատության նախարարությունը հրահանգում է Մ. Օրմանյանին՝ հանձնարարել պատրիարքարանի ներկայացուցիչ Սահակ Խապայանին՝ կազմակերպել ընտրությունները և «որպեսզի հառաջ և հետո գրածներուն համեմատ ընտրելված ցանկը Բ. Դռան ներկայացնե, ինչպես ուրիշ հոգևոր պետերու համար ալ սովորություն է»[1]: Հասկանալի պատճառներով՝այդ պահանջին պատրիարքարանի կողմից ընթացք չի տրվում: Ի պատասխան՝ Բ. Դուռն ավելի կոշտ դիրք է գրավում:

Ամիսները գլորվում էին՝ էական փոփոխություն չմտցնելով իրերի վիճակի մեջ:

Սեպտեմբերի 22-ին՝ որոշ գիջումների գնալու բովանդակությամբ նամակով արդարադատության նախարարություն է դիմում Կ. Պոլսի Ազգային ժողովը, հուսալով շուտափույթ և դրական պատասխան: Սակայն նոյեմբերի 21-ի պատասխան նամակով Բ. Դուռը գիջումների չգնալով և չհրաժարվելով թեկնածուների ցանկի սրբագրման և հաստատման «պետական իրավունքից», ընտրությունները փաստորեն մտցնում էր փակուղի, կրկին պահանջելով, որ «ընտրելյաց ցանկը ընտրութունե առաջ յուր քննութենեն անցնի, որպեսզի յուր տեսության անհարմար նկատվողներ ցանկեն վերցվին»[2]: Ի վերջո, տեղի է տալիս Ազգային ժողովը, կամ հոգնած լինելով մի քանի տարի տևող քաշքշուկից, կամ զգուշանալով հարուցել սուլթանի զայրույթը, առաջնորդվելով նաև շուտափույթ կաթողիկոս ընտրելու հրամայականով՝ «Խորհելով որ ավելի պատվավոր է ընտրութենեն առաջ զեղչել տալ, քան ընտրութենեն վերջ մերժվել»[3]:

1900թ. դեկտեմբերի 1-ին Կ.Պոլսում հրավիրված Ազգային ժողովի նիստում տեղի են ունենում սուր բախումներ: Գրիգորիս եպիսկոպոսն առաջարկում է համակերպվել և կատարել սուլթանի պահանջը՝ դա համարելով չարյաց փոքրագույնը: Երկար քննարկումներից հետո միաձայն ընդունված որոշման համաձայն՝ կաթողիկոսի թեկնածուների ցուցակը պետք է ներկայացվեր պատրիարքարանին, «այդ ցուցակը Բ. Դռան հաղորդել և անոր հանած անունները մեկ կողմ թողուլ, Պատրիարքարանի սրբագրության իրավունքն ալ գործադրել՝ և հաճելոց ցուցակը Կիլիկիո ընտրողական ժողովին դարձնել, որ անոր մեջեն կաթողիկոսը ընտրին և Պատրիարքարանի հաղորդին և Պատրարքանե Բ. Դռան ներկայացվի, հրովարտակը (ընտրությունների հաստատման –Ռ. Գ.) ուղղվի և նախկին ձևով առնվի ու հանձնվի»[4]: Ընտրությունները վերահսկելու առաքելությունը վերստին վստահվում է Սահակ Խապայանին: Հույժ գոհ մնալով նման որոշումից, արդարադատության նախարար Աբդուրահման փաշան խոստանում է անմիջապես ընթացք տալ ընտրություններին: Սակայն, իրավունք ստանալով կաթողիկոսի թեկնածուների ցուցակից հանել անցանկալիներին, օսմանյան իշխանությունները հաջորդ քայլով հետամուտ էին ներկայացվող ցուցակում ներառել այն հոգևորականներին, ովքեր չանսալով Մ. Օրմանյանի խորհուրդներին, կխորացնեին հակասությունները Կիլիկիո կաթողիկոսական աթոռի և Կ. Պոլսի պատրիարքարանի միջև: Առաջիկա ընտրությունները հետաձգելու նպատակով հայտարարվում է, որ հարցը պետք է քննարկվի կառավարության նիստում՝ մեծ վեզիր Խալիլ Ռիֆաթի առողջանալուց հետո: 1901թ. ապրիլի 17-ին հանդիպելով Մ. Օրմանյանին՝ Խա-

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց. 2, գ. 1821, թ. 28:
[2] Նույն տեղում, թ. 49
[3] Բաբկեն Ա. կաթողիկոս. նշվ. աշխ., էջ 778:
[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.2, գ. 1821, թ. 49:

լիլ Ռիֆաթը խոստանում է, որ առաջիկա նիստին կառավարությունը կանդրադառնա խնդրո առարկային: Մեկ ամիս անց, մայիսի 15-ին, Ռիֆաթ փաշան Մ. Օրմանյանին հայտնելով, որ կաթողիկոսական ընտրություններում պատրիարքարանի ներկայացուցիչն իրավունք չունի նախագահելու, իսկ կաթողիկոսական աթոռի տեղապահ Կիրակոս եպիսկոպոս Բեքմեզճյանն իր զառամյալ տարիքի պատճառով ի զորու չի լինի ողջ ծանրությունը կրել իր ուսերին, պահանջում է կամ նոր տեղապահ նշանակել, կամ նախագահությունը վստահել այլ անձի: Որպես այդպիսին ակնարկվում էր Բեհա բեյը, որը կարող էր ազդել ընտրությունների ընթացքի վրա: Սակայն այս անգամ Մ. Օրմանյանը հաստատակամ է գտնվում չզիջելու մտայնության մեջ: Մայիսի 17-ին, հանդիպելով արդարադատության նախարար Աբդուրահման փաշային, նա հայտարարում է, որ իրենց միջև համաձայնություն արդեն կայացել է և այն խախտելու դեպքում ինքը հրաժարական կտա: Ներքին գործերի նախարար Մեհմեդ փաշայի միջոցով հավանական հրաժարականի մասին սպառնալիքը պատրիարքը հասցնում է և Աբդուլ Համիդին, իր դժգոհությունը հաղորդելով նաև Ռուսաստանի դեսպան Ի. Զինովևին՝ հուսալով ստանալ նրա աջակցությունը:

Չկամենալով բորբոքել կրքերը՝ սուլթանն զգուշանում է և, ինչպես գրում է Մ. Օրմանյանը Խրիմյան Հայրիկին ուղղված հունիսի 14-ի նամակում՝ «Արդարադատության նախարարը մայիսի 22-ին հաղորդել էր Դռան գործակատար Տիգրան էֆ. Ներսիսյանին, թե այն միտքը, որուն համար Պատրիարք անչափ հուզվեր էր, մեկդի թողված է»[1]:

Ի վերջո, սուլթանի առաջին քարտուղար Թահսին բեյը հունիսի 6-ին պատրիարք Մ. Օրմանյանին տեղեկացնում է, որ Աբդուլ Համիդը մեծ վեզիրին հրամայել է ըստ կարելույն արագ «վերջացնել այդ գործը»[2]:

Որքան առարկայական էր դառնում կաթողիկոսի ընտրությունը, այնքան սրվում էր պայքարը տարբեր խմբակցությունների միջև, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր ընտրյալին բազմեցնել Կիլիկիո կաթողիկոսական գահին: Արդյունքում՝ աճում էին բանսարկությունը, փոխադարձ մեղադրանքներն ու վիրավորանքները: Այսպես, Կիրակոս եպիսկոպոս Բեքմեզճյանը 1900թ. հունիսի 12-ին ամենայն հայոց հովվապետ Մ. Խրիմյանին հղած նամակում նշում է, որ ընտրությունները երկարաձգում է նաև հայոց պատրիարքարանը, ընդսմին՝ Մ. Օրմանյանի դեմ «ժողովուրդը նախապաշարված է»: Կիրակոս եպիսկոպոսը գերադասում էր ընտրությունները կազմակերպել ոչ թե Ադանայում, այլ Սսում, որն անհրաժեշտ էր «օրինավոր ընտրություն մը կազմակերպելու» համար, քանզի ընտրությունների շարունակական ձգձգման պայմաններում Կիլիկիայի տարբեր վիճակներից ժամանած պատվիրակներից շատերը, չկարողանալով այդքան երկար սպասել, թողել-հեռացել են՝ իրենց փոխանորդներ նշանակելով ադանացիներին, և «ան ալ ռամիկ խառնիճաղանճին ըստ մեծագոյն մասին. այնպես որ ավելի առաջնորդ մը ընտրելու համար Տեղական գավառական ժողովը ձև մը առած է, քան կաթողիկոսական ընտրության պատգամավորաց ժողով. գավառներեն շատերն ալ ընտրության հետաձգումներեն ստիպված անձամբ պատգամավոր չեն ղրկեր, այլ ադանացիներեն ներկայացուցիչ կարգած են. շատերը 4-5 ձայն ունին ժողովո

---

[1] *Նույն տեղում, բ. 51:*
[2] *Նույն տեղում, բ. 52:*

մեջ...»[1]: Տեղապահն անհրաժեշտ էր համարում ընտրությունների հրավիրումը Ասում՝ մասնակցությամբ բոլոր պատգամավորների և խնդրում էր վեհափառի միջամտությունը՝ այդ և մի շարք այլ հարցերի կարգավորման ուղղությամբ: Նա Մ. Խրիմյանի հատուկ ուշադրությունն էր հրավիրում և այն համգամանքի վրա, որ, օգտվելով հոգևոր անիշխանությունից, Կիլիկիո բազմաթիվ թեմերից «ոչ մի փարա կը հասնի մեզ, վանքս զրկված է հասույթներեն»[2]: Պատահական չէ, որ, ի շահ անձնական եկամուտի և ընչաքաղծության, Կիլիկիո հոգևորականներից ոմանք շահագրգռված չէին կաթողիկոսի ընտրությամբ:

1901թ. հունիսի 26-ին Մ. Օրմանյանը պաշտոնական գրությամբ դիմում է օսմանյան կառավարության 13 անդամների՝ խնդրելով հաստատել ընտրությունների կարգը: Հուլիսի 4-ին կառավարության ընդունած որոշումը ներկայացվում է սուլթանի վավերացմանը: Հուլիսի 14-ին արդարադատության և կրոնի նախարարությունը հատուկ պաշտոնագրով Մ. Օրմանյանին հայտնում է վերջնական որոշման մասին, ըստ որի՝ Ազգային ժողովի ներկայացրած և իշխանությունների կողմից հավանության արժանացածների ցուցակը տրամադրվում էր պատրիարքարանին, որին էլ պատկանում էր թեկնածուների վերջնական որոշման իրավունքը: «Ընտրելի պիտի լինեին Կիլիկիո և անկե դուրս ալ Թուրքիո եպիսկոպոսները և ընտրության տեղեկագիրն ալ նույն կերպով Պատրիարքարան պիտի հասներ, իսկ նախագահության խնդիրը լուծվեր էր՝ ըսելով թե կաթողիկոսական տեղապահը և Պատրիարքական պատվիրակը ի միասին պիտի գործեն և կեզրակացվեր թե այս կերպով անհամաձայնություն կվերացվեր»[3]:

Փութացնելով ընտրությունները՝ Մ. Օրմանյանը Սահակ Խապայանին հեռագրում է՝ պատվիրելով կրկին մեկնել Ադանա, քանզի վերջինս ընտրությունների ձգձգման պատճառով վերադարձել էր Երուսաղեմ: Գալով Ադանա՝ Սահակ եպիսկոպոսը ձեռնամուխ է լինում նախապատրաստական աշխատանքներին, սպասելով Ադանայի նահանգապետ Բահրի փաշայի պաշտոնական թույլտրությանը և կաթողիկոսական տեղապահ Կիրակոս եպիսկոպոսի Սսից Ադանա ժամանելուն: Նկատի ունենալով մի շարք հանգամանքներ (կազմակերպչական աշխատանքները և տարբեր քաղաքներից ու շրջաններից ժամանող պատվիրակների՝ ճանապարհի դժվարությունները հաղթահարելը), ընտրությունները նշանակվում են 1901թ. հոկտեմբերի 20-ին[4]:

Այն, որ ընտրությունները հետաձգվում էին ոչ միայն օսմանյան իշխանությունների սադրանքների, այլև հենց հայ հոգևոր և աշխարհիկ որոշ շրջանակների գործունեության պատճառով, պարզորոշ զգացվում է նաև Ս. Խապայանի՝ Մ. Խրիմյանին հղած հոկտեմբերի 3-ի նամակից: «Թե ո՞վ պիտի ըլլա Կիլիկիո աթոռոյն ապագա գահակալը, - գրում է նա, - այժմեն գուշակել դժվարին է, կան լռին կուսակցություններ, որոնց յուրաքանչյուրն ի նպաստ յուր կանդիտային (թեկնածուին- Ռ.Գ.) կ'աշխատի»: Ապա ավելացնում է. «Ի միջի այլոց առանց իմ հոժարությանս իմ անունս ալ կը հեղհեղվի ընտրելիներու շարքին մեջ»:

Չի բացառվում, որ, կապված իր թեկնածության հետ, Սահակ եպիսկոպոսը նուրբ և քողարկված հայցում էր Խրիմյան Հայրիկի աջակցությունը, գրելով, որ որպես Կիլիկիո կաթողիկոս պետք է ընտրվի «լայն գաղափարի տեր մեկը ... ա-

---

[1] *Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 80, թ. 16:*
[2] *Նույն տեղում:*
[3] *ՀՀ ՊԿՊՀ, ֆ. 57. ց.2, գ. 1821, թ. 55-56.*
[4] *Բաբկեն Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 779:*

ռանց փառասիրության», որը Մայր Աթոռի հետ «սերտ միություն և որդիական հնազանդություն կարողանա պահպանել»[1], դրանով ակնարկելով, որ իր ընտրության պարագայում կհանդիսանա այդ «միության և որդիական հնազանդության» կրողը:

1901թ. հոկտեմբերի 20-ին 54 վճռական ձայնի իրավունքով 40 պատգամավորների քվեարկության արդյունքում ընտրվում են Կիլիկիո կաթողիկոսական գահի հավակնորդները: Նշենք, որ առավել քվե ստացել էր Սահակ Խապայանը: Թեկնածուների ցուցակում էր նաև Մ. Օրմանյանը: Քվեարկության արդյունքները պատրիարքարանի միջոցով ուղարկվում են արդարադատության և կրոնի նախարարություն: Հոկտեմբերի

23-ին Մ. Օրմանյանը խնդրում է «որ ըստ կանխավ համաձայնության հաճի նախարարությունը յուր կարծիքը հայտնել և հաղորդել ընտրելյաց մասին, որպեսզի ըստ այնմ ընտրողական ժողովը վերջնական ընտրությունը կատարե»[2]: Սակայն նախարարությունը նորից է սկսում ձգձգումների քաղաքականությունը: Ընդսմին՝ իշխանությունները կտրականապես դեմ էին Մ. Օրմանյանի թեկնածությանը, քանզի չէր ցանկանում, որ նա թողնի պատրիարքական աթոռը: Գուցե նաև այն պատճառով, որ վերջինս, հարկավ, հանդես կգար հայ եկեղեցու միասնության դիրքերում և, որպես անհատ և հոգևոր գործիչ, շատ հեռու էր կամակատար լինելուց: Նոյեմբերի 5-ին նա վարչապետ Սաիդ փաշային խնդրում է արագացնել հարցի քննարկումը: Նոյեմբերի 21-ին արդարադատության և կրոնի նախարարության խորհուրդը հաստատում է ներկայացված վեց եպիսկոպոսների թեկնածությունը, սակայն ուշացնում էր ընտրությունները սկսելու պաշտոնական հրամանը կամ համաձայնությունը[3]: Երկու օր անց, նոյեմբերի 23-ին արդարադատության և կրոնի նախարարությունը պաշտոնական գրությամբ տեղեկացնում է Մ. Օրմանյանին, որ «ընտրելյաց վեցանուն ցանկը նախարարաց ժողովին մեջ քննվելով տեսնվեցավ թե Պատրիարքության և Կաթողիկոսության միացումը սովորության հակառակ լինելով Ձեր անունը վերցնել հարկ եղավ և թե Գրիգորիս Հովհաննեսյան, և Վահրամ Մանկունի, և Հմայակ Դիմաքսյան եպիսկոպոսները ինչ ինչը արծանագրյալ պարագայից նկատմամբ կաթողիկոսության հարմար չտեսնելով, կը հանձնարարվի մնացած երկուքեն, այսինքն Սահակ Խապայան և Գեորգ Երեցյան եպիսկոպոսներեն մին ըստ օրինի կաթողիկոս ընտրել տալ»[4]:

1901թ. նոյեմբերի 21-ին Ազգային կենտրոնական վարչության համապատասխան որոշումից հետո Մ. Օրմանյանը հեռագրում է Ադանա, Սահակ և Կիրակոս եպիսկոպոսներին արտոնելով ընտրությունների անցկացումը:

Նոյեմբերի 29-ին, հինգշաբթի օրը, տեղի են ունենում Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությունները: Ձայների մեծամասնությամբ /32կողմ, 27 դեմ/ Կիլիկիո կաթողիկոս է ընտրվում Գեորգ եպիսկոպոս Երեցյանը, որը գտնվելով Կ. Պոլսում և իմանալով իր ընտրության մասին՝ խիստ հուզվում և շփոթվում է, քանզի մի քանի օր առաջ Սահակ Խապայանին ղված նամակում հայտնել էր իր հրաժարականի մասին: Իսկ Սահակ եպիսկոպոսը «յուր և Գեորգ եպիսկոպոսի անուններուն միայն մնացած ըլլալուն պատճառով ոչ կրցեր է ինքն հրաժարական ներկայացնել և ոչ ալ Գեորգ եպիսկոպոսի հրաժարականին ուժ տալ և հարկավ յուր ընտրե-

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.2, գ. 1821, թ.71:
[2] Նույն տեղում, թ. 60:
[3] Նույն տեղում, թ. 60:
[4] Նույն տեղում:

լիությունը սղած չերևալու համար Գեորգ եպիսկոպոսի արժանավորագույն լինելը հայտարարած», - գրել է Մ. Օրմանյանը[1]:

Մեկ-երկու օրվա տատանումներից և մտորումներից հետո Գեորգ Երեցյանը տալիս է իր համաձայնությունը և աստիճանաբար ձեռնամուխ լինում կաթողիկոսական պարտականությունների կատարմանը: Թվում էր, թե հաղթահարվել են բոլոր դժվարությունները, որ ամեն ինչ մնացել անցյալում, կրքերն աստիճանաբար սկսում են մեղմանալ, երբ Գեորգ եպիսկոպոսն ինչ-ինչ պատճառներով, որոնց մասին աղբյուրները լռում են, դեկտեմբերի 13-ին անակնկալ ներկայացնում է իր հրաժարականը: Ջուր են անցնում բոլոր հորդորները, համոզելու փորձերը[2]:

Կամենալով վերջ տալ երիցս չարչրկված հարցին և անորոշ դրությանը, որը ձեռնտու էր միայն օսմանյան իշխանություններին, Մ. Խրիմյանը 1902թ. հունվարի 12-ին Օրմանյան պատրիարքին հասցեագրած նամակում պատվիրում է Գեորգ Երեցյանին անհապաղ հարկադրել ընդունել կաթողիկոսությունը՝ սպառնալով «մինչև իսկ խարազանի սաստը»: Սակայն ամեն ինչ զուր էր և անօգուտ[3]:

Երկարատև քաշքշուկներից և վեճերից հետո պատրիարքարանը նոր ընտրությունների թույլատրության խնդրանքով դիմում է օսմանյան կառավարությանը՝ արդեն Երուսաղեմ մեկնած Ս. Խապայանի փոխարեն պատրիարքական պատվիրակ նշանակելով Հակոբ-Աշոտ եպիսկոպոս Փափազյանին: Առաջնորդվելով հարցի շուտափույթ լուծման մտայնությամբ՝ Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ Կիրակոս Բեքմեզճյանը Ս. Օրմանյանին գրած նամակում առաջարկում է Սահակ եպիսկոպոսին անմիջապես հռչակել Կիլիկիո կաթողիկոս, հաշվի առնելով, որ նա էր միակ թեկնածուն: Սակայն, ինչպես ամենայն հայոց կաթողիկոսին հաղորդում էր Մ. Օրմանյանը՝ «դա օրինական և վավերական չէր»[4]:

Օգտագործելով ընձեռված հնարավորությունը, իշխանությունները վերստին ձգձգում էին ընտրություններն այն պատճառաբանությամբ, որ պատրիարքական պատվիրակի նշանակումը չի համաձայնեցվել արդարադատության և կրոնի նախարարության հետ: Փոխադարձ համաձայնությամբ պատրիարքական նոր պատվիրակ է նշանակվում Բիրեջիկի առաջնորդ Մովսես եպիսկոպոս Կյոմրեքճյանը: Հոկտեմբերի 1-ին Ազգային ժողովի կողմից հաստատված 6 թեկնածուներից բաղկացած ցուցակը ներկայացվում է արդարադատության նախարարություն: Հանելով Կեսարիո առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյանի, Նիկոմեդիայի առաջնորդ Ստեփան եպիսկոպոս Հովակիմյանի և Ռոդոսթոյի առաջնորդ Ներսես Առուշանյանի թեկնածությունները «անոնց մասնավոր պարագաները ի նկատի առնելով» և թողնելով Սահակ Խապայանի, Մովսես Կյոմրուքճյանի և Բրուսայի առաջնորդ Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Չամչյանի թեկնածությունները՝ իշխանություններն արտոնում են ընտրությունների անցկացումը: Դրան անմիջապես հաջորդում է Բարդուղիմեոս արքեպիսկոպոսի հրաժարականը, իսկ հոկտեմբերի 12-ին, Ադանայի ս. Աստվածածին եկեղեցում կայացած ընտրությունների ժամանակ «Մովսես եպիսկոպոս գովելի նախաձեռնությամբ կ'հայտարարե Սահակ եպիսկոպոսի քան զինքն արժանավորագույն լինելը, հարկավ ընտրողաց ալ այդ մասին համոզումը զգալով և կառաջարկե որ առանց քվեներու ցրում պատճառելու, միաձայնությամբ և համամտությամբ օրինակելի ընտրություն մը

---

[1] *Բաբկեն Ա. կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 780: Տես նաև Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1901թ., N 67:*

[2] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 71:*

[3] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1821, թ. 71:*

[4] *Նույն տեղում, թ. 73: Տե՛ս նաև Բաբկեն Ա. կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 808-809:*

կատարին»: Արդյունքում՝ միաձայն (62 ձայնով) Սահակ եպիսկոպոս Խապայանն ընտրվեց Կիլիկիո կաթողիկոս, իսկ հոկտեմբերի 27-ին նրա ընտրությունը պաշտոնապես ճանաչվեց կառավարության կողմից[1]:

Փաստորեն, երկար փործություններից և համառ պայքարից հետո, շնորհիվ նաև Մ. Խրիմյանի և Մ. Օրմանյանի հաստատակամ դիրքորոշման, հարցը լուծվեց հօգուտ հայ եկեղեցու միասնության:

Թվում էր, թե նորընտիր կաթողիկոսը Կ.Պոլսի հայոց պատրիարքի հետ համախորհուրդ, մի կողմ թողնելով երկու աթոռների միջև գոյություն ունեցող դարավոր տարաձայնություններն ու առաջնության ձգտումը, պետք է ձեռնարկեին Կիլիկիո ավերված թեմերի վերականգնումը, ամոքեին ժողովրդի վերքերը, նպաստեին հոգևոր կյանքի զարգացմանը և ծառայեին ազգային միասնության գաղափարին: Ցավոք, որոշ ժամանակ անց նկատելի է դառնում Սահակ կաթողիկոսի գերադասության քողարկված հավակնությունը պատրիարքարանի նկատմամբ, իսկ վերջինիս կողմից՝ Կիլիկիո կաթողիկոսի անտեսումը և Կիլիկիո վերաբերյալ կամայական վճիռների կայացումը: Դա երևում է թեկուզ նոր Նախիջևանի մեծահարուստ հայերից մեկի՝ Մարգար Պոպովի կտակի (ըստ որի՝ 50000ռուսական ռուբլի էր տրամադրվել Թուրքիայում հայկական դպրոց բացելու համար) շուրջ եղած կրքերի բորբոքումից: Մ. Խրիմյանի որոշմամբ՝ դպրոցը պետք է բացվեր Ասում, որի մասին նա համապատասխան պայմանավորվածություն էր ձեռք բերել կտակարարի կնոջ՝ Տիրուհի Պոպովյանի հետ: Սակայն, ինչպես ամենայն հայոց կաթողիկոսին 1904թ. փետրվարի 18-ի նամակում գրել է Կիլիկիո կաթողիկոսը՝ «Առանց փուշի վարդ և առանց կսկծած սփոփանք չի լինիր, նույնը պատահեց և մեզ: Օրմանյան պատրիարքը, որ մեծամեծ խոստումներով հուսադրեց զմեզ ընդունել ավերակ Աթոռը և հետ օծման երեք ամիսեն Պոլիս երթալու հույսեր ներշնչեց, բայց հետո բոլոր դիմումներու անհետևանք թողնելու համար ոգի ի բռին աշխատեցավ, այժմ սկսած է Կիլիկիո կաթողիկոսության խնամակալության դեր կատարելու հավակնիլ, ուստի այդ կտակի մասին կը գրե. «մենք հարմարագույն կը սեպենք, որ Ասոց վարժարանը, որ արդեն գոյություն ունի, վերածվի կտակարանին անվան վստահության ըստ ճիզվիթական սկզբանց, և ըստ այնմ վերակազմվելով դրվի ընդ վերին հսկողության Պոլսո պատրիարքարանին», որովհետև և ըստ Օրմանյանի՝ պատրիարքարանը բարձր է քան կաթողիկոսարանը և կամ ավելի վստահության արժանի է: Այդ ամենը նա վերագրում է Մ. Օրմանյանի «դիկտատորական բաղձանքներին… բայց ոչ այսօր և ոչ հավիտյան չեմ ընդունիր Ազգի բարիքները Օրմանյանի ձեռքեն ընդունելու նվաստումը»[2]: Միայն Մ. Օրմանյանի անձի և գործունեության դեմ չէ Սահակ Խապայանի ընդվզումը: Դա նշանակում էր չընդունել Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի գերակայությունը, իսկ հայտնած դժգոհությունը՝ հավաստել Կիլիկիո Աթոռի անկախությունը, որի համար հակառակը «նվաստում» էր: Նամակի ենթատողերում, մեր կարծիքով, շղարշված զգացվում է ուղղակի Մ. Խրիմյանին ենթարկվելու միտումը:

Քննադատելով պատրիարքին, Ս. Խապայանը շարունակում է. «Օրմանյան Կիլիկիո կաթողիկոսությունը ճանկելե հուսախաբ կամ վրիպած, այժմ հետամուտ է Հայրապետական Աթոռ մը ստեղծել, անշուշտ վրան ինքը բազմելու համար: Մենք միակ այն սիրով ընդունեցինք Կիլիկիո աղքատացյալ աթոռը, որպեսզի եկեղեցվո միությունը պահպանելու համար՝ ավերակները իբրև թումբ ծառա-

---

[1] *Նույն տեղում, թ. 77: Տե՛ս նաև Բաբկեն Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 810-811:*
[2] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1824, թ. 10:*

յեցնենք, բայց միության սուտ նախանձախնդիրներն առաջին օրեն մեր առջև նետեցին «ընկալյալ սովորություն» բանաձևը հրատարակյալ անդրանիկ կոնդակին առթիվ: Հարկ չեմ համարիր ըսել, որ Երուսաղեմի պատրիարքի կոնդակներուն չափ անգամ կարևորություն չը տվին, իսկ հիմա նոր օրենսդրության առթիվ՝ նոր Հայրապետ և նոր Հայրապետանոց կը փնտրի Օրմանյան...»:

Մարգարեական ներշնչմամբ ոգեր էին. «Աթոռ դնել մայրաքաղաք... մերթ ևս ձգտել այնչափ հառաջ մինչև ի Սիս և Աղթամար, տիրապետել այլոց վիճակ»[1]:

Զգացվում է Մ. Խապայանի ոչ միայն անձնական վիրավորանքը իր դիրքը, պաշտոնը և ավագությունն անտեսելու համար, այլև, մեղմ ասած, դժգոհությունը (եթե չասենք՝ թշնամանք) Մ. Օրանյանի նկատմամբ, վերջինիս մեղադրելով եկեղեցու միասնության քայքայման, եկեղեցական կարգուկանոնի խախտման մեջ: Մ. Օրմանյանն, իր հերթին, ցանկանում էր Կիլիկիո կաթողիկոսությունն ամբողջովին ենթարկել իր ազդեցությանը:

Խորացող տարաձայնությունները հրահրվում և խրախուսվում էին, ինչպես արդեն նշել ենք, օսմանյան իշխանությունների կողմից: «Բ. Դուռը ուզում էր Կիլիկիան պատրիարքութունե բաժնել և ինքնագլուխ նկատել և պատրիարքի որևէ միջամտություն ջնջել... Կիլիկիո ինքնավարությունը վերահաս վտանգ մըն է...» - գրել է Մ. Օրմանյանը[2]: Եկեղեցու միասնությունը երիցս կարևոր էր հայության ոչ միայն հոգևոր, այլև մշակութային, քաղաքական միության առումով՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իսկ նրա բաժանումը նշանակում էր միասնության պառակտում, որը մեծ հարված էր հայ ազատագրական պայքարին ընդհանրապես: Այդ մասին է Կիլիկիայից Ազգային ընդհանուր ժողովի պատգամավոր ընտրված Արիստակես Գասպարյանի նամակը ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չ-ին: «Գալով նպատակիս,-գրում է նա, - ամենաբուռն փափագս է Կիլիկիո կաթողիկոսական Ս. Աթոռն օժտված տեսնել հիմնական կանոնագրով մը և մանավանդ լայնախոհության հիման վրա վառ պահել և արմատացնել կատարյալ համերաշխություն մը, ընդ մեջ Մայր Աթոռոյն և Սսո Աթոռին, ճշտելով հարաբերությանց և իրավանց սահմանը պաշտոնական համաձայնագրով մը որ լինի օրինական, ստանալով անջնջելի պայմանագրության մը ուժն ու հանգամանքը, իսպառ արգելե ապագային համար որևէ ոտնձգություն ամենայն Հայոց Հայրապետության գերադասության դեմ»:

Եվ երիցս իրավացի է վեհափառի անունից Ա. Գասպարյանին գրած պատասխան նամակում Հուսիկ արքեպիսկոպոսը, նշելով և կարծես սերունդներին պատգամելով, որ «ազգի միության, եկեղեցու խաղաղության, եկեղեցական կարգերի ու կանոնների պահպանության խնդիր կա, որին ցանկացող և նախանձախնդիր պետք է լինի ամեն ոք»[3]:

---

[1] Նույն տեղում, թ. 11:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց.1, գ. 321, թ. 26-27:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 262, թ. 1-2:

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԵՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ /1890-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐ/

Հայկական հարցի լուծմանը հետամուտ քաղաքական կուսակցությունների ձևավորումը արդեն 1890-ականների սկզբին հանգեցրել էր նրան, որ հայ ազատամարտի ղեկավարների մոտ «ի՞նչ անել» հարցադրմանը փոխարինել էր «ինչպե՞ս անել» բարդ, հաճախ անլուծելի թվացող գլուխկոտրուկը: Նման պայմաններում առաջին պլան էին մղվել ոչ թե պայքարի վերջնանպատակները, այլ գործնական-կիրառական հարթության վրա դրանց հասնելու մարտավարական ուղիների փնտրտուքը:

Այդ պատճառով ասպարեզում առկա քաղաքական ուժերի մոտ տեղի էր ունենում իդեալի և իրականության բաղդատման և դրա հիման վրա պայքարի անմիջական եղանակների հստակեցման բարդ ու հակասական մի գործընթաց, որն առավել ամբողջական, ինչ որ առումով՝ դասական ձևով դրսևորվեց Հայ Յեղափոխական Դաշնակցության առաջին ծրագրային բնույթի փաստաթղթերում, կուսակցության գործելակերպը հստակեցնող կանոնագրային նորմերում, առանձին ակտիվ գործիչների ելույթներում ու հայտարարություններում, ինչպես նաև պայքարի կոնկրետ փորձն ամփոփող ու հետագա գործունեության ուղիներ մատնանշող զանազան հրահանգների, նախագծերի և այլ վավերագրերի մեջ: Դրանցից ցայսօր գիտական շրջանառության մեջ են դրվել միայն երկուսը՝ «Հ.Յ.Դաշնակցության Մանիֆեստը»[1] և 1892թ-ին՝ առաջին ընդհանուր ժողովում ընդունված, այսպես կոչված բուն ծրագիրը կամ ծրագիր-կանոնագիրը[2], որի հետևանքով ուսումնասիրողների համար հնարավորություն չի ստեղծվել բացահայտելու համար Հ.Յ.Դաշնակցության խոսքից գործի անցնելու բարդ պրոցեսի հիմնական հանգրվանները:

Վերը նշված փաստաթղթերի լրացումն ու ամբողջացումն են հանդիսանում Վրաստանի հանրապետության Պետական կենտրոնական պատմության արխիվում պահվող «Հրահանգ հրոսակային խմբերին» վերնագիրը կրող վավերագիրը[3], 1892-ի առաջին ընդհանուր ժողովում ընդունված բուն ծրագրի խմորատիպ օրինակի ռուսերեն թարգմանությունը[4], ինչպես նաև Հ.Յ.Դաշնակցության տեղական կոմիտեների ու խմբերի գործունեության հիմնական սկզբունքներն ամփոփող մեզ հայտնի առաջին կանոնագրային բնույթի փաստաթուղթը[5] և այլ վավերագրեր ու հետաքրքիր արխիվային նյութեր:

Այս նորահայտ փաստաթղթերի և բազմաթիվ այլ սկզբնաղբյուրների հետազոտությունը թույլ է տալիս վեր հանել ազատագրական պայքարը գործնական հարթություն տեղափոխելու՝ Հ.Յ.Դաշնակցության առաջին փորձերի ընթացքը: Այն ի տարբերություն 1880-ականների ազատագրական կազմակերպություն-

---

[1] *Տե՛ս «Դիվան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ 1, Բոստոն, 1934, էջ 88-89, բնագիրը տես Հ.Հ.Հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմության ԿՊԱ. ֆ. 4047, ց. 1. գ. 2:*

[2] *Տես Մեր ծրագիրը, «Դրոշակ» 1894. սեպտեմբեր, թիվ 11:*

[3] *Տես Վրաստանի հանրապետության ՊԿՊԱ, ֆ. 17. ց. 2. գ. 706, թ. 283-284:*

[4] *Տես նույն տեղում, ֆ. 153, ց. 1, գ. 119, թ. 6-7:*

[5] *Տես նույն տեղում, ֆ. 153, ց. 1, գ. 135. թ. 53-54:*

ների ու խմբակների հետապնդած տեղական-գավառական խնդիրների և Ա.Դ.Հնչակյան կուսակցության ազգային ու համամարդկային նպատակների միջև շուտով առաջ եկած խոր ճեղքվածքի, հանդիսանում էր տեսական հարցադրումները գործի վերածելու և իրականություն դարձնելու փաստորեն առաջին համակարգված քաղաքական հայտը ողջ հայ ազգային-ազատագրական շարժման ընթացքում:

Ծրագրային մաքսիմալիզմին փոխարինող Հ.Յ.Դաշնակցության գործնական իրատեսությունը բխում էր այն միջավայրի ու պայմանների հաշվառումից, որը հարկադրում էր կուսակցության հիմնադիրներին խուսափել «հեռավոր անցյալի» կամ «հեռավոր ապագայի» գերին դառնալուց և առաջնորդվել մարդու և միջավայրի, իսկ լայն առումով՝ ազգի ու հայրենիքի միասնությունն ապահովելու համար անհրաժեշտ քաղաքական պրագմատիզմով և «ղեկավարուել երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով»[1]: Նման պայմաններում ծրագրային մաքսիմալիզմի և գործնական մարտավարության միջև առկա անորոշություններին Հ.Յ.Դաշնակցությունը հակադրում էր ծրագրային չափավորությունը և գործնական պայքարի ողջ գունապնակը ներառող ինչպես չափավոր, այնպես էլ արմատական բոլոր հնարավոր քայլերի զուգահեռ կիրարկումը: Այդ առումով ինչպես Հայ Յեղափոխականների Դաշնակցության Հիմնադիր ժողովներում, այնպես էլ առաջին ընդհանուր ժողովում բանաձևված «Թիւրքաց-Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւն...»[2] պահանջը հանդիսանում էր սեփական ռազմավարությունը գործնական գետնի վրա կիրառելու համար անհրաժեշտ այն բանաձևը, որը թույլ էր տալիս չկաշկանդել կուսակցության մարտավարական քայլերի հնարավորությունները, բայց, միաժամանակ պահպանել ռազմավարական նպատակների հստակությունն ու անաղարտությունը: Բնական էր, որ նման քաղաքական գործելակերպ որդեգրած կուսակցության համար չէր կարող բացարձակ ու անխախտ մնալ նաև սկզբնական շրջանում որպես ծրագրային առաջադրանքների իրականացման հիմնական միջոց դիտվող ընդհանուր ապստամբության գաղափարը: Փաստերն ու վավերագրերը ցույց են տալիս, որ արդեն 1891-ին Արևմտյան Հայաստանում ընդհանուր ապստամբություն սկսելու համար Հ.Յ.Դաշնակցությունը ծավալել էր հսկայական աշխատանք: Սակայն շուտով հաշվի առնելով իր որդեգրած նպատակի անհամապատասխանությունը տվյալ ժամանակամիջոցում «երկրում» ստեղծված կոնկրետ պայմաններին, Հ.Յ.Դաշնակցությունը կյանքի կոչեց ավելի կոնկրետ, գործնական բնույթի քայլերի մի ամբողջ համալիր, որոնք սոսկ հեռանկարի առումով էին միտված ընդհանուր ապստամբության գաղափարի հասունացմանը:

Արդեն 1892թ. ապրիլ ամսին Հոնան Դավթյանի և Տիգրան Օքոնյանի կողմից գրված «Հրավեր ընդհանուր ժողովի հայ հեղափոխականներին» փաստաթուղթը բանաձևում էր «միջոց-տակտիկա» հասկացությունը՝ որպես սեփական նպատակին հասնելու մարտավարական ուղիների փնտրտուքի սկիզբ[3]: Բնական էր նաև, որ նման որոնումները պետք է հանգեցնեին կուսակցության մարտա-

---

[1] *«Դրօշակ», 1891, թիվ 1:*

[2] *«Դրօշակ»-ի թռուցիկ թերթ, թիվ 1, էջ 1:*

[3] *Տես Հրավէր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին, «Դիվան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ. 1, Բոստոն, 1934, էջ 95:*

վարությունը կոնկրետացնող մեկ այլ փաստաթուղթ - հրահանգի ձևակերպմանը, որը կփորձեր ընդհանուր ապստամբության անօգուտ սպասումներից հոգնած Հ.Յ.Դաշնակցության գործիչներին զինել գործնական պայքարի հստակ մարտավարությամբ:

Տիգրան Օքոնյանի կողմից ընդհանուր ժողովին առաջարկվող այդ փաստաթուղթը սահմանում էր կուսակցության անելիքները միայն Արևմտյան Հայաստանում՝ չմասնավորեցնելով Անդրկովկասում և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող այլ վայրերում առկա կոմիտեների ու խմբերի առջև դրվող խնդիրները: 1892թ. ապրիլի 30-ին Թիֆլիսից Ախալցխա՝ Ալեքսանդր Արապյանին ուղարկված և «Հրահանգ հրոսակային խմբերին» վերտառությունը՝ կրող այդ վավերագիրը սահմանում էր «երկրում» գործող խմբերի նոր առաջադրանքները՝ ժողովրդի պաշտպանությունը թշնամիներից և ժողովրդի նախապատրաստումը ընդհանուր ապստամբությանը: Դրանով իսկ ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը դիտարկվում էր որպես ավելի հեռավոր ապագա տեղափոխվող «ընդհանուր ապստամբություն» ռազմավարական նպատակի իրականացման միջոցներից մեկը: Դրա համար «Հրահանգը» նախատեսում էր 5-11 հոգուց բաղկացած ոչ մեծ խմբերի ձևավորում, որոնց ղեկավարելու էին խմբապետերը: Նրանք իրենց հերթին պետք է կապ պահպանեին կուսակցության ներկայացուցիչ-գործիչների հետ, որոնցից յուրաքանչյուրը պետք է իր ձեռքի տակ ունենար նման 2 խմբեր: Սահմանվում էր նաև ռազմական կարգապահություն՝ հրամանի կատարման պարտադիր լինելը, դավաճանության մեջ մեղադրվող խմբի անդամին մահապատժի ենթարկելու իրավունքը, առանց թույլտվության խումբը լքելու փաստի դիտարկումը որպես դավաճանություն և այլն:

Արևմտյան Հայաստանում գործելու համար նախատեսված այս մարտական բնույթի հրահանգներում կոնկրետացվում էին նաև հրոսակային խմբերի հավանական թիրախները՝ կառավարության անդամների՝ վալիներրի, մութեսարիֆների, գայմագամների և ընդհանրապես՝ բոլոր ռազմական ու քաղաքական գործիչների ու հարկահավաքների, կառավարության գույքի, ունեցվածքի, շինությունների և հեռագրային գծերի, ինչպես նաև մատնիչների ու դավաճանների ոչնչացման մասին հստակ առաջադրանքների տեսքով:

Այսպիսով, դեռևս մինչև առաջին ընդհանուր ժողովը, որը հանդիսացավ Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորման բարդ գործընթացի ավարտական փուլը և ամրագրեց պայքարի հեղափոխական մարտավարության հաղթանակը լիբերալ-ռեֆորմիստական ուղեգծի հանդեպ, Հ.Յ.Դաշնակցությունը արդեն ուներ այդ մարտավարության առավել ընդհանուր գծերի մասին իր պատկերացումների համակարգը՝ որպես ժողովին ներկայացվող առաջարկություն-նախագիծ: Զուտ մարտական-հայդուկային գործողությունների մասին կոնկրետ առաջարկներից զատ Հ.Յ.Դաշնակցության մարտավարությունը շուտով իր մեջ ներառեց նաև պայքարի այլ եղանակներ, որոնք սահմանվեցին հենց առաջին ընդհա-

---

[1] *Փաստաթուղթը ռուսերեն վերնագրված է "Инструкция шайкам, делающим набеги", որն անկասկած ցարական օխրանկայի թարգմանիչների ձեռքով է գրվել: Սակայն հայերեն բնագրի բացակայությունը չի խանգարում հասկանալ, որ վերջինիս իրական վերնագիրը «Հրահանգ հրոսակային խմբերին» հասկացությունն է, քանի որ 1890-1891թ. փաստաթղթում Հ.Յ.Դաշնակցությունն օգտագործում էր ոչ թե հայդուկային, այլ հրոսակային խմբեր բառակապակցությունը: Տես Ա.Սեվեան, Երբ է հիմնուել Հ.Յ.Դաշնակցութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, թիվ 2, էջ 65:*

նուր ժողովի կողմից և ամրագրվեցին նրա ընդունած ծրագիր-կանոնագրի կամ բուն ծրագրի մեջ: Դրանք էին պրոպագանդը, ժողովրդի հեղափոխականացումը, զինումը, ապագա ընդհանուր ապստամբության թատերաբեմի՝ Արևմտյան Հայաստանի ուսումնասիրությունը, դավաճանների ահաբեկումը և այլն, և այլն: Այսպիսով, «Հրահանգ իրոսակային խմբերին» առաջարկություն-նախագիծը հիմք դարձավ առաջին ընդհանուր ժողովի կողմից ընդունված մարտավարական առաջադրանքների ողջ համալիրի համար:

1890-ական թվականներն Հ.Յ.Դաշնակցության կողմից Արևմտյան Հայաստանի դիտարկումը որպես պայքարի փաստորեն միակ թատերաբեմ, նախատեսում էր համապատասխան մարտավարության որդեգրում նաև «երկրից» դուրս գործող դաշնակցական կոմիտեների ու խմբերի կողմից: Ուստի բնական էր, որ կուսակցությունը պետք է փորձեր կանոնակարգել իր աշխատանքները նաև այդ գործելադաշտերում՝ հիմք ընդունելով տվյալ հանգրվանում վերջիններիս տրվող օժանդակող-սպասարկող գործառույթները: Նման խնդիրները հստակեցնելու համար առաջին ընդհանուր ժողովը անհրաժեշտ ժամանակ ու հնարավորություն չունեցավ: Թերևս դա է պատճառն այն իրողության, որ Արևմտյան Հայաստանից դուրս գործող կառույցների գործելակերպը հստակեցնող առաջին կանոնա-գրային բնույթի փաստաթղթի մասին առկա տեղեկությունները սկզբնավորվում են 1895 թվականին:

Մեր կարծիքով, դա կապված էր այն իրողության հետ, որ սկսած այդ թվականից, Թիֆլիսի Բյուրոյի հրավերով տեղի ունեցան մի շարք տարեկան «ընդհանուր» ժողովներ, որոնց սակայն մաս չկազմեցին ո՛չ Արևմտյան Հայաստանում և ո՛չ էլ Ռուսաստանյան կայսրությունից դուրս գործող դաշնակցական մարմինները: Այդ պատճառով, ավելի ուշ այդ ժողովները կոչվեցին Կովկասյան ռայոնական, շրջանային կամ շրջանական ժողովներ: Միանգամայն բնական ու տրամաբանական էր, որ հենց այդ ժողովներն էլ պետք է սահմանեին «երկրից» դուրս գործող դաշնակցական կառույցների աշխատանքների հիմնական սկզբունքները, քանզի նրանցում ներկայացված էին հենց նման տարածքներում գտնվող դաշնակցական կոմիտեները: Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ 1895-ի Կովկասյան ռայոնական ժողովից անմիջապես հետո, Թիֆլիսից Ռուսաստանում գործող մարմիններին է ուղարկվում մի փաստաթուղթ՝ «Հեղափոխական նախագիծ»[1] պայմանական վերտառությամբ[2]: Փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն «երկրից» դուրս գործող կոմիտեների համար նախատեսված կանոնագիր էր, քանզի սահմանում էր ոչ թե կուսակցության անմիջական պայքարի մարտավարությունը, այլ այդ պայքարը իրենց վրա վերցրած խմբերին մարդուժով, զենքով ու ֆինանսական միջոցներով օժանդակող կառույցների աշխատանքի հիմնական ուղղությունները:

1895թ. ապրիլի 30-ին Արմավիրում գտնվող ուսուցիչ Գրիգոր Թառումյանին ուղղված այս կանոնագրային բնույթի փաստաթուղթը ճշտում էր տեղական կոմիտեների նպատակները՝ ձևավորել խմբեր և հրահանգներ տալ նրանց ու միաժամանակ նշում, որ այդ խնդիրների իրականացման համար կոմիտեների

---

[1] Ռուսերեն թարգմանության՝ "Проект восстания" ձևակերպումը, անկասկած ցարական գրաքննիչների անփութության արդյունքն է, քանզի բուն տեքստի մեջ նույնպես հաճախ շփոթվել են «ապստամբություն» և «հեղափոխություն» հասկացությունները:
[2] Տե՛ս Վրաստանի հանրապետության ՊԿՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 135, թ. 53-54:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 54:

գործունեությունը պետք է բաժանել երկու մասի՝ տեսական և գործնական: Դրանցից առաջինը կայանում էր հեղափոխական գաղափարների քարոզչության, խմբերի ձևավորման մեջ, որի համար կոմիտեները պետք է նախ և առաջ տարածեին կուսակցության օրգանը՝ «Դրոշակը»: Գործնական աշխատանքների տակ իմսկացվում էր նախ և առաջ դրամահավաքը, իսկ որպես կոմիտեի գործունեության հիմնական նպատակ էր դիտվում զենքի ու զինամթերքի հայթայթման խնդիրը: Դրա համար յուրաքանչյուր կոմիտե պարտավոր էր ունենալ իր զինապահեստը՝ երկու անձանց վերահսկողության տակ: Զենքի ընդունումն ու առաքումը պետք է իրականացներ կոմիտեի ընդհանուր հաշվապահը: Նշվում էին նաև զենքերը Հայաստան ուղարկելու հիմնական տարբերակները՝ անմիջականորեն Ռուսաստանի վրայով կամ էլ Պարսկաստանում գործող կոմիտեի միջոցով՝ հանձնելու համար թուրքական սահմանների մոտ գործող խմբերին: Այսպիսով «Հեղափոխական նախագիծը», որն ամենայն հավանականությամբ 1895-ի սկզբին կայացած Կովկասյան ռայոնական ժողովի արգասիքն էր, հստակեցնում էր «երկրից» դուրս գործող կոմիտեների գաղափարական, կազմակերպական ու քարոզչական աշխատանքների հիմնական ուղղությունները և լրացնում՝ միայն Արևմտյան Հայաստանի պայմանների համար նախատեսված նախորդ կանոնա-գրային բնույթի փաստաթղթերում ամրագրված նորմերը:

Այսպիսով մեր ձեռքի տակ եղած ծրագրային բնույթի փաստաթղթերը, ինչպես նաև գործնական առաջարկություններն ու դրանց շուրջ առաջին ընդհանուր ժողովում կայացած բանավեճերի բովանդակության շուրջ հետագայում արտահայտված կարծիքները թույլ են տալիս եզրակացնել, որ Հ.Յ.Դաշնակցությունը հայ իրականության մեջ գործող առաջին քաղաքական կազմակերպությունն էր, որը փորձ արեց ընդհանուր իդեալների մշուշապատ բարձրունքներից իջնել դեպի նրանց իրականացման խորդուբորդ ճանապարհը, այսինքն՝ ռազմավարությունը դարձնել կյանքի կոնկրետ պայմաններին համապատասխանող, գործուն մարտավարություն: Այդ պատճառով, արդեն 1890-ական թվականների առաջին կեսին Հ.Յ.Դաշնակցությունը բախվեց հայ ազատամարտի հիմնական հակաթեզի հետ՝ ակնհայտ դարձավ իդեալի և իրականության միջև առկա խոր ճեղքվածքը. Արևմտյան Հայաստանը պատրաստ չէր ընդհանուր ապստամբության շուտափույթ իրականացմանը: Նման պայմաններում կարելի էր մնալ տեսական-գաղափարական հարցադրումների «բարձրունքի» վրա և Հնչակյան կուսակցության նման որպես նվազագույն ծրագիր բանաձևել Հայաստանի երեք մասերի ազատագրման խնդիրը, իսկ որպես վերջնանպատակ՝ սոցիալիզմի իդեալը և դրանից հետո ժնևից հրահանգներ ուղարկել հալածանքների ու ջարդերի պայմաններում օրհասի մատնված արևմտահայ գյուղացիությունը: Սակայն, քաղաքական պրագմատիզմը և ամենակարևորը՝ պատասխանատվությունը հայրենիքի ապագայի հանդեպ, հարկադրում էին Հ.Յ.Դաշնակցությանը սկսել պայքարի նոր մարտավարության փնտրտուք՝ կտրուկ կերպով իջեցնելով անմիջական քաղաքական պահանջների նշաձողը և առաջին պլան մղելով դրանց իրականացման գործնական պայքարի՝ մարտավարության հստակեցման խնդիրը: Այդ պատճառով, արդեն 1890-ական թվականների առաջին կեսին, Հ.Յ.Դաշնակցության մարտավարական առաջադրանքների ողջ գունապնակն իր մեջ ներառեց պայքարի փաստորեն բոլոր հնարավոր մեթոդները՝ զենքից մինչև քարոզչություն և անգամ բանակցություններ հակառակորդի առանձին խմբավորումների հետ՝ ի նկատի ունենալով ողջ կայսրության ընդհանուր բարենորոգման հեռանկարները:

Նման խառը մարտավարության որդեգրմանը զուգահեռ, արդեն 1890-ական թվականների առաջին կեսին, Հ.Յ.Դաշնակցության ներսում սկսվեց սաղմնավորվել այն գաղափարը, որ արևմտահայությանը զինելու, նրա դիմադրական ոգին բարձրացնելու, հայդուկային խմբեր ձևավորելու և հայկական հարցի հանդեպ Եվրոպայի ուշադրությունը գրավելու խնդիրների ողջ համալիրը իր հիմքում պետք է խարսխվի ժողովրդի կողմից ինքն իրեն օգնելու սկզբունքի՝ մենակի հոգեբանության ու գաղափարախոսության վրա: Իսկ դա նշանակում էր, որ մարտավարական բոլոր հնարքների միաժամանակյա կամ հաջորդական գործադրումը Հ.Յ.Դաշնակցության համար դարձավ այն յուրահատուկ դաժան քննաշրջանը, որի ընթացքում բյուրեղանում էր ստեղծված իրավիճակի հաղթահարման ճշմարիտ ուղու մասին պատկերացումների նոր համակարգ: Դրա համար անհրաժեշտ էր կյանքի մեջ կիրարկված փորձի ամփոփումը և այդ կիրարկման գործընթացում թրծված սերնդի ինքնագիտակցության արթնացման նոր հանգրվանը: Այդ առումով 1890-ականների առաջին կեսին Հ.Յ.Դաշնակցության կողմից գործի դրված պայքարի մարտավարական զինանոցը արդեն 1890-ականների կեսերին հարստացվեց «երկրում» գործող ամենավառ դեմքերի, առաջին հերթին՝ Հրայրի (Արմենակ Ղազարյան) և նրա համախոհների կողմից՝ որպես ազգ-բանակ դառնալու և դրա միջոցով սեփական ճակատագիրը ինքնուրույնաբար տնօրինելու անհրաժեշտության գիտակցում: Փաստերը և նորահայտ վավերագրերը ցույց են տալիս, որ Հ.Յ.Դաշնակցության մեծագույն մարտավարի մոտ ի հայտ եկած այդ գաղափարական առկայծումը, որը հաճախ փորձ է արվում դիտարկել որպես ընդդիմություն՝ կուսակցության ընդհանուր մարտավարությանը, իրականում բացառություն չէր, այլ հանդիսանում էր կուսակցության ներսում հասունացած գործիչների մի ամբողջ շերտի՝ փորձով ձեռք բերված փորձառության վկայություն: Եվ 1890-ականների կեսերին սկսված ջարդերը դառնում էին այն հանգրվանը, որը իրայրյան նույն մարտավարության կողմնակիցներ էր ծնում նաև արևելահայ դաշնակցականների շրջանում: Այն որ Հրայրի մարտավարական արտակարգ ունակությունների ու հոտառության ծնունդը հանդիսացող նոր մտայնությունը բացառություն չէր Հ.Յ.Դաշնակցության ներսում, ապացուցվում է նույն օրերին Հ.Յ.Դաշնակցության հնագույն գործիչներից մեկի՝ Բագրատ վարդապետ Թավաքալյանի՝ արևմտահայ գաղթականությանը օգնելու նպատակով Ալեքսանդրապոլում 1895-ի նոյեմբերի 12-ին արտասանած մի քարոզի միջոցով: Այն իր բովանդակությամբ պարզապես սեփական հոտին ուղղված հոգևորականի մխիթարանքի խոսք չէ, այլ քաղաքական նոր պլատֆորմի ձևավորման գաղափարական ելակետ, որը ցարական իշխանությունների համար իր ունեցած վտանգավորության պատճառով առաջ բերեց հետաքննության մի ամբողջ շղթա՝ Ալեքսանդրապոլի ոստիկանությունից հասնելով մինչև Երևանի նահանգի ղեկավարությանն ու անգամ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչին:

Ահա թե ինչ էր քարոզել դաշնակցական-վարդապետը Ալեքսանդրապոլում, ուր արդեն նրա շուրջն էր համախմբվել 1890-ական թվականներին Անդրկովկասում գործող ամենամարտունակ կառույցը՝ Ալեքսանդրապոլի կոմիտեն. «Եղբայրնե՛ր, հավատի ու արյան գծով ձեր ազգակիցներին Թուրքիայում մորթում են և նրանց մեջ եղած հարուստներին անգամ հասցրել են թշվառության, որի համար էլ այժմ Ձեր օգնության կարիքն է առաջացել և այն չպետք է մերժել: Մեզ հարկավոր չէ օգնության խնդրանքով դիմել մի որևէ տիրակալի, քանի որ Աստծուց բացի մենք որևէ այլ տիրակալ չունենք և միայն Աստծուց պետք է աջակցություն խնդրենք և դրանից հետո՝ ինքներս աջակցենք մեկս մյուսին: Ահա, օրինակ, երբ

մարդ գտնվում է մահվան մահիճում, բժիշկ են հրավիրում, բայց բժիշկը ի վիճակի չէ միայն իր ուժերով փրկել մահացողին: Այդպես էլ մենք, հայերս, գտնվում ենք մահացողի վիճակում և այդ պատճառով հարկ չկա օգնություն սպասել, այլ պարտավոր ենք լոկ խնդրել Աստծուն, որպեսզի նա մեզ ուժ ու եռանդ հաղորդի՝ օգնություն ցույց տալու համար մեր եղբայրակիցներին: Այդ պատճառով խորհուրդ եմ տալիս Ձեզ օգնության խնդրանքով չդիմել ոչ մի տերության, քանի որ այդ տերությունները հետևում են միայն իրենց շահերին, իսկ մինչ այդ մեր եղբայրակիցներին մորթում են: Մեկ անգամ էլ եմ ասում Ձեզ, մի՛ դիմեք կողմնակի օգնության, այլ ինքներդ աջակցեք մեկդ մյուսին և միայն սեփական ուժերով օգնություն տրամադրեք եղբայրներին[1]:

Այսպիսով, 1890-1895 թվականների ընթացքում Հ.Յ.Դաշնակցությունը ոչ միայն փորձեց ճշտել հայ ազգային-ազատագրական շարժման ռազմավարական նպատակները, այլև սկսելով այդ նպատակները կյանքի կոչելու՝ խիստ տարողունակ գործը, իր աշխատանքի ողջ ծանրությունը կենտրոնացրեց ամենաբարդ խնդրի՝ պայքարի մարտավարության հստակեցման վրա: Սկսված գործը՝ ազատագրական պայքարը, Հ.Յ.Դաշնակցությունը թույլ տվեց կիրառել այդ մարտավարության գրեթե բոլոր հնարավոր տարբերակները և այդ գործընթացում, կանոնագրային բնույթի փաստաթղթերի ու հրահանգների մեջ ամփոփել հետագա աշխատանքների ծավալման համար անհրաժեշտ սկզբունքները՝ դրանք դարձնելով պարտադիր նորմեր կամ էլ օգտակար խորհուրդներ բոլոր դաշնակցականների համար: Միաժամանակ, արդեն 1890-ականների կեսերին Հ.Յ.Դաշնակցության առավելապես պրակտիկ աշխատանքով զբաղված ականավոր դեմքերի շրջանում, ինչպես Արևմտյան Հայաստանում (Հրայր Դժոխք), այնպես էլ Արևելյան Հայաստանում (Բագրատ վարդապետ Թավաքալյան) սկսվեց ամրապնդվել ու բյուրեղանալ դեռևս կուսակցության Մանիֆեստում ամրագրված ինքնօգնության, հույսը սեփական ուժերի վրա դնելու մտայնությունը՝ որպես ազատագրական պայքարում նշմարվող նոր, առողջ ու կենսունակ միտում, որն իր վերջնական հաղթանակն արձանագրեց 1905-1906թթ. հայ թաթարական կռիվների և Հայաստանի առաջին հանրապետության ձևավորման շրջանում: Դրանով իսկ, Հ.Յ.Դաշնակցության ներսում սաղմնավորվեց պայքարի այն գործնական ու ճշգրիտ մարտավարությունը, որի արդյունքը դարձան հայ ազգային-ազատագրական շարժման հետագա բոլոր նվաճումները:

---

[1] *Государственный архив Российской Федерации, Департамент Полиции, 5-ое делопр., ф. 102, оп. 132, 1896г., д. 137, ч. 1, л. 7.*

ԼԻԼԻԹ ԱՍՈՅԱՆ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 1897Թ. ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ

Երկրի տնտեսական զարգացման մակարդակի, ժողովրդագրության և հասարակական կյանքի այլ ոլորտների մասին հնարավորին չափ ճշգրիտ տեղեկություններ կարելի է քաղել մարդահամարի տվյալներից: Նման ամբողջական մարդահամար Ռուսաստանում անցկացվեց 1897թ. հունվարի 28-ին /փետրվարի 9-ին/: Այն նախապատրաստվել և անցկացվել էր համաձայն 1895թ. հունիսի 5-ին հրապարակված "Положение о первой всеобщей переписи населения Российской империи"[1] փաստաթղթի, որով հաստատվել էր մարդահամար անցկացնելու ծրագիրը և նպատակը՝ պարզել բնակչության քանակը, կազմը, տեղաբաշխումը: Մարդահամարի նյութերը հրատարակվեցին 1904-1905թթ. առանձին հատորներով ըստ նահանգների: Անդրկովկասին վերաբերող բաժնում Երևանի, Բաքվի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի և Քութայիսի նահանգների հետ միասին բազմակողմանիորեն ներկայացված է նաև Կարսի մարզը, որին վերաբերող նյութերն ամփոփված են երկու հատորում:[2] Առաջին հատորում հիմնականում փաստվել է մարզի ազգաբնակչության մի հատվածի՝ ռուսահպատակներին վերաբերող տեղեկությունները՝ ըստ մարդահամարի պահանջների: Երկրորդ հատորում բերված տվյալների սկզբունքն այլ է. ուսումնասիրության առարկա է դարձել մարզի առկա ողջ ազգաբնակչությունը:

Կարսի մարզը Ռուսաստանին է անցել 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում՝ 1878թ. Սան-Ստեֆանոյի և ապա Բեռլինի պայմանագրերով: Հյուսիսից այն սահմակից է Թիֆլիսի նահանգին, հարավից՝ Թուրքիային, արևելքից՝ Երևանի նահանգին, արևմուտքից՝ Բաթումի մարզին:" 1883թ. հունիսի 27-ի վարչական բաժանումով մարզը վերջնականապես տրոհվեց 4 օկրուգի /գավառ/ Կարս, Կաղզվան / պատմական Արշարունիք/, Արդահան և Օլթի /Ուխտիք/ կազմված 14 տեղամասից կամ ոստիկանական շրջանից՝ ք. Կարս կենտրոնով[5]: Մարզի տեղամասերը տեղաբաշխվում էին հետևյալ կերպ՝

- Կարսի գավառ – Կարսի, Շորագյալի, Առղանլուի, Աղբաբայի
- Կաղզվանի գավառ – Կաղզվանի, Նախիջևանի, Խորասանի
- Արդահանի գավառ – Արդահանի, Գյոլի, Չըլդրի, Փոցխովի
- Օլթիի գավառ – Օլթիի և Տաուսկերի կամ Թավուսքարի

Ռուսաստանին միացնելուց հետո ռազմաքաղաքական նկատառումներով մարզը կառավարում էր ռազմալեռնային վարչությունը, որն ավելի ուշ 1881թ. Կովկասի փոխարքայության վերացման հետևանքով վերափոխվեց Կովկասյան երկրամա-

---

[1] Положенпе о первой всеобщей переписи населения Российской империи. С.-Петербург,1895.
[2] օ»՚л §Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.", под редакцией Н.А.Тройницкого.т. 64, Карсская область.тетрадь 1-ая, 1900г., тетрадь 2-ая, 1904г.
[3] Տես "Карта Кавказского края.Сост. штабс-капитаном Кондратьевым. 1872г.":
[5] Ա. Հակոբյան. Կարսի մարզ/1878-1917/.Եր., 2000.էջ 24:

սի ռազմաժողովրդական վարչության: Կարսի մարզի տարածքը կազմում է 166307 վերստ[2*]: Մարզի բնակչության ընդհանուր թիվը 296911 մարդ էր, որից առկա բնակչության թիվը կազմել է 290654 մարդ, իսկ ժամանակավոր բացակայել՝ 6257 մարդ:

Մարզում եղել են ռուսահպատակ 3179 և օտարահպատակ 869 ժամանակավոր բնակիչ՝ ընդհանուր թվով 4048 մարդ: Սրանք հիմնականում օտարահպատակ ձեռնարկատերեր էին և գոյության միջոցներից զուրկ արևմտահայ գաղթականներ, որոնք ժամանակավոր աշխատանք էին փնտրում մարզի տարածքում: Օտարահպատակներ կային նաև մշտական բնակչության կազմում՝ 21750 մարդ: Ընդհանուր առմամբ Համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով մարզում առկա է եղել օտարահպատակ 22619 մարդ կամ առկա բնակչության 7,78%-ը: 1877թ. համեմատ Կարսի մարզի բնակչության թիվն ավելացել է՝ 150-160000-ից հասնելով 290654-ի: Այս բավական բարձր ցուցանիշը արդյունք է հիմնականում բնակչության մեխանիկական աճի, որը պայմանավորված էր հետևյալով.

- Ռուսական ինքնակալության վերաբնակեցման քաղաքականությամբ:
- Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից ներգաղթածներով:
- Մարզում Ռուսական զորքերի տեղակայմամբ:

1896թ. ռուս վերաբնակիչների թիվն այստեղ կազմում էր 14244 մարդ: Վերաբնակեցումը կատարվում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարության 1879թ. մարտի 31-ի թիվ 1883 հրամանի հիման վրա՝ հիմնականում Անդրկովկասի և Ռուսաստանի կենտրոնական նահանգների աղանդավորականների՝ դուխոբորների, մոլոկանների հաշվին, որոնք ապահովվում էին հողատարածքներով և մեկ տարով ազատվում էին հարկերից:[1] Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանից ներգաղթածներին, ապա առաջինը մարզում բնակություն հաստատեցին Ալաշկերտի հայերը՝ թվով 350 ընտանիք, ապա Կարինի և Բասենի շրջաններից գաղթած շուրջ 6000 հայ:Վերջիններս հիմնականում կենտրոնանում էին Կարսի մարզում: 1894-1896թթ. ընթացքում գաղթել էր 30-50 000 հայ:1897թ. միայն Կարսի մարզում ապաստան էր գտել 20240 արևմտահայ գաղթական:[2] 1879թ. համեմատ մարզում հայերի թիվն ավելացել է 53960-ով՝ 19446-ից հասնելով 73406-ի: Հայերը կենտրոնացվում էին նաև քաղաքներում:Մարդահամարի տվյալներով մարզի քաղաքների բնակչության 43,9%-ը կամ 16616 մարդ հայ էր:Քաղաքային բնակչության ընդհանուր թիվը 37838-ն էր կամ մարզի բնակչության 13%-ը, որից 20805-ն ապրում էր Կարս քաղաքում:

Համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս ուսումնասիրելու նաև ոչ տեղաբնիկների և տեղաբնիկների թվային հարաբերությունը: Ոչ տեղաբնիկների թիվը մարզում կազմում է 87638 մարդ / 30,2% /, որից ծնունդով այլ նահանգներից էր 47899 մարդ, այլ պետությունների՝ 39739 մարդ: Տեղաբնիկներից 198397-ը ծնվել և ապրում էր նույն վայրում, իսկ 4619-ը՝ ծնունդով այլ վայրերից էր:

---

* *1 վերստը = մոտ 1.0668 կմ.*

[1] *Հակոբյան Ա., նշվ. աշխ., 2000. էջ 23:*

[2] *Տես նույն տեղում, էջ 30;«Братская помощь пострадавшим в Турции армянам».Изд.2-ое.1898г, с.XIX.*

Բնակչության խտությունը միջին հաշվով կազմում էր 17,48 մարդ 1 վերստ² -ի վրա: Մարզի բնակչությունը բաշխված էր անհամաչափ: Բնակչության 46.2%-ը կամ 134122 մարդ բնակվում էր Կարսի, 10.8%-ը կամ 31519 մարդ՝ Օլթիի, 20.3%-ը կամ 59230 մարդ՝ Կաղզվանի և 22.6%-ը կամ 65763 մարդ՝ Արդահանի գավառներում: Այս անհամաչափությունը պայմանավորված էր աշխարհագրական և բնակլիմայական գործոններով, ինչպես նաև սոցիալ – տնտեսական զարգացման մակարդակով: Մարզի բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ.

Աղյուսակ թիվ 1[1]

N	Նահանգներ և նահանգային կենտրոններ	Տարածքը քառ. վերստ	Բնակչությունը		Ընդամենը	Բնակչության հարաբեր.%
			ար.	իգ.		
1.	Կարսի ք. Կարս	5188.4 -	75452 14374	58690 6431	134142 20805	 25.85
2.	Արդահանի ք.Արդահան	4960.1 -	34930 2962	30833 1180	65763 4142	13.26 -
3.	Կաղզվանի ք. Կաղզվան	3882.4 -	33344 7421	25886 3097	59230 10518	15.26 -
4.	Օլթիի ք. Օլթի	2599.8 -	16845 1633	14674 740	31519 2373	12 12 -
5.	Ընդամենը նահանգում	16630.7	160571	130083	290654	17.48
6.	Որոնց թվում և գավառ. կենտրոններում	-	26390	11448	37838	

Վերոհիշյալ աղյուսակից երևում է, որ մարզի թե՛ գավառական, թե՛ քաղաքային բնակչության մեջ գերակշռում է արական սեռի բնակչությունը: Յուրաքանչյուր1000 տղամարդու հաշվարկով մարզում ապրում է 810 կին: Սա բնորոշ է տարիքային բոլոր խմբերի համար, բացառությամբ 100-109 տարեկան խմբի, սակայն միաժամանակ խիստ արտահայտված է 20-29 տարեկան խմբի մոտ: Տարիքային այս խմբում յուրաքանչյուր 1000 տղամարդուն հաշվվում է 491 կին: Քաղաքներում այդ թիվը նույնիսկ ավելի է նվազում՝ հասնելով 139-ի: Այս երևույթը խիստ բնորոշ է Հարավային Կովկասի գրեթե բոլոր մարզերի համար: Այն բացատրվում է մի կողմից զինված ուժերի տեղակայմամբ այս տարածքում, մյուս կողմից՝ կանանց համար ստեղծված ծանր կենսապայմաններով:

Կարսի մարզը աչքի էր ընկնում բնակչության խայտաբղետ էթնիկ կազմով: Այստեղ բնակվում էին 20-ից ավելի ազգեր: Մեծ թվով ներկայացված էին հայերը /73406/, ռուսները /27856/, թուրքերը /65854/, քրդերը /42968/, հույ-

---

[1] *Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.», под редакцией Н.А.Тройницкого -ի հիման վրա:*

ները /32593/: Յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով ազգաբնակչությունը բաշխվում էր հետևյալ կերպ.

հայեր 253
ռուսներ 96
թուրքեր 218
քրդեր 148
հույներ 112
այլ ազգեր 173

Ռուսների 2/3-ը բնակվում էր Կարսի շրջանում, 1/7-ը՝ Կաղզվանում, Արդահանում և Օլթիում նույն ձևով տեղաբաշխված էին լեհերը: Հույները համաչափ ներկայացված են բոլոր շրջաններում: Քրդերի մեծ մասը /գրեթե 3/7 բնակվել է Կաղզվանի և /2/7/ Արդահանի շրջաններում: Թուրքերը հիմնականում բնակվել են Արդահանի /426 –ը յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով / և Օլթիի շրջաններում /626-ը յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով/: Կովկասյան թուրքերն ապրում էին բացառապես Կարսի և Արդահանի շրջաններում: Հայերը կազմում էին մարզի բնակչության գերակշռող՝ մասը 73406 մարդ, որից 16616-ը բնակվում էր քաղաքներում, իսկ 56790-ը՝ շրջաններում: Հայերի թիվը համեմատաբար մեծ էր Կարսի /46715/ և Կաղզվանի / 21648 / շրջաններում: Օլթիի և Արդահանի շրջաններում այդ թվերը համապատասխանաբար կազմում էին 3125 և 1918 մարդ:

Բնակչության կազմը բազմազան էր նաև ըստ դավանանքի. 71123 մարդ հայ առաքելական էր, 1844 մարդ հայ կաթոլիկ, 145852-ը՝ մահմեդական և 49295-ը՝ ուղղափառ:

Մարդահամարի նյութերն ամփոփ տվյալներ են հաղորդում նաև բնակչության դասային կազմի վերաբերյալ: Մարզում ներկայացված ամենամեծ սոցիալական խումբը կազմում էին գյուղացիները՝ 24383 մարդ, որից 48030-ը հայ, այնուհետև բավական մեծ թիվ են կազմում քաղքենիները 15871 մարդ, որից 9347-ը հայ, ապա ազնվականները՝ 2866 մարդ, որից 240-ը հայ, հոգևորականները 1332 մարդ, որից 619-ը հայ, համեմատաբար փոքր թիվ են կազմում վաճառականները՝ 241 մարդ, որից 219-ը հայ:

Իբրև ռուսական կայսրության մի երկրամաս՝ Կարսի մարզում ցածր էր գրագիտության մակարդակը: Գրագետ էր բնակչության ընդամենը 10,8% -ը կամ 31339 մարդ, որից 28019-ը արական սեռի ներկայացուցիչ են „3320-ը իգական: Այս թիվը համեմատաբար բարձր է լեհերի / 567 մարդ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով /, հրեաների /563 մարդ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով/, ռուսների /416 մարդ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով/ և հայերի /97 մարդ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով/ մոտ: Ամենափոքր թիվն ըստ գրագիտության կազմում են թուրքերն ու քրդերը՝ 0.6-4%: 73406 հայից գրագետ էր 7142-ը կամ 9,72%-ը, որից 2658-ը տիրապետում էր ռուսերենին, 4347-ը այլ լեզուների: Գրագիտության տոկոսը բարձր է հիմնականում 10-39 տարեկան հասակի մարդկանց մոտ:

Այսպես.

- 10-19 տարեկան - գրագետ է 6120 մարդ
- 20-29 տարեկան - գրագետ է 16420 մարդ
- 30-39 տարեկան - գրագետ է 3457 մարդ

Մյուս տարիքային խմբերում. գրագետների թիվը աստիճանաբար նվազում է: Գրագիտության տոկոսը բարձր է Կարսի /18058 մարդ/ և Կաղզվանի /7041/, իսկ աստիճանաբար նվազում էր Արդահանի /4090/ և Օլթիի /2147/ գավառներում: Գրագիտության տեսակարար կշիռը համեմատաբար բարձր էր քաղաքային բնակչության մոտ, որը կազմում էր 38.8%-ը, իսկ գյուղական բնակչության մոտ՝ 6.6%: 1897թ. մարդահամարը փաստում էր, որ մարզում գրագիտության ամենաբարձր ցուցանիշը ազնվականներինն էր. այս դասի 2866 ներկայացուցիչներից գրագետ էր 1739-ը: Նրանցից 62-ը սովորել էին Ռուսաստանի տարբեր համալսարաններում, 16-ը ստացել էին բարձրագույն տեխնիկական կրթություն, միջին մասնագիտական հաստատություններ էին ավարտել 29 մարդ, իսկ 442-ը սովորել էին միջնակարգ հաստատություններում: Ազնվականներից 307-ը ունեին զինվորական միջնակարգ կրթություն:

Հոգևոր դասի 1332 մարդուց գրագետ էին 551-ը: Նրանցից 6-ը համալսարանական կրթություն ունեին, 28-ը սովորել էին միջնակարգ հաստատություններում:

Որոշակի թիվ էր կազմում պատվավոր քաղաքացիների, վաճառականների, քաղքենիների մեջ եղած գրագետների քանակությունը: Այն հասնում էր 5115-ի, որից համալսարանական կրթություն ուներին 105-ը, միջնակարգ մասնագիտական՝ 13-ը, միջնակարգ հաստատությունների շրջանավարտ էին 92-ը, զինվորական կրթություն էին ստացել 3-ը:Համեմատաբար նվազ էին այս թվերը գյուղացիական դասի մոտ: 243839 մարդուց գրագետ էին ընդամենը 22493-ը կամ 9.2%-ը: Համալսարանական կրթություն էին ստացել 2-ը, միջնակարգ կրթություն՝ 63-ը, զինվորական միջնակարգ ուսումնական հաստատություններում են սովորել 12-ը:

Այսպիսով մարզում համալսարանական կրթություն ունեին ընդամենը 1-75 մարդ կամ մարզի բնակչության 0.06%-ը, միջնակարգ-մասնագիտական կրթություն 51 մարդ կամ 0.01%-ը, միջնակարգ կրթություն էր ստացել 625 մարդ կամ 0.2%-ը:

Մարզում քիչ էին դպրոցները, սակայն ռուսական տիրապետության շրջանում քաղաքներում և խոշոր գյուղերում բացվեցին մի շարք դպրոցներ և ուսումնարաններ, ուր ուսուցումը տարվում էր ռուսերենով, որը երկրամասի տնտեսական և քաղաքական յուրացման համար կարևոր նախապայման էր: Բացի պետական դպրոցներից, մարզում գործում էին նաև մասնավոր և շուրջ 14 եկեղեցա-ծխական դպրոցներ մոտ 985 աշակերտով, ուր ուսուցանում էին գրաճանաչություն և տարրական գիտելիքներ:[1] Դրանք հիմնականում կենտրոնացված էին գյուղական վայրերում:

1883թ. մարզում աշակերտները կազմում էին բնակչության ընդամենը 1.7%-ը: Նոր դպրոցների հիմնումը իր հետ բերում էր աշակերտների թվի ավելացում: Այսպես 1885թ. մարզում կար 65 դպրոց և ուսումնարան՝ 1447 սովորողներով, 1900թ. հաշվվում էր 106 դպրոց՝ 7131 սովորողներով:[2] Աշակերտների թիվն արդեն կազմում էր բնակչության 3%-ը: Այնուամենայնիվ, այս ցուցանիշները ցածր էին թե՛ մարզի բնակչության քանակի առումով, թե՛ Անդրկովկասի մյուս մարզերի համեմատությամբ:

---

[1] *Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 129:*
[2] *Տես նույնը. էջ 128:*

Մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս գաղափար կազմելու նաև բնակչության ընտանեկան դրության վերաբերյալ: Բերված փաստերը վկայում են, որ բոլոր ազգերի ներկայացուցիչներից մարզում ամուրի էին 164445 մարդ, ամուսնացած էին 113788 մարդ, այրի էին 12162-ը, ամուսնալուծված էին 148-ը, իսկ 111 մարդ ընդհանրապես տեղեկություններ չի նշել ամուսնական կարգավիճակի վերաբերյալ: Կարսի մարզը ագրարային ծայրամաս էր, և բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր՝ 243839 մարդ կամ ամբողջ բնակչության 83.9%-ը:Քանի որ այս խմբի մեջ էր մտնում նաև քաղաքային բնակչության այն մասը, որն զբաղվում էր գյուղատնտեսական արտադրությամբ, ուստի մարդահամարի ժամանակ 14405 քաղաքաբնակ հաշվառվել է որպես գյուղացի:

Դեռ 1878թ. մարզում կար 630 գյուղ՝ 12471 տնտեսությամբ, 1881թ. գյուղերի թիվն ավելացավ 81-ով, իսկ 1888թ.է ևս 103-ով, 90-ական թթ. այդ թիվը հասավ 129-ի: 1896թ. մարզի յուրաքանչյուր գյուղին հասնում էր միջին հաշվով 31 ծուխ: 1884-1900թթ. մարզի գյուղացիական ծխերի թիվն աճել է 3817-ով՝ 2-2578-ից հասնելով 26395-ի:[3]

Բնակչության կենսապահովման հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր, որը մեծ մասամբ ներկայացված էր հողագործությամբ և անասնապահությամբ: Դեռ 1879թ. մարտի 1-ին Կովկասյան բանակի և ռազմական օկրուգի գլխավոր հրամանատարության հրամանով Կարսում հիմնված ժամանակավոր հողային հանձնաժողովի կազմում հողօգտագործման և բաշխման 1883թ. նախագծի և 1887թ. վերամշակված նրա տարբերակով բաժնեհողի միավոր ընդունվեց ծխամատյաններում մշտական գրանցում ունեցող շունչը, իսկ հողաբաժնի նորմա սահմանվեց նվազագույնը 1.52 դեսյատին, առավելագույնը՝ 12 դեսյատին:[1] Նորմայի այսպիսի տատանման պատճառները տարբեր էին՝ հողի որակը, ռելիեֆ, բնակչության զբաղմունքը: Ամբողջ հողը համարվում էր պետական սեփականություն /բացառությամբ քրիստոնյա և մահմեդական հոգևոր հաստատություններին պատկանող հողային կալվածքների/ և պետական շինականներին տրվում էր մշտական հողօգտագործման համար՝ արգելելով դրա վաճառքը, գրավադրումն ու նվիրատվությունը:

1897թ. մարդահամարի տվյալներով բնակչության 76.2%-ը զբաղված էր հողագործությամբ: 35499 մարդու համար հողագործությունը ինքնուրույն զբաղմունք էր, դրանով զբաղվում էին նաև գերդաստանների անդամների՝ թվով 186027 մարդ:

Անասնապահությունը ինքնուրույն զբաղմունք էր 3393 մարդու կամ բնակչության 5.9%-ը, նրանց հետ նաև նրանց ընտանիքների 13918 անդամների համար: Անասնապահությամբ, որպես տնտեսության գլխավոր ճյուղի, զբաղվում էին հատկապես Արդահանի /17.5%/, Կաղզվանի /3.9%/ և Օլթիի /3.9/ գավառներում, ուր կային ընդարձակ արոտավայրեր և խոտհարքեր:

Ընդհանուր առմամբ մարզում 38913 մարդ ուներ ինքնուրույն զբաղվածություն գյուղատնտեսքյուն, քոչվոր տնտեսության, ձկնորսության և որսորդության մեջ: Նրանցից 5146-ը միաժամանակ ունեին նաև լրացուցիչ արհեստագործական զբաղմունք: Համեմատաբար փոքր էր արդյունաբերության, արհեստների, պետական ծառայության, ինչպես նաև այլ ոլորտներում ընդ-

---

[3] Տես նույնը, էջ 84:
[1] Նույն տեղում, էջ 52:

գրկվածների թիվը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով տվյալներն այսպիսին էին

Աղյուսակ թիվ 2[2]

զբաղմունք	մարզում	քաղաքն.	շրջան.
արհեստներ	81	368	38
մասնավոր ծառայութ.	27	85	19
արդյունահան.	824	237	911
վերամշակող արդյուն.	28	144	11
առևտուր	22	103	10
տեղափոխություն բեռնատեղափոխում	5	18	3

Կարսի մարզում հաշվվում՝էր 38175 տնտեսություն, որից 4816-ը քաղաքներում, որտեղ ընդգրկված էր 37838 մարդ, իսկ 33359-ը՝ գավառներում, որտեղ ընդգրկված էր 252816 մարդ:Այստեղ առաջատար էր Կարսի գավառը /17256/: Քաղաքների մեջ տնտեսությունների թվով առաջնային էր Կարսը /2676/, ապա Արդահանը /566/, Կաղզվանը /1216/ և Օլթին /358/:Դրանց խմբավորումն ու հաշվառումը կատարվել էր հետևյալ կերպ.

- Բազմանդամ տնտեսություններ՝ ըստ անդամների ազգազգության – թվով 37034-ն են, որից 4234- քաղաքում:
- Մենատնտեսություններ – թվով 721-ն են, որից 353-ը քաղաքներում:
- Տնտեսություններ՝ ըստ ոչ ազգակից անդամների, արտելներ – թվով 230-ն են, որից 116-ը քաղաքում:

Պետական, հասարակական և այլ տիպի տնտեսություններ – թվով 190-ն են, որից 113-ը քաղաքներում: Գերակշռում էին 6-10 անձ ունեցող տնտեսությունները: Դրանք թվով 17225-ն էին: Երկրորդ տեղում էին 11 և ավել անձ ունեցողները, որոնք թվով 5771-ն էին:

Մարդահամարի տվյալները, ցավոք թույլ չեն տալիս ուսումնասիրել հայերի տնտեսությունների թիվը, ինչը, սակայն, չի նվազեցնում այս փաստաթղթի աղբյուրագիտական նշանակությունը, քանզի այն կարևոր տեղեկություններ է պարունակում Ռուսական կայսրության հովանավորության ներքո արևելահայերի սոցիալական կառուցվածքի և զարգացման դինամիկայի վերաբերյալ:

Մարդահամարի նյութերի վերլուծության արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացության.19-րդ դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանը /Կարսի մարզը ներառյալ/ կայսրության անբաժանելի մասն էր և այն աստիճանաբար ներառնվեց սոցիալ – տնտեսական զարգացման համեմատաբար բարձր ոլորտ: Տեղի էր ունենում մարզի տնտեսական յուրացում, բարեկարգվում էին մարզի հաղորդակցման միջոցները՝ բարեկարգվում էր Ալեքսանդրապոլ-Կարս-Սարիղամիշ-էրզրում մայրուղին, կառուցվում Թիֆլիս–Կարս երկաթգծերը: Մարզը դառնում էր ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան: Այդ հանգամանքի օգտին է խոսում այն փաստը, որ Կարսի մարզն ուսումնասիրվել է կայսրության մնացյալ նահանգների հետ միասին, սակայն արդյունքների առաջին վերլուծությունը թողարկվել է դեռևս 1900թ. / մինչդեռ մյուս նահանգների վերլուծությունը հրատարակվել է 1904-1905թթ.: Այնուհետև Կարսի

---

[2] *Կազմված է «Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.»-ի հիման վրա:*

մարզին վերաբերող նյութերը զետեղվել են երկու հատորում, այսինքն դրանց վերլուծությունը որոշ ժամանակ անց հստակեցվել է, ելնելով մարզի կարգավիճակից: Բացի վերոհիշյալից, Կարսի մարզի նյութերում նախապես մշակված աղյուսակների կողքին զետեղված է նաև մարզի քարտեզը և տվյալներին վերաբերող մանրազնին վերլուծություն՝ կատարված Վ.Ի.Գրեբենշչիկովի կողմից: Այս առումով էլ 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերը - մեզ համար ծառայում են կարևոր սկզբնաղբյուր Կարսի մարզի տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի, սոցիալական կառուցվածքի, զարգացման դինամիկայի և կենսական այլ ոլորտների ուսումնասիրության համար:

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԱՄԱՍԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Սեբաստիայի (Ավազի) նահանգը (վիլայեթը) 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ընդարձակ վարչատարածքային միավորներից էր: Այն հիմնականում համապատասխանում էր պատմական Փոքր Հայքի տարածքին: Օսմանյան թուրքերը նահանգի տարածքը բռնազավթել էին դեռևս 15-րդ դարի առաջին քառորդին: Նահանգն իր կենտրոնի՝ Սեբաստիա քաղաքի անունով կրում էր Սեբաստիայի վիլայեթ անունը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այն հյուսիսից սահմանակից էր Կաստամունիի և Տրապիզոնի, արևելքից՝ Էրզրումի և Խարբերդի, հարավից՝ Հալեպի և Ադանայի, արևմուտքից՝ Անգորայի վիլայեթներին:

20-րդ դարի սկզբին Սեբաստիայի վիլայեթի տարածքը կազմում էր 83700քառ.կմ և բաժանված էր 4 գավառի (սանջակի)՝ Սեբաստիա (կենտրոնական գավառ), Շապին-Գարահիսար, Եվդոկիա (Թոխատ) և Ամասիա: Ամասիան գտնվում էր վիլայեթի հյուսիս-արևմտյան մասում: Հյուսիսից սահմանակից էր Տրապիզոնի և Կաստամունիի վիլայեթներին, արևելքից՝ Եվդոկիայի սանջակին, հարավից և արևմուտքից՝ Անգորայի վիլայեթին: Գավառի տարածությունը տվյալ ժամանակաշրջանում կազմում էր 29450 քառ. կմ:[1] Գավառի վարչական կենտրոն Ամասիա քաղաքը (Ամառա, էլմահիե) ընկած էր Պոնտական լեռների ստորոտին, Իրիս գետի ափերին:

20-րդ դարի սկզբին Ամասիայի գավառը տրոհվում էր 7 գավառակների (կազա)՝ Ամասիա, Մարզվան, Սիմ Հաջիգյուղ, Մեջիթ յոզյու (Ավխաթ Հաջիգյուղ), Վեզիր Քյոփրյու, Հավզա և Լատիկ:[2] Դրանից յուրաքանչյուրն ուներ իր գյուղախմբերն (նահիեները) ու գյուղերը:

---

[1] ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 476, ց.1, գ 140, թ.14, գ. 940 թ. 25, 46, գ. 530, թ.12, ֆ. 439, ց.1. գ. 483 թ. 1, ֆ. 193 ց.1. գ. 258 թ. 1. ֆ. 398 ց1. գ.14 թ.104, այսուհետև՝ ՀՀ ՊԿԱ. տես նաև Н.Сокольский " Очерки современной Турции", Тифлис. 1923, էջ 187, «Այիս», 1930, փետրվար, թիվ 4, էջ 7-9:

[2] Սիմոնյան Հ.Հ., Հուշամատյան Պոնտական Ամասիո,Նիկոսիա, 1966, էջ 13:

Այդ ժամանակ Ամասիայի գավառի բնակչությունը բաղկացած էր հայերից, թուրքերից, հույներից, քրդերից: Այստեղ բնակություն էին հաստատել նաև «թաթար», «կզլբաշ», «ալևի», «պեքթաշի», «գյուրջի (իսլամացած վրացի)» և էթնոկրոնական այլ միավորներ:[1]

1878 թ. վիճակով հայերն ունեին 3 եկեղեցի՝ ս. Նիկողայոս, ս. Հակոբ, ս. Աստվածածին, 3 վարժարան՝ 409 աշակերտ և 108 աշակերտուհիներով: Հայերի թիվը հասնում էր 1207 ծխի (5605 մարդ, որից բողոքականներ՝ 88-ը, կաթոլիկներ՝ 8-ը): Հույների թիվը մոտ 625 էր:[2]

Որոշ տվյալների համաձայն 1914 թ. դրությամբ Ամասիա քաղաքի հայ բնակչության թիվը կազմում էր 12000 մարդ:[3]: Ամասիա քաղաքի հույն բնակչությունը 1000 հոգուց պակաս էր, և բոլորն էր թրքախոս էին:[4]

19-րդ դարի թուրք-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում այլ գավառներից և Արևելյան Հայաստանից բավականաչափ հայեր էին եկել Ամասիա: 1895թ. համիդեական ջարդերից հետո ի հաշիվ բազմաթիվ հայ գաղթականների նոր ներհոսքի, Ամասիայի հայ բնակչության թվաքանակն աճեց:

19-րդ դ. վերջին Ամասիայի սանջակն ուներ հետևյալ վարչական պատկերը.[5]

ա) Ամասիայի կազա

Ամասիայի գավառի գավառակներից գլխավորը (կենտրոնականը) համանուն Ամասիան էր՝ բաղկացած 160 գյուղերից և 4 նահիեներից՝ Եզինե բազար կամ Իյնե բազար, Ագ Դաղ Հակկալա և Կելտիկլան կամ Կելտեկելան:[6]

Ագ Դաղի (Սպիտակ լեռ) նահիեն կազմում էր Ամասիայի ողջ արևելյան հատվածը: Այս նահիեի կենտրոնը Աղվիրեն կոչված գյուղն էր: Եզինե բազար կամ Իյնե բազար նահիեն մեծամասամբ բնակեցված էր թուրքմեն գաղթականներով: Հակկալեի նահիեն հայտնի է եղել Կոմա, Արղումա, Սուլու-օվա անուններով:[7] Այս նահիեում, Ամասիայից Աարզվան տանող ճանապարհի վրա էր գտնվում Ղանի կոչված ուխտատեղը:

Կելտեկելան գյուղախմբի կենտրոնը Օրթա Ցյոյ (Միջնագյուղ) կոչված գյուղն էր, որը գտնվում էր Ամասիայի սանջակի արևմտյան կողմում:[8]

Սիմ Հաջիգյուղ կամ Հաջիգյուղ կազան կոչվում էրն նաև Սիմ Հաջիգյուղ (Հաջիքյոյ)՝ (Գյումյուշի): Այն բարեբեր, ջրառատ գավառակ էր: Գտնվում էր Ամասիայի սանջակի հյուսիս-արևմտյան կողմում, տարածվում էր Տավշան կամ Տաշան լեռան հարավում ընկած դաշտի մեջ: 20-րդ դարի սկզբին կազան ուներ 800

---

[1] Նույն տեղում:

[2] Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թ.Ազատյանի ֆոնդ, 12-րդ բաժին, գ. 10520. թ.1. տես նաև Սրվանձտյանց Գ.. Թորոս Աղբար, հ.1, Կ.Պոլիս, 1879, էջ 26:

[3] ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 398, ց.1, գ. 14, թ. 113 և ֆ. 476, ց. 1, գ. 83, թ.16:

[4] Սիմոնյան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 14:

[5] Նույն տեղում. էջ 48-55, տես նաև ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 476, ց.1. գ. 560. թ. 5-7:

[6] Սիմոնյան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 13:

[7] 1356թ.. հետո վերոհիշյալ գյուղերը եկվոր թուրքմենների կողմից բռնագրավվել են տեղաբնիկ քրիստոնյաներից

[8] 11-րդ դարի վերջին այստեղ էին հաստատվել ավշար ցեղերը, սելջուկ-թուրքեր, թուրքմեններ ու էթնիկ այլ միավորներ:

տուն և 60 գյուղ, որոնք բաժանված էին 4 նահիեների՝ Համամ Յուզիվ, Սերայճգ, Կապագոզ, Հաջիգյուղ:[1]

Որոշ տվյալների համաձայն 1913թ. այս կազան ուներ 2500 ծուխ բնակչություն, որից 700-900 տունը՝ հայեր: Վերջիններս զբաղվում էին առևտրով, երկրագործությամբ, արհեստով, կառապանությամբ և այլն:[2]

Հայերի մեջ բացարձակ մեծամասնությունը առաքելականներ էին:[3] 19-րդ դարի կեսին բողոքականները, հաստատվելով Մարզվան, Թոխատ, Խարբերդ, Կեսարիա և այլ քաղաքներում, բացել էին իրենց դպրոցները:[4] 1878թ. Սիմ Հաջիգյուղում ապրում էր 2317 հայ, որոնցից 62-ը բողոքական: 1892թ. ուներ 600 տնից ավել հայ բնակչություն, որոնցից մոտ 20 տունը՝ բողոքականներ: Կային նաև 8 տուն հույներ և զգալի թվով մահմեդականներ՝ թուրքեր ու քրդեր:[5] Սիմ Հաջիգյուղում հայերն ունեին 1 եկեղեցի՝ Ս.Հակոբ, 2 վարժարան, որտեղ սովորում էր 220 աշակերտ:[6]

Սիմ Հաջի գյուղի հարևանությամբ գտնվող Գյումյուշ Սադեն գյուղում 1878թ. կար 1282 հայ բնակիչ, որից 25-ը՝ հայ բողոքականներ:[7]

3-րդ կազան՝ Հավզան, ընդգրկում էր 4 նահիե (Հելիաս, Գամլըք, Կիտիրլու, Սեմերա)՝ 30 հազար բնակչությամբ:

Կազայի կենտրոն Հավզա քաղաքում, մշտական արտահոսքի պատճառով հայերի թիվը նկատելիորեն նվազել էր և 1914թ. կազմել ընդամենը 12 տուն: Այստեղ կային նաև հույներ: Չերքեզ գաղթականներն գաղթել էին 1880թ. Կովկասից:

Ըստ Կ.Ե. Գաբիկյանի, որն անձամբ շրջել էր Սեբաստիայի վիլայեթում, Հավզայի կազայի հայ բնակչության թվաքանակը 1914թ. դրությամբ հասնում էր 70 տան և 320 անձի:[8]

4-րդ կազան Վեզիր Քյուփրյուն (Վեզիրի կամուրջ) էր՝ իր 200 գյուղերով, բաղկացած Ավլադու, Կզլքսե, Գյոլ, Օրթագլար, Գմաղաճ, Սամվալաք, Ղելամ նահիեներից: Գավառակի կենտրոնը Վեզիր Քյուփրյու փոքրիկ քաղաքն էր: Վեզիր Քյուփրյուն (հռոմեական Անդրոնիպոլիսը, հունական Փաղեմոնը, թուրքական Կետե Ղարան) 20-րդ դարի սկզբին 10-12 հազար բնակչությամբ հինավուրց քաղաք էր:

Դեռ 1878թ. Վեզիր Քյուփրյու կազայում հայերի թիվը հասնում էր 1280-ի, որոնցից 125 բողոքական էին, 280-ը՝ բոշա:[9] Հույների թիվը հասնում էր 775-ի:

Հայերը Վեզիր Քյուփրյում ունեին ս. Գևորգ եկեղեցի, 1 վարժարան, որտեղ սովորում էին 50 աշակերտ:[10] 1900թ. «Բյուրակն» լրագրի հաղորդած տվյալներով Վեզիր Քյուփրյու գավառակը բաղկացած էր մոտ 200 գյուղերից: Համանուն

---

[1] *Սիմոնյան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 51-52:*

[2] *Աթեշեան Գ., Սիմ Հաջիգյուղի կրթականը, էջ 90-94, «Նոր Այգ», Մարզվան, 1913, թիվ 3-4:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *"Акты Кавказской Археографической комиссии", Т., 1904, т. 12, с. 534-536.*

[5] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց.1, գ.238, թ. 64, 87:*

[6] *ԳԱԹ, Ազատյան Թորոս, XII բաժ., գ. 10520, թ. 4:*

[7] *Նույն տեղում, թ. 5:*

[8] *Գաբիկեան Կ.Ե., Եղեռնապատում Փոքուն հայոց և Նորին մեծ մայրաքաղաքին Սեբաստիո, Բոստոն, 1924թ., էջ 597:*

[9] *ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 476, ց.1, գ. 560, թ. 48, տե՛ս նաև Գ. Սրվանձտյանց. Թորոս Աղբար, Կ. Պոլիս, հ.1, էջ 24:*

[10] *ԳԱԹ, Ազատ Թորոսյան, XII բաժ, գ. 10520, թ. 5:*

քաղաքի բնակչությանը մեջ հայերը շուրջ 1400 հոգի էին, 1100-ը առաքելական, 300-ը բողոքական: Հույները ընդամենը 40-50 տուն էին:[1] Նույն ժամանակաշրջանին վերաբերող մի այլ աղբյուր վկայում է, որ մեծ եղեռնի նախօրյակին քաղաքն ուներ 500 տուն՝ մոտ 6000 թուրք, հայ, հույն, խառը բնակչություն: Ամբողջ գավառակի բնակչությունը միասին հաշվվում էր 46000 մարդ:[2] Գաբիկյանը Վեզիր Քյուփրյու կազայի հայ բնակչության թիվը նույն ժամանակ ցույց է տալիս 600 տուն՝ 4800 անձ:[3] Կարծում ենք, որ այս տվյալը ավելի մոտ է ճշմարտությանը, քանի որ հեղինակն անձամբ եղել է այս կազայում: Ուստի կարող ենք եզրակացնել, որ 19-րդ դարի վերջին համեմատությամբ հայերի թիվն այստեղ զգալիորեն աճել էր:

Այստեղի բնակիչների մեծ մասը թուրքացած նախկին քրիստոնյաներ էին:

5-րդ կազան Լատիկն (Լադիկ, Լարիք) էր, բաղկացած 4 նահիեներից Համիդ, Ղարա Ապտալ, Աիմեդսերա, Տոնաղլու: Կազայի կենտրոնը Լատիկ գյուղաքաղաքն էր և առաջին համաշխարհային պատերազմից առաջ ուներ 500 տուն հայ և հույն բնակիչ:[4] Նշանավոր գյուղերից էր Տոնաղլուն, որը լիովին հայաբնակ էր: Կազայի բնակչության թիվը հասնում էր 25000-ի:

6-րդ կազայի՝ Մեջիդ յոզյուի կենտրոնը նույնանուն գյուղաքաղաքն էր: Կազան 20-րդ սկզբին ուներ 7 նահիե, 140 գյուղ՝ 50 հազար բնակչությամբ: 1878թ. հայերի թիվը հասնում էր 197-ի, որից 80-ը՝ բողոքական: Ցեղասպանության նախօրեին հայերը կազմում էր 100-200 տուն՝ 1600 մարդ:[5] Հայերը զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և արհեստով: Այս քաղաքի բնակչության թվում էին նաև թաթար և քուրդ գաղթականներ:[6]

7-րդ կազայի՝ Մարզվանի համնուն կենտրոնը գտնվում էր Ամասիա քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք: Մարզվան քաղաքի հայ բնակչության թվաքանակը 1878թ. կազմում էր 6496 մարդ, որոնցից 481-ը՝ բոշա, 481-ը՝ բողոքական ու կաթոլիկ:[7] 1913-1914թթ. այն ուներ 20 թաղ, ուր ապրող 22000 բնակիչներից 12000-ը հայեր էին:[8] Այս կազայի մեջ մտնող տեղաբնիկ քրիստոնյա ժողովրդի մի մասը կոտորվել էր, մի մասը փախուստի էին դիմել, իսկ մի մասն էլ՝ իսլամացել: Ըստ տեղի ազգային գործիչների հաղորդած տվյալների, այդ ժամանակ հայ ազգաբնակչության թվաքանակը հասնում էր 14 000-ի:[9] Ըստ այլ պաշտոնական հայկական աղբյուրի մինչև 1915 թ. Մեծ եղեռնը Մարզվանի կազայի հայ բնակչությունը կազմում էր 2500 տուն և 17500 անձ:[10]

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այս գավառակում կային նաև զուտ հայաբնակ գյուղեր, որոնցից Ենիջեքյոյն ուներ 150 տուն՝ 1250

---

[1] «Բյուրակն», Կ.Պոլիս, 1900թ., 17 հոկտեմբերի, թիվ.38, էջ 580-584:
[2] Սիմոնյան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 54:
[3] Գաբիկեան Կ.Ե., նշվ. աշխ., էջ 597:
[4] Սիմոնյան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 53:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 110, թ. 77: Տե՛ս նաև՝ ՀՀ ՊԿՊԱ ֆ.476, ց.1, գ.830, թ.2: Տե՛ս նաև Կ. Գաբիկյան, նշվ. աշխ., էջ 597:
[6] Սիմոնյան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 54:
[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց.1, գ. 825, թ.3, տե՛ս նաև՝ Գ. Արվանձտյանց, նշվ. աշխ., էջ 24:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 398, ց.1, գ. 14, թ.113, թ. 118, տե՛ս նաև՝ Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 405:
[9] Օրգիկյան Ս. Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 497:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.439, ց.1, գ.483, թ. 10:

բնակիչ, որոնք զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Ամասիայի գավառի հայաշատ բնակավայրերի մեջ արժանահիշատակ է Զիլեն, որը 20-րդ դարի սկզբին ուներ 21000 հայ, թուրք, հույն և գնչու բնակիչ, որից հայերը մոտ 4200 հոգի էին: Նրոնք զբաղվում էին բրդյա, բամբակյա, մետաքսյա կտորեղենի արտադրությամբ ու երկրագործությամբ:

Մի վիճակագրության համաձայն մինչև 1915թ. Ամասիայի սանջակի հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 61580 մարդու:[1] Կարող ենք եզրակացնել, որ այս ժամանակաշրջանում հայերը Ամասիայի գավառում մեծ թիվ էին կազմում: 19 դարի վերջին ու 20–րդ դարի սկզբին հայերը, տարածաշրջանի շատ գավառներում կազմելով մեծամասնություն, ծանրակշիռ դեր ունեին ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Սեբաստիայի նահանգի տնտեսական կյանքում:[2]

Այսպիսով, Ամասիայի սանջակը 20-րդ դարի սկզբին ներկայացնում էր հայաշատ մի գավառ, ուր հայերն ապրում էին իրենց ազգային-մշակութային կյանքով:

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ

ԱՍՈՐԻՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

19-րդ դ. 2-րդ կեսին, հատկապես հայկական հարցի արծարծման և ազատագրական պայքարի վերելքի շրջանում հպատակ ժողովուրդների նկատմամբ Օսմանյան կառավարության ճնշումներն ու հալածանքներն ավելի ուժեղացան:

1876թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը շուտով ձեռնամուխ եղավ հայերի զանգվածային կոտորածների իրականացմանը: Հայերի հետ ջարդերին զոհ գնացին մեծ թվով այլ քրիստոնյաներ՝ այդ թվում ասորիներ:

Հայ և ասորի ժողովուրդների փոխհարաբերությունների մասին ՀՅԴ կուսակցության խոշոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «Հայերի և ասորիների հարաբերություններն այնքան սերտ էին միմյանց հետ, որ կարծես տարբեր դավանանքի և բարբառի պատկանող մեկ ազգ լինեին՝ իրար հասկացող, միմյանց լեզուն և մշակույթն ըմբռնող»[3]:

1891թ. սուլթան Աբդուլ Համիդի հրամանով Արևմտյան Հայաստանում ստեղծված «համիդիե» քրդական հեծելազնդերը շուտով սկսեցին իրականացնել կոտորածներ: Զանազան եղանակներով սուլթանը հպատակ ազգերի միջև թշնամանք էր սերմանում: Նա կարողացավ սեպ խրել հայերի և քրդերի, ասորիների ու քրդերի հարաբերությունների միջև և նրանց դրդել միմյանց դեմ:

---

[1] *ՀՀ ՊԿԱ, ֆ. 476, ց.1, գ. 144, թ.18:*

[2] *«Արարատ», Վաղարշապատ, 1914, սեպտեմբեր. էջ 813-814:*

[3] *Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները. հ. Բ. Պեյրութ. 1983, էջ 18:*

Թուրքական դաժան վարչակարգի դեմ ազատագրական պայքար է ծավալվում Վանի վիլայեթի հարավային մասում՝ Ջուլամերկում և Իրանի սահմանի մոտ բնակվող ասորիների շրջանում:

19-րդ դ. 2-րդ կեսին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության վիճակը գնալով վատթարանում էր: Դեռ 1854-1855 թթ. ռուս գեներալ Մ. Լիխուտինը, այցելելով Արևմտյան Հայաստան, գրում էր. «Հայերի, ինչպես Թուրքիայի մյուս բոլոր քրիստոնյաների վիճակը շատ ողբերգական է, և նրանք մշտապես գտնվում են անհանգիստ վիճակում»[1]: Արևմտյան Հայաստանում ապրող ասորիները ևս իրենց մասնակցությունն էին բերում հակաթուրքական ազատագրական պայքարին, ստեղծում ֆիդայական-զինական խմբեր: Վանի վիլայեթի Հաքյարիի սանջակի Ջելու նահիեի ասորական զինվորական խորհրդի ղեկավար գնդապետ Նեմվրոդ բեկն հայտնում էր, որ իշխանությունների բռնություններին ընդդիմանալու համար, ապստամբության կամ պատերազմի ժամանակ նա կարող է հակառակորդի դեմ հանել չորս գնդից բաղկացած 160 հազարանոց լավ կազմակերպված զորք, որը 1880-ական թթ. վերջին շատ ավելի լավ էր զինված, քան 1840-ական կամ 1860-ական թվականներին: Բ. Դուռը նրանց հրացաններ էր բաժանել, քուրդ հրոսակներին դիմադրելու համար, իսկ վառոդն ու գնդակը ասորիներն իրենք էին պատրաստում: Զորքի կազմում կային բազմաթիվ ասորի սպաներ, որոնք զինվորական կրթություն էին ստացել Ռուսաստանում: «Ոչ ոք չէր զարմանում ասորիների զորքի քանակի վրա, որովհետև վտանգի ժամանակ նրանք բոլորը մի մարդու նման ոտքի էին կանգնում»[2]:

1889թ. «Արձագանք»-ը, ասորիներին անվանելով «Ասիայի չեռնոգորցիներ», գրում էր. «Նրանք խիստ մեծահոգի են և, որպես պատերազմիկ ցեղ, պաշտպան են կանգնած հալածված քրիստոնյաներին և մինչև իսկ մահմեդականներին. այսպես, 1880թ. նրանք, կարելի է ասել, փրկեցին Պարսկաստանը վերջնական ջնջումից՝ Շահի խնդրանքով մի քանի հազար հրաձիգ զորք հանելով և կոտորելով լեռների բոլոր քրդերին, դրանով իսկ վերադարձնելով պարսիկներին այն մեծ հարստությունը, որ քրդերը խլել էին նրանցից: Այս բանի համար Շահը խիստ շնորհապարտ մնաց նրանցից և »Առյուծի« շքանշան շնորհեց ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունին»[3].

Թուրքական իշխանությունների և քրդական վերնախավի դեմ ասորիների աչքի ընկնող ելույթներից էր 1888թ. օգոստոս-սեպտեմբերին բռնկված ապստամբությունը: Ապստամբների դեմ ուղարկվեցին թուրքական զինված ուժեր: Ցավոք, թուրքական կառավարության հարուցած արգելքների պատճառով, ժամանակի մամուլը չէր կարողացել արտացոլել այդ իրադարձությունները[4]: Ուստի այդ մասին մանրամասներ չեն պահպանվել:

---

[1] *Геноцид армян в Османской империи. сбр. документов и материалов под ред. проф. М.Г.Нерсисяна. Ер.,1966, с. 5.*

[2] *Արձագանք, N 24, 1889 25 հունիսի, էջ 358:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը. Արևմտահայերի սոցիալական-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ. Եր., 2001. էջ 179:*

Դիարբեքիրի նախկին հյուպատոս Դ. Թեյլորն իր գրքում նշում էր. «Քրդստանում (դա մի հսկա տարածք էր, որն ընդգրկում էր ռուս-թուրքական սահմանից մինչև Միջագետքի հյուսիսային շրջանները) հողագործ և արհեստավոր բնակչությունը տեղի հայերն ու նեստորական ասորիներն են, որոնք շատ հաճախ տուժում են տեղական իշխանությունների, այսինքն քուրդ բեյերի հալածանքներից և նման են ստրուկների: Նրանց կոչում են «զիր-հուրլի», այսինքն՝ գնված ոսկով: Դա իրոք այդպես էր, որովհետև նրանք քրդերի առուծախի առարկան էին: Իսկ տեղի քուրդ բեյերը իրենց տարածքում անկախ էին և չէին ենթարկվում թուրքական իշխանություններին»[1]: Ասորիները բնակվում էին Օսմանյան տերության արևելյան շրջանում Իրանի սահմանակցությամբ[7]:

1890թ. հունիսի 10-ին Էրզրումում ռուսական հյուպատոս Ա. Դեննետը հեռագրեց Կ.Պոլսի ռուսական դեսպան Ա.Նելիդովին առ այն, որ «քրիստոնյա բնակչության վիճակը ծայրահեղ բարդ է, և որ ամեն րոպե մի չնչին առիթից կարող է տեղի ունենալ մահմեդական ֆանատիզմի պայթյուն»[2]:

1894թ. Սասունի ջարդերով սկսվեցին հայերի և առհասարակ քրիստոնյաների կոտորածներն Օսմանյան կայսրությունում: Ասորիների զանգվածային ջարդերը սկիզբ առան 1895թ. հոկտեմբերից Դիարբեքիրում, ապա տարածվեցին ամենուր. Մալաթիայում, Ուրֆայում, Սեբաստիայում, Բիթլիսում, Բիրեջիկում, Սևերեքում, Հասան-Քեյֆում և այլուր: Ասորական 245 գյուղերի շուրջ 100 հազ. ասորի բնակիչներ մահմեդականացվեցին, բազմահազար կանայք ու աղջիկներ քշվեցին թուրքական հարեմներ[3]:

1895թ. հոկտեմբերի 20-ին Դիարբեքիր քաղաքում թուրք ու քուրդ խուժանի իրականացրած կոտորածների արդյունքում զոհ գնացին բազմաթիվ հայեր և ասորիներ: Ասորական Սրբ. Աստվածամոր հնադարյան եկեղեցում պատսպարվեցին հազարի չափ քրիստոնյաներ՝ հայեր, ասորիներ, հույներ: Բարեբախտաբար նշված եկեղեցին զերծ մնաց հարձակումներից, ինչը չի կարելի ասել ասորական գյուղերի մասին, որոնց մեծ մասը ավերվեցին և թալանվեցին քրդերի կողմից:

Այս դժվարին օրերին մի քանի ասորիներ դիմում են իրենց հոգևոր առաջնորդին՝ առաջարկելով հայերի հանել Սրբ. Աստվածամոր եկեղեցուց՝ թուրքերի դժգոհությունը չհարուցելու համար: Ի պատասխան դրա հոգևոր հովիվը հայտնում է իր ժողովրդին. «Այն մարդիկ, որոնք խաչակնքում են, մինչև վերջ պետք է մնան եկեղեցում: Եթե սպանվելու ենք, ապա՝ միասին»[4]: Դիարբեքիրի սանջակի 119 գյուղ հրդեհվեցին և ավերվեցին: 6 հազ. քրիստոնյա ընտանիք՝ շուրջ 30 հազ. մարդ սրի քաշվեց[5]:

---

[1] *Тейлор D.,Путешествие по Курдистану, Изв. Кавк. отд. русского императ. геогр. общества, т. II, прилож. I,Тифлй, 1873, с. 76-77.*

[7] *Колюбакин А.М, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции.т.1, ч.1 Тифл., 1888, с. 165.*

[2] *Геноцид армян в Османской империи, с. 13.*

[3] *Атра, С.-П., N 4, 1992, с.71.*

[4] *Սկունդ Տ., Սմիտայի արձագանքները, Նյու-Յորք, 1950, էջ 234:*

[5] *Геноцид армян в Османской империи, с.120:*

1895թ. հոկտեմբերին Ուրֆա մտած 3 հազարանոց թուրքական բանակը և 1,5 հազարանոց համիդիեականների զորքը սրի քաշեց 10 հազ. հայերի[1] և 13 հազ. ասորիների[2]:

1895-1896թթ. կոտորածների ժամանակ Հաքյարիի սանջակի Դերե, Յելյա, Պակե գյուղերը, ուր ապրում էին 200 տուն նեստորականներ, հավասարվեցին հողին[3]:

Հակաթուրքական ելույթ տեղի ունեցավ նաև 1896թ. աշնանը Վանի սանջակի ասորիների շրջանում, որոնք իշխանություններին բողոք ներկայացրեցին՝ իրենց անձի և գույքի անապահովության առնչությամբ: Իշխանություններն անպատասխան թողեցին նրանց բողոքը:

1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած կոտորածների հետևանքով զոհ գնացին 300 հազ. հայեր և 55 հազ. ասորիներ[4]: Երկիրը կրկին «խաղաղվեց», բայց դա ժամանակավոր դադար էր, քանզի կոտորածների հրեշավոր ծրագիրը մնում էր օրակարգում:

Այս դժվարին օրերին ծնվում է հայ-ասորական զինակցություն ստեղծելու գաղափարը:

1894 և 1896թթ. ՀՅԴ կուսակցության ղեկավարները պատգամավորներ էին ուղարկել Ուրմիա Մար-Շիմունի մոտ՝ համագործակցելու նպատակով: Վ. Փափազյանը գրում էր, որ «մեր ընկերները Ուրմիոյ և շրջակա գյուղերու ասորիների մտավորական և ղեկավար տարրերու հետ մոտ և սրտագին հարաբերություններ մշակած էին»[5]: Դաշնակցականները լավ հարաբերությունների մեջ էին նաև Վերին Հայոց Ձորի ասորական գյուղերի հետ, ուր ստեղծել էին իրենց կոմիտեներն ու ենթակոմիտեները: Այս գյուղերի ասորի բնակիչներից ոմանք նույնիսկ մտան հայդուկների շարքերը և դարձան նրանց անդավաճան և հավատարիմ ընկերները: Ցավոք, համագործակցության այս փորձերը ցանկալի արդյունք չտվեցին, որովհետև ստեծված սուլթանական բռնատիրության պայմանները ավելի նպաստավոր էին ազգերի տարանջատման և առճակատման համար:

---

[1] *Նույն տեղում, էջ 129-130:*

[2] *Asun-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, Bethnahrin yurtsever devnmci orgutu Asun-Suryani halkina yonelik 1915, Soykirimi ve katliamlari arastirma komisyonu, Frankfurt, 1998, s. 55, տես նաև Halo T., Not even my name, New-York, 2000, p. 285.*

[3] *Моевскии В., Ванский вилайет, Военно-статистическое описание, Тифл., 1901, с. 339.*

[4] *Naayem J., Shall this nation die, New-York, 1921, p. 274.*

[5] *Փափազյան Վ., Իմ հուշերը, h.Ա, Պոսթըն, 1950, էջ 294:*

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայկական ավանդական կուսակցություններից հնչակյաններն առաջինն էին, որ տեսնելով բանվորական շարժման օրավուր աճը, այն դիտեցին, որպես մի նոր ու կարևոր ուժ: Մյուս կողմից ուժեղ էր մտավախությունը նոր գաղափարախոսության հանդեպ, այն պատճառով, որ վերջինս կարող էր բացասական դեր կատարեր հայ իրականության մեջ, քանզի կոչ էր անում մղել դասակարգային պայքար:

Ռ. Խանազատի «Նոր գործունեություն» հոդվածում կարդում ենք. «Մեր դատը ռուսական տերության կողմից նկատված է իբրև Ռուսաստանի ներքին դատ:Այս հանգամանքը ավելի կշիռ է ստանում և նրանից, որ ռուսական պետության հպատակ են այսօր երկու միլիոն հայ, որոնց աշխարհագրական դիրքը շարունակությունն է Թուրքայ Հայաստանի:

Եվ այսպես հայտնվում է, որ թուրքահայ դատի լուծումը այլև ուղղակի կերպով կապված է այսօր քամ առաջ ռուսական քաղաքականությունից: Այո, մենք գտնում ենք մի նոր գործունեության առաջ: Մենք չենք ուզում հեղափոխական գործունեությունը մանավանդ երկար տատանումից հետո դատապարտել կատարյալ մահվան... թող չկրենք երկյուղ այս նոր ընդարձակ ասպարեզից, որ բացվում են գործի առաջ ներկայումս, ընդլայնում են հասարակական պարտականությունների սահմանը, բերելով մեև առջև նոր գործունեություն, իր վսեմ պահանջներով ու բեղմնավոր արդյունքներով»[1].

1903-1905թթ. հիմնված «Վերածնունդ» և «Ապագա» պարբերականները դրական դեր են կատարում հնչակյան կուսակցության և ՌՍԴԲԿ մեծեցման գործընթացում:

Փոփոխական եղավ Հ. Յ. դաշնակցության վերաբերմունքը հեղափոխական շարժման նկատմամբ, մասնավորապես սոցիալիզմի տեսության: 1904 թվականին կայացած Հ.Յ. Դաշնակցության ընդհանուր ժողովը քննության առնելով Այսրկովկասի քաղաքական իրավիճակը կայացնում է հետևյալ որոշումը. «Ներկայիս դաշնակցությունը իր վրա առնելով ներկայիս կովկասահայ տարրի ինքնապաշտպանության գործը, որոշեց հանձնել այդ Կովկասի Պատասխանատու մարմնին, որին և կովկասյան գավառական կոմիտեներին «կհանձնարարեն ի հարկի օգնել համերաշխություն հաստատելու Կովկասի մեջ կռիվ մղող ուրիշ կազմակերպությունների հետ»[2]:

Չնայած կուսակցական գործիչների ու մոտեցումների տարբերություններին, աստիճանաբար քաղաքական ասպարեզ եկան նոր գաղափարների ու սկզբունքների հետևորդներ, ինչպես բանվորության շրջանում, այնպես էլ մտավորականության շարքերում: Նրանց առաջին համաստեղության մեջ մտան Գևորգ Ղարաջյանը /Ս. Տ. Արկոմեդ/, Արշակ Զուրաբյանը /Բոգդան Կնունյանցը/, Միքայել

---

[1] *«Հնչակ», 1903թ., մայիս-հունիս:*

[2] *Ս. Յովհաննիսյան, «Դաշնակցությունը և նրա հակառակորդները», Թիֆլիս. 1907թ., էջ 168:*

Բագրատյանը, Ստեփան Շահումյանը, Արամայիս Երզնկյանը, Գարեգին Կոզիկյանը /Եսալ ես/, Մելիք Մելիքյանը: 1903թ. մարքսիզմի կողմն անցան Հովհաննես Բեկնազար-Յուզբաշյանը, Ղազար Տեր-Ղազարյանը, Սարգիս Տեր-Գասպարյանը /Ս. Կասյան/, Բախշի Իշխանյանը և քաղաքական այլ ուժեր: Այսպիսով, հայ իրականության մեջ ևս ձևավորվեց մարքսիզմի հետևորդների, առաջին կրողների անդրանիկ խումբը: Առաջին հայ մարքսիստները հիմնականում մնացին ՌՍԴԲԿ-կազմի մեջ, սակայն հանդես եկավ քաղաքական գործիչների մի նոր խմբակցություն, որի անդամները նախկին հայ քաղաքական կուսակցությունների և հիմնականում ՀՅ Դաշնակցության կուսակցության նախկին անդամներն էին, վերջիններս նորովի էին տեսնում պատմական պատկանելիությունը ՌՍԴԲԿ-ը ամբողջապես, թե որոշակի սկզբունքային հարցերում՝ նկատի ունենալով հայ միջավայրի յուրօրինակությունը, սպեցիֆիկությունը: Եվ այսպես, Գևորգ Ղարաջյանի, Պողոս Փիլոսյանի, Գարեգին Կոզիկյանի, Տ. Իսախանյանի, Բախշի Իշխանյանի, Ալ. Ծատուրյանի /Ալ. Ռուբենի/, Դավիթ Տեր-Դանիելյանի /Դ. Անանունի/, Միքայել Բաղդասարյանի ջանքերով հայ իրականության մեջ հիմք դրվեց Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը: Պատմագիտական գրականության մեջ կազմակերպության ստեղծման վայրը հաճախ նշվել է Ժնևը, սակայն իրականում, հիմնավայրը հանդիսանում է Բաքուն, դա ժամանակին արվել է ապահովության և ցարական ոստիկանության հալածանքներից խուսափելու նպատակով: Սկսած 1904 թվականից կազմակերպության գործունեությունը և նրա օրգան «Սոցիալիստ»-ի հրատարակությունը տեղափոխվում է Ժնև:

1903թ. կազմակերպության հիմնադիրները հրատարակում են նորաստեղծ միության Մանիֆեստը, ուր ասվում էր, որ ստեղծված կազմակերպության հիմնական նպատակը՝ հայ-պրոլետարիատի կազմակերպումն ու դաստիարակումն է, նրա մղած կռվի ղեկավարումը: Բնականաբար, սոցիալ-դեմկրատական բանվորական հայ կազմակերպության հանդես գալը միանշանակ չէր կարող ընկալվել արդեն առկա քաղաքական ուժերի կողմից: Ինչպես արդեն նշվել է, նորաստեղծ կազմակերպության հիմնադիրները, հիմնականում իրենց քաղաքական կուսակցությունների վարած գործունեությունից դժգոհ գործիչներ էին, որ նորաստեղծ կազմակերպության մեջ ձգտում էին կենսագործել իրենց այն նպատակներն ու ձգտումները, որոնք անավարտ էին մնացել նախկինում: Չհասնելով կազմակերպվել ու ամրանալ, նրանք ստիպված էին տրոհվել ու թուլանալ, դառնալ անկազմակերպ: Լավ գիտակցելով տեղի ունեցող պառակտման վտանգավորությունը, նորաստեղծ կազմակերպությունն իր առջև դնում էր նպատակ և իր պարտքն էր համարում «խլել գոնե փոքրիկ մի գունդ հայ բանվորությունից, որը զգալով իր դասակարգային շահագործումը կդառնար առաջապահ մարտիկը իր դասակարգի»: Կազմակերպության Մանիֆեստի այս դրույթը հետագայում դարձավ մի ինքնատիպ մեղադրական, թե իբր «սպեցիֆիկները» ցանկանում էին մարքսիզմի անվան տակ հայ բանվորներին կազմակերպել նեղ ազգայնական սկզբունքով, մեկուսացնել նրանց Հայաստանի և Անդրկովկասի պրոլետարական մասսաների հետ համատեղ պայքար մղելուց, հեռու պահել նրանց հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ինտերնացիոնալիզմի քաղաքականությունից[1]:

---

[1] *Հ. Գ. Վարդանյան, Հայ-բուրժուա-ազգայնական կուսակցությունների դիրքորոշումը, Եր., 1975թ., էջ 61:*

Չևավորման փուլում նորաստեղծ կուսակցությունը մտադիր էր զբաղվել հիմնականում գաղափարական, տեսական հարցերով, քանզի բանվոր դասակարգ հասկացությունը գործնականում գոյության իրավունք նվաճել էր, բայց դեռևս տեսական հիմնավորում չէր ստացել հայ իրականության մեջ: Նա ապրում էր սաղմնային հասունացման շրջան: Գործը բարդանում էր նրանով, որ հայ բանվորության ճնշող մեծամասնությունը, հանգամանքների բերումով, կենտրոնացած էր ոչ թե բուն Հայաստանում, այլ Անդրկովկասի խոշոր արդյունաբերական կենտրոններում, ապրելով ու ճնշվել;ով այլ ազգի բանվորների հետ:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության առջև ծառացած խնդիրներն ու նպատակները իրենց արտացոլումը գտան կազմակերպության ծրագրի և կանոնադրության մեջ: Այս փաստաթղթում նշվում էին նոր կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները, նրա ստրատեգիան ու տակտիկան: Ասվածի վկայությունն է կազմակերպության «Ծրագրի» ներածական բաժինը[1], ուր փաստվում է. «Ընդունելով գիտական սոցիալիզմը այնպես, ինչպես եվրոպական ժողովուրդների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները/ գերմանական բանվորական կուսակցություն/ .- մենք ծրագրի մեջ կդնեինք այն կետերը, որոնք ուղեցույց լինեին, մանավանդ ներկայումս, հայ պրոլետարիատի համար»: Կազմակերպել հայ բանվորներին Կովկասում, ճանաչել նրանց կարիքները, տալ նրանց ձեռքը այդ կարիքներին համապատասխան պահանջներ և ցույց տալ այն ուղին, որ հայ պրոլետարիատը պիտի անցնի, որպեսզի կարողանա իրագործել իր այդ պահանջները.- այն է սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության դերը և անելիքները»[2]:

Կազմակերպության ծրագրը և ՌՍԴԲԿ ծրագիրը համահունչ էին իրենց ոգով և նպատակներով: Երկու ծրագրերում էլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին էր վերապահվում բավորության կազմակերպման ու դաստիարակման դերը: Հետագայում դրսևորվեցին տարբերություններ և հակադրություններ ազգային և հողային հարցերում:

Իրենց գաղափարները բանվորական լայն խավերին հասցնելու նպատակով կազմակերպությունը հիմնեց իր սեփական մամուլը ի դեմս «Սոցիալիստ»-ի, որը լույս տեսավ Բաքվում 1903 թվականին, հետագա տարիներին նրա հրատարակչությունը տեղափոխվեց ժնև: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին, ժողովրդական լայն զանգվածները հայ իրականության մեջ դասակարգային շահերի ու պայքարի անհրաժեշտության բավարար գիտակցություն չունեին, ուստի սպեցիֆիկների հարկավոր էր ուղղություն տվող, կողմնորոշող ուժ: Այս գործում մեծ դեր էին տանում մարքսիստական ուղղվածության «Կյանք», «Գործ» շաբաթաթերթերի հրատարակումը Թիֆլիսում: Մասսաների հետ կապը չկտրվեց նաև հեղափոխության պարտությունից հետո: Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին կազմակերպությունը լույս ընծայեց«Նոր կյանք» երկշաբաթաթերթը:

Այս իրավիճակում կենսական անհրաժեշտություն էր դառնում զանգվածների մեջ տարվող բացատրական աշխատանքն այն ուղղությամբ, որ սոցիալ-դեմոկրատիայի ուսմունքը, երբեք չի ոտնահարում ազգային ազատագրության իդեալները և ձգտումները, այլ ընդհակառակը, դրանց իրականացման համար մղում է ավելի կազմակերպված ու հետևողական պայքար: Բանվորական հայ

---

[1] *Տես «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը», ՀՀ ՀԲԿՓԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 44, թ. 1-12:*

[2] *Նույն տեղում, էջ 1:*

կազմակերպությունը հեղափոխության նախօրյակից սկսած իր առջև խնդիր էր դրել հայ բանվորությանը քաղաքականապես և գաղափարապես հասունացնելու և համառուսական հեղափոխական շարժմանը մասնակից դարձնելը: Այս նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհը՝ այն պարզ ճշմարտության ըմբռնումն էր և ընդունումը, որ թուրքական սուլթանիզմից բացի քանի կանգուն է ռուսական ցարիզմը, չի կարող իրականանալ հայերի ազատագրության և անկախության վերականգնման բաղձալի հույսը:

«Դարասկզբին բոլոր հասարակական և քաղաքական կազմակերպությունների գործնական փորձաքարը հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը», գրում էր ժամանակի անվանի հասարակական-քաղաքական գործիչներից մեկը՝ Դավիթ Անանունը[1]:

Գտնված էր շահերի համամասնության բանալին, ԱԴԲԿ-ը այս տեսանկյունից էլ կանխատեսում էր իր հետագա գործունեությունը: .- « Հայ բանվոր դասակարգը ենթակա լինելով միապետությանը, ինչպես պրոլետարիատը ամողջ Ռուսաստանում, պիտի ամենայն եռանդով գործակցի հեղափոխությանը»[2]:

Առաջին ռուսական հեղափոխությունը ոչ միայն խթան դարձավ ցարիզմի լծի տակ հեծծող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի խորացման և իմաստավորման համար, այլև ստիպեց միապետությանը հրաժարվելու իր երբեմնի անսահմանափակ իշխանության ընձեռած հնարավորություններից: Ինքնակալական մեխանիզմը առաջին անգամ զգաց կործանման ռեալ վտանգը: հետևանքը դարձավ խուսանավումների և զիջումների խորամանկ քաղաքականություն: Շուտով ալեկոծ կայսրությունը ստանում է Ս. Վիտտեի հոկտեմբերի 17-ի «Մանիֆեստը»-ը որը հեղինակի իսկ կարծիքով, տվյալ իրադրության մեջ ինքնակալության պահպանման միակ միջոցը կարող էր դառնալ: Այս փաստաթղթի լույս աշխարհ գալու իրական և բուն պատճառը՝ տատանվող միապետական կարգերի գոյությունն ու հոգևարքը երկարացնելն էր: Նրանում, ժողովրդին շնորհված «արտոնությունների» մեծ մասը այդպես էլ մնաց թղթի վրա: Սոցիալ-դեմոկրատական բոլոր կազմակերպությունները և հայկականը նույնպես, ճիշտ գնահատելով պահի քաղաքական կարևորությունը տվեց «Մանիֆեստի»-ի իրական գնահատականը.- «Ռուս բանվորների հարձակումը աշխարհ բերեց հոկտեմբերի 17-ի «Մանիֆեստը»-ը: Ցարը հարկադրված էր տալ այդ «պոչվոր սահմանադրությունը», բայց մենք պետք է իմանանք, որ չկա ժողովրդավարության մի դասկարգ, որ իրավունք ունենա պահանջելու սահմանադրության խոստումների կատարումը, որը կարող է մնալ, որպես մեռյալ տառ, չնայած կան շատ ուժեր, բայց կա մեկը, որ պատրաստ է իր ձեռքը ամեն ժամանակ վերցնել իշխանությունը, դա բանվորական խավն է, որի մասնակցությունը ստեղծեց հոկտեմբերի 17-ը: Համառուսական պրոլետարիատը ըստ ամենայնի վերջ կտա բյուրոկրատական, ինքնակալական ռեժիմի գոյությանը և այսպիսով կապահովի բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը»[3]:

Հայ բանվորական կազմակերպության անդամներն ընդօրինակելով մենշևիկներին պաշտպանում էին բուրժուազիայի հեգեմոնիայի գաղափարը, քանզի համոզված էին, որ պրոլետարիատի հեգեմոն դերը կխեռացնի բուրժուա-

---

[1] *Տես Անանուն, «Ռուսահայերի հասարակականզարգացումը», հ. 3, էջ 99-100:*

[2] *Տես «Սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության «Ծրագրի» նախագիծ», ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, ց. 7, գ. 44, թ.7:*

[3] *Նույն տեղում, էջ 12:*

գիային հեղափոխությունից, որը բնականաբար շատ կթուլացներ հեղափոխության թափը:Կազմակերպության անդամները գտնում էին, որ պրոլետարիատի համար, հեղափոխության վերելքի շրջանում, ռեալ և գործուն դաշնակից կարող է դառնալ կադետական բուրժուազիան: Ի տարբերություն ՌՍԴԲԿ-ի հայ կազմակերպությունը գյուղացիությանը չէր համարում այնքան հեղափոխական, որ նրան դարասկզբի հեղափոխության մեջ վստահեր պրոլետարիատի դաշնակիցը լինել: Կազմակերպության օրգան «Ձայն»-ում այս մոտեցումը պարզաբանվում էր հետևյալ կերպ. «Լենինըգրում է միշտ ընդդեմ բուրժուազիայի և կարծում է, որ դրանով կարող է գյուղացիությանը բերել պրոլետարիատի հեղափոխական գիտակցությանը, բայց ինչու է Լենինը ցանկանում տանել հեղափոխությունը մինչև ընդդեմ քաղաքային բուրժուազիայի, միթե գյուղացիությունը բուրժու չէ»[1]:

Կազմակերպությունը ՌՍԴԲԿ-ի հետ համամիտ չէր նաև այն հարցում, ըստ որի բուրժուազիայի հեռացումն ու մեկուսացումը հիմնական նախապայման կստեղծեր հանպատրաստից սոցիալիստական հեղփառխությանը անցնելու համար: Ցավոք սրտի, նրանք չէին ուզում ընդունել, որ բացի բուրժուազիայի առկայությունից. «խուչընդոտող դերից», կային ուրիշ շատ արգելքներ սոցիալիստական հեղափոխությանը անմիջապես անցնելու ճանապարհին: Դրանիցի ամենակարևորը կայանում էր Ռուսաստանի տնտեսական զարգացման հետամնացության, ֆեոդալիզմի և կապիտալիստական արտադրության յուրօրինակ միահյուսվածքի առկայությունն էր: Ինչպես կարծում էին նրանք, հասարակական և տնտեսական զարգացման այս մակարդակը չէր կարող պատվար դառնալ Ռուսաստանին նոր հասարակարգ մուտք գործելու համար: Հայ կազմակերպության անդամները գտնում էին, որ պատմությունը պիտի զարգանա իր բնականոն ընթացքով՝ նախորդած փուլի տնտեսական ու քաղաքական բավարար հիմքի վրա: Հեղափոխության վերելքի շրջանում, կազմակերպության անդամները համամիտ չէին բոլշևիկյան տակտիկայի հետ, քանզի վերջիններս հեղափոխության հաղթանակը կապում էին զինված ապստամբության հետ: Կազմակերպության «Ձայն» օրգանը այս կապակցությամբ գրում էր. «Լենինին թվում է, թե ռուսական հեղափոխությունը հաղթանակող կլինի այն ժամանակ, երբ նա կսկսվի զինված ապստամբությամբ: Նրան թվում էր, որ մնացած բոլոր ճանապարհները հեղափոական չեն, և եթե հեղափոխությունը ընթանա, կանգ առնելով ներկայացուցչական հիմնարկների վրա դա արդեն կնշանակի հեղափոխության պարտությունը»[2]:

Սա բնավ էլ չէր նշանակում, որ սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը չէր ընդունում հեղափոխական ուղին, և կոչ էր անում պայքարել միայն ռեֆորմների համար, այն էլ կադետական բուրժուազիայի ղեկավարության, /այս «մեղադրանքի» համար կազմակերպությունը հետագայում բազմիցս ենթարկվել է անարդարացի քննադատության/, այլ նրանք գտնում էին, որ այդօրինակ մեծ հեղափոխության տակտիկան ու ստրատեգիան պետք է լինեն ճկուն, բազմաբնույթ, նրանք պետք է ճիշտ տեղաբաշխել քաղաքական ուժերը ու ռեալ գնահատել նրանց հնարավորությունները կոնկրետ պատմական պահին, մեծ պայքարի ճանապարհին անհրաժեշտության դեպքում չխուսափել նույնիսկ հակառակորդի կողմից կատարված զիջումներից, որոնք վերջնարդյունքում կարող են ծառայեցնել հեղափոխության շահերին: Դրա ապացույցները տվեց հեղափոխության զարգացման ընթացքը: Երբ ցարիզմը տեսավ, որ «Մանիֆեստ»-ը

---

[1] *«Ձայն», N3, 1907:*
[2] *«Ձայն», N.3, 1907թ.:*

չկարողացավ արմատական բեկում մտցնել հեղափոխության ընթացքի մեջ և կործանման վտանգը մնում էր, նա գնաց մի նոր խոշոր զիջման՝ ի դեմս Պետական Դումայի, որպես օրենսդրական, խորհրդակցական, ներկայացուցչական հիմնարկի: Սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպությունը ճիշտ կողմնորոշվեց այս նոր երևույթի նկատմամբ: Կազմակերպության կենտրոնական կոմիտեն իր «Պետական Դումա» շրջաբերականում, ուղղված բանվորներին, գրում էր. «Հեղափոխական պրոլետարիատի վճռական հարվածների տակ, ցարիզմը կորվնելով բոլոր իրավունքները հետագա գոյատևման համար, զրկվելով ներքին և արտաքին հիմքերից, քայքայվելով բարոյապես և ֆինանսապես, որպեսզի երկարաձգի իր գոյությունը, որի վախճանն անխուսափելի էր, հաղթանակած պրոլետարիատի ամրանաուց հետո որոշեց Պետական Դումայի տեսքով ինքնատիպ «նվեր» մատուցել:

1906թ. հրավիրվում է Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների չորրորդ համագումարը, ուր պետք է միասնական տակտիկական գիծ մշակվեր Դումայի նկատմամբ: Հայ կազմակերպությունը ուշ է ստանում հրավիրագիրը, սակայն խորհրդաժողովի ավարտից հետո ծանոթանալով նրա ընդունած որոշումներին, հավանություն է տալիս նրանց և խնդրում է զետեղել իրենց ստորագրությունը այդ ծանուցման տակ[1]:

Սակայն քաղաքական իրադրության հետագա ընթացքը ստիպեց հեղափոխական ուժերին այլ տեսանկյունից քննության առնել ստեծված իրավիճակը: Հայ կազմակերությունը բազմիցս անդրադառնալով Դումայի խնդրին, եկավ այն ճիշտ եզրակացության, որ մեխանիկական մերժումով կամ բոյկոտով չի կարելի հարված տալ ցարիզմի քաղաքկանությանը, և եթե մասնակցություն չցուցաբերվի դումայի աշխատանքներին, ապա հնարավոր չի լինի պարզել նրա բուն էությունը: Դումայական տակտիկան պահանջում էր ավելի խելամիտ, կշռադատված մոտեցում: Եվ աստիճանաբար բացարձակ մերժման քաղաքականությունից անցում է կատարվում հակադիր գործելակերպի: 1906թ. նոյեմբերին տեղի ունեցավ կազմակերպության 13 անդամների խորհրդակցությունը կայանալիք Պ. Դումայի պատգամավորների ընտրություններին մասնակցելու նկատմամբ իրենց վերաբերմունքը մշակելու համար: Այստեղ մեկ անգամ ևս արձանագրվում է, որ սա ոչ թե կամովին զիջում է ցարի կողմից, այլ ելք է կառավարության համար իր համար ստեղծված անելանելի դրությունից դուրս գալու համար: Որ նա դիմել է հերթական ստոր ու խարդախ միջոցի, համոզվելու համար այն բանում. «իբրև թե, այսուհետև ժողովրդի ձայնը պետք է լինի գերակշռողը» և նա չինովնիկներին առաջ մղելով Դուման սարքեց..., բայց նա հիասթափվեց, երբ տեսավ, որ իր աղվեսաբար շարժումները չկարողացան ժողովրդի ներկայացուցիչներին կասեցնել Դումայում անդամ լինելուց: Կայացվում է որոշում անպայման մասնակցել դումայական ընտրություններին, փաստարկները հետևյալն էին.

1/ Չգնալով, կամ չմասնակցելով Պ. Դուման կանցնի զուտ չինովնիկների ձեռքը, նրանք էլ իրենց նպատակներին հասնելու համար, տեղն ու տեղը կխեղդեն հակաբյուրոկրատական շարժումները:

---

[1] *Տես նույն տեղում, ֆ. 8, գ. 29, թ. 1-2 ; "Совершение СДРАО об итогах межпартийного совещания с демократических патий и организаций о выроботке единой тактики по отношению к Гос. Думе":*

2/ Գնալ ու որոշ չափով կամ կարելիի չափով բանվորության դրությունը ներկայացնել, բողոքել, աշխատել ձայներ ունենալ և բանվորության շահերը պաշտպանել:

3/ Գնալ, դա հավատացած ենք, որ գնալով մեծ տուժումների, խոչընդոտների էինք ենթարկվելու. այդ բռնագրոսիկ վերաբերմունքը միայն բանվորության սրտի մեջ վառ կպահի հեղափոխության կամքը. այդ կախաղաններն ու դիկտատորները միայն կավելացնեն բավորության շահերին զուտ կողմնակից ճնշումները: Որքան ձայների մեծամասնություն, բազմություն, այնքան աջակողմյանները կթուլանան, վերջում շահողը բանվորությունը կլինի»[1]:

Կազմակերպությունն այս տեսակետը պաշտպանեց նաև իր առաջին համագումարում, որը կայացավ 1907թ. սեպտեմբերին, որը այս հարցի քննարկումից հետո կայացրեց որոշում. «Շոշափելով Պետական Դումային մասնակցելու խնդիրը եկավ բուռն մասնակցություն ցույց տալու եզրակացության»[2]:

Պետական Դումայի հարցում կազմակերպությունը հետևողականորեն կանգնած է մենշևիկյան տակտիկական դիրքերում:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը ռուսական հեղափոխության հաղթանակի հետ կապում էր հեռուն գնացող նպատակներ, ընդհուպ մինչև անկախության և պետականության վերականգնում, հայ ժողովրդին նվիրական իղձերի իրականցում:

Սակայն ուժերի հարաբերակցության ու փոփոխման, ցարիզմի վարած քաղաքականության հետևանքով, դարասկզբի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պարտվեց, ի թեևս դարձնելով հատկապես փոքր ազգերի հույսերը:

ՍԴԲՀԿ բախտ էր վիճակվելու Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական և կուսակցական որոշ գործիչների «թեթև ձեռքով. ստանալու զանազան պիտակներ ու անարդարացի մեղադրանքներ և մյուս ազգային կուսակցությունների հետ մեկտեղ ենթարկվելու անարդարացի բռնադատման ու պատմական մոռացության:

ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Աբդուլ-Համիդի բռնակալական ռեժիմի տապալումը և 1876 թ.-ի Միդհատյան սահմանադրության վերահաստատումը ոչ մի էական փոփոխություն չմտցրեցին արևմտահայության դրության մեջ: Իշխանության գլուխ անցած երիտթուրքերը նրա նկատմամբ վարեցին էլ ավելի դաժան և բիրտ քաղաքականություն: Արևմտահայության հանդեպ կիրառվող բռնությունները, հալածանքները, նրանց հողերի բռնագրավումներն անասելի մեծ չափերի հասան: Կ.Պոլսի հայոց պատրիարք Հ.Արշարունին Թուրքիայի արդարադատության նախարարին

---

[1] Տես ՀՀ ՀԲԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 31, էջ 1-2: /Решение совещания 13 членов СДРАО по вопросу по участии выборах в Государственную Думу/:
[2] Նույն տեղում, գ. 43/Решение первого съезда СДРАО об отношении к Гос. Думе/:

ուղղած թագրիրում նշում էր, որ «հայերուն վիճակվեցավ կրել այնպիսի եղեռնական, սոսկալի արհավիրք մը, որ համիտյան շրջանի պատմական արյունահեղությունները ու տառապանքները գերազանցեց»[1]:

Կայսրության ազգային փոքրամասնությունների նկատմամբ երիտթուրքերի վարած դաժան քաղաքականությունը նոր բախումների պատճառ հանդիսացավ: 1912 թ. 1-ին Բալկանյան պատերազմում կրած պարտության հետևանքով Թուրքիան կորցրեց իր եվրոպական տիրույթների մեծ մասը: Դա հայ քաղաքական շրջանակներին որոշակի հույսեր ներշնչեց նորից դիվանագիտական սեղանի վրա դնելու Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով խոստացված և այդպես էլ չիրականացված հայկական բարենորոգումների հարցը:

Ինչպես և անցյալում, հայ ժողովուրդն այս խնդրի բարեհաջող լուծման հույսերը մեծամասամբ կապում էր Ռուսաստանի՝ որպես ամենաշահագրգիռ պետության, հետ: Սրան մեծապես նպաստեց նաև ռուսական կառավարության վերաբերմունքի աստիճանական փոփոխությունը ի նպաստ այդ խնդրի: Այս մասին արևմտահայ նշանավոր գործիչ Վ. Փափազյանը /Կոմս/ գրում էր.«Թէեւ չէինք անգիտանար, որ Ռուսաստանի շահագրգռությունը մեր երկրամասով սեփական հաշւոյն էր, սակայն կը գերադասէինք օգտագործել բոլոր ուժերը՝ միայն Թուրքիայէն մեր անիծեալ ճակատագիրն անջատելու համար»[2]:

Հայության իղձերի թարգման հանդիսացավ Ամենայն Հայոց Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը, որը Վրաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջոցով 1912 թ. հոկտեմբերի 2-ին դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին միջնորդելու կայսր Նիկոլայ 2-ին «Ռուսաստանի հզոր հովանավորության տակ առնել Թուրքահայաստանի բազմաչարչար ժողովուրդին»[3]:

Թիֆլիսի քաղաքապետ Ալ.Խատիսյանն իր հուշերում գրում էր, որ կաթողիկոսի այդ դիմումը «համապատասխանում էր հայ ժողովրդի, մտավորականության և կուսակցական շրջանակների ձգտումներին»[4]:

Դրական արձագանքելով հանդերձ՝ ռուսական ղեկավար շրջանակները, ելնելով այն բանից, որ տվյալ պահին, երբ Օսմանյան կայսրությունում էլ ավելի խորացել են հակասությունները մեծ տերությունների միջև, գիտակցում էին, որ Ռուսաստանը չի կարող առանց նրանց համաձայնության, առանձին քայլեր ձեռնարկել Թուրքահայաստանի նկատմամբ: Դա, սակայն, չէր նշանակում, որ Ռուսաստանը ցանկանում է հայկական բարենորոգումների իրականացման հարցում նախաձեռնությունը թողնել այլ տերության:

Մեսրոպ եպիսկոպոսի հետ Պետերբուրգում ունեցած հանդիպումների ժամանակ Ռուսաստանի վարչապետ Վ.Կոկովցևը և արտգործնախարար Ս. Սազոնովը խորհուրդ են տալիս, որ էջմիածինը դիմի նաև մյուս մեծ տերություններին և պատգամավորություն ունենալ Բալկանյան խնդիրները լուծելու համար առաջիկայում գումարվելիք Լոնդոնի կոնֆերանսում[5]:Դրա անհրաժեշտությունը քաջ գիտակցում և կարևորում էին նաև հայ քաղաքական շրջանակները:

---

[1] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում / խմբ. Մ.Ներսիսյանի/, Երևան, 1991,էջ. 270:

[2] Վ.Փափազյան, Հայկական բարենորոգումները/1912-1914/,«Վէմ», Փարիզ, N1, 1933, էջ 96:

[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ.6:

[4] Ա.Խատիսյան, Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», Բոստոն, N11, 1932, չ 121:

[5] ՀՀ ՊԿՊԱ,ֆ.57, ց. 5, գ. 28, թ, 6:

Կ.Պոլսի Ազգային Պատրիարքարանը, թուրքահայոց խնդրի լուծման ամենաշահագրգիռ կողմը լինելով հանդերձ, հնարավորություն չուներ ստանձնելու այս գործը: Ենթակա լինելով Բ.Դռանը՝ Պատրիարքարանը չէր կարող գործել նրա դեմ՝ քաղաքական գաղտնի բանակցություններ վարելով օտար պետությունների հետ: Նման քայլը, որի հետևանքը կլիներ առաջ բերել եվրոպական միջամտություն երկրի ներքին գործերին, կառավարության կողմից կդիտվեր որպես դավաճանություն: «Բացարձակապէս անհնար է,-կաթողիկոսին ուղղած նամակում գրում էր պատրիարքի քարտուղար Գ.Պալաքյանը,-Ազգային Պատրիարքարանիս յայտնի կերպով գործին մէջ մխրճվիլ, որ կրնայ ոչ միայն օգտակար չըլլալ, այլեւ աղետաբեր հետեւանքներ ունենալ»[1]:

Ելնելով այդ ամենից՝ այս առաքելությունն իր վրա է վերցնում Գևորգ Ե Կաթողիկոսը, որն արդեն, Ռուսաստանի աջակցությանը դիմելով, կատարել էր առաջին քայլը հայկական հարցը միջազգային քննարկման առարկա դարձնելու ուղղությամբ: Կաթողիկոսին թուրքահայոց խնդրի հետապնդման և տերություններին դիմելու գործին օժանդակելու համար ստեղծվում են քաղաքական մարմիններ՝ Ապահովության Հանձնաժողովը Կ.Պոլսում և Հայ Ազգային Բյուրոն Թիֆլիսում:

Եվրոպական տերություններին թուրքահայոց հարցը պատշաճ ներկայացնելու և այդ խնդրում նրանց օժանդակությունը ձեռք բերելու համար ազգային շրջանակներում ձեռնարկվում են որոշակի քայլեր: Կաթողիկոսի 1912 թ. նոյեմբերի 8-ի հրահանգով արտասահմանյան հայ համայնքների առաջնորդներն իրենց համայնքների անունից դիմումներ են ուղղում տերությունների ղեկավար շրջանակներին և խնդրում նրանց աջակցությունն արևմտահայության ծանր կացության բարելավման գործում: Լոնդոնում գումարվելիք եվրոպական տերությունների ներկայացուցիչների խաղաղության կոնֆերանսին թուրքահայերի վիճակը ներկայացնելու համար Գևորգ Ե-ի կարգադրությամբ Ազգային Բյուրոյում կազմվում է մի հիշատակագիր: Այն հիմնված էր ինչպես Ազգային Պատրիարքարանից, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից կաթողիկոսի անունով ստացված տեղեկագրերի, խնդրագրերի, նամակների վրա, որոնցում նկարագրված էին թուրքահայության նկատմամբ իրականացվող բռնություններն ու հալածանքները: Այս հիշատակագիրն իր անունից ներկայացնելու և թուրքահայոց խնդիրը Լոնդոնի կոնֆերանսում պաշտպանելու համար, Գևորգ Ե կաթողիկոսն որոշում է այնտեղ պատգամավոր ուղարկել, մանավանդ, որ այդ միտքը նախօրոք արժանացել էր ռուսական կառավարության հավանությանը: Այս պատասխանատու առաքելությունը տրվում է եգիպտահայականավոր հասարակական-քաղաքական գործիչ, ազգային բարերար Պողոս Նուբար փաշային: Գևորգ Ե կաթողիկոսն իր 1912 թ. նոյեմբերի 10-ի թ.-1482 կոնդակով նրան նշանակում է իր ներկայացուցիչն Եվրոպայում և խնդրում «յանձն առնել երթալ ի վեհաժողով եւ առաջի առնել պատգամավորաց Եւրոպական Պետութեանց զխնդիր Հայոց և զտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդութիւն նոցա առ ողբալի կացութեան հայ ժողովրդեան Տաճկաստանի»[2]:

Ազգային Պատրիարքարանը և Ապահովության Հանձնաժողովն իրենց կողմից ևս հաջող համարեցին և վավերացրին Պ.Նուբարի նշանակումը:[3]

---

[1] *ՀՀ Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան. թղթ.238, վավ. 64, թ.1:*
[2] *Ե.Օտեան, Պօղոս Փաշա Նուպար /Կենսագրական նօթեր/, Կ.Պոլիս, 1913, էջ 46-47.*
[3] *Վ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 94:*

Պողոս Նուբարին որպես կաթողիկոսի պատվիրակ ընտրելը, որպեսզի նա եվրոպական երկրների ղեկավար շրջանակների մոտ պաշտպաներ թուրքահայոց դատը, լավագույնն էր, քանի որ նա օժտված էր այն բոլոր հատկություններով, որոնք հարկավոր էին այդ գործը գլուխ բերելու և ամենահարմար անձնավորությունն էր նման առաքելությունը ստանձնելու համար: «Ազգը,-գրել է Ա.Ալպոյաճյանը,-աւելի յարմար ընտրութիւն մը չէր կրնար ընել իր դատը պաշտպանելու համար եւրոպական դիւանագիտութեան առջեւ»[1]:

Պ.Նուբարն անդրանիկ որդին էր Մեծն Նուբար փաշայի /1825-1899/, որը ձեռք էր բերել միջազգային համբավ և հեղինակություն՝ լինելով Եգիպտոսի վարչապետ, խոշոր քաղաքական գործիչ: «Պօղոս փաշան,-գրում էր Եր.Օտյանը,-լաւագոյն կերպով կներկայացնէ իր ազգը, քանի որ իր անձնական ճշմարիտ արժանիքներուն և տաղանդին կը միացնէ նաեւ հօրենական աշխարհռչակ անուն մը»[2]: Հաշվի էին առնվել Պ.Նուբարի բարձր դիրքն ու եվրոպական, հատկապես, անգլիական ու ֆրանսիական ֆինանսական, տնտեսական, քաղաքական և մտավոր շրջանակների հետ ունեցած ծանոթություններն ու կապերը: «Ան եւրոպացի միլիոնատէր ճէնթլմեններու լաւագոյն դասին դասակիցն է,-գրում էր «Կոչնակ» թերթը,-եւ նախարարներու եւ դեսպաններու հիւրն կամ ասպնջականն կ'ըլլայ իբրեւ անոնց հավասարապատիւ ընկերն, ոչ թէ անոնցմէ ունկնդրութիւններ կը հայցէ իբրեւ դիւանագիտական մուրացկան մը»[3]: Սա շատ կարևոր իրողություն էր և մեծապես կնպաստեր Պ.Նուբարի առաքելության հաջողությանը: Օգտագործելով իր այդ լայն կապերը՝ նա հեշտությամբ կարող էր արևմտահայության պահանջներն ու բաղձանքները պարզաբանել ու պաշտպանել եվրոպական ղեկավար շրջանակներում, ինչպես նաև մոտից տեղյակ լինել վերջիններիս վերաբերմունքին՝ թուրքահայոց խնդրի հանդեպ և ըստ այդմ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ու դիմումներ:

Կարևորվել էր նաև Պ.Նուբարի մտավորական լայն և բազմակողմանի զարգացումը, ինչպես նաև ֆրանսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացությունը, որ օտար միջավայրում արդյունավետ աշխատելու համար առաջին նախապայմանն էր:

Ժողովրդական լայն զանգվածների մոտ Պ.Նուբարը հայտնի էր և ուներ մեծ համբավ որպես Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիր, որի նպատակն էր հայ ժողովուրդի մտավոր և բարոյական զարգացումն ու նրա նյութական ու տնտեսական կացության բարելավումը:

Քիչ կարևոր դեր չուներ Պ.Նուբարի ունեցած հարստությունը, որը նույնպես ի սպաս կդրվեր իր գործունեության արդյունավետության համար: «Պ.Նուբարն ունի անսահման ծախսելու դյուրություն,- գրում էր «Մշակ» թերթը,- ինչ որ մեծ ջիղ է այս տեսակ գործերի մեջ»[4]:

Պ.Նուբարի՝ որպես, մեծ տերությունների ղեկավար շրջանակների մոտ հայկական հարցը պաշտպանելու համար, կաթողիկոսի ներկայացուցչի նշանակումը հարմար էր նաև որոշակի քաղաքական նկատառումներով: Նախ Պ.Նուբարը քաղաքական չեզոք գործիչ էր, ոչ մի քաղաքական կուսակցության անդամ չէր և հայտնի էր իր չափավոր հայացքներով: Կարևոր էր, որ կաթողիկոսի

---

[1] *«Նոր Հայաստան», Կ.Պոլիս, N 3, 1918:*
[2] *Ե.Օտեան. նշվ. աշխ., էջ 26:*
[3] *«Կոչնակ», Նիւ Եորք, N 42, 1913:*
[4] *«Մշակ», Թիֆլիս, N 2, 1913:*

պատվիրակը Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության շարքերից չէր, որը կարող էր մեծ դժգոհություն առաջ բերեր ռուս կառավարական շրջանակներում. դաշնակցականները ռուսական կառավարության կողմից ենթարկվել էին հալածանքների՝ մեղադրվելով հեղափոխականության և անջատողականության մեջ:

Պ.Նուբարի առաքելության հաջողության համար շատ էական էր, որ նա ոչ մի կապ կամ առնչություն չուներ Ռուսաստանի հետ: Հակառակ դեպքում դա կհարուցեր թուրքական և եվրոպական պետությունների կասկածները, թե Եվրոպայում հայկական պատվիրակություն ողնենալու գաղափարը ներշնչվել էր Ռուսաստանի կողմից՝ այն իր շահերին ծառայեցնելու համար: Այս իրողությունը՝ հենց նույն նկատառումով, ձեռնտու էր նաև ռուսական կառավարությանը;

Շնորհիվ իր քաղաքական չեզոքության, հայացքների չափավորության և ունեցած անառարկելի հեղինակության՝ Պ.Նուբարը կարողացավ իր շուրջը համախմբել հայ կուսակցական, քաղաքական, ազգային տարբեր շրջանակների ներկայացուցիչներին և միահամուռ ջանքերով աշխատել ի նպաստ թուրքահայոց խնդրի լուծման: Նման համերաշխությունն ու համախմբվածությունը, որը բացառիկ երևույթ էր հայ իրականության մեջ, միայն կարող էր հանդիսանալ գործի հաջողության գլխավոր գրավականը:

Պ.Նուբարի հեղինակության, իր ստանձնած առաքելության ամենահարմար թեկնածուն լինելու և այդ իմաստով նրա հետ կապվող հույսերի մասին է խոսում նաև այն փաստը, որ նրա անունը եղել էր Թիֆլիսի Ազգային Բյուրոյի կազմած հարմարավոր անձերի անվանացուցակում, որոնք, իր կարծիքով, կարող էին լինել կաթողիկոսի պատվիրակներ Եվրոպայում[1]: Պ.Նուբարին Եվրոպայում պատվիրակ նշանակելու խնդրանքով կաթողիկոսին դիմել էին նաև եգիպտահայ գաղութի ներկայացուցիչները[2]:

Նշված բոլոր արժանիքների կողքին Պ.Նուբարն ուներ միայն մեկ պակասություն: Թուրքահայ լինելով հանդերձ՝ նա ապրում էր իր հայրենիքից դուրս՝ կտրված արևմտահայ իրականությունից և գրեթե մոտիկից լավ ծանոթ չէր այնտեղ տիրող կացությանը: Այդ պակասը լրացնելու համար, իր ամբողջ գործունեության ընթացքում Պ.Նուբարն աշխույժ նամակագրական կապեր հաստատեց արևմտահայ գործիչների հետ, ծանոթացավ Թուրքահայաստանին վերաբերող փաստաթղթերին, վավերագրերին, ինչպես նաև իրեն շրջապատեց թուրքահայոց խնդրին գիտակ անձնավորություններով:

Պ.Նուբարի՝ որպես կաթողիկոսի պատվիրակի նշանակումը Եվրոպայում, բացառիկ դրական արձագանք գտավ հայ ազգային շրջանակներում և մամուլում: Դաշնակցության հայտնի գործիչ Մ.Վարանդյանը, բարձր գնահատելով Պ.Նուբարի արժանիքները, նշում էր, որ «պատմական մոմենտը գտել է իր համապատասխան մարդուն և այդ մարդն է- Պողոս Նուբար Փաշան»[3]: «Կաթողիկոսը որանից աւելի լաւ ընտրութիւն չէր կրնար ընել»,- գրում էր «Հնրակ» թերթը[4]: Իսկ «Կոչնակ» թերթը ընդգծում էր, որ «մեր ազգին համար մեծ

---

[1] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ.1, ց.1, գ.211, թ. 3:
[2] Վ.Մալեզեան, Ճամբուս վրայ /Յուշաքաղ/, Բարիզ,1950, էջ 137:
[3] «Յուսաբեր», Կահիրե, N 121, 1913:
[4] «Հնչակ», Փարիզ, N 1, 1914:

բարեքաղդութիւն մ՛է որ Նուպար Փաշա կը նախագահէ այսօր Հայ ճակատագրին»[1]:

Հայկական բարենորոգումների հարցը Եվրոպայում պաշտպանելու համար, Գևորգ Ե կաթողիկոսն իր կողմից պատվիրակ նշանակելու փաստը, անհրաժեշտ համարեց տեղեկացնել ռուսական կառավարությանը: 1912 թ. դեկտեմբերի 24-ին նա Մեսրոպ եպիսկոպոսի գլխավորությամբ պատգամավորություն ուղարկեց Վորոնցով-Դաշկովի մոտ՝ նրան փոխանցելու իր՝ կայսր Նիկոլայ 2-ին ուղղած խնդրագիրն, ինչպես նաև իմանալու ռուսական կառավարության վերաբերմունքը թուրքահայոց խնդրի նկատմամբ: Հանդիպման ժամանակ պատգամավորները հայտնում են փոխարքային Պ.Նուբարի նշանակման մասին, նշելով, որ նա պետք է աշխատի Եվրոպայում Ռուսաստանի նախաձեռնությամբ և վերահսկողությամբ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով խոստացված հայկական բարենորոգումներն իրականացնել տալու ուղղությամբ[2]: Իր հերթին Վորոնցով-Դաշկովն այս մասին գրում է արտգործնախարար Ս.Սազոնովին. «Ազգային ժողովի, Պատրիարքի և ամբողջ հայ ժողովրդի լիազորությամբ կաթողիկոսը՝ Բալկանյան ,խնդիրները լուծելու համար հրավիրված կոնֆերանսում, հայկական բարենորոգումների հարցը պաշտպանելու առաքելությունը դրել է շատ հռչակավոր հայ գործիչ Պողոս Նուբարի վրա»[3]: Կ.Պոլսի ռուսական դեսպանատան առաջին թարգման Ա.Մանդելշտամին Պ.Նուբարի առաքելության վերաբերյալ տեղեկություն տալիս է նաև Ազգային Վարչության անդամ Ոսկան Մարտիկյանը, ավելացնելով, որ այդ «հանդիսանում է Պետերբուրգում կաթողիկոսի անունից Մեսրոպ եպիսկոպոսի վարած բանակցությունների բնական արդյունքը»[4]:

Ռուսական կառավարության վերաբերմունքը Պ. Նուբարի առաքելությանը դրական էր: Հայերի՝ բարենորոգումների իրականացման խնդրանքով եվրոպական տերություններին դիմելը, ձեռնտու էր Ռուսաստանին՝ ցույց տալու համար, որ, նախաձեռնությունն այդ խնդրում իր ձեռքը վերցնելով, նա ոչ թե հետապնդում է իր շահերը, այլ ձգտում է հասնել արևմտահայության անտանելի կացության բարելավմանը: Բացի այդ ռուսական կառավարությունը դեմ չէր նաև հետագայում օգտագործել Պ.Նուբարի գործունեությունը՝ հայկական հարցում իր քաղաքականությունը տերությունների մոտ պաշտպանելու համար:

Կաթողիկոսական կոնդակը Պ.Նուբարը ստանում է 1912 թ. դեկտեմբերի 2-ին Փարիզում, ուր նա գտնվում էր ընտանիքով: Գիտակցելով հանդերձ իրեն ստանձնած առաքելության բարդությունն ու պատասխանատվությունը՝ նա տալիս է իր համաձայնությունը: Կ.Պոլսի նախկին պատրիարք Մ.Օրմանյանին ուղղած նամակում նա գրում էր. «Չվարանեցայ ընդունել այս ծանր պաշտօնը զօր կը նկատեմ ի գլուխ հանելիք հայրենասիրական պարտականութիւն մը»[5]:

Սակայն Պ.Նուբարը ստանձնած առաքելությունը միայնակ չէր գլուխ բերելու: Նրան աջակցելու և հայկական հարցը ավելի պատշաճ ներկայացնելու համար ստեղծվելու էր պատվիրակություն նրա գլխավորությամբ՝ կազմված

---

[1] «Կոչնակ», Նիւ Եորք. N 17, 1913:

[2] ՀՀ ՊԿՊԱ. ֆ.57, ց.5, գ. 28, թ. 41:

[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.113, ց. 3, գ. 1172, թ. 6:

[4] Մ.Ներսիսյան, Հայկական հարցի արծարծումը 1912 թ., «Պատմա-բանասիրական հանդես», N 1,Երևան, 1992, էջ 201:

[5] Ե.Օտեան, նշվ. աշխ., էջ 50:

աշխարհիկ և հոգևորական անձանցից: Վերջիններիս ընտրության իրավունքը կաթողիկոսը վերապահում է Պ.Նուբարին:

Հաշվի առնելով, որ առաջիկայում Լոնդոնում հրավիրվելու է խաղաղության կոնֆերանս՝ Պ.Նուբարն անմիջապես ձեռնամուխ է լինում պատվիրակության անդամների ընտրությանը: Թեկնածուներ շատ կային, սակայն նրանցից պետք էր ընտրել լավագույն և այդ պաշտոնին համապատասխան անձնավորություններ: Հիմնական չափանիշը, որով Պ.Նուբարն առաջնորդվում էր թեկնածուներն ընտրելիս, այն էր, որ վերջիններս անպայման լինեին թուրքահայեր: Այս իմաստով Պ.Նուբարին խորհուրդ էր տվել նաև Ազգային Պատրիարքարանը: Սրա հիմնական նպատակն էր թուրքական կառավարությանը ցույց տալ, որ արևմտահայության կացության բարելավման վերաբերյալ դիմումները տերություններին արվում են թուրքահայ պատվիրակների կողմից և, որ ամենակարևորն էր, այդ դիմումներն ու ընդհանրապես պատվիրակության կազմության գաղափարը ոչ մի պետության և, հատկապես, Ռուսաստանի կողմից ներշնչված կամ հրահրված չէ: «Ազգային Պատվիրակությունը,- հետագայում գրում էր Պ.Նուբարը,- կազմվեց բացառապես օսմանյան հպատակներից՝ բացառելով Ռուսաստանի հայերին, որպեսզի մեկընդմիշտ փարատվի անջատողական քաղաքականության ամեն կասկած»[1]:

Որպես իրեն խորհրդական և աջակից, Պ.Նուբարն առաջին հերթին Փարիզ է հրավիրում Կ.Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանին: Պ.Նուբարի այս ընտրությունը պայմանավորված էր Մ.Օրմանյանի մեծ հեղինակությամբ, Եվրոպայի, հատկապես Անգլիայի ղեկավար և մտավորական շրջանակների հետ ծանոթությամբ, թուրքահայոց խնդրի և նրանց կացության քաջատեղյակությամբ, ինչպես նաև Բ.Դռան հանդեպ ունեցած լոյալ վերաբերմունքով: Բայց Մ.Օրմանյանին վիճակված չէր անդամակցել Պ.Նուբարի գլխավորությամբ կազմվելիք պատվիրակությանը: Դրա առաջին պատճառը նրա ամբաստանյալ դիրքն էր, քանի որ ազգի կողմից նա մեղադրվում էր իր պատրիարքության ընթացքում /1896-1908/ համիդյան ռեժիմին գործակցության, ուխտադրժության և անձնական դիրքի չարաշահման մեջ: Բացի այդ Մ.Օրմանյանի մեկնումին դեմ էր Ազգային Պատրիարքարանը, որը գտնում էր, որ թուրքական կառավարության դժգոհությունն ու կասկածները չհարուցելու համար, Կ.Պոլսից ոչ ոք չպետք է մասնակցեր տերություններին ուղղված դիմումներին:

Մ.Օրմանյանի փոխարեն որպես պատվիրակության եկեղեցական անդամների թեկնածուներ էին դիտվում նաև Կ.Պոլսի Ապահովության Հանձնաժողովի նախագահ, նախկին պատրիարք Ե.Դուրյանը, կաթողիկոսի դիվանապետ Բագրատ եպիսկոպոսը, կաթողիկոսի տեղապահ Հուսիկ արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի մատենադարանապետ Մեսրոպ եպիսկոպոսը[2]: Սակայն Ե.Դուրյանի՝ Եվրոպա մեկնելը կհարուցեր թուրքական կառավարության դժգոհությունը: Ինչ վերաբերում է մյուս թեկնածուներին, ապա նրանք նախ չէին տիրապետում ֆրանսերեն լեզվին, որի իմացությունը շատ անհրաժեշտ էր Եվրոպայում գործելու համար, և բացի այդ նրանք բոլորն էլ ռուսահայեր էին, որոնց նշանակումը, ինչպես նշվեց, համարվել էր աննպատակահարմար: Պատվիրակության եկեղեցական անդամի պաշտոնը ստանձնելու հրավերներ եղան նաև Վիեննայի

---

[1] ՀՀ Գրականության և Արվեստի Թանգարան, Վ.Մալեզյանի ֆ., գ. 742, թ. 1:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.20, թ.13:

Մխիթարյան Միաբանության աբբահայրեր Գ.Մենևիշյանին և Գովրիկյանին[1]: Սակայն ի վերջո ընտրությունը կանգ առավ Եվրոպայի Հայոց Առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Ութուջյանի վրա:

Իր նշանակումից անմիջապես հետո, Պ.Նուբարը դիմեց նաև ՀԲԸ Միության փոխ-նախագահ Յաղուբ Արթին փաշային՝ հրավիրելով անդամակցել իր գլխավորած պատվիրակությանը: Վերջինս սիրով ընդունում է այս հրավերը: Որպես պատվիրակության աշխարհիկ անդամների թեկնածուներ ընտրվեցին նաև Մինաս Չերազը և Հարություն Մոստիչյանը: Հ.Առաքելյանի, Ս.Հարությունյանի և Լորիս-Մելիքովի թեկնածությունները չընդունվեցին՝ ռուսահպատակներ լինելու պատճառով:

Պ.Նուբարի՝ Պատվիրակության անդամների ընտրության հիմնական չափանիշներն էին, բացի թուրքահայ լինելուց, նաև՝ ազգասիրությունը, քաջատեղյակությունը թուրքահայոց խնդրին, ինչպես նաև եվրոպական ղեկավար շրջանակներում ունեցած ծանոթություններն ու կապերը: Հաշվի առնելով, որ խաղաղության կոնֆերանսը գումարվելու էր Լոնդոնում՝ Պ.Նուբարը կարևորում էր, որպեսզի այդ կապերն ու ծանոթությունները հատկապես լինեին անգլիական ղեկավար շրջանակներում: Այսպես, Հ.Մոստիչյանն ու Գ.Ութուջյանն անգլիաբնակ էին, ապրում էին համապատասխանաբար Լոնդոնում ու Մանչեստրում և ունեին բազմաթիվ ծանոթ պետական գործիչներ և պառլամենտի անդամներ, իսկ Յաղուբ Արթին փաշաին գիտեին Անգլիայի քաղաքական և հատկապես գիտական և մտավորական շրջանակներում:

Իր կողմից ընտրված պատվիրակության անդամների անվանացուցակը Պ.Նուբարը 1913 թ. հունվարի 1-ին հեռագրում է կաթողիկոսին՝ հաստատման համար: Կաթողիկոսը հունվարի 2-ի պատասխան հեռագրում հաստատում է ընտրությունը, իսկ հունվարի 4-ին Փարիզ է ուղարկում Պ.Նուբարի պատվիրակության անդամների՝ Յաղուբ Արթին փաշայի, Գ.Ութուջյանի, Հ.Մոստիչյանի և Մ.Չերազի պատգամավորներ նշանակվելու մասին կոնդակները:

1913 թ. հունվարի 13-ին Պ.Նուբարի հրավերով Ազգային Պատվիրակության ընդհանուր քարտուղարի պաշտոնը ստանձնում է ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովի ատենադպիր Վահան Մալեզյանը:

Ազգային Պատվիրակության՝ եվրոպական տարբեր երկրների հայկական գաղութների և հայասիրական կոմիտեների հետ կապեր հաստատելու և նրանց գործունեության ուղղության միասնությունն ապահովելու համար 1913 թ. հունվարի 14-ին Պ.Նուբարի գլխավորությամբ կազմվում է հատուկ Բյուրո, որի անդամներ են դառնում Վ.Մալեզյանը, Հ.Առաքելյանը, Ա Չոպանյանը, Պ. Էսմերյանը, Հ.Թենկրյանը, Մ Սվաճյանը[2]:

1913 թ. հունվարի 27-ին Պ.Նուբարի ստորագրությամբ հրապարակվում է Ազգային Պատվիրակության շրջաբերականը, որտեղ պարզաբանվում էր վերջինիս պաշտոնի էությունը, այն է՝ «եվրոպական պետություններից պահանջել այն բարենորոգումների իրագործումը, որոնք Բ.Դուռը հանձն առած էր գործադրել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով»[3]:

---

[1] *Վ.Մալեզեան, նշվ. աշխ., էջ 313:*
[2] *ՀՀ ԳԱԹ, Վ.Մալեզյանի ֆ., գ.714:*
[3] *ՀՀ ԳԱԹ, Վ.Մալեզյանի ֆ., գ.738:*

Կազմակերպչական բնույթի աշխատանքներն ավարտելուց հետո՝ Ազգային Պատվիրակությունը՝ առանց ավելորդ ժամանակ կորցնելու, անցնում է իր ստանձնած առաքելության կատարմանը:

Սակայն Պ.Նուբարի գլխավորած պատվիրակությունը չմասնակցեց Լոնդոնի կոնֆերանսին, քանի որ այն հրավիրված էր կարգավորելու միայն բալկանյան խնդիրները: Ուստի ստեղծված պայմաններում Ազգային Պատվիրակության գործունեությունը հիմնականում ուղղվեց եվրոպական հասարակական կարծիքի և ղեկավար շրջանակների վերաբերմունքը թուրքահայոց խնդրին ի նպաստ դարձնելուն:

ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ (1912-1914 թթ.)

Հայկական բարենորոգումների խնդիրը, որ ամրագրվել էր 1878թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով և ենթադրում էր Օսմանյան կայսրության պարտավորվածությունը՝ հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնել, հայերի անվտանգությունն ապահովել և իր ձեռնարկած միջոցառումների մասին պարբերաբար տեղեկացնել կոնգրեսի մասնակից տերություններին, այդպես էլ մնաց թղթի վրա: Սակայն հայ հասարակական միտքը չէր դադարում հավատալ բարենորոգումների իրագործման հնարավորությանը: Իսկ եղավ նաև մի շրջան՝ 20-րդ դարասկզբի 10-ական թվականները, երբ բարենորոգումների գործադրման պահանջը հայ ազգի համար օրհասական պահի հրամայական էր:

Համիդյան բռնատիրությանը փոխարինած երիտթուրքերի՝ սահմանադրական հռչակված վարչակարգի պայմաններում հայերը շարունակվում էին ենթարկվել տեղահանությունների, կոտորածների ու թալանի: Երիտթուրքական իշխանությունների բարեգթությանն ու խոհեմությանն ապավինելն այլևս անիմաստ էր, և ազգային ու քաղաքական գործիչները հայկական հարցի լուծումը կապում էին երրորդ ուժի միջամտության ու աջակցության հետ:

Այդ գործիչների թվում էր նաև Գրիգոր Զոհրապը, որը Արշակ Չոպանյանի վկայությամբ՝ «ինքնաբեր ու կարևոր աշխատակցություն մը բերավ այդ գործին»[2]:

Այս անգամ հայերի քաղաքական հայացքն ուղղված էր դեպի Ռուսաստան:

Զոհրապը հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների կողմնակիցն էր ու պաշտպանը: Նրա խորին համոզմամբ՝ հայկական քաղաքականության անկյունաքարը «ռուսական պաշտպանությունը» պետք է լիներ: Այսպես է հիմնավորում իր տեսակետը. «Մեր գլխավոր հենարանը հայկական հարցում Ռուսաստանն է՝ հարևանության իրավունքով և շահագրգռվածության աստիճանով... Հարավային բաց ծով դուրս գալու առաջխաղացման ճանապարհին

---

2 «Անահիտ», Փարիզ, 1930, թ.3, էջ 8:

Ռուսաստանի միակ բարեկամը, առավել հուսալի պատվարը հայերն են»[3]: Զոհրապի խոսքերը ոչ միայն խորիմաստ են , այլև խիստ արդիական:

Սակայն հայտնի է, որ այդ շրջանում Պոլսում ոչ բոլորն էին ցարական Ռուսաստանի համակիրները:Ռուսաստանն էլ իր հերթին առանձնապես հետաքրքրություն չէր ցուցաբերում դեպի արևմտահայերի ճակատագիրը:

Զոհրապը մտերիմ կապեր ունենալով Կ.Պոլսի ռուսական դեսպանատան հետ ջանաց շահել վերջինիս շահագրգռվածությունը հայկական հարցում և դրական վերաբերմունքը արևմտահայերի նկատմամբ: Իսկ ցարիզմի դեմ ըմբոստ իր հայրենակիցներին բացատրում էր Ռուսաստանի հետ բարիդրացիական կապերի անհրաժեշտությունը:

Օրագրություններից մեկում (10 հունվարի, 1914թ.) նշում է. «Այդ միջոցին դաշնակցականները ատելի ցարին դեմ կմղեին իրենց սաստիկ պայքարը: Իմ խրատներս չէին արգելեր զանոնք, բայց կսկսեին արդեն մտածել»[4]:

Զոհրապը մեծ հույսեր էր կապում «դրացի և քրիստոնյա հզոր պետության» հետ, քանի որ համոզված էր. «հայությունը բնաջինջ ըլլալե ուրիշ ապագա - չի կրնար ունենալ թուրք կառավարության մը տակ»:

Կ. Պոլսում 1909-1912թթ. Ռուսաստանի դեսպան Ն. Չարիկովին նա բազմաթիվ դիմումներ է անում՝ «բառնալու համար թյուրիմացությունները ու կասկածնին հայ ժողովուրդին և ռուս կառավարության և ժողովուրդին միջև»: Ապա, «individual (անձնական- Մ. Գ.) պատասխանատվություն ստանձնելով»՝ Զոհրապը դեսպանին համոզում է « այն աստիճան, որ ան ալ ռուս շրջանակները, մեծ ու փոքր, համոզե և մեզի դարձնե զանոնք»[5]:

Հայտնի է, որ բարենորոգումների շուրջ տարվող բանակցությունները սկզբնապես չեն եղել պաշտոնական բնույթի, և ինչպես Զոհրապը, այնպես էլ հայ մյուս գործիչները ստիպված էին աշխատանքներ տանել թուրքական իշխանություններից գաղտնի՝ ապահովության համար:

Օգտագործելով անձնական կապերը և շփումները՝ Զոհրապը գործում էր թե՛ «անձնական պատասխանատվությամբ», և՛ թե հանդես գալիս որպես Պատրիարքարանի լիազոր ներկայացուցիչը բանակցային ողջ գործընթացում: Նրա անվան. հետ է կապվում հայկական կողմի բազմաթիվ փաստաթղթերի խմբագրումը, իսկ երբեմն էլ ուղղակի կազմումը, պաշտոնական նամակների պատրաստումը:

Երբ բարենորոգումների գործադրման հայկական պահանջը պաշտոնական բնույթ ստացավ, Զոհրապը ակամայից ստանձնեց վստահելի միջնորդի դեր՝ մի կողմից՝ պաշտոնական Թուրքիայի և Պատրիարքարանի ու Ազգային վարչության, մյուս կողմից՝ վերջինիս և երրորդ ուժը ներկայացնող՝ Պոլսի ռուսական դեսպանատան միջև:

1912թ. հոկտեմբերի 2-ին կաթողիկոս Գևորգ Ե-ն դիմում է ռուսական ցարին՝ խնդրելով աջակցել Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու[6]:

---

[3] *Ջ. Կիրակոսյան,«Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», Ե.,1967, էջ 82:*

[4] *«Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), Եր., 1990, էջ 216:*

[5] *Նույն տեղում, էջ 204 :*

[6] *Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 6, Եր., էջ 170-171:*

Նոյեմբերի 10-ին կաթողիկոսը ստեղծում է Ազգային պատվիրակություն՝ Պողոս Նուպար փաշայի գլխավորությամբ՝ հայկական դատը ռուս և եվրոպական դիվանագիտության առջև բարձրացնելու համար[7]:

1912թ. նոյեմբերի 13-ին Գրիգոր Զոհրապը և Քաղաքական ժողովի անդամ Ոսկան Մարտիկյանը, որպես Պատրիարքի լիազոր ներկայացուցիչներ, այցելում են ռուսական դեսպան Մ. Գիրսին և հայտնում են՝ քանի որ օսմանյան կառավարությունը չի կամենում և չի կարող կյանքի, ունեցվածքի ու պատվի՝ հայ ժողովրդի ամենատարրական պահանջները գոհացնել, որ եվրոպական տերությունները նույնպես որևէ լուրջ միջամտություն չեն կատարել, ապա՝ «ռուս պետությունը իբրև մերձավոր դրացի հզոր պետություն կրնա իր թևարկությունը և պաշտպանությունը ընծայել մեզի»[8]:

Գիրսը խոստանում է իր կառավարությանը հայտնել հայ ժողովրդի բաղձանքների մասին: Շուտով նա տեղեկացնում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին Զոհրապի ու Մարտիկյանի այցելության մասին և կարծիք հայտնում, որ ուժեղանում է հայերի համակրանքը և ձգտումը դեպի Ռուսաստանը:

Այս շրջանում ռուսական դիվանագիտությունը դիմում է ակտիվ կապերի պոլսահայ ազգային գործիչների հետ: Կ. Պոլիս են այցելում ռուս պետական, քաղաքական գործիչներ՝ մոտիկից ծանոթանալու հայ կյանքին և պարզելու հայկական տրամադրությունները Ռուսաստանի նկատմամբ:

Նշանակալից է Դումայի նախագահ և Օկտյաբրիստների միության հիմնադիր Ա. Գուչկովի հանդիպումը (9 դեկտեմբերի, 1912թ.) Գրիգոր Զոհրապի հետ: Այս առիթով Զոհրապը գրում է.« Առաջին տեսակցությանը մեզի դեմ անհաշտ այս կարևոր անձնա-վորությունը իմ բացատրություններեն հետո ավելի մեղմացած հայոց հանդեպ գրեթե համակրած գտա: Առաջին տեսակցության միջոցին այն նույն կասկածը և գաղափարը հայտնած էր արդեն հայոց մասին, ինչ որ թուրք պետական մարդիկ և Ապտյուլ Համիտ ինքը հայտնած էր թուրքահայոց մասին:

Ռուսահայերը «պեյլիք» (իշխանություն) կուզեն,-ըսավ պ. Կուչքով»[9]:

Զոհրապը ևս մի հանդիպում է ունենում Պետերբուրգի հայկական խմբակի անդամներ Նիկողայոս Ադոնցի և Սիրական Տիգրանյանի հետ, որոնք Պոլսից վերադառնալով՝ ներկայացնում են «Հայկական հարցի շուրջ» հաշվետվությունը: Այնտեղ Զոհրապի վերաբերյալ ասվում է. «Այս բարձրակիրթ, մեծ ու պայծառ խելքի տեր մարդը... որ իր վրա է հառել ոչ միայն հայ շրջանակների ուշադրությունը», այն կարծիքին է, որ հայերը «ինչ էլ որ լինի, ռուսական քաղաքական իշխանության պայմաններում չեն զրկվի զարգացման հնարավորությունից, մանավանդ որ Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագա ունեցող պետություն և այն ճնշումը (ցարական- Ա.Գ.), որի մասին այդքան շատ են խոսում, միշտ չէ, որ տիրապետելու է Ռուսաստանում»[10]:

---

[7] *Հայ ժողովրդի պատմություն,Ե., 1981, h.6, էջ 521:*

[8] *Ա. Շարուրյան, « Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն», Ե.,1996, էջ 385:*

[9] *«ՊԲՀ», Եր., 1990, թ.4, էջ 204:*

[10] *Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 82:*

1913թ. հունվարի 30-ին պատրիարք Հովհաննես Արշարունին ռուսական դեսպանատուն է հանձնում Բարենորոգումների միասնական ծրագիրը[11]:

Ապրիլի 21-ին Ազգային ժողովի բացառիկ (դռնփակ) նիստում Ազգային վարչությունը հայտնում է, որ Կիլիկիան և Հայաստանը նոր սպառնալիքի տակ են, և իր միջոցները սպառված են, ուստի խնդրում է ընդունել հրաժարականը: Այդ օրը քննարկվեց մի բանաձև, որով Թուրքիայի հայոց ներկայացուցիչ մարմինը պահանջում էր բարենորոգումների գործադրությունը: Այս պատմական բանաձևը ներկայացնողը Զոհրապն էր: Բանաձևով մերժվեց Ազգային վարչության հրաժարականը և կազմվեց Հարստահարության հանձնաժողով, որը պետք է սատարեր Վարչությունը և Ազգային ժողովը: Հանձնաժողովի հինգ անդամներն էին Գր. Զոհրապը, Հ. Շահրիկյանը, Վ. Թեքեյանը, Պ. Գալֆայանը, Դ. Առվսիսյանը[12]:

Պատրիարքարանի և դեսպանատների միջև սկսվում է ակտիվ երթևեկ, որում Զոհրապը կարևոր դեր է կատարում:

Բ.Դուռը գործադրում է բոլոր միջոցները, որպեսզի հայերին մեկուսացնի եվրոպական տերություններից: Սակայն ապարդյուն: Այդ ժամանակ փորձում է հենց հայերի հետ համաձայնության գալ և արգելք հանդիսանալ արտաքին միջամտությանը:

Զոհրապի հետ հանդիպման ժամանակ ներքին գործերի նախարարը՝ Թալեաթը, առաջարկում է Բարենորոգումների խնդիրը լուծել հայերի և թուրքերի ուղղակի բանակցությունների միջոցով:

Դեկտեմբերի 7-ին Պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը այցելում է Զոհրապին: Խնդրում է հրաժարվել Բարենորոգումների ծրագրի՝ եվրոպացի քննիչներ ունենալու պահանջից, առաջակում է նշանակել թուրքահպատակ քննիչներ: Սակայն Զոհրապը համոզում է Խալիլին և վերջինս համաձայնում է եվրոպացի քննիչներ նշանակելու գաղափարին: Նրանք համաձայնության են գալիս մի շարք կետերի շուրջ և պայմանավորվում են տեղյակ պահել կողմերին:

Նույն օրը իր տուն է հրավիրում Պատրիարքին, Քաղաքական ժողովի ատենապետ Ստ. Գարայանին և մի քանի նախկին երեսփոխանների: Մանրամասն ներկայացնում է զրույցը: Որոշվում է, որ Զոհրապը պետք է տա բացասական պատասխան[13]:

Հաջորդ հանդիպումը Զոհրապի հետ տեղի է ունենում Խալիլ բեյի տանը, Թալեաթի մասնակցությամբ: Վերջինս կտրականապես դեմ էր եվրոպացի քննիչ նշանակելուն:

Զոհրապի հանդիպումները թուրք պաշտոնյաների հետ մամուլը որակեց՝ իբրև Բ.Դռան հետ բանակցություններ, դավաճանություն[14]: Մինչդեռ Զոհրապի կողմից կառավարության հետ դրական հարաբերությունների պահպանումը մղված էր հետագա նկատառումներով՝ Բարենորոգումների ծրագրի հաստատման դեպքում իրագործողները լինելու էին թուրքերը, ուրեմն մի՞թե օգտակար չէր լինի նախապես ունենալ նրանց համաձայնությունն ու մասնակցությունը:

Այս օրերին Զոհրապը ձեռնարկում է քաղաքական տեսակետից արևմտահայության համար շատ կարևոր մի գործ:

---

[11] *Ա. Շարուրյան,նշվ. աշխ., էջ 393:*
[12] *Ա.Ալպոյաճյան, «Գր.Զոհրապ.իր կյանքը և գործը», Կ. Պոլիս, 1919, էջ 209-211:*
[13] *Ա. Շարուրյան, նշվ. աշխ., էջ 405, 418-419:*
[14] *«Մշակ», Թիֆլիս, 1913, թ. 290 :*

Հայտնի է, որ թուրքական կառավարությունը միտումնավոր կերպով կեղծում էր վիճակագրությունը՝ հաստատելու համար, որ հայերը միայն աննշան փոքրամասնություն են կազմում և անիմաստ է հատուկ նրանց համար բարեփոխումներ անցկացնել:

Հայերի թվաքանակի մասին Պատրիարքարանի ներկայացրած տվյալների և Սեբաստիան ևս Բարենորոգումների ծրագրում ընդգրկելու առիթով ռուսական դեսպան Մ. Գիրսն իր տարակուսանքն է հայտնում Զոհրապին: Վերջինս հավաստում է,որ « Թուրքիայի ազգաբնակչության՝ մասնավորապես հայերի, վերաբերյալ բոլոր տվյալները վստահության արժանի չեն»: Իսկ որոշ ժամանակ անց տեղեկացնում է, որ ձեռնարկել է հայաբնակ վեց նահանգների «տնտեսական և մտավոր վիճակագրության» պատրաստումը[15]:

Լույս է տեսնում «Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգագրական տեսակետից և հայերի դրությունը» ֆրանսերեն ուսումնասիրությունը, որը հերքում է թուրքերի առարկությունը այն պատճառաբանությամբ, թե հայերը նահանգում փոքրամասնություն են կազմում: Նա խնդիրը ներկայացնում է կրկնակի տեսանկյունով. «Որևէ ժողովրդի կարևորությունը չափվում է ոչ միայն թվաքանակով, այլ նաև, և հատկապես՝ տնտեսական հզորությամբ, մշակույթի մակարդակով»[16]: Տեղեկագիրն ուղարկվում է դեսպանատներին, հայկական կոմիտեներին, թերթերի խմբագրություններին:

Հայկական հարցին միջազգային հանրությանը ծանոթացնելու նպատակով Զոհրապը Փարիզում ՝ Մարսել Լեար կեղծանվամբ, տպագրում է «Հայկական հարցը փաստաթղթերուն լույսին տակ» ֆրանսերեն գրքույկը[17]: Նրանում հանգամանորեն ներկայացված էր Հայկական հարցի նախապատմությունը, պատճառները թե ինչու թուրք կառավարությունը ի վիճակի չէ բարենորոգումներ իրագործել: Հեղինակը նաև առաջադրում էր խնդրի լուծման ճանապարհը՝ «եվրոպացի նահանգապետ մը, հայերի մասնակցությունը հանրային պաշտոններու, ապակենտրոնացում»: Հայկական խնդրի լուծման ՝ գրքում մատնանշված եղանակները համահունչ էին Բարենորոգումների այն ծրագրի կետերին, որը Ռուսական դեսպանատան ջանքերով հաստատվեց 1914թ. հունվարի 26-ին[18]:

Այդ օրը Պոլսում ռուսական դեսպանատան խորհրդական Կոնստանտին Գուլկևիչը և Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշան ստորագրում են հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը:

Զոհրապը համաձայնագրի առիթով իր գոհունակությունն է հայտնում Ա. Չոպանյանին. « Վեց ամսէ վեր առաջին անգամ ըլլալով ուրախ եմ»[19]:

1914թ. մայիսի է10-ին ներքին գործերի նախարար Թալեաթը Բարենորոգումների ընդհանուր քննիչներ Հոֆի և Վեստենենկի հետ կնքում է համաձայնագիր: Քննիչները պատրաստվում են մեկնել իրենց նշանակման վայրերը[20]:

---

15 Ա. Շարուրյան, նշվ. աշխ., էջ 386.:

16 «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1991, թ.1, էջ 117:

17 Գր.Զոհրապ,«Հայկական հարցը փաստաթուղթերուն լույսին տակ».Պեյրութ, 1957, էջ 27 :

18 Զ. Կիրակոսյան, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Ե., 1972, էջ 339-341 :

19 «Անահիտ», Փարիզ, 1930, թ. 3, էջ 12.:

20 Հայ ժողովրդի պատմություն, հ.6, էջ 534 :

«Ոգևորությունն այնքան մեծ էր և վարակիչ էր,- գրում է ականատեսը,- որ Զոհրապն իսկ ցանկություն հայտնեց ընկերանալ քննիչներուն»[21]:

Սակայն այդ ոգևորությունը երկար չտևեց, քանի որ 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Հայկական Բարենորոգումների ծրագիրը կասեցվեց նախապատրաստական ծանր աշխատանքների բարեհաջող ավարտի և հաստատման փուլում: 20-րդ դարի սկզբին արևմտահայերի համար ստեղծված բացառիկ հայանպաստ պայմանները, որ տևեցին մի կարճ ժամանակահատված, ոգևորեցին հայ գործիչներին, մղեցին ինքնամոռաց նվիրվել հայկական խնդրի լուծման դժվարին գործին:

1914թ. ռուս-թուրքական պայմանագրի հաստատումից հետո նրանցից ոչ մեկը չէր կարող պատկերացնել, որ վերահաս պատերազմը ոչ միայն այնքան պասված բարենորոգումների ծրագրի իրագործումը անհնարին կդարձներ, այլև կհանգեցներ արևմտահայության բնաջնջման ծրագրի գործադրությանը երիտթուրքերի կողմից, և իրենցից շատերը դառնալու են հայ դատի նահատակներ: Դատ, սկզբում որի դատապաշտպանը, ապա զոհը դարձավ ժամանակի մեծանուն գրող, հրապարակախոս, հայտնի փաստաբան, ազգային, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը, որի այդ շրջանի գործունեությանը, գաղափարներին ծանոթանալը շատ հետաքրքիր է, կարևոր ու նաև ուսանելի:

ԼՈՒՍԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԱՂԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Տեղանունների անվանաբանության հարցը վերջին շրջանում ավելի ու ավելի հաճախակի է հայտնվում հայ ազգագրագետների, աշխարհագետների, հնագետների, պատմաբանների ու լեզվաբանների ուշադրության կենտրոնում, որն առաջին հերթին պայմանավորված է բնակավայրի, դրա թաղերի ու փողոցների աշխարհագրական վայրերի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Յուրաքանչյուր գիտություն տեղանունների անվանաբանության խնդրին անդրադառնում է իր հետաքրքրության տեսանկյունից: Ազգագրական առումով անվանաբանությունը լուծում է մի շարք կարևոր խնդիրներ՝ կոնկրետ էթնիկական ընդհանրությունների տիպաբանության կենցաղամշակութային առանձնահատկու-թյունների բացահայտման, էթնոժողովրդագրական տեղաշարժերի, ինչպես և սոցիալ-քաղաքական կյանքի բազմապիսի հիմնահարցեր:

Տեղանունների անվանաբանության մեջ առանձնակի տեղ ունի բնակավայրերի, մասնավորապես քաղաքների թաղերի ու փողոցների հետազոտության խնդիրը: Ուշ միջնադարյան ժամանակաշրջանի հայկական քաղաքների անվանաբանության հիմնահարցը՝ ստեղծված սոցիալ-քաղաքական, տնտեսական

---

[21] *«Վեմ», 1934, էջ 78 :*

ծանրագույն պայմանների հետևանքով, առանձնանում է ինքնատիպ գծերով: Դրանցից առավել հատկանշականն օտար տիրապետությունների բացասական ազդեցությունն է և ռազմաավատատիրական համակարգի առկայությունը: Պատահական չէ, որ ինչպես պարսկական, այնպես էլ դրան նախորդած օտար տիրապետության պայմաններում, առանց այն էլ սակավաթիվ քաղաքները կորցնում էին իրենց ազգային ինքնատիպ գծերը, տեղանունների ազգային ավանդական անվանումները: Այնպես որ, համաշխարհային գիտության մեջ քաղաքների տեղանունների ուսումնասիրության չափորոշիչներն այս դեպքում կարող են ոչ միայն տիպական չլինել, այլև դառնալ անգործածելի, որի պատճառով հաճախ հարկ է լինում դիմել հետազոտության այլ եղանակների: Այդ հանգամանքը նկատելի է հատկապես Երևան քաղաքի համար՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ:

Հայտնի է, որ բիայնական ժամանակաշրջանում էրեբունի քաղաքամրոցի հիմնադրման վերաբերյալ սեպագիր արձանագրություններից հետո Երևանի մասին գրավոր հիշատակությունները կցկտուր են և նույնիսկ առանձին դարաշրջաններ շարունակում են մնալ իբրև Երևանի պատմության սպիտակ էջեր, հանգամանք, որ հուշում է այդ ժամանակահատվածներում, Երևանի եթե ոչ իբրև բնակավայրի չգոյությունը, ապա հաստատապես գյուղական բնակավայր լինելու իրողությունը:

Երևանի՝ որպես Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնի մասին կարելի է խոսել միայն XV դ., երբ այն սկսեց վերելք ապրել կարակոյունլու ցեղերի առաջնորդ Ջվանշիրի իշխանության օրոք: Ստացվեց այնպես, որ երբեմնի հինավուրց հայկական քաղաքը, թեև այդ ժամանակահատվածում ևս լինելով գերազանցապես հայաբնակ, իր քաղաքային կենցաղի մեջ ձեռք բերեց օտար տարրեր, որն արտահայտություն գտավ թաղերի, ավելի ուշ՝ փողոցների անվանակոչման մեջ:

Երևանի տեղանունների մասին առաջին կանոնավոր հիշատակությունները թերևս վերաբերում են XVI-XVII դդ.: Քաղաքի թաղերի, առավել ևս փողոցների անունների գործածությունն սկսվում է այդ ժամանակաշրջանում: Այդ հանգամանքը պայմանավորված է ընդհանրապես քաղաքային կյանքի աշխուժացմամբ, Երևանի պարագայում՝ Արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ վարչական միավորի համանուն խանության քաղաքական, վարչատնտեսական կենտրոնի վերածմամբ:

Երևանի կանոնավոր փողոցների մասին պարսկական տիրապետության ժամանակաշրջանում /XVI դ.-XIX դ. սկիզբ/ խոսելը դեռ վաղ է: Սակայն թաղերի հարցում հետզհետե նկատվում է որոշակիություն: Թուրք պատմագիր Իբրահիմ Փեչևին, խոսելով XVI դ. 80-ական թթ. պարսկա-թուրքական պատերազմների մասին, նկարագրում է Ջաֆեր Փաշայի կողմից Երևանի ավերումը և հարևանցիորեն անդրադառնում քաղաքի նկարագրությանը: Հիշատակվում են բերդը, ոսկեզօծ և գեղեցիկ կառուցված պալատները, գեղազարդ և ոսկեփայլ կամարներն ու ծածկերը:[1]

Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն /1655թ./ նկարագրում է Երևան քաղաքն ու բերդը: Նա կազմել է դրա հատակագիծը, որի վրա նշված են քաղաքը և ամրոցը /բերդը/, քրիստոնյա հայերի թաղը, Երկերեսանի կոչվող եկեղեցին,

---

[1] *Տես Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, h 1, Երևան, 1961, էջ 46-47:*

ժողովարանը, Զանգու գետը, Քարե կամուրջը, քարավանների մեծ ճանապարհը, Ամրոցը, որ շինել է Շահ-Սեֆինը, գետակը, որ բխում է լեռներից, Մեծ Հրապարակը, Թավրիզի և Թիֆլիսի ճանապարհները: Այս հատակագծում չկան կոնկրետ թաղերի անվանումները: Պետք է ենթադրել, որ դրանք ունեցել են անուններ, սակայն Տավերնիեն ձեռնպահ է մնացել դրանց կոնկրետ հիշատակումներից: Հատակագծից երևում է, որ ասվածը վերաբերում է արդեն գոյություն ունեցող Կոնդ և Շահար թաղերին: Ավելի հստակ ու ճիշտ է ներկայացնում Երևանը ֆրանսիացի մեկ այլ ուղեգիր՝ Շարդենը /1673/: Նա ևս մանրամասն նկարագրում է բերդը, եկեղեցիները, գետերը, այգիները, հրապարակները, սակայն չի անդրադառնում թաղերի անվանումներին: Հայ պատմիչներ Աբրահամ Երևանցու, Աբրահամ Կրետացու, Սիմեոն Երևանցու և այլոց հաղորդած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թեև թաղերը պաշտոնական անուններ չեն ունեցել, սակայն քաղաքի տարբեր նշանավոր տնտեսական, վարչական, հոգևոր կառույցների, շենքերի, հրապարակների, արհեստավորական շարքերի անուններից հաճախ շրջակա տարածքները ընկալվել են որպես առանձին թաղեր. այսպես, Մեյդանի /հրապարակ/, Ղանթարի /Շուկայի մեծ կշեռք/, Եկեղեցու, Դամրչիների (դարբինների) անուններով հաճախ բնակչությունն անվանել է ամբողջ թաղեր: Նույն սկզբունքով, ավելի ուշ՝ XIX դ. առաջացել են փողոցների անունները:

Աղբնաղբյուրների տեղեկությունների համադրությունից պարզվում է, որ 30 կմ շրջագիծ ունեցող այգեշատ Երևանը բաժանվել է երեք խոշոր մասի՝ մահալի, որոնք փաստորեն ինքնուրույն ընդարձակ թաղեր էին՝ Հին քաղաքը, Կոնդը, Քարիանքը: Վերջիններս իրենց հերթին կազմված են եղել առանձին ենթաթաղերից: Հին քաղաքը կամ պարզապես քաղաքը, պարսկական տիրապետության շրջափուլում կոչվել է Շահար /պարսկերեն՝ քաղաք/: Այն գրավել է քաղաքի հյուսիս-արևելյան մասը /ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի շենքի շրջակայքը/ և քաղաքի ամենաբարեկարգ թաղն է եղել: Կոնդը Երևանի ամենահին և հայաբնակ թաղերից էր՝ միաժամանակ հանդիսանալով դրա պատմական կորիզը: «Կոնդ» անվանումը տիպական է այն առումով, որ հասարակ անունը դառնում է հատուկ տեղանուն: Այն գրավում է քաղաքի արևմտյան բարձրադիր մասը և այդ անունն էլ ստացել է իր բարձր դիրքի պատճառով:

«Կոնդ» բառը հայերեն նշանակում է երկայնաձիգ կամ բոլորակ բլուր: Պարսիկներն այն թարգմանեցին և վերանվանեցին «Թափաբաշ»: Ըստ Հովհ. Շահխաթունյանցի, «Թաղ քաղաքիս է Կոնդ անուանեալն, զոր այլազգիք կոչեն Թէփէպաշի»:[2] Հիմնական բնակիչները հայերն են եղել: Այստեղ հետագայում բնակություն հաստատեց 100 տուն հայ բոշա: Կոնդում էին ապրում նաև Մելիք-Աղամալյանները, որոնք պարսկական տիրապետության շրջանում ստացան ազնվականական տիտղոս:

Երրորդ թաղը կոչվել է Քարիանք, որը գտնվել է քաղաքի հարավ-արևելյան մասում: XVII դ. սկզբներին այստեղ բնակություն են հաստատում պարսկական արշավանքներից ճողոպրած մեծ թվով Նախիջևանցի թուրքեր: Այսինքն՝ թաղը հիմնականում մահմեդականացած էր: Այստեղ կային երկաթով հարուստ աղբյուրներ, որից էլ կոչվել է թաղի անունը՝ Դամիր-Բուլաղ՝ Երկաթաղբյուր:

---

[2] Տես Յովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, h. 2, էջմիածին, 1842, էջ 146:

Հետագայում քաղաքն ընդարձակվեց շրջակայքի գյուղերի հաշվին, իսկ բուն քաղաքի տարածքում առաջացան նոր թաղեր: Առաջինը քաղաքին միացվեց Ձորագյուղը, որը գտնվում էր Հրազդանի ձորի ձախ զառիվեր ափին: Ըստ Զաքարիա Սարկավագի, այն նախկինում անվանվել է Խնկելո ձոր կամ Խնկաձոր[1]: «Գնացի ես Խնկելոյ ձոր, -գրում է Սիմեոն Երևանցին,- որ այժմ ասի Ձորագեղ»:[2] Ենթադրվում է, որ Խնկելո Ձոր կամ Խնկաձոր տեղանունը կապվում է այստեղ կաթողիկոսի ժամանակավոր աթոռանիստի՝ Երևանի եպիսկոպոսանիստի գտնվելու հանգամանքի հետ, որտեղ տեղի են ունեցել քաղաքի հիմնական բնակչության կրոնական տոները՝ հատկապես ջրօրհնեքը: Վերոհիշյալ ժամանակաշրջանում Ձորագյուղի անունը թարգմանաբար վերածվեց Դարաքենդի: Նրա բնակիչները բացառապես հայեր էին: Ձորագյուղն էլ իր հերթին ուներ ենթաթաղեր՝ Վերին կամ Քարափի թաղ, Ստորին կամ Ձորի թաղ և Կարբիի կամ Կարբո թաղ: Եթե առաջին երկուսը տեղանքի հետ կապված տեղային անվանումներ էին, ապա վերջինս այդպիսին լինելով հանդերձ, անունը ստացել էր որոշակի ազգագրական խմբի Կարբի գյուղի բնակիչների այդ տարածքում բնակվելու պատճառով: Ենթաթաղերը, որպես կանոն, չունեին պաշտոնական անվանումներ, և դրանց բնակիչները տալիս էին մշտապես փոփոխվող պայմանական անուններ:

Նորքը, որը հայերեն նշանակում է նորատունկ այգի, պարտեզ[3], պարսկական տիրապետության շրջանում ստացավ նոր անվանում՝ Չոլմաքչի /բրուտ/, որը չնայած պաշտոնապես Երևանին միացվեց 1837թ., սակայն վերը նշված ժամանակաշրջանում Երևանի փաստական թաղերից էր՝ այգեգործությամբ և խեցեգործությամբ զբաղվող հայ բնակիչներով:

Հաջորդ թաղը կոչվում էր Շենթաղ: Աա թերևս ավելի ուշ առաջացած թաղերից է և հիմնականում զբաղեցրել է ներկայիս Մովսես Խորենացու փողոցին հարող տարածքը: Այն ընդգրկում էր նաև Անգլիական այգին, որը վերոհիշյալ ժամանակ ճահճուտ էր:

Պայմանավորված քաղաքային կյանքի աշխուժացմամբ՝ XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբին նկատվում է քաղաքի հետագա ընդարձակում, նոր թաղերի հիմնադրում: Հայաստանի տարբեր շրջաններից, հարևան երկրներից, քաղաքներից, գյուղերից քաղաքական, տնտեսական և այլ շարժառիթներով Երևանում բնակություն հաստատած հայ արհեստավորների և առևտրականների կողմից ստեղծվում են նոր թաղեր. Գետառի ափին բնակություն են հաստատում Սպահանից եկած հայեր և այդ թաղն անվանվում է Սպահանցոց թաղ: 1795թ. Աղա Մահմադ խանի արշավանքից փախած չարբախցիները Երևանում կազմում են նոր թաղ՝ Չարբախցոնց թաղը:

Երևանի աշխարհագրական անուններում արտացոլված է նաև առանձին թաղերի տնտեսության բնույթը, բնակիչների արհեստն ու զբաղմունքը: Այդպիսին էր Շիլաչի անունը: Այս անվամբ նկատի են ունեցել արհեստավորների այն շարքը, որտեղ գտնվել են կարմիր ներկող ներկարարներ: Վերոհիշյալ ժամանակաշրջանում հանդես են գալիս Բոյախչիների, Մաշկարարների, Դամրչիների և այլ թաղեր:

---

[3] Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ II, Վաղարշապատ, 1870, էջ 32, 51:

[4] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 20:

5 Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. II, Եր., էջ 1083.

Երևանն ուղեգիրների և այլոց վկայությամբ, տիպիկ ասիական քաղաք էր, ծուռումուռ, ոչ հատակագծված, անվանագուրկ, փոշոտ «փողոցներով», որոնք ավելի շուտ հիշեցնում էին անցուղի-նրբանցքներ, քան արդի հասկացությամբ փողոցներ: Հաճախ նկատվում էին հողաշեն տների, անբարեկարգ անցուղիների արագ վերափոխումներ, որոնց պատճառ կարող էին ծառայել նաև բնական աղետները, մասնավորապես երկրաշարժերը /օր. 1679թ./: Այդ իմաստով, թեև թաղերը ևս հաճախ վերափոխվում էին, սակայն պահպանում էին իրենց ավանդական մնայուն անվանումները:

Մի կարևոր հանգամանք ևս. մեր դիտարկումները ցույց տվեցին, որ շատ հաճախ տվյալ տեղանքի կարևոր օբյեկտը կարող է ոչ միայն թաղերի /Ղանթար, Բաղնիք, Մեյդան/, այլև նոր, կանոնավոր փողոցների անվանումների /Բաղնիքի, Եկեղեցու, Շուկայի և այլ փողոցներ/ հիմք հանդիսանալ:

Այսպիսով, փորձելով ի մի բերել պարսկական տիրապետության ժամանակահատվածում /XVI-XIXդդ./ Երևանի տեղանունների անվանաբանության վերլուծությունը, կարելի է մատնանշել հետևյալ առանձնահատկությունները

1.Օտար լեզվա-մշակութային, կենցաղային ազդեցությամբ Երևանի տեղանունների զգալի մասը թարգմանաբար ձեռք է բերում այլալեզու անվանում՝ Թափաբաշ /Կոնդ/, Շահար /քաղաք/, Դարաքենդ /Ձորագյուղ/, ընդ որում թաղերի էթնիկ խմբերը նախորդ ժամանակահատվածի նման շարունակում են մնալ հայերը:

2.Պահպանվում են նախորդ ժամանակներից քաղաքների թաղերի ու փողոցների անվանումների առաջացման ավանդական ձևերը. անվանակոչումներն ըստ արհեստավորական մասնագիտությունների, ինչպես միջնադարյան Անին ուներ Նալբանդնոց, Կոշկակարանոց, Դարբնափողոց անվանումները, այպես էլ Երևանում հանդես են գալիս Չիլաչին, Բոյախչին, Դամրչին, Չոլմաքչին և այլն, միայն թե օտար հորջորջմամբ:

3.Տեղանունների ծագման ավանդական եղանակներից էր աշխարհագրական գործոնը, երբ կոնկրետ տեղանքի անունը փոխանցվում էր թաղերին՝ Ձորագյուղ, Կոնդ և այլն:

4.Դիտարկումները ցույց են տալիս, որ պարսկական շրջանում գրեթե բացակայում են նշանավոր մարդկանց անուններով թաղերի անվանումների առաջացման դեպքերը: Հատկանշական է, որ այդ նույն ժամանակամիջոցում այս երևույթը Արևմտյան Հայաստանի քաղաքներին խիստ տիպական էր, օրինակ՝ Կարսի 17 թաղերի մեծագույն մասը, որոնք գերազանցապես հայաբնակ էին, կրում էին տարբեր փաշաների կամ աղաների անուններ՝ Յուսուֆ փաշա, Իբրահիմ աղա Մեհլեսի, Վարդան օղլու և այլն [1]:

5.Հաջորդ առանձնահատկությունը պայմանավորված էր ռազմա-քաղաքական բարդ իրավիճակով /մասնավորապես պարսկա-թուրքական պատերազմներ, բռնագաղթ/, որը ծնում էր ժողովրդագրական տեղաշարժեր. այդ ամենի արդյունքում Երևանում առաջանում են նոր թաղեր Հայաստանի պատմա-

---

[1] Վրաստանի Հանրապետության Պատմության Կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 2, ց. 1, գ. 2390, թ. 3-12 և Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, էջ 120:

ազգագրական տարբեր մարզերի, քաղաքների անվանումներով՝ Սպահանցոց, Ղարաբաղցոց թաղ և այլն:

6.Թաղերի ու փողոցների անվանումների առաջացման մյուս կարևոր եղանակը քաղաքային կյանքի կենցաղային, հասարակական կարևոր վայրերի անունների ընդօրինակումն ու ընդհանրացումն էր. Մեյդան /Հրապարակ/, Ղանթար /շուկա/, Բաղնիք և այլն:

7.Երևանի անվանաբանության հետ առնչվող այս առանձնահատկությունները պահպանվեցին նաև XIX դ. առաջին կեսին և սկսեցին էական փոփոխություններ կրել միայն դարի երկրորդ կեսից՝ ռուսական վարչաքաղաքական համակարգի հաստատմամբ:

ՄԱՆՈՒԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումից հետո երկրի սոցիալ-տնտեսական կյանքում և ազգային քաղաքականության մեջ դրական փոփոխություններ տեղի չունեցան: Ընդհակառակը, էլ ավելի վատթարացավ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ծայրահեղորեն սրվեցին ազգամիջյան հարաբերությունները:

Ստղծված պայմաններում հնչակյան կուսակցությունը որոշակի փոփոխության ենթարկեց իր ծրագրային դրույթներն ու խնդիրները: Կուսակցությունն այդ ժամանակահատվածում նպատակահարմար համարեց հայկական անկախ պետություն ստեղծելու ծրագրային պահանջի փոխարեն բավարարվել ինքնավար Հայաստան ստեղծելու պահանջով: Հասկանալի է, որ ծրագրային այդ փոփոխությունները ամենևին չէին կարող ազդել երիտթուրքերի՝ հնչակյանների հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա, ընդհանրապես փոխել հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ իրենց դիրքը: Նրանք շարունակեցին հայահալած գործողությունները, որոնք այս անգամ հատկապես ցայտուն դրսևորվեցին նրանց կազմակերպած Ադանայի հայկական սարսափելի կոտորածների ժամանակ:

Հայտնի արևելագետ Էռնեստ Վերների բնութագրմամբ Ադանայի հայության նկատմամբ իրագործված կոտորածները, որոնց զոհ գնաց ավելի քան երեսուն հազար հայ «հանդիսացավ գլխավոր փորձ՝ ամբողջ արևմտահայության ցեղասպանության իրագործման համար»[1]: Երիտթուրքերի իշխանության տարիներին հնչակյան գործիչների՝ Ստեփան Սապահ-Գյուլյանի, Համբարձում Պոյաճյանի /Մեծն Մուրատ/ մատնանշած՝ արևմտահայությանը և Թուրքիայում բնակվող մյուս ոչ թուրք ժողովուրդներին վերաբերող կենսական խնդիրները ոչ միայն մնացին չլուծված, այլև նրանց վիճակը գնալով ավելի ու ավելի վատթարացավ:

---

[1] *Werner E. Die Armeniergreuel 1915/1916-ein armenisches Greuelmärchen?, (Zeitshrift für Geschichts wissen schaft), XXI Jahrgang, 1973, Heft 2, Berlin, S 29.*

1911 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը Սալոնիկում տեղի ունեցավ «Իթթիհաթ վե թերաքքի»/ «Միություն և առաջադիմություն»/ կուսակցության չորրորդ համագումարը, որին մասնակցում էին երիտթուրքական գրեթե բոլոր ակտիվ գործիչները` Էնվերը, Թալեաթը, Հալիլը, Սադըքը, Նազըմը, Զիա Գյոք Ալպը և այլք: Համագումարը, ղեկավարվելով պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, հատկապես Նազըմի և Թալեաթի պնդմամբ առաջ քաշեց կայսրության հպատակ ժողովուրդներին ձուլելու, թուրքացնելու խնդիրը[1]:

Յո.Լեփսիուսը մեջբերում է կատարում Սալոնիկի համագումարի ընդունած որոշումից հետևյալ հատվածը. «Վաղ թե ուշ թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդները պետք է թուրքացվեն, սակայն արագացման համար դա անհրաժեշտ է իրագործել զենքի միջոցով... Կայսրության մյուս ազգությունները արժանի չեն ուշադրության... Նրանք կարող են պահպանել իրենց կրոնը, բայց ոչ իրենց լեզուն: Թուրքական լեզվի պարտադիր լինելը կարևոր միջոց է թուրք ազգի մեջ ձուլելու համար»[2]:

Հանգամանորեն վերլուծելով երիտթուրքերի քաղաքականությունն ու գործողությունները արևմտահայության նկատմամբ, Յո.Լեփսիուսը գրում է, որ Սալոնիկում ընդունված ծրագրով «հայ զինվորական ծառայողները պետք է ասիտճանազրկվեին, իսկ հայ մտավորականների նկատմամբ պետք է կիրառվեին հալածանքներ»[3]:

Կարևոր է այն հարցը, թե այդ ժամանակ ինչ դիրքորոշումներ ունեին հնչակյանները և հայ քաղաքական մյուս կուսակցությունները իթթիհաթական վարչակարգի նկատմամբ:

1907 թվականի դեկտեմբերի 27-29-ը Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համագումարում հիմք դրվեց երիտթուրքերի ու դաշնակցության դաշինքին, որը պահպանվեց մինչև 1913 թվականը: Սահմանադիր-Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունները ևս աջակցում էին երիտթուրքերին: Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը 1908-ի սեպտեմբերի 12-ին հրապարակած իր պաշտոնական հայտարարության մեջ համերաշխության և համագործակցության ջերմ ցանկություններ էր արտահայտում իթթիհաթականների նկատմամբ: Հայտարարության մեջ գրված էր, որ իթթիհաթականները «դեռ երեկ հրեշավոր բռնակալության մը դեմ արիաբար մաքառեցան ու այսօր ազատության անհողդողդ ախոյանը մնալ կշարունակեն անխտրական գնահատելի ոգով»[4]: Այդ հայտարարության մեջ իթթիհաթականների կողմից իրագործված հեղաշրջումը Վերակազմյալների կողմից բնութագրվում էր, որպես «համերաշխ ու հավաքական շարժում, Վերակազմյալները երիտթուրքական հեղաշրջումից հետո հրաժարվեցին Հայաստանի ազատագրության գաղափարից և կանգնեցին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման դիրքերում: Փաստաթղթում ընդգծված էր, որ «Վերակազմյալ Հնչակյան Կուսակցությու-

---

1 Տես Гурко-Кряжин В. История революции в Турции. М., 1973, с. 200.
2 Lepsius J., Bericht über die lage des armenischen Volkes in der Türkei. Tempelverleq in Potsdam, 1916, S. 220.
3 Lepsius., Deutschland und Armenien 1914-1918. Sammlind diplomatischer Aktenstücke. Potsdam. 1919, S. XVII.
4 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.282, ց.1, գ.2, թ. 1:

նը որևէ անջատողական ձգտում և նպատակ չունի»[1]: Այսպիսով, վերակազմյալները հանդես էին գալիս արևմտահայերի «կրոնական և կրթական առանձնաշնորհումները»[2] պաշտպանելու օգտին:

Փաստորեն հայ քաղաքական կուսակցություններից միայն Հնչակյան Կուսակցությունը սկզբունքորեն հրաժարվեց երիտթուրքերի հետ ամեն տեսակի հարաբերություններից ու համագործակցությունից:

1911 թվականի նոյեմբերի 21-ին ստեղծվում է իթթիհաթին ընդդիմադիր «Հուրիեթ վե իթիլաֆ»/«Ազատություն և համաձայնություն »/կուսակցությունը, որի շուրջը համախմբվում են երիտթուրքական վարչակարգի նկատմամբ հունական և բուլղարական ընդդիմադիր կազմակերպություններ: 1912 թվականի փետրվարի 3-ին հնչակյան և իթիլաֆ կուսակցությունների միջև կնքվում է համագործակցության պայմանագիր[3]: Այդ փաստաթղթի ստորագրումը պայմանավորված էր նրանով, որ իթթիհաթը իր գործողություններով խափանում էր Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարեփոխումները,իսկ հնչակյանները չէին ցանկանում ընկնել երիտթուրքական ծուղակի մեջ:Իրենց հայատյաց քաղաքականությամբ ու գործողություններով երիտթուրքերը կտրականապես մերժում էին Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարեփոխումների իսկ գաղափարը[4]: Հնչակյանները հույսեր ունեին,որ իթիլաֆականների հետ սերտ հարաբերություններ հաստատելով կարող են համատեղ ուժերով պայքարել իթթիհաթականների քաղաքականության ու գործողությունների դեմ: Համաձայնագրի տեքստում նշված էր. «Օսմանյան պետության բաղկացուցիչ ազգությունների քաղաքական իրավունքները ամբողջությամբ պետք է պաշտպանվեն և լիովին պետք է մերժվի մեկ ազգի քաղաքական ստորադասումը մյուսի կողմից»[5]: Մեր կարծիքով իթիլաֆականների հետ համագործակցելու հնչակյանների որոշումը ճիշտ էր, քանի որ նրանք դաշինքի մեջ մտան այն քաղաքական ուժի հետ, որը պայքարում էր բացահայտ հայատյաց քաղաքականություն վարող իթթիհաթի դեմ:

Հնչակյանները սերտ համագործակցության մեջ են մտնում թուրք իշխան Սաբահեդդինի հետ, որը Ս.Սապահ-Գյուլյանի հետ հանդիպման ժամանակ ասել էր. «Ես ուղղակի զարմացած եմ՝ ինձ հետ էլ շատ եվրոպացիներ: Հայ ազգը ինչպե՞ս կարող է հարգանք պահանջել,երբ Ադանայի կոտորածից հետո էլ, դեռ մեծամասնությամբ,իթթիհաթի կողմն է բռնում:

Դաշնակցականները ինչպես սեղմեցին իթթիհատական արյունոտ, եղեռնագործ ձեռքը և նրանց հետ համաձայնություն կնքեցին: Հայ ազգը, որը անհաշտ դիրք պիտի բռներ, ընդհակառակը՝ ամենից ավելի զիջող, տեղի տվողը եղավ…: Սա ուղղակի զարհուրելի է և շատ վատ վկայական մի ազգի համբավի համար…:

Այս շրջանի մեջ հայ ազգի պատիվը փրկեցին միայն Ս. Դ. Հնչակյանները[6]:

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

[3] *ՀՀ ՀԿՔՓ ԿՊԱ,Ֆ.4045,ց.167,թ.1:*

[4] *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1929) Материалы Политического архива МИД Кайзеровской Германии. Ереван, 1995, с. 134-135,под редакцией Вардгеса Микаеляна.*

[5] *ՀՀ ՀԿՔՓ ԿՊԱ,Ֆ.4045,ց.167,թ.1:*

[6] *Ս. Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, (Բ. կպագրություն), Բեյրութ, 1974, էջ 290:*

Հնչակյանները առարկում են իշխանին, ասելով, որ պետք չէ Իթթիհատի ռե.ո համագործակցության մեջ մեղադրել ողջ հայ ժողովրդին, որ հայության մեծ մ.ասը ատելությամբ է լցված Իթթիհատի նկատմամբ:

Այն ժամանակ, երբ հայրենիքի և ժողովրդի ճակատագրով լրջորեն մտահոգված հայ քաղաքական միտքն ստեղծված ծանրագույն կացությունից դուրս գալու ելքեր էր որոնում, միջազգային իրադարձությունը գնալով բարդանում էր: 1912 թ աշնանը բալկանյան չորս երկրները՝ Չեռնոգորիան, Սերբիան, Հունաստանը, Բուլղարիան պատերազմ սկսեցին թուրքական բռնակալության դեմ նպատակ ունենալով վերջնականապես վերացնել Բալկաններում Օսմանյան կայսրության ձեռքում մնացած ոչ մեծ տիրույթները: Պատերազմն ավարտվեց Բալկանյան պետությունների հաղթանակով: Պատերազմին մասնակցություն ունեցավ հայ կամավորներից բաղկացած մի վաշտ՝ Անդրանիկի ու Գարեգին Նժդեհի գլխավորությամբ:

Ելնելով հայության չափազանց ծանր վիճակից և զգալով արյունահեղ պատերազմի մոտալուտ շունչը, հնչակյաններն իրենց կենտրոնական վարչության անունից 1913թ. հունվարի 30-ին Փարիզում հանդես եկավ Եվրոպայի տերություններին ու ժողովուրդներին ուղղված կոչով, ուր ասվում էր, որ Հնչակյան Կուսակցությունը, որ իր հիմնադրման օրից քսանհինգ տարիներ շարունակ հանդիսանում է հայ ժողովրդի շահերի և արդարացի ձգտումների արտահայտիչը, խիստ բացասաբար է տրամադրված ցանկացած նվաճողական իմպերիալիստական պատերազմի նկատմամբ, այն համարելով ոճրագործություն:

«Մենք կրում ենք մեր սրտերում անհաշտ և անսահման ատելություն դեպի այն պատերազմները, որոնց նպատակն է՝ հափշտակություն, նվաճում և մի ազգի տիրապետությունը մյուսի վրա»[1], - ասված էր կոչի մեջ:

Նախապատերազմյան շրջանում հնչակյանների դիրքորոշումները ցայտուն արտահայտություն են գտել 1913թ. Կոստանցայում (Ռումինիա) տեղի ունեցած կուսակցության 7-րդ պատգամավորական ժողովում: Ժողովի պատգամավորները գտնում էին, որ երիտթուրքերը ոչ մի դրական տեղաշարժ չեն արձանագրել հայ ազգաբնակչության կյանքում: Ավելին, նրանց վարած ծայրահեղ հետադիմական քաղաքականությունը, ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ խտրականությունը և վայրագություններն էլ ավելի են սրել երկրի ներքին հակասությունները:

Հաշվի առնելով, որ կայսրությունում լեգալ քաղաքական գործունեություն ծավալելու հնարավորություն չկար, ժողովը որոշեց անցնել անլեգալ գործունեության: Պատգամավորական ժողովն առաջ քաշեց Հայաստանի ինքնավարության պահանջը: 7-րդ պատգամավորական ժողովը հստակություն մտցրեց հայ իրականության մեջ գործող քաղաքական մյուս կազմակերպությունների հետ Հնչակյան Կուսակցության հարաբերությունների հարցում: Ժողովն իր բոլոր կառույցներին, բոլոր ղեկավար մարմիններին հանձնարարեց որևէ հարաբերություն կամ համագործակցություն չունենալ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ:

---

[1] *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1962 Ա. հատոր, Պեյրութ, 1962, էջ 352:*

Մինչև 1914թ-ը., երեսուն տարուց ավելի աշխարհի հզոր պետությունները իր պատմական հայրենիքում բնակվող արևմտահայությանը բարեփոխումներ իրականացնելու հույսեր էին ներշնչում, սակայն առատ խոստումներով, հավաստիացումներով կերակրվելուց հետո արևմտահայությունը դառը հիասթափություն էր ապրում, քանի որ մեծ պետությունների կառավարողներն իրենց խոստումները այդպես էլ գործի չէին վերածում:Մեծ տերություններից միայն Ռուսաստանն էր, որն իր ճկուն դիվանագիտությամբ հասավ Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրագործելու փաստաթղթի ստեղծմանը և ստորագրմանը: 1914թ. հունվարի 26-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց պայմանագիր Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրագործելու մասին: Արևմտահայությանը այս անգամ էլ չվիճակվեց խաղաղ բարեփոխումների իրականացման ճանապարհով իր պատմական հայրենիքում ունենալ խաղաղ կյանքը, աշխատանքը և մարդկային արժանապատվությունը պաշտպանող երաշխիքներ: Երիտթուրքական կառավարողները ծախողման մատնեցին այդ բարեփոխումների ծրագրի իրականացումը:

Այդ ճակատագրական, դժվարին ու բարդ պայմաններում, 1914թ. հուլիսի 24-ին, երբ առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն մնացել էր շատ կարճ ժամանակ, Կոստանդնուպոլսում տեղի է ունենում Հնչակյան Կուսակցության Թուրքիայում գործող մասնաճյուղերի երրորդ պատգամավորական ժողովը, որը, ելնելով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունից ու գործողություններից, որոշում է ընդունում դիմել արևմտահայության ինքնապաշտպանությանը՝ հնարավոր բոլոր միջոցներով[1]:

Այդ ժամանակ հնչակյան որոշ կառույցներ Կոստանդնուպոլիսում գործող կուսակցության վարիչ մարմնի մեղադրում էին իշխող երիտթուրքական վարչակարգի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք դրսևորելու համար: Ժողովը փաստորեն հրավիրվեց կուսակցության վարիչ մարմնի գործունեությունից դժգոհ մասնաճյուղերի պարտադրանքով: Պատգամավորական ժողովը տևում է մինչև նույն թվականի օգոստոսի վերջերը: Նրա նպատակն էր որոշել, թե Թուրքիայում գործող մասնաճյուղերը ինչպիսի վերաբերմունք պետք է ունենային երիտթուրքական իշխանությունների նկատմամբ: Ընդունվեց կարևոր մի շրջաբերական, որը, ցավոք, ժողովից մեզ հասած թերևս միակ փաստաթուղթն է: Ժողովում ընդունված փաստաթղթերի ամբողջ թղթածրարը բռնագրավվել է Թուրքական իշխանությունների կողմից: Շրջաբերականի մեջ նշված էր. «Համաշխարհային պատմության մեջ նմանը չտեսնված, խիստ լուրջ և կարևոր շրջանի մեջ ենք գտնվում: Որոշ ժամանակ անց քաղաքակիրթ աշխարհը պատերազմի խեղդիչ ճնշման տակ է տառապելու: Անցյալի հողի վարչակարգերից ծնած չարիքի արդյունքն է ներկայի տագնապը: Հիշյալ արխարհասասան փոթորիկի ժամանակ Թուրքիայի ենթակա ազգերի և մանավանդ մեր դժբախտ ժողովրդի ճակատագրի վրա կատարվելիք ահռելի ավերի արդյունքը պիտի կրենք շուտով»[2]:

Պատմական ճատագրի դաժան քմահաճույքների պատճառով բազմաչարչար հայ ժողովուրդը շուտով պետք է նետվեր մի մեծ համաշխարհային ար-

---

[1] Պատմութիին Ս. Դ. Հնչակեան կուսակցության, 1887-1962, Ա. հատոր, Պեյրութ, 1962 էջ 374:

[2] Նույն տեղում, 1962 էջ 375:

հավիրքի I համաշխարհային պատերազմի մեջ: Այդ արյունալի պատերազմի իրադարձությունների մեջ հայ ժողովրդի բոլոր հասարակական շերտերի, քաղաքական կուսակցությունների, հոսանքների հետ միասին անմասն չէր մնալու նաև հայ ժողովրդի ազատագրության գործի համար մաքառող Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը:

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1914-1916թթ.)

Հայ ժողովուրդն ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ առաջին համաշխարհային պատերազմին: Պաշտոնական տվյալներով Ռուսաստանի յուրաքանչյուր 100 հայից 13-ը զորակոչվեցին բանակ: Ռուսական կայսրության 2 միլիոն 54 հազարանոց հայ ազգաբնակչությունը պատերազմի տարիներին ռուսական բանակին տվեց ավելի քան 250 հազար զինվոր[1]: Դրանից բացի, պատերազմի տարիներին Կովկասյան ռուսական բանակի կազմում ստեղծվեցին հայկական կամավորական խմբեր, որոնց մարտիկները իրենց գործած սխրանքներով ու հերոսությամբ արժանի ավանդ ներդրեցին թուրքական զորքերի նկատմամբ Կովկասյան ճակատում ռուսական բանակի տարած հաղթանակներում, նպաստեցին ռուսական զենքի փառքի տարածմանը: 1914-1916թթ. Կովկասյան ճակատի մարտական գործողություններում հատկապես աչքի ընկավ Դրոյի /Դրաստամատ Կանյանի/ հրամանատարությամբ գործող հայկական 2-րդ կամավորական խումբը:

Հայկական 2-րդ կամավորական խումբը, որի կազմում կար 472 մարդ, որից 354-ը արևելահայ, իսկ 118-ը արևմտահայ, ռազմի դաշտ մեկնեց 1914թ. հոկտեմբերի 25-ին: Դուրս գալով Իգդիրից խումբը գործուղվեց գեներալ Նիկոլաևի գլխավորած Բայազետյան ռուսական զորաջոկատ, որն այդ ժամանակ գտնվում էր Կըզըլդուզում՝ Բայազետի մոտ: Առաջին ընդհարումը հակառակորդի հետ խումբը ունեցավ հոկտեմբերի 30-ին, Թափարիզի լեռնանցքի մոտ: Հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը, երկու օր տևած այդ ծանր մարտում, խումբը գրավեց Գյավրե-Շամի գյուղը: Այդ ճակատամարտի նոյեմբերի 1-ի վիրավորվեց խմբի հրամանատար Դրոն, որին ժամանակավորապես փոխարինեց՝ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան):

Հայկական 2-րդ խմբի Գյավրե-Շամիի հաջող մարտական գործողությունները համընկան Բասենի դաշտում՝ Մդինղվանի և Հոպիկի ուղղությամբ գործող ռուսական զորքերի ունեցած անհաջողությունների և դեպի Յուզ-Վերան նրանց նահանջի հետ: Այդ իսկ պատճառով, նոյեմբերի սկզբին, գեներալ Նիկոլաևի առաջ անցած զորաջոկատին հրամայվեց հետ քաշվել դեպի սահմանային լեռը: Հայկական 2-րդ խմբին կարգադրվեց թողնել Գյավրե-Շամին և Թափարիզի լեռնանցքով շարժվել դեպի Կըզըլդուզ-Ալաշկերտի Ղարաքիլիսա, այստեղ գործող գեներալ Աբացիևի զորաջոկատին միանալու համար: Գեներալ Աբացիևը հայկա-

---

[1] Ղորղանյան Գ., Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917թ.թ., Հայրենիք, Բոսթոն, 1927, № 2, էջ 12:

կան 2-րդ խմբին հանձնարարեց կենտրոնանալ Դուտագ գյուղում՝ Կըզլ-Գյադուկից հարավ, թուրքերի կողմից ուժգին կրակի տակ առնված դիրքերը պաշտպանելու համար: Ամրանալով այս դիրքերում, խումբն իրականացրեց պահակային և հետախուզական ծառայություն: Գեներալ Աբացիևի զորաջոկատի կազմում մինչև 1914թ. դեկտեմբերի 13-ը, հայկական 2-րդ կամավորական խումբը մասնակցեց 9 մարտերի: Նոյեմբերի 22-ին, 24-ին, 28-ին և դեկտեմբերի 7-ին՝ Դութագի շրջանում և Տինտինում, դեկտեմբերի 10-ին՝ Դերեկի շրջանում, իսկ դեկտեմբերի 11-ին, 12-ին և 13-ին՝ կրկին Տինտինում[2]: Խումբը ստեղծված դիրքերը շուտափույթ թողեց սարիղամիշյան դեպքերի հետ կապված, ռուսական բանակի ընդհանուր նահանջի մասին հրամանի համաձայն: Այդ նահանջի ժամանակ, չափազանց ծանր պայմաններում, հայկական 2-րդ կամավորական խումբն ուղարկվեց թիկունք՝ հանգստի և համալրման: Մի շարք մարտերում հասնելով հաղթանակի, միայն 1914թ. հոկտեմբերի վերջից մինչև դեկտեմբերի 13-ը, 24 օր տևած կռիվներում, խումբն ունեցել էր մարդկային զոհեր, տվել էր 13 սպանված և 29 վիրավոր[3]:

Կամավորական 2-րդ խմբի թիկունք վերադառնալուն պես ավարտվում է Կովկասյան ճակատում նրա գործունեության առաջին շրջանը (այդ խմբի մասնակցությունը մարտական գործողություններին կարելի է պայմանականորեն բաժանել երեք շրջանի, որոնցից 1-ինը տևում է մինչև 1915թ. հունվար, 2-րդը՝ 1915թ. ապրիլից մինչև հուլիս և 3-րդը՝ 1915թ. սեպտեմբերից մինչև 1916թ. հունիս):

1915թ. ապրիլին հայկական 2-րդ խումբը վերակազմավորվեց, համալրվեց և մտավ Վարդանի /ԱարգիսՄեհրաբյանի/ գլխավորած Արարատյան զորաջոկատի մեջ:

1915թ. ապրիլի 15-ին 2-րդ կամավորական խումբը Արարատյան զորաջոկատի կազմում (1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ խմբեր, 2300 հետևակ և 500 հեծյալ կամավորական) Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ դուրս գալով Երևանից ուղևորվեց դեպի Էջմիածին, որտեղ Գևորգյան ճեմարանի բակում, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի մասնակցությամբ, տեղի ունեցավ զորաջոկատի երդման հանդիսավոր արարողությունը: Էջմիածնից զորաջոկատը ուղևորվեց Իգդիր՝ Չինգիլի լեռնանցքի ուղղությամբ: Ապրիլի 21-ին հասնելով Կըզլդուզ, Արարատյան զորաջոկատը ներգրավվեց գեներալ Նիկոլաևի գլխավորած Բայազետի ռուսական զորաջոկատի կազմում: Այդ զորաջոկատին Կովկասյան բանակի հրամանատարի՝ ապրիլի 24-ի հրամանով կարգադրված էր անցնել թուրքերի գրաված Տափարիզի կիրճը (Բայազետից դեպի հարավ) և, ճեղքելով թուրքական զորքերի դիմադրությունը, բացել Վան տանող ճանապարհը: Այս խնդիրը իրականացնելու նպատակով, դեռևս ապրիլի 23-ի հրամանի համաձայն, Բայազետի զորաջոկատը բաժանվեց 3 զորաշարասյան: Զորաջոկատի աջ շարասյանը, որի հիմքը կազմում էր հայկական 2-րդ կամավորական խումբը 1022 մարդ, որոնցից 678-ը արևելահայեր էին, իսկ 344-ը՝ արևմտահայեր, Դրոյի գլխավորությամբ, հանձնարարվեց եղած ուժերով ապրիլի 24-ին դուրս գալ Զուրավա գյուղից և շարժվել Աարին-գյոլ լճի ուղղությամբ, ապա ետ շպրտել հակառակորդին Աարին-գյոլ և Դասին-գյոլ լճերի մոտից: Առաջին ընդհարումը հակառակորդի հետ 2-րդ խումբը ունեցավ 1915թ. ապրիլի 24-ին՝ Քյալասարում,

---

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Պետական Կենտրոնական Պատմության Արխիվ (այսուհետև ՀՀ ՊԿՊԱ), գ. 16, թ. 3:
[3] Նույն տեղում, գ. 3, թ. 8:

երկրորդը Դասին-գյուղում ապրիլի 25-ին, երրորդը ապրիլի 28-ին՝ Բայազետասոյի մոտ[4]:

1915թ. մայիսի 1-ին, գեներալ Նիկոլաևը հրահանգեց Վարդանին անմիջապես «շարժվել դեպի Վան, այնտեղ պաշարված հայերին ազատագրելու համար»: Նույն օրը, կատարելով զորաջոկատի հրամանատարի հրահանգը, Արարատյան զորաջոկատը՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերով, ապավինելով միայն սեփական ուժերին (Բայազետի զորաջոկատի մնացած զորամասերը Արճեշը գրավելու համար ուղարկվել էին գեներալ Աբացիևի տրամադրության տակ, վերջիններիս համառ դիմադրություն էին ցույց տալիս Ջելան-Դարասիի զինված քրդերը), առանց հրանոթի և գնդացրի, շարժվեց առաջ՝ Վանի ուղղությամբ և քրդերի հետ ունեցած երկարատև, թեժ մարտերից հետո գրավեց Վանի մոտ գտնվող Քոսուր, Շևեքյար, Դերկաշեն, Փանզ և մի շարք այլ գյուղեր: Հաջորդ օրը՝ մայիսի 2-ին, Արարատյան զորաջոկատը, ընդունելով համապատասխան մարտական կարգ (2-րդ խումբը ձախ թևում, 4-րդը՝ կենտրոնում, իսկ 3-րդը՝ աջ թևում), շարունակեց իր առաջխաղացումը և արյունահեղ կռիվներից հետո հասավ մինչև Թիմարի շրջան: Այստեղ հայկական 3-րդ խումբը քրդերի հետ ունեցած թեթև կռիվներից հետո գրավեց Աստվածածին գյուղը և շարժվեց ավելի խորը դեպի հարավ: Միևնույն ժամանակ 4-րդ հայկական խումբը թշնամու հետ ունեցած մի քանի թեթև ընդհարումներից հետո շարժվեց Արթավե և Պողոս գյուղերի ուղղությամբ և դուրս եկավ Արչակ լճի արևմտյան հատված, Քըզլջա գյուղի մոտ: Հայկական 2-րդ խումբը նույն օրը երեկոյան գրավեց Հասփիշատ գյուղը (Վանա լճի հյուսիսում): Քրդերը, որոնք դիրքեր էին բռնել Ջանիկ-Քեյբյաբիկ-Աճբուլաղ գծի վրա, չկարողանալով լուրջ դիմադրություն ցույց տալ հայ կամավորներին, նահանջեցին և դիրքեր գրավեցին Խոշաբում: Թշնամու այս ճակատի դիմադրությունը ճեղքվեց հայկական 4-րդ կամավորական խմբի արագ առաջխաղացմամբ: Հայ կամավորները, ներխուժելով հակառակորդի ուժերի կենտրոն, փախուստի մատնեցին թշնամուն: Խոշաբի գրավմամբ որոշվեց նաև Վանի ճակատագիրը: 1915թ. մայիսի 3-ից 4-ը Վանի շրջակայքում քրդերի հետ տեղի ունեցան մի շարք կարճատև, բայց արյունահեղ մարտեր, որից հետո, Արարատյան զորաջոկատի 2-րդ և 4-րդ հայկական կամավորական խմբերի հեծյալ զորամասերը Խեչոյի ընդհանուր հրամանատարությամբ մոտեցան Վանի մատույցներին և մայիսի 5-ի երեկոյան առաջիններից մտան Վան: Գեներալ Նիկոլաևի՝ Բայազետի զորաջոկատի մյուս զորամասերի հանդիսավոր մուտքը Վան քաղաք տեղի ունեցավ մայիսի 6-ին:

Վանի ազատագրումից անմիջապես հետո հայկական 2-րդ խումբը Վանից անցավ Շատախ, և այն գրավեց մայիսի 12-ին: Շատախում ապրիլի սկզբից, տեղի հայ բնակչությունը վանեցիների օրինակով ապստամբություն էր բարձրացրել թուրքերի դեմ և երկու ամիս էր անընդհատ, անհավասար մարտեր էր մղում թուրքական ոստիկանական (ժանդարմերիայի) ջոկատների և քրդերի դեմ:

Մայիսի 16-ից 20-ը Աոքանց, Գյավաշ, Կառկառ և Առինջ գյուղերի մոտ տեղի ունեցած կռիվներից հետո, խումբը Հասան դաշտի վրայով հասավ մինչև Մոկս: Վերոհիշյալ ուղղություններով հայկական 2-րդ խմբի՝ Մոկսին մոտենալու պահին, քաղաքից հասան լուրեր թուրքերի դեմ Մոկսի հայ ազգաբնակչության ապստամբության մասին: Ապստամբությունը բռնկվել էր մայիսի սկզբներին և աստիճանաբար զարգանալով, մայիսի կեսերին հասել էր իր գագաթնակետին,

---

[4] *Նույն տեղում, գ.16, թ. 3:*

իսկ Վանից և Շատախից նահանջած թշնամու մեծ ուժերի կուտակման հետևանքով, Մոկսի ապստամբների դրությունը մայիսի վերջերին դարձել էր օրհասական: Հայկական 2-րդ խումբը Օոկանց գյուղի մոտ թուրքական ոստիկանական ջոկատների և քրդերի հետ տեղի ունեցած կռիվներից հետո, հաղթահարելով անանցելի լեռները և կիրճերը, մայիսի 18-ին մտավ և գրավեց Մոկսը: Առաջինը քաղաք մուտք գործեց Մեսրոպի գլխավորած հայկական վաշտը:

Մայիսի 22-25-ը ընկած ժամանակահատվածում թշնամին մեծ ուժերով փորձեց շրջանցել խմբին թիկունքից, նպատակ ունենալով կտրել Շատախի և Ախթամարի ճանապարհը, սակայն ջախջախվեց և ետ շպրտվեց:

Հունիսի 2-ին 2-րդ կամավորական խումբը գրավեց Սպարկերտը: Սպարկերտի հայ բնակչությունը՝ մոտ 4000 մարդ, գաղթեց սկզբում Մոկս, ապա Վան: 1915թ. հունիսի կեսերին, Դրոն հիսունի հասնող հեծյալներ թողնելով Գիրանի դաշտում, և մեկ հետևակ ջոկատ Շատախում, ևս մի վաշտ էլ Մոկսում, 3/4 վաշտով, այսինքն հինգ ջոկատով և մեկ հեծյալ խմբով միանալով 1-ին, 3-րդ և 4-րդ հայկական խմբերին, մի շարք կատաղի կռիվներ տվեց Սորբի և Դատվանի շրջաններում[5]: Այնուհետև, շտաբի հրամանով հայկական 2-րդ խումբը շտապ վերադարձավ Բերկրի-Կալա, այստեղ մի քանի օր կարողացավ դիմադրել թշնամուն, որը հարձակումներ էր գործում Արճեշի կողմից: Այդ ժամանակ 2-րդ հայկական խումբն ապահովեց նաև Բերկրիի ճանապարհով Արևելյան Հայաստան անցնող 200.000 հայ գաղթականության անվտանգությունը: Բերկրիից նահանջելով, մեկ օր անց Դրոն՝ հեծյալ մի խմբով կրկին վերադարձավ Բերկրի-կուրի կամուրջը և այստեղից Արևելյան Հայաստան հասցրեց մեծ քանակությամբ հայ որբերի: Միայն 1915թ. ապրիլից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած կռիվներում հայկական 2-րդ խումբը ունեցով 39 սպանված և 76 վիրավոր[6]:

Վանա լճի հարավային շրջաններն ազատագրելուց հետո 2-րդ կամավորական խումբը անցավ դեպի Մուշ և Բիթլիս, որտեղ ակտիվ մասնակցություն ունեցավ այդ շրջանում ծավալված ռազմական գործողություններին՝ Մուշի և Բիթլիսի համար մղված կռիվներին և վերջիններիս ազատագրմանը: Սակայն, 1915թ. հուլիսի 16-ին, մարտական գործողությունների թեժ պահին, ելնելով կասկածելի մարտավարական նկատառումներից, Կովկասյան բանակի հրամանատարությունը ռուսական բոլոր զորքերին և զորաջոկատներին հրամայեց թողնել նախկինում գրավված տարածքները, ինչպես նաև Վանը և նահանջել: Ռուսական զորքերը, լքելով ճակատը և Արևմտյան Հայաստանի գրավված տարածքները, նահանջեցին դեպի Արևելյան Հայաստան: Նահանջող զորքերի մեջ էին նաև հայկական կամավորական խմբերը: Համատարած նահանջի ալիքները 1915թ. հուլիսին 2-րդ խմբին բերեց Իգդիր:

Ռուսական զորքերի ընդհանուր նահանջը, որը ծանր անդրադարձավ Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Վանի շրջանի հայ բնակչության վրա, ճակատագրական նշանակություն ունեցավ նաև հայկական կամավորական խմբերի համար: Վարդանի գլխավորած Արարատյան զորաջոկատը, որը փայլուն ավարտեց Վանի օպերացիան և հերոսական հաղթանակներ ունեցավ մայիսի 10-ից հուլիսի 19-ը Վան-Բիթլիսի ուղղությամբ շուրջ երկու ամիս տևած մարտական գործողություններում՝ վերջնականապես կազմալուծվեց:

---

[5] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ.121, ց.1, գ.1, թ.1-18:
[6] Տես նույն տեղում, գ.16, թ. 3-5:

Արյունահեղ կռիվների և մեծ զոհողությունների գնով ձեռք բերված մարտական հաղթանակների կորստից հուսալքված ու ճնշված հայ կամավորականները հատկապես արևմտահայերը, թողնելով զինվորական ծառայությունը, սկսեցին ցրվել: Կամավորներին խմբերը վերադարձնելու ռուսական հրամանատարության ու հայոց ազգային Բյուրոյի ջանքերը արդյունք չտվեցին: Կամավորների շարքերը շարունակեցին անդադար նոսրանալ և 1915թ. օգոստոսին, հայկական բոլոր չորս խմբերում, եղած մոտ 4000 կամավորականներից մնացել էր ընդամենը 1200 մարդ[7]: Չնայած դրան, ազգային Բյուրոն, որը ևս խիստ հիասթափված ու հուսալքված էր ռուսական հրամանատարության անսպասելի գործելակերպից, որոշեց անկախ ամեն բանից, վերականգնել հայկական կամավորական խմբերը և շարունակել Թուրքիայի դեմ պայքարի գործը: Ազգային Բյուրոյի այդ որոշմանը մեծապես նպաստեցին նաև նոր ձևավորված 6-րդ և 7-րդ հայկական կամավորական խմբերի առկայությունը, որոնք արդեն պատրաստ էին ռազմաճակատ մեկնելու: Համալրվեց նաև 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերի անձնակազմը:

1915թ. աշնանը և 1916թ. ձմռան ամիսներին ռուսական Կովկասյան բանակը նորից անցավ վճռական գործողությունների Թուրքիայի դեմ: Այդ մարտական գործողություններին մասնակցեցին նաև հայ կամավորները, որոնք, ինչպես միշտ, գործում էին ռուսական զորքերի առաջազորում: Հայկական 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կամավորական խմբերը, Կովկասյան 4-րդ կորպուսի կազմում, 1915թ. հոկտեմբերի 9-ից մինչև 1916թ. փետրվար ամիսները, թեժ ու արյունահեղ մարտեր մղեցին թշնամու թվապես գերազանցող ուժերի դեմ: Մասնակցեցին Արևմտյան Հայաստանի՝ Վանի, Ոստանի, Արճեշի, Խիզանի, Խնուսի, Մուշի, Բիթլիսի և մի քանի այլ հայկական քաղաքների և գյուղերի գրավմանն ու ազատագրմանը:

1915թ. նոյեմբերի 26-ին, Դրոյի գլխավորած հայկական 2-րդ կամավորական խումբը, որի կազմում կար 1240 մարդ, որոնցից 585-ը արևելահայ, իսկ 655-ը արևմտահայ, դուրս գալով Երևանից, շարժվեց Ղարաքիլիսայի ուղղությամբ: Դեկտեմբերի 12-ին, հակառակորդի ուժերը պարզելու նպատակով, Դրոն հեծյալ մի խմբով հարձակում գործեց Կոփի վրա: Վերադարձի ճանապարհին ցրտահար եղան խմբի 35 կամավորականներ: Դեկտեմբերի 29-ին Դրոյի խումբը, ռուսական զորամասերի հետ միասին, շարժվեց Արճեշի ուղղությամբ և տեղի ունեցած մի քանի փոքր ընդհարումներից հետո, Հաղինի կիրճի մոտ, միացավ Արճեշի ռուսական զորաջոկատին և տեղակայվեց Բադնուսում: 1916թ. հունվարի 9-ին, հայկական 2-րդ կամավորական խումբը Բադնուսում թողնելով կես վաշտ հետևակ և 25 հեծյալներ, շարժվեց Խնուսի ուղղությամբ: Հունվարի 12-ին, խումբը ռուսական Լաբինսկյան գնդի հետ միասին, անցնելով Սիանակ լեռը, Կարա-Կիթփիի մոտ ջախջախեց և պարտության մատնեց այս ուղղությամբ նահանջող թշնամու զորամասերին, որից հետո, հունվարի 13-ի գիշերը, թեթև մարտերից հետո գրավեց Խնուսը: Հունվարի 18-ին 2-րդ խումբը Խնուսից տեղափոխվեց Կարաաղաջ, որտեղ և մնաց մինչև հունվարի 25-ը՝ մի շարք կռիվներ ունենալով հակառակորդի զորամասերի հետ: Հունվարի 26-ին 2-րդ կամավորական խումբը վերադարձավ Խնուս: Այստեղ երկու օր մնալուց հետո, հունվարի 28-ին Ջաուրմայի ուղղությամբ շարժվեց դեպի Մուշ և հնգօրյա ծանր

---

[7] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 8, թ. 5-44:*

կռիվներից հետո խմբի հեծյալ ջոկատը առաջինը մտավ և գրավեց Մուշը: Դրանից մի քանի օր հետո միայն ռուսական զորքը մտնում է քաղաք:

1916թ. փետրվարի 5-ին հայկական 2-րդ խումբը Մուշից անցավ Բիթլիս, ճանապարհին գրավելով Խաս, Նորք, Մառնիկ և մի շարք այլ գյուղեր: Փետրվարի 18-ին 2-րդ խմբի՝ Դալի Ղազարի գլխավորած վաշտը, ռուսական զորքերի հետ միասին գրավում է Բիթլիսը: Բիթլիսի գրավումից հետո հայկական 2-րդ խումբը կենտրոնանում է Մառնիկ գյուղում, ապա շարժվում է դեպի Նաստիկ-գյոլի շրջան, սեփական ուժերով այդ տարածքները ազատագրելու համար: Յոթ օր Նաստիկ-գյոլի շրջանում հաջողությամբ գործելուց հետո, խումբը մարտի 5-ին կրկին վերադառնում է Մուշ: Հաջորդ օրը, մարտի 6-ին, Դրոյի գլխավորած խումբը Մուշից շարժվում է դեպի Կոլտաղաջ, որտեղ ևս մի շարք կռիվներ է ունենում թուրքական կանոնավոր զորքերի հետ: Վերջին անգամ հայկական 2-րդ խումբը կռվի է բռնվում թշնամու հետ Կուտմա-Գյադուկ գյուղի մոտ, ապրիլի 12-ին և 23-ին: Այդ արյունահեղ մարտերում զոհվում են խմբի հրամանատարի օգնական Հարություն Ավոյանը (Քյոսա), խմբապետ Մարտիրոս Խաղկիհանյանը, ֆելդֆեբել Վիհրաբ Եղոյանը, վիրավորվում են վաշտապետ Մարտիրոս Աբրահամյանը և խմբապետ, կապիտան Հակոբջանյանը:

1916թ. մայիսի 1-ին շտաբի հրամանով հայկական կամավորական 2-րդ խումբը Մուշի վրայով վերադառնում է Խնուս և մինչև մայիսի վերջը տեղակայվում է Խնուսում, Գյում-Գյում ու Տափան գյուղերում: Խնուսում խումբը կազմացրվելով կառավարությանն է հանձնում զենքն ու ձիերը. հունիսի 7-ին խմբի շտաբը տեղափոխվում է Երևան: Իր գործունեության ողջ ժամանակահատվածում՝ 1914թ. սեպտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ը, Դրոյի գլխավորած 2-րդ կամավո-րական խումբը մասնակցել էր ավելի քան 40 տարբեր մարտերի ու մի շարք այլ ընդհարումների[8]: Ակնառու հաջողությունների կողքին մեծ էին նաև խմբի կորուստները: Միայն 1915թ. նոյեմբերի 26-ից մինչև 1916թ. հունվարի 4-ը ընկած ժամանակահատվածում խումբը ունեցավ 51 սպանված, 104 վիրավոր և 44 ցրտահար[9]:

Դրոյի գլխավորած հայկական 2-րդ խումբը, ինչպես և մյուս հայ կամավորական խմբերը, բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն դրսևորեցին պատերազմի առաջին շրջանում՝ մեծապես օգնելով ռուսական բանակի հաղթանակներին Կովկասյան ճակատում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում: Կատարելով առաջապահի, հետախուզական և պահակազորային ծառայություններ՝ հայ կամավորական խմբերն ակտիվ մասնակցություն ունեցան Սարիղամիշի, Էրզրումի, Դիլմանի, Ռևանդուզի և այլ ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Բիթլիսի, Էրզրումի ազատագրմանը: Նրանք մեծ դեր կատարեցին նաև արևմտահայ գաղթականության կյանքը փրկելու գործում:

Ռուսական բանակի հրամանատարությունը բարձր գնահատեց հայ կամավորների ռազմական գործունեությունը: Նրանցից շատերը պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև Գեորգիևյան խաչով: Այսպես օրինակ՝ միայն 2-րդ կամավորական խմբի անձնակազմից (հրամանատար Դրո) 1914թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածում Գեորգիևյան խաչով պարգևատրվեց 76 կամավորական (որից

---

[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 16, թ. 3-5:
[9] Տես նույն տեղում:

երկուսն առաջին աստիճանի), 138 մարդ պարգևատրվեց մեդալներով[1]: Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար Գեորգիևյան խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին հայկական 2-րդ կամավորական խմբի հրամանատարի տեղակալ պորուչիկ Գարեգին Նժդեհը[2] և ուրիշներ:

Իր առաջադրանքը հաջողությամբ կատարելուց հետո, 2-րդ կամավորական խումբը, ինչպես և մյուս հայկական խմբերը, վերածվեցին կանոնավոր հրաձգային գումարտակների, որով Կովկասյան ճակատում դրվեց հայկական կանոնավոր զինուժի հիմքը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ «ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ /1915-1916ԹԹ./

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան Թուրքիայում, Մեծ տերությունների բացահայտ թողտվության պայմաններում, երիտթուրքական իշխանությունների կողմից վաղօրոք ծրագրավորված հայ ազգաբնակչության զանգվածային հալածանքների, ծերբակալությունների, տեղահանության և, վերջապես, այս ամենից հետո ցեղասպանության վերաբերյալ մեզ են հասել մեծ թվով վկայություններ, պաշտոնական գրագրություններ, փաստաթղթեր, տեղեկագրեր, լուսանկարներ, ականատեսների հիշողություններ և այլ արժեքավոր նյութեր: Այս մեծաքանակ և տարատեսակ վավերագրերի շարքում իր ուրույն տեղն ունի այդ ժամանակաշրջանում հրատարակված հայ պարբերական մամուլը: Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում, Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում, Եգիպտոսում, Ռուսաստանի շատ վայրերում, Եվրոպական մի շարք պետություններում, Ամերիկայում և այլուր հրատարակվող հայ պարբերականների էջերում հրապարակվել են բազմաթիվ տեղեկություններ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայության նկատմամբ կիրառված սոսկալի ոճրի վերաբերյալ:

XX դարի առաջին քառորդում Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են, ավելի քան 600 հայ պարբերականներ[3]: Հայ պարբերականների մի մասը լույս է տեսել Ռուսաստանի տիրապետության տակ

---

[1] *Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 3, գ. 16, թ. 3:*

[2] *Գարեգին Նժդեհը 1-ին և 2-րդ աստիճանի Գեորգիևյան խաչի շքանշաններով պարգևատրվելուց բացի ներկայացված էր պարգևատրման նաև Գեորգիևյան խաչի 3-րդ և 2-րդ, Սուրբ Աննայի 4-րդ՝ "Քաջության համար" մակագրությամբ և Սուրբ Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանների: Տես Վրաստանի Կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՎԿՊԱ), ֆ. 1, ց. 2, գ. 85, թ. 1-6:*

[3] *Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ. հ. VI, Եր. 1981, էջ 865:*

գտնվող Անդրկովկասի հայաշատ խոշոր կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլուր: 1915-1916թթ. արևելահայ իրականության առավել ազդեցիկ պարբերականներից էր Հ.Հ. Դաշնակցության պաշտոնաթերթ «Հորիզոնը» (Թիֆլիս, 1908-1918թթ.) (հրատարակիչ-խմբագիր Ա. Սահակյան):

«Հորիզոնում» լայնորեն լուսաբանվում էին Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները, Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածները և Արևմտյան Հայաստանի հայաթափումը, արևմտահայերի սփռվելն աշխարհով մեկ: Թերթն ուշադրության կենտրոնում էր պահում հայերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը, պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու գործը, ռազմաճակատում հայ կամավորների գործողությունները: Այստեղ մեկնաբանվում էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքը, բացահայտվում Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության հակահայկական, ջարդարարական բնույթը, ինչպես նաև ներկայացվում էր փախստականների դժոխային կացությունը: Լրագիրը հրապարակել է լրագրական ամենատարբեր ժանրի նյութեր՝ առաջնորդողներ, պատմահրապարակախոսական հոդվածներ, ակնարկներ, թղթակցություններ, նամակներ, ռազմաճակատային լուրեր, լրագիրը հրապարակում էր նյութեր՝ հայոց կոտորածները դատապարտող համաշխարհային հասարակայնության արձագանքների մասին: Թերթը պարբերաբար անդրադարձ էր կատարում Հայկական հարցի պատմությանը, ռուսական կովկասյան բանակի կարևոր գործողություններին, հայկական կամավորական շարժմանը, հայերի ազգային ինքնորոշման խնդիրներին: Նշված վիթխարի լրատվության վերաբերյալ արդեն իսկ պատկերացում են տալիս նրա խորագրերը՝ «Հեռագիրներ», «Տաճկական պատերազմի շուրջ», «Պատերազմ», «Ներքին տեսություն», «Արտաքին տեսություն», «Գավառ», «Վերջին լուրեր», «Հայ գաղութներ», «Թղթակցություններ» և այլն: Լրագրին աշխատակցում էին Հովի. Թումանյանը, Ա-Դոն, Ա. Շահխաթունյանը, Հ. Ազատյանը, Ա. Փանոսյանը, Ա. Սասունին և այլք: «Հորիզոնի» թղթակիցների խումբը ժամանակ առ ժամանակ մեկնում էր Արևմտյան Հայաստան, Պարսկաստան և այլուր՝ այնտեղից ուղարկելով հաղորդագրություններ, նամակներ և հեռագրեր, որոնք պարունակում էին բավական հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ:

«Հորիզոնի» լրատվության աղբյուրները բազմազան են: Պատերազմական գործողությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը ստացվում էր «Պետրոգրադի հեռագրական գործակալությունից», Կովկասյան զորաբանակի շտաբից: Արևմտյան Հայաստանի և արևմտահայության կոտորածների մասին թերթն ընթերցողին հիմնականում տեղեկացնում էր խմբագրությանը ուղարկվող հեռագիրներից, այլ պարբերականների էջերում հրապարակված տեղեկություններից, ինչպես նաև՝ իր թղթակիցների նյութերից:

1915 թվականը «Հորիզոն» թերթը սկսում է Ա. Շահխաթունյանի «Թուրքահայաստանի հարցը 1914-1915թթ.» լայնածավալ հոդվածաշարի տպագրությամբ, ուր ներկայացվում և վերլուծվում են 1914թ. ընթացքում և 1915թ. սկզբում Հայկական հարցի շուրջ ծավալված իրադարձությունները: Մանրամասն նկարագրելով 1913թ. մշակված և 1914թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագիրը՝ հեղինակը նշում է, որ այն «բավական փոփոխություն էր կրել իր նախնական տեքստի համեմատ թուրք-գերմանական ճնշման տակ»: Հեղինակի կարծիքով, այնուամենայնիվ, դա «եղավ առաջին քայլը այն

սրընթաց շարժման, որ կատարեց Թուրքահայաստանի խնդիրը համաշխարհային պայմանների փոփոխման շնորհիվ»: 1914թ. ընթացքում Հայկական հարցի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները նա բաժանում է 3 ժամանակաշրջանների՝ 1. հունվարի համաձայնագրից մինչև համաեվրոպական պատերազմի սկիզբը, 2. պատերազմի սկզբից մինչև Թուրքիայի մուտքը պատերազմ, 3. Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո:

Հեղինակը փաստում է, որ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը «առաջ բերեց որոշ հիասթափություն հայկական շրջաններում և, որ հայ հասարակությունը չէր կարող այն ընդունել իբրև մի կատարելապես լիարժեք փաստաթուղթ»: Սակայն ամեն ինչ փոխվեց , երբ հուլիսին պայթեց «եվրոպական փոթորիկը» [1]:

Հեղինակի կարծիքով «հայությունը և Հայոց հարցը կանգնեցին երկու ծայրահեղ լուծումների առջև. եթե հաղթեր Եռյակ համաձայնությունը էլ ինչ խոսք կարող էր լինել այն աղճատումների մասին, որպիսիք տեղի ունեցան Գերմանիայի դիմադրության շնորհիվ: Եթե, ընդհակառակը, հաղթեր Գերմանիան էլ ինչ հույս կարող էր մնալ հայերի մեջ որևէ կերպ սանձահարելու թուրքական զորությունը: Բոլորը համոզվեցին, որ այլևս հունվարի 26-ի «համաձայնագիրը» կամ «հրահանգները» չեն, որ պիտի կարգավորեն Հայաստանը, այլ մի նոր կացություն, որ կը ստեղծվի պատերազմից հետո: Սրանով պիտի բացատրել այն մեծ համակրանքը, որ երևան հանեց հայ հասարակությունը Եռյակ համաձայնության նկատմամբ: Օնունդ առավ կամավորական շարժումը, որին մեծապես նպաստեցին ինչպես ռուսական կառավարությունը, Թիֆլիսի կենտրոնական ազգային մարմինը (Ազգային բյուրոն), այնպես էլ հայ ժողովուրդը ամբողջությամբ, քանզի վերջինս բնազդաբար սպասում էր «թուրքական պատերազմին»[2]:

Թուրքիան «երեք ամիս պատրաստվելով և հստակ գիտակցելով, որ դաշնակիցները հաղթանակի դեպքում խիստ կվարվեն նրա հետ», մտավ պատերազմի մեջ գերմանական դաշինքի կազմում:

1914թ. հոկտեմբերին թուրքական զորքերը հարձակվում են Կարսի, Սարիղամիշի, Արդվինի և Բաթումի վրա: Այսպիսով բացվում է պատերազմի մի նոր ռազմաճակատ, որը ձգվում է Սև ծովից մինչև Ուրմիա լիճ[3]: Սա հեղինակի կարծիքով իհարկե ցանկալի չէր Եռյակ համաձայնությանը: Թուրքիայի մուտքը պատերազմ մեծ փոփոխություններ մտցրեց Հայկական հարցի միջազգային մոտեցումների մեջ: 1914թ. սկզբում «թուրքահայոց վերանորոգումների» հարցով շահագրգռված էր և զբաղվում էր գլխավորապես Ռուսաստանը: Անգլիան և Ֆրանսիան կամ անտարբեր էին կամ էլ հետևում էին ռուսական դիվանագիտությանը այնքանով, որքանով նա չափավոր առաջարկություններ էր անում: Սակայն այս վիճակը արմատապես փոխվում է, քանզի հանդես են գալիս մի շարք առաջնահերթ շահեր Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մեջ:

Մանրամասն ներկայացնելով և վերլուծելով մեծ տերությունների հավակնությունները Թուրքիայի նկատմամբ՝ հեղինակը ներկայացնում է նաև այն գործոնները, որոնք ի հայտ էին եկել իրադարձությունների վերջին զարգացումների ընթացքում. նախ Թուրքահայաստանի ապագան կապվում էր Թուրքիա-

---

[1] «Հորիզոն», 1 հունվարի, 1915:

[2] «Հորիզոն», 3 հունվարի, 1915:

[3] Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Հ.Ռ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1978), Երևան, 1979, էջ 355:

յի ասիական և եվրոպական զանազան հատվածների հետ, այնուհետև, հրապարակ է գալիս հայ հասարակության մեջ վճռականապես նրա «ավտոնոմիայի» ձգտումը, որը և զգալի չափով արձագանք է գտնում դիվանագիտական աշխարհում՝ հետ մղելով հարցի լուծման մյուս ձևերը և, վերջապես, կովկասահայ ժողովուրդը և հեռավոր գաղութները իրականացնում են իրենց ցանկությունը՝ մասնակցել պատերազմին, իբրև մի առանձին ուժ, թե՛ դաշնակիցների հաջողության համար և թե՛ թուրքահայ ժողովրդի գոյությունը պաշտպանելու պատերազմի արհավիրքներից:

Նկատենք, որ այս հոդվածում արծարծված հիմնական գաղափարներն ու կարծիքները արտահայտում էին թերթի հիմնական դիրքորոշումը:

Այն, որ համաշխարհային պատերազմի հետևանքները բացասաբար անդրադարձան Հայկական հարցի վրա, արձանագրում է նաև «Հորիզոնը» 1915թ. առաջին համարում: «Հոգեկան այնքան մեծ լարում, ֆիզիկական այնքան աշխատանք վատնելուց հետո, երբ հայությունը հազիվհազ հանգստանալ ու սպասել էր ուզում, թե ի՞նչ է լինելու կամ ի՞նչ արդյունք էր տալու բարեկարգության այն ձևը, որ թուրքահայ ժողովուրդը իր համառությամբ ու տոկունությամբ կորզել կարողացավ դիվանագիտությունից՝ համաեվրոպական պատերազմով ամեն ինչ նորից տակն ու վրա եղավ»[1]: Թերթը նաև ներկայացնում էր այն զրկանքներն ու կորուստները, որ կրում էր հայ ժողովուրդը պատերազմի հետևանքով.«Դատարկվել է Բասենը, Ալաշկերտը, Նարիմանի, Այնթափի, Դիադինի, ինչպես նաև Բայազետի շրջանները. հայությունը զրկվել է Ալբակի, Բաշկալեի ու Սարայի շրջաններից Տաճկաստանում...

Բոլոր տեղերից քրիստոնյա ազգաբնակչությունը դիմում է Կովկաս, իր ապահովությունը մեզ մոտ փնտրելու: Նրանց թիվը հասնում է 100.000-ի»[2]:

Լրագիրը 1915թ. սկզբում մեծ ուշադրություն է դարձնում պատերազմի հետևանքով Արևմտյան Հայաստանից դեպի Կովկաս հայ ազգաբնակչության աննախադեպ հոսքին: Թվական տվյալներով և փախստականների շարժման ուղղությունն ուրվագծելով, «Հորիզոնի» թղթակիցները մռայլ գույներով ներկայացնում էին նաև նրանց ողբերգական վիճակը: «Գաղթականների հոսանքը մեր երկիր, նրանց անասելի տանջանքները, քաղցն ու մերկությունը ցնցեց հայ հասարակությանը և կլանեց նրա ուշադրությունը այն աստիճան, որ բոլոր անհրաժեշտ ու հերթական խնդիրները կորցրին իրենց հետաքրքրությունը»,- արձանագրում է թերթը [3]:

Արևմտյան Հայաստանի տարածքում և, հատկապես, 1914թ.վերջին սկսված Արդվին, Տանձոտ և Արդանուշ գավառներում հայ ազգաբնակչության հալածանքների, զանգվածային կոտորածների մասին տեղեկությունները թերթում ստացվում են արդեն 1915թ. փետրվար ամսից: Ուշադրության է արժանի այն փաստը, որ մի շարք պատճառներով երկար ժամանակ էր անցնում, մինչև մի որևէ իրադարձության մասին տեղեկատվությունը հասնում էր խմբագրություն: Այս պատճառով էլ «Հորիզոնը» հարկ եղած դեպքում դիմում է անդրադարձների: Այսպես, փետրվարի վերջին արդեն ստացվում է մանրամասն տեղեկատվություն դեռևս 1914թ. նոյեմբերի 5-ից Արդվինում սկսված հայերի զանգվածային

---

[1] *«Հորիզոն», 1 հունվարի, 1915:*
[2] *Նույն տեղում:*
[3] *«Հորիզոն», 24 հունվարի, 1915:*

կոտորածների մասին, որը թուրքական զորքերի անհաջողությունների հետևանքն էր:

Հատկանշական է և այն, որ ինչպես արևելահայ համարյա բոլոր պարբերականների, այնպես էլ «Հորիզոնի» խմբագրությունում տեղեկատվությունը բավական անկանոն էր ստացվում:

Լրատվության անկանոն և անմխիթար վիճակի մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ հայ պարբերականները և՛ ֆինանսապես, և՛ տեխնիկապես շատ էին զիջում այդ ժամանակաշրջանում հրատարակվող եվրոպական և ռուսական պարբերականներին[1]:

Եվ, վերջապես, Կովկասում հրատարակվող բոլոր թերթերը, այդ թվում նաև «Հորիզոնը», հրատարակվում էին միայն ռազմական գրաքննության ստուգումից հետո, որ մեծապես խոչնդոտում էր լրատվության շարժը: Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ լրատվության արտահոսքին մեծապես խոչընդոտում էր նաև թուրքական գրաքննությունը: Ինչպես հաղորդում է «Մարտիկ մը» ծածկանունով թղթակիցը Կ.Պոլսից փետրվարի 4-ին. «Մինչև ռուս-տաճկական ընդհարումը հոս վիճակներս աղեկ չէր. զօրաշարժ էր և րեքվիզիսիոն կամ կառավարական գրավում: Սակայն այն ատեն գոնե կիմանայինք թե դուրսերը ինչ կը կատարվի: Իսկ ռուս թուրքական պատերազմի հայտարարությունից աստին աշխարհեն այլևս ամբողջովին կտրվեցանք, և վիճակներս երթալով ավելի և ավելի վատթարացավ:

...Ոչինչ գիտենք դուրսի աշխարհեն. ի՛նչ կը կատարվի ռազմադաշտերուն մեջ-մենք չենք գիտեր: Կուզես հավատայ, կուզես մի հավատայ պիտի կարդաս տեղական ապուշ թերթերը լեցուն զգալի սուտերով, գերագրգռող բրովոքասիոններով, շինծու և այլանդակ զգացումներով: Դժբախտաբար և ոչ մեկ բացառություն կայ տեղական թերթերուն մեջ... Ու՛ ստիպված ենք անվերջ կարդալ Վոլֆ-Պյուրոյի միալար կեղծիքները, կամ ավստրիական զեկույցները, ապուշության այդ գլուխգործոցները, որոնք նոր ու նոր բառեր կը հնարեն, դարձվածներ կը ստեղծեն՝ իրանց պարտությունը քողարկելու համար...»: Այնուհետև հոդվածի հեղինակը բացատրում է, որ նման իրավիճակը ձեռնտու էր թուրքական կառավարությանը, քանզի «այդ ծայրահեղ արգելքն ու սուտերը պատճառ կըլլան ժողովրդի մեջ փսփսուքներու. կը տարածվին ամեն տեսակ անհավանական լուրեր...»: Այսպես, Թալեաթի թելադրանքով թուրքերը տարածել էին այն լուրը, թե իբր թուրքական զորքերի դեմ կռվում էին ոչ թե ռուսական զորքերը, այլ հայկական 70.000-անոց կամավորականների բանակը...[2]: Թուրքական պաշտոնական զեկույցները վերածվել էին հակիրճ «Ճակատներուն վրայ նորութիւն չկայ» արտահայտության: Ամբողջ այդ ժամանակաշրջանում օսմանյան հանրային կարծիքը Եվրոպայի մեջ ձեռք բերած հաղթանակների լուրերով «օրօրուեցավ»[3]:

1915թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին արևմտահայության կոտորածների մասին տեղեկատվության հոսքը զգալի չափով մեծանում է: Սակայն ստացված հաղորդագրությունները, նամակները, թղթակցությունները հիմ-

---

[1] *«Մշակ», 14 ապրիլի, 1915:*

[2] *«Հորիզոն», 22 փետրվարի, 1915:*

[3] *Անտոնյան Ա., Մեծ ոճիր. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան 1990. էջ 73:*

նականում վերաբերում էին ռուս-թուրքական ռազմաճակատի շրջանում թուրքական զորքերի կատարած վայրագություններին:

1915թ. ապրիլից «Հորիզոնը» ակտիվորեն անդրադառնում է Վանի վիլայեթում և, հատկապես Վան քաղաքում կատարվող իրադարձություններին: «Թուրքական կառավարությունը ամեն տեղ շարունակում է հայաջինջ գործը, - ստացված տեղեկություններից եզրակացնում է Ա. Շահխաթունյանը «Մեր հաջողությունները» հոդվածում: - Նա չի դիմում այլևս կողմնակի միջոցների, այլ իրեն միանգամից ազատ զգալու համար հայտարարել է հայերին «ապստամբ» և արժանի ոչնչացման: Իհարկե թուրքի դատողությամբ ապստամբ են պետության այն քաղաքացիները, որոնք չեն ցանկանում անզեն, անդիմադիր ընդառաջ գնալ իրենց դահիճներին և հավակնություն ունեն ապրելու: Կառավարությունն ամենուրեք ձեռբակալությունների ու աքսորի է դիմում:՛Պոլսից աքսորել է Կոնիա հայ ինտելիգենցիայի համարյա բոլոր աչքի ընկնող ներկայացուցիչներին, թվով 200 հոգի և այն էլ առանց քաղաքական դավանանքի խտրության : Երևի համոզել է գերմանական շտաբին, որ սրանք բոլորն էլ լրտեսներ և խառնակիչներ են»: Մակայն հեղինակի կարծիքով սպանությունները, աքսորը, բանտը նյութական տիռելի կեղեքումները «մեռնող քաղաքականության վերջին գալարումներն են, որ չեն կարող փրկել թրքությանը...»[1] :

«Հորիզոնի» էջերում կարելի է հանդիպել մի շարք ուշագրավ փաստաթղթերի: Հատկապես, հիշատակության է արժանի 1915թ. մայիսի 14-ին թերթում տպագրված Մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների համատեղ հայտարարությունը Բ.Դռանը՝ Թուրքիայում իրականացվող հայերի կոտորածների և դրանցում թուրքական իշխանությունների պատասխանատվության մասին: «Հորիզոնի» կարծիքով, այն ունի պատմական նշանակություն հայերի համար: Նախ, այն պատճառով, որ հայկական ջարդեր և կոտորածներ շատ անգամ են տեղի ունեցել Թուրքահայաստանում՝ «քրենց տեսակի մեջ գուցե ավելի սոսկալի», բայց երբեք Եռյակ համաձայնության միջամտությունը այն աստիճան համերաշխ, կտրուկ և սպառնալից չի եղել, ինչպես այս ժամանակ: Թերթի կարծիքով, դա ունի ևս մեկ կարևոր նշանակություն այն առումով, որ Եռյակ համաձայնության երկրները հրապարակայնորեն իրենց հովանավորության տակ են առնում թուրքահայ ժողովրդի պաշտպանությունը[2]:

Մայիսի 10-ին «Հորիզոնը» գրում է ռուսական զորքերի կողմից Վանի գրավման մասին՝ այն համարելով պատմական խոշոր դեպք: Լրագրի էջերը ողողվում են այս իրադարձության մասին հաղորդագրություններով և հոդվածներով:

Թուրքիայի տարածքում իրականացվող հայերի տեղահանությունների, ձերբակալությունների և կոտորածների մասին առավել ամբողջական տեղեկատվություն թերթը տպագրում է 1915թ. հուլիս ամսից սկսած:

1916թ. սկզբին զգալիորեն կրճատվում է թերթի լրատվության հոսքը: «Հորիզոնի» համարներում հանդիպում են սոսկ կցկտուր լուրեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև տպագրվում են սեփական թղթակիցներից ստացված դեռևս 1915թ. ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մանրամասներ: Պատերազմական իրադրությունը, անշուշտ, իր կասեցնող հետևանքներն էր թողնում «Հորիզոնի» հաղորդակցական հնարավորությունների վրա:

---

[1] *«Հորիզոն», 13 մայիսի, 1915:*
[2] *«Հորիզոն», 14 մայիսի, 1915:*

1916թ. փետրվարի 4-ին լրագիրը հայտնում է ռուսական զորքի կողմից էրզրումի գրավման մասին և, այդ ժամանակից սկսած, անդրադառնում է այդ իրադարձության մանրամասնություններին, ինչպես նաև դրա արձագանքներին՝ հոդվածներով, հեռագրերով ու հաղորդագրություններով:

1916թ. անապատներում էին գտնվում հայկական բոլոր գավառներից տեղահանված և բռնի տեղափոխված հայերը, որոնց միացել էին նաև Կ.Պոլսի շրջակայքից, Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից տարագրված հայերը[1]:

- Այն, ինչ Թուրքիայի տարածքում և Միջագետքի անապատներում կատարվում էր հայ ազգաբնակչության հետ 1916թ. ընթացքում, բավական կցկտուր էր լուսաբանվում լրագրի էջերում: Առավել զարհուրելի եղեռնագործությունները և մեծագույն ջարդերը կատարվեցին 1916թ. արդեն մեկ տարի այնտեղ գտնվող իրենց տներից և օջախներից բռնի տեղահանված հայ ժողովրդի մի ստվար հատվածի նկատմամբ:

Թերթում առավել շատ էին նախկինում՝ 1915թ. ընթացքում, կատարված իրադարձությունների մասին վկայությունները, տեղեկագրերը, ինչպես նաև առօրյա կյանքի իրադարձություններին վերաբերվող հոդվածները, վերլուծությունները և այլն:

Ուշադրության է արժանի «Հորիզոնի» վերաբերմունքը, ինչպես հայկական կամավորական շարժման, այնպես էլ արևմտահայության ինքնապաշտպանական մարտերի նկատմամբ:

«Հորիզոնը» իր համաձայնությունն է հայտնում հայկական կամավորական գնդերի ստեղծմանը և իր հրապարակումներում անընդհատ անդրադառնում է նրանց գործողություններին: Նրա կարծիքով, ակնհայտ է այն հսկայածավալ գործը, որ կատարում են հայ կամավորները հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործում, ռուս-թուրքական ռազմաճակատում, հայ փախստականների անվտանգության, քրդական հրոսակախմբերի կոտորածներից ապահովելու և անվտանգ ու խնամքով Կովկաս հասցնելու գործում: Նա դեմ է արտահայտվում «Մշակ» թերթի այն հրապարակմանը, ըստ որի, ավելի նպատակահարմար կլիներ, եթե բոլոր կամավորները ուղղակի մտնեին ռուսական զորքերի շարքերի մեջ և այլևս հայ կամավորների առանձին խմբեր չլինեն[2]:

Թերթը ձգտում է, որ հայ ժողովրդի մեջ ավելի ևս ամրանա այն գիտակցությունը, որ թուրքահայի ազատագրությունը թուրքական կառավարության ճիրաններից կորզելու միակ միջոցը զինական ուժն է, որի համար չպետք է խնայենք ոչ կյանք և ոչ կարողություն[3]:

Թեև 1915-1916թթ. Օսմանյան Թուրքիայում երիտթուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված բնաջնջման քաղաքականության շատ մանրամասներ մի շարք պատճառներով չեն լուսաբանվել կամ էլ մակերեսորեն են լուսաբանվել արևելահայ իրականության ամենաազդեցիկ լրագրերից մեկի էջերում, այնուամենայնիվ, այսօր պատմական ուսումնասիրության համար ուշագրավ է այն հսկայածավալ աշխատանքը, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում կատարել է «Հորիզոն» թերթը Մեծ եղեռնի լուսաբանման, հասարակայնության ուշադրությանը արժանացնելու գործում:

---

[1] *Սնտոնյան Ա., նշվ. աշխ., էջ16.*
[2] *«Հորիզոն», 11 հունվարի, 1915:*
[3] *«Հորիզոն», 3 մայիսի, 1915:*

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1918-1920ԹԹ.)

1918թ. մայիսի 28-ին, ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո հայաստանում վերականգնվեց պետականությունը: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը ստեղծվեց ներքին ու արտաքին ծանր պայմաններում, պատմական բարդ ժամանակաշրջանում: Չափազանց դժվար էր երկիրը դժոխային կացությունից դուրս բերելը, ոչ պակաս դժվար էին նաև արտաքին հարաբերությունների կարգավորումը, պետությունների հետ կապերի հաստատումը: Այդ խնդրի լուծումը կապված էր լուրջ դժվարությունների հաղթահարման հետ: Բաթումի պայմանագրով Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը դրել էր շրջանակների մեջ՝ թուլլատրելով նրան շփումների մեջ մտնել միայն անմիջական հարևանների ու Քառյակ պետությունների հետ: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո (Բաթումի պայամնագիրը կորցրել էր իր իրավական ուժը) Հայաստանի Հանրապետությունն արդեն ազատ էր իր արտաքին կապերը տնօրինելու հարցում: Մինչ այդ, խախտելով իր համար սահմանված պայմանը, Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկել էր դիվանագիտական հարաբերությունների հաստատելը Ռուսաստանից անջատված նորանկախ ոչ խորհրդային Ուկրաինայի հետ: Պատահական չէր Ուկրաինայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի մի հատվածը վաղ ժամանակներից հարկադրված թողել էր իր հայրենիքը և հաստատվել մեծակա ու հեռավոր երկրներում, այդ թվում նաև Ուկրաինայում՝ վայելելով այդ ժողովրդի բարյացկամ վերաբերմունքը: Առաջին աշխարհամարտի տարիներին, հայոց ցեղասպանության հետևանքով հայության մի ստվար զանգված նույնպես ապաստան գտավ Ուկրաինայում: Ստեղծվեց մի մեծ համայնք, որը կազմակերպվեց և ժամանակի ընթացքում ստեղծեց իր շահերն ու իրավունքներն արտահայտող ազգային մարմիններ:

Հայ-ուկրաինական կապերը նոր որակ ստացան, երբ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Դրա համար արդեն որոշակի հող ստեղծվել էր, Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարութունը ճանաչել էր Հայաստանի Հանրապետությանը, իսկ Ուկրաինայում գործող հայկական ազգային մարմինները միավորվել էին և ստեղծել հայկական կոմիսարիատ, որը ճանաչվել էր ռադայի կողմից ու նրանից ստանում էր համակողմանի աջակցություն: Ավելին, Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո Կիևում «Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիան» փաստորեն կատարում էր Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության դեր (նախագահ՝ գնդապետ Միքայել Լոմիզե, անդամներ՝ փոխգնդապետ Մակար Պոպով և կապիտան Աշոտ Տոնյանց): Իսկ Ուկրաինայի - Կենտրոնական ռադան դեռևս 1918թ. հուլիսի վերջից ուներ իր ներկայացուցիչը Երևանում (Վլադիմիր Գիրչենկո): 1918թ. հոկտեմբերին Կիևում հիմնվեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիան (ներկայացուցիչ՝ իրավագիտության դոկտոր՝ Գրիգոր Ջամոյան (Ջամոև)), իսկ մի շարք քաղաքներում՝ Օ-

դեսայում (գլխավոր), Խարկովում, Կիևում, հյուպատոսական հիմնարկներ, որոնք 1918-1920 թվականներին Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքական գործունեության կարևոր նվաճումներից էին: Դրանք մեծ աշխատանք կատարեցին Ուկրաինայում ապաստանած բազմահազար հայությանն օգնելու, նրանց շահերն ու իրավունքները պաշտպանելու, ազգային կազմակերպությունների՝ Հայոց ազգային խորհուրդների, բազմաթիվ միությունների գործունեություն աշխուժացնելու ու համակարգելու ուղղությամբ, որոնք նպատակամղված էին հայապահպանման սուրբ գործին:

Առավել ստվար էր Օդեսայի հայ համայնքը, որտեղ առաջին աշխարհամարտի տարիներին հանգրվանել էին շուրջ ութ հազար հայ գաղթականներ ու ռազմագերիներ Արևմտյան Հայաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից և այլ երկրներից: Քաղաքում ապրող հնաբնակ հայերին ավելացավ փախստականների այդ մեծ զանգվածը և ստեղծվեց մի մեծ գաղութահայ համայնք, որը, սակայն, խիստ անկազմակերպ էր: Տեղի հայ գաղութի պահանջով և Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ներկայացուցիչ Գրիգոր Ջամոյանի միջամտությամբ Ուկրաինայում Հայաստանի կոմիսարիատի կոլեգիան 1918 թվականի օգոստոսի կեսին իր ներկայացուցիչները նշանակեց Օդեսայում: Այդ ներկայացուցիչներն էին հայտնի հասարակական գործիչ, գիտնական-գյուղատնտես Թաիրովը և նրա օգնական փոխգնդապետ իշխան Թումանովը[1], որոնք աշխատեցին մինչև սեպտեմբերի վերջը, երբ սկսվեց կոմիսարիատի կոլեգիայի վերափոխումը դիվանագիտական միսիայի: Հոկտեմբերի սկզբին դեռևս գործող կոմիսարիատն իր կոլեգիայի անդամ, փոխգնդապետ Մակար Բոգդանի Պոպովին նշանակեց Հայաստանի Հանրապետության հյուպատոս Օդեսայում՝ հաշվի առնելով գաղութի համաձայնությունը և հայոց լեզվի նրա իմացությունը: Գաղութը մեծ ուրախությամբ ընդունեց Հայաստանի նորաստեղծ պետության հյուպատոսի նշանակումը և լուրջ հույսեր էր կապում նրա գործունեության հետ: Իր գործունեությունը հաջողությամբ կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության Օդեսայի հյուպատոսությունը որոշեց իր կառուցվածքը, մշակեց խնդիրներն ու աշխատանքի հիմնական ուղղությունները: Հյուպատոսական հիմնարկը կազմվեց չորս բաժիններից՝ գաղթականական, ռազմագերիների, անձնագրային և Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության: Առաջին քայլերից իսկ հյուպատոսությունն Օդեսայում հանդիպեց որոշակի դժվարությունների: 1919 թվականի հունվարի 4-ին Մ.Պոպովը Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանին ուղղած զեկուցագրում տեղեկացնում է, որ հյուպատոսական հիմնարկն Օդեսայում աշխատում է առանց կառավարության հավատարմագրի, առանց անհրաժեշտ նյութական միջոցների, ֆինանսների, որոնք անհրաժեշտ են շենքի և գույքի ձեռքբերման համար: Մ.Պոպովը խնդրում է շտապ ուղարկել հարյուր հազար ռուբլի, հաստատել ծառայության կազմը, որը բաղկացած էր յոթ հոգուց՝ փոխյուպատոս, քարտուղար, երկու աշխատակից՝ հատուկ հանձնարարությունների գծով և երեք հոգի սպասարկող անձնակազմ[2]: Հունվարի 13-ին Գ. Ջամոյանը Մ.Պոպովին պաշտոնապես հանձնեց Օդեսայում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսի հավատարմագիրը, իսկ Եղիշ Քրիստ-

---

[1] *Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 37:*
[2] *Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 90-91:*

ափորի Մելիքյանին նշանակեց քարտուղար: Մյուս ծառայողները նշանակվեցին գլխավոր հյուպատոսի հրամանով:

Հյուպատոսական ծառայության արդյունավետ աշխատանքի կարևոր պայման էր տեղի հայ գաղութի աջակցությունը: Սակայն օդեսահայ գաղութը դեռևս անկազմակերպ էր, միասնական չէր, չկար այն միավորող ազգային կազմակերպություն: Կյանքը պահանջեց ստեղծել Հայոց ազգային խորհուրդ, որը պետք է միավորեր գաղութը, ստեղծեր համազգային մթնոլորտ քաղաքում, սերտ կապի մեջ մտներ հյուպատոսության հետ: Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ.Ջամոյանը նախաձեռնեց Օդեսայում Հայոց ազգային խորհուրդ հիմնելու գործը: 1919 թվականի հունվարի 31-ին Օդեսայի իր բնակարանում, տեղի հայ հասարակական գործիչների մասնակցությամբ, Գ.Ջամոյանը հրավիրեց խորհրդակցություն, որտեղ որոշվեց հիմնել Հայոց ազգային խորհուրդ., «որը պիտի պարփակե յուր մեջ Օդեսայի և շրջակա մանր գաղութների ազգային հասարակական կյանքի բոլոր կողմերը և լինի ամբողջ շրջանի համար մի բարձրագույն ազգային հաստատություն»[1]: Փետրվարի 5-ին դարձյալ Գ. Ջամոյանի մասնակցությամբ տեղի ունեցած ժողովում որոշվեց Օդեսայի Հայոց ազգային խորհրդի կազմը, բաժինները ու նրա գործունեության հիմնական խնդիրները, որոնք հաստատվեցին փետրվարի 23-ին կայացած հայ գաղութի ներկայացուցիչների ընդհանուր ժողովում, որտեղ գաղտնի քվեարկությամբ ընտրվեց 16 անդամներից բաղկացած Հայոց ազգային խորհուրդը: Հայոց ազգային խորհրդի ստեղծումն ու նրա կազմի ընտրությունը կարևոր իրադարձություն էր Օդեսայի հայ համայնքի կյանքում: Հիրավի, Հայոց ազգային խորհուրդը հանդիսանում էր գաղութի կյանքի բոլոր կողմերը ղեկավարող, բոլորին շաղկապող և միացնող օղակը: Նրա գոյությունը մեծապես նպաստում էր Ուկրաինայում Հայաստանի հանրապետության գլխավոր հյուպատոսական հիմնարկի արդյունավետ գործունեության ծավալմանը: Հայոց ազգային խորհուրդն իր շուրջը համախմբեց բոլոր ազգային կազմակերպություններն ու միությունները, որոնք սերտ կապի մեջ մտան հյուպատոսության հետ: Օդեսայում հրատարակվող «Հուսանք» թերթի խմբագիր՝ Հակոբ Բաղդասարյանի և քահանա Հովհաննես Ջուբարյանի առաջարկով սկսեց լույս տեսնել նաև "Вестник Армении" ռուսերեն թերթը, որը գաղութահայ կյանքը ներկայացնում էր նաև ոչ հայ ընթերցողին, տեղեկություններ հաղորդում Հայաստանի Հանրապետությունում կատարվող գործընթացների մասին:

Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսական հիմնարկը, Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ կարողացավ լայն գործունեություն ծավալել Օդեսայում՝ հայ քաղաքացիների, գաղթականների ու ռազմագերիների շահերի պաշտպանության և Ուկրաինայի հարևան երկրների հայկական գաղթօջախների հետ կապերի ամրապնդման ուղղությամբ: Դիվանագիտական միսիայի ներկայացուցիչ Գ.Ջամոյանն այդ գործում բարձր էր գնահատում գլխավոր հյուպատոս Մակար Պոպովի ծառայությունը. «Շնորհակալություն պետք է հայտնել հյուպատոս Մ.Պոպովին իր գործունեության համար, - գրում է Գ.Ջամոյանը, - հատկապես հայ գաղթականության և ռազմագերիների հետ տարած աշխատանքի համար»[2]: Կատարված լավ աշխատանքի կարևոր ցուցանիշ էր այն, որ Հայաստանի գլխավոր հյուպատոսական հիմնարկն Օդեսայում մեծ հեղի-

---

[1] *Տես «Հուսանք», 1 փետրվարի, 1919 թ.:*
[2] *Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 217, թ. 4:*

նակություն էր վայելում ինչպես հայ գաղութի, այնպես էլ օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների շրջանում: Այն սերտ կապի մեջ էր այդտեղ գտնվող բոլոր օտարերկրյա հյուպատոսական հիմնարկների հետ: 1919 թվականի հունվարի 23-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցագրում Գ.Ջամոյանը տեղեկացնում է. «Հյուպատոսարանը Օդեսայում պաշտպանում է Հայաստանի Հանրապետության շահերը և նրա քաղաքացիների իրավունքները: Հյուպատոսությունը գերիների և գաղթականների հոգն է տանում, որոնք ամեն կողմից հավաքվում են Ուկրաինա: Մեր հյուպատոսը Օդեսայում ճանաչված է դաշնակիցների կողմից և բոլոր անձնագրերը, որոնք տալիս է, վավերացվում են համապատասխան հիմնարկների կողմից: Վերաբերմունքն ինչպես տեղական իշխանության, այնպես էլ դիվանագիտական (շրջանակների – Գ.Պ.) շատ լավ է: Ուստի խնդրում եմ, առանց հաշվի առնելու Ուկրաինայում քաղաքական փոփոխությունները, պահել արդեն կարգի դրած ապարատը և աջակցել նրան նյութապես և բարոյապես»[1]:

1919 թվականի հունվարի վերջին Հայաստանի գլխավոր հյուպատոսությունն Օդեսայում իրոք կայացած էր, դարձել էր լավ կազմակերպված հիմնարկ, որը բարձր էր պահում Հայաստանի Հանրապետության անունը: Եվ դիվանագիտական ներկայացուցիչը խնդրում է Հայաստանի արտաքին գործերի նախարարին, ինչպիսի պայմաններ էլ ստեղծվեն, պահել «արդեն կարգի դրած ապարատը և աջակցել նրան նյութապես և բարոյապես»: Սակայն պետք է ասել, որ Հայաստանի կառավարությունն ու նրա արտաքին գործերի նախարարությունն անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում Օդեսայի հյուպատոսությանը: Եվ դա պատահական չէր. ինչպես 1919 թվականի փետրվարի 28-ի իր մի գրության մեջ նշում է արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ալեքսանդր Տեր-Հակոբյանը, թե կառավարությունը և թե՛ հատկապես արտաքին գործերի նախարարությունը «Մինչև հիմա չեն ձեռնարկել որևէ ակտիվ քայլ` իրենց հետ կապելու այն բազմաթիվ հայկական գաղութները, որ սփռված են ամբողջ աշխարհով ... այդ թույլ կապը բացատրվում է մասնավորապես նրանով, որ կառավարությունը ժամանակ չի գտնում, զբաղված է երկրի համար հրատապ ու անհետաձգելի հարցերով, նաև թերագնահատում է այդ հարցը, ինչին նպաստում է արտաքին աշխարհի հետ վատ փոստային ու հեռագրային կապը»[2]:

Որ քայքայված երկրում նորաստեղծ պետությունը խճճվել էր ներքին բարդ ու հրատապ խնդիրների լուծման ոլորտում և ժամանակ չէր գտնում ըստ էության զբաղվելու հայկական գաղութներով, դա իրոք այդպես էր: Ճիշտ էր նաև ակնարկը փոստային ու հեռագրային վատ կապի մասին: Բայց գլխավոր քարտուղարը խոստովանում է, որ հայկական գաղութների հարցը թերագնահատվում էր, այսինքն` դրան առաջնակարգ նշանակություն չէր տրվում: Եթե դա այդպես էր, իմաստ չուներ խոսել մյուս պատճառների մասին:

Ժամանակին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից չստանալով անհրաժեշտ հանձնարարականներ ու գործնական խորհուրդներ, Օդեսայի գլխավոր հյուպատոսությունը փաստորեն գործում էր ինքնուրույն, ելնելով կոնկրետ քաղաքական իրավիճակից և հայ գաղութի իրավունքների պաշտպանության ու նրա պահանջների թելադրանքից: Հյուպատոսությունն անգամ չուներ իր ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության

---

[1] Տես նույն տեղում, գ. 73, 1-ին մաս, թ. 119:
[2] Տես նույն տեղում, գ. 217, թ. 19-20:

կառավարության որոշումը, չնայած արդեն վեց ամիս գործում էր:

Միայն 1919 թվականի մարտի 20-ին, Գ.Ջամոյանի հանձնարարականով, զինվորական կցորդ Ա. Տոնյանցը Երևանում նախարարների խորհրդի հաստատմանը ներկայացրեց Օդեսայի գլխավոր հյուպատոսական հիմնարկի կազմը և խնդիրները, որոնք հաստատվեցին երկու ամիս հետո՝ մայիսի 27-ին: Սահմանվեցին, Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսական հիմնարկի խնդիրները.

1. Հայաստանի քաղաքացիների հաշվառում և նրանց շահերի պաշտպանություն,
2. Հայաստանի քաղաքացիներին ազգային անձնագրերի հանձնում,
3. Հայաստան մեկնողներին անձնագրերի հանձնում,
4. գաղթականներին անհրաժեշտ փաստաթղթերի հանձնում և տեղափոխում հայրենիք,
5. այդ խնդրով կապի հաստատում արտասահմանյան բոլոր պետությունների հետ՝ հյուպատոսական հիմնարկների ներկայացուցիչների միջոցով[1]:

Օդեսայի հյուպատոսության գործունեությունը հենց այդ խնդիրների իրագործման պլանով էր ընթանում: Խոսելով հյուպատոսական հիմնարկի աշխատանքում հանդիպող կազմակերպական դժվարությունների ու բացթողումների մասին, պետք է նկատի ունենալ, որ դրանք ինչ որ իմաստով անխուսափելի էին, քանի որ Հայաստանի նորաստեղծ պետության համար հյուպատոսությունը բոլորովին նոր երևույթ էր: Արտաքին գործերի նախարարությունը անգամ չուներ հյուպատոսական հիմնարկների կազմակերպման նախագիծ, ժամանակավոր կանոնադրություն, ավելին՝ չուներ նաև հյուպատոսական բաժին, որ կարողանար ղեկավարել արտասահմանում գործող այդ կարևոր հիմնարկների գործունեությունը: 1919 թվականի փետրվարի 1-ին կազմվեց արտաքին գործերի նախարարությանը կից հյուպատոսական բաժնի օրինագիծ և միայն վեց ամիս հետո, հուլիսի 31-ին ընդունվեց նման բաժին հիմնելու մասին օրենքը[2]:

Այնուհանդերձ, Օդեսայի գլխավոր հյուպատոսությունը շարունակում էր իր ծավալուն ու լարված գործունեությունը: 1919 թվականի մարտի վերջին Օդեսայից հայրենիք ուղարկվեցին շուրջ 3000 հայ ռազմագերի և մի քանի հազար գաղթական՝ ապահովված անհրաժեշտ սնունդով[3]:

Մեծ աշխատանք էր տարվում նաև համայնքի անդամների, հատկապես՝ ռազմագերիների ու գաղթականների անձնագրային գործը կազմակերպելու ուղղությամբ, որով ապահովվում էր Ուկրաինայում նրանց գոյատևման ու գործունեության իրավական հիմքը: Սակայն երկրում քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունն ընդհատեց Օդեսայի հյուպատոսության, ինչպես նաև Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի գործունեությունը:

1919 թվականի ապրիլի 6-ին խորհրդային բանակը գրավեց Օդեսան: Ուկրաինայում խորհրդային իշխանության ներքո Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները չէին կարող ազատ ու հանգիստ գործել: Դաշնակիցների հետ ֆրանսիական ռազմանավով ապրիլի 7-ին Օդեսայից հեռացան Ուկրաինայում

---

[1] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 148, թ. 13:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 178:
[3] Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 217, թ. 1:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիան և գլխավոր հյուպատոս Մ.Պոպովը: Ապրիլի 13-ին նրանք Կոստանդնուպոլսից Բաթում-Թիֆլիս ուղղությամբ մեկնեցին Երևան: Օդեսայից հեռանալուց առաջ, ապրիլի 5-ին Մ. Պոպովը հյուպատոսական հիմնարկի քարտուղար Եղիշ Մելիքյանին նշանակեց հյուպատոսի պաշտոնակատար: Սակայն մայիսի 25-ին խորհրդային իշխանության հրամանով դադարեցվեց Հայաստանի Հանրապետության Օդեսայի գլխավոր հյուպատոսի պաշտոնակատար Եղիշ Մելիքյանի գործունեությունը:

Շուտով, օգոստոսի վերջին խորհրդային իշխանությունն Ուկրաինայում կրկին տապալվեց: Կիև մտան Ուկրաինայի ժողովրդական հանրապետության (Դիրեկտորիա) բանակները: Իսկ մինչ այդ, օգոստոսի 11-ին, Օդեսան գրավել էր Ռուսական կամավորական բանակը: Անմիջապես վերականգնվեց Հայաստանի Հանրապետության Օդեսայի գլխավոր հյուպատոսության գործունեությունը՝ իր բոլոր ուղղություններով: Ե. Մելիքյանը վերակազմավորեց հյուպատոսական հիմնարկը անձնակազմը համալրելով հիմնականում Հայոց ազգային խորհրդի անդամներով:

1919 թվականի սեպտեմբերի 24-ի զեկուցագրում Ե.Մելիքյանը տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, որ «Խորհրդային իշխանության հեռանալուց հետո Հայաստանի հյուպատոսարանն անմիջապես պարզեց իր դրոշակը և վերսկսեց իր գործունեությունը: Գտնում եմ, որ կառավարությունը չի զլանա տալու անհրաժեշտ ցուցումներ հյուպատոսարանի գործունեությունը շարունակելու և իմ ներկա անորոշ դրությունը պարզելու վերաբերմամբ»[1]: Ե.Մելիքյանի անորոշ դրությունն այն էր, որ ձևակերպված էր որպես գլխավոր հյուպատոսի պաշտոնակատար, բայց իրականում բավական ժամանակ էր, ինչ կատարում էր հյուպատոսի պարտականությունները:

Օդեսայում իրենց գործունեությունը վերականգնեցին նաև Հայոց ազգային խորհուրդը և մյուս հայկական կազմակերպություններն ու միությունները:

Քանի .որ Ուկրաինայում իշխանությունները հաճախ էին փոփոխվում, Օդեսայի գլխավոր հյուպատոսի պաշտոնակատար Ե.Մելիքյանը իր առաջնահերթ խնդիրն է համարում պարզել նոր իշխանության վերաբերմունքը հայկական ազգային մարմինների ու հյուպատոսության նկատմամբ: Այս անգամ հյուպատոսի պաշտոնակատար Ե.Մելիքյանը այցելեց ռուսական Կամավորական բանակի Օդեսայի շրջանի զինվորական հրամանատարին, որը բավական սիրալիր ու բարյացակամ վերաբերմունք ցույց տվեց դեպի հայերը, դեպի Հայաստանի Հանրապետության հյուպատոսությունը և խոստացավ որոշ չափով բավարարել նրա կարիքները՝ հատկապես գաղթականներին հայրենիք տեղափոխելու հարցում: Ի դեպ, գաղթականների կյանքի բարելավման ու նրանց ճակատագրի հարցերը կենտրոնական տեղ էին գրավում Օդեսայի գլխավոր հյուպատոսարանի գործունեության մեջ: Եվ դա հասկանալի է, քանի որ Օդեսան հարավային Ռուսաստանի խոշոր կենտրոններից էր և այդտեղ էին հավաքվում գաղթական հայերը տարբեր վայրերից, ակնկալելով, որ այդ նավահանգստային քաղաքից ավելի դյուրին կարող են հայրենիք վերադառնալ:

Բաժնի վարիչն էր Հայկ Եղիազարյանը, որը եռանդուն աշխատանք ծավալեց գաղթական հայերին հայրենիք վերադարձնելու համար: 1919 թվականի սեպտեմբերին Օդեսայում կային շուրջ հինգ հազար գաղթական հայեր: Սերտ

---

[1] *Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 217, թ. 26:*

կապի մեջ մտնելով քաղաքի հայկական ազգային մարմինների հետ և նրանցից ստանալով նյութական ու բարոյական աջակցություն, Հ. Եղիազարյանն իր գործունեության առաջին մի քանի օրվա ընթացքում կազմակերպեց 90 հայ գաղթականների տեղափոխումը՝ հոգալով նրանց կարիքները: Հայաստան էին տեղափոխվում առաջին հերթին այն գաղթականները, որոնք հայրենիքում ունեին ծնողներ, ազգականներ, բարեկամներ, որպեսզի ավելի չբարդացնեն երկրի ծանր կացությունը: Գաղթականներին հայրենիք տեղափոխելու գործը դանդաղում էր նյութական, դրամական միջոցների խիստ պակասի պատճառով: 1919թ. սեպտեմբերի 24-ի իր զեկուցագրում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, հյուպատոսի պաշտոնակատար Ե. Մելիքյանը տեղեկացնում.է, որ գլխավոր հյուպատոսական հիմնարկի ֆինանսական վիճակը սկզբից ի վեր ծանր է եղել: Այն իր գոյությունը պահպանում էր սեփական կամ բարեգործական միջոցներով: Սեփական միջոցներն ստացվում էին զանազան վկայականներ և անցագրեր տալուց, որոնց արժեքը չնչին էր: Իսկ ամեն անգամ բարեգործական նվիրատվություններին դիմելը ամենևին էլ ցանկալի չէր, քանի որ պետական հիմնարկությունը կորցնում է իր հեղինակությունը: Գլխավոր հյուպատոսի պաշտոնակատարը շատ ճիշտ ու վճռական է դնում հարցը. «Եթե կառավարությունը վճռում է Օդեսայում պահել հյուպատոսարան, որը, իմ կարծիքով միանգամայն անհրաժեշտ է, ապա այդ հիմնարկությունը պետք է սոլիդ և պետական հիմքերի վրա դնել՝ չխնայելով հարկավոր ծախքերը, որոնք հանրապետության հեղինակության պահպանելու համար անհրաժեշտ են»[11]: Այդ հարցում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում միատեսակ մոտեցում չկար: Նախարարության գլխավոր քարտուղար Ալեքսանդր Տեր-Հակոբյանն իր մի գրության մեջ այն կարծիքն է հայտնում, որ հյուպատոսներն ու գործակալները պետք է աշխատեն առանց աշխատավարձի՝ չծանրաբեռնելով պետական գանձարանը[12]: Այսպիսի մտայնության պայմաններում անհնար էր նախարարությունից դրամական միջոցներ ակնկալելը: Նրանց գործադրած ջանքերով շարունակում էր գործել այդ կարևոր պետական հիմնարկը:

Սակայն Օդեսայի գլխավոր հյուպատոսության գործունեությունը երկար չշարունակվեց: 1919 թվականի դեկտեմբերի 21-ին երրորդ անգամ բոլշևիկյան բանակը գրավեց Ուկրաինան, և վերջնականապես այնտեղ հաստատվեց խորհրդային կարգեր: Դադարեց գործելուց նաև Հայաստանի Հանրապետության Օդեսայի գլխավոր հյուպատոսական հիմնարկը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Խարկովում հաստատվեցին շուրջ 10 հազար հայ գաղթականներ, հիմնականում Վանից, Էրզրումից և այլ քաղաքներից[13]: Անհրաժեշտ էր ապահովել համայնքի կյանքի իրավական ու սոցիալ-տնտեսական հիմքերը, կազմակերպել հայ բնակչության՝ հատկապես գաղթականների ապրելակերպը, լուծել աշխատանքի, բնակարանի և այլ կենսական հարցեր: Բնականաբար, առաջ եկավ Խարկովում ներկայացուցչություն հիմնելու խնդիրը: Կոմիսարիատի կոլեգիան իր՝ հոկտեմբերի 7-որոշմամբ Խարկովում ներկայացուցիչ նշանակեց տեղի Հայոց ազգային խորհրդի նախագահ, բժիշկ Մկրտիչ Մելիքյանին: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 8-ին, կոմիսարիատի կոլեգիայի պահանջով Մ.Մելիքյանն սկսեց իր պարտականությունների կատարումը: Նույն

[11] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 217, թ. 26:
[12] ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 200, ց. 1, գ. 217, թ. 20:
[13] Տես նույն տեղում, գ. 380, թ. 24:

օրն էլ Ուկրաինայի Կենտրոնական ռադայի արտաքին գործերի նախարարությունը ճանաչեց նրա լիազորությունները[14]:

Ինչպես Օդեսայում, այնպես էլ Խարկովում, հյուպատոսության ֆինանսական միջոցները գոյանում էին հայ գաղութի սուղ հնարավորություններից, գլխավորապես հյուպատոսական տուրքերի (անձնագրերի և անցաթղթերի), ցերեկույթների ու նվիրատվությունների հաշվին: Իր երեք ամսյա գործունեության ընթացքում Խարկովի հայկական հյուպատոսությունը զգալի աշխատանք կատարեց հայ գաղութի համախմբման և հայության իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Սակայն 1919թ. հունվարի 10-ին, Խարկովի խորհրդայնացումից հետո, արգելվեց հյուպատոսության, Հայոց ազգային խորհրդի ու հայկական մյուս կազմակերպությունների գործունեությունը: Նույն օրը (հունվարի 10-ին) Խորհրդային Ուկրաինայի Հայկական գործերի կոմիսարիատի Խարկովի բաժանմունքի ղեկավար Գասպարյանցի պահանջով ձերբակալվեցին հյուպատոս, Հայոց ազգային խորհրդի նախագահ Մ.Մելիքյանը և նրա օգնական Ավդալովը: Ապրիլի 15-ին Ռակովսկին թույլատրեց Մ.Մելիքյանին հեռանալ Խարկովից՝ առհասարակ թողնել Խորհրդային Ուկրաինայի սահմանները:

1919թ. հունիսին, գեներալ Ա.Դենիկինի Կամավորական բանակի կողմից Խարկովը գրավելուց հետո փոխվեց քաղաքական իրադրությունը, և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայկական կազմակերպությունների գործունեության համար:

Հուլիսի 4-ին Խարկովում կրկին իր գործունեությունը վերսկսեց հյուպատոսական հիմնարկը: Նոր հյուպատոսի պաշտոնը ստանձնեց Խարկովի հայ գաղութի հասարակական հայտնի գործիչ, բժիշկ Ռուբեն Յուզբաշյանը: Հյուպատոսական հիմնարկը անմիջապես ձեռնամուխ եղավ նահանգում ապաստանած բազմահազար հայ գաղթականների հաշվառման, անձնագրերի և անցաթղթերի հանձնման և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության կազմակերպմանը:

Հյուպատոսությունը ստանում էր նաև ռուսական Կամավորական բանակի գործնական աջակցությունը: Ուշագրավ է, որ գեներալ Ա.Դենիկինի կարգադրությամբ, Կամավորական բանակի շուրջ 600 հայ զինվորներ՝ մի քանի բժշկասանիտարական ջոկատների հետ, հյուպատոսական հիմնարկի և Եկատերինոդարում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Աաղաթելյանի ջանքերով, հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, տեղափոխվեցին հայրենիք՝ ազգային բանակում ծառայելու[15]:

Հյուպատոսական հիմնարկին հաջողվեց հարաբերություն հաստատել տեղի մամուլի խմբագիրների հետ, որոնք պարբերաբար տպագրում են «Հայկական հարցին» նվիրված հոդվածներ[16]:

Սակայն քաղաքական իրադրության կտրուկ փոփոխության հետևանքով Խարկովի հյուպատոսությունը դարձյալ չկարողացավ իր գործունեությունը երկար շարունակել: Նոյեմբերին խորհրդային բանակը մոտեցավ Խարկովին և մինչ քաղաք մտնելը՝ Ռ.Յուզբաշյանը դադարեցրեց հյուպատոսության գործունեությունը: Դեռևս 1919թ. հունվարին, Ուկրաինայի խորհրդային իշխանության

---

[14] *Տես նույն տեղում, թ. 2:*
[15] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 277, ց. 1, գ.1, թ. 47:*
[16] *Տես նույն տեղում, թ.15:*

թելադրանքով, Ռ.յուզբաշյանը պարտավորվել էր չզբաղվել ազգային խնդիրներով և չստանձնել հյուպատոսի պարտականությունը Խարկովում[17]:

Այսպիսով, ի տարբերություն Օդեսայի գլխավոր հյուպատոսության արդյունավետ գործունեության, Խարկովի հյուպատոսական հիմնարկը օբյեկտիվ պատճառներով չկարողացավ նման աշխատանք ծավալել: Այնուհանդերձ, այստեղ էլ կատարվեց ազգանպաստ գործ:

1918 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի ղեկավար Գ.Չամոյանի հրամանով Կիևում ստեղծվեց հյուպատոսություն: Դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական, նախկին հայկական կոմիսարիատի կոլեգիայի նախագահ գնդապետ Միքայել Լոմիձեն միաժամանակ ստանձնեց Հայաստանի Հանրապետության Կիևի հյուպատոսի պարտականությունները, իսկ քարտուղարը դարձավ Օ. Խազիզյանը դարձյալ համատեղությամբ: Հարուստ փորձ ու գիտելիքներ ունեցող Մ. Լոմիձեն մեծ հաջողությամբ էր կատարում հյուպատոսի իր պարտականությունները: Նա իր առաջնահերթ խնդիրը համարեց միավորել Կիևում գործող հայկական ազգային մարմիններն ու կազմակերպությունները հյուպատոսության շուրջը: Նկատենք, որ Կիևի հյուպատոսությունը գործում էր առավել նպաստավոր պայմաններում, այն սերտ կապի ու համագործակցության մեջ էր դիվանագիտական ներկայացուցչության հետ և օպերատիվ կերպով լուծում էր բոլոր հարցերը: Սակայն երեք ամիս հետո 1919 թվականի փետրվարին ընդհատվեց հյուպատոսության գործունեությունը: Խորհրդային բանակը Կիև մտնելուց անմիջապես հետո հասկանալի պատճառով արգելեց մայրաքաղաքում Վրաստանի և Հայաստանի հյուպատոսական ծառայությունների գործունեությունը: Կիևից Օդեսա տեղափոխվեցին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն ու հյուպատոսությունը: Գ. Չամոյանի հանձնարարությամբ Կիևում մնաց դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսության քարտուղար Օ.Խազիզյանը, որպեսզի ապահովեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կորպուսի արխիվի, գույքի և շենքի վերահսկողությունը: Չճանաչելով հանդերձ Վրաստանի ու Հայաստանի հյուպատոսական ծառայությունները՝ խորհրդային իշխանությունը թույլատրեց նրանց գոյությունը մինչև մարտի 31-ը: Այդ ընթացքում տեղի հայ գաղութի պահանջով իր արձակուրդն ընդհատեց և հյուպատոսական գործունեությունը վերսկսեց Մ. Լոմիձեն: Ապրիլի սկզբին Ուկրաինայի խորհրդային իշխանությունը Վրաստանի և Հայաստանի հյուպատոսներից պահանջեց տասնօրյա ժամկետում ստանալ իրենց կառավարություններից խորհրդային իշխանության ճանաչման հայտարարությունը: Սակայն «ոչ հյուպատոսների և ոչ առավել ևս Ռակովսկու համար գաղտնիք չէր, – տեղեկացնում է Օ.Խազիզյանը, – որ դրական պատասխան չէր ստանալու: Այնուհետև պատասխանի բացակայությունը իրավական հիմք տվեց Ուկրաինայի խորհրդային իշխանությանը վտարելու Վրաստանի և Հայաստանի հյուպատոսներին ոչ միայն Կիևից, այլ ընդհանրապես Ուկրաինայի սահմաններից»[18]:

Ուկրաինայի խորհրդային կառավարությանը կից Հայկական գործերի կոմիսարիատի լիազոր Սմբատ Մարգարյանը պահանջեց կոմիսարիատին հանձնել Հայաստանի Հանրապետության Կիևի հյուպատոսության արխիվը, կնիքը և դրամարկղը: Այս առիթով Մ. Լոմիձեն գրավոր բողոք ներկայացրեց, որն

---

[17] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ.380, թ. 24:

[18] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ.173, 2-րդ մաս, թ.189:

արդյունք չունեցավ: Նա ստիպված հանձնեց պահանջվածը: Մայիսի սկզբին Կիևից Օդեսա մեկնեցին Հայաստանի և Վրաստանի հյուպատոսները: Մեկնելուց առաջ Մ. Լոմիզեն Կիևի հյուպատոսի լիազորությունը հանձնեց երդվյալ հավատարմատար Ա. Դրագունովին՝ պահանջելով նրանից, որ Ուկրաինայում իշխանության փոփոխության դեպքում վերսկսի իր պարտականությունների կատարումը մինչև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության որոշումը՝ կա՛մ նրան հաստատելու, կա՛մ նոր անձ նշանակելու մասին[19]: Հիրավի, մի քանի ամիս անց օգոստոսի վերջին Ուկրաինայի ժողովրդական հանրապետության և գեներալ Ա.Դենիկինի կամավորական բանակները պարտության մատնեցին բոլշևիկներին Կիևում և Ուկրաինայում: Ա. Դրագունովը անմիջապես բանակցությունների մեջ մտավ նոր իշխանությունների հետ, ճանաչվեց ու ընդունվեց Կիևի դիվանագիտական կորպուսում և վերսկսեց իր հյուպատոսական գործունեությունը: Սակայն 1919թ. դեկտեմբերի 16-ին խորհրդայնացվեց Կիևը, և դադարեց գործելուց Կիևի հյուպատոսական հիմնարկը:

Այսպիսով, բավական բարդ ու անկայուն քաղաքական իրադրության պայմաններում՝ Օդեսայում, Խարկովում ու Կիևում հիմնված ՀՀ հյուպատոսական մարմինները լայն գործունեություն ծավալեցին հայ գաղութի համախմբման, հայության իրավունքների պաշտպանության և այլ բազմաթիվ խնդիրների իրականացման ուղղությամբ:

ԱՆՈՒՇ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Ֆրանսիայի բանվոր դասակարգը, ժողովուրդը սրբությամբ են պահպանում Մանուշյանի ջոկատի հերոսական մարտիկների հիշատակը, Մանուշյանի, որի անվամբ, ի նշան շնորհակալության և հիացմունքի կոչված է Փարիզի փողոցներից մեկը ...»[1]: Այսպես է գրել Մ.Մանուշյանի մասին Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար Ժակ Դյուկլոն: Հիրավի, հայ ժողովրդի արժանավոր զավակը իր սխրանքներով հիացրեց Ֆրանսիային, չխնայելով կյանքը, մինչև վերջ պայքարեց լավագույն ապագայի համար:

Մ.Մանուշյանը ծնվել է 1906 թ. սեպտեմբերի 1-ին, Եփրատ գետի ակունքի մոտ գտնվող Ադըյաման գյուղաքաքում, այգեգործի ընտանիքում: Նրա հայրը զոհվել է թուրքական հրոսակների հարձակումների ժամանակ, մայրը սովամահ է եղել, իսկ հայրենի օջախը ավերվել է թուրքական ենիչերիների կողմից:

Ութամյա Միսաքը իր եղբայրների ու քույրերի հետ Ադըյամանի հայ գաղթականների օգնությամբ անցնում է Սիրիա: Դեռ որբանոցում եղած ժամանակ Մի-

---

[19] Տես նույն տեղում:

[1] ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՆՊ ԿՊԱ), ֆ. 1029, ց. 1, գ. 177ա, թ. 5:

սաքը աչքի է ընկնում իր արտակարգ ընդունակություններով: Հենց այդ ժամանակ, պատանի հասակում նա հրապարակում է իր առաջին բանաստեղծություններն ու հոդվածները[1]:

1925 թ. Մ.Մանուշյանը Սիրիայի բազմաքանակ հայ որբերի հետ տեղափոխվում է Ֆրանսիա[2]:

Մինչև 1928 թ. աշխատում է Մարսելում՝ որպես ատաղձագործ բանվոր:

1928 թ. տեղափոխվում է Փարիզ, աշխատում մեքենաշինական գործարաններից մեկում որպես բանվոր[3]:

1930-1935 թթ. Մ.Մանուշյանը ամբողջապես զբաղվում է գրական աշխատանքով, որից հետո անցնում հասարակական և քաղաքական աշխատանքի:

1934 թ. Մանուշյանը ընդունվում է Ֆրանսիական կոմունիստական կուսակցության շարքերը և մինչև իր կյանքի վերջին տասնամյակը (1934-1944 թթ.) իրեն նվիրում է աշխատավոր
ժողովրդի շահերի պաշտպանության պատվավոր գործին[4]:

Այդ տարիներին Մանուշյանը հանդես է գալիս հակաֆաշիստական մի շարք հոդվածներով («Զանգու» թերթում), որտեղ կոչ է անում հայ գաղութին ստեղծել ազգային միասնական ճակատ՝ միահամուռ կերպով պայքարելու ֆաշիստների դեմ:

1937 թ. Մանուշյանը մասնակցում է Ֆրանսիական կոմկուսի հակաֆաշիստական համագումարին՝ որպես հայկական կոմունիստական սեկցիայի ներկայացուցիչ[5]:

1938 թ. հունվարին Ֆրանսիայի՝ Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) կենտրոնական կոմիտեն իր երկրորդ քարտուղար Մ.Մանուշյանին Փարիզից ուղարկում է Լիոն՝ ՀՕԿ-ի երեք մասնաճյուղերի («Սիկոյան», «Վերելք», և «Չորագես») միջև եղած տարաձայնությունները ուսումնասիրելու և կանոնավորելու հանձնարարությամբ: Այդ նույն ամսվա վերջերին՝ Լիոն քաղաքի երրորդ քաղաքապետարանի սրահում կազմակերպված հրապարակային ժողովում, համերաշխություն վերականգնելու վերաբերյալ առաջին իսկ ելույթով, Մանուշյանը իրեն դրսևորում է որպես բարձր գիտակցության և կազմակերպչական տաղանդի տեր մարդ: Նա խիստ քննադատություն ծավալեց հասարակական գործերն իրենց շահամոլությանը ծառայեցնող սնափառների, բոլոր նրանց նկատմամբ, ովքեր իրենց «աշխատանքները» հանգեցնում էին պառակտումներին, հասարակական գործերի ջլատմանը:

Մանուշյանը մոտ երեք ամիս մնում է Լիոնում և տեղի ազնիվ ու հայրենասեր ընկերների հետ հասնում համերաշխության վերականգնմանը[6]:

1939 թ. սեպտեմբերի 3-ին Մանուշյանը ձերբակալվում է, 1940 թ. կանչվում բանակ և զորացրվում այն ժամանակ, երբ ֆաշիստներն արդեն ոտնակոխ էին անում Փարիզը[7]:

---

[1] *Տես նույն տեղում, գ. 137ա, թ. 6:*
[2] *Տես նույն տեղում:*
[3] *Տես նույն տեղում:*
[4] *ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 1029, ց. 1, գ. 137ա, թ. 2.*
[5] *ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 1029, ց. 1, գ. 137ա, թ. 6:*
[6] *Տես նույն տեղում, թ. 2:*
[7] *Տես նույն տեղում, թ. 6:*

Մանուշյանը շուտով ոստիկանության կողմից բանտարկվում և ուղարկվում է Կոմպիենի համակենտրոնացման ճամբարը: Երեք ամիս անց մի խումբ ընկերների հետ փախչելով այնտեղից, ընդհատակյա պայքար է ծավալում, ապա պարտիզանական շարժման ղեկավարության հանձնարարությամբ ստանձնում «Ստալինգրադ» ջոկատի քաղաքական կոմիսարի պաշտոնը, իսկ այնուհետև նշանակվում նրա հրամանատար: Այդ ջոկատը, սկսած 1943 թ. մարտի վերջերից, հանգիստ չէր տալիս Ֆրանսիան օկուպացրած հիտլերականներին: Հարձակում էսէսական խմբի վրա Լևալուա փողոցում, Փարիզի պարետի գեներալ ֆոն Շաումբուրգի, հայտնի էսէսական շտանդարտենֆյուրեր Յուլիոս Ռիթերի սպանությունները, բազմաթիվ դիվերսիոն գործողություններ, պայթեցված զինվորական էշելոններ, հայրենասիրական պայքարի կոչ անող տասնյակ թռուցիկներ: «Ստալինգրադ» ջոկատի այս և բազմաթիվ այլ գործողություններին անմիջական ղեկավար մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի խիզախ զավակը[1]:

Մանուշյանը նաև անմիջական օգնություն է ցույց տալիս հայ պարտիզանական ջոկատների գործունեությանը: Նա հետագայում ղեկավարում է պարտիզանական ևս երեք ջոկատ:

Մանուշյանը մեծ աշխատանք է կատարել նաև Սովետական բանակի հայ ռազմագերիներին օգնելու գործում: Արդեն 1943 թ. մայիս ամսից Փարիզում նա և իր խմբի մարտիկ Ալեքսան Կոստանդինյանը հայ ռազմագերիների հետ կապ էին հաստատել: Նրանք հակահիտլերական թռուցիկներ էին հրատարակում և տարածում զորանոցներում, թաքստոցներ ապահովում բանակը լքող զինվորների համար և նրանց մուտքն ապահովում պարտիզանների շարքեր:

«... Հասարակաց թշնամիի դեմ տարվող այս ընդհանուր պայքարի մեջ մեր գաղութն ալ անմասն չմնաց ...

... Նույն պայքարի անբաժանելի մասն ենք նկատած բռնորեն գերման ատելի համազգեստը հագած խորհրդային ռազմագերիներու փախուստի աշխատանքը: Ուրախ ենք այսօր հայտարարելու, որ անոնցմե շուրջ 1400 հոգիներ տասնյակ մը մեծ ու փոքր քաղաքներ ազատագրած են գերման ավազակներեն ու ֆրանսիացի հայրենասերներու գնահատման արժանացած, պանծացնելով այսպես մեր ժողովրդի արդարասիրությունն ու քաջությունը:

Ռազմագերիներեն անոնք, որոնց անհրաժեշտ պայմանները չէինք կրցած ստեղծել ազատագրական կռիվներու մասնակցելու համար, խիստ անձկալի կացության մը մատնված էին: Մինչև իշխանությանց իրենց բաղդով զբաղվելը՝ անոնք ֆրանսահայության հոգածության առարկա դարձան որպես մեր հարազատներն, որ վերադառնալով Հայրենիք, պիտի նվիրվին անոր մեծության»[2]:

Մանուշյանի անունն ու սխրանքները տարածվում են ամբողջ Ֆրանսիայում ու նրա սահմաններից դուրս: Գեստապոն ամեն միջոց գործադրում է՝ որսալու Մանուշյանին: Ֆաշիստները նրա գլխի համար հայտարարել էին 5 մլն. մարկ պարգև[3]:

Երկար որոնումներից ու լրտեսական ամեն ջանք գործադրելուց հետո գեստապոյականներին հաջողվում է 1943 թ. նոյեմբերի 10-ին ձերբակալել Մանուշյանին ու նրա 22 ընկերներին[4]:

---

[1] *ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 1029, ց. 1, գ. 137ա, թ. 2:*

[2] *Տես նույն տեղում:*

[3] *Տես նույն տեղում, թ. 6:*

[4] *Տես նույն տեղում:*

Մանտե բանտից Մանուշյանը իր կնոջը՝ Մելինեին, գրում էր. «Այս պատերազմը փորձաքար մըն է, որտեղ պիտի ճշտվի յուրաքանչյուրի դիրքը Ֆրանսիայի և մանավանդ հայրենիքի նկատմամբ»[1]:

Գեստապոյականները մեծ դատավարություն սկսեցին, որը Ֆրանսիայի նորագույն պատմության մեջ հայտնի է «Քսաներեքի դատավարություն» անվամբ[2]:

1944 թ. փետրվարի 17-ին Փարիզի Կոնտինենտալ հյուրանոցում սկսվեց դատավարությունը, որը տևեց երկու օր: 23 հերոսներն էլ մահվան դատապարտվեցին[3]:

«Մենք ազատության զինվորներ ենք և անսասան կամքով ենք լսում դատավճիռը: Բայց ազատությունը կարելի չէ գնդակահարել, ազատությունն անմահ է ... Մենք գիտակցաբար ենք գնում դեպի մահ, որպեսզի ապագա մարդկությունն այլևս չտեսնի պատերազմի և ֆաշիզմի սարսափները ... Մենք հավատով ենք հրաժեշտ տալիս կյանքին, անսասան հավատով, որ կոմունարների դրոշը կծածանվի Ֆրանսիայի վրա, և աշխարհում կհաղթանակի ազատությունը... Վիվ լա Ֆրանս, վիվ լա լիբերտե...- Կեցցե Ֆրանսիան, կեցցե ազատությունը...»[4]:

1944 թ. փետրվարի 21-ին Մոն Վալերիան կոչվող վայրում քաջ զինվորները գնդակահարվեցին ազատության պատի առջև[5]:

Կնոջն ուղղված վերջին նամակում Միսաք Մանուշյանը գրում էր.

«Քանի մը ժամ հետո այլևս այս աշխարհեն կհեռանամ: Այս կեսօրե հետո ժամը 3-ին, պիտի գնդակահարվինք: Չեմ հավատար, այսուհանդերձ, գիտեմ որ այլևս քեզ պիտի չտեսնեմ:

Ինչ կրնամ գրել քեզի, ամեն ինչ անորոշ է մեջս և պայծառ միաժամանակ:

Ֆրանսիայի ազատագրության բանակին մեջ մտած էի որպես կամավոր զինվոր և կմեռնիմ գաղափարիս համար: Երջանկություն անոնց, որ պիտի ապրին մեզմե հետո և պիտի վայելին վաղվա ազատության և խաղաղության անուշությունը:

Վստահ եմ, որ Ֆրանսիայի ժողովուրդը ազատության համար պայքարող ընկերներուն հիշատակը պիտի գիտենա պատվել արժանավայել կերպով:

... Բարեկամներուս օգնությամբ, որոնք վստահ եմ, որ չպիտի զլանան և պիտի ուզեն պատվեն զիս, տպել կուտաս բանաստեղծություններս, որոնք արժանի են կարդացվելու: Եթե կրնաս հիշատակներս տար Հայաստան:

Քիչ հետո պիտի մեռնիմ 22 ընկերներուս հետ, քաջությամբ և հոգիի խաղաղությամբ մարդու մը, որու խիղճը հանգիստ է, որովհետև անհատապես ոչ ոքի գեշություն չեմ ըրած և եթե ըրած եմ, եղած է առանց ոխի ...

Բոլոր անոնք, որոնք ինձ գեշություն ըրած են կամ ուզած են ընել, բոլորին կներեմ, բացի այն անձեն, որ մեզ դավաճանեց, իր մորթը վերագնելու համար և անոնց, որոնք մեզ ծախեցին:

---

[1] Նույն տեղում, գ. 177[ա], թ. 5:
[2] Տես նույն տեղում:
[3] Տես նույն տեղում:
[4] Տես նույն տեղում, գ. 137[ա], թ. 1:
[5] Տես նույն տեղում, թ. 6:

Ուժեղորեն կհամբուրեմ քեզ, ինչպես և քույրդ և բոլոր ընկերները, որոնք զիս կճանչնան հեռվեն կամ մոտեն, կուրծքի վրա կսեղմեմ բոլորդ, մնաք բարով»[1]:

Մանուշյանի գնդակահարությունից հետո չեն դադարում հետապնդումները նրա այրու՝ Մելինեի նկատմամբ: Այդ ժամանակ նրան իր տանը ապաստան է տալիս Շառլ Ազնավուրի հայրը՝ Մամիկոնը[2]:

1945 թ. սեպտեմբերին հատուկ որոշմամբ Միսաք Մանուշյանի այրին՝ Մելինե Մանուշյանը, հաստատվում է Երևանում: 1946 թ. ՀՍՍՀ մինիստրների խորհրդի որոշմամբ նրան, որպես «Ստալինգրադ» ջոկատի հրամանատարի և հերոսի այրու, նշանակվում է ամսական 500 ռուբլի թոշակ[3]:

Ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Լուի Արագոնը 1947 թ. մարտի 6-ին Փարիզի դահլիճներից մեկում տեղի ունեցած հավաքույթի ժամանակ, որը նվիրված էր հայ ժողովրդի պոեզիային, ասել է.

«Հայ ժողովրդի տառապանքի դիմաց Ֆրանսիայի բազմաթիվ մտավորականներ իրենց թանաքը գործածեցին՝ նպաստելու նրա ազատության գործին: Բայց հայ ժողովուրդը թանաքի տեղ իր արյունը տվեց Ֆրանսիայի ազատագրության համար: Երբեք չեմ մոռանա պատերազմի ժամանակ Ֆրանսիայի բոլոր անկյուններում պատերի վրա փակցված մեծածավալ ծանուցումները... Նրանց պետը հայ էր՝ Մանուշյանը, որի գնդակահարման տարելիցն է զուգադիպում այս հավաքույթը: Գավառի մի խուլ անկյունում, անծանոթ մի ձեռք այդ ծանուցումներից մեկի վրա գրել էր.

«Մեռան Ֆրանսիայի համար»:

Մենք չենք կարող մոռանալ ձեր ժողովրդի մասնակցությունը մեր հայրենիքի ազատությանը»[4]:

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ /ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ/

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը: Նրա ավելի քան 600 հազար զավակներ, որից ավելի քան 300 հազարը Խորհրդային Հայաստանից, 1939 – 1945թթ. տարբեր ռազմաճակատներում ու զորատեսակների կազմում, գործուն մասնակցություն ունեցան մարտական բոլոր գործողություններին՝ փառքով պսակելով հայ ժողովրդի մարտական հարուստ ավանդույթներով լի պատմությունը: Հայ ռազմիկներից ավելի քան 200 հազարը զոհվեցին թշնամու դեմ մղված արյունահեղ մարտերում՝ ոսկե տառերով գրելով իրենց անունները պատերազմի տարեգրության էջերում: Ճակատամարտերում ցուցաբերած խիզախության և կատարած անօրինակ սխրանքների համար շուրջ 70 հազար հայոր-

---

[1] *«Սովետական Հայաստան», 1944 թ. օգոստոսի 7, հ. 213, էջ 3:*

[2] *ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 362, ց. 7, գ. 86, թ. 1-3:*

[3] *Տես նույն տեղում, ֆ. 113, ց. 57, գ. 520, թթ. 1, 7, 9:*

[4] *Տես նույն տեղում, ֆ. 1029, ց. 1, գ. 137ա, թ. 6:*

դիներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ նրանցից առավել աչքի ընկած 105–ը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման[1]: Այդ կոչումը սահմանվել էր դեռևս 1934թ. ապրիլի 16–ին՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշմամբ, որպես պատվավոր կոչում, գերազանցության բարձրագույն աստիճան:

1934 – 1991թթ. ընթացքում հերոսի կոչում է շնորհվել շուրջ 13000 մարդու, որոնցից 11633–ին 1941 – 1945թթ. Հայրենական Մեծ, 412–ին՝ Խորհրդա - Ֆիննական և 93–ին՝ Խորհրդա - ճապոնական պատերազմներում, իսկ մնացածը խաղաղ ժամանակաշրջանում կատարած սխրանքների համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմում հերոսացած 12138 խիզախները հանդիսանում էին ԽՍՀՄ 62 ազգերի ու ժողովուրդների զավակներ: Հերոսների համաստեղության շարքում հայերը հրեաների հետ միասին գրավում են պատվավոր 5–6–րդ տեղերը ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից ու թաթարներից հետո[2]:

Ինչպես արդեն նշել ենք, Խորհրդային Միության հայ հերոսների թիվը 108 է: Համեմատության կարգով նշենք, որ վրացի հերոսների թիվը կազմել է 89, իսկ ադրբեջանցիներինը՝ 43: Փաստերը ցույց են տալիս, որ ադրբեջանցի համարվող հերոսների իրական թիվը ավելի քիչ է, քանի որ նրանց մի զգալի մասը քրդեր են, թալիշներ, թաթեր, լեռնաին հրեաներ և այլ ազգություններ:[3]

Մեր հաշվումներով հայ հերոսներից 35–ը Խորհրդային Հայաստանից են, 4–ը արևմտահայ, 27–ը՝ Արցախից, 23–ը՝ Ռուսաստանից, 13–ը՝ Վրաստանից, 5–ը՝ Ադրբեջանից և 1–ը՝ Ուկրաինայից: Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում ապրած հայերից ամենից շատ հերոսներ տվել են արցախահայերը: Դա պատահական չէ, որովհետև հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը ցույց է տվել, որ Արցախը դարեր շարունակ եղել է պատմական Հայաստանի հյուսիս - արևելյան կողմի հուսալի վահանը, որի բնակիչները քոչվոր զավթիչների դեմ մղված մարտերում միշտ էլ աչքի են ընկել իրենց նախանձելի քաջությամբ, համառությամբ և տոկունությամբ: Պատմական որոշ ժամանակաշրջանում Արցախը նույնիսկ հանդիսացել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կենտրոն: Միայն ցարական Ռուսաստանի բանակին արցախահայերը տվել են 9, իսկ Խորհրդային բանակին 23 գեներալ, 3 մարշալ, 3 ծովակալ, հազարավոր սպաներ:[4]

Մինչ խորհրդային կարգերի հաստատվելը Արցախը 1805–1918թթ. եղել է Ռուսական կայսրության Ելիզավետպոլ նահանգի, իսկ 1918–1920թթ. Հայաստանի Հանրապետության կազմում: Անդրկովկասում առաջինը Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը, 1921թ. Հայաստանում ստեղծված բարդ ու հակասական իրադրությունը, ինչպես նաև Բաքվի նավթի գործոնը, հնարավորություն

---

[1] Տես Հարությունյան Կ.Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945թթ..), Եր., 2001, 15, 9-10 (ընդհանուր առմամբ հայ հերոսների թիվը 108 է, քանի որ հետպատերազմյան տարիների խաղաղ աշխատանքի բնագավառում կատարած սխրանքների համար հերոսի կոչում է շնորհվել ևս 3 հայորդու):

[2] Հաշվումները կատարված է մեր կողմից՝ Герои Советского Союза. Историко-статический очерк, М., 1984 и Герои Советского Союза. Краткий биографический словарь, М., кн. I, 1987, кн. 2. 1988 աշխատությունների հիման վրա:

[3] Տես Հարությունյան Կ.Ա., Մանուկյան Հ.Հ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում 1941-1945թթ., Ե., 2001, էջ 126:

[4] Տես Վիրաբյան Ա., Գիրք դարերի խորքից, Ե., 1998, Աշանավոր արցախցիներ (ռուսերեն). Ե., 1992:

տվնցին Ադրբեջանի ղեկավարությանը ճարպկորեն օգտվելու ընձեռված հնարավորություններից և ստիպել ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյին նույն թվականի հուլիսի 5–ի որոշմամբ գերազանցապես հայ բնակչություն ունեցող երկրամասը «նվիրաբերել» Ադրբեջանին: Շատ լավ հասկանալով, որ այդպիսի մի խոշոր հայաբնակ երկրամասում վտանգավոր կլինի վարչական մեկ միավոր ստեղծելը, խորամանկ և հեռատես ազերիներն Արցախի հայաշատ բնակավայրերը բաժան-բաժան արեցին իրարից և նրանց մի զգալի մասն արհեստական վարչա-տարածքային վերաբաժանման հետևանքով անջատեցին Լեռնաին Ղարաբաղից:

1923թ. հուլիսի 7–ին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Ղարաբաղից անջատված հայկական բնակավայրերն ընդգրկվեցին արհեստականորեն ստեղծված նոր վարչատարածքային՝ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի (Քարհատի), Գետաբեկի և Շահումյանի շրջանների միջև:

Բացի այդ, որպեսզի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը ֆիզիկապես բաժանվի Խորհրդային Հայաստանից, իրենց «ինտերնացիոնալիստ» հորջորջող ազերիները 1923-1929թթ. Հայաստանի և Ղարաբաղի միջև ստեղծեցին այսպես կոչված «Կարմիր Քուրդիստան» հանրապետությունը, որը որոշ ժամանակ անց վերացվեց ու ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղը արևմուտքից ու հարավից մայր Հայաստանից կտրող Քյալբաջարի և Լաչինի ադրբեջանական շրջանները:[1] Դեռ ավելին, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, ապա Մեծ Հայրենականը, Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով առիթից, հանրապետությունում ապրող հայերին զանգվածաբար ռազմաճակատ ուղարկեց ի հաշիվ ադրբեջանցիների: Պատմական գիտությունների դոկտոր, Արցախի պատմության նվիրյալ Հրանտ Աբրահամյանի վկայությամբ, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գործող բանակ է զորակոչվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ բնակչության մեկ երրորդը, այսինքն 45 հազար մարդ, որոնցից 22 հազարը զոհվել է ռազմաճակատում:[2]

Համարյա նույն թվերն են բերված Շահեն Մկրտչյանի աշխատանքներում:[3] Ըստ վերջինիս, պատերազմի տարիներին ռազմաճակատ է զորակոչվել ԼՂԻՄ-ի հայ բնակչության 30%-ը:[4] Չափազանց արժեքավոր փաստեր են բերված Հրանտ Աբրահամյանի և Շահեն Մկրտչյանի վերջերս համատեղ հրատարակած գրքում. Հայրենական մեծ պատերազմը (1941-1945թթ.) նպաստավոր պայմաններ ստեղծեց, որպեսզի հայկական Հադրութի շրջանի բնակչության 38%-ը, կամ բացարձակ թվերով՝ 8267 հոգու զորակոչեն գործող բանակ, - ասված է այնտեղ: Հազար մարդու հաշվով դա 5-6 անգամ ավել էր, քան ադրբեջանական շրջաններից էին զորակոչվել:[5] Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Պատկերը նման է եղել նաև Հյուսային Արցախում: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանի հաշվարկներով, միայն Շահումյանի շրջանից պատերազմի տարիներին գործող բանակ են զորակոչվել ավելի քան 15 հազար

---

[1] Տես Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996, էջ 5-7:

[2] Տես Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Ե., 1991, էջ 68:

[3] Տես Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ուղեցույց), Բաքու, 1970, էջ 9, Արցախ, Ե., 1991, էջ 72:

[4] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Բանբեր Հայաստանի արխիվներին, Ե., 1985, թիվ 1, էջ 111-127:

[5] Աբրահամյան Հ., Մկրտչյան Շ., Արցախի համար զոհված դիզակցիները, Ե., 2000, էջ 15:

հայեր, որոնցից ավելի քան 5 հազարը զոհվել են ռազմաճակատում:[1] Ըստ Բորիս Սարկիսովի, միայն Շամխորի շրջանի Չարդախլու հայկական գյուղից ռազմաճակատ է զորակոչվել գյուղի բնակչության ավելի քան 35%-ը՝ 1200 մարդ, որից զոհվել են 320-ը:[2] Միայն Չարդախլուն իր պատմության ընթացքում տվել է 2 մարշալ, 7 գեներալ, 3 գնդապետ, 180 տարբեր կոչումների սպաներ:[3] Պատերազմի տարիներին զորակոչը Հյուսիսային Արցախի հայաշատ շրջաններում նույն պատկերն է ունեցել ինչ Լեռնային Ղարաբաղում: Մեր մոտավոր հաշվումներով, շուրջ 35 հազար հայեր: Այսպիսով, Արցախից ընդհանուր առմամբ պատերազմի տարիներին բանակ է զորակոչվել ավելի քան 80 հազար հայեր, որը կազմել է բնակչության 30%-ը, նրանց շուրջ կեսը զոհվել են ռազմաճակատում: Եթե բանակ զորակոչված արցախահայերի քանակը համեմատենք ԽՍՀՄ-ից նույն ժամանակաընթացքում գործող բանակ զորակոչվածների թվի հետ, որը կազմել է երկրի բնակչության 18%-ը,[4] իսկ Խորհրդային Հայաստանի բնակչության 20%-ը,[5] ապա տեսնում ենք, որ Լեռնային Ղարաբաղում և Հյուսային Արցախում հայերի զորակոչը գերակատարվել է ավելի քան 12%-ով, իսկ որոշ շրջաններում էլ ավելի՝ 20%-ով: Սա մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով պատերազմի ընձեռած նպաստավոր պայմաններից, պլանավորված կերպով իրագործել է Արցախի հայաթափման նախօրոք մշակած իր ոճրագործ ծրագիրը:

Չնայած Ադրբեջանի կառավարության կողմից Արցախի գերակշիռ մեծամասնությունը կազմող հայ բնակչության նկատմամբ կիրառած միտումնավոր հանցավոր քաղաքականությանը, արցախահայությունը ֆաշիզմի դեմ մղված պայքարում պատվով կատարեց հայրենիքի հանդեպ ունեցած իր սրբազան պարտքը՝ տալով Խորհրդային Միության 27 հերոս, Փառքի շքանշանի երեք աստիճանների 6 ասպետ, 3 մարշալ, 3 ծովակալ, 23 գեներալ, ավելի քան 30 հազար շքանշանակիրներ ու մեդալակիրներ:[6]

Ժամանակագրական առումով արցախահայերից 3-ը Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 1940, 2-ը՝ 1942, 4-ը՝ 1943, 10-ը՝ 1944, 5-ը՝ 1945, 2-ը՝ 1946 և 1-ը՝ 1975 թվականներին:

Հերոսություն կատարելիս նրանցից 3-ը ունեցել են գեներալի, 1-ը՝ գնդապետի, 2-ը՝ փոխգնդապետի, 3-ը՝ մայորի, 1-ը՝ կապիտանի, 14-ը՝ լեյտենանտի (այդ թվում կրտսեր և ավագ) և 3-ը՝ սերժանտի զինվորական կոչումներ:[7]

Պատերազմի հաղթական ավարտից հետո արցախահայ հերոսներից Հովհաննես Բաղրամյանին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Բաբաջանյանին՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Միքայել

---

[1] Տես Բարսեղյան Խ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում, Ե., 1995, էջ 56:

[2] Саркисов Б.А., Не звони, не звони, колокол, Е., 1988, с.3.

[3] Տես Վիրաբյան Ս., Գիրք դարերի խորքից, Ե., 1998, էջ 10, Նշանավոր արցախցիները (ռուսերեն) Ե., 1993, էջ 48-147:

[4] Гриф секретности снят: потери Вооруженных Сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах. Статистическое исследование, М., 1993, с. 139.

[5] К.А.Арутюнян, Кому нужны особые "уточнения" достоверности исторических исследований, Вестник общественных наук, №2, Е., 2000, с.179.

[6] Հաշվումները կատարված են մեր կողմից:

[7] Հաշվարկները կատարել ենք Կ.Ա.Հարությունյանի՝ Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի մենագրության տվյալների հիման վրա:

Պարսեղովին գեներալ-գնդապետի, Գրիգոր Բադյանին և Կոնստանտին Նազարյանին (Նազարով) գեներալ-մայորի կոչում: Պատերազմի տարիներին՝ 1943թ. հոկտեմբերի 16-ին, գեներալ-մայորի կոչում էր շնորհվել Անդրանիկ Ղազարյանին:

Արցախահայ հերոսներից 16 հոգի ծառայում էին հետևազորում, 4-ը՝ հրետանային զորամասերում, 4-ը՝ օդաչու էր, 2-ը տանկիստ, իսկ 1-ը՝ հեծելազորային:

Հերոսի կոչման արժանանալու պահին նրանցից Հովհաննես Բաղրամյանը հանդիսանում էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, Միքայել Պարսեղովը՝ 7-րդ բանակի հրետանու պետ, Անդրանիկ Ղազարյանը՝ 74-րդ հրաձգային դիվիզիայի, Համազասպ Բաբաջանյանը՝ 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի Կարապետ Բադյանը՝ 71-րդ հրաձգային գնդի հրամանատար: Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանն առաջին անգամ այդ բարձր կոչմանն է արժանացել ավիաօղակի, երկրորդ անգամ ավիագնդի հրամանատարի պաշտոնում: Ռաֆայել Գաբրիելյանը (Կապրելյան) Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է 89-րդ ավիատրանսպորտային գնդի հրամանատար, իսկ հերոսի կոչման արժանանալիս՝ ԽՍՀՄ վաստակավոր փորձակող օդաչու (15.05.1975թ.): Արցախահայ մնացած հերոսներից 4-ը եղել է գումարտակի, 2-ը՝ մարտկոցի, մեկը՝ վաշտի, մեկը՝ ավիաէսկադրիլիայի, 7-ը՝ դասակի, 2-ը՝ ջոկի, 1-ը՝ հրանոթի հրամանատար, 1-ը՝ գումարտակի կոմիսար, 1-ը՝ ավիաէսկադրիայի շտուրման:

Ըստ տարիքային հասակի հերոսի կոչում շնորհելու պահին ամենամեծ տարիքն ունեցել է Հովհաննես Բաղրամյանը՝ 47 տարեկան (ծնվել է 1897թ. դեկտեմբերի 2-ին, հերոսի կոչման արժանացել 1944թ. հուլիսի 29-ին և 1977թ. դեկտեմբերի 1-ին, իսկ ամենափոքր տարիքն ունեցել է Սուրեն Գասպարյանը (Կասպարյան) 20 տարեկան (ծնվել է 1924թ. օգոստոսի 15-ին, հերոսի կոչման արժանացել է 1944թ. նոյեմբերի 18-ին): Մնացած հերոսներից 9-ը ծնվել են 1901-1910, 12-ը՝ 1911-1920, իսկ 4-ը՝ 1921-1924 թվականներին: Խորհրդային Միության հերոս Միքայել Պարսեղովը ծնվել է 1899թ. հունիսի 15-ին, հերոսի կոչման արժանացել՝ 1940թ. մարտի 21-ին: Ինչպես տեսնում ենք, արցախահայ հերոսների միջին տարիքը կազմել է 33 տարեկան:

Արդեն նշել ենք, որ արցախահայ հերոսներից 9-ը այդ բարձր կոչմանն արժանացել են հետմահու: Մնացած 18 հերոսներից 11-ը պատերազմից հետո շարունակել են զինվորական ծառայությունը, իսկ 7-ը՝ վերադարձել են խաղաղ աշխատանքի ճակատ: Այժմ արցախահայ հերոսներից կենդանի են մնացել 2-ը՝ Կոնստանտին Նազարյանը (Նազարով) և Հրանտ Ավագյանը, նրանցից առաջինը ապրում է Մոսկվայում, իսկ երկրորդը Դնեպրոպետրովսկում:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից թվով ամենաշատ՝ 6 հերոս տվել է Ստեփանակերտի շրջանը. Կոնստանտին Նազարով (գ.Խնձրիստան), Սուրեն Պետրոսյան, Վլադիմիր Հովհաննիսյան (երկուսն էլ Ռև գյուղից), Երեմ Դանիելյան, Գևորգ Հակոբյան (հորեղբոր որդիներ, Արանզամին գյուղից) և Սուրեն Գասպարյան (Ղլիղբաղ գյուղից): Այնուհետև Շուշիի շրջանը՝ 5 հերոս. Անդրանիկ Ղազարյան, Նելսոն Ստեփանյան, Ռուբեն Բադիրյան (երեքն էլ Շուշի քաղաքից), Հրանտ Ավագյան (գ. Քարինտակ) և Ռաֆայիլ Գաբրիելյան (ծնվել է Բաքվու մշուշեցի հայտնի բժիշկ, պրոֆեսոր Հովնան Գաբրիելյանի ընտանիքում]: Չորս հերոս է տվել Մարտունու շրջանը, Միքայել Պարսեղով (գ.Մեղրադիշեն-Կոլխոզաշեն), Իսահակ Մանասյան (գ.Խերխան), Արամ Աաֆարյան (գ.Հաղորտի) և Իվան Շահում-

յան (գ.Պառավաքումբ): Երկուական հերոսներ են տվել Մարտակերտի՝ Գրիգոր Հայրապետյան (գ Մինգրելսկ), Թեմիկ Ավքանդիլյան (գ.Մարտակերտ) և Հադրութի շրջանները. Արման Հայրիյան (գ.Տող), Աշոտ Գասպարյան (գ.Դուդուկալի): Այսպիսով, միայն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը տվել է Խորհրդային Միության 19 հերոս:

Ինչպես արդեն նշել ենք, արցախահայ մնացած 8 հերոսները Հյուսիսային Արցախի ծնունդ են: Երեք հերոս է տվել Խանլարի շրջանը. Էդուարդ Այանյան, Ղազարոս Զաքարյան (երկուսն էլ Գետաշեն գյուղից), Վաղինակ Զաքարյան (գ.Մարտունաշեն): Երկուական հերոսներ են տվել Շամխորի՝ Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան (երկուսն էլ Չարդախլու գյուղից) և Դաշքեստանի (Քարհատի) շրջանները. Խաչատուր Մելիքյան (գ.Զագլիկ), Գրիգոր Բադյան (գ.Խաչակապ): Մեկ հերոս է տվել Շահումյանի շրջանը. Գարեգին Բալայան (գ.Գյուլիստան):

Այժմ տեսնենք, թե արցախահայ հերոսները Խորհրդային Միության ո՞ր հանրապետության և արտասահմանյան ի՞նչ երկրների տարածքներում են կատարել իրենց անմահ սխրանքները, կամ ո՞ր ճակատամարտերում և ռազմաճակատներում են նրանք հերոսացել:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արցախահայ 27 հերոսներից 14-ը հերոսի կոչման են արժանացել Խորհրդային Միության, իսկ 13-ը՝ արտասահմանյան երկրների (Ֆինլանդիա, Արևելյան, Հարավարևելյան և Կենտրոնական Եվրոպայի) տարածքներում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած քաջագործությունների համար: Հերոսներից երեքը՝ Միքայել Պարսեղով, Գրիգոր Հայրապետյան և Իսահակ Մանասյան, բարձրագույն կոչման են արժանացել 1939թ. նոյեմբերի 30 – 1940թ. մարտի 13-ը տեղի ունեցած Խորհրդաֆիննական պատերազմում՝ Կարելական պարանոցի շրջանում հակառակորդի ուժեղ ամրացված Մաններհայմի գծի պաշտպանությունը ճեղքելու ժամանակ կատարած սխրանքների համար:[1] Հերոսներից 6-ը՝ 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 69-րդ հրաձգային դիվիզիայի 120-րդ հրաձգային գնդի առանձին քիմիական պաշտպանության դասակի ջոկի հրամանատար, սերժանտ Իվան Շահումյանը, 16-րդ գվարդիական հեծյալ դիվիզիայի 60-րդ գվարդիական հեծյալ գնդի 4-րդ էսկադրոնի գնդացրային հաշվարկի հրամանատար, ավագ սերժանտ Երեմ Դանիելյանը (երեքն էլ Կենտրոնական ռազմաճակատից), 69-րդ մեքենայացված բրիգադի 1-ին մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, կապիտան Գարեգին Բալյանը (Վորոնեժի ռազմաճակատ), 5-րդ գվարդիական օդադեսանտային բրիգադի 3-րդ գումարտակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Սուրեն Պետրոսյանը (2-րդ Ուկրաինական ռազմաճակատ) և 295-րդ հրաձգային դիվիզիայի 1040-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, մայոր Գևորգ Հակոբյանցը (3-րդ Ուկրաինական ռազմաճակատ) այդ բարձր կոչմանն արժանացել են լայնահուն Դնեպրը առաջինների թվում գետանցելու և նրա աջ ափին հենակետեր գրավելու ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Վերոհիշյալ հերոսներից առաջին երեքը Դնեպրը հաղթահարել են Բելոռուսիայի, մյուսները՝ Ուկրաինայի տարածքում: Բացի վերը նշված երեքից, Ուկրաինայի ազատագրման մարտերում են հերոսացել ևս երկու արցախահայեր՝ 206-րդ գրոհային ավիադիվիզիայի 503-րդ գրոհային ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար, կապիտան Արմեն

---

[1] *Книга о Героях, Е., 1985, с. 11-16.*

Հայրյանը (Հարավային ռազմաճակատ) և 20-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի գնդապետ Համազասպ

Բաբաջանյանը (1-ին Ուկրաինական ռազմաճակատ):[1] Նմանապես 2 արցախահայեր հերոս են դարձել Բելոռուսիայի ազատագրման ժամանակ. 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյան և 2-րդ Բելոռուսիական ռազմաճակատի 380-րդ հրաձգային դիվիզիայի 1264-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար, լեյտենանտ Ղազարոս Ավագյանը: Հիշեցնենք, որ 1955թ. մարտի 11-ին Հովհաննես Բաղրամյանին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի, իսկ 1977թ. դեկտեմբերի 1-ին՝ կրկնակի հերոսի կոչում՝ ԽԱՀՄ Զինված ուժերին մատուցած ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած հերոսության և ծննդյան 80-ամյակի առթիվ:[2] Այսպիսով, Ուկրանիսյի և Բելոռուսիայի տարածքները գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման մարտերում 10 արցախահայեր արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման (5-ը՝ Ուկրանիայում, 5-ը՝ Բելոռուսիայում):

Ուկրանիայի և Բելոռուսիայի երկնակամարում է մարտնչել նաև Հեռահար ավիացիայի 1-ին ավիադիվիզիայի 101-րդ ավիագնդի ավիաէսկադրիլիայի շտուրման, մայոր Աշոտ Գասպարյանը (Կասպարով): 1942թ. օգոստոս-1944թ. օգոստոս ամիսների ընթացքում ռմբակոծիչ օդաչուն կատարել է 305 թռիչք, որոնց ընթացքում ռմբակոծել է Դնեպր գետի վրայի հակառակորդի անցարանները, թշնամու խորը թիկունքում գտնվող ռազմավարական կարևոր նշանակության օբյեկտները, անգնահատելի օգնություն ցույց տվել Բելոռուսիայի և Ուկրանիայի պարտիզաններին:[3]

Երկու արցախահայեր Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել Ռուսաստանի Դաշնության Կուրսկի, Օրյոլի և Բելգորոդի մարզերի տարածքներում տեղի ունեցած ծանր մարտերում: Նրանցից՝ Հարավարևմտյան ռազմաճակատի 227-րդ հրաձգային դիվիզիայի 777-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, լեյտենանտ Խաչատուր Մելիքյան. հետմահու հերոսի կոչման է արժանացել 1941թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1942թ. հունվարի 8-ը Բելգորոդի և Կուրսկի մարզերի՝ Պրոխորովկա, Պերեսիպ, Օռլովկա, Զորինսկիե Դվորի և Օբոյան բնակավայրերի շրջանում տեղի ունեցած մարտերում կայացած սխրանքների համար:[4]

Օրյոլի մարզի Ուլյանովոյի շրջանի Տրոստյանսկի և Բելիյ Վերխ գյուղերի մոտ 1943թ. հուլիսի 12-13-ը տեղի ունեցած կատաղի մարտերում (Կուրսկի ճակատամարտ) ցուցաբերած խիզախության համար նույնպես հետմահու, հերոսի կոչման է արժանացել Բրյանսկի ռազմաճակատի 11-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 27-րդ գվարդիական հրաձգային գնդի 9-րդ վաշտի դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Հովհաննիսյանը (Իոնոսյան):[5]

1941թ. ամռանը և աշնանը Հարավային և Լենինգրադյան ռազմաճակատներում կատարած 58 մարտական թռիչքների համար 1942թ. հոկտեմբերի 23-ին

---

[1] *Տես նշվ. աշխ., էջ 32, 41, 65, 34, 78, 91, 76, 180:*

[2] *Տես Հարությունյան Կ.Ա., Մարշալ Բաղրամյան, Ե., 1997, էջ 106:*

[3] *Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության Նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴՊՆԿԱ), ֆ.33, ց. 793756, գ.20, թթ. 373-375:*

[4] *Նույն տեղում, գ. 31 թթ. 32-34:*

[5] *Նույն տեղում, գ. 19, թ. 235:*

Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 8-րդ ավիաբրիգադի 57-րդ ավիագնդի ավիաօղակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանին: Երկրորդ անգամ լեգենդար օդաչուն հերոսի կոչման է ներկայացվել 1942թ. հոկտեմբեր- 1944թ. օգոստոս Լենինգրադի, Էստոնիայի, Լիտվայի և Լատվիայի ծովամերձ շրջաններում կատարած 239 մարտական թռիչքների ժամանակ հակառակորդի ծովային և ցամաքային ուժերին մեծ կորուստներ պատճառելու և ցուցաբերած հերոսության համար: Այդ ժամանակ նա հանդիսանում էր Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ գրոհային ավիադիվիզիայի 47-րդ գրոհային ավիգնդի հրամանատար: Նելսոնին կրկնակի հերոսի կոչման հրամանագիրը տրվեց 1945թ. մարտի 6-ին, սակայն մինչ այդ՝ 1944թ. դեկտեմբերի 14-ին, անվեհեր օդաչուն զոհվել էր Լատվիայի Լիբավա ծովախորշի շրջանում տեղի ունեցած օդային մարտում:[1]

Լեհաստանի տարածքում կատարած սխրանքների համար հերոսի կոչում է շնորհվել 5 արցախահայի. 350-րդ հրաձգային դիվիզիայի 1176-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար, լեյտենանտ Ռուբեն Բաղիրյանին (Բագիրով), 389-րդ հրաձգային դիվիզիայի 545-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Թեմիկ Ավքանդիյանին, 13-րդ գվարդիական բրիգադի 2-րդ տանկային դասակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Վադինակ Զաքարյանին (երեքն էլ 1-ին Ուկրանիական ռազմաճակատից), 82-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 86-րդ գվարդիական առանձին հակատանկային կործանիչ գումարտակի հրանոթի հրամանտար, գվարդայի սերժանտ Սուրեն Գասպարյանին (Կասպարյան) և 20-րդ առանձին հակատանկային բրիգադի 1184-րդ հակատանկային գնդի մարտկոցի հրամանատար ավագ լեյտենանտ Կոնստանտին Նազարյանին (Նազարով). երկուսն էլ Բելոռուսական ռազմաճակատից:

Չորս արցախահայեր հերոսի կոչման են արժանացել Հարավսլավիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում և Գերմանիայում կատարած սխրանքների համար, որոնցից մեկը՝ հետմահու: Հետմահու հերոսի կոչման արժանացած հայորդին՝ 109-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 309-րդ գվարդիական հրաձգային գնդի 1-ին գումարտակի գնդացրային դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Արամ Սաֆարյանն (Սաֆարով) էր: Նա հայրենիքի պատվավոր և բարձրագույն կոչմանն արժանացել էր 1944թ. հոկտեմբերի 7-8-ին Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադից մի քանի կիլոմետր հարավարևելք գտնվող Ռիտոպեկ գյուղի շրջանում Դանուբը գետանցելու և նրա աջ ափին գրաված հենակետը պաշտպանելու մարտում կատարած սխրանքի համար:[2]

1945թ. ապրիլի 30-ին Չեխոսլովակիայի Մորավսկա Օստրավա և մայիսի 8-ին Օլոմոուց քաղաքների ազատագրման մարտերում իր զորամասի գործողությունները հմտորեն ղեկավարելու և դրսևորած խիզախության համար կոչման արժանացավ: Չորրորդ Ուկրանիաական ռազմաճակատի 30-րդ հրաձգային դիվիզիայի 71-րդ հրաձգային գնդի հրամանատար, փոխգնդապետ Գրիգոր Բաղյանը:[3]

1945թ. հունվարի 5-18-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի գրավման մարտերում և Դանոբ գետը հաղթահարելիս ցուցաբերած խիզախու-

---

[1] *Տես՝ Նելսոն Ստեփանյան, փաստաթղթերի ու նյութերի ժողովածու, Ե., 1968, էջ 6-9:*
[2] *ՌԴ ՊՆԿԱ, ֆ.33, ց. 793756, գ. 42, թթ. 208-209:*
[3] *Նույն տեղում, գ. 4, թ. 63:*

թյան համար հերոսի կոչման է արժանացել Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի 5-րդ զենիթային-հրետանային դիվիզիայի 743-րդ զենիթային-հրետանային գնդի մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Էդուարդ Այանյանը:[1]

Օդեր գետի ձախ ափին գտնվող գերմանիական Կյուստրին քաղաքի գրավման համար 1945թ. ապրիլի 16-ի մարտում կատարած սխրանքի համար հերոսի կոչման է արժանացել Առաջին Բելոռուսիական ռազմաճակատի 301-րդ հրաձգային դիվիզիայի 1054-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի կոմերիտական կազմակերպիչ, լեյտենանտ Հրանտ Ավագյանը:[2]

Արցախահայերից վերջինը՝ 1975թ. մայիսի 15-ին Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել ԽԱՀՄ վաստակավոր փորձարկող-օդաչու Ռաֆայիլ Գաբրեյանը (Կապրեյան): Նա հայրենիքի բարձր պարգևին է արժանացել Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հեռահար ավիացիայի շարքերում, որպես 89-րդ ավիատրանսպորտային ավիագնդի հրամանատար Կարմիր բանակի Գլխավոր շտաբի հատուկ հանձնարարությունները կատարելու նպատակով իրագործած 110 մարտական թռիչների և հետպատերազմյան տարիներին նոր տիպի 86 ինքնաթիռների և ուղղաթիռների փորձարկումների ժամանակ ցուցաբերած խիզախության համար՝ Հաղթանակի 30-ամյակի առթիվ:[3]

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները, գալիս ենք այն եզրահանգման, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանից հետո Արցախը տվել է ամենից շատ հերոսները՝ թվով 27: Նրանցից երկուսը այդ բարձրագույն կոչմանն արժանացել են կրկնակի անգամ: Նման ցուցանիշներ չեն ունեցել Արցախի հարևան հանրապետություններից և ոչ մեկը: Այս ամենը մեկ անգամ ևս ապացուցում է արցախահայերի անընկճելի ոգին, հին դարերից սերնդե սերունդ փոխանցվող մարտական հերոսական ավանդույթները, որոնք իրենց փայլուն արտահայտությունը գտան ոչ միայն առաջադեմ մարդկության ոխերիմ թշնամու ֆաշիզմի դեմ մղված պայքարի տարիներին, այլև 20-րդ դարի վերջին թուրք-ազերների դեմ արցախահայերի մղած ազգային-ազատագրական պատերազմում, որն ավարտվեց քոչվոր ավազակների ամոթալի լծի թոթափումով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորումով և մայր Հայաստանի հետ նրա միանալու ամենառեալ պայմանների ստեղծումով:

---

[1] Նույն տեղում, գ., 3, թ. 259:
[2] Նույն տեղում, գ. 1, թ. 55:
[3] Տես. Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության Նախարարության գլխավոր կադրերի վարչության Խորհրդային Միության հերոսների բաժնում. պահվող գնդապետ Ռ.Ի.Կապրեյանի անձնական քարտը:

ՍԱՄՍՈՆ ՔԱՌՅԱՆ

1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը միշտ էլ գտնվել է հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում: Այս պարագան հատկապես վերաբերում է 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի սկզբի ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններին: Դա անվերապահորեն վերաբերում է նաև 1918թ. մայիսյան հերոսամարտերի ուսումնասիրմանը:

Մինչ հայ պատմագիտության տեսակետների վերլուծումը անդրադառնանք հարցի ընդհանուր պատմագիտական վիճակին: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Ժ.Կայալոֆի աշխատությունը գրվել է մարտերի մասնակիցների հուշերի հիման վրա և ներկայացնում է կարևոր փաստաթղթերի ժողովածու: Հեղինակի նպատակն է նպաստել Սարդարապատի ճակատամարտի ավելի խորը ուսումնասիրմանը:[1] Ալլենի և Մուրատովի հիմնարար աշխատանքը հատկապես կարևորվում է մարտական գործողությունների ճշգրիտ շարադրման տեսանկյունից:[2] Մ.Աֆանասյանի աշխատությունը գրված է մի քանի լեզուներով հրատարակված փաստաթղթերի և ուսումնասիրությունների բազմակողմանի համալիր հետազոտմամբ:[3] Հիշատակության արժանի են Սարդարապատի ճակատամարտի ակտիվ մասնակից Ալ.Շնեուրի հուշերը և Ա.Այվազյանի ուսումնասիրությունը:[4]

Սարդարապատի ճակատամարտին նախորդած ռազմական գործողությունների ուսումնասիրման տեսանկյունից շատ կարևոր աղբյուր է Թ.Նազարբեկյանի հուշերը:[5]

Խորհրդահայ պատմագիտության մեջ արդեն 1960-ական թվականներից սկսվեց հիմնախնդրի ուսումնասիրությունը: Խ.Բադալյանի գրքում միայն Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի մասին թռուցիկ և մակերեսային ձևով գրված է ընդամենը երկու էջ:[6]

---

[1] *Kayalloff Jacques, The Battle of Sardarabad, La Haye-Paris, 1973.*

[2] *Allen W.E.D. and Paul Mouratoff, Caucasian Battlefields (1828-1921), Cambridge, 1953, pp. 457-495.*

[3] *Afanasyan Serge, La victoire de Sardarabad (Armenie, mai 1918), Paris, 1985., Աֆանասյան Սերժ. Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Ե., 1991:*

[4] *Շնեուր Ալեքսանդր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնո, 1967: Ayvazian Arthur, Armenian victories at Khznavous and Sardarabad on May 23 1918, New York, 1985.*

[5] *Հայկական կորպուսն ընդդեմ թուրքական զորքերի. Գեներալ Թ.Նազարբեկյանի հուշերը, Ե., 1994:*

[6] *Բադալյան Խ., Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թվականին, Ե., 1962:*

Ե.Սարգսյանն իր հիմնարար աշխատությունում հարցը քննարկում է «Անդրկովկասի ժողովուրդների պայքարը երիտթուրքական զավթիչների դեմ» գլխում:[1]

Նախ նշենք, որ հեղինակի նշած «դաշնակցական զորքերը» պարզապես չկային, քանզի կռվողների գերակշիռ մասը կանոնավոր բանակի զորքեր էին: Մյուս կողմից, ամենևին ընդունելի չէ պայքարի սկսման տարերային տեսակետը: Նա ճակատամարտերի ընթացքը ներկայացնում է փոխկապվածությունից դուրս: Շուրջ երկու էջերում նշելով Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի մասին նա չի հիշում ոչ մի հրամանատարի անուն, հիմնականում քննելով միայն Ղարաքիլիսայում հայկական և թուրքական զինուժերի քանակական տվյալները և վերջիններիս կատարած վայրագությունները: Այսուհանդերձ, Ե.Սարգսյանը շեշտում է, որ թուրք զավթիչների դեմ մղված պայքարում «առաջին դիրքերում» էին գտնվում հայ կոմունիստները և սպարտակյանները: Ավելին, մայիսյան հերոսամարտերն իրավացիորեն համարելով հայ ժողովրդական զանգվածների «համառ կամքի և հաղթելու կարողության փայլուն դրսևորում», անմիջապես հավելում է, որ նման արդյունքի «բոլորովին չէին սպասում ոչ դաշնակցական պարտիայի պարագլուխները, ոչ Ազգային խորհուրդը և ոչ էլ բանակի գլխավոր հրամանատարությունը»:[2] Մինչդեռ, անկասկած է, որ վերջինի պարագայում նման մեղադրանքը միանգամայն հիմնազուրկ է: Նա ավելի հանգամանալից խոսում է թուրք ինտերվենտների դեմ Ադրբեջանի և Վրաստանի աշխատավորների մղած «համառ պայքարի մասին»:[3]

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունում Հ.Էլչիբեկյանը մայիսյան հերոսամարտերին անդրադարձել է «Գերմանա-թուրքական ինտերվենցիան» ենթագլխում՝ որպես հիմք ընդունելով իր մինչ այդ հրապարակած հոդվածը և Հ.Թուրշյանի գիրքը: Երկու էջում շատ հպանցիկ ներկայացնելով մարտերի ընթացքը՝ նա ավելի շատ նշում է Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին: Հեղինակի համոզմամբ՝ «հայ ժողովրդի այդ հերոսական գոյամարտերն օբյեկտիվորեն նպաստեցին Բաքվի կոմունային՝ ինտերվենտների դեմ մղվող պայքարում»:[4] Նա չի նշում մայիսյան հերոսամարտերին մասնակցած ոչ մի ազգային գործչի կամ զորահրամանատարի անուն:

Զ.Կիրակոսյանի հոդվածում ուշագրավն այն է, որ հերոսամարտերը դիտարկվում են հայ ժողովրդի հանդեպ պանթուրքական նկրտումների համապատկերում:[5] Հայկական հարցի և Մեծ եղեռնի հայտնի պատմաբանը Սարդարապատի հերոսամարտը ներկայացնում է հենց այդ տեսանկյունից: Նա իիրավի բարձր է գնահատում ազատագրական պայքարի դուրս եկած հայերին. «Հայ ժողովրդի քաջարի զավակները՝ շարքերը խտացրած, ցասման ու արժանապատվության բռունցք դարձած՝ Երևանի մատույցներում մահու և կենաց կռիվ էին տալիս թուրքական արյունարբու հրոսակներին՝ հանուն կյանքի, հանուն փրկության ու գոյատևման: 1915 թվականի ապրիլի ազգային՝ ողբերգությունը

---

[1]Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., 1964:
[2]Նույն տեղում, էջ 451:
[3]Նույն տեղում, էջ 461-474:
[4]Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ԳԱ հրատ., Ե., 1967, էջ 44:
[5]Կիրակոսյան Ջ., Հիսուն տարի առաջ (Սարդարապատի հերոսամարտի առիթով), ԲԵՀ, 1968, թ. 2, էջ 36-52:

մտել էր իր նոր փուլի մեջ: 1918թ. գարնանն արևմտահայության ճակատագիրը չոքել էր արևելահայության դռանը: Թուրք պետականությունը նորից ցույց տվեց իր մահաբեր ժանիքները»:

Ջ.Կիրակոսյանը ճիշտ է գնահատում 1918թ. մայիսյան ճակատամարտերի դերը. «Ղարաքիլիսայի, Սարդարապատի և Բաշ Ապարանի հերոսամարտերը փրկեցին հայոց երկիրը վերջնական գրավումից և ժողովրդին՝ վերջնական բնաջնջումից: Սարդարապատի ճակատամարտը համաժողովրդական մի կռիվ էր հանուն պատվի, ապրելու և գոյատևելու»: Գերազանցապես արխիվային փաստաթղթերի հիման վրա գրված Ջ.Կիրակոսյանի հոդվածը մեծ մասամբ ժամանակաշրջանի դիվանագիտական պատմությանն է վերաբերվում: Հեղինակն այդ իսկ պատճառով գրեթե չի անդրադարձել Սարդարապատի կռիվներին:

Հայ պատմագիտության մեջ 1918թ. մայիսյան հերոսամարտերի և հատկապես Սարդարապատի ճակատամարտի պատմության վերաբերյալ առաջին համապարփակ և հատուկ ուսումնասիրությունը պատկանում է Հ.Թուրշյանի գրչին: Նրա աշխատությունն ունեցել է երկու հրատարակություն:[1] Երկրորդը հրատարակվել է որոշ լրացումներով և փոփոխություններով: Անհրաժեշտ է նշել, որ այն խորհրդահայ պատմագիտական ուսումնասիրությունների մեջ ամենաաշխույժ քննարկման արժանացածներից է:[2]

Հ.Թուրշյանի գրքի հատկապես ռազմական գործողությունների շարադրման քննադատության առումով ուշագրավ է 5-րդ Մահապարտների գնդի 3-րդ գումարտակի 10-րդ վաշտի դասակի հրամանատար Մ.Մարտիրոսյանի հուշհոդվածը:[3] Նրա հուշերն ընդհանուր առմամբ հավատ են ընծայում: Նրա համոզմամբ Հ.Թուրշյանը սխալ է ներկայացնում կռիվների վայրերը և դրանց ժամանակը, հատկապես՝ մարտավարական տեսանկյունից: Այս առումով, նա մանրամասն վերլուծում է 1918թ. մայիսի 21-ից սկսած տեղի ունեցած մարտերը և նշում, որ Հ.Թուրշյանն անում է այնպիսի «արտառոց» եզրակացություններ, որ «զարմանքից ուսերդ ես թոթվում»: Այս պարագան վերաբերում է հատկապես Մ. Սիլիկյանին տրված գնահատականին: Մ.Մարտիրոսյանը նշում է, որ Սարդարապատի հերոսը եղել է հայ ժողովուրդը, նրա զինուժը, բայց դա ամենևին չի նշանակում, թե պետք է նսեմացնել Սիլիկյանի, Արամ Մանուկյանի և շատ ուրիշների պատմական դերը հաղթանակի ապահովման գործում: Նա միանգամայն սխալ է համարում Հ. Թուրշյանի այն վարկածը, որ իբր հայ զինվորները մասսայաբար լքել էին ռազմաճակատնն ու վերադարձել տուն, որ եթե այդ բոլորը «զրպարտություն չէ հայ զինվորին վարկաբեկելու համար, ապա հնարված մաքուր հեքիաթ է»: Սխալ են նաև այն վարկածները, թե Սարդարապատի ճակատամարտը «տարերայնորեն է սկսվել», որ հայ զորքը սկզբում «ստրկական երկյուղով» է բռնվել:

---

[1] *Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Ե., 1965 և 1969:*

[2] *Գրախոսություններից մասնավորապես նշենք՝ հետևյալները Իկիլիկյան Հ., Երկրորդ Ավարայրը, «Բանվոր», Լենինական, 1965, 29 հոկտ., Աստուածատրեան Ս., Սարդարապատի պատմաշինութիւնը, Պէյրութ, 1966, Մարտիրոսյան Մ., Սարդարապատի ճակատամարտը, ԲՀԱ, 1969, թ. 1, էջ 151-166, Խուրշուդյան Լ., Սարդարապատի հերոսամարտը, «Գրական թերթ», 1970, 25 դեկտ., Թէրլէմէզեան Տ., Սարդարապատի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1973, 16, 17 յունուար:*

[3] *Մարտիրոսյան Մ., Սարդարապատի ճակատամարտը, ԲՀԱ, 1969, թ. 1, էջ 151-166:*

Հ.Թուրշյանը բացասական վերաբերմունք ունի նաև հոգևոր և ազգային գործիչների հանդեպ: Օրինակ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի մասին գրում է, որ նա մինչև Սարդարապատը «ոչ մի բանով առանձնապես աչքի չէր ընկել և չէր կարողացել նվաճել ժողովրդի համակրանքը: Իբրև ռեակցիոն եկեղեցական նա սիրված չէր անգամ իր միաբանության քիչ թե շատ առաջադեմ մարդկանց կողմից»:[1] Այնուհանդերձ, հեղինակը հաջորդ էջում ձգտում է հնարավորինս լոյալ ներկայացնել կաթողիկոսի դերը Սարդարապատի հերոսամարտի կազմակերպման գործում:

Նման դիրքորոշում առկա է նաև Արամ Մանուկյանի հանդեպ: Հեղինակի վերջնական համոզմամբ նա «իհարկե դիկտատոր լինելու շնորհքով օժտված չէր, սակայն դաշնակցական մյուս շեֆերի համեմատությամբ օժտված էր քաղաքական հեռատեսությամբ և պետականորեն մտածելու որոշակի կարողությամբ»: Մեկ այլ տեղ նա գրում է. «Արամ Մանուկյանը դժբախտաբար օժտված չէր վճռականությամբ, միայն կարողանում էր տարերայնորեն սկսած ցանկալի հոսանքով անկեղծորեն խանդավառվել ու հմտորեն ղեկավարել այն»: Բազմիցս նման անհիմն մեղադրանքներ ներկայացնելով Հ.Թուրշյանն ամփոփում է. «Արամ Մանուկյանն իր շրջապատի մյուս դաշնակցականներից անտարակույս մի գլխով բարձր էր, սա էլ սոսկ այն պատճառով, որ մյուս դաշնակցականները գլուխ բոլորովին չունեին և չգիտեին թե ինչ են անում, իսկ նա գիտեր, թե ինչ էր արվում: Սարդարապատի կրիտիկական օրերին Արամ Մանուկյանը, անտարակույս, շոշափելի ծառայություններ է մատուցել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Բայց և այնպես դիկտատոր և ինքնապաշտպանության գործի կազմակերպիչ չի եղել»:[2]

Հ.Թուրշյանի գրքի խմբագիր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանն առաջաբանում միանշանակ ընդունում է գրքում առաջ քաշված այն «հիմնավորված գլխավոր դրույթը», որ Սարդարապատի ճակատամարտն օբյեկտիվորեն թուրք ինտերվենտների դեմ 1918թ. Բաքվի կոմունայի ցույց տված դիմադրության մեջ հայերի մասնակցության նախընթացն էր:

Մ.Արզումանյանն իր աշխատության «Սուլթանական Թուրքիայի արշավանքը Անդրկովկասի վրա և Սարդարապատի ճակատամարտը» գլխի 130 էջերից քննվող հարցին անդրադարձել է «Սարդարապատի հերոսամարտը և նրա աղերսը Բաքվի կոմունայի հետ» ենթակետի ընդամենը հինգ էջերում:[3]

Հետևելով հարցի մեկնաբանման դասակարգային մոտեցմանը նա շեշտում է, որ «աշխարհազորայինների ջոկատների հիմնական մասսան կազմված էր դեմոկրատական խավերից, շարքերում էին կոմունիստները և սպարտակյանները»: Նա հայկական ուժերի «փաստացի հրամանատար» է համարում «ռազմագիտակ ու քաջակորով» Դ.Փիրումյանին, որը ցուցաբերում էր «բացառիկ եռանդ ու հնարամտություն», մինչդեռ Մ.Սիլիկովը ցուցաբերում էր «պասսիվություն և զբաղված էր հիմնականում զորքի էվակուացիայով»:[4]

Հեղինակը Բաշ Ապարանի մարտերի վերաբերյալ անհրաժեշտ է գտնում շեշտել, որ տեղի բնակչությունը կոմունիստների նախաձեռնությամբ կազմակերպում է դիմադրություն, և հայերը կարող էին թշնամուն հետապնդել, եթե

---

[1] Նույն տեղում, էջ 140:

[2] Նույն տեղում, էջեր 148, 157, 251:Ա. Մանուկյանի մասին տես՝ Արամը, Ե., 1991, էջ 508-522:

[3] Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973:

[4] Նույն տեղում, էջ 144:

դաշնակցական Դրոն «չխաբվեր ու չտարվեր թուրքերի խոսքերով՝ զինադադարի մասին»: Շատ համառոտ անդրադառնալով Ղարաքիլիսայի ճակատամարտին՝ անհիմն և անտեղի քննադատում է Թ.Նազարբեկյանին: Սարդարապատի հերոսամարտը համարելով «իսկական էպոպեա, մի նոր ու հաղթական Ավարայր» անմիջապես հավելում է, որ նրա «հաղթական պսակը պատկանում է հայ ժողովրդին»: Սարդարապատի ճակատամարտը դիտարկելով երկրամասի նշանակության տեսանկյունից նա գտնում է, որ. «Սարդարապատի ժողովրդական դյուցազնամարտը միաժամանակ հանդիսանում է Անդրկովկասի ազատագրական պայքարի կարևոր իրադարձություններից մեկը, որի բարերար արդյունքները հանգուցավորվում էին համառուսաստանյան հեղափոխական շարժման հետ»:[1]

1918թ. մայիսյան հերոսամարտերին մանրամասն անդրադարձել է նաև մարշալ Հովհաննես Բաղրամյանը:[2] Թեպետ նրա գրածն ընդհանուր առմամբ ունի հուշագրության բնույթ, սակայն այն արժեքավոր է հետևյալ առանձնահատկություններով: Հ.Բաղրամյանը ճակատամարտի ակտիվ մասնակիցներից է և դեպքերի նրա ներկայացումը կարևոր է հատկապես ռազմագիտական վերլուծման տեսանկյունից: Տալով մինչև Սարդարապատը եղած մարտական գործողությունների ռազմագիտական վերլուծությունը Հ. Բաղրամյանն իրավացիորեն շեշտում է, որ թուրքերի պլանը Հայաստանը և Վրաստանը գրավելուց բացի նպատակադրված էր Բաքվի նավթաբեր շրջանի գրավմանը: Ռազմագիտական առումով հատկանշական է թուրքական բանակի և հատկապես հայկական զինուժի կառուցվածքների, ինչպես նաև՝ ճակատի դասավորության վերլուծությունը՝ ըստ առանձին գնդերի և ջոկատների, դրանց հրամանատարներով, առանց որևէ բացառության: Այդ առումով կարևոր է Երևանյան խմբի հրամանատար գեներալ Մ.Սիլիկյանի ռազմավարական տաղանդի շեշտումը՝ հատկապես Սարդարապատի ջոկատի վերակազմավորման, ինչպես նաև Բաշ-Ապարանի հատվածի ուժեղացման տեսանկյունից:

Սարդարապատի հերոսներից Հ.Բաղրամյանն իրավացիորեն առանձնացնում է և շատ բարձր գնահատում Մ.Սիլիկյանի գործունեությունը: Գրքում ամբողջովին մեջբերված է «թուրք նվաճողների դեմ ամենաակտիվ պայքարի» ուղղված նրա կոչը, որի արդյունքում «անհապաղ և շատ համերաշխ» Արարատյան դաշտի բոլոր գյուղերից հավաքվեցին ժողովրդական աշխարհազորի ջոկատները, ինչը «ցնցեց զինվորական զանգվածներին, բարձրացրեց նրանց ոգին, ամրացրեց հավատը սեփական ուժերի հանդեպ»:[3] Բարձր գնահատելով Մ. Սիլիկովի անձնական հատկանիշները նա շեշտում է վերջինիս «իրաշալի ռազմապետ» լինելը և «մեծ մարտական վաստակը Հայրենիքի հանդեպ»: Հ. Բաղրամյանի խոստովանությամբ «դժվար և հակասական իրավիճակում» է գործել Սիլիկովը, քանզի քաղաքական և ռազմական տեսանկյուններից դժվարին պայմաններում ընդունել է «միակ ճիշտ, բազմակողմանի մտածված, առանց չափազանցության, տաղանդավոր որոշում՝ զորքին և զենքի ընդունակ բոլորին պայքարի հանելով բարբարոս թուրքերի դեմ»: Ավելին, որպես փորձառու զինվորական նա շեշտում է, որ Սիլիկովը Սարդարապատի ճակամարտի հիմքում դրեց ոչ թե «պասսիվ պաշտպանության, այլ վճռական հանդիպական հարձակման» մարտավարութ-

---

[1] Նույն տեղում, էջ 151:

[2] Баграмян И.Х., Мои воспоминания, Ер., 1979, сс.72-107.

[3] Баграмян И.Х., там же, сс. 82-83, 90-92.

յուն գերազանցող թուրքական զորքերի դեմ, և հենց նման «ակտիվությունն ու վճռականությունն» էլ հայկական բանակին «պատմական հաղթանակի» հասցրեց: Հ. Բաղրամյանի խորին համոզմամբ ժամանակի բոլոր հայ գեներալներից «ամենից շնորհալի» ռազմապետը Սիլիկովն էր: Վերջինս թեև մյուս բարձրաստիճան սպաների նման մայրենի լեզվին չէր տիրապետում և բավարար հստակ պատկերացում չուներ իր ժողովրդի, նրա ռազմական ավանդույթների մասին, սակայն համեմատաբար կարճ ժամկետում, առաջին իսկ մարտերի ընթացքում կարողացավ իր «գիտակից և դրությանը համապատասխանող որոշումներով և մարտական գործողությունների օպերատիվ ղեկավարմամբ» մեծ հեղինակություն ձեռք բերել ենթակա սպաների և զինվորների հիմնական զանգվածի մոտ:[1]

Ժամանակի մյուս ռազմական գործիչներից Հ.Բաղրամյանը բարձր է գնահատել նաև 5-րդ Հայկական գնդի հրամանատար գնդապետ Պողոս բեկ Փիրումյանի և Խզնաուզի ջոկատի հրամանատար փոխգնդապետ Հասանփաշայանի գործունեությունը: Մյուս կողմից, գրքում նա հանգամանալից ներկայացրել և վերլուծել է Թ.Նազարբեկյանի շտաբի ճակատների օպերատիվ իրավիճակին վերաբերող տվյալները:

Հ.Բաղրամյանն անհրաժեշտ չափով անդրադարձել է նաև Բաշ-Ապարանի և հատկապես Ղարաքիլիսայի մարտերին: Նրա կարծիքով միայն առաջապահ զորքի և աշխարհազորի շնորհիվ հնարավոր եղավ պահել Ղարաքիլիսան: Այդտեղի «իսկապես համառ» ճակատամարտից հետո թեպետ հայերը նահանջեցին, սակայն այն իր նշանակությունը չկորցրեց պայքարի վերջնական արդյունքի համար:[2] Նա ցավալիորեն նշում է, որ պատմությունն այդ ճակատամարտի մասին «մանրամասն տվյալներ» չի պահպանել: Կարևորելով Ղարաքիլիսայի ճակատամարտի նշանակությունը նա տեղին մեջբերում է Կովկասյան ճակատում թուրքական զորքի գլխավոր հրամանատար Մահմեդ Վեհիբ փաշայի ստիպողական գնահատականը. «Դա պատերազմների պատմության մեջ եզակի ճակատամարտ էր: Ղարաքիլիսայի տակ հայերն ապացուցեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:[3]

Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոսներից նա բարձր է գնահատում հրետանային մարտկոցի հրամանատար կապիտան Գուրգեն Մովսիսյանին, որին անձամբ ճանաչել է: Շատ համառոտ անդրադառնալով Բաշ Ապարանի մարտերին նա հիշատակում է, որ տեղի ջոկատի հրամանատար էր դարձել Դրաստամատ Կանայանը (Դրոն)՝ «դաշնակցության լիդերներից մեկը»: Հիշյալ երկու վայրերի մարտերի նշանակությունը նա կարևորում է հատկապես Սարդարապատի ճակատի թիկունքային ապահովման առումով:

Ըստ արժանվույն գնահատելով Սարդարապատի ճակատամարտի նշանակությունը Հ.Բաղրամյանը շեշտում է, որ այն «իրավի էպիկական հնչեղություն» ունեցավ և անհրաժեշտ պայմաններ ստեղծեց «հայկական պետականության վերաստեղծման, հին ժողովրդի ազգային վերածննդի համար»: Ինչ խոսք, փորձառու ռազմապետ լինելով հանդերձ Հ. Բաղրամյանը շատ հարցերի ավելի ամփոփ և խոր վերլուծություն է տալիս, քան ժամանակի որոշ պատմաբաններ:

---

[1] *Там же, сс. 90-91.*

[2] *Там же, сс. 87-88.*

[3] *Лудшувейт Е.Ф., Турция в годы первой мировой войны, М., 1966, с. 166.*

1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմության հանգամանալից և բարձրարժեք ներկայացումն ու վերլուծումը կատարել է խորհրդահայ լավագույն ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանը:[1]

Այս աշխատանքի առանձնահատկությունն այն է, որ հեղինակը իրադարձությունները և գործող անձինք դիտարկում է գերազանցապես ռազմագիտական տեսանկյունից, ինչը գրեթե բացակայել է հայ պատմագիտության մեջ: Իսկ նման աշխատանքը հեղինակը հաջողությամբ է կատարել՝ լինելով նաև կադրային զինվորական: Մինչ այդ նա իր հոդվածում ճակատամարտերը ներկայացնում էր նորովի և հիմնավորված փաստարկներով, միաժամանակ հանգամանալից քննադատելով Հ.Թուրշյանի գիրքը:[2]

Նա երկու առանձին մասերով անդրադառնում է Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամասրտերին: Թեպետ Բաշ Ապարանի ճակատամարտը նրա կողմից հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն նա տարբեր տեղերում անդրադարձել է դրան: Այս հանգամանքը պետք է բացատրել այն գործոնով, որ որպես ռազմագետ-պատմաբան նա իրավացիորեն առանձնացրել է միայն հիշյալ երկու ճակատամարտերը՝ նկատի ունենալով դրանց ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևորագույն նշանակությունը: Նա մանրամասն ներկայացնում է Հայաստան արշավող թուրքական «Կարս» խմբավորման կառուցվածքը և մարտական գործողությունների ուղղությունները, մեկնաբանում ծրագրերը և շեշտում, որ հիմնական նպատակը Բաքվի գրավումն էր:

Հայկական կանոնավոր զորամասերի և ժողովրդի միջև չեղած ներհակությունների արհեստական շեշտադրումը և նրանց հակադրության մեջ ներկայացումը Հ.Թուրշյանի հուսումնասիրության գլխավոր և էական թերություններից է: Նա իր գրքի բազմաթիվ էջերում հակասում է իրեն, որովհետև ամենուր ստիպված է թվարկելու հայկական այն զորամասերի և նրանց կադրային հրամանատարների անունները, որոնք իսկապես մասնակցել են Սարդարապատի ճակատամարտին և վճռորոշ դեր ունեցել: Այսինքն, Աշ. Հարությունյանի դիպուկ գնահատմամբ. «Բայց ոչ անգրագետ գյուղացիները, ոչ էլ վարդապետները չէին կարող հրետանային կրակ վարել: Ուրեմն կռիվը իսկական կռիվ էր, կռիվ երկու՝ հայկական և թուրքակսան բանակների միջև»:[3]

Հարկ է փաստել, որ Սարդարապատի ճակատում թուրք կանոնավոր զորքերի դեմ առաջին հերթին կռվում էին հայկական բանակային կորպուսի կանոնավոր զորքերը, որոնց գլխավորում էին կորպուսի հրամանատար գեներալ Թ.Նազարբեկյանը և դիվիզիայի հրամանատար գեներալ Մ.Սիլիկյանը: Ավելին, Աշ.Հարությունյանը միանշանակ շեշտում է. «Հայկական զորքերը չէին ենթարկվում դաշնակցական կուսակցությանը, Նազարբեկովը և Սիլիկովը դաշնակցականներ չեն եղել, նրանց ղեկավարած զորքերը պաշտոնապես մտնում էին Կովկասյան ռազմաճակատի մեջ և ենթարկվում Թիֆլիսի շտաբին: Սա հարցի երկրորդական կողմը չէ, այլ կարևոր, նույնիսկ շատ կարևոր հանգամանք»:[4]

---

[1] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984:

[2] Հարությունյան Ա., Պատմական ճշմարտությունը Սարդարապատի ճակատամարտի մասին, ԲՀԱ, 1978, թ. 3, էջ 96-119:

[3] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 180-181:

[4] Նույն տեղում, էջ 181:

յուն՝ գերազանցող թուրքական զորքերի դեմ, և հենց նման «ակտիվությունն ու վճռականությունն» էլ հայկական բանակին «պատմական հաղթանակի» հասցրեց: Հ. Բաղրամյանի խորին համոզմամբ ժամանակի բոլոր հայ գեներալներից «ամենից շնորհալի» ռազմապետը Սիլիկովն էր: Վերջինս թեև մյուս բարձրաստիճան սպաների նման մայրենի լեզվին չէր տիրապետում և բավարար հստակ պատկերացում չուներ իր ժողովրդի, նրա ռազմական ավանդույթների մասին, սակայն համեմատաբար կարճ ժամկետում, առաջին իսկ մարտերի ընթացքում կարողացավ իր «գիտակից և դրությանը համապատասխանող որոշումներով և մարտական գործողությունների օպերատիվ ղեկավարմամբ» մեծ հեղինակություն ձեռք բերել ենթակա սպաների և զինվորների հիմնական զանգվածի մոտ:[1]

Ժամանակի մյուս ռազմական գործիչներից Հ.Բաղրամյանը բարձր է գնահատել նաև 5-րդ Հայկական գնդի հրամանատար գնդապետ Պողոս բեկ Փիրումյանի և Խզնաուզի ջոկատի հրամանատար փոխգնդապետ Հասանփաշայանի գործունեությունը: Մյուս կողմից, գրքում նա հանգամանալից ներկայացրել և վերլուծել է Թ.Նազարբեկյանի շտաբի ճակատների օպերատիվ իրավիճակին վերաբերող տվյալները:

Հ.Բաղրամյանն անհրաժեշտ չափով անդրադարձել է նաև Բաշ-Ապարանի և հատկապես Ղարաքիլիսայի մարտերին: Նրա կարծիքով միայն առաջապահ զորքի և աշխարհազորի շնորհիվ հնարավոր եղավ պահել Ղարաքիլիսան: Այդտեղի «իսկապես համառ» ճակատամարտից հետո թեպետ հայերը նահանջեցին, սակայն այն իր նշանակությունը չկորցրեց պայքարի վերջնական արդյունքի համար:[2] Նա ցավալիորեն նշում է, որ պատմությունն այդ ճակատամարտի մասին «մանրամասն տվյալներ» չի պահպանել: Կարևորելով Ղարաքիլիսայի ճակատամարտի նշանակությունը նա տեղին մեջբերում է Կովկասյան ճակատում թուրքական զորքի գլխավոր հրամանատար Մահմեդ Վեհիբ փաշայի ստիպողական գնահատականը. «Դա պատերազմների պատմության մեջ եզակի ճակատամարտ էր: Ղարաքիլիսայի տակ հայերն ապացուցեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:[3]

Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոսներից նա բարձր է գնահատում հրետանային մարտկոցի հրամանատար կապիտան Գուրգեն Մովսիսյանին, որին անձամբ ճանաչել է: Շատ համառոտ անդրադառնալով Բաշ Ապարանի մարտերին նա հիշատակում է, որ տեղի ջոկատի հրամանատար էր դարձել Դրաստամատ Կանայանը (Դրոն)՝ «դաշնակցության լիդերներից մեկը»: Հիշյալ երկու վայրերի մարտերի նշանակությունը նա կարևորում է հատկապես Սարդարապատի ճակատի թիկունքային ապահովման առումով:

Ըստ արժանվույն գնահատելով Սարդարապատի ճակատամարտի նշանակությունը Հ.Բաղրամյանը շեշտում է, որ այն «իիրավի էպիկական հնչեղություն» ունեցավ և անհրաժեշտ պայմաններ ստեղծեց «հայկական պետականության վերաստեղծման, հին ժողովրդի ազգային վերածննդի համար»: Ինչ խոսք, փորձառու ռազմապետ լինելով հանդերձ Հ. Բաղրամյանը շատ հարցերի ավելի ամփոփ և խոր վերլուծություն է տալիս, քան ժամանակի որոշ պատմաբաններ:

---

[1] *Там же, сс. 90-91.*
[2] *Там же, сс. 87-88.*
[3] *Лудшувейт Е.Ф., Турция в годы первой мировой войны, М., 1966, с. 166.*

1918թ. մայիսյան հերոսամարտերի պատմության հանգամանալից և բարձրարժեք ներկայացումն ու վերլուծումը կատարել է խորհրդահայ լավագույն ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանը:[1]

Այս աշխատանքի առանձնահատկությունն այն է, որ հեղինակը իրադարձությունները և գործող անձինք դիտարկում է գերազանցապես ռազմագիտական տեսանկյունից, ինչը գրեթե բացակայել է հայ պատմագիտության մեջ: Իսկ նման աշխատանքը հեղինակը հաջողությամբ է կատարել՝ լինելով նաև կադրային զինվորական: Մինչ այդ նա իր հոդվածում ճակատամարտերը ներկայացնում էր նորովի և հիմնավորված փաստարկներով, միաժամանակ հանգամանալից քննադատելով Հ.Թուրշյանի գիրքը:[2]

Նա երկու առանձին մասերով անդրադառնում է Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամասրտերին: Թեպետ Բաշ Ապարանի ճակատամարտը նրա կողմից հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն նա տարբեր տեղերում անդրադարձել է դրան: Այս հանգամանքը պետք է բացատրել այն գործոնով, որ որպես ռազմագետ-պատմաբան նա իրավացիորեն առանձնացրել է միայն հիշյալ երկու ճակատամարտերը՝ նկատի ունենալով դրանց ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևորագույն նշանակությունը: Նա մանրամասն ներկայացնում է Հայաստան արշավող թուրքական «Կարս» խմբավորման կառուցվածքը և մարտական գործողությունների ուղղությունները, մեկնաբանում ծրագրերը և շեշտում, որ հիմնական նպատակը Բաքվի գրավումն էր:

Հայկական կանոնավոր զորամասերի և ժողովրդի միջև չեղած ներհակությունների արհեստական շեշտադրումը և նրանց հակադրության մեջ ներկայացումը Հ.Թուրշյանի ուսումնասիրության գլխավոր և էական թերություններից է: Նա իր գրքի բազմաթիվ էջերում հակասում է իրեն, որովհետև ամենուր ստիպված է թվարկելու հայկական այն զորամասերի և նրանց կադրային հրամանատարների անունները, որոնք իսկապես մասնակցել են Սարդարապատի ճակատամարտին և վճռորոշ դեր ունեցել: Այսինքն, Աշ. Հարությունյանի դիպուկ գնահատմամբ. «Բայց ոչ անգրագետ գյուղացիները, ոչ էլ վարդապետները չէին կարող հրետանային կրակ վարել: Ուրեմն կռիվը իսկական կռիվ էր, կռիվ երկու՝ հայկական և թուրքակսան բանակների միջև»:[3]

Հարկ է փաստել, որ Սարդարապատի ճակատում թուրք կանոնավոր զորքերի դեմ առաջին հերթին կռվում էին հայկական բանակային կորպուսի կանոնավոր զորքերը, որոնց գլխավորում էին կորպուսի հրամանատար գեներալ Թ.Նազարբեկյանը և դիվիզիայի հրամանատար գեներալ Մ.Սիլիկյանը: Ավելին, Աշ.Հարությունյանը միանշանակ շեշտում է. «Հայկական զորքերը չէին ենթարկվում դաշնակցական կուսակցությանը, Նազարբեկովը և Սիլիկովը դաշնակցականներ չեն եղել, նրանց ղեկավարած զորքերը պաշտոնապես մտնում էին Կովկասյան ռազմաճակատի մեջ և ենթարկվում Թիֆլիսի շտաբին: Սա հարցի երկրորդական կողմը չէ, այլ կարևոր, նույնիսկ շատ կարևոր հանգամանք»:[4]

---

[1] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984:

[2] Հարությունյան Ա., Պատմական ճշմարտությունը Սարդարապատի ճակատամարտի մասին, ԲՀԱ, 1978, թ. 3, էջ 96-119:

[3] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 180-181:

[4] Նույն տեղում, էջ 181:

Սարդարապատի ճակատամարտի գնահատման հարցում Աշ.Հարությունյանն ամենագլխավոր պարագան համարում է այն, որ մարտերը չպետք է դիտարկել որպես մեկուսացված երևույթ: Այսինքն, այն հարկ է դիտել որպես 1918-1920թթ. Անդրկովկասում զարգացող ռազմա-քաղաքական իրադարձություններից, դրվագներից մեկը, որին վիճակված էր դրական դեր կատարելու հայ ժողովրդի ազգային պայքարում՝ գոյատևման համար նրա մղած անհավասար մարտերում:[1]

Ամփոփելով, Աշ. Հարությունյանը նշում է մեկ «շատ կարևոր հանգամանք»: 1918թ. մայիսին Անդրկովկասում թուրքերը ճակատամարտում էին միայն Հայաստանում և հայկական զորքերը տվյալ կոնկրետ պահին թուրքերի դեմ կռվում էին մեն-մենակ: Ավելին, նա «շատ ցավալի» է համարում այն փաստը, որ «Արարատյան դաշտում և Լոռվա ձորերում մահու և կենաց պայքար մղող հայ ժողովուրդը այդ ծանր օրերին մեկուսացված էր ոչ միայն մեծ տերություններից, այլև իր դարավոր հարևաններից՝ Անդրկովկասի ժողովուրդներից»:[2]

Հարկ է անդրադառնալ հայ պատմագիտության մեջ Ղարաքիլիսայի ճակատամարտի, մասին առկա կարծիքներին: Այդ ժամանակ Ղարաքիլիսայի ճակատում սկզբնական շրջանում տիրում էր համատարած խուճապ, կատարյալ բարոյալքում: Գրեթե ոչ ոք չէր ուզում կռվել: Իսկ մինչ այդ թուրքական բանակը բաժանվել էր չորս մասերի, որոնցից երկրորդը պետք է արշավեր դեպի Ղարաքիլիսա՝ հետագայում Թիֆլիս և Բաքու շարժվելու նպատակով: Հենց այս առումով այդ ուղղությունը գլխավորն էր:[3]

Ղարաքիլիսայի ճակատամարտին հանգամանալից անդրադարձել է ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը:[4] Նրա աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրված 1918թ. մայիսյան հերոսամարտերին: Նա մանրամասն ներկայացնելով թուրքական ծավալապաշտական ծրագրերը՝ տալիս է Հայաստան ներխուժման նրանց ուղիները, իրավացիորեն նշելով, որ Ղարաքիլիսա գնացող 2-րդ ուղղության նպատակը Բաքու հասնելն էր: Կարևոր են այս ուղղությանը դիմակայելուն միտված գեներալ Թ.Նազարբեկյանի ձեռնարկած քայլերի, հայկական զորամասերի կառուցվածքի և դասավորության ներկայացումը:

Հարցի ընդհանուր պատկերացման տեսանկյունից շատ հետաքրքիր են Ղարաքիլիսայի ուղղությամբ հայկական 1-ին կորպուսի մայիսի 16-21-ի համառոտ գրառումների ներկայացումը և վերլուծումը: Հանգամանալից ներկայացված է Բեյ-Մամիկոնյանի գլխավորած Ղարաքիլիսայի խմբավորման կառուցվածքը, հատկապես շեշտվում է կապիտան Տեր-Մովսեսյանի հերոսագործությունը: Կարևոր պատմագիտական նշանակություն ունեն աշխատության հավելվածում մի շարք արժեքավոր փաստաթղթերի հրապարակումը, որոնք լրացուցիչ լույս են սփռում հերոսամարտի ընթացքի և հետագայում թուրքական զորքերի վայրագությունների պարզաբանման ուղղությամբ:[5]

Սփյուռքահայ պատմա-հուշագրական գրականությունից առանձնակի պետք է հիշատակել Ավոյի հրատարակած ժողովածուն:[6]

---

[1] Նույն տեղում, էջ 187:
[2] Նույն տեղում, էջեր 192, 198:
[3] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 174-175:
[4] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, Ե., 1998, էջ 107-116:
[5] Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջեր 201-217, 221-226, 255-262:
[6] Աւօ, Նժդեհ, Պէյրութ, 1968, էջ 67-72:

Միանշանակորեն Ղարաքիլիսայի հերոսամարտն ունեցավ առանցքային նշանակություն: Մյուս կողմից, նրա դերն ու նշանակությունը հայ պատմագիտության մեջ դեռևս լիովին չի պարզաբանվել և գնահատվել:[1]

Ամփոփելով, շեշտենք թեմայի վերաբերյալ ամենակարևոր աշխատանքները: Հ. Թուրշյանի գիրքը գրված է ժամանակի ռազմա-քաղաքական ղեկավարությանը վարկաբեկելու դիրքերից, նսեմացվում է այնպիսի գործիչների դերակատարությունը, ինչպիսիք էին Արամ Մանուկյանը, գեներալներ Թ. Նազարբեկյանը և Մ. Սիլիկյանը: Այսուհանդերձ, այն հայ պատմագիտության առաջին աշխատանքն էր և շատ հարցերի լուսաբանման ուղղությամբ ուղենիշ հանդիսացավ:

Հատկապես պետք է բարձր գնահատել մարշալ Հ.Բաղրամյանի գիրքը, ուր հայրենասիրական դիրքերից՝ հենվելով հիշողությունների և աղբյուրների փաստերի հիման վրա, ներկայացրել է Սարդարապատի հերոսամարտի հավաքական պատկերը:

Աշ.Հարությունյանի ուսումնասիրությունը հարցերի ներկայացման և վերլուծման տեսանկյունից խորհրդահայ պատմագիտության արժեքավոր աշխատություններից է:

Հետխորհրդային տարիների հեղինակներից պետք է շեշտել Հ.Ավետիսյանի աշխատությունները, որտեղ հանգամանալից ներկայացվում է 1917-1918թթ. շրջանի ռազմա-քաղաքական և դիվանագիտական պատմության խնդիրների համապատկերը:[2]

Անշուշտ, մայիսյան հաղթական հերոսամարտերը ունեցան ճակատագրական նշանակություն: Ապահովվեց արևելահայության ֆիզիկական գոյությունը և միանգամայն իրական հիմքեր ստեղծվեցին հայկական պետականության ստեղծման համար: Չնայած աշխատությունների և հոդվածների մեծաքանակ առկայությանը, այնուամենայնիվ, հերոսամարտերի շատ դրվագներ և ռազմաքաղաքական հերոսներն ու գործիչները վերագնահատման և ուսումնասիրության կարիք ունեն:

Հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմագիտական ուսումնասիրությունը, թուրք զավթիչների դեմ տարած հաղթանակների նշանակության վերհանումը գիտականից զատ ունի նաև արդիական նշանակություն՝ սերունդների հայրենասիրական դաստիարակության և պատմության թուրքական կեղծարարների մերկացման ուղղությամբ:

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նորաստեղծ հանրապետությունը չուներ անհրաժեշտ կադրեր ազգային պետական շինարարության իրականացման համար: Հայ մտավորականության զգալի մասը կազմում էր մանկավարժությունը, որի մի մասը աշխատանքի անցավ

---

[1] Տես՝ Քալոյան Ս., Գ.Նժդեհը և Ղարաքիլիսայի հերոսամարտի գնահատումը հայ պատմագրության մեջ,- Գարեգին Նժդեհ, Գիտաժողովների նյութեր, Ե., 2001, էջ 14-17:

[2] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվականի մայիս, Ե., 1998:

պետական հիմնարկներում: Պատահական չէ, որ ՀՅԴ կուսակցության ականավոր դեմքերից մեկը՝ Ռուբեն Տեր - Մինասյանը իր հուշերում անդրադառնալով այս հարցին, գրումէ.«Հայաստանի ղեկավարներին անուանում էին «վարժապետների»ի կառավարութիւն քանի որ թէ՛ Բիւրոյի, թէ՛ կուսակցութեան եւ ի մասնաւորի խորհրդարանի մէջ ուսուցիչներ էին մեծամասնութիւնը, ոմանք նրանցից հմուտ ուսուցիչ. տեսուչ եւ սիրով փարած իրենց արհեստին»:[1] Սակայն ուսուցչության մեծ մասը գտնվում էր ծանր վիճակում: Մանկավարժներին չէր վճարվել 1917/1918 ուս. տարվա աշխատավարձի մեծ մասը: Սովամահ չլինելու համար, ուսուցիչները հարկադրված էին դիմելու ծայրահեղ միջոցների: «Ուսուցիչներ կան, որ իրենց և ընտանիքի հացի շորերն ու անկողինները ամբողջապես ծախելեն հետո՝ մերկ ու բոկոտն, այսօր տանից դուրս գալ կամաչեն: Ուսուցիչներ կան, օրերով հացի երես չեն տեսնի, ուսուցիչներ կան, որ իրենց ծայր աստիճանի նեղութունից ստիպված գյուղեր կշրջեն, աղի և հին շորի կապոց շալակին առած, որ ծախեն՝ կտոր չոր հաց ճարեն, իրենց ընտանիք պահեն».– գրում էր «Ժողովուրդը»:[2] Բավականին մեծ էր մանկավարժների հոսունությունը կրթության բնագավառից:

Հանրային կրթության նախարարության առջև կանգնած ամենաբարդ պրոբլեմը. դա մանկավարժների պակասն էր: 1919/20 ուս. տարում շուրջ 90 դպրոցներ չէին գործում ուսուցիչներ չունենալու պատճառով: Միայն գյուղական դպրոցների համար անհրաժեշտ էին 200 ուսուցիչներ:[3] Կրթության նախարարությունը մի շարք գործնական քայլեր է ձեռնարկում դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու համար: Կոչեր են ուղղվում Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի հայկական դպրոցների մանկավարժությանը, սակայն հիմնականում այն մնում էր անպատասխան: Միայն Թիֆլիսից հնարավոր եղավ հրավիրել 46 մանկավարժ՝ 41 միջնակարգ և 5 ոչ լրիվ միջն. կրթությամբ, որից 30 ուսուցչական փորձառություն ունեին, իսկ 16 նորավարտ էին:[4]

Դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով Կրթության նախարարությունը 1919թ. սեպտեմբերին բացում է Ուսուցչական սեմինարիա՝ միջնակարգ դպրոցի լիակատար դասընթացով՝ երեք տարի ժամկետով: Սեմինարիայի նպատակն էր տալ ուսումնատեսական և գործնական այնպիսի անհրաժեշտ գիտելիքներ, որոնք կնպաստեին մանկավարժական գործունեության ընթացքին: Ուսուցչական սեմինարիայի վերատեսուչ էր նշանակվել փիլիսոփայության դոկտոր Ա. Տեր – Պողոսյանը:[5]

Ուսուցչության գիտելիքները ընդլայնելու, նոր կադրեր պատրաստելու նպատակով, 1919 թվականի աշնանից հանրապետություն տարբեր գավառներում կազմակերպվում են կարճատև մանկավարժական դասընթացներ: Առաջին միամսյա դասընթացները կազմակերպվում է Նոր Բայազետում՝ շրջանի դպրոցական տեսուչ Մ.Դուրգարյանի նախաձեռնությամբ: Դասընթացներում դասախոսում էին Մ. Դուրգարյանը՝ դիդակտիկա, Նոր Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը՝ հայոց լեզու, ուսուցիչ Կ. Ստեփանյանը՝ բնագիտություն և ուրիշները: Հոկտեմբե-

---

[1] *Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է., Թեհրան, 1982, էջ 284:*
[2] *Ժողովուրդ, դեկտեմբերի 1, 1918:*
[3] *Ժողովուրդ, դեկտեմբերի 12, 1919, նո. 148:*
[4] *ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 237, թ. 14:*
[5] *Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 67, թթ. 14 – 19:*

րի վերջին դասընթացները ավարտում են 35 հոգի, որոնք որպես ուսուցիչներ մեկնում են աշխատելու գյուղական դպրոցները:[1]

Հատկապես կարևոր նշանակություն ուներ Երևանում նոյեմբերին տարրական դպրոցների վարչության պետ Գ. Էդիլյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ մանկավարժական դասընթացների բացումը: Դասընթացների ծրագիրը բավականին հարուստ և բովանդակալից էր: Դասախոսվում էին հետևյալ առարկաները՝ մայրենի լեզվի մեթոդիկա (Գ. Էդիլյան), դիդակտիկա (Վ. Խորենի), փորձնական հոգեբանություն (Տ. Ռաշմաճյան), բնագիտության մեթոդիկա (Տ. Մուշեղյան), հոգեբանություն (Հ. Հարությունյան), դպրոցական առողջապահություն (Վ. Արծրունի): Ինչպես տեսնում ենք, դասախոսում էին բավականին հմուտ և խոր մանկավարժական գիտելիքներ ունեցող հայ մանկավարժներ: Դասընթացները տևում են չորս ամիս, որին մասնակցում են 120 – 130 հոգի, այդ թվում մանկավարժական փորձ չունեցող ուսուցիչներ: Լավագույն ուսանողները 18 հոգի, ստանում են պետական վկայական: Նմանանատիպ դասընթացներ, հետագայում ևս, 1920 թ. գարնան - -ամռան ամիսներին կազմակերպվում են ՝ Կարսում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում:[2] Այդ քայլերի շնորհիվ, 1919/20 ուս. տարվա ընթացքում, նկատելիորեն ավելացավ մանկավարժների թիվը, չնայած զգացվում էր մանկավարժական կադրերի պակասը: Հանրապետության տարրական դպրոցներում դասավանդում էին 1047 ուսուցիչներ, որը բավականին բարձր էր նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ: Վիճակագրական տվյալների համաձայն, ըստ կրթական մակարդակի, տարրական դպրոցներում աշխատած 939 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ունեցել են 2,6%, թերի բարձրագույն՝ 1,6%, միջնակարգ՝ 43,6%, միջնակարգից ցածր և տարրական՝ 52,3%:[3] Միջնակարգ դպրոցներում դասավանդող 286 մանկավարժներից բարձրագույն կրթություն ունեին 40,2%, թերի բարձրագույն՝ 18,5%, միջնակարգ՝40,5%, միջնակարգից ցածր 0.8%: Ինչպես տեսնում ենք, տարրական դպրոցներում ուսուցիչների կրթական մակարդակը անհամեմատ ցածր էր, իսկ միջնակարգում այն կարելի էր համարել բավարար, չնայած բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը քիչ էր, հատկապես չէին բավարարում մաթեմատիկայի և բնագիտության ուսուցիչները:[4] Առանձնապես անհանգստացնող երևույթ էր այն, որ մանկավարժների մեծ մասը չունեին անհրաժեշտ աշխատանքային փորձ:

1919 թվականի կեսերից կրթության նախարարությունը ջանքեր է գործադրում մանկավարժությանը մասնագիտական գրականությամբ ապահովելու և փորձնական պարապմունքներ անցկացնելու նպատակով մանկավարժական կենտրոնական թանգարան – գրադարան հիմնելու համար: Ժամանակավորապես այն գտնվում էր նախարարության շենքում, որտեղ էլ հավաքվում էին անհրաժեշտ գրականությունը և ցուցանմուշները: Հետագայում Նախարարների խորհուրդը հատկացնում է 375հազ. ռուբլի թանգարանի ստեղծման համար:[5] 1920 թ. սեպտեմբերին Երևանի արական գիմնազիայի շենքում սենյակներ են հատկացվում թանգարանի համար : Գրադարան – թանգարանը պետք է ունենար մանկավարժական, պատմաազգագրական, մարդաբանական և բուսաբանական բաժիններ:

---

[1] Հառաջ, նոյեմբերի 14, 1919, նո. 45:
[2] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 237, թթ. 151 – 152:
[3] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, հ. Ե, էջ 291:
[4] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 349, թ. 6:
[5] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 156, թ. 12:

Հանրապետության հասարակայնությանը կոչ էր արվել նվիրաբերել թանգարանի համար անհրաժեշտ գրականություն և հավաքածուներ:[1] Բացի այդ, հրատարակվում են մի քանի մեթոդական ձեռնարկներ «Մեթոդական ժողովածու թվաբանական խնդիրների»(Մ. Սամուելյան), «Հոգեբանության հիմնական տարրեր» (Ա. Օլթիցյան) և «Նյութեր մասնավոր դիդակտիկայի»:[2]

Հատկապես անհանգստացնող էր ուսուցիչների ֆինանսական և նյութական ծանր վիճակը: 1919 թ. գարնան վերջին կառավարության անունով գավառներից Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային կոմիսարիատից, Ալեքսանդրապոլից, Իջևանից և այլ տեղերից, մեծ թվով դիմում-խնդրագրեր էին ստացվել աշխատավարձի վճարման հարցով: Հատկապես ծանր էր Արցախի մանկավարժների դրությունը: Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը որոշում էր ընդունել ոչ մի կապ չունենալ ադրբեջանական իշխանությունների հետ, բոյկոտել անգլիացիների հավանությամբ նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովին: Վերջինս կազմում է մի պահանջագիր, ըստ որի աշխատավարձ պետք է ստանային բոլոր նրանք, ովքեր ստորագրություն կտային, թե ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այսուհետև ևս «կշարունակեն ծառայել ամբողջ եռանդով և պատվով»: Սակայն Արցախի հայ մտավորականությունը չնայած, որ մի քանի ամիս աշխատավարձ չէր ստացել, մերժում է այս պահանջը:[3] Հայաստանի կառավարության որոշման համաձայն՝ Արցախի երկու միջնակարգ /Թեմական և Մարիամյան- Ղուկասյան/ և 28 ծխական դպրոցների մանկավարժների 1918/19 ուս. տարվա աշխատավարձի վճարման համար հատկացվեց համապատասխան գումար:[4]

Մանկավարժության հոսունությունը կանխելու և բնագավառը նոր կադրերով ապահովելու նպատակով, կառավարությունը ընդունեց մի քանի օրենքներ, որով պետք է բարելավեր նրանց ֆինանսական և նյութական դրությունը: 1919 թվականի հուլիսին Նախարարների խորհուրդը ընդունում է օրենք՝ «Դպրոցների ուսուցիչ և վարիչ պաշտոնյաների վարձատրության մասին»: Օրենքով սահմանվում էր, որ ուսումնական տարվա ընթացքում շաբաթական մեկ դասի համար բարձրագույն կրթության տեր ուսուցիչը ստանում էր տարին 650 ռ. հիմնական վարձ, Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը ավարտածը՝ 550 ռ., միջնակարգ դպրոց ավարտածը՝ 450 ռ., իսկ միջնակարգից ցածրկրթություն ունեցողը՝ 350 ռ. :Սահմանվում էին լրացուցիչ հավելավճարներ՝ գրավոր աշխատանքների, մասնագիտական կաբինետները խնամելու և փորձարարական դասեր անցկացնելու համար: Կարգավորվում էր նաև տարրական և միջնակարգ դպրոցների տնօրենների՝ տեսուչի և վերատեսուչի,ինչպես նաև դպրոցական այլ պաշտոնյաների աշխատավարձները:[5] Ինչպես տեսնում ենք աշխատավարձի վճարումները կատարվում էր ըստ կրթական ցենզի, որը առաջադիմական էր: Կառավարությունը 1920 թ. ընթացքում մի քանի անգամ անրադարձավ ուսուցիչների աշխատավարձի խնդրին, փոփոխություն մտցվեց օրենքում՝ աշխատավարձը բարձրացվեց մոտ երկու անգամ:[6] Բացի այդ, նկատի ունենալով, որ դպրոցների ուսուցչությու-

---

[1] *Նույն տեղում, ֆ. 207, ց, 1, գ. 334, թ. 147:*

[2] *Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 237, թ. 65:*

[3] *Կրթությունը և գիտությունը Արցախում, հ. 1 – 2, 2001, էջ 9: / Տես՝ Հ. Աբրահամյան «Շուշիի ռեալականի պատմության էջերից» հոդվածը/*

[4] *ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 94, թ. 131:*

[5] *Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 57, թթ. 203 – 204:*

[6] *Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 156, թ. 71:*

նը պարենավորման տեսակետից, մանավանդ գյուղերում, գտնվում էր ծայր աստիճան ծանր դրության մեջ, Կրթության նախարարի դիմումի համաձայն՝ Խնամատարության նախարարը մի շրջաբերականով կարգադրում է շրջանային ներկայացուցիչներին, որ ըստ հնարավորության, ուսուցիչներին ապահովեն պետական արժեքով մթերքներ:[1] 1919/20 ուս. տարվա երկրորդ կիսամյակում Երևանի, Ալեքսանդրապոլի, Կոտայքի և մի քանի այլ շրջանների ուսուցչությանը մատչելի գներով տրվել էր սննդամթերք և կտորեղեն:[2]

Կարևոր նշանակություն ուներ մանկավարժներին զինվորական ծառայությունից ազատելը: Դեռևս 1919 թ. հունվարին Զինվորական նախարարի կարգադրության համաձայն դպրոցների ուսուցիչները ազատվում էին զորակոչից: Հոկտեմբերին այն ամրագրվեց օրենսդրորեն:[3]

Հայաստանի Նախարարների խորհուրդը ֆինանսական միջոցներ է հատկացնում նաև ազգային փոքրամասնությունների դպրոցների ուսուցիչների համար: 1919թ. հուլիսին կրթության նախարարությունը դիմում է նախարարների խորհուրդ՝ խնդրելով ֆինանսներ տրամադրել Լոռու շրջանի Ջալալ-Օղլու, Նովո-պակրովսկի, Նիկոլաևսկի, Գերգերի գյուղերի ուսուցիչների աշխատավարձերը վճարելու համար: Հայաստանի խորհրդարանը հատուկ որոշում ընդունեց, որի համաձայն ռուս ուսուցիչների նախորդ իննը ամսվա աշխատավարձը վճարվեց:

Չնայած կառավարության ձեռնարկած միջոցառումներին, հանրապետության գոյության ընթացքում, մանկավարժության նյութական վիճակը մնում էր ծանր, քանի որ ֆինանսական միջոցների սղության հետևանքով աշխատավարձերը վճարվում էին ՝բավականին ուշացումներով, իսկ դրամի արժեքազրկումը և գների աճը շատ արագ էր տեղի ունենում:

Այդ մասին է վկայում Գ. էդիլյանի՝ կրթության նախարարին ներկայացրած հրաժարականին կից գրությունը,որի մեջ մասնավորապես բացատրում էր իր հրաժարականի պատճառները: Նա գրում էր, որ ցանկանում է նվիրվածությամբ շարունակել մասնագիտական աշխատանքը, սակայն հիասթափվել է պետության կողմից դեպի մանկավարժությունն և տարրական՝ դպրոցի նկատմամբ ունեցած անտարբեր վերաբերմունքից: Քանի որ դպրոցների ֆինանսական հատկացումները կատարվում էին մասնակի և ուշացումներով. դա տեղիք էր տալիս բավականին դժգոհությունների, որի հետևանքով տարրական դպրոցների վարչության ընդունած որոշումների և շրջաբերականների մեծ մասը չէին կատարվում: « Շրջանային տեսուչներն են ինձանից պահանջներ անում և ինձանից նեղանում, փոխանակ ես նրանցից պահանջներ անելու, որովհետև փող չկա»: Գ. էդիլյանը անհիմն մեղադրում էր կառավարությանը այն բանում, որ ժողովրդավարական հանրապետության օրոք զգալի ռազմական ծախսեր էին կատարվում երկրի պաշտպանության ամրապնդման և գաղթականության կարիքների համար, մոռանալով կրթության բնագավառ: Նա բերում է մի շարք վիճակագրական տվյալներ ցույց տալու համար դպրոցաշինարարության բնագավառում կատարված իսկայական աշխատանքը: էդիլյանը առաջարկում էր մանկավարժների իրավական դրությունը հավասարեցնել պետական պաշտոնյաների հետ և վճարել նախորդ՝ մի քանի ամսվա աշխատավարձը: «Ահա այս համեստ առաջարկն է, որ ես դնում եմ ձեր առաջ և խնդրում իրականություն դարձնել այն: Եթե մեր մինիստրությունը հնարավո-

---

[1] *Յառաջ, դեկտեմբերի 31. 1919, նո. 80:*
[2] *ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 265, թ. 32:*
[3] *Զանգ, հունվարի 17, 1919, նո. 7:ՀՀ ԿՊՊԱ, ֆ.199. ց. 1, գ. 156, թ. 100:*

րություն չունենա այս համեստագույն առաջարկը իրականացնելու, նշանակում է իմ հարցը լուծվում է ինքնին և իմ այստեղ աշխատելը դառնում է ավելորդ»:[1] Պետք է նկատել, որ այս հուզումնական գրության մեջ արդարացիորեն շոշափվում են մանկավարժությանը հուզող բավականին ցավոտ հարցեր աշխատավարձների ժամանակին վճարումը, ուսուցիչների նյութական և իրավական ծանր դրությունը, սակայն դրա հետ մեկտեղ կան անհիմն մեղադրանքներ ուղղված կառավարության հասցեին: Խորհրդահայ պատմագրության մեջ Գ. Էդիլյանի հրաժարականը շատ է շահարկվել, այն ներկայացվել է որպես Հայաստանի առաջին հանրապետությունում կրթական քաղաքականության ձախողման ապացույց: Իրականում հրաժարականը Կրթության նախարար Ն. Աղբալյանի կողմից չի ընդունվել և Գ. Էդիլյանը շարունակել է կատարել իր պարտականությունները Տարրական դպրոցների վարչության պետի պաշտոնում:

Մանկավարժության շահերի պաշտպանությամբ հանդես է գալիս նաև Հայաստանի ուսուցչական միությունը:

1918թ. հոկտեմբերի կեսերին Երևանում տեղի է ունենում Ուսուցչական միության ընդհանուր ժողով, որը ընտրում է հինգ հոգուց բաղկացած վարչություն՝ Տիգրան Մուշեղյանի նախագահությամբ:[2] Վարչության առաջին գործերից մեկն է լինում հարթել Գայանյան օրիորդաց դպրոցի հոգեբարձության և մանկավարժական խորհրդի միջև ծագած տարաձայնությունները: Դպրոցի հոգեբարձության որոշման համաձայն աշխատանքից ազատվել էին տեսուչ Տիգրան Ռաշմաճյանը և մի քանի ուսուցիչներ: Ուսուցչական միությունը հանդես է գալիս մանկավարժների պաշտպանությամբ: Վարչության անդամները հանդիպում են Կրթության նախարարի հետ, բարձրացնում ուսուցիչներին հուզող բազմաթիվ հարցեր՝դպրոցների ֆինանսավորման, շենքերի բռնագրավման, մանկավարժների վարձատրության և կենցաղային պայմանների բարելավման մասին: Ընդունվում է միության կանոնադրությունը: 1920թ. հունվարին տեղի է ունենում Արևմտահայ ուսուցչական միության ընդհանուր ժողով, որը քննարկում է միության անդամակցության հարցը Հայաստանի ուսուցչության միությանը: Ժողովը որոշում է, որ « Անկախ և ազատ Հայաստանի մեջ կարող է գոյություն ունենալ միայն մեկ ուսուցչական միություն, որոշեց լիազորել վարչությանը հանձնարարելով անոր, որպեսզի անիկա մտնէ բանակցության Հայաստանի ուսուցչական միության վարչության հետ, միացնելու երկու միությունները, ընտրելու նոր վարչություն և այդպիսով իրականացնելու փաստորեն Հայաստանի ուսուցչական միության գաղափարը, միաժամանակ պահելով ներքին ինքնուրյունությունը՝ լուծելու համար մասնակի խնդիրներ՝ «Հայաստանի ուսուցչական միության արևմտահայ մասնաճյուղ կամ ֆրակցիա» անվան տակ: Հայաստանի ուսուցչական միությունը տալիս է իր համաձայնությունը միավորման համար:[3] Միությունը զգալի ուշադրություն էր հատկացնում նաև ուսումնական հարցերին՝ կրթության նախարարությունից պահանջում է վերականգնել մանկավարժական ժողովների գործունեությունը, լուծարել վերատեսուչների խորհուրդը, արգելել ռուսական կրթություն ունեցող ուսուցիչների կողմից հայերեն առարկաների դասավանդումը և այլն: Նախատեսնվում էր 1920 թ. աշնան վերջին Երևանում անցկացնել հայ ուսուցիչների համագումար:[4]

---

[1] *ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 237, թ. 38, 41 – 42:1932, էջ 199-200;*
[2] *Հառաջ, հոկտեմբերի 19, 1918, , նո. 24:*
[3] *Նույն տեղում, փետրվարի 6, մարտի 26, 1920, նո. 27, նո. 64:*
[4] *Հառաջ, սեպտեմբերի 30. 1920:*

Ընդհանուր միության կազմի մեջ էին մտնում հանրապետության շրջանային և քաղաքային ուսուցչական միությունները՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Ղարաքիլիսայի և այլն, որոնք տեղերում գործում էին ինքնավարության սկզբունքով:

Հայ մանկավարժությունը իր ներդրումն ուներ ազգային պետական շինարարության գործընթացում: Հասարակական նոր հարաբերությունների հաստատումը անհնար էր առանց մտավորականության ակտիվ աջակցության: Հանրապետության մտավորական խավի մեծ մասն կազմում էր ուսուցչությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ հանրապետության հաստատումից հետո, հատկապես գյուղերում, հայ մանկավարժն էր մնում ժողովրդի առաջին խորհրդատուն և պաշտպանը: Մանկավարժները հասարակական մեծ ծանրաբեռնվածություն ունեին: Էջմիածնի շրջանի դպրոցական տեսչի զեկուցագրում կարդում ենք, որ շրջանի մանկավարժներից երկուսը ընտրվել են՝ Վաղարշապատի և Աշտարակի քաղաքային խորհրդների նախագահներ, իսկ մի քանիսը անդամներ: «Գավառից մի շարք ուսուցիչներ համայնական խորհրդի իրավասուներ են ընտրված և այդպիսին մասնակցում են նիստերին՝ օրերով թողնելով դպրոցը, մի այլ տեղ գյուղի ուսուցիչը հասարակության ներկայացուցիչ է ընտրված գյուղի այլև այլ ցավերը լսելի դարձնելու համար ամերիկացիներին, մինիստրություններին, պարտավորված է գնալ Վաղարշապատ կամ Երևան»:[1] Ուսուցչությունը ակտիվորեն էր մասնակցում նաև ընտրական և այլ հանձնաժողովների աշխատանքներին: Իհարկե մանկավարժների հասարակական գործունեությունը զգալիորեն ազդում էր դպրոցներում ուսումնական պրոցեսի վրա:

Հայաստանի առաջին խորհրդարանի դպրոցական հանձնաժողովը, որքան էլ ձգտում էր դպրոցը հեռու պահել քաղաքականությունից, դա չի հաջողվում: Հանրապետություն խորհրդարանում ներկայացված հասարակական-քաղաքական բոլոր կուսակցությունները ՝ ՀՅԴ, ՀԺԿ, ՍԴՀԿ, ՌՍԴԲԿ Հայաստանի Կոմիտեն, ստեղծել էին ուսուցչական և աշակերտական կառույցներ՝ միություններ և խմբակցություններ: Այդ կազմակերպությունները ունեին իրենց ակումբներն և թերթերը, կազմակերպում էին տարբեր միջոցառումներ՝ դասընթացներ, ներկայացումներ, հրապարակային դասախոսություններ հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային թեմաներով: Հատկապես ակտիվորեն էին գործում Հայ հեղափոխական դաշնակցության արևելահայ ու արևմտահայ ուսուցչական և աշակերտական կազմակերպություններ: Արևմտահայ դաշնակցական ուսուցիչների և աշակերտների մեծ մասը համախմբված էր՝ «Վան – Այգեստան», «Լեռնապատ», «Վասպուրական» և այլ կազմակերպությունների մեջ.[2] ՀՅԴ բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանը իր հուշերում անդրադառնալով կուսակցության կողմից ուսուցչության նկատմամբ ունեցած վերաբերմունքին, գրում է. «Յայտնի է, որ Դաշնակցութիւնը իր հիմնադիրներից սկսած մինչեւ այժմս էլ՝ ուսուցիչների կուսակցութիւն է, եւ կամ գիւղացիի ու զինուորի: Ղեկավար տարրը ուսուցիչ լինելով, նա լաւ էր հասկանում ուսուցչի դերը ոչ միայն մանուկ սերունդի մէջ, այլեւ պետութեան, հասարակութեան մէջ: Բիւրոն, կուսակցական մարմինները կը նայէին դաստիրակչական գործի վրայ իբրեւ ներկայի եւ ապագայի գրաւական մեր աշխարհահայեացքի հաստատման եւ անկախ Հայաստանի ամրապնդման հա-

---

[1] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 265, թ. 198:
[2] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 133, թ 1-2:

մար»:[1] ՀՅԴ ղեկավարները հաշվի չէին առնում մի քանի հանգամանք: Նախ և առաջ ժողովրդավարական կարգերը նոր էին ձևավորվում, չկար քաղաքական պայքարի կուլտուրա, բացի այդ ընդդիմադիր կուսակցությունները առաջին հերթին բոլշևիկները, նույնպես ձգտում էին իրենց ազդեցությունը տարածել հասարակական տարբեր խավերի վրա, օգտագործել դրանց ներուժը քաղաքական պայքարում: Այդ պայքարում առանձնահատուկ տեղ հատկացնելով ուսուցչությանն և բարձր դասարանների աշակերտությանը: Այդպիսի պայմաններում, դպրոցը դառնում էր քաղաքական պայքարի թատերաբեմ: 1920թ. ձմռան - գարնան ամիսներին քաղաքական պայքարը հանրապետությունում բավականին սրվեց: Հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում կոմունիստական կուսակցությունը: Այս կուսակցությունը հանրապետությունում ուներ ընդամենը 1200 անդամ, բավականին լավ կազմակերպված էր և ուներ խիստ կարգապահություն:[2]

Հայաստանի կոմկուսը չէր ընդունում ժողովրդավարական, սահմանադրական պայքարի ձևերը, այլ Ռուսաստանի իր կուսակից եղբայրների նման ձգտում էր իշխանության գալ զինված ճանապարհով: Այդ նպատակով իրենց գործունեությունն են ակտիվացնում գավառներում գտնվող կոմբջիջները: Գավառներում քարոզչական աշխատանք էին կատարում նաև բոլշևիկ-ուսուցիչները, որոնք համակիրներ էին որոնում նյութական վատ վիճակում գտնվող ուսուցչության և չքավոր աշակերտության շրջանում: Հանրապետության կառավարությունը անհանգստացած կոմկուսի այս հակապետական, հակաժողովրդավարական գործունեությունից, ընդունեց մի քանի օրենքներ՝ Հայկոմկուսը հայտարարվեց օրենքից դուրս, առավել ակտիվ բոլշևիկները վտարվեցին երկրից: Բացի այդ,Նախարարների խորհրդի համաձայնությամբ, Ներքին գործերի նախարարը գրությամբ դիմեց նախարարներին, պահանջելով աշխատանքից հեռացնել իրենց գերատեսչություններում աշխատող բոլոր բոլշևիկներին:[3] Առավել բարդ էր այս որոշման կատարումը հանրային կրթության նախարարության կողմից: Դպրոցներում ուսումնական երկրորդ կիսամյակը նոր էր սկսվել, մանկավարժների նույնիսկ մի փոքր մասի հեռացումը, այն դեպքում, երբ հանրապետությունում չէին բավականացնում ուսուցչական կադրերը, կնշանակեր դպրոցների մի մասը փակել և աշակերտությանը փողոց նետել, որը չէր կարելի թույլ տալ: Դա նշանակում էր ձախողել մեծ ջանքերի գնով կարգավորված կրթական բնագավառի աշխատանքները: Նախարարությունը արգելեց դպրոցների վերատեսուչներին հեռացնել այն կոմունիստ ուսուցիչներին, որոնց գործունեությունը դպրոցներում սահմանափակվել էր միայն դասավանդումով: Բերենք մեկ օրինակ: Դիլիջանի միջնակարգ դպրոցի վերատեսուչը կրթության նախարարին ուղղված զեկուցագրում նշում է. « Ես պարզ հայտարարել եմ բոլոր ուսուցիչներին, նրանց հրավիրելու հենց առաջին օրից և հետո էլ, որ դպրոցը, քանի ես եմ կառավարողը, իր պատերի ներսում չպետք է ունենա ոչ մի կուսակցութուն՝ թե ուսուցիչների և թե աշակերտների մեջ, իբրև օրինակ, ես, պատկանալով որոշ կուսակցության / դաշնակցության անդամ-մեր կարծիքով/, երկու տարվա ընթացքում և ոչ մի բանով չարտահայտեցի իմ կուսակցության համոզմունքները ոչ դպրոցում և ոչ էլ դպրոցից դուրս, ես համարյա բոլորովին հրաժարվեցի կուսակցական աշխատանքից. այդչափ պահանջել ուսուցիչներից ես իրավունք չունեի, ես միայն խստիվ հետևում

---

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, էջ 285-286:
[2] ԳալոյանԳ., Հերոսական մայիսից – հաղթական նոյեմբեր, Ե., 1980, էջ 57:
[3] Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 2, 1967, էջ 14:

էի, որ դպրոցի մեջ խոսակցություն անգամ չլինի կուսակցությունների մասին»:[1] Սակայն դպրոցում դասավանդող երեք բոլշևիկ ուսուցիչների՝ Հ. Յաղուբյանին, Մ. Աղայանին, Ե. Շամախյանին և վեց աշակերտների հակակառավարական գործունեության համար գավառային կոմիսարի որոշման համաձայն, որին հավանություն էր տվել ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանը, ձերբակալում են և քրեական գործ հարուցում:[2] Միայն մանկավարժական և ծնողական խորհրդների միջամտությունից հետո, մանկավարժները և աշակերտները ազատ են արձակվում: Վերականգնվում է ընդհատված դպրոցական պարապմունքները:

Դպրոցներում քաղաքական քարոզչությունը կանխելու նպատակով Կրթության նախարար Ն. Աղբալյանը հարկադրված էր շրջաբերականով դիմել միջնակարգ դպրոցների մանկավարժությանը: Նախարարը պահանջում էր հարգել ժողովրդի մեծամասության կամքով ընտրված խորհրդարանի կողմից նշանակված կառավարությանը և դպրոցը չվերածել քաղաքական պայքարի ասպարեզ:

«Դպրոցն ամենից առաջ ուսման վայր է, ուր սաները սովորում են ոչ՝ միայն գիտելիքներն, այլև ստանում են քաղաքական դաստիրակութուն: Ռամկավար հանրապետության մեջ այդ դաստիրակության նպատակը պետք է լինի ներշնչել մատաղ սերնդին հարգանք դեպի ժողովրդի մեծամասնության կամքը և պատկառանք դեպի նույն այդ ժողովրդի մեծամասնության կամքով հաստատված պետութունն ու կառավարութունը: Ազդարարելով այս մասին՝ հրավիրում ենք իրենց պաշտոնեության մեջ թերացողների ուշադրությունից մեր մատնանշած երևույթի վրա և հրահանգում ենք չափ դնել իրենց պաշտոնի կարծման ընթացքում»:.– գրում է Ն. Աղբալյանը:[3] Հանրապետության մանկավարժության մեծ մասը հավանություն տվեց նախարարի այս հայտարարությանը: Դրա վկայությունն է 1920թ. մայիսյան դեպքերը, երբ ուսուցիչների և աշակերտների միայն մի փոքր մասը հարեց հայ բոլշևիկների կազմակերպված ելույթներին: Փաստերը վկայում են, որ մայիսյան ապստամբությանը մասնակցած բոլշևիկ ուսուցիչների թվաքանակը նույնպես մեծ չի եղել օրինակ,Կարսի 190 ուսուցիչներից խռովությանը մասնակցել են ընդամենը 11հոգի, Ալեքսանդրապոլի 170 ուսուցիչներից ձերբակալվել էր 9 հոգի:[4] Այնպես որ, անհիմն են դաշնակցության առաջնորդներից մեկի Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում բերված հանդիմանությունները Ն. Աղբալյանի հասցեին: Նա գրում է. «Աղբալեանը եւ կրթական նախարարութիւնը, 1919ին այդ վտանգաւոր երեւոյթը /նկատի ունի բոլշևիկ ուսուցիչներին –մերն է/ չէին նկատում, թէեւ այդ մասին քանիցս բողոքներ եւ դիտողութիւններ եղած են կուսակցական շրջանակներից եւ Բիւրոյից: Դրանք նկատւում էին նեղ կուսակցական նախանձախնդրութիւն, անհանդուրժողութիւն: Բայց շուտով կեանքը գալիս էր ապացուցանելու օրենքի եւ ծայրայեղ ազատախոհութեան թերութիւնը եւ կորստաբերութիւնը: Շուտով լինելու էին Հայաստանում բոլշեւիկեան խլրտումներ, ապստամբութիւններ, որոնք կը դրժէին Աղբալեանի հիմնած կրթական կարգն ու մեթոտները: Նրա դրած ուսուցիչները եւ տեսուչները բոլշեւիկ դաւադրութեանց ղեկավարներն էին, որոնք զէն ի ձեռին մահը կը դաւէին ոչ միայն Աղբալեանի եւ նրա

---

[1] *Առաջին մասսայական – հեղափոխական շարժումները Հայաստանում, Ե., 1932, էջ 306:*
[2] *Նույն տեղը, էջ 309:*
[3] *ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 23, թ. 85:*
[4] *Առաջին մասսայական – հեղափոխական շարժումները Հայաստանում, էջ 198; ֆ. 207, ց. 1, գ. 265, թ. 78: / Թվական հաշվարկները կատարվել են մեր կողմից/:*

ստեղծագործութեանց, այլեւ ամբողջ Հայաստանի»:[1] Դրա հետևանքով է, որ մայիսի սկզբին Ա. Խատիսյանի կառավարության կազմում հրաժարական է տալիս նաև Ն. Աղբալյանը: Կազմվում է նոր կառավարություն Դաշնակցության բյուրոյի անդամներից: Հանրային կրթության և արվեստի նախարար է նշանակվում Գևորգ Ղազարյանը: Վերջինս լինելով հմուտ մանկավարժ և կազմակերպիչ, շարունակեց Ն. Աղբալյանի սկսած կրթական բարեփոխումների քաղաքականությունը: 1920թ.-մայիս-հունիս ամիսներին նախարարների խորհուրդը ընդունեց մի քանի օրենսդրական ակտեր, որոնց համար հիմք էին հանդիսացել 1919/20 ուս. տարում նախարարության կողմից մշակած օրինագծերը: Հայ մանկավարժությունը շարունակում էր ակտիվորեն մասնակցել երկրի հասարակական քաղաքական կյանքին: Խորհրդային իշխանության հաստատումից հետո, հայ մանկավարժությունը շարունակում էր անձնուրաց նվիրումով նոր սերունդներ կրթել հայրենիքի վերածննդի համար:

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ /1941-2001ԹԹ./

Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը /22.6.1941թ.-9.5.1945թ./ ծանր փորձություն հանդիսացավ ինչպես Միության բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի համար: Միայն ԽՍՀՄ մարդկային անվերադարձ կորուստները կազմեցին 26,6 միլիոն մարդ[2], իսկ հայ ժողովրդինը՝ ավելի քան 200000 մարդ, որից 100000-ը՝ Խորհրդային Հայաստանից: Ընդհանուր առմամբ պատերազմին մասնակցեց 600000 հայ, որի կեսից ավելին՝ Հայաստանից[3]: Հայ ռազմիկներից շուրջ 67000-ը պատերազմին մասնակցեց Կարմիր բանակի կազմում գոյություն ունեցած հայկական վեց ազգային դիվիզիաների շարքերում[4]: Այդ դիվիզիաներից հինգը՝ 89-ը, 261-ը, 408-ը, 409-ը և 390-ը կազմավորվել են 1941-1942 թվականներին, առաջին չորսը Խորհրդային Հայաստանի տարածքում, վերջինը՝ Կերչում: Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան կազմավորվել էր ավելի վաղ՝ 1920-1922 թվականներին՝ Հայաստանի առաջին հանրապետության բանակի, ապա Հայկական Կարմիր բանակի վերակառուցման հետևանքով[5]: Հայկական դիվիզիաները մարտական դժվարին ուղի անցան Մեծ Հայրենականի տա-

---

[1] *Ռուբէն. Հայ յեղափոխականի մը յիշատակարանները, էջ 287-288:*

[2] *Россия и СССР в войнах XX века. Потери вооруженных сил. статистическое исследование, М., 2001, с. 229.*

[3] *Ավետիսյան Հ. Ա., Դարի խոշորագույն իրադարձությունը, «Պատմա-բանասիրական հանդես». 1995, թիվ 2, էջ 60:*

[4] *Հարությունյան Կ. Ա., Հ. Հ. Սանուկյան, Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում 1941-1945թթ., Ե., 2001, էջ 20:*

[5] *Սնացականյան Ա. Ն., Միասնական շարքերում, Ե., 1975, էջ 65-66:*

րիներին և իրենց արյան գնով նպաստեցին ֆաշիզմի ջախջախման գործին: Նրանցից 89-րդ դիվիզիան Կովկասի նախալեռներից՝ Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի, Լեհաստանի տարածքներում մղված հերոսական մարտերով հասավ Գերմանիա և իր արժանի ավանդը ներդրեց Բեռլինի գրավման ճակատամարտում: Պատերազմի հաղթական ավարտի ժամանակ միավորման դրոշը զարդարում էին Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանները. դիվիզիան կրում էր Թամանյան, իսկ նրա երկու գնդերը՝ Սևաստոպոլյան պատվավոր անունները: Մոզդոկի մոտից՝ Կուբանի, Ուկրաինայի, Մոլդովայի տարածքներով դեպի Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա և Չեխոսլովակիա ձգվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին: Մարտերում տարած հաղթանակների համար դիվիզիան պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով, արժանացավ Կիրովոգրադյան և Բրատիսլավյան պատվավոր անունների[1]: Իր անձնակազմի արյան գնով Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան 1942թ. աշնանը ձախողեց Նովոռոսիյսկի և Տուապսեի վրայով Անդրկովկաս ներխուժելու գերմանաֆաշիստական հրամանատարության պլանները, թույլ չտալով թշնամուն անցնել կարևոր նշանակության լեռնանցքները՝ Փշիշ գետ Մեծաշխո լեռ-Գյորդ-Շահումյան տեղամասում“. 1942թ. փետրվար-մարտ ամիսներին Կերչում դաժան մարտեր էր մղում Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը բացառիկ դժվարին պայմաններում իր վրա կրեց հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի մի քանի անգամ թվապես գերակշիռ ուժերի հարվածները: Շուրջ երեք ամիս տևած արյունահեղ մարտերում, տեղում գամելով թշնամու մեծաքանակ հարվածային զորամասերին, դիվիզիան զգալի չափով թեթևացրեց Սևաստոպոլի հերոսական պաշտպանների դրությունը, ինչպես նաև նպաստեց Կերչի վրայով Կովկաս ներխուժել ցանկացող թշնամու ուժերի առաջխաղացման ժամանակավորապես դադարեցմանը[3]:

Հայկական ամենահին միավորումը՝ 76-րդ լեռնահրաձգային Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ դիվիզիան էր, որն ինչպես արդեն նշեցինք, կազմավորվել էր Հայաստանում՝ 1920-1922 թվականներին: Չնայած 1938թ. ամռանը այն վերակազմավորվել էր և դարձել ոչ ազգային զորամիավորում, պատերազմի սկզբին համալրվելով հանրապետության մարդկային և նյութական միջոցների հաշվին, դիվիզիան կրկին ձեռք էր բերել իր նախկին ազգային տեսքը. նրա անձնակազմի երկու երրորդը կազմում էին հայերը: 1941-1945թթ. դիվիզիան փառապանծ մարտական ուղի անցավ մասնակցելով խորհրդային զորքերի իրանական գործողությանը, Ուկրաինայի արևելյան շրջանների ծանր մարտերին, Ստալինգրադի ճակատամարտին՝ արժանանալով գվարդիական կոչման և պարգևատրվելով Լենինի շքանշանով, Կուրսկի աղեղի հարավային շրջանում տեղի ունեցած հերոսամարտին, Բելոռուսական գործողությանը՝ արժանանալով Վիտեբսկյան, իսկ նրա գնդերը՝ Պոլոցկյան պատվավոր անունների, այնուհետև մարտնչել

[1] Боевой путь 409-й стрелковой Кировоградско-Братиславской ордена Богдана Хмельницкого Армянской дивизии /1941-1945гг./; Сборник документов и материалов, Е., г. 1, 1980, с. 12-32.
[2] Саркисян С. М., 408-я Армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Е., 1985, с. 128.
[3]Թովմասյան Ս. Հ., Մեծ Հայրենականի ճանապարհներով, Ե., 1975, էջ 102-178:

Լատվիան և Լիտվիան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման համար[1]:

Պատերազմական գործողություններին չմասնակցեց միայն Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան: Չնայած դրան այն մեծ գործ կատարեց Հայաստանի տարածքում խորհրդա-թուրքական սահմանի պաշտպանության բնագավառում, ինչպես նաև երթային վաշտեր պատրաստեց ռազմաճակատի համար. պատերազմի տարիներին դիվիզիան գործող բանակ ուղարկեց ավելի քան 10000 զինվոր ու սպա[2]:

Ինչպես երևում է վերոհիշյալից, հայկական ազգային դիվիզիաների պատմությունը սերտորեն առնչվում է ոչ միայն Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի, այլև 1920-1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանի ազգային ռազմական շինարարության խնդիրների հետ: Ուստի պատահական չէ, որ հայ պատմագրությունը մեծ տեղ է հատկացրել նաև հայկական զորամիավորումների պատմության ուսումնասիրությանը: Այդ զորամիավորումների պատմության լուսաբանումն այսօրվա պայմաններում ավելի ւ ա[illegible]եքավորվում և գործնական կարևոր նշանակություն ստանում, քանի որ այն [illegible] չափով նպաստում է մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարա[illegible]յանը ընդհանրապես, երրորդ հանրապետության զինված ուժերի անձնակազմերին հայկական դիվիզիաների հերոսական, մարտական փառապանծ ավանդ[illegible]յթների ոգով ուսուցանելու գործին՝ մասնավորապես:

Հայ պատմաբաններից առաջինները Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցության, այդ թվում հայկական դիվիզիաների պատմության հիմնահարցի գիտական մշակմանը ձեռնամուխ եղան ռազմաճակատից տուն վերադարձած հայ պատմաբանները, որոնց համար աղբյուրագիտական կարևոր բազա հանդիսացավ Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի կաբինետը և նրա արխիվը, որ կազմավորվել էր 1942թ. ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նախաձեռնությամբ: հետագայում այդ հայրենանվեր աշխատանքի մեջ ընդգրկվեցին ավելի երիտասարդ կադրեր, որոնք հնարավորություն ստացան պարբերաբար աշխատել ոչ միայն Հայաստանի, այլև նրա սահմաններից դուրս գտնվող զինվորական, պետական և կուսակցական արխիվներում, գրադարաններում ու թանգարաններում:

Հայ պատմաբաններից առաջինը Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը լուսաբանել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանը: 1947թ. Երևանում նա հրատակարեց իր՝ «Հայ ռազմիկների հերոսական տարեգրությունները», 1954-ին՝ «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում», իսկ 1975-ին՝ «Միասնական շարքերում» մենագրությունը, որտեղ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության ընհանուր հիմնահարցի հետ միասին, համառոտակի ընդհանուր հիմնահարցի հետ միասին /6-7 էջի սահմաններում/ լուսաբանել է նաև հայկական դիվիզիաների մարտական ուղին: Նույն հեղինակի գրչին է պատկանում նաև հայ ժողովրդի պատմության ակադեմիական ութհատորյակի վերջին

---

[1] *76-я Армянская стрелковая Краснознаменная им. К. Е. Ворошилова 51-я Гвардейская Витебская ордена Ленина дивизия 1920-1945гг.. Сборник документов и материалов. Е., 1976, с. 5-12; Հայ ժողովրդի պատմություն, հ. 8. Ե., 1970, էջ 46-56:*

[2] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, Ե., 1970, էջ 46-56:*

հատորի 1-ին գլուխը, որտեղ 10 էջ հատկացված է հայկական զորամիավորումների ստեղծման հարցին[1]:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանը լուսաբանած պատմաբաններ՝ Սերվարդ Խարմանդարյանը, Երվանդ Խալեյանը, Կառլեն Միրզախանյանը, Վիկտոր Մուրադյանը իրենց աշխատություններում համառոտակի անդրադարձել են նաև հայկական դիվիզիաների պատմությանը՝ դրան հատկացնելով ընդամենը 1-2 էջ[2]:

Ամբողջապես մեկ դիվիզիայի պատմությանը նվիրված առաջին աշխատությունը հրատարակել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղևոնդ Ղալլաքյանը. «Մարտական 89», Ե., 1966, 325 էջ: Չնայած արխիվային փաստերի աղքատության, Հայկական 89-րդ թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիայի վետերանի ուսումնասիրությունը իր ժամանակին գիտական պատշաճ գրված առաջին գիտական աշխատությունն էր: Դիվիզիայի մեկ այլ վետերան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշավիր Հակոբյանի՝ «Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա» /Ե., 1991, 348էջ/ մենագրությունը լուրջ ներդրում էր հայկական զորամիավորումների պատմության հիմնահարցի ուսումնասիրության ասպարեզում: Այն շարադրված է ոչ միայն ականատեսի աչքերով, այլ նաև հարուստ արխիվային նյութերի ժողովածուի հիման վրա, որի արխիվային փաստաթղթերն ու նյութերը ամբողջովին ԽՍՀՄ պաշտպանության կենտրոնական արխիվից հայտնաբերել և հրատարակության էր պատրաստել պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը: Ժողովածուն կազմողների թվում էին՝ պատմական գիտությունների դոկտոր, ՀԽԱՀ Արխիվային վարչության պետ Աշոտ Հարությունյանը, նույն վարչության առաջատար մասնագետներ Օկտյաբրինա Բալիկյանն ու Էմմա Սարգսյանը[3]: Նշենք, որ հեղինակային նույն խմբի ջանքերով 1976թ. հրատարակվել էր «Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ 51-րդ գվարդիական Վիտեբսկյան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիան 1920-1945թթ.» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն / 300 էջ/: 1980-1981թթ. Աշոտ Հարությունյանը և Հրանտ Հովհաննիսյանը կազմել ու հրատարակել էին «409-րդ հրազգային Կիրովագրադյան-Բրատիսլավյան, Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր Հայկական դիվիզիայի մարտական ուղին /1941-1945թթ./» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն: Վերոհիշյալ երեք ժողովածուներն էլ լույս են տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի միացյալ հատուկ համարներում: Հրատարակված ժողովածուները արխիվային կարևոր աղբյուր հանդիսացան հայկական դիվիզիաների պատմությամբ զբաղվող պատմաբանների համար: Այսպես օրինակ, դիվիզիայի վետերան Գրիգոր Աբրահամյանը օգտագործելով Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի մարտական ուղին լուսաբանող ժողովածուն 1994թ. Երևանում հրատարակվեց «Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան

---

[1] *Նույն տեղում, էջ 46-56:*

[2] *Ս. Վ. Խարմանդարյան., Հայ ժողովրդի մարտական համագործակցությունը Խորհրդային Միության ժողովուրդների հետ միասին Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1955 /ռուսերեն/, Ծ. Պ. Աղայան. Ե. Մ. Խալեյան Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմություն, մաս 3, Ե., 1959, Կ. Ժ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենականն մեծ պատերազմի տարիներին, Ե., 1956, Վ. Ա. Մուրադյան, Հայաստանի կոմկուսը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Ե., 1984 /ռուսերեն/ և այլն:*

[3] ***Боевой путь Армянской Таманской орденов Красного Знамени, Кутузова 2-й степени, Крансой Звезды дивизии 1942-1945гг., Сборник документов и материалов, Е., 1985, 747 страница:***

Հայրենական մեծ պատերազմի վերջին փուլում» /ռուսերեն/ մենագրությունը, ինչպես նաև մեկ տարի անց պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Սակայն փոխանակ տողատակերում նշելու օգտագործած ժողովածուի համապատասխան էջերը, հեղինակը դրա փոխարեն, հակառակ գոյություն ունեցող կարգի, իբրև աղբյուր ցույց է տվել ժողովածուում տեղ գտած փաստաթղթերի արխիվային ֆոնդերի ցուցակներն ու գործերը:

Տարիների ընթացքում Թամանյան դիվիզիայի պատմությունը իրենց հուշագրություններում լուսաբանել են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, դիվիզիայի 390—րդ հրաձգային գնդի հրամատար Երվանդ Կարապետյանը, «Կարմիր զինվոր» թերթիվ խմբագիր Սիմոն Նալբանդյանը և ուրիշներ :

Հայ պատմաբաններից առաջինը գիտական հատուկ ուսումնասիրություն է գրել Հայկական 76-րդ հրաձգային դիվիզիայի մասին Կլիմենտ Հարությունյանը: 1972թ. նա թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել այդ դիվիզիայի պատմության հիմնահարցի վերաբերյալ, 1980թ. հրատարակել է «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին» գիրքը, իսկ 1994թ. պաշտպանել դոկտորական ատենախոսություն «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ.» թեմայով, որտեղ բացառապես արխիվային փաստերի հիման վրա նորովի են լուսաբանվել հայկական բոլոր դիվիզիաների, այդ թվում 76-րդ դիվիզիայի պատմությունը:

Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի պատմության որոշ հարցերն է փորձել լուսաբանել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշակ Վարդապետյանը՝ «Գվարդիական դրոշի ներքո» /Ե., 1978/ գրքում: Հեղինակը ծանոթ լինելով դիվիզիայի պատմության վերաբերյալ հրատարակված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուին, անձամբ հիմնովին չաշխատելով համապատասխան արխիվներում, չի կարողացել հաղթահարել թեման և ստեղծել է բազմաթիվ փաստական անճշտություններով, աղավաղումներով ու կոպիտ սխալներով լի մի գործ, որը ժամանակին արժանացել է համապատասխան մասնագետների քննադատական խոսքին:

Հայ պատմաբաններն անդրադարձել են նաև Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի պատմությանը: Հատկապես արժեքավոր գործ է կատարել դիվիզիայի քաղբաժնի նախկին պետ, գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու Սիմոն Սարգսյանը: ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի համապատասխան ֆոնդերի և անձնական հուշերի հիման վրա 1965թ. նա Երևանում հրատարակել է «Այրվող անտառ», իսկ1985-ին՝ «Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան Կովկասի համար մղված ճակատամարտում» գրքերը /Վերջինս՝ ռուսերեն/: Վերոհիշյալ դիվիզիայի պատմությանն է անդրադարձել նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, այդ միավորման «Հանուն հայրենիքի» թերթի նախկին խմբագիր Արշավիր Հակոբյանը[2]:

Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի պատմության որոշ հարցեր լուսաբանվել են Գրիգոր Աբրահամյանի գրքի մի քանի էջերում[3]: Նույն թվականին

---

[1] Բարսեղյան Խ. Հ., Այսպես ապրեցին, Ե., 1985, Կարապետյան Ե. Ա., Անմահության ճանապարհով, Ե., 1969, Նալբանդյան Ս. Ա., Հայ Թամանցիներ, Ե., 1947, Թամանցիներ, Ե., 1961, Մարտական «Կարմիր զինվորը», Ե., 1981 և այլն:

[2] Հակոբյան Ա. Մ., Հերոսական մարտերում, Ե., 1975, էջ 3-62:

[3] Абрамян Г. С., Мощная орудия советских войск в боях за Крым 1941-1942, Е., 1975, с. 72-100.

Երևանում դիվիզիայի նախկին քաղբաժնի պետ Սուրեն Թովմասյանը հրատարակեց «Մեծ Հայրենականի ճամփաներով» հուշագրությունը, որի 102-186 էջերը ամբողջովին նվիրված են Կերչի թերակղզում 1942թ. մարտ-մայիս ամիսներին միավորման մղած հերոսական մարտերի լուսաբանմանը: 390-րդ դիվիզիայի մասին համառոտ, բայց խիստ արժեքավոր տեղեկություններ կան նաև Սիմոն Սարգսյանի «51-րդ բանակի մարտական ուղին» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1983թ. Մոսկվայում ռուսերեն:

Հայկական բոլոր վեց դիվիզիաների մասին արժեքավոր տվյալներ են պարունակում գնդապետ Գուրգեն Բուռնազյանի «Անդրկովկասյան հանրապետությունների ազգային զորամիավորումները Հայրենական մեծ պատերազմում /1941-1945թթ./» դոկտորական ատենախոսության մեջ, որը պաշտպանվել է Երևանում՝ 1968 թվականին: Ինչպես արդեն նշեցինք զուտ հայկական դիվիզիաների պատմությանն է նվիրված Կլիմենտ Հարությունյանի «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ.» դոկտորական ատենախոսությունը, որը նոր խոսք է հայ պատմագրության ասպարեզում: Կ. Ա. Հարությունյանը հայկական դիվիզիաների պատմությանը անդրադարձել է նաև իր բազմաթիվ մենագրություններում և գիտական հոդվածներում[1]:

Այսպիսով, վերը շարադրածից պարզվում է, որ առ այսօր հայ պատմագրությունը զգալի և շնորհակալ աշխատանք է կատարել հայկական դիվիզրաների պատմության հետազոտման բնագավառում՝ ստեղծելով մեծարժեք մենագրություններ, արխիվային փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, բազմաթիվ հոդվածներ: Սակայն, եթե այդ առումով ավելի բարվոք վիճակում են գտնվում 89-րդ, 76-րդ և 408-րդ դիվիզիաների պատմության ուղղությամբ կատարված աշխատանքները, ապա նույնը չենք կարող ասել մյուս դիվիզիաների վերաբերյալ: Առ այսօր արխիվային փաստաթղթերի ժողովածուներ չեն կազմվել՝ նվիրված հայկական 390-րդ, 261-րդ և 408-րդ դիվիզիաների պատմությանը: Չկան հատուկ մենագրություններ նվիրված 390-րդ, 261-րդ, 409-րդ դիվիզիաների պատմությանը: Ուրեմն հայ պատմաբանների առաջնահերթ խնդիրներից է պատմության մեջ եղած այդ բացի վերացումը: Այն մեծ չափով կնպաստի Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի բազմակողմանի լուսաբանմանը, ինչպես նաև մատաղ սերնդի և Հայկական բանակի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության գործին:

---

[1] Հարությունյան Կ. Ա., Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում /1944-1945թթ./, Ե., 1983; Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945թթ./. Ե., 1990; Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին /1939-1945թթ./, Ե., 2001; Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում 1941-1945թթ., Ե., 2001 /Ռ. Հ. Մանուկյանի համահեղինակությամբ/; Հայկական ազգային զորամիավորումների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, թիվ 1, էջ 53-72; Ու՞մ են պետք պատմական հետազոտությունների նման «ճշտումները», «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, թիվ 2, էջ 177-191 /ռուսերեն/: Հայկական դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Հայկական բանակ», 2000, թիվ 2, էջ 16-31 և այլն:

1952 թ. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂՊՏԻՆԵՐԸ

Մերձավոր Արևելքը հնուց ի վեր եղել է ժողովուրդների ու ազգությունների, քաղաքակրթությունների ու մշակույթների, փիլիսոփայությունների ու կրոնների խառնարան: Թերևս պատահական չէ, որ այստեղ են ծնունդ առել համաշխարհային երեք խոշորագույն կրոնները: Տարածաշրջանի վերջին հազար հինգ հարյուր տարիների պատմությունը սերտորեն շաղկապված է դրանց կրողների բազմաբնույթ ու բազմակողմանի հարաբերություններով: Առավելապես քրիստոնյա բնակչություն ունեցող երկրները, VII դարում իսլամի պատմության թատերաբեմ իջնելուց հետո, Արաբական թերակղզուց տարածվող նվաճողական բանակների հարվածների ներքո ընկրկեցին, իսկ դրանց բնակչությունը ճնշումների ու հալածանքների հետևանքով զանգվածաբար ընդունեց նոր կրոնը: Տարածաշրջանի կրոնական պատկերը ամբողջովին փոխվեց: Միայն այսուայնկողմ ցրված որոշ հատվածներ պահպանեցին քրիստոնեությունը և հավատարիմ մնացին նրան մինչև արդի ժամանակները:

XX դարում Մերձավոր Արևելքում քրիստոնյա ամենախոշոր համայնքը Եգիպտոսի ղպտիական համայնքն էր: 1960 թվականին, 1952 թ. եգիպտական հեղափոխությունից հետո անցկացված առաջին պաշտոնական մարդահամարի համաձայն, նրանք կազմում էին Եգիպտոսի 26 մլն. բնակչության շուրջ 7 տոկոսը, կամ 1.823.448 մարդ[1]: Պետք է նշել, որ ղպտիների թվաքանակը պատմագրության մեջ միշտ էլ վեճերի առարկա է հանդիսացել: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ պաշտոնական վիճակագրությունը ճիշտ չի արտացոլում նրանց իրական թվաքանակը և հենվելով ոչ պաշտոնական տվյալների վրա ղպտիներին հաշվում են չորս միլիոն մարդ[2]: Իրենք ղպտիները պնդում են, որ կառավարությունը միտումնավոր նվազեցնում է նրանց իրական թվաքանակը՝ արդարացնելու համար նրանց նկատմամբ վարվող խտրական վերաբերմունքը՝ սակավ ներկայացված լինելը Եգիպտոսի քաղաքական կյանքում, կառավարությունում ու խորհրդարանում, ինչպես նաև սոցիալական ապահովության, կրթական, մշակութային պետական ծրագրերում:

Չի կարելի միանշանակ պնդել, որ ղպտիների բողոքներն անհիմն էին: Հավանական է, որ դրանք հենված են եղել որոշակի փաստերի վրա և նրանք, իրոք, ավելի թվաշատ էին քան ներկայացված էր պաշտոնական վիճակագրությունում: Համենայնդեպս, նմանօրինակ բողոքները նոր չեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար: Ղպտիները դրանք արտահայտել են նաև մինչև 1952 թվականը: Մասնավորապես դարի սկզբին նրանք նույն մեղադրանքն էին ուղղում Եգիպտոսի բրիտանացի կառավարիչներին[3]:

---

[1] *Betts Robert Brenton, Christians in the Arab East: A Political Study, Athens, 1975, p.59.*

[2] *Wakin Edward, A Lonely Minority: The Modern Story of Egypt's Copts, New York, 1963, p. 25.*

[3] *Դժվար է դատել իշխանությունների կողմնակալության մասին, սակայն կառավարությունից անկախ մի շարք պատճառներ, այնուամենայնիվ խոչընդոտում էին մարդահամարի ճշմարտությանը: Դրանցից էին բնակչության հետամնացությունն ու պաշտոնյաների անփութությունը, ղպտիների կողմից, անձնական ապահովության համար, հաճախ իրենց կրոնը թաքցնելու ձգտումը և զինծառայությունից խուսափելու համար*

Բայցևայնպես, բրիտանացիները ղպտիների թվաքանակը մարդահամարում նվազեցնելու պատճառ չունեին: Ավելին, նրանք շահագրգռված էին երկրի քրիստոնեական համայնքը հնարավորինս թվաշատ ներկայացնելու մեջ, քանի որ իրենց ռազմական ներկայությունը Եգիպտոսում բացատրում էին նաև փոքրամասնությունների անվտանգությունը ապահովելու անհրաժեշտությամբ[1]: Ըստ բրիտանացիների հսկողության ներքո 1927 թվականինին անցկացված մարդահամարի տվյալների, ղպտիները ներկայացնում էին Եգիպտոսի 11.770 հազար բնակչության 7.8 տոկոսը կամ 912 հազար մարդ[2]: Այսպիսով, նրանց տոկոսային հարաբերությունը բնակչության մեծամասնության հետ 1927-1960 թթ. ընթացքում մնացել էր գրեթե անփոփոխ, արձանագրվել էր միայն փոքր աճ: Սա առիթ էր տալիս վեճերի, որոնց ընթացքում մի կողմը կարծիք էր հայտնում, որ աճը անբնականորեն քիչ է և հենվելով դրա վրա կասկածում էր 1960 թ. մարդահամարի ճշգրտությանը: Մինչ մյուս կողմը այն հավանական էր համարում հաշվի առնելով Եգիպտոսի մուսուլման բնակչության շրջանում ծնելիության բարձր ցուցանիշները, ինչպես նաև ղպտիների գաղթի և ձուլման միտումները:

Վերջիններիս վերաբերյալ ևս տրվում են տարբեր ցուցանիշներ: Մասնավորապես ղպտիների կրոնափոխության թվաքանակը ներկայացվում է տարեկան շուրջ հինգ հազար մարդ[3]: Սա բավական բարձր ցուցանիշ է և խոսում է ձուլման արագ տեմպերի մասին: Կրոնափոխության պատճառներն իրենց արմատներն ունեին եգիպտական հասարակության կառուցվածքի մեջ: Դրանցից էին Եգիպտոսում քրիստոնյաների աշխատանքի ընդունվելու ու առաջխաղացման համար գոյություն ունեցող արհեստական դժվարությունները, ամուսինների բաժանվելը ինչը ղպտիական եկեղեցական կանոնադրությամբ շատ ավելի բարդ էր, քան իսլամական օրենսդրությամբ՝ *շարիաթով*, և անձնական ապահովությունը, մանավանդ երկրի ներքին շրջաններում, ուր համեմատաբար ավելի թույլ էր կառավարության վերահսկողությունը և ղպտիները կարող էին դառնալ անպատիժ հարձակումների թիրախ[4]:

Իհարկե, ձուլման առումով որոշիչ էր եգիպտական հասարակության մեջ ղպտիների ինտեգրման բարձր ցուցանիշը: Պետք է նշել, որ նրանք պատկանում էին նույն մարդաբանական տիպին, ինչ Եգիպտոսի բնակչության 90 տոկոսը, ղպտիների խոսակցական և գրավոր լեզուն արաբերենն էր, և վերջապես եթե մի կողմ դնենք կրոնական տարբերությունները նրանք նույն ապրելակերպն ու կենցաղն էին վարում, ինչ մուսուլման բնակչությունը[5]: Այնուամենայնիվ, ղպտիներն ունեին կրոնական շատ բարձր գիտակցություն, ամուր կապված էին եկեղեցու հետ, համախմբված էին նրա շուրջ և դրանով առանձնանում էին հասարակութ-

---

քրիստոնյաների կողմից իրենց գավակներից ոչ բոլորին ներկայացնելը (Sti u Carter Barbara. The Copts in Egyptian Politics. London. 1986, p. 5):

[1] *1922 թականին Անգլիան Եգիպտոսը, որը մինչ այդ իր պրոտեկտորատն էր, միակողմանիորեն հայտարարեց անկախ, սակայն մի շարք վերապահումներ արեց, որոնցից էր երկրի փոքրամասնությունների անվտանգության պատասխանատվության ստանձնումը: Եգիպտոսը 1922 թվականից հետո էլ շարունակում էր կախված մնալ Անգլիայից, մինչև 1936 թ., երբ այն անկախություն ստացավ (տե՛ս Mansfield Peter, Naser's Egypt, Baltimore, Maryland, 1965, p. 27):*

[2] *Chifom E. J., The Coptic Community in Egypt: Spartial and Social Change, Durham, 1986, p. 28.*

[3] *Wakin Edward, p. 49.*

[4] *Carter Barbara, p. 272.*

[5] *Nisan Mordechai, Minorities in the Middle East: A History of Struggle and Self Expression, London, 1985, p. 116.*

յան մեծամասնությունից: Իսլամական ավանդությունն էլ երկրում ոչ մուսուլմաններին դասում էր առանձին խմբի, նրանց տալով *զիմմիի* հովանավորյալի կարգավիճակ:

Որպես փոքրամասնություն, ղպտիները դարերի ընթացքում ունեցել են և՛ հալածանքների ու հետապնդումների, և՛ կրոնական հանդուրժողականության ու բարգավաճման պատմություն: XIX դ. առաջին կեսում Եգիպտոսում իշխանության եկավ Մուհամմեդ Ալին: Նա սկսեց ղպտիներին լայնորեն օգտագործել երկրի կառավարման մեջ ու վարչական մարմիններում: Այս քաղաքականությունը շարունակվեց նաև նրա հետնորդների օրոք: 1855 թ. ղպտիների վրայից հանվեց փոքրամասնություններից ավանդաբար գանձվող *ջիզյա* հարկը, 1866 թվականից նրանք իրենց ներկայացուցիչներն ունեցան խորհրդարանում, ղպտիներին թույլատրվեց զենք կրել և ծառայել բանակում[1]: Փաստորեն, փորձ էր արվում փոխել ղպտիների հասարակական կարգավիճակը, նրանց ներկայացնելով որպես դրա լիիրավ անդամ և ոչ թե *զիմմի*: Այս բարենորոգումներից հետո, ղպտիները հնարավորություն ստացան մուտք գործել իրենց համար նոր՝ քաղաքական ասպարեզ, ուր նրանք բավական ակտիվ էին հետագա շուրջ հարյուր տարիների ընթացքում: Թե՛ պալատում, թե՛ կառավարությունում ղպտիները վարում էին բարձր պետական պաշտոններ, ներկայացված էին խորհրդարանում և կուսակցություններում: Ղպտի քաղաքական գործիչները աշխատում էին չշեշտել իրենց համայնքային կամ կրոնական պատկանելությունը, քանի որ, այնուամենայնիվ, որոշակիորեն բնակչության մեծամասնության մոտ վերապահում կար քաղաքական գործընթացներում քրիստոնյաներին ընդգրկելու վերաբերյալ և նրանք միշտ չէ, որ իրենց թույլ էին տալիս հետամուտ լինել համայնքի շահերի պաշտպանությանը: Համենայնդեպս, Եգիպտոսի քաղաքական կյանքում համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը ղպտիներին թույլ էր տալիս հավատալ, որ անհրաժեշտության դեպքում նրանք առավել իրավացիորեն կներկայացնեն իրենց հուզող խնդիրները և կմիջամտեն դրանց, համայնքի համար ցանկալի, լուծմանը:

Այս իրավիճակը կտրուկ փոխվեց 1952 թ. հեղափոխությունից հետո, երբ իշխանության եկավ մինչ այդ հասարակության լայն շրջանակներին անհայտ «Ազատ սպաներ» կազմակերպությունը: Նրա անդամներից հայտնի էր միայն գեներալ Մուհամմադ Նագիբի անունը, որն էլ գլխավորեց պետությունն ու կառավարությունը: Ինչպես պարզվեց հետագայում, նա երկրորդական դիրքեր էր գրավում հեղափոխության կազմակերպիչների մեջ, իսկ գաղտնի կազմակերպության իրական ղեկավարը փոխգնդապետ Գամալ Աբդել Նասերն էր, որը 1954 թ. նոյեմբերին իր ձեռքում կենտրոնացրեց իշխանությունը և դարձավ հանրապետության նախագահ:

Իր առաջին որոշումներից մեկով նոր իշխանությունները 1953 թ. հունվարի 16-ին արգելեցին Եգիպտոսի բոլոր քաղաքական կուսակցությունները: Արանով ղպտիները փաստորեն դուրս մղվեցին երկրի ընտրական մարմիններից, քանի որ նրանք Եգիպտոսի գրեթե ոչ մի ընտրատարածքում մեծամասնություն չէին կազմում[2] և ընտրվում էին հիմնականում կուսակցական ցուցակներով: Պետք է նշել, որ 1919 թ. բրիտանական գաղութարարների դեմ բարձրացված ապստամբությունից հետո, որտեղ ղպտիները գործուն մասնակցություն ունեցան, նրանք միշտ բավական լավ էին ներկայացված լինում խորհրդարանում՝ հիմնականում

---

[1] *Ibrahim Saad Eddin, The Copts of Egypt, London, 1995, p. 11.*
[2] *Betts Robert Brenton, p. 61.*

մեծ ժողովրդականություն վայելող Վաֆդ կուսակցության ցուցակներով: Այսպես, օրինակ, 1924-1950 թթ. ընթացքում տեղի ունեցած տաս ընտրություններից վերցում, նրանք կազմել են խորհրդարանի 7.5-ից 10.2 տոկոսը,[1] ինչը գերազանցում էր նրանց համապատասխան պաշտոնական տոկոսային հարաբերությունը Եգիպտոսի հասարակության մեջ:

1957 թ. ընտրություններում միայն մեկ ղպտի ընտրվեց[2]: Այս փաստը լրջորեն անհանգստացրեց նաև կառավարությանը, որը միջոցներ ձեռք առավ ղպտիների հնարավորինս պատշաճ ներկայությունը խորհրադարանում ապահովելու համար: Ընտրական օրենքի մեջ փոփոխություն կատարվեց, ըստ որի նախագահը իրավունք էր ստանում 10 պատգամավորներ նշանակել խորհրդարանում: Ավանդաբար այս տեղերի մեծ մասը տրվում էր ղպտիներին: 1964-1968 և 1969-1971 թթ. ընտրություններում նշանակովի տեղերի շնորհիվ ղպտիները խորհրդարանում ունեցան 9 պատգամավոր,[3] կամ խորհրդարանի տեղերի մոտ 3 տոկոսը: Սա շատ ավելի քիչ էր, քան նրանց մասնակցությունը նախկին խորհրդարաններում, և ղպտիները շարունակում էին կասկածել, որ իշխանությունները փորձում են իրենց դուրս մղել երկրի քաղաքական կյանքից: Այս մտայնությունը ամրապնդվեց, երբ 1952 թվականից սկսվեց կառավարությունում համայնքից միայն մեկ նախարար նշականակելու գործառությունը, այն դեպքում, երբ 1924-1952 թթ. ղպտիներն ընդհանրապես զբաղեցնում էին երկու նախարարական տեղ[4]: 1952-1961 թթ. նախարարների թիվը կառավարությունում 13-ից հասցվեց 37-ի, բայց ղպտիների ներգրավումը դրանում մնաց անփոփոխ[5]:

1953 թ. կուսակցությունների գործունեությունը պրգելող օրենքը մեկ այլ առումով ևս անմիջականորեն առնչվում էր ղպտիներին՝ այն չէր տարածվում «Մուսուլման եղբայրներ» (Իխվան ալ-մուսլիմուն) կազմակերպության վրա, ինչը ընդգծում էր «Ազատ սպաների» հատուկ վերաբերմունքը այդ կազմակերպության նկատմամբ և նրանց գործունեության լայն դաշտ էր տրամադրում: Եգիպտոսի ոչ մուսուլմանական փոքրամասնությունները խիստ անհանգստացած էին «Մուսուլման եղբայրների» ազդեցության նմանօրինակ աճով, քանի որ նրա անվան հետ էր կապված 1940-1950-ական թթ. նրանց դեմ սանձազերծված հարձակումների ալիքը: Իխվանը խիստ ծայրահեղական իսլամական կազմակերպություն էր, հավատում էր, որ մուսուլմանները բացառիկ առաքելություն ունեն կատարելու, որ նրանք են աշխարհի իրական տերերը, և իր վերջնական նպատակն էր համարում միջնադարյան խալիֆայության վերականգնումը, իսկ դրան հասնելու համար ընդունելի էր համարում պայքարի բոլոր ձևերը, այդ թվում՝ զինված[6]: «Մուսուլման եղբայրները» պայքարում էին մաքուր իսլամի վերականգնման և պահպանման համար և իրենց հիմնական խնդիրներից մեկն էին համարում այն օտարերկրյա կործանարար ազդեցությունից զերծ պահելը[7]: Նրանց ցույցերը հաճախ

---

[1] [illegible] /Շաֆիկ Սուլեյման/
[2] Ibrahim Saad Eddin, p.16.
[3] Շաֆիկ Սուլեյման. էջ 207:
[4] Նույն տեղում, էջ 205:
[5] Ibid.
[6] Сейранян Б.Г, Египет в борьбе за независимость 1945-1952, Москва, 1970, стр. 55.
[7] Նույն տեղում. էջ 51:

ուղեկցվում էին «Եգիպտոսում վերջ կդրվի քրիստոնյաներին», «Մեկ կրոն Եգիպտոսում իսլամ» կարգախոսներով[1]:

«Մուսուլման եղբայրների» ուսմունքը լայն տարածում գտավ Եգիպտոսի ժողովրդի շրջանում, 1946 թ. այն երկրում ուներ 2.000 մասնաճյուղ 200.000-ից մինչև 500.000 անդամով[2]: Փոքր չէր նաև նրանց ազդեցությունը «Ազատ սպաների» շրջանում, նրանցից ոմանք նախահեղափոխական շրջանում նույնիսկ անդամակցել էին կազմակերպությանը[3]: Կառավարությունը չէր կարող հաշվի չնստել այսպիսի մեծ ուժ ներկայացնող կազմակերպության հետ: 1952 թ. հեղափոխությունից հետո, նրանց տրվեցին վակֆների (կրոնական հաստատությունների ունեցվածք) և կրթության նախարարական տեղերը: Սրանք անմիջականորեն զբաղվում էին դպտիների համայնքային գործերով՝ առաջացնելով վրդովմունք և բողոք նրա ներկայացուցիչների շրջանում[4]:

Փաստորեն, «Մուսուլման եղբայրները» պետություն էին պետության մեջ: Նրանք խառնվում էին երկրի կառավարման գործերին և փորձում էին հեղաշրջման միջոցով Եգիպտոսում իսլամական կարգեր հաստատել: Իշխանությունները չէին կարող երկար հանդուրժել այս իրավիճակը և 1954 թ. հոկտեմբերի 26-ին Ալեքսանդրիա քաղաքում Գամալ Աբդել Նասերի դեմ կազմակերպված ձախողված մահափորձից հետո լայնածավալ պայքար սկսվեց նրանց դեմ: Կազմակերպությունը օրենքից դուրս հայտարարվեց, նրա անդամներից շատերը ձերբակալվեցին, ղեկավարներից վեցը մահապատժի ենթարկվեցին, հայտնաբերվեցին և առգրավվեցին զենքի մեծ պաշարներ[5]: Եգիպտոսի փոքրամասնությունները ողջունեցին կառավարության կտրուկ միջոցառումները, այնուամենայնիվ, իսլամական տրամադրությունների աճը եգիպտական հասարակության մեջ շարունակում էր մնալ նրանց հուզող խնդիրներից մեկը:

«Մուսուլման եղբայրներին» ճնշելուց հետո, կառավարությունը մի շարք միջոցառումներով հանդես եկավ, որոնք ուղղակի կամ անուղղակի ամրապնդում էին իսլամի դիրքերը երկրում: Իշխանությունների գործողությունները թերևս նպատակ ունեին հակակշռել իխվանների հեղինակությունը Եգիպտոսում, ժողովրդի ցանկություններին ընդառաջ գնալ և իրենց հեղինակությունը բարձրացնել նրանց մոտ, ինչպես նաև կառավարության անմիջական հսկողության տակ վերցնել երկրում ընթացող պրոցեսները՝ իրենց ազդեցությունը ծավալելով ամենատարբեր ոլորտներում: Վերոնշյալը վերաբերվում է հատկապես կրթական և դատական համակարգերում իրականացված բարեփոխումներին:

Մասնավորապես, ուսումնական հաստատություններում ավելի շատ և ընդգծված ուշադրություն էր դարձվում իսլամի, ինչպես նաև Եգիպտոսի պատմության ու աշխարհագրության ուսուցմանը[6]: Հատուկ վերաբերմունքի էր արժանանում և կառավարության հովանավորությունը վայելում զուտ մուսուլմանական ալ-Ազհարի համալսարանը: Նրան տրվում էին հավելյալ ֆինանսական միջոցներ, բացվում էին նոր ֆակուլտետներ, պետական շնորհներ էին տրվում համալսարանի դասախոսական կազմի վերապատրաստման համար: Կառավարության

---

[1] *Carter Barbara, p. 277.*

[2] *Сейранян Б.Г., стр. 79.*

[3] *Беляев И.П., Примаков Е.М., Египет: время президента Насера, Москва, 1975, стр. 33.*

[4] *Wakin Edward, p. 63.*

[5] *Mansfield Peter, p. 52.*

[6] *Chithan E.J., p. 83.*

որոշմամբ ալ-Ազհարի ռեկտորը նշանակվում էր անձամբ հանրապետության նախագահի կողմից[1]: Ստեղծված իրավիճակում, ղպտիները պահանջում էին, որ պետությունը առավել մեծ ուշադրություն դարձնի նաև քրիստոնեության դասավանդմանն ու ուսուցիչների վերապատրաստմանը, բողոքում էին խտրական վերաբերմունքի դեմ՝ վկայակոչելով Սահմանադրության առաջ բոլոր քաղաքացիների հավասարությունն ու պաշտամունքի ազատությունը[2]:

Կառավարությունը բարեփոխեց նաև երկրի դատական համակարգը, ուր մինչև հեղափոխությունը Եգիպտոսի իշխանությունները բավարար ազդեցություն չունեին: Երկրի դատական գործառույթը ժառանգություն էր մնացել Օսմանյան կայսրության ժամանակներից: Ըստ դրա, քաղաքացիական կացությանը վերաբերվող բոլոր դատական գործերը՝ ամուսնություն, բաժանում, ժառանգություն, խնամակալության իրավունք և այլն, քննվում էին համապատասխան համայնքների դատարաններում, այսինքն՝ մուսուլմանների հայցերը ուղղվում էին *շարիաթի* դատարան, հրեաներինը և քրիստոնյաներինը՝ իրենց կրոնական հաստատությունների դատարաններ[3]: Այսպիսով երկրում գործում էին 14 համայնքային դատարաններ, որոնցից մեկում ընդունված որոշումը մյուսի համար օրենքի ուժ չուներ[4]: Նախահեղափոխական շրջանում կատարված բոլոր փորձերը իրավիճակը կարգավորելու ուղղությամբ ձախողվել էին:

1955 թ. կառավարության ընդունած **No 462** օրենքը վերացրեց բոլոր կրոնական դատարանները և ստեղծեց պետական դատարաններ: Բայցևայնպես, չմշակվեց միացյալ աշխարհիկ օրենսդրություն, որը կվերաբերվեր երկրի բոլոր քաղաքացիներին. հայցերը շարունակվում էին քննվել ըստ դիմողի կրոնական պատկանելության՝ իր համայնքի օրենքների համապատասխան [5]: Թվում է, թե փոխվեց միայն ձևը, իսկ գործառույթը մնաց նույնը, սակայն **No 462** օրենքը կատարեց հետևյալ շատ կարևոր փոփոխությունները: Դրա վեցերորդ կետով, եթե դիմողները պատկանում էին տարբեր կրոնների, ապա հարցը քննվում էր շարիաթի օրենքների համաձայն, իսկ իններորդ կետը նախկին շարիաթի դատարանների բոլոր դատավորներին շնորհում էր նոր պետական դատարանների դատավորների կոչում[6]: Մինչդեռ ոչ մուսուլմանական համայնքների դատավորների համար դրանցում տեղ չգտնվեց[7]: Այս ամենը միայն ընդգծում և բարձրացնում էր շարիաթի ու իսլամի խաղացած դերը երկրում:

Հետհեղափոխական շրջանում Եգիպտոսի իշխանությունների անդրանիկ գործողություններն ուղղված էին առաջին հերթին երկրի առաջ կանգնած հրատապ խնդիրների լուծմանը, շատ կարևոր էր համարվում իշխանության կենտրոնացումը: Ինչպես տեսանք, կառավարությունը քաղաքական դաշտից վերացրեց բոլոր այն ուժերին, որոնք կարող էին Եգիպտոսը կառավարելու իրենց իրավունքը շահարկել: Նրանք իրենց ազդեցությունը տարածեցին մինչ այդ իրենց

---

[1] *Philipp Thomas, Copts and Other Minorities in the Development of the Egyptian Nation-State. Egypt from Monarchy to Republic: A Reassessment of Revolution and Change. Edited by Shimon Shamir. Boulder, San Francisco and Oxford, 1995, p. 140.*

[2] *Ibrahim Saad Eddin, p. 16.*

[3] *Philipp Thomas, The Syrians in Egypt: 1725-1975, Shtutgart, 1985, p. 147.*

[4] *Carter Barbara, p. 231.*

[5] *Philipp Thomas, The Syrians ..., p. 148.*

[6] *Ibid.*

[7] *Wakin Edward, p. 101.*

իրավասությունից մասամբ դուրս մնացող այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են կրթությունն ու դատական համակարգը:

Անմիջապես 1952 թ. հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում իշխանությունների համար հրամայական խնդիր էր նաև Եգիպտոսի հարուստ հողատերերի ու բուրժուազիայի իշխանության սահմանափակումը: Հարցը կայանում է նրանում, որ երկրի տնտեսության հիմքը կազմող ոլորտները մենաշնորհված էին մի ոչ մեծ խումբ անձանց ու ընկերությունների կողմից, որոնք թելադրում էին Եգիպտոսի տնտեսական քաղաքականությունը և հաճախ, հակառակ իշխանությունների մշակած պետական ծրագրի, գործում էին ինքնուրույնաբար: Այս խմբի մեջ հատուկ տեղ էին գրավում օտարերկրյա ներդրողներն ու Եգիպտոսում բնակվող, բայց օտարահպատակ փոքրամասնությունները, որոնք XIX դ. կեսերից սկսած շատ ակտիվ էին եգիպտական շուկայում, իրենց վերահսկողության տակ էին վերցրել տնտեսության բազմաթիվ ճյուղեր: Նախահեղափոխական շրջանում օտարերկրացիներին էր պատկանում երկրի արդյունաբերական ձեռնարկությունների կեսից ավելին[1]:

Երկրի տնտեսական վերահսկողությանն ուղղված իշխանությունների որոշումներն ու-գործողությունները սկզբնական շրջանում հախուռն և անկազմակերպ էին: Առաջին խոշոր ձեռնարկումներից էր 1952 թ. սեպտեմբերի 9-ի ագրարային ռեֆորմը, որով խոշոր հողատիրությունը սահմանափակվում էր 200 ֆեդդանով (հավասար է 1.083 ակրի) հողերը պետք է բաժանվեին անհող գյուղացիներին: Սա համարվում էր մեղմ միջոցառում, քանի որ տարածվում էր երկրի ոռոգվող հողատարածքների միայն 10 տոկոսի վրա և էականորեն չսասանեց հարուստ հողատերերի դիրքերը[2]: 1961 թ. ընդունվեց նոր օրենք, որով արդեն հողատարծքների թույլատրելի առավելագույն չափը իջեցվեց 100 ֆեդդանի: Ռեֆորմը հավասարապես ազդեց երկրի թե՛ մուսուլման, թե՛ քրիստոնյա բնակչության վրա: Մեծ կորուստներ ունեցան Վերին Եգիպտոսի ղպտի խոշոր հողատերերը: Համայնքը բողոքում էր, որ կալվածատերերից ազգայնացված հողերը արդարացիորեն չեն բաժանվում մուսուլման և ղպտի գյուղացիների միջև[3]:

Ագրարային ռեֆորմի շրջանակներում ղպտիական համայնքի հիմքերին մեծ հարված հասցվեց հատկապես, դարերով գոյություն ունեցող և համայնքի բարեկեցության խորհրդանիշը համարվող, եկեղեցապատկան հողատարածքների մեծագույն մասի ազգայնացմամբ: 1960 թ. No264 օրենքը ղպտիական բոլոր հոգևոր հաստատությունների հողային սեփականությունը սահմանում էր 200 ակր ոռոգվող և 200 ակր անմշակ հողերի չափով[4]: Մինչդեռ 1926 թ. տվյալներով Եգիպտոսում գործող յոթ ղպտիական վանական համալիրները միասին ունեին 5-ից 9 հազար ակր հողատարածք, որոնք եկեղեցուն բերում էին խոշոր եկամուտներ[5]: Դրանք ուղղվում էին ոչ միայն վանքերի, այլև համայնքային մի շարք հաստատությունների՝ դպրոցների, բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմանը: Այժմ այս համակարգը փաստորեն քայքայվում էր:

Բուրժուազիայի, հատկապես օտարերկրյա, ազդեցության սահմանափակմանն ուղղված որոշ քայլեր Եգիպտոսի կառավարությունը ձեռնարկել էր

---

[1] *Сейрапян Б.Г., стр. 24.*
[2] *Mansfield Peter, p. 46.*
[3] *Wakin Edward, p. 48.*
[4] *Crater Barbara, p. 42.*
[5] *Ibid.*

դեռևս 1930-1940-ականներին: 1956 թ. օրենք ընդունվեց, համաձայն որի պետությանը թույլատրվում էր, երկրի բարօրությունը ապահովելու համար, անհրաժեշտության դեպքում, ոչ պետական ձեռնարկություններն ազգայնացնել: Ազգայնացման առաջին ալիքը տեղի ունեցավ 1956 թ. Սուեզի պատերազմից հետո, երբ ի պատասխան Եգիպտոսի նկատմամբ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրաելի իրականացրած ագրեսիայի, իշխանությունները ազգայնացրեցին Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքացիներին պատկանող ունեցվածքը:

Ազգայնացման քաղաքականությունը շարունակվեց և նոր թափ ստացավ 1960- ական թթ. սկզբին, այս անգամ արդեն ընդգրկելով նաև բուն եգիպտական կապիտալը: 1961-1963 թթ. ընթացքում ազգայնացվեցին շուրջ 1.300 ձեռնարկություններ, որոնք պատկանում էին երկրի խոշոր ու միջին բուրժուազիային[1]: Նրանց ներկայացուցիչների հակազդեցությունից խուսափելու համար Եգիպտոսի իշխանությունները 1961 թ. հոկտեմբերին և 1962 թ. փետրվարին բռնգրավեցին երկրի 600 մեծահարուստների, այդ թվում շատ ղպտիների, ունեցվածքը, 40 ղպտի մեծահարուստներ ձերբակալվեցին, շատերը երկրից վտարվեցին[2]:

Չնայած չկան արժանահավատ տվյալներ այս ընթացքում ղպտիների կրած նյութական կորուստների մասին, կարելի է ենթադրել, որ դրանք բավական խոշոր են եղել հիմնականում գյուղատնտեսության ոլորտում: Արդյունաբերության մեջ ղպտիներն առանձնապես մեծ շահաբաժիններ չեն ունեցել, այլ գերադասել են ներդնել անշարժ գույքի մեջ[3]:

Եգիպտական հասարակության այլ անդամների հետ միասին ռեֆորմներից տուժել են նաև օտարերկրյա ձեռնարկություններում աշխատող ղպտիները՝ դրանց պետականացման հետևանքով կորցնելով իրենց պաշտոնները:

Խոսելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին, թերևս ճիշտ չի լինի պնդել, որ կառավարությունը վարում էր հակաղպտիական կամ հակաքրիստոնեական ծրագրված քաղաքականություն: Երկրում կատարվող ռեֆորմները հավասարապես ազդում էին հասարակության բոլոր հոսանքների վրա: Ավելին, հետհեղափոխական առաջին շրջանում, երբ բանակցություններ էին ընթանում արևմտյան երկրներից վարկեր ստանալու համար, կառավարությունը վարում էր քրիստոնյաների և օտարերկրացիների շահերը պաշտպանող քաղաքականություն[4], ամեն կերպ ցանկանալով իր վրայից գցել ռազմական ռեժիմի ու բռնատիրության պիտակը: Իհարկե, այս աջակցությունը չէր կրում ընդգծված բնույթ, թերևս հաշվի առնելով երկրում իսլամի գործոնը և ժողովրդի տրամադրությունները: Բայցևայնպես, ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք խրախուսում էին հասարակության հենց այս հատվածի առավել մեծ ներգրավվածությունը տնտեսության մեջ:

Եգիպտոսի կառավարությունը նաև ղպտիների սոցիալական պահանջների բավարարմանն ուղղված որոշ քայլեր ձեռնարկեց: Արդեն խոսվել է խորհրդարանում և կառավարությունում նրանց ներկայության ապահովմանն ուղղված

---

[1] *Беляев И.П., Примаков Е.М., стр. 143-144.*

[2] *Mansfield Peter, p. 138.*

[3] *Philipp Thomas, Copts and Other Minorities, p. 141.*

[4] *Tigor Robert, Foreign Capital, Foreign Communities, and the Egyptian Revolution of 1952. Egypt from Monarchy to Republic: A Reassessment of Revolution and Change. Edited by Shimon Shamir. Boulder, San Francisco and Oxford, 1995, p. 106.*

միջոցառումների մասին: 1952 թ. հետո որոշակի քայլեր ձեռնարկվեցին ղպտիների կրթական վիճակի բարելավման ուղղությամբ ղպտիներին թույլատրվեց դպրոցական ծրագրի շրջանակներում շաբաթական երկու ժամ քրիստոնեություն դասավանդել[1]: 1954 թ. բացվեց ղպտիական ուսումնաիրությունների ինստիտուտը, այստեղ իրենց կրթությունն էին շարունակում դպրոցավարտ ղպտի երիտասարդները: 1956 թվականից 40.000 տպաքանակով սկսեց հրատարակվել համայնքի միակ օրաթերթը «Վաթանը»: 1964 թ. ղպտիները Կահիրեում նոր մեծ վանական համալիր կառուցելու թույլատվություն ստացան:

Այս քայլերը միտված էին ղպտիների պահանջների մասնակի բավարարմանը և նպատակ էին հետապնդում խրախուսելու համակեցությունը եգիպտական հասարակության մեջ: Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը հայտարարում էր, որ Եգիպտոսում ազգային խտրականություն չկա և քրիստոնյաներն ու մուսուլմաններն այստեղ ունեն հավասար իրավունքներ[2]:

Այնուամենայնիվ, 1950-1960-ական թթ. Եգիպտոսում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները սասանեցին երկրի ղպտիական համայնքի հիմքերը: Դա բնական է, քանի որ երկիրը, փաստորեն, իր զարգացման ուղղության արմատական շրջադարձ կատարեց: Գալով իշխանության, «Ազատ սպաները» չունեին գործողությունների հստակ ծրագիր, նրանք չէին պատկերացնում, թե ինչ ճանապարհով պետք է ընթանա երկիրը: Կատարելով հեղափոխության առաջ դրված առաջնային պահանջները՝ վերացնել միապետությունը, դուրս մղել երկրից անգլիական զորքերը, տապալել կոռումպացված ոչ կոմպետենտ կառավարությունը, նրանք կանգնեցին երկրի ապագա զարգացման բարդ խնդրի լուծման առաջ: Տարիների ընթացքում իրենց սեփական սխալների ու փորձի հիման վրա քայլ առ քայլ ձևավորվեց երկրի քաղաքականությունը: Այս ժամանակահատվածը բնութագրվում է խոշոր ցնցումներով: Վերացվեց գրեթե այն ամենը, ինչ երկիրը կապում էր նախահեղափոխական ժամանակաշրջանի հետ, այդ թվում, ինչպես տեսանք, դարերով գոյություն ունեցող փոքրամասնությունների արտոնյալ կարգավիճակը: Աա տեղի ունեցավ ավելի խոշոր փոփոխությունների շրջանակում, սակայն թերևս դրանք Եգիպտոսի բնակչության շրջանում առավել ծանր էին ընկալվում փոքրամասնությունների կողմից, որոնք բազմամիլիոն մուսուլմանական երկրում իրենց գոյությունը պաշտպանելու համար զգում էին հատուկ ուշադրության կարիք: Այն ինչ ղպտիները մինչհեղափոխական շրջանում վայելում էին և պետք է եզրակացնել, դարձել էր նրանց կյանքի անբաժանելի մասը:

Այս ամենին գալիս էին գումարվելու իսլամական և արաբականացման տրամադրությունների աճը, Իսրայելի հետ վարվող շարունակական պատերազմները, տնտեսական դժվարությունները: Պատահական չէ, որ պատմության մեջ առաջին անգամ լինելով ղպտիները սկսեցին մեծ թվերով գաղթել Եգիպտոսից: 1962-1977 թթ. ընթացքում շուրջ 150.000 ղպտիներ հաստատվեցին հիմնականում ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում[3]: Պետք է նշել, որ նույն ժամանակահատվածում Եգիպտոսում թվաքանակով խիստ կրճատվեցին կամ դադարեցին գոյություն ունենալ մի շարք համայնքներ, որոնք բավական երկար ժամանակ այստեղ հաստատված լինելով իրենց առանձնահատուկ տեղն ունեին հասարա-

---

[1] *Wakin Edward, p. 27.*
[2] *Ibid.*
[3] *Karas Shawkey F., The Copts Since The Arab Invasion: Strangers in Their Own Land, Jersey City, 1985.*

կության մեջ: Ինչ վերաբերում է ղպտիներին, ապա նրանց մեծ մասը մնաց երկրում: Ղպտիները Եգիպտոսի այլ փոքրամասնություններից տարբերվում են նրանով, որ նրանք բնակվում էին իրենց հայրենիքում: Ավելին, նրանք համոզված են, որ հանդիսանում են հին եգիպտացիների ուղղակի հետնորդները ու հպարտանում են թե՛ դրանով, թե՛ քրիստոնեական հարուստ պատմությամբ: Ղպտիները կապված են և անկեղծորեն նվիրված իրենց հայրենիքին և չեն պատկերացնում իրենց կեցությունը Եգիպտոսի սահմաններից դուրս: Թերևս հենց այստեղ պետք է փնտրել ղպտիական համայնքի գոյատևման գաղտնիքը՝ կրոնը և սերը հայրենիքի նկատմամբ:

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԼՂԻՄ-Ը ՀԽՍՀ ԻՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ (1923-1988թթ.)

ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից, Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ոտնահարել է ԼՂԻՄ հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Դա արտահայտվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցուկը դարձնելու, ԼՂԻՄ-ի և իր իսկ միութենական հանրապետության միջև արտադրանքի ոչ համարժեք փոխանակում իրականացնելու, ԼՂԻՄ-ը Նախիջևանի օրինակով հայազրկելու նպատակով ժողովրդագրական ակտիվ էքսպանսիա վարելու, հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, ԼՂԻՄ-ին հարող հայկական շրջանների վարչա-տարածքային կառուցվածքը մասնակիորեն վերափոխելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձանները և մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու փորձերի մեջ:

Մարզը զրկված էր ամեն տեսակ տնտեսական ինքնուրույնությունից: Գործնականորեն վերացված էին բոլոր կապերը Հայաստանի հետ: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը գիտակցելով, որ բռնակցված տարածքներում հայ ազգաբնակչությունը չի հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, սկսեց միջոցներ ձեռնարկել այդ տարածքների ժողովրդագրական վիճակը փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ: Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը հասկանում էր, որ առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել անմիջական սահմանը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև: Դա անշրջելի դարձնելու նպատակով խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը շարունակեց շահ Աբասի ժամանակներից սկսած Արաքսի ափերից մինչև Ջերմուկի փեշերը մահմեդական ցեղերով բնակեցնելու քաղաքականությունը: Այդ նպատակով Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1923թ. հուլիսի 16-ի նիստում որոշվեց «քրդերի զբաղեցրած տարածքից կազմել Քուրդիստանի գավառը»[1]: Դրա հիման վրա 1923թ. օգոստոսի 6-ին խորհրդային Ադրբեջանի կառավարության որոշմամբ

---

[1] *К истории образования Нагорно-Карабахской области Азербайджанской ССР 1918-1925. Документы и материалы, Баку, 1989, стр.149.*

կազմավորվեց Կարմիր Քուրդիստան-ինքնավար քրդական շրջան՝ Լաչին կենտրոնով: Կարճ ժամանակահատվածում քրդերին թուրքացնելուց հետո, 1930թ. վերացվեց Քուրդիստանի տարբերակիչը, և ստեղծվեցին Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլուի, Զանգելանի շրջանները: Քրդերի ուծացման հախուռն մի նոր ժամանակաշրջան սկսվեց: 1926թ. Ադրբեջանում ապրում էր 44139 քուրդ, 1936թ.՝ 6000, իսկ 1979թ. մարդահամարի տվյալներով հարևան հանրապետությունում արդեն քուրդ չկար[1]: Այնուհետև ԼՂԻՄ-ի տարածքում գտնվող մի շարք բնակավայրեր պոկեցին ինքնավար մարզից և նվիրաբերեցին ադրբեջանական շրջաններին: Այսպես, Անդրֆեդերացիայի վերացումից հետո Հադրութի շրջանից Հողեր ու Հարար գյուղերը կցվեցին ադրբեջանական Ֆիզուլու և Լաչինի շրջաններին:

Դրանով էլ չբավարարվելով, 1950-1970-ական թվականներին տնտեսությունները խոշորացնելու առիթով հայկական գյուղերից խլվեցին ընդարձակ հողահանդակներ և հանձնվեցին ադրբեջանցիներին: Միաժամանակ հայկական բնակավայրերը ենթարկեցին ադրբեջանական գյուղերին: Այդ ամենից հետո մարզի խաչմերուկային ճանապարհների վրա և բարեբեր գետահովիտներում՝ հայկական բնակավայրերի արանքում, ստեղծվեցին ադրբեջանական նոր գյուղեր: Արդյունքում տասնյակ հայկական գյուղեր վերացան: Դրանց մի մասը՝ Ջամիլլուն, Կրկժանը, Խոջալլուն և այլ գյուղեր, բնակեցվեցին ադրբեջանցիներով:

1920-ական թվականներից մինչև 1950-ական թվականների վերջը Լեռնային Ղարաբաղից ամեն տարի հազարավոր երիտասարդներ էին հավաքագրում և ուղարկում հանրապետության արդյունաբերական կենտրոնները՝ կառուցապատելու, ինչպես նաև Միլլի ու Մուղանի անջրդի հողահանդակները ջրարացնելու:

Մշակովի հողահանդակների պակասը, ցածր բերքատվությունը, ոռոգման համակարգերի բացակայությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը ստիպում էին հարևան ադրբեջանական շրջաններում զբաղվել արտագնա աշխատանքով: Ծանր աշխատանքը, կլիմայական պայմանների կտրուկ փոփոխությունը մասսայական հիվանդությունների և մահացության պատճառ էին դառնում: «Տարեց-տարի բնակչության նոր հավաք է կազմակերպվում. ընտանիքների առավել եռանդուն և գործունյա անդամներն ստիպված լքում են իրենց հայրենիքը: ...ԼՂ-ում տուն չկար, որ մեկ անդամի չուղարկեին արտագնա աշխատանքի»[2]:

Միլլի տափաստանում հայ գյուղացիներին հողեր էր հատկացվում, պայմանով, որ նրանք պիտի ապրեին Աղջաբեդիի շրջանում[3]: Հայ բանվորների ջանքերի շնորհիվ կառուցվեց Միլլի հայտնի ջրանցքը, որը կոչվեց «գյավուր արխ»:

Խորհրդային իշխանության տարիներին՝ ԼՂԻՄ-ում զարգացած էր կանանց աշխատանքի պահանջ ունեցող արդյունաբերությունը, և դա գիտակցաբար էր արվում Ադրբեջանի ղեկավարության կողմից, որպեսզի տղամարդիկ հեռանան մարզից:

Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանից կտրելուց հետո, Ադրբեջանի ղեկավարությունը, երկրամասից հայ բնակչության արտահոսքը արագացնելու նպատակով, արհեստականորեն արգելակում էր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը:

---

[1] *Григорян В., Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ер., 1992, стр. 26.*

[2] *Кочарян Г.А., Нагорный Карабах, Баку, 1925, стр. 35.*

[3] *«Կոմունիստ», 8 հունվարի, 1929:*

Դա առանձնապես արտահայտվել է բարձր որակավորման մասնագետ կադրերին աշխատանքով չապահովելու հարցում: Առանձնապես Հայաստանում կրթություն ստացած մասնագետները մարզում աշխատելու ոչ մի հնարավորություն չունեին: Հայկական կրթություն ունեցող երիտասարդներին վարչա-կառավարչական մարմիններում աշխատելն արգելված էր:

Հայ բնակչության արտագաղթին ուղղակի նպաստել է դպրոցներում սովորելու համար տարրական պայմանների բացակայությունը: Մինչև 1970-ական թվականները, մարզի հայկական շրջաններում պետական բյուջեի հաշվին չի կառուցվել ոչ մի դպրոցական շենք, ակումբ, մշակույթի տուն:

Ադրբեջանի հայկական դպրոցներում արգելվում էր հայոց պատմության դասավանդումը: Դրան հակառակ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում Ադրբեջանի պատմության դասավանդումը պարտադիր էր:

Վատթար վիճակում էր մարզի առողջական համակարգը: 1986թ. Լեռնային Ղարաբաղում բնակչության 10 հազար շնչին ընկնում էր 28,7, իսկ Ադրբեջանում՝ 38,4 բժիշկ: Այն դեպքում, երբ բժիշկների մի զգալի մասը ազգությամբ ադրբեջանցիներ էին:

Տարեցտարի բնակարանային շինարարության ծավալները զգալիորեն կրճատվում էր: Եթե 1966-70թթ. կառուցվել է 262,0 հազ-քառ. մետր բնակտարածություն, ապա 1976-80թթ.՝ 242,6 հազ-քառ. մետր[1]: 1966-1986թթ. մարզում շահագործման հանձնված ընդհանուր օգտակար բնակտարածության 58,3 տոկոսը բաժին էր ընկնում անհատական շինարարությանը, իսկ հանրապետությունում, ամբողջությամբ վերցրած, այն կազմում էր 41,6 տոկոս[2]:

Ստեփանակերտում բնակարան ստանալու համար մարդիկ սպասում էին տասնյակ տարիներ:

ԼՂԻՄ-ը Ադրբեջանին զիջում էր մեկ շնչին ընկնող համախառն հանրային արդյունքով, արդյունաբերության, գյուղատնտեսության մեքենայացմամբ և կապիտալ ներդրումներով: Այսպես, 1986թ. Ադրբեջանում մեկ բնակչին ընկնող կապիտալ ներդրումները կազմել են 473, Նախիջևանում՝ 342, ԼՂԻՄ-ում՝ 181 ռուբլի[3]:

Վատթար վիճակում էր հաղորդակցության ցանցը: Հաղորդակցության միջոցների բացակայության կամ էլ անմխիթար վիճակի հետևանքով տասնյակ գյուղեր անմարդաբնակ են դարձել: Մարզի արդյունաբերությունը ներկայացնում են ընդամենը մի քանի տասնյակ ձեռնարկություններ, որոնց մի մասը հիմնադրվել է դեռևս մինչև հեղափոխությունը: Արդյունաբերական ձեռնարկություններում մեծ մասամբ գերիշխում էր իր դարն ապրած հին տեխնիկան և ձեռքի աշխատանքը, դրանք զուրկ են ժամանակակից արտադրական շենքերից:

ԼՂԻՄ-ում չկար համակցված կետերի, երկաթբետոնե իրերի գործարաններ, ալրաղաց, տնաշինական կոմբինատ:

Գերազանցապես գյուղատնտեսական մարզ հանդիսացող Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին ոռոգման համակարգեր չեն ստեղծվել: Դրա փոխարեն Ղարաբաղի լեռնային գետերի ջրերի հաշվին ջրարբի էին դարձվել հարևան ադրբեջանական շրջանների տասնյակ հազարավոր հեկտար հողահանդակներ: Ջրառատ երկրամասում լուծված չի եղել նաև խմելու ջրի

---

[1] *НКАО Аз. ССР за 60 лет, Баку, 1983, стр. 160.*
[2] *«Խորհրդային Ղարաբաղ», 18 հունիսի, 1988:*
[3] *«Խորհրդային Ղարաբաղ», 18 դեկտեմբերի, 1990:*

հիմնահարցը: Չնայած այս ամենին հայ բնակչության աշխատանքային եռանդի շնորհիվ, մարզը գյուղատնտեսական մի շարք մթերքների արտադրությամբ հանրապետությունում առաջնային տեղ էր գրավում: Այսպես, 1986թ. ԼՂԻՄ-ը բնակչության մեկ շնչին ընկնող մսի (անասունների և թռչունների միսը կենդանի քաշով) գնումներով Նախիջևանին գերազանցում էր 4,6, կաթով՝ 2,7, ցորենով՝ 1,4 անգամ, խաղողով՝ 1,6 անգամ: Միավոր հողատարածության հաշվով այստեղ 1,2 անգամ ավելի շատ անասնագլխաքանակ է պահվում, քան հանրապետության միջինն է և 1,7 անգամ ավելի շատ, քան Նախիջևանը[1]: Մարզը տալիս էր ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ, քան ստանում էր, այդ պատճառով էլ աշխատավորությունը մսամթերքների ու կաթնամթերքների մշտական կարիքի մեջ էր: Վերոհիշյալ մթերքների վաճառքը կատարվում էր կտրոններով: 70 տարիների ընթացքում Ադրբեջանի ղեկավարությունը հնարավոր և անհնարին միջոցներով մարզը մղել է փակուղի, նրա հայ բնակչությանը քաշել ստրկական ու գաղութարարական լծի տակ: Իրավացի է ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման Կոմիտեի ղեկավար՝ Ա.Վոլսկին. «Երկրում շրջելիս,- ասել էր նա,- ես չեմ հանդիպել այնպիսի ավերածության, մարդկանց ճակատագրերի հանդեպ այնպիսի արհամարհանքի, ինչպես Լեռնային Ղարաբաղում»[2]: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազգային իրավունքները ոտնահարելու և նրա նկատմամբ խտրական քաղաքականություն կիրառելու իմաստը Արցախը հայաթափ անելու և մարզը ադրբեջանականացնելու մեջ է:

Մարզի հայ բնակչության տարրական իրավունքների ամեն մի պաշտպանություն գնահատվում էր որպես ազգայնականության արտահայտություն: Երկրամասը զրկված էր ամեն տեսակ ինքնուրույնությունից: Այդ ամենը հանգեցրել է ԼՂԻՄ հայազգի բնակչության մեծամասնության համար անտանելի պայմանների ստեղծմանը և համապատասխանաբար՝ հայերի զանգվածային արտագաղթին: Բոլորից շատ հիասթափվել էր հայ մտավորականությունը, որը հասկանում էր բռնակցված տարածքներում իրականացվող քաղաքականությունը:

Նմանօրինակ քաղաքականությունը հանգեցրել էր մարզի հայ բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազմանը: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մեծ արտահոսքը մինչև երկրորդ աշխարհամարտը ուղեկցվում էր բնական բարձր աճով: Վերջինիս շնորհիվ հայ բնակչության աճի որոշ միտում նկատվեց: 1926թ. և 1939թ. մարդահամարների ընթացքում, մարզի հայ բնակչության ընդհանուր թիվը 111,7 հազարից հասավ 132,8 հազարի, նույն տարիներին մարզի բնակչության ընդհանուր թիվը 125,3 հազարից հասավ 159,8 հազարի[3] կամ ավելացավ 20,4 տոկոսով[4]: Փաստորեն հայերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր բնակչության թվակազմում կրճատվեց ի օգուտ ադրբեջանցիների:

Դրանով չբավարարվելով 1949 թվականի հունիսի 14-ին դաշնակցականի, ռազմագերու կամ հակախորհրդային տարրի պիտակներով 24,5 հազար արցախահայեր աքսորվեցին Ալթայի երկրամասը: Դրա, ինչպես նաև անընդհատ ավելացող արտահոսքի հետևանքով մարզի հայ բնակչությունը զգալիորեն կրճատվեց և 1959թ. կազմեց 110,1 հազար[5] (ավելի քիչ, քան 1926թ.): Հետագա տարինե-

---

[1] *Народное хозяйство Аз ССР, К 70-летию Великого октября, Баку, 1987, стр. 265, 273-277.*

[2] *„Правда", 15 января, 1989*

[3] *Нагорный Карабах за 50 лет (1923-1973гг.), статистический сборник, Степанакерт, 1974, стр. 17.*

[4] *Всесоюзная перепись населения 1959г. Азербайджанской ССР, М., 1963, стр. 140.*

[5] *НКАО, 50 лет в дружной Советской семье, стр. 33.*

րին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության արտահոսքն ավելի ուժեղացավ: 1926-1979 թվականներին Լեռնային Ղարաբաղից միջին հաշվով տարեկան արտագաղթում էին մինչև 2 հազար հայեր, դրա փոխարեն 1959-1979 թվականներին միջին հաշվով ավելանում էին հազար ադրբեջանցիներ[1]:

Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղում ապրում էին, այստեղ ծնված ամեն տասներորդ քաղաքացին, իսկ մնացած ինը արտագաղթում էին: Այդ ամենի հետևանքով մարզի հայ բնակչությունը 111,7 հազարից 1979թ. հասավ 123,1 հազարի, իսկ ադրբեջանցիները՝ համապատասխանաբար 12,6 հազարից հասավ 37,2 հազարի[2]: Ադրբեջանցի բնակչությունը շարունակում էր ավելանալ ինչպես բնական աճի, այնպես էլ դեպի Լեռնային Ղարաբաղ կատարվող ներհոսքի շնորհիվ:

Ամբողջությամբ վերցրած, 1939 և 1979 թվականների մարդահամարների միջև ընկած 40 տարիների ընթացքում ԼՂԻՍ-ում հայերի թիվը կրճատվել է 7,3 տոկոս, իսկ ադրբեջանցիների թիվը աճել է 2,6 անգամ[3]:

Հայերին ԼՂԻՄ-ից և ընդհանրապես Ադրբեջանից դուրս մղելու գործընթացն ուժեղացավ հատկապես 50-ական թվականներից: Դրան հակառակ ադրբեջանցիների թիվը աճում էր Հայաստանում: Ասվածի մասին են վկայում ստորև տրված աղյուսակները[4]:

Ադրբեջանական ԽՍՀ գյուղական շրջաններում հայ բնակչության թվի շարժը 1959-1979 թվականներին

	շրջաններ	հայ բնակչության թիվը		տարբերությունը	շրջանի ընդհանուր բնակչության մեջ հայերի եսակ.կշիռը տոկոսներով	
		1959թ.	1979թ.		1959թ.	979 թ.
	Աղդամի	792	388.	-404	1,2	,4
	Աղսուլի	2227	1174	-1053	3,9	,4
	Բարդայի	885	413	-472	1,6	,5
	Վարդաշենի	2386	2764	-378	10,1	,2
	Դաշքեսանի	16826	7325	-9301	34,0	1,0
	Ջաքաթալայի	1234	884	-350	2,6	,2
	Ջանգելանի	324	35	-289	1,1	,1
	Իսմայիլի	4038	2377	-1661	6,4	,3
	Ղազախի	1943	751	-1192	1,1	,7

[1] *Նույն տեղում:*

[2] *Нагорный Карабах, Историческая справка, Ер., 1988, стр. 46. НКАО, 50 лет в дружной Советской семье, стр. 33.*

[3] *«Խորհրդային Ղարաբաղ», 1 նոյեմբերի, 1989:*

[4] *«Հայաստանի Հանրապետություն», 18 ապրիլի, 1997:*

0	Կասում Իսմայիլի	1915	938	-977	2.5	,6
1	Կուտկաշենի	982	478	-504	2,9	,8
2	Միրբաշիրի	2665	2169	-496	6,2	,6
3	Ֆիզուլու	1461	839	-622	1,7	,1
4	Խանլարի	17264	13975	-3292	22,6	8,2
5	Շամխորի	17153	10369	-6784	13,7	,1
6	Շահումյանի	12787	14624	1837	74,5	73,2
7	Շեքիի	2012	1091	-921	2,6	2,2
8	Շամախու	6497	4081	-2416	6,2	4,3
9	Շուշիի	3794	2881	-913	35,7	18,0

Հայկական ԽՍՀ գյուղական շրջաններում ադրբեջանական բնակչության թվի շարժը 1959 1979 թվականներին

	շրջաններ	ադրբեջանական բնակչության թվաքանակը		տարբերությունը	շրջանի ընդհանուր բնակչության մեջ ադրբեջանցիների տեսակ. կշիռը տոկոսներով	
		959թ.	1979թ.		1959թ.	979թ
	Ազիզբեկովի	174	4103	+1929	21,3	8.3
	Ամասիայի	431	17109	+7678	71,9	1.5
	Արարատի	297	7552	+3255	15,0	5.2
	Վարդենիսի	4505	31142	+16637	49,5	8.2
	Գուգարքի	910	8128	+4218	17,5	9.6
	Եղեգնաձորի	62	5553	+1591	17,5	9.4

	Իջևանի	012	2911	+ 899	9,8	1.3
	Նոյեմբերյանի	593	4517	+ 1924	13,6	8.5
	Կալինի նոյի	811	7901	+ 3290	22,5	1.3
0	Կապանի	265	7536	+1261	41,6	5.5
1	Կրասնոսելսկի	177	13589	+6412	38,7	6.7
2	Մասիսի	384	12095	+2711	41,5	9.7
3	Մեղրու	866	3484	+618	40,7	3.4
4	Սիսիանի	455	6481	+1026	24,1	0.7
5	Ստեփանավանի	25	939	+416	2,8	.6
6	Սպիտակի	614	4025	+1411	10,4	4.3
7	Հրազդանի	75	1952	+977	5,7	.4
8	Թումանյանի	61	1735	+874	3,3	.6

Երիտասարդության արտահոսքը հանգեցրել է մարզի հայ բնակչության «ծերացմանը», որը մի կողմից իջեցրել է ծնունդը և մյուս կողմից՝ բարձրացրել մահացությունը: Եթե 1970-1986թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակչության 1000 շնչի հաշվով մահացել է 6-7 մարդ, ապա ԼՂԻՄ-ում այդ ընթացքում այն կազմել է 7,5-8 մարդ:

1970-80-ական թվականներին ԼՂԻՄ-ի հայ բնակչության բնական աճը դրսևորվում է խիստ նվազման միտումով: Նկատենք, որ 1989թ. 1979թ. համեմատ մարզի հայ բնակչությունը 123,1 հազարից աճեց 145,5 հազարի, երկրամասի հայ

բնակչությունը 75,9 տոկոսից հասավ 76,9 տոկոսի, այսինքն 1 տոկոսի չափով աճ, իսկ ադրբեջանցիները՝ 37,3 տոկոսից հասան 40,6 տոկոսի[1]:

Այսպիսով, նպատակաուղղված ժողովրդագրական քաղաքականության միջոցով Ադրբեջանի իշխանությունները փորձում էին մարզը լիովին հայաթափել, դրանով իսկ մեկընդմիշտ լուծել ղարաբաղյան հիմնահարցը:

Հայակուլ այդ քաղաքականությանը դիմակայելու նպատակով Արցախ Ադրբեջանին բռնակցվելուց անմիջապես հետո, առաջին իսկ օրերից կանգնեց ազատագրական պայքարի վրա: Արցախի գավառներում անընդհատ եղել են ընդվզումներ ու ապստամբական պոռթկումներ ադրբեջանական պաշտոնեության դեմ, մարզն ադրբեջանական ստրկությունից ազատագրելու համար: Այդ կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «ՀՅ Դաշնակցությունը, իբրև հայ ժողովրդի հույսի և հավատի խտացումը, չի դավաճանած Գանձակ-Ղարաբաղցիին, ընդառաջ է գացած անոր բաղձանքին և ամենեն տագնապալի վայրկյանին իսկ չէ մոռացած զայն: Այսօր ալ իր հալածական վիճակին մեջ, իր ծրագրին մեջ ունի հին Արցախ գավառներուն ազատագրումը: Այդ ծրագիրն ինքը չէ հղացած, այլ քաղած է Ղարաբաղի ժողովրդեն կամքեն»[2]:

1920-ական թվականներին Արցախում հակաադրբեջանական շարժումը ղեկավարելու նպատկով ստեղծվել է «Ղարաբաղը Հայաստանին» միությունը[3]: Այն իր բջիջներն ուներ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլ նաև Գանձակի հայկական շրջաններում: Միությունն անկուսակցական էր, որի մեջ մտնում էին դաշնակցականներ, հնչակյաններ, էսեռներ, մենշևիկներ և բոլշևիկներ: 1927թ. նոյեմբերի սկզբներին, միությունը հազարավոր թռուցիկներ է ցրել «Ղարաբաղը Հայաստանին» նշանաբանով: Այդ ամենին հետևել են բազմաթիվ ձերբակալություններ, որոնց թիվն անցնում էր 500-ից: «Հարյուրներով լցնում են երկաթուղին,- պատմում է ականատեսը,- և ճանապարհում դեպի Ռուսաստան: Իսկ սարերում և անտառներում էլ անհամար փախստականներ կան: Գիշերը հինգով-տասով անցնում են սահմանը: Մարդիկ են ուղարկված, որ նրանց էլ հավաքեն բերեն: Եթե Արաքսը չլինի, մի մարդ չի մնա, բոլորն էլ կանցնեն Պարսկաստան: Շատ խիստ բռնագրավումներ կան:

Ղարաբաղի ժողովրդից գրավված են 9800 փութ ցորեն, 5900 եղջյուրավոր անասուններ: Հավաքում են պետական տուրքի ապառիկներն ամենախիստ միջոցներով, դրամի փոխարեն գրավում են տնային բոլոր տեսակի իրեղենները: Այս բոլորը պատմողն ինքը «նաչալնիկ միլիցիան» է, որ իր ձեռքով է գանձել տված: Պարծենում է, որ Զանգեզուրի շրջանում հարյուրներով վերմակներ կան դիզված: ժողովուրդը թողած իր տունը, ընտանիքը, զավակները, ով որ կարողանում է, իր գլուխն է ազատում:

Բաքվից գալիս է հայտնի Բագիրովը մի քանի հարյուր ռուսական զինվորներով և ճառախոսում է.-Պրոլետար ընկերներ խորհրդային իշխանության անունից եմ խոսում ձեզ հետ: Նրանք, որ ձերբակալված կամ փախած են, մեր թշնամիներն են, դեռ շատերը կան, որ պիտի ձերբակալվեն: ...Ամբողջ լեռնահայաստանի սարերը դարձել են փախստականների բնակավայրեր: Երբ մութը վրա է

---

[1] Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Եր., 1991, էջ 66:
[2] Ռուբեն, Գանձակ Ղարաբաղի վեճը, «Դրոշակ», 1926, հ. 2, էջ 52:
[3] ԱբեղյանՄ., Մենք և մեր հարևանները, «Հայրենիք», 1928, հմ. 1, էջ 139:

հասնում, կարծես թե աստղազարդ երկինք լինի սարերը՝ ամեն կողմերում լույսեր են երևում և ամեն կողմից երբեմն-երբեմն համազարկերի ձայներ են լսվում»[1]:

Ազատագրական շարժման գործիչները Շուշիի շրջանում պահեստ-արհեստանոց էին կազմակերպել: 1930թ. արտակարգ հանձնաժողովի կողմից ձերբակալվել են 17 զինագործ վարպետներ: Առգրավվել է 6 թնդանոթ, 30 գնդացիրներ և այլ տեսակի զենքեր ու զինամթերք: Ապստամբել էին Խծաբերդի բնակիչները: Զորքերը փորձել են ճնշել այն, բայց սկզբում չի հաջողվել: Լեռնային Ղարաբաղում համաժողովրդական հուզումները ճնշելու համար Բաքվից մեծ քանակությամբ զորքեր են տեղափոխել[2]:

1931 թվականին մարզկոմի ղեկավարությունը մեղադրվեց նացիոնալիզմի, նացիոնալ-ուկլոնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի և դաշնակցական գաղափարների դեմ չպայքարելու մեջ[3]: Մարզային և շրջանային մի շարք գործիչների անհիմն բռնադատել են: Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմը բազմիցս քննարկել է ղարաբաղյան շարժման հետ կապված հարցեր: Շատ կոմունիստներ են հանվել կուսակցության շարքերից, լուծարվել են առանձին շրջանային կուսկազմակերպություններ:

Մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական ծանր իրավիճակից արցախահայությանը փրկելու համար Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը և մանավանդ մտավորականությունը բազմիցս դիմել են կենտրոնական իշխանություններին:

Դեռևս 1945թ. Խորհրդային Հայաստանի՝ Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար՝ Գ. Հարությունյանը նամակով դիմել է Ստալինին, խնդրելով վերանայել Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին հարցը: Այդ նամակով Գ. Հարությունյանը փաստերով ընդգծում է Լեռնային Ղարաբաղի Հայաստանին միացնելու անհրաժեշտությունն ու կարևորությունը[4]:

Վերոհիշյալ նամակը Համ Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Մալենկովն ուղարկում է Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար՝ Մ.Ջ. Բաղիրովին՝ ծանոթանալու և առաջարկություն անելու: Բաղիրովն իր պատասխան նամակում, մերժել է Գ. Հարությունյանի բոլոր փաստարկները, սակայն միաժամանակ տվել է իր համաձայնությունը Հայկական ԽՍՀ-ին միացնելու ԼՂԻՄ-ը առանց Շուշվա շրջանի՝ միայն պայմանով, որ Ադրբեջանի կազմի մեջ մտցվեն Հայկական ԽՍՀ երեք շրջանները, որոնք հարակից են Ադրբեջանին և ունեն նաև ադրբեջանցի բնակչություն[5]:

Ըստ էության հարցը նորից մտցվեց փակուղի:

Դեռ ավելին, առաջանցիկ նոր քայլեր նախաձեռնվեցին մարզի ազատագրական դեմքը փոխելու ուղղությամբ: 1949թ. մեծ քանակությամբ ադրբեջանցիների Հայաստանից տեղափոխելով բնակեցրին Լեռնային Ղարաբաղի հայկական գյուղերում: Ամեն մի հայի ընտանիք պարտավոր էր իր հարկի տակ օթևանել մեկ երկու ադրբեջանցի ընտանիքների: Նորից ալեկոծվեց ու խռովվեց արցախահայության անդորրը: Ծեծկրտոցն ու մասսայական տուրուդմփոցները սովորա-

---

[1] *Սարուր, Կացությունը Ադրբեջանի մեջ, «Դրոշակ», 1930, հմ. 4, էջ 119-120:*
[2] *Նույն տեղում, էջ 120:*
[3] *„Заря востока", 24 мая, 1931.*
[4] *Перестройка и национальные отношения (О событиях в Нагорном Карабахе и вокруг него), Ер., 1989, стр. 40.*
[5] *Алиев И. , Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1989, стр. 89.*

կան երևույթներ էին: Վաչկատունի առօրյայով ապրող վերաբնակները կարճ ժամանակահատվածում մարզի ծաղկավետ դաշտերն ու այգիները վերածեցին ամայի տափաստանի: Եկվորները, արցախահայության անկոտրում, անհաշտ կամքին չհամակերպվելով, մեկ տարի անց, 1950թ. տեղափոխվեցին Խանլարի, Շամխորի, Շահումյանի, Քարիատի շրջանների հարթավայրային հատվածները, նոր պատուհաս դառնալով տեղի հայության համար:

Նմանօրինակ գործելակերպով չկարողանալով հասնել ցանկալի հաջողության, Ադրբեջանի իշխանությունները երբեմն պաշտոնամոլ ու հաճոյակատար հայ ղեկավարների միջոցով են փորձում իրագործել իրենց ծրագրերը:

Այդ նպատակով, 1958թ. կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար նշանակեցին Նիկոլայ Շահնազարյանին, որի հայատյաց գործելակերպը նոր բողոքի ու դժգոհությունների ալիք բարձրացրեց:

1962թ. Ստեփանակերտի ավտոշարասյան 300 աշխատավորներ բողոքնամակ գրեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, կուսակցության Կենտկոմ և Մինիստրների խորհուրդ: Նամակում ներկայացվեց մարզի գաղութային վիճակը և առաջարկվեց ԼՂԻՄ-ը վերամիավորել ՀԽՍՀ-ին:

1962թ. մի շարք մտավորականներ նմանօրինակ նամակով դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմին:

1965թ. հունիսի սկզբին Լեռնային Ղարաբաղի 13 ղեկավար աշխատողներ՝ Գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար՝ Բագրատ Ուլուբաբյանի գլխավորությամբ, նամակ են հղել ԽՍՀՄ կուսակցական ու պետական ղեկավարությանը: Նամակում հանգամանորեն շարադրվել է մարզի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի վիճակը, հատկապես ցույց է տրվել Ադրբեջանի ղեկավարության շովինիստական վերաբերմունքը ԼՂԻՄ-ի նկատմամբ[1]:

Սույն դիմումին հետևեցին համանման համախոսականներ Երևանից ու երկրի հայաբնակ տարբեր շրջաններից:

Միայն Լեռնային Ղարաբաղից կենտկոմին հասած դիմումների տակ ստորագրել էին 45 հազար աշխատավորներ: Այս բոլորի շնորհիվ 1966թ. օգոստոսի 8-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը հատուկ որոշմամբ Ադրբեջանի ու Հայաստանի այն ժամանակվա ղեկավարներին հանձնարարել էր համատեղ քննարկել հարցը և ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնել իրենց առաջարկությունները՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու նպատակով:

Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես միշտ, այս անգամ էլ քաղաքական շանտաժի ու ազգամիջյան կոտորածի սպառնալիքով կասեցրեց հիմնահարցի հետագա որևէ քննարկում:

Վերոհիշյալ բողոքները պատրվակ դարձան մարզի հայության նկատմամբ նոր բռնությունների: 13 գործիչների նկատմամբ էլ գործադրվեցին հալածանքների դաժան միջոցառումներ: Կարճ ժամանակում նրանք ենթարկվեցին կուսակցական տույժերի, զրկվեցին մարզում աշխատելու հնարավորությունից:

Չնայած այդ ամենին, շարժումը ապրեց ու ծավալվեց արդեն հայ ժողովրդի ընդերքում՝ հիմք դնելով նոր խմորումների, որոնք պիտի հասցնեն 70-ականների խուլ ցնցումներին:

1971 թվականին մի քանի տասնյակ նշանավոր մտավորականներ՝ Մարտիրոս Սարյանը, Պարույր Սևակը, Գոհար Գասպարյանը դիմեցին ՀԽՍՀ և

---

[1] *«Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի, 1990:*

ԽՍՀՄ ղեկավարությանը՝ տագնապով ընդգծելով այն անօրինությունների մասին, որ կատարվում էր ԼՂԻՄ-ում: «Բաքվից անվերջ եկող միլիցիան և պետական անվտանգության այլ ազգի զինվորներով,- գրված էր նամակում,- լցվել, պաշարվել է մարզի կենտրոնը: Չդադարող հարցաքննությունների ու հետապնդումների միջոցով ստորացնում են նրա բնակիչներին: Ամեն օր բանտ են քշվում ազնիվներն ու համարձակները: Պաշտոնազրկվում ու հալածվում են կամայականությունների դեմ բողոքողները: Մարզի հայության ճակատագրի տնօրեններ են կարգվում հին ու նոր դավաճանները, ուրացողներն ու մատնիչները: Այս բոլորի վերջը չի երևում: Իսկ եթե երևում է, ապա դա վերջն է ամեն հայկականի, որ կենաց ու մահու գոյամարտերում պաշտպանվել է մինչև այսօր»[1]:

1976թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման ժամանակ նորից արծարծվեց արցախյան հիմնահարցը: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության արձանագրության մեջ ասված է. «Պատմական մի շարք հանգամանքների հետևանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստականորեն միացվել էր Ադրբեջանին: Ըստ այդմ, հաշվի չէին առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը և տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ և Ղարաբաղի հարցը շարունակում է հուզվել, առաջացնել անհանգստություն և անբարյացակամության պահեր դարավոր բարեկամությամբ իրար հետ կապված երկու ժողովուրդների միջև: Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ հետ: Այն ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրինական տեղը»[2]:

Խորհրդային իշխանության տարիներին արցախահայության վերելքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը, 1988-ի փետրվարին սկսված համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հիմքը հանդիսացավ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ /1988 Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ/

Արցախյան շարժումը հանդիսանում է ընդհանուր շարժման մի բաղկացուցիչ մասը, որի ամենաբնորոշ գիծը նրա համաժողովրդական բնույթն է: Նորօրյա մեր պատմությամբ զբաղվող հեղինակները պատշաճ ուշադրություն չեն դարձնում այդ կարևոր հարցին: Սույն հոդվածի նպատակն է փորձել մասնակիորեն լրացնել այդ բացը:

Հայտնի է, որ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը ընդունեց որոշում՝ ԼՂԻՄ-ը մայր Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ: Աշխարհասփյուռ հայութ-

---

[1] *«ԼՂ Հանրապետություն», 23 նոյեմբերի, 1994:*

[2] *ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության 1977թ, նոյեմբերի 23, N 61 արձանագրություն, Կ-4133:*

յունն այդ որոշումն ընդունեց ուրախությամբ: Երևանի Օպերայի /Թատերական/ հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարները նույնիսկ կոչ էին անում դիմել համընդհանուր գործադուլի և Կրեմլից պահանջում առանց ուշացնելու իրագործել արցախահայության միանգամայն արդարացի և սահմանադրական պահանջը:

Հաջորդ օրը՝ փետրվարի 22-ին, հանրահավաքի էր եկել ավելի մեծ թվով մարդ: Աստիճանաբար ծավալվող և համաժողովրդական բնույթ ստացող Արցախյան շարժումը ղեկավարելու և կազմակերպված հունի մեջ դնելու համար անհրաժեշտ էր ղեկավար մարմնի ստեղծումը: Հենց այդ նույն գիշերն էլ ձևավորվեց «Ղարաբաղի պաշտպանության կոմիտեն», որը կրճատ անվանվեց «Ղարաբաղ» կոմիտե: Կոմիտեի առաջին կազմի մեջ մտան Իգոր Մուրադյանը /տնտեսագետ/, Վաչե Սարուխանյանը /թատերական գործիչ/, Գագիկ Սաֆարյանը /մանկավարժ/, Մանվել Սարգսյանը /ծառայող/, Սամսոն Ղազարյանը /մանկավարժ/ և ուրիշներ: Միևնույն ժամանակ ստեղծվեց Ավագների խորհուրդ, որի մեջ մտնում էին շարժման ակտիվ մասնակից գրողներ, գիտնականներ, մշակույթի ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական գործիչներ: «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական խնդիրն էր արցախահայության օրինական պահանջը բավարարելու համար ոտքի կանգնեցնել համայն հայությանը և Խորհրդային Միության մյուս ժողովուրդներին: Պայքարի այդ շրջանում,[1] մանավանդ փետրվարի 20-ից հետո, երբ շարժումը վերածվեց համաժողովրդական պայքարի, հակառակ բոլոր սպասումներին, միտինգավորները և ցուցարարները դարձան ավելի կարգապահ և Երևանում տեղի չէր ունենում որևէ կարգազանցություն, ինչը, հարուցել էր պետական մարմինների զարմանքը: Խորհրդային Հայաստանի Պետական անվտանգության կոմիտեում և ներքին գործերի նախարարությունում այդ օրերին կազմված և վերադաս մարմիններ ուղարկված գաղտնի զեկուցագրերում զարմանքով է խոսվում այդ մասին: Մարդիկ Թատերական հրապարակ էին գալիս լինելով համոզված, որ կատարում են իրենց քաղաքացիական պարտքը:[2]

Այդ օրերին Երևանում և հանրապետության մյուս քաղաքներում տարածվում է «Ղարաբաղ» կոմիտեի կոչը՝ «Միացեք Ղարաբաղի համար պայքարողներին»: Ե՛վ Երևանում և՛ Ստեփանակերտում մարդիկ ցույցի էին գնում Վ.Լենինի և Մ.Գորբաչովի նկարներով, «Լենին-Պարտիա-Գորբաչով», «Կեցցե ԽՄԿԿ, նրա լենինյան քաղաքականությունը», «Ամբողջ ժողովուրդը չի կարող ծայրահեղական լինել», «Առանց արդարության չկա եղբայրություն», «Մենք հավատում ենք վերակառուցմանը», «Ղարաբաղը վերակառուցման քննությունն է» և նման այլ կարգախոսներով: Թատերական հրապարակ եկած հազարավոր մարդիկ բուռն զգացմունքներով էին դիմավորում Իգոր Մուրադյանի, Սիլվա Կապուտիկյանի, Վաչե Սարուխանյանի, Սոս Սարգսյանի, Համբարձում Գալստյանի և մյուսների կոչերը: Արդեն փետրվարի 26-ին հանրահավաքի մասնակիցների թիվը հասնում էր մոտ մեկ միլիոնի: Նման նախադեպ ԽԱՀՄ-ը չգիտեր: Երկրի լրատվական միջոցներն այդ մասին տարակուսանքով էին խոսում: Հանրահավաքներին մասնակցում էին

---

[1] *Ճիշտ չեն (Николай Оганесян, Карабахский конфликт, Ереван, 1997, с. 26 և ուրիշներ), ովքեր Արցախյան շարժման սկիզբը համարում են 1988թ. փետրվարը: Իրականում նախնական շրջանը սկսվել է ավելի վաղ, Գորբաչովյան «վերակառուցման» կուրսը հռչակվելուց հետո, երբ Արցախում ձևավորվել էին գաղտնի խմբեր, որոնք էլ կազմակերպեցին հայտնի ստորագրահավաքը և առաջին թռուցիկների տարածումը Ստեփանակերտում:*

[2] *Владимир Григорян, Армения – 1988-1989, Ереван, 1999, стр. 61.*

նաև հանրապետությունում ապրող ռուսները, հույները, եզդիները, քրդերը և այլ ազգերի ներկայացուցիչներ: Հանրահավաքը շարունակվում էր անդադար, օր ու գիշեր: Հարյուրավոր պայքարի նվիրյալներ սննդամթերք, ջուր, դեղորայք, ոմանք էլ տաք հագուստ էին հասցնում Թատերական հրապարակ: Այլ հանրապետություններից այդ օրերին Երևանում գտնվածները զարմանքով և հիացմունքով էին խոսում երևանցիների կարգապահության մասին:

Համաժողովրդական այդ պոռթկումը խիստ անհանգստացրեց Կրեմլին: Փետրվարի 26-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովը դիմում հղեց Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորներին՝ կոչ անելով հանդես բերել «քաղաքացիական հասունություն և համբերություն, վերադառնալ նորմալ կյանքի և աշխատանքի, պահպանել հասարակական կարգը»:[1] Նույն օրը ՀԿԿ կենտկոմի պլենումը «խոր ըմբռնումով ընդունելով» Մ Գորբաչովի դիմումը, հանրապետության աշխատավորներին կոչ է անում պահպանել «բարեկամությունը ԽՍՀՄ - ժողովուրդների միջև, հայկական և ադրբեջանական ժողովուրդների միջև»:[2] Պլենումը բոլոր մակարդակի խորհուրդների գործկոմների և վարչական մարմինների ղեկավարներին հանձնարարեց անհարժեշտության դեպքում «օգտագործել նրանց ընձեռնված հնարավորությունները և խստագույնս պահպանել օրինականությունն ու հասարակական կարգը»:[3] Պլենումի հիմնական սխալն այն էր, որ կուրորեն կատարելով Կրեմլի պահանջները, չցուցաբերեց ազգային շահերից բխող սկզբունքային ու հետևողական դիրքորոշում և չտեսավ սկսված պայքարի համաժողովրդական, համազգային բնույթը: Մինչդեռ միանգամայն ակնհայտ էր, որ հնարավոր չէ փակել ընդդիմության և ոտքի ելած ժողովրդի պայքարի ճանապարհը: Դրա հետևանքով Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը ըստ էության, մնաց ժողովրդական պայքարից դուրս և կամա թե ակամա ծառայում էր Կրեմլին: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ.Ս.Դեմիրճյանը փետրվարի 29-ին հանդես գալով հայկական հեռուստատեսությամբ, հայ ժողովրդին հորդորում էր պահպանել ժողովուրդների բարեկամությունը, քանի որ «բոլորիս սուրբ պարտքն է աչքի լույսի պես պահել ու պահպանել, պրակտիկ գործերով ամրապնդել այն, զարգացնել դրա հարուստ ինտերնացիոնալ ավանդույթները»:[4] Մինչ Հայաստանի առաջին դեմքը և նրա «զինակիցները» «ինտերնացիոնալ ավանդույթներն» ամրապնդելու կոչեր էին հնչեցնում և հորդորում պահպանել հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը», իսկ Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթում այդ նույն ժամանակ «եղբայր ադրբեջանցիները» սպանդի էին ենթարկում հայերին:

Ի պաշտպանություն արցախյան շարժման, հանրահավաքներ և ցույցեր էին տեղի ունենում բալթյան հանրապետություններում, Մոսկվայում, Լենինգրադում, Օդեսայում, Ռոստովում և այլուր: Այդ առթիվ «Ղարաբաղ» կոմիտեն մարտի 4-ին դիմելով Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին, շեշտում էր, որ «Ղարաբաղը հայ ժողովրդի սոցիալական պոռթկումն է... Ղարաբաղը ձգտում է՝ վերակառուցումը առաջ մղելու համար: Դրա համար նա դարձել է նաև վերակառուց-

---

[1] *«Խորհրդային Հայաստան», 26.03.1988:*

[2] *Նույն տեղում, 27.02.1988: Պլենումի սղագրությունը տես՝ Հայաստանի Հանրապետության Հասարակական քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ /այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ/, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 1-54:*

[3] *Նույն տեղում, թ. 54:*

[4] *«Խորհրդային Հայաստան», 01.03.1988:*

ման փորձաքննություն, խոստացված փոփոխությունների և անկեղծության արտահայտություն»: Կոմիտեն կոչ էր անում պաշտպանել արցախահայության արդարացի պահանջը և բոլորին տեղյակ էր պահում, որ «հայ ժողովուրդը լի է Լեռնային Ղարաբաղը հայրենիքի գիրկը վերադաձնելու վճռականությամբ»:[1]

Երևանում, Ստեփանակերտում, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր բնակավայրերում մարդկանց զանգվածային պոռթկումները դարձել էին միասնական: Հայ ժողովուրդը միանշանակ պահանջում էր ուղղել Ռ(կ)ԲԿ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի Անդրերկրկոմի ապօրինի որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ, երբ Ի.Ստալինի պահանջով այն բռնակցվեց Ադրբեջանին: Հայ ժողովուրդը իշխանություններից պահանջում էր իրենց վրա վերցնել գորբաչովյան բարեփոխումների իրականացումը և Ղարաբաղյան հիմնախնդրի արդար լուծումը: Չնայած մասնակի թույլ տրված սխալներին, «Ղարաբաղ» կոմիտեն գործում էր ճիշտ և կարողանում էր ժողովրդական զանգվածներին առաջնորդել: Արցախյան շարժման ուժը նրա համաժողովրդական բնույթն էր, որից վախենում էր Կրեմլը: Հայաստանի ՊԱԿ-ի մի գաղտնի հաղորդումից պարզվում է, որ 1988թ. փետրվարի 28-ին Հայաստանի գրողների միության շենքում տեղի ունեցած «Ղարաբաղ» կոմիտեի նիստում, որին մասնակցել են Երևանի ձեռնարկություններում, կազմակերպություններում և հանրապետության շրջաններում ստեղծված կոմիտեի բաժանմունքների մոտ 300 ներկայացուցիչներ, որոշում է ընդունվել հանրապետության բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր ուրբաթ օր, ժամը 18-ին, չխանգարելով աշխատանքային և ուսումնական բնական ընթացքը, անցկացնել կոլեկտիվների ընդհանուր ժողովներ և որոշումներ ընդունել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ, հանձնարարվել էր ընդունած որոշումների պատճեններն ուղարկել «Ղարաբաղ» կոմիտե և ԽՄԿԿ Կենտկոմ: Քանի որ մինչ այդ «Ղարաբաղ» կոմիտեն որոշում էր ընդունել Լեռնային Ղարաբաղի հետ համերաշխության օր անցկացնել մարտի 23-ին, որոշվում է այն տեղափոխել մարտի 26-ը՝ շաբաթ օր, որպեսզի չընդհատվի հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների նորմալ գործունեությունը: Իգոր Մուրադյանը հայտարարում է, որ առաջիկա օրերին ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀՄ-ի հետ վերամիավորելու պահանջի պաշտպանության օգտին հանրահավաքներ տեղի կունենան Խորհրդային Միության տասնյակ քաղաքներում և ազգային շրջաններում: «Ղարաբաղ» կոմիտեի փետրվարի 28-ի այդ նիստում վերանայվել է նաև կոմիտեի կազմը, որի մեջ մտել են Իգոր Մուրադյանը, Մանվել Սարգսյանը, Գագիկ Սաֆարյանը և վեց հոգի Լեռնային Ղարաբաղից:[2]

1988թ. փետրվարի վերջին և մարտի սկզբներին, մանավանդ սումգայիթյան ողբերգության մասին իմանալուց հետո, Հայաստանում համաժողովրդական պայքարը նոր թափ առավ: Երևանում և հանրապետության շրջաններում ապրող քուրդ-եզդիների ներկայացուցիչները հանրահավաքների ժամանակ մերկացնում էին Ադրբեջանում ապրող քրդերի նկատմամբ իրագործվող բռնությունները: Նրանք իրենց համերաշխությունն էին արտահայտում Ադրբեջանի տարածքում ապրող քրդերին և հայտարարում. «Մեր հաղթանակը հարված կլինի պանթյուր-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 85-86:

[2] Նույն տեղում, գ. 1, թ. 135: Ղարաբաղից ընտրված այդ վեց հոգու անունները չեն հրապարակվել, կոմիտեն նպատակահարմար է գտել պահել գաղտնի:

քիզմին և պանիսլամիզմին»: Բացի այդ, նրանք կոչ էին անում բոլոր քուրդ-մուսուլմաններին՝ համընդհանուր պայքար սկսել և Ադրբեջանում վերականգնել քրդերի իրավունքները, պաշտպանել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու համաժողովրդական շարժումը:[1]

Ամենուր՝ հայ, ռուս, եզդի և այլ ազգերի ներկայացուցիչները հանրահավաքներում և լրատվամիջոցներով դատապարտում էին սումգայիթյան եղեռնագործությունը, վճռականորեն պահանջում Սումգայիթում տեղի ունեցածին տալ քաղաքական գնահատական և խստագույնս պատժել այդ ոճրագործության կազմակերպիչներին:

Խորհրդային Հայաստանի աշխատավորները քննադատում էին հանրապետության իշխանություններին՝ պահանջելով կանգնել հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանության դիրքերում և ստրկամտորեն չծառայել Կրեմլին: Այդ առթիվ ամեն օր բազմաթիվ նամակներ և հեռագրեր էին ուղարկվում Հայաստանի իշխանություններին, որոնցում արվում էին կոնկրետ առաջարկություններ: Այսպես, օրինակ, ԽԱՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ղարաբաղյան շարժման ենթակոմիտեի անունից Ե.Աբգարյանը մարտի 16-ին Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին ուղարկած նամակում բողոքում էր, որ Ղարաբաղյան շարժման ենթակոմիտեների աշխատանքները խափանելու համար պետական մարմինները կատարում են քայլեր, որոնք չեն համապատասխանում «կուսակցության ժողովրդական գործունեությանը», և պահանջում «անմիջապես դադարեցնել «Ղարաբաղ» կոմիտեի ենթակոմիտեների և ակտիվիստների նկատմամբ սպառնալիքներն և ճնշման փորձերը»:[2]

Հայ ժողովրդի արդարացի պահանջին ուշադիր հետևում և աջակցում էր սփյուռքահայությունը: Ափյուռքահայ Մինաս Քեշժյանը մարտի սկզբին Դեմիրճյանին ուղարկած նամակում ներկայացնելով մի քանի պահանջներ, հավատացնում էր. «Այսու մեր ձայնը կը միացնենք Խորհրդային Հայաստանի մեր հայրենակիցներուն, որոնք կը պահանջեն այժմ Խորհրդային Ադրբեջանի իշխանութեան տակ գտնուող Ղարաբաղի և Նախիջեւանի վերամիացումը Խորհրդային Հայաստանին»: Եվ ապա՝ «Կը հաւատանք և կը փափաքինք, որ այս առողջապահական, տնտեսական և մարդակային կենսական հարցերու հանդէպ գործնական քայլեր առնելով, դուք ալ նպաստած պիտի ըլլաք աշխարհի բոլոր ժողովուրդներու համար խաղախութիւն և արդարութիւն ապահովելու դատին»:[3] Մոնրեալից Մարի-Ռօզեն /Ռաջունի/ մարտի 23-ին Կ.Դեմիրճյանին ուղարկած նամակում գրում էր. «Հայ ժողովրդի պահանջներուն արդար սկզբունքներէն մեկնելով, այսու կուգամ զօրակցութիւնս արտահայտել իմ ազգակիցներուս՝ <u>Ղարաբաղի հայութեան արդար պահանջքին</u>, Լեռնային Ղարաբաղը՝ Սովետական Հայաստանին վերակցելու առնչութեամբ: Միաժամանակ կը փափաքիմ խոր մտահոգութիւն յայտնել Սովետական Ադրբեջանի հայութեան հանդէպ գործուած ջարդերուն նկատմամբ:

Կակնկալեմ, որ ձեր արդար որոշումով և գործնական քայլերով, պիտի սրբագրէք 65 տարիներ առաջ գործուած սխալը և արդարութիւն վերահաստատէք հայ ժողովրդին»:[4]

---

[1] Նույն տեղում, . 12, թ. 76:
[2] Նույն տեղում, ց. 127, գ. 651, թ. 3:
[3] Նույն տեղում, գ. 651, թ. 15:
[4] Նույն տեղում, թ. 7:

1998թ.-ի փետրվարի 21-ին տեղի ունեցած ՀԿԿ կենտկոմի բյուրոն հապշտապ քննարկելով «Լեռնային Ղարաբաղի իրողությունների մասին» հարցը, լիովին պաշտպանեց ԽՄԿԿ Կենտկոմի «Լեռնային Ղարաբաղի իրողությունների մասին» օրապակաս որոշումը և այն ընդունեց որպես «գործողությունների ուղեցույց», չմոռանալով նաև արձանագրել, որ «տարածքում ... տեղի ունեցող» փոփոխությունները «հակասում են Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին», որը կարող է հասցնել «անկանխատեսելի, մինչև անգամ դժվար ուղղելի հետևանքների», իսկ դա, ըստ բյուրոյի անդամների իբր «առանձին անպատասխանատու, ծայրահեղական տրամադրություն ունեցողների գործունեության» հետևանք էր: Քաղկոմներին ու շրջկոմներին հանձնարարում էր բյուրոն լայն աշխատանք ծավալել և կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել՝ «չեզոքացնելու Հայաստանի և Ադրբեջանի աշխատողների շահերին դիպչող բոլոր գործողությունները»:[1] Բյուրոյի հանձնարարությամբ, փետրվարի 22-ին, Դեմիրճյանը հանրապետության հեռուստատեսությամբ հանդես գալով, փորձում էր բնակչությանը համոզել, թե իբրև Հայաստանում և Ադրբեջանում ստեղծված վիճակը կարգավորելու համար Լեռնային Ղարաբաղում կիրագործվեն սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումներ, և ոչ մի խոսք չասաց Արցախի քաղաքական խնդրի շուրջը:[2] Երկու օր անց՝ փետրվարի 23-ին կայացած ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նիստը նպատակահարմար գտավ խնդրել ԽՄԿԿ կենտկոմին՝ ապագայում ազգային հարցը քննարկելիս չմոռանալ Լեռնային Ղարաբաղի հարցը: Այդ նույն օրը՝ փետրվարի 23-ին, տեղի ունեցավ նաև Հայաստանի կուսակցական ակտիվի ժողով, որին ներկա էին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Ա.Լուկյանովը, Վ.Դոլգիխը, ինչպես և ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Վ.Տրոշինինը: Վ.Գրիգորյանի պատմամբ այդ խորհրդակցության ժամանակ Դեմիրճյանը հայտարարել է. «ես չգիտեմ ինչպես որոշել այս (այսինքը՝ Ղարաբաղի - Հ. Ա.) հարցը: Եթե դահլիճում որևէ մեկը գիտի թող զբաղեցնի իմ տեղը»:[3] Փետրվարի 24-ին Վ.Դոլգիխը հանդես գալով Հայաստանի հեռուստատեսությամբ, նշեց, որ իրենք Մոսկվայից եկել են հայ ժողովրդին տեղյակ պահելու Լեռնային Ղարաբաղում և Երևանում տեղի ունեցող իրողությունների վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի դիրքորոշման մասին: Նա շեշտում էր, որ «իրադարձությունների այդպիսի զարգացումը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների և, իհարկե, պղտորում է հայ և ադրբեջանցի ժողովուրդների եղբայրական հարաբերությունները»: Ապա նա նշեց, որ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմներից պահանջում է «բոլոր միջոցները ձեռնարկել՝ իրադրության կարգավորման համար»: Հետո հայտնեց, թե իբր «ԼՂԻՄ-ում «կոմունիստների և բնակչության գերակշիռ մեծամասնության դրսևորած զսպվածության ու քաղաքական պատասխանատվության շնորհիվ իրադրությունը կայունանում է», մինչդեռ «Երևանում վիճակը չի բարելավվում, շարունակվում են բազմամարդ միտինգները, որոնց մասնակցում են բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչը բարդացնում է քաղաքացիների կյանքը...»: Գովերգելով երկրում տեղի ունեցող վերակառուցումը և դեմոկրատացումը, Վ.Դոլգիխը կոչ էր անում կատարել փետրվարի 23-ին կայացած Հայաստանի կուսակցական ակտիվի ժողովի պահանջները, որը ԽՄԿԿ կենտկոմին խնդրել է «Լեռնային Ղարաբաղի

---

[1] *Նույն տեղում, Հ. 82, գ. 21, գ. 2-3:*
[2] *«Խորհրդային Հայաստան», 23.02.1998:*
[3] *Владимир Григорян, указ. соч., с. 55.*

պրոբլեմը բազմակողմանիորեն քննության առնել այդ կարգի ուրիշ հարցերի կոմպլեքսում»: Վերջում նա պնդում էր «դրսևորել հասունություն, վերահաստատել Երևանի և հանրապետության կյանքի ու աշխատանքի կանոնավոր ռիթմը»:[1]

Փետրվարի 26-ի երեկոյան Վ.Դոլգիխը Հայկականհեռուստատեսությամբ ընթերցեց Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովրդին ուղղված Մ.Գորբաչովի դիմումը: Նպատակ ունենալով հայությանը շեղել հիմնական՝ դարաբաղյան խնդրից, Մ.Գորբաչովը ամենագլխավորը համարում էր «ստեղծված իրավիճակի հաղթահարման, Ադրբեջանում և Հայաստանում կուտակված կոնկրետ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ պրոբլեմների լուծման վրա կենտրոնանալ մի ամբողջ երկրում իրականացվող վերակառուցման ու նորացման քաղաքականության ոգով»: Նա կոչ էր անում «թանկ գնահատել և ըստ ամենայնի ամրապնդել ադրբեջանական ու հայ ժողովուրդների բարեկամության ավանդույթները, որոնք ձեռք են բերվել սովետական իշխանության տարիներին» և երկու ժողովուրդներին հորդորում «հանդես բերել քաղաքացիական հասունություն ու համբերություն, վերադառնալ նորման կյանքի, պահպանել հասարակական կարգը»:[2]

Նույն օրը՝ փետրվարի 26-ին, տեղի ունեցած ՀԿԿ կենտկոմի պլենումում Կարեն Դեմիրճյանը ջերմորեն պաշտպանեց է Մ.Գորբաչովի կոչը, նույնիսկ հայտնելով, թե իբր Լենինականում և Երևանում «զոռով են ժողովրդին հանրահավաքի տանում»: Ինչ էլ որ լինի, պնդում էր նա, պետք է «կարգ հաստատենք և իրագործենք Գորբաչովի առաջ քաշած պահանջները»:[3] Ճիշտ էր Սիլվա Կապուտիկյանը, երբ 1990թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած ջարդերից հետո, ՀԿԿ կենտկոմում հրավիրված խորհրդակցությունում ունեցած իր ելույթում նշեց, որ «հայ ժողովրդի սխալներից մեկն էլ այն է, որ հավատաց գորբաչովյան վերակառուցմանը: Իսկ այդ կույր հիվանդությամբ ամենից առաջ տառապում էր հայ ժողովրդի ուղեցույց Հայկոմկուսը»:[4]

Կուսակցության բարձրագույն մարմնի կողմից իրար հետևից ընդունված որոշումները և երկրի առաջին դեմքի ելույթներն ու կոչերը հարկադրված միջոցառումներ էին, որոնց նպատակն էր Հայաստանի և Արցախի հասարակայնությանը շեղել շարժումից: Եվ առաջին անգամ Խորհրդային Միությունում վերակառուցումը առնչվեց զանգվածային ելույթների հետ, որոնք վտանգում էին գործող վարչակարգի գոյությունը: ժողովրդի հետ երկխոսության համար հարկավոր էր մանևրել, խաբելու նոր ձևեր գտնել: Մարտի 9-ին ԽՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում ստիպված էին ընդունել «մի քանի պրոբլեմների առկայությունը» Արցախի տնտեսական և մշակութային կյանքում: Ուստի առաջարկվեց դրանք վերացնելու վերաբերյալ որոշումներ մշակել, բայց միայն մարզի ինքնավարության շրջանակներում:[5] Այդ նույն նպատակով էլ հաջորդ օրերին Արցախում իրար հետևից երևացին Մոսկվայի և Բաքվի էմիսարները: Նույնիսկ կարծիք հայտնվեց հանրաքվե անցկացնելու միջոցով Արցախը ժամանակավորապես թողնել Կենտրոնի ենթակայության տակ: Այդ գաղափարի կողմնակիցներ կային նաև Արցախում:

---

[1] *Խորհրդային Հայաստան, 25.02.1988:*
[2] *Նույն տեղում, 27.02.1988:*
[3] *ՀՀ ՀՔԿՓ ՀՊԱ, Ֆ.1, ց.82, գ.1, թ.4-5:*
[4] *Նույն տեղում, ց.84, գ.131, թ.80:*
[5] *"Правда", 10.03.1988.*

Երևանի Կինոյի տանը 1988թ. մարտի 19-ին տեղի ունեցած «Ղարաբաղ» կոմիտեի ընդլայնված նիստին մասնակցեցին մոտ 700 հոգի, իսկ ավելի քան 3000 հոգի էլ դրսում, դրսում հավաքված բարձրախոսների միջոցով էին հետևում նիստի ընթացքին:: Այդ նիստ-հանրաժողովում ելույթ ունեցան Իգոր Մուրադյանը, Արմեն Հովհաննիսյանը, Սոս Սարգսյանը, Հենրիկ Իգիթյանը, Գրիգոր Ավագյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Մանվել Սարգսյանը, Լենսեր Աղալովյանը, Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, Վաչե Սարուխանյանը, Գագիկ Սաֆարյանը, Ղարաբաղի ներկայացուցիչը և ուրիշներ: Նրանք խստագույնս մերկացնում էին «սումգայիթ» կազմակերպողներին, Հայաստանի իշխանություններից պահանջում մինչև մարի 25-ը հրավիրել Գերագույն խորհրդի նստաշրջան և որոշել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Նաև կոչ էին անում անհրաժեշտության դեպքում դիմել համընդհանուր գործադուլի, պայքարել մինչև վերջ, կապերն ամրապնդել համայն հայության հետ և ստեղծել մի ընդհանուր ճակատ, կանխել բոլոր տեսակի հիաբեկչությունները, Ադրբեջանում հայերի նկատմամբ կատարվող բռնարարքների մասին դիմել միջազգային դատարան, Մոսկվայից պահանջել հատուկ հանձնաժողով ուղարկել Հայաստան և միասին վճռել Արցախի հարցը: «Ղարաբաղ» կոմիտեն ներկայացրեց մոտակա օրերի գործողությունների ծրագիր, որն ընդունվեց միաձայն: Ծրագիրը խնդիր էր դնում ԽՄԿԿ կենտկոմից պահանջել դադարեցնել զրպարտությունները հայ ժողովրդի և ղարաբաղյան շարժման հասցեին, ընդունել որ արցախահայության պահանջը չի հանդիսանում ծայրահեղականների և ազգայնականների պայքար, սումգայիթյան իրադարձությունները պարզաբանելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով, կենտրոնական թերթերում տպագրել ԼՂԻՄ մարզկոմի մարտի 17-ի պլենումի որոշումը: Նաև ՀԽԱՀ կառավարությունից պահանջվում էր պաշտոնապես իր վերաբերմունքն արտահայտել ԼՂԻՄ-ի և Հայաստանի վերամիավորման հարցի վերաբերյալ, ընդունել ԼՂԻՄ-ը վերաբնակեցնելու պետական ծրագիր, Արցախի հարցով դիմել աշխարհի երկրներին, կառավարություններին, խորհրդարաններին, հասարակական կազմակերպություններին և այլն:

Որպեսզի մարտի 26-ի համընդհանուր հանրաքվեն անցներ կազմակերպված և ոչ մի կարգազանցություն տեղի չունենար, որոշվեց բուհերի բարձր կուրսերի ուսանողներից և երիտասարդ բանվորներից ստեղծել ջոկատներ, որոնք պետք է համագործակցեին ՆԳ աշխատակիցների հետ: Նաև որոշվեց է Երևանի խնայդրամարկղներից մեկում բացել երկու հաշիվ՝ «Ղարաբաղ» կոմիտեին աջակցելու նպատակով ֆինանսական միջոցներ հավաքելու համար: Նիստի վերջում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ ընտրվեցին Վազգեն Մանուկյանը և Համբարձում Գալստյանը:[1]

Ակնհայտորեն Հայաստանում Արցախյան շարժումը ծնունդ էր առել ամենից առաջ Արցախ-Ղարաբաղը մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով: Կարճ ժամանակամիջոցում շարժումը համազգային բնույթ ընդունեց և իր շրջանակների մեջ առավ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական բնույթի բազմաթիվ հարցեր: Այդ ընդհանուր պայքարում, Հայաստանի կոմկուսը կանգնեց վերջին տեղում: Կենտրոնական լրատվամիջոցները շարունակում էին վարկաբեկել և խեղաթյուրել Արցախյան շարժումը և հայ ժողովրդին տարբեր պիտակներ կպցնել: Բանը հասել էր նրան, որ նույնիսկ ՀԿԿ կենտկոմը սկզբնական կազմակերպություններից պահանջում էր քննարկել և դատապարտել ԼՂԻՄ

---

[1] *ՀՀ ՀՔԿՓ ՀՊԱ, ֆ.1, ց.87, գ.12, թ.156-160:*

մարզխորհրդի փետրվարի 20-ի հայտնի որոշումը, այն դիտելով որպես հակախորհրդային, հակաժողովրդական և ազգային որոշում: Անշուշտ Մոսկվայի պահանջով, Հայաստանի Գերագույն խորհուրդն իր հերթին մարտի 24-ին որոշում ընդունեց «Ղարաբաղ» կոմիտեն օրենքից դուրս հայտարարելու մասին և արգելեց նախօրոք նշանակված մարտի 26-ի հանրահավաքը:[1] Մարտի 25-ին գործ հարուցվեց Պարույր Հայրիկյանի դեմ, իսկ 28-ին նրան ձերբակալեցին՝ մեղադրանք ներկայացնելով ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով և հետո էլ արտաքսվեց հայրենիքից:

Երկրի տարբեր առաջադեմ ուժեր պաշտպանում էին Արցախյան շարժումը և իշխանություններից պահանջում հարցը լուծել սահմանադրության հիման վրա: Ակադեմիկոս Ա.Սախարովը մարտի 21-ին դիմելով Մ.Գորբաչովին, հույս էր հայտնում, որ «Երկրի ղեկավարությունը՝ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն և ԽՍՀՄ - Գերագույն խորհուրդը կգտնեն գործողությունների մի եղանակ»:[2] Այնուամենայնիվ, Մոսկվան մնում էր անդրդվելի: Մարտի 24-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Գխ նախագահության նիստում Մ.Գորբաչովը դեմ արտահայտվեց ԼՂԻՄ պատկանելիությունը փոխելու հարցին: Ընդունված որոշման մեջ ասված էր. «Անթույլատրելի համարել... ազգային-պետական և ազգային-վարչական սահմանների փոփոխությունը»:[3] Փետրվարյան իրադարձություններից և սումգայիթյան ողբերգությունից հետո Արցախում վիճակը խիստ լարված էր: Փետրվարի 22-ին սկսված համընդհանուր գործադուլը շարունակվում էր: Փետրվարի 27-ին կենտրոնական իշխանությունների մի խումբ պատասխանատու աշխատողների հետ Ստեփանակերտ ժամանեց ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Կ.Բրուտենցը: Այդ հանձնաժողովը հանձնարարություն ուներ մոտիկից ծանոթանալ մարզի տնտեսական վիճակի հետ: Նրանք հանդիպումներ ունեցան Արցախյան շարժման ղեկավարների և ակտիվիստների հետ: Արցախցիները Կ.Բրուտենցի միջոցով մի շարք փաստաթղթեր և նամակ-բողոքներ ուղարկեցին միութենական ամենավերին իշխանություններին: Փետրվարի 29-ին կրկին Ստեփանակերտ ժամանած ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Պ.Դեմիչևը, Լենինի անվան հրապարակում հավաքված հազարավոր միտինգավորներին և գործադուլավորներին հայտարարեց, թե իբր ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն կրկին վերադարձել է Արցախի խնդրին և ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությանը հանձնարարել հանգամանորեն ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղի հարցը և պատրաստ լինելու դեպքում այն քննարկել:

Հանրաքվեներն ու ցույցերը կարգավորելու նպատակով, Ստեփանակերտի քաղաքային խորհուրդը մարտի 1-ին ընդունեց «Ստեփանակերտ քաղաքի փողոցներում, հրապարակներում և պուրակներում ժողովներ, միտինգներ, փողոցային շքերթներ, ցույցեր և այլն միջոցառումներ անցկացնելու ժամանակավոր կանոնների ու կարգերի մասին»[4] որոշումը:

Դեռևս փետրվարի 20-ի նախօրյակին, արցախահայության պայքարը ղեկավարելու համար Ստեփանակերտում ստեղծվել էր նախաձեռնող խումբ՝ Արկադի Մանուչարովի գլխավորությամբ: Նախաձեռնող խումբը մարտի 1-ին որոշում է մարտի 2-ից, Մ.Գորբաչովի ծննդյան առթիվ, դադարեցնել գործադուլը: Արցախցի-

---

[1] *«Խորհրդային Հայաստան», 25.03.1988:*
[2] *Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 94:*
[3] *"Правда", 25.03.1988.*
[4] *«Խորհրդային Ղարաբաղ», 22.03.1988:*

ները հեռագրով շնորհավորում են Մ.Գորբաչովի ծնունդը և հույս հայտնում, որ նա արդարացի կլուծի իրենց պահանջը: Մարտի 1-ի լույս 2-ի գիշերը Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում հավաքված շուրջ 50000 արցախցիները որոշում են նախաձեռնող խումբը փոխարինել կոմիտեով: Հենց հրապարակում քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների աշխատանքային կոլեկտիվները և հասարակական կազմակերպություններն ընտրում են 66 հոգու, որոնք հավաքվելով «Սովետական Ղարաբաղ» թերթի դահլիճում, ընտրում են 11 հոգուց բաղկացած խորհուրդ, որին տրվում է «Կռունկ» անունը /ոմանց մեկնաբանությամբ «Լեռնային Ղարաբաղի հեղափոխական կառավարման կոմիտե»/: «Կռունկի» անդամներ են ընտրվում՝ Արկադի Մանուչարովը /նախագահ/, Վարդան Հակոբյանը /տեղակալ/, Ռոլես Աղաջանյանը, Ռոբերտ Կարապետյանը, Ռոբերտ Քոչարյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Համլետ Մովսիսյանը, Մաքսիմ Միրզոյանը և Ռուդիկ Աքայանը:[1] Խորհրդի՝ մարտի 3-ի ընդլայնված նիստում ընդունվում է նրա կանոնադրությունը, որը մարտի 5-ին հաստատվում է Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի կողմից:[2]

«Կռունկը», ըստ էության, «Ղարաբաղ» կոմիտեի բաժանմունքն էր ԼՂԻՄ-ում: Այն հասարակական կազմակերպություն էր: Ստեփանակերտի քաղխորհրդի թույլտվությամբ, «Կռունկը» իր միջոցառումներն անց էր կացնում քաղաքային մշակույթի տանը և գործում էր մյուս հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցելով: Նրա կանոնադրության մեջ քաղաքական նպատակներ չէին առաջադրվել: Որովհետև խորհրդային կայսրության մուրճը դեռևս ուժեղ էր և հնարավոր չէր նրանում քաղաքական խնդիրներ արտացոլել: Բացի այդ, «Կռունկը» նախագծել էր մոտակա ժամանակներում մշակել ծրագիրը, որում կոնկրետ կշարադրվեր միության քաղաքական խնդիրները:

«Կռունկը» մշտական կապի մեջ էր կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի հետ ու ջանում էին համատեղ ուժերով մարզում վերականգնել աշխատանքային ռիթմը, ապահովել երկրամասի բնակչության անվտանգությունը: Կուսակցության մարզկոմը և մարզխորհուրդը դիմելով աշխատավորներին, նշում էին, որ Արցախում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունները լուրջ մտահոգություն են պատճառում մարզի և ամբողջ երկրի կոմունիստներին ու աշխատավորներին: Մարզային ղեկավարությունը դեռևս կուրորեն հավատում էր, որ ԽՄԿԿ կենտկոմը «խորը ըմբռնումով է վերաբերվում ինքնավար մարզում կուտակված ոչ քիչ բեռություններին ու դժվարություններին» և որ այն ԼՂԻՄ-ի հիմնախնդրի վերաբերյալ «հատուկ հանձնարարություններ է տվել և անմիջականորեն կհետևի դրանց իրականացմանը»: Գորբաչովյան խարդավանքներին դեռևս հավատացող մարզի ղեկավարությունը բնակչությանը կոչ էր անում «պահպանել հանգստություն, դրսևորել ողջամտություն, քաղաքական հասունություն և զսպվածություն, սթափորեն գնահատել ստեղծված իրավիճակը, որը կարող է հասցնել լուրջ բարդությունների, անկանխատեսելի հետևանքների»:[3]

Այդ օրերին «Կռունկի» խորհրդի անդամները մեկնում էին մարզի շրջաններ, հանդիպումներ ունենում բնակչության հետ, ոգևորում նրանց: Նրանք նաև հոգ էին տանում զենք և պաշտպանության այլ միջոցներ ձեռք բերելու և պահեստավորելու ուղղությամբ: Պայքարի ակտիվ մասնակիցներից Ռազմիկ Պետրոսյա-

---

[1] Հրանտ Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 28-29:
[2] Նույն տեղում, էջ 29:
[3] «Խորհրդային Ղարաբաղ», 02.03.1988:

նի վկայությամբ Քիրս սարի ստորոտում և Վերին Հոռաթաղում ստեղծել էին պահեստներ, որտեղ զենք էին կուտակել:[1] «Կռունկը» բնակչությանը կոչ էր անում և համոզում անհնազանդություն դրսևորել և չենթարկվել Ադրբեջանի իշխանություններին:

1988-ի մարտի 2-ին Մոսկվայից Ստեփանակերտ ժամանեց գիտնականների մի խումբ, որի կազմում էին ակադեմիկոսներ Տ.Խաչատուրովը, Ն.Ենիկոլոպովը, թղթակից-անդամներ Ի.Աբաբեկովը, Ա.Սարգիսովը, պրոֆեսորներ Մ.Սարգիսովը և Ռ.Սրապյանցը, որոնք մեկ շաբաթ մնալով Լեռնային Ղարաբաղում կազմեցին հիմնավորված զեկուցում և ներկայացրին ԽՄԿԿ կենտկոմ, ինչպես և Հայաստանի ու Ադրբեջանի իշխանություններին: Հանձնաժողովը հանգել էր այն եզրակացության, որ ստեղծված վիճակից դուրս գալու միակ և ճիշտ ելքը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միավորելն է:[2]

ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի որոշումից հետո անցել էր երկու շաբաթ, սակայն կուսակցության մարզկոմը դեռևս չէր ասել իր վճռական խոսքը: Մարզի աշխատավորները մարզկոմից պահանջում էին ցուցաբերել վճռականություն: Փետրվարի վերջին և մարտի սկզբին կուսակցական սկզբնական կազմակերպություններում ստորագրություններ են հավաքում՝ պահանջելով հրավիրել մարզային կուսակցական կազմակերպությունների արտահերթ կոնֆերանս և քննարկել Արցախյան հիմնահարցը: Մարզի 285 կուսակցական սկզբնական կազմակերպություններից հավաքվել էին 7260 ստորագրություններ:[3] Մարզկոմը դանդաղում էր և չէր համարձակվում հրավիրել կոնֆերանս: Մարզի աշխատավորները մարտի 15-ին կրկին դիմեցին համընդհանուր գործադուլի: Մարտի 17-ին տեղի ունեցավ կուսակցության մարզկոմի պլենում, որի աշխատանքներին մասնակցեցին ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցական-կազմակերպչական աշխատանքների բաժնի վարիչի տեղակալ Գ.Խարչենկոն, կենտկոմի պատասխանատու աշխատող Ի.Շվեյցը և Ադրբեջանի կենտկոմի քարտուղար Թ.Օրուջևը: Պլենումը քննարկելով «ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ ինքնավար մարզի աշխատավորների, կոմունիստների պահանջի մասին» հարցը, որոշում է. «Հաշվի առնելով ինքնավար մարզի հայ բնակչության իղձերը, Լեռնային Ղարաբաղի ճնշող մեծամասնության կամքը, խնդրել ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյին քննարկել և դրականորեն լուծել Արցախի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը, դրանով իսկ ուղղելով 20-ական թվականների սկզբին Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելիությունը որոշելու ժամանակ թույլ տրված պատմական սխալը»:[4] Մարզկոմի պլենումի մասնակիցները գիշերվա ժամը 3-ին միանում են Լենինի անվան հրապարակում հավաքված ցուցարարներին: «Կռունկի» խորհրդի նախագահ Արկադի Մանուչարովը ամբողջ հայ ժողովրդի անունից շնորհակալություն է հայտնում մարզկոմի պլենումի անդամներին և հույս հայտնում, որ Արցախ-Ղարաբաղը ընդմիշտ կլինի մայր հայրենիքի հետ: Առավոտյան հրավիրված «Կռունկի» խորհրդի արտահերթ նիստը որոշում է մարզկոմի պլենումի որոշումը հասցնել մարզի բոլոր բնակավայրեր, տեղերում անցկացնել միտինգներ և հեռագրերով ու նամակներով «հեղեղել» Կրեմլը:

---

[1] Ռազմիկ Պետրոսյան, Արցախ. պատերազմ. զինադադար, Երևան, 2001, էջ 72:
[2] Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе. Хроника, часть 1, Ереван, 1990, ст. 48-59.
[3] Նույն տեղում, էջ 76:
[4] «Խորհրդային Ղարաբաղ», 18.03.1988:

Մարզկոմի պլենումի նախօրյակին, մարտի 16-ին, Ստեփանակերտ էր ժամանել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի, ԽՍՀՄ պետպլանի և մի շարք մինիստրությունների ու գերատեսչությունների պատասխանատու աշխատողներից կազմված մի խումբ, որի նպատակն էր ԼՂԻՄ մարզկոմին և մարզխորհրդին ծանոթացնել ԽՍՀՄ մինիստրների խորհրդի և ԽՄԿԿ կենտկոմի կողմից կազմված ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ որոշման նախագծի հետ: «Կռունկը» և հրապարակում հավաքված մի քանի տասնյակ հազար ցուցարարները մարզկոմից և մարզխորհրդից պահանջում էին մերժել այդ օրապակաս որոշումը: ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն և մարզկոմի նախագահությունը ծանոթանալով որոշման նախագծի հետ, վճռականորեն մերժում են և պատասխանում, որ արցախահայությունը պահանջում է ամենից առաջ վճռել մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ միացնելու հարցը, նոր միայն անդրադառնալ սոցիալ-տնտեսական խնդրին: Հանձնաժողովը մերժում ստանալով, մարտի 17-ին վերադառնում է Մոսկվա: «Պրավդայի» մարտի 21-ի համարում տպագրվեց «Հույզեր և բանականություն» վերատառությամբ սադրիչ հոդվածը, որը խիստ զայրույթ առաջ բերեց Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում: Արցախահայությունը, ի պատասխան դրան, մարտի 24-ից դիմեց նոր, համընդհանուր գործադուլի, որը շարունակվեց մինչև ապրիլի 5-ը: «Կռունկը» փորձեց կանխել գործադուլը, սակայն չհաջողվեց: «Պրավդայում» տպագրված այդ սադրիչ հոդվածը վիրավորանք էր ոչ միայն արցախահայությանը, այլև աշխարհասփյուռ հայությանը: ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն քննարկելով այդ հոդածը, հիմնավորված և մերկացնող պատասխան ուղարկեց «Պրավդայի» խմբագրությանը, որը, սակայն, չտպագրվեց:

1988թ. մարտի 24-ին ԽՄԿԿ կենտկոմը և Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-95թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: Այդ նպատակի համար հատկացվում էր 400 միլիոն ռուբլի, որը պետք է իրացվեր Ադրբեջանի իշխանությունների կողմից, ինչը ձեռնատու չէր ԼՂԻՄ-ին: Ակնհայտ էր, որ Մոսկվան այդ 400 միլիոնը տրամադրել էր Ադրբեջանին՝ Արցախի հիմնահարցն ի սպառ ջնջելու համար: Այլ հարց էր, եթե այդ գումարը ուղղակի հատկացվեր Լեռնային Ղարաբաղին: Բնական է. արցախահայությունը կտրուկ մերժեց Մոսկվայի այդ պլանը: Այդ նույն օրը՝ մարտի 24-ին, Ադրբեջանական ԽԱՀ ԳԽ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանական և Հայկական ԽԱՀ-ների իրադարձությունների առթիվ միութենական հանրապետությունների դիմումներին առնչվող միջոցառումների մասին» որոշումը, որով հանձնարարվում էր «տասնօրյա ժամկետում մշակել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի լուծման նպատակին ուղղված համալիր միջոցառումներ ... և ընդունել համապատասխան որոշում»:[1] Այդ նույն որոշմամբ արգելվեց «Կռունկի» և նրա գլխավորող մարմնի գործունեությունը: Այսպիսով, Մոսկվայից թելադրված նույն սցենարով միաժամանակ արգելվեցին «Ղարաբաղ» կոմիտեին և «Կռունկի» գործունեությունը: Վերոհիշյալ որոշման պահանջների իրագործումը դրվում էր Ադրբեջանի դատախազական մարմինների վրա: Աս Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ բռնարարքների նոր դրսևորում էր, սակայն «Կռունկի» անդամները, մանավանդ խորհուրդը, մնացին իրենց դիրքերում և որոշեցին գործել ընդհատակում:

---

[1] *Бакинский рабочий, 25.03.1988.*

«Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» արգելումը մեծ բողոք առաջացրեց ոչ միայն Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում, այլև ամբողջ միությունում և սփյուռքահայության շրջանում: Հրապարակախոս Հ.Բորովիկի հետ մարտի 28-ին ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհանգստություն հայտնեց «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» գործունեությունը արգելման առթիվ: Նա այսպես ավարտեց իր խոսքը. «Վերջերս վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտեն, և պարզ է, որ կոմիտեականները դեռևս հնարավորություններ կունենան ազատ ու հանգիստ շարունակել իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի Ղարաբաղի այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակներ մոլեգնած շովինիզմի ու բռնությունների հայակործան դեպքերը: Ուրեմն մենք պարտավոր ենք սատար կանգնել մեր արյունակիցներին ու վերին ղեկավարության միջամտությունն ապահովել, որպեսի Ղարաբաղը այս անգամ ևս չդառնա դաժան հաշվեհարդարի ասպարեզ»:[1]

1988-ի մարտի վերջերից ղարաբաղյան շարժումը թևակոխեց պայքարի նոր շրջան և ընդգրկեց ժողովրդական զանգվածների ավելի լայն շրջաններ:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ 1988 – 1994 ԹԹ.

Ոգևորված վերակառուցման քաղաքականության տված հնարավորություններից՝ արցախահայությունը պայքար է սկսում իր ազատագրման համար: 1988 թ. փետրվարի 20 –ին ԼՂԻՄ –ի մարզխորհուրդը որոշում է ընդունում դիմել ՀԽՍՀ ԳԽ –ին և ԱԽՍՀ ԳԽ –ին և խնդրել մարզը միավորել ՀԽՍՀ –ին: Արցախահայության պայքարում բախվեցին հայ - ռուսական և հայ - ադրբեջանական շահերը:

Արցախյան շարժումը լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Մենք կանրադառնանք միայն ադրբեջանական և թուրքական լրատվամիջոցների արձագանքին: 1988 թ. փետրվարից ադրբեջանական և թուրքական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության մշտական ուշադրության կենտրոնում էր գտնվում Հայաստանում և Արցախում տիրող իրավիճակը: Ադրբեջանական լրատվամիջոցների անդրադարձը որպես կանոն եղել է ապատեղեկատվական , հակահայկական և զանգվածային լրատվամիջոցները ծառայեցվել են Ադրբեջանի շահերին՝ ԼՂԻՄ –ի հարցը խեղդելու համար:

Թուրքիան հանդես գալով ԽՍՀՄ –ի 50 մլն –ոց մուսուլմանության պաշտպանի դերում , զանգվածային լրատվամիջոցներով մշտապես խեղաթյուրում էր Արցախյան շարժման բուն էությունը՝ ի շահ Ադրբեջանի: ՀՀ հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբեր) Թուրքիան ձգտում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել նորանկախ պետության հետ: Նա իր միջնորդությունն էր առաջարկում Հայաստանին և Ադրբեջանին պատերազմի դադարեցման համար՝ միաժա-

---

[1] *Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 61:*

մանակ չընդունելով Ադրբեջանի տարածքային ոչ մի կորուստ:Թուրքիան նաև Հայաստանի հետ ցեղասպանության հարցից հրաժարվելու երկխոսության փորձեր էր կատարում:

ԽՄԿԿ –ն , որն իր քաղականությամբ ստանձնեց Ադրբեջանի պաշտպանի դերը , 1988 թ. փետրվարի 21 –ին հրապարակեց Արցախյան շարժման վերաբերյալ իր առաջին որոշումը «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների վերաբերյալ»: Նույն գնահատականին միացան նաև Ադրբեջանի ռադիոն և հեռուստատեսությունը, որոնք եթերից հայտարարեցին որ ԼՂԻՄ –ի խռովությունները առանձին ծայրահեղական խմբերի գործն է[1]: Հեռուստատեսությամբ Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Բաղիրովը խաղաղության կոչ արեց և հայտարարեց, որ հանրապետությունում տարածքային փոփոխություններ չեն լինելու:

Իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 22 –ին, բազմահազարանոց ադրբեջանական ամբոխը Աղդամից շարժվեց ԼՂԻՄ –ի մոտակա Ասկերան ավանի վրա: Հետևյալ օրերին ադրբեջանական հեռուստատեսությունը և ռադիոն, ՏԱՍՍ –ը համամիութենական ռադիոն և կենտրոնական հեռուստատեսությունը հաղորդեցին, որ բախումների արդյունքում սպանվել է երկու ադրբեջանցի: Դա արվում էր լարվածությունն ուժեղացնելու նպատակով:

Ողջ 1988 թ. ընթացքում ադրբեջանական և թուրքական լրատվամիջոցները ձգտում էին ստեղծել հայ ազգայնականի և կոնֆլիկտ սանձազերծողի կերպար:

«Միլլիյեթ» թերթի 1988 թ. մարտի 14 –ի համարում կարդում ենք. «Ադրբեջանին պատկանող հողերը չեն կարող Հայաստանին տրվել միայն այն պատճառով, որ հայերը այդպես են ուզում: Խորհրդային Միությունում ոչ մի երկրի հողը չի կարող բռնագրավվել: ԽՍՀՄ –ում հողը շատ է, բոլորին էլ կբավարարի, դեռ մի բան էլ ավել»[2]: Ուրեմն, ԼՂԻՄ–ի դժգոհ հայերը կարող են հեռանալ իրենց հայրենիքից իսկ Ադրբեջանի տարածքների պահպանումը ընդամենը պատմության պահանջ է:

Արցախում և ՀԽՍՀ–ում սկսված շարժումը հզոր էր , սակայն խաղաղ ցույցերը և սահմանադրական պահանջները չփոթեցնում էին ԽՍՀՄ կառավարությանը: 1988 թ. փետրվարի 21 –ին Ստեփանակերտ են ժամանում ԽՄԿԿ - Քաղբյուրոյի անդամներ Ռազումովսկին և Դեմիչևը , իսկ փետրվարի 23 –ին Երևան ժամանեցին Դոլգիխը և ԽՄԿԿ քարտուղար Լուկյանովը: Հաջորդ օրը հանդիպելով Արցախյան շարժման ղեկավարների հետ՝ պատվիրակները հավատացրին , որ հեռուստատեսությունը և մամուլը կդադարեցնեն ինֆորմացիայի խեղաթյուրումը: Պետք է նշել , որ շարժման առաջին օրերին հակահայկական խոշորամասշտաբ լրատվական արշավի նախաձեռնողը Ադրբեջանն էր:

Հայկական հեռուստատեսությամբ առաջին անգամ միտինգներից հատվածներ ցույց տրվեցին միայն փետրվարի 26 –ին «Լրաբեր» լրատվականով: Նույն օրը Դոլգիխը հեռուստատեսությամբ կարդաց Մ. Գորբաչովի ուղերձը Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին: Այս ուղերձին անդրադարձել են եվրոպական , ամերիկյան և այլ լրատվամիջոցներ: Ըստ նրանց Գորբաչովը հայտնվել է իր համար անշահավետ պայմաններում:

Թուրքական մամուլն անվստահությամբ էր վերաբերվում ԽՍՀՄ –ում հռչակված դեմոկրատիային: Այդ են վկայում թերթի հրապարակումները ,

---

[1] *Карабахский вопрос: Истоки и сущность в документах и фактах, Степанакерт , 1989, стр. 35:*

[2] *«Միլլիյեթ» , 1988, մարտի 14:*

ուր առանձին հոդվածներով քննարկվում են այն բոլոր պայմանները, որոնք գոյություն ունեին ԽՍՀՄ –ում և նպաստավոր էին Ադրբեջանի համար: Թերթի մի համարում երբեմն

տպագրվում էր Արցախին վերաբերվող մի քանի հոդվածներ: Թերթը մշտապես ընթերցողի ուշադրությունն էր հրավիրում այն բանի վրա , որ Երևանում և ԼՂԻՄ–ում բացակայում են օտարազգի ժուռնալիստները: Թերթում ամեն կերպ փորձվում էր հաստատական այն կարծիքը ստեղծել , որ բարձրացված հարցը ապօրինի է և պատմական ոչ մի հիմք չկա այն ուղղելու համար: Այս մասին պրոֆեսոր Հասան Քոնին մի հոդված է հրատարակել «Ղարաբաղ և Նախիջևան: Եվրոպացիներ , ճանաչեք թուրքերի իրավունքները» խորագրով , ուր անդրադարձել է Մոսկվայի և Կարսի պայմանագրերին՝ խեղաթյուրելով պայմանագրերը ստորագրելու պատմական նախադրյալները[1]:

«Անվտանգության միջոցառումներ» , «ԽՍՀՄ Գխ արտաիերթ նստաշրջանում ռուսները հայերին սաստեցին » , «Գորբաչովից նոր խոստումներ» և այլ հոդվածներում ԼՂԻՄ –ի ազատագրական պայքարի մասին ոչ մի խոսք չկա , հիշվում է միայն Հայաստան անունը և նրա կողմից առաջ քաշված հողային պահանջատիրությունը:

«Միլլիյեթ» թերթի 1988 թ. մարտի 14 –ի համարում «Հայերը հրահրում են » հոդվածում անդրադարձ է կատարվում ԽԱՀՄ Հյուսիսային Կովկասի ավագ Մուֆթի Գոգիևի Թուրքիա կատարած այցին , մեջ է բերվում Մուֆթիի խոսքերը . «Ինձ համար անհասկանալի է , թե ձեզանից ինչու՞ են հող պահանջում: Նույն պահանջն է ներկայացվում Ադրբեջանին: Սակայն խորհրդային ղեկավարությունը թույլ չի տա , որ մի ժողովուրդ մյուսից բռնությամբ հող վերցնի»[2]:

Ցեղասպանության և Սումգայիթյան եղեռնագործության մասին լրատվությամբ թուրքական մամուլը ժլատ գտնվեց: Չնայած ԱՄՆ կոնգրեսում հայկական ցեղասպանության նախագծի պաշտպանությամբ հանդես են եկել բազմաթիվ կոնգրեսականներ , սակայն Թուրքիան վայելելով Ռեյգանի վարչակարգի հովանավորությունը , շահավետ դիրք էր գրավել:

Մեջբերելով հայերի դժգոհությունը . «1915 թ. մահմեդական թուրքերը մեզ կոտորեցին , իսկ հիմա մահմեդական ազերիները» , Թուրքիան մերժում է իր առնչությունը Սումգայիթյան եղեռնագործությունը և անուղղակիորեն հասկացնում , որ հայերի և ադրբեջանցիների պայքարը պատմության խորքից է գալիս[3]:

«Դատարկ սպառնալիքներ» հոդվածում ԱՄՆ կոնգրեսական Մ. Մարտինեսը խոսելով հայոց ցեղասպանության նախագծի և ԱՄՆ – Թուրքիա հարաբերությունների մասին , ասում է , որ «Ադրբեջանում թուրքական ծագումով ավազակախմբերի կողմից սպանված հայերը ինձ հիշեցրին , որ Խորհրդային կառավարությունը մոռացել է հայերի ցեղասպանությունը»[4]:

Սումգայիթյան ջարդերի և Արցախյան շարժման գործում ադրբեջանական մամուլը խորամանկորեն հարցը խճճելով՝ իրադարձություններն այլ դիրքերից էր լուսաբանում: Նախ ասենք , որ հարցին անդրադարձել են ադրբեջանական բոլոր լրատվամիջոցները՝ «Ազերինֆորմը» , «Բաքվի աշխատավոր» , «Ադրբեջանի երիտասարդություն» , «Կոմունիստ» (հայերեն լեզվով) , «Բաքու» (ադրբեջ. և ռու-

---

[1] *Տե՛ս «Միլլիյեթ» , 1988 , մարտի 14:*
[2] *«Միլլիյեթ» , 1988 , մարտի 14:*
[3] *Տե՛ս «Միլլիյեթ» , 1988 , մարտի 26:*
[4] *«Միլլիյեթ» , 1988 , մայիսի 5:*

սերեն լեզուներով) , «Գրականություն և արվեստ» (ադրբեջ.) , «Սպորտ» և այլ թերթերը: 1988 թ. ադրբեջանական թերթերի նյութերը բաժանվում են երկու շրջանի՝ մինչև Սումգայիթյան ոճրագործությունը և նրանից հետո: Մինչև Սումգայիթյան իրադարձությունը ադրբեջանական թերթերը ողողված են հայ «ծայրահեղականների , ազգայնականների» դեմ ուղղված անեծքներով , իսկ Սումգայիթից հետո թմբկահարվում է ժողովուրդների եղբայրության թեման ,անհասցե քննադատվում են խուլիգանական տարրերը , որոնց ազդեցության տակ են ընկել «դյուրահավատ մարդիկ»:

«Բաքվի աշխատավոր» թերթում (Ադրբեջանի ԿԿ օրգան) տպագրվում էին բանվորների, մտավորականների հոդվածները , խմբագրությանը հասցեագրված նամակները և հեռագրերը: Թերթի հոդվածների վերնագրերը հենց սադրիչ են ստեղծում են ժողովուրդների եղբայրության դեմ ոտնձգող հայի կերպար և ապակողմնորոշում ԽՍՀՄ հասարակությանը: Օրինակ՝ «Եղբայրությունը մեզ համար սրբություն է» «Մշակույթների բարեկամություն նշանակում է ժողովուրդների բարեկամություն», «Ամրացնել եղբայրության շղթաները», «Ամրապնդել խորհրդային ժողովուրդների բարեկամությունը և եղբայրությունը» և այլ խորագրերի տակ հանդիպող բոլոր հոդվածներում զարմանք է հայտնվում, թե ո՞վքեր կարող էին թշնամանք սերմանել երկու հարևան ժողովուրդների միջև , որոնք ունեն մի ընդհանուր հայրենիք՝ ԽՍՀՄ:

Թերթում դիտավորյալ տպագրվել են Ադրբեջանի հայերի հոդվածները, որոնք ամոթաբեր են: Օրինակ՝ 1988 թ. փետրվարի 28–ի համարում ԽՄԿԿ անդամ Ն. Ռ. Համբարձումյանը իր հոդվածում թշնամական դիրք է բռնում այն մարդկանց հանդեպ, ովքեր հնարել են ԼՂԻՄ–ի հարցը, երիտասարդությանը շեղել ճանապարհից և առաջին անգամ զարգացվում է այն միտքը , որ հայերին հրահրում են դրսից[1]: Իսկ 1988 թ. մարտի 8 –ին «Պուբլիցիստ» հեռուստահաղորդման մեջ այս մտացածին հարցը ընդգրկուն քննարկման դրվեց: Այս հարցի ապացուցմամբ հանդես եկավ նաև Ադրբեջանի ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի տնօրեն Ա. Զարգարովը «Ո՞վ է թեժացնում կրքերը» հոդվածում: Նրա միակ խնդիրն էր ապացուցել , որ ԼՂԻՄ –ի իրադարձությունները հրահրված են արտասահմանից[2]: Ինչ վերաբերում է Սումգայիթյան ջարդերին , թերթի մարտի 5 –ի համարում ցավակցություն է հայտնվում զոհվածների ընտանիքներին Ադրբեջանի ԿԿ Գխ և Մինխորհի անուններից: Թերթում այս հարցի քննարկման համար հայտնվում է նոր խորագիր՝ «Բարեկամությունից և խաղաղությունից ավելի թանկ բան չկա» , ուր փաստերը խեղաթյուրվում են և հայտնվում է այն միտքը , որ Սումգայիթում և Կիրովաբադում տեղի ունեցած դեպքերը անհավասարակշիռ անչափահասների գործողություններն են՝ Ղարաբաղում թշնամիներ գտնելու համար[3]:

Հայերեն լեզվով լույս տեսնող «Կոմունիստ» թերթը , որը կատարում էր Ադրբեջանի կառավարության հրամանները , հիմնականում շարունակում է «Բաքվի աշխատավոր» թերթի բռնած դիրքը:

---

[1] Տե՛ս «Բաքվի աշխատավոր» , 1988 , փետրվարի 28:
[2] Տե՛ս նույնը , 1988 , մարտի 8:
[3] Տե՛ս նույնը , 1988 , մարտի 3:

«Գրականություն և արվեստ» թերթի 1988 թ. մարտի 4 –ի համարում միտք է հայտնվում , որ արդեն ինչքան ժամանակ է փորձ է արվում երկու ժողովուրդների միջև թշնամանք սերմանել և կոնֆլիկտ սանձազերծել[1]:

Բաքվի քաղկոմի և գործկոմի պաշտոնաթերթ «Բաքուն» Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցածը ներկայացնում է որպես թյուրիմացություն և լկտիաբար մեջ բերում ադրբեջանական ինտերնացիոնալիզմի փաստեր[2]:

Ադրբեջանի կառավարությունը շարունակելով հայաթափման քաղաքականությունը՝ 1988 թ. նոյեմբերին սկսեց Ադրբեջանի երկրորդ հայաշատ կենտրոնի՝ Կիրովաբադի (Բաքվից հետո) հայության ջարդը և բռնագաղթի սկիզբը: Վայրագությունները շարունակվեցին մինչև ամսվա վերջը: Նոյեմբերի 22 –ին Բաքվի հեռուստատեսության ուղիղ եթերով ցուցադրվեց Բաքվի միտինգը՝ հակախորհրդային , հակառուսական կոչերով , իսլամական խորհրդանիշով , որը ազդակ դարձավ Բաքվում , Նախիջևանում , Կիրովաբադում նոր զանգվածային անկարգությունների և մարդկային զոհերի համար: Իսկ նոյեմբերի 20 –ին Ա. Վեզիրովի հեռուստատեսային ելույթը կրկին ապացուցեց Ադրբեջանի ԿԿ թշնամական տրամադրվածության մասին[3]:

Հետաքրքիր է 1989 թ. հունիսին «Զնամյա» հանդեսում տպագրված ամերիկյան հայտնի ֆինանսիստ Ջորջ Սորոսի դիտողությունը «Գորբաչովի կոնցեպցիան» վերնագրով: Մեջբերենք . «Այնքան էլ իրականությունից կտրված չէ այն ենթադրությունը , որ հայկական առաջին ջարդերի սադրիչը Ադրբեջանում եղել է Ադրբեջանի ՊԱԿ –ի նախկին ղեկավար Հեյդար Ալիևի կողմից ղեկավարվող տեղական մաֆիան այն հաշվով որպեսզի անշահեկան իրադրություն ստեղծի Գորբաչովի համար»[4]:

Խորհրդային մամուլը շարունակում էր ինֆորմացիայի խեղաթյուրումը և հակահայկական տրամադրության ստեղծումը: 1989 թ. օգոստոսին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում հայտնվում է նոր խորագիր՝ «Ազգային հարց» , որի տակ հրապարակվում են հոդվածներ նվիրված «պրոբլեմի սոցիալական ,տնտեսական , պատմական , մշակութային և այլ կողմերին»: Օգոստոսի 5 –ի համարում նորաստեղծ խորագրի տակ առաջին հոդվածը հրատարակեց ոմն Ա. Մուրսալիևը , որը հավասարության նշան էր դրել զոհի և դահիճի միջև , իսկ ԼՂ շրջափակումը նրան չէր էլ հետաքրքրել[5]:

Ողջ 1990 թ. խորհրդային և ադրբեջանական մամուլի միջոցով ստեղծվեց «հայ մարտիկի» և «անմեղ Ադրբեջանի» կերպարը , մամուլում տպվում էր (1990 թ. սեպտեմբերի 3, «Պրավդա») , որ Երևանից իբր օդով զենք է ուղարկվում Ստեփանակերտ , ուստի Ադրբեջանի կառավարությունն էլ որոշել է կրճատել ավիաուղերթի թիվը: Սրա նպատակն էր փակել Հայաստան - ԼՂ օդային կապը :

1990թ. հոկտեմբերի 31 –ին ադրբեջանական «Վիշկա» օրաթերթում հրապարակվեց Ադրբեջանի ԿԿ II քարտուղար , ԼՂԻՄ-ում Ադրբեջանի կազմկոմիտեի նախագահ Վ.Պոլյանիչկոյի բաց նամակը՝ ուղղված խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի նախագահ, հայտնի քաղաքական մեկնաբան Հ. Բորովիկին: Պոլյանիչկոյի զայրույթն էր հարուցել Բորովիկի «Լեռնային Ղարաբա-

---

[1] Տե՛ս «Գրականություն և արվեստ» , 1988 , մարտի 4:
[2] Տե՛ս «Բաքու» , 1988 , մարտի 1-12:
[3] Карабахский вопрос: Истоки и сущность в документах и фактах , Степанакерт , 1989 , стр. 70:
[4] «Խորհրդային Հայաստան» , 1989 , օգոստոսի 20:
[5] Տե՛ս «Комсомольская правда» , 1989 , август 5:

դին իշխանության ընտրովի մարմիններ» հրապարակումը: Պոլյանիչկոն ԼՂ պրոբլեմը համարում է ԽՍՀՄ –ի կործանման սկիզբ[1]:

1991թ. մայիսին խորհրդային զորքերն ակտիվորեն օգնեցին ադրբեջանցիներին փոխել մարզի դեմոգրաֆիական պատկերը (Գետաշեն, Մարտունաշեն և այլն): 1991թ. մայիսի 25 - 31-ը ՀԽՍՀ և Ադրբեջան ժամանեցին միջազգային դիտորդներ Ք. Քոքսի գլխավորությամբ: Պատվիրակության զեկուցագրում ասվում է, որ Ադրբեջանի իշխանությունները կազմակերպում են նոր բռնագաղթ[2]:

1990թ. հունվարից սկսված հայ-ադրբեջանական զինված բախումները իսկական պատերազմական գործողությունների վերածվեցին Հայաստանի անկախության հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբեր): Պատերազմող կողմերի միջև բացառվեց որևէ քաղաքական առնչություն: Ինչ վերաբերում է հայ - թուրքական հարաբերություններին, մեջբերենք «Ֆիգարո » թերթի 1992 թ. մայիսին արված դիտողությունը .

«ԼՂ իրավիճակի վրա իսկողություն է սահմանվում Հայաստանի, ոչ թե Ադրբեջանի կողմից: Այդ իրավիճակում Թուրքիան բացահայտորեն գրավում է Բաքվի կողմը հայտարարելով, որ թույլ չի տա ուժի միջոցով ԼՂ կարգավիճակի փոփոխություն »[3]:

Թուրքիայի վարչապետ Դեմիրելը Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Մամեդովի հետ հեռախոսազրույցի ժամանակ հավաստիացրել է, որ Թուրքիան իր բոլոր ջանքերը կգործադրի միջազգային ուժերին «Հայ զավթիչների» դեմ ուղղելու համար[4]:

1992 թ. սեպտեմբերի 18 –ին թուրքական «Ջումուրիյեթ» թերթը «Հայ նախարարը հարձակվեց Թուրքիայի վրա» խորագրի տակ անդրադառնում է ՀՀ արտ. գործ. նախարար Ռ. Հովհաննիսյանի ելույթին Եվրոխորհրդի Ստամբուլում կայացած նիստում: Ելույթը վրդովմունք է առաջացրել Թուրքիայի կառավարող շրջաններում: Այս առիթով թերթը գրում է . «ՀՀ արտ. գործ.նախարարը իր ելույթում ծանր մեղադրանքներ ներկայացրեց Թուրքիային: Ստամբուլի մասին խոսելիս օգտագործեց Կ. Պոլիս անունը և օրակարգ մտցրեց «ցեղասպանության» հարցը: Թուրքիային մեղադրեց Եվրոխորհրդին Հայաստանի անդամակցությունը խափանելու մեջ»[5]:

Թուրքիան փորձել էր նաև խանգարել Հայաստանի անդամակցությանը ԵԱՀԽ –ին: Պետք է նկատել, որ Հայաստանը ,Վրաստանը և Ադրբեջանը ԵԽ –ին անդամակցել չէին կարող, քանի որ պատերազմի մեջ էին: Հաշվի առնելով ցեղասպանության ,ԼՂ ,Նախիջևանի հարցերը, Թուրքիան չէր դադարեցնում երկխոսությունը ՀՀ հետ, սակայն առանց էական փոփոխությունների: Հայաստանի և Թուրքիայի կողմից արվում էին միայն բանավոր հայտարարություններ: 1992 թ. մարտի կեսերին Երևան գործուղվեց Վ. Վուրալը:

Դրան հաջորդեցին թուրքական «Միլլիյեթ», «Հյուրրիյեթ», «Ջումհուրիյեթ», «Սաբահ» թերթերի թղթակիցների և հայտնի լրագրող Մ. Ա. Բիրանդի

---

[1] *Տե՛ս «Հայաստան», 1990. նոյեմբերի 17:*

[2] *Балиян Г.. Нагорный Карабах и национальные конфликты в Союзе в свете прав человека. серия книг N 1. Е. 1991:*

[3] *«Երկիր». 1992. մայիսի 12:*

[4] *«Անկախություն», 1992. մայիսի 12:*

[5] *Նորագույն պատմության արխիվ /այսուհետև ՆՊԱ/. ֆոնդ 326, ցուցակ 9., գործ 44, էջ 5:*

այցելությունները , որոնց հիմնական նպատակն էր պարզել արդյո՞ք Հայաստանը չի հրաժարվել Թուրքիայի հետ հարաբերությունները զարգացնելու մտադրությունից , պատրա՞ստ է Հայաստանը զիջումների գնալ պահանջատիրության և ցեղասպանության հարցերում , ինչպիսին է տեսնում Հայաստանը Արցախի հարցի վերջնական լուծումը: Մարտի 25 –ին թերթերի ուշադրության կենտրոնում էր գտնվում նախօրեին Հելսինկիում իր աշխատանքները սկսած ԵԱՀԽ կոնֆերանսը , ուր որոշվեց 1992 թ. ապրիլին Մինսկում հրավիրել միջազգային համաժողով՝ նվիրված ԼՂ –ին:

Թուրքական մամուլում պնդվում էր , որ ԼՂ պատերազմի երկարաձգմանը նպաստում է Ռուսաստանի և Իրանի ռազմական օգնությունը: Թուրք ազգայնականների առաջնորդ Թյուրքիշը չէր բացառում Թուրքիայի զինված միջամտությունը , նշելով , որ առայժմ նախապատվությունը տրվում է դիվանագիտությանը[1]:

Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությանը վերաբերող ցանկացած ինֆորմացիա Ադրբեջանի լրատվության ուշադրությունից դուրս չէր մնում , սակայն դրանք շարունակվում էին խեղաթյուրվել:

1992 – 1993 թթ. հայերի ռազմական աննախադեպ հաջողությունները և առաջխաղացումը լուրջ մտահոգություն էր Ադրբեջանի և Թուրքիայի համար: Քելբաջարի գրավման, Լաչինի հյուսիսային շրջաններում և Մարտակերտում հաջող ռազմական գործողությունների պատճառով Թուրքիան դադարեցրեց իր տարածքով Հայաստան անցնող հումանիտար օգնությունը: «Միլլիյեթ» թերթը տեղեկացնում է , որ Թուրքիայի ռազմա-օդային ուժերը գտնվում են պատրաստ վիճակում և հսկողություն է սահմանված Հայաստանի սահմանների վրա[2]:

ԼՂ ճակատում պատերազմի մասին ամենօրյա տեղեկություններ էին հայտնում ադրբեջանական «Թուրան» , «Ասսա-Իրա» և այլ գործակալությունները:

Խոսելով հայ – ռուսական հարաբերությունների մասին , ադրբեջանական թերթերն այն միտքն են հայտնում , որ հայ – ռուսական բարեկամությունը Ռուսաստանի կողմից տարածքային նվաճումների քաղաքականություն է[3]:

.Պատերազմի սկզբից հայկական ռազմական ուժերի փայլուն հաղթանակի շնորհիվ գրավվել էր 7,500 քկմ ադրբեջանական տարածք , որը կազմում էր Ադրբեջանի տարածքի 11,5% -ը:

Պատմական գիտությունների թեկնածու , դոցենտ Բ. Նազարովը, խոսելով տարածքային կորուստների , Վերին Ղարաբաղում ծավալված ռազմական գործողությունների մասին , «Արթնանալու ժամանակն է» հոդվածում հետևություն է անում , որ հայերը Ղարաբաղի հարցում ոչ մի համաձայնության չեն գա , որովհետև «Ղարաբաղի գաղափարի» համար շատ գոհ են տվել և հետադարձ ճանապարհ չունեն , հատկապես որ հայերի մոտ նկատվում է ռազմական հզորացում[4]:

Ողջ 1994 թ. ընթացքում մամուլի ուշադրության կենտրոնում էին գտնվում հայ - ադրբեջանական երկխոսությունները՝ հրադադարի կնքման ուղ-

---

[1] *ՆՊԱ , ֆոնդ 326 , ցուցակ 9 , գործ 44 , էջ 3:*
[2] *«Միլլիյեթ» , 1993 , ապրիլ 3:*
[3] *Տե՛ս «Ադրբեջան» , 1993 , մարտի 30:*
[4] *ՀՀ Արտաքին գործերի նախարարություն , ԱՊՀ երկրների վարչություն, Անդրկովկասի երկրների բաժին , գործ 128 , էջ 85:*

ղությամբ: Սակայն Ադրբեջանը չէր պատրաստվում զիջումների գնալ: Ռուսաստանի կողմից մեծ աշխատանքներ տարվեցին հրադադարի կնքման ուղղությամբ , որը ստորագրվեց 1994 թ. փետրվարի 8 –ին:

1994 թ. մարտի սկզբին Մոսկվայում տեղի ունեցավ մամլո ասուլիս Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչ Ռիզաևի կողմից: Թեման էր . «ԼՂ: Իրավիճակը 1994 թ. փետրվարի 8 –ի հրադադարից հետո»: Ռիզաևը խոսելով Ղարաբաղի պատերազմի առաջացման մասին հայտարարեց , որ պատերազմը փաստորեն սկսվեց ԼՂ –ից 50 հազար ադրբեջանցիների զանգվածային տեղահանության հետևանքով: Հայտնեց , որ շարունակվում է ադրբեջանական հողերից ադրբեջանցիների տեղահանությունը և գրավված է Ադրբեջանի տարածքի 20% -ը[1]:

Ըստ նրա հայերի դիմումները համաշխարհային հասարակությանը բանակցություններ սկսելու համար , ընդամենը տակտիկական քայլ է , այնինչ փետրվարի 8 –ի հրադադարը , ըստ նրա , խախտվել է հենց հայկական կողմից: Ըստ նրա հայկական կողմը այն կնքել է միայն Ռուսաստանի ներգործությամբ[2]:

Արցախում ռազմական գործողությունները վերջնականապես դադարեցվեցին 1994 թ. մայիսի 12 –ին ՀՀ , Ադրբեջանի և ԼՂՀ պաշտպանության նախարարությունների կողմից ստորագրված զինադադարի համաձայնագրով՝ ՌԴ և ԵԱՀԽ Մինսկի խմբի միջնորդությամբ:

Այսպիսով , ադրբեջանական լրատվամիջոցները , որոնք առանց բացառությունների 1988 – 1994 թթ. եղել են բացահայտ հակահայկական , Արցախ - Ադրբեջան կոնֆլիկտի առաջին փուլում նպաստեցին ադրբեջանցի ժողովրդի ապակողմնորոշմանը և ավելի շատ զանգվածների միավորմանը հակահայկական արշավին: Իսկ Արցախի պատերազմի ժամանակ , երբ հռչակվել էր նաև Հայաստանի անկախությունը և Ադրբեջանը պարտություն էր կրում ., ապատեղեկատվության միջոցով փորձ էր արվում միջազգային ճնշում գործադրել ՀՀ և ԼՂՀ վրա:

Իսկ Թուրքիան ի սկզբանե իր լրատվամիջոցները և արտաքին քաղաքականությունը օգտագործեց ի նպաստ Ադրբեջանի: .

---

[1] *ՀՀ Արտաքին գործերի նախարարություն , գործ 129 , էջ 33:*
[2] *Նույնը ,էջ 33:*

ՎԱՀԵ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵԱՀԽ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 1992 ԹՎԱԿԱՆԻՆ

1991 թվականի դեկտմբերի 31-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարը Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովին (1995-ից՝ Կազմակերպություն) անդամակցելու դիմում ուղղեց կազմակերպության նախագահող, Գերմանիայի արտգործնախարար Գենշերին: Հունվարի 8-9-ին տեղի ունեցած ԵԱՀԽ-ի Ավագ պաշտոնյաների ժողովի ընթացքում քննարկվեցին խորհուրդ հրավիրելու մանրամասները և նախկին ԽՍՀՄ տաս հանրապետությունների դիմումները:

ԵԱՀԽ-ը դրել էր հետևյալ նախապայմանները.Հելսինկիի 1975 թ-ի եզրափակիչ ակտի, Փարիզի Խարտիայի ընդունում, Եվրոպայում Սովորական Սպառազինությունների մասին պայմանագրի տվյալ երկրների կողմից վավերացում:

Հունվարի 27-ին ժամանելով Պրագա՝ ՀՀ պատվիրակությունը տեղեկանում է, որ Թուրքիան սպառնում է վետո կիրառել ընդդեմ Հայաստանի անդամակցության: Համաձայն ԵԱՀԽ կանոնադրության, կազմակերպության անդամ հանդիսացող պետությանը իրավունք է վերապահվում մերժել այս կամ այն պետության անդամակցումը կազմակերպությանը, և Թուրքիան, որպես անդամ-պետություն, սպառնում էր կիրառել այն Հայաստանի պարագայում: Թուրքիան Հայաստանից պահանջում էր. նախ հաստատել սահմանների անձեռնմխելիությունը և վավերացնել Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը, երկրորդ չհովանավորել ահաբեկչությունը և օգնություն չցուցաբերել այնպիսի կազմակերպությունների, որոնք պայքարում են տարածքային պահանջների համար, երրորդ՝ Հայաստանը պետք է ընդուներ իրավական ակտեր, որոնցով կբացառվեր ռասայական, կրոնական, էթնիկական թշնամանքը ինչպես Հայաստանում, այնպես էլ ԵԱՀԽ մյուս պետությունների նկատմամբ: Թուրքական պատվիրակությունը պահանջում էր ներկայացնել գրավոր փաստաթուղթ: Վեճի հարթման գործում միջնորդի դերը ստանձնեց Միացյալ Նահանգների պատվիրակությունը, քանի որ այլապես առաջ էր գալիս մնացած ինը նորանկախ պետությունների անդամակցության հարցը[1]:

Հայկական պատվիրակությունը հրաժարվեց ընդունել այդ պահանջները[2]: Մատնանշվեց 1991թ. հոկտեմբերին Լ.Տեր-Պետրոսյանի արած հայտարարությունն այն մասին, որ Հայաստանը ցանկանում է բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ առանց որևէ նախապայմանի, ինչպես նաև նշվեց, որ Հայաստանի և Թուրքիայի միջև իրոք կան հարթվելիք հարցեր, և հայկական պատվիրակությունը պատրաստ է քննարկելու թուրքական կողմի բարձրացրած հարցերը ԵԱՀԽ-ի սկզբունքներին համաձայն՝ երկկողմանի բանակցությունների ըն-

---

[1] *Ազգ. 1992. փետրվար12:*

[2] *Hovannisian. Richard R. Historical Memory and Foreign Relations: The Armenian Perspective. (The International Politics of Eurasia. vol. I. The Legacy of History of Russia and the New States of Eurasia), London, 1994.p.253.*

թացքում[1]: Եվ եթե Թուրքիան ցանկանում է էքսկուրս կատարել դեպի 1921թ. Կարսի և Մոսկվայի պայմանագրերը, ապա նա պետք է նաև պատրաստ լինի շոշափել 1915թ. խնդիրները[2]: Թուրքիան, հանդիպելով այսպիսի դիրքորոշման, հրաժարվեց իր պահանջից և Հայաստանը դարձավ ԵԱՀԽ-ի անդամ[3]:

Փետրվարի 27-28-ին Հելսինկիում կայացավ ԵԱՀԽ Խորհրդի նիստ, որի ընդունած որոշմամբ միջազգայնացվում էր մարդու իրավունքների խնդիրը. արցախահայության, որպես ազգային փոքրամասնություն, իրավունքի հարցը: Ըստ Շավարշ Քոչարյանի, դա նշանակում էր, որ միջազգային հանրությունը ինչ-որ երաշխիքներ պետք է տար, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մնա Ադրբեջանի կազմում մշակութային ինքնավարության կարգավիճակով: Դրան փաստորեն նպաստեց ՀՀ ղեկավարության դիրքորոշումը: Դա է փաստում փետրվարի 28-ի բանաձևը, որը ընդունվել է կոնսենսուսի սկզբունքով, այսինքն ՀՀ ներկայացուցիչը այս հարցում չի օգտվել իր վետոյի իրավունքից: Այդ բանաձևից երևում է այն միտումը, թե ԼՂՀ-ն պետք է մնա Ադրբեջանի կազմում: Ժողովրդի ինքնորոշման հարցը արհեստականորեն հակադրվում է ազգային փոքրամասնության խնդրին[4]: Ըստ Հայաստանի պատվիրակության ղեկավար Քրիստիան Տեր-Ստեփանյանի, Հայաստանը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, որ Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջ չունի: Հայաստանը գտնում էր, որ այս հարցի վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է կայացվեր բանավեճի արդյունքում՝ ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև[5]: Փետրվարի 28-ի փաստաթուղթը ցույց է տալիս, թե ինչպես է միջազգային հանրությունը ընդունում Լեռնային Ղարաբաղի հարցը և իր մեջ պարունակում է երկու փաստի շարադրում.

- ԼՂՀ-ի Ադրբեջանի կազմում լինելը քանի դեռ ԵԱՀԽ-ի անդամ երկրները չեն ընդունել ԼՂՀ-ի անկախությունը,

- Փաստաթուղթը ԵԱՀԽ երկրների կողմից ԼՂՀ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն է[6]:

Փետրվարի 28-ի փաստաթուղթը հիմք հանդիսացավ ԵԱՀԽ հետագա որոշումների համար: Մարտի 24-ին Հելսինկիում կայացած ԵԱՀԽ Խորհրդի Արտակարգ նիստը ընդունեց ինը կետից բաղկացած մի փաստաթուղթ, որով էլ սահմանվեցին մինչև այսօր վարվող բանակցությունների կանոնները: Նախատեսվում էր անցկացնել բանակցությունների երկու փուլ.

Առաջինը պետք է զբաղվեր զինադադարի կնքման, «գրավյալ տարածքներից» զորքերի դուրսբերման և հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հարցերով,

Երկրորդը կայանալու էր Մինսկում՝ որպես խորհրդաժողով, իր օրակարգում ունենալով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը (այս խորհրդաժողովը տակավին չի գումարվել)[7]:

---

[1] *Ազգ. 1992. փետրվար 12:*
[2] *Hovannisian, R.. op. cit., p. 253.*
[3] *Ազգ. 1992, փետրվար 12:*
[4] *Ազգ, 1992. մայիսի 16:*
[5] *Ազգ. 1992. մարտ 4:*
[6] *Ազգ, 1992, մայիս.16:*
[7] *Այվազյան Ա., Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Ե., 1998, էջ 40:*

Հելսինկյան խորհրդակցությունը ոչ բարենպաստ ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի և Հայաստանի Հանրապետության համար: Առաջինը ելույթ ունենալով եզրափակիչ նիստին՝ Ադրբեջանի արտգործնախարար Սալամովը Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի համար մեղադրեց ԵԱՀԽ-ին, որը, իր խոսքերով, կրավորականություն էր դրսևորել և անտարբեր էր մնացել հայերի ագրեսիայի նկատմամբ: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց հատկապես 1989թ դեկտեմբերի 1-ին Գերագույն Խորհրդի ընդունած որոշման վրա և նշեց, որ այդ որոշումը դեռևս ուժի մեջ է մնում հայկական կողմի համար: Սալամովը պահանջել էր, որ Ղարաբաղի պատվիրակության կազմում հայերի հետ հավասար բանակցություններին մասնակցեն Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիների ներկայացուցիչները[1]: Ղարաբաղը ճանաչվեց «շահագրգիռ կողմ» և մարտի 24-ի փաստաթղթում ԼՂ իշխանությունները անվանված են «ԼՂ ընտրված ներկայացուցիչներ»: Ղարաբաղի ադրբեջանցիները պետք է մասնակցեին բանակցություններին «ԼՂ այլ ներկայացուցիչներ» անվան տակ, թեև սրանց մասնակցությունը բանակցություններին երբեք լուրջ չի ընդունվել[2]:

1992թ. առաջին կեսին Հայաստանի անփորձ դիվանագիտությունը որպես բանակցությունների հիմք ընդունեց ԵԱՀԽ Մինսկի Խմբի հապշտապ և կողմնակալ կերպով կազմված օրակարգը: Հատկապես մեծ սխալ էր Հայաստանի տված համաձայնությունը Մինսկի Խմբի աշխատանքային կանոնադրության երկու կետերին. մի կողմից՝ Թուրքիային որպես միջնորդ ընդունելը, մյուս կողմից՝ Ղարաբաղին հակամարտության՝ իրական կողմ չճանաչելը[3]:

Տարածքային անձեռնմխելիության և ինքնորոշման սկզբունքների նկատմամբ ԵԱՀԽ դիրքորոշումը պարզ է արտահայտում ԵԱՀԽ Ազգային փոքրամասնությունների հարցով Գլխավոր Պատասխանատու վան Դեր Սթուլը. «Ազգային տարածայնությունների լուծումը պետք է փնտրել գոյություն ունեցող պետության շրջանակներում: Որտեղ էլ գծված լինի սահմանը, այնտեղ ամենայն հավանականությամբ կգտնվեն կողք-կողքի ապրող ազգային խմբեր: Նրանք պետք է սովորեն ապրել ներդաշնակ: Ամեն առանձին ազգային խմբի համար առանձին ինքնիշխանությունը չի կարող դեղատոմս լինել, ընդհակառակը՝ դա կարող է հանգեցնել ավելի լայնածավալ ազգամիջյան անհամաձայնության և տարածաշրջանային անհավասարակշռության»[4]:

Մայիսի 18-25-ը Հելսինկիում կայացած ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների ժողովի լիագումար նիստի ժամանակ, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շահարկվում էր հայերի կողմից Շուշիի գրավման փաստը: Մեհտիևը հայտարարեց, որ եթե Հայաստանը չճանաչվի որպես ագրեսոր պետություն, ապա Ադրբեջանը կբարձրացնի Մինսկի խորհրդաժողովին իր մասնակցության հարցը: Նրանց հիմնական միտքն այն էր, որ հակամարտությունը փոխել է իր բնույթը, և խնդիրն այժմ վերաբերում է ոչ թե Լեռնային Ղարաբաղին, այլ՝ Ադրբեջան-Հայաստան հակամարտությանը, որն էլ պետք է դառնա քննարկման առարկա: Ուժեղ հակահայ-

---

[1] *Ազգ, 1992, մարտ 28:*
[2] *Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 40:*
[3] *Նույն տեղում, էջ 41:*
[4] *Flynn Gregory and Farrell Henry. Piecing Together the Democratic Piece: The CSCE, Norms, and the " Construction " of Security in Post-Cold War Europe. (International Organizations 53. 3, Summer 1999. pp. 515-535). Cambridge, Mass., p. 527.*

կական ելույթներ ունեցան հատկապես Մեծ Բրիտանիան ու Գերմանիան: Միակ զսպող դերը կատարում էին Ֆրանսիան և Հունաստանը: Ադրբեջանի ներկայացուցիչը ասաց, թե հայերը Լաչինը վերցրել են, ուստի պետք է դատապարտել Հայաստանին: Հայաստանի ներկայացուցիչները բացատրեցին, որ բացվել է մարդասիրական միջանցք: Նշվեց, որ Հայաստանը չի ընդունում հակամարտության բնույթի փոփոխումը: Հայտարարվեց, որ տարածքային ամբողջականության հարցի հետ մեկտեղ պետք է բարձրացվի նաև ազգերի ինքնորոշման հարցը, իսկ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է առաջնակարգ տեղ գրավի: Որպես բանակցություններին մասնակցելու նախապայման, ինչպես դա պարզ երևաց Հռոմի բանակցությունների առաջին փուլի ընթացքում՝ հունիսի 1-5-ին, Ադրբեջանը պահանջում էր, որ հայկական զորքերը նախ դուրս հանվեին Լաչինից ու Շուշիից: Առաջին փուլը դիտվում էր որպես շատ կարևոր և որոշիչ փուլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԽ համաժողովից առաջ, որը նախատեսվում էր գումարել Մինսկում հունիսի 23-ին:

Բանակցությունների առաջին փուլին հրավիրվել էին Լեռնային Ղարաբաղի հայկական և ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները, այսինքն՝ "ԼՂ ընտրված ներկայացուցիչները" և "ԼՂ վտարանդի ադրբեջանցիների ներկայացուցիչները": Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը այդպես էլ չներկայացավ, քանի որ համաձայն չէր ոչ լիիրավ մասնակցի կարգավիճակին Մինսկի խորհրդաժողովում, որի դեպքում զրկվում էր որոշումների վրա ազդելու հնարավորությունից[1]: Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները հրաժարվեցին մասնակցել նաև այն պատճառով, որ Մինսկի խումբը Շուշիի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչներին ճանաչում էր որպես «ԼՂ այլ ներկայացուցիչներ»[2]:

Հռոմի հանդիպման երկրորդ փուլում այն նույն պետությունները, որոնք մեկ ամիս առաջ Շուշիի և Լաչինի գործողությունների պատճառով դատապարտում էին Հայաստանին, Ադրբեջանի նկատմամբ նույնպիսի քայլեր չկատարեցին[3]: Մինսկի խումբը առաջարկեց 11 կետից բաղկացած խաղաղ համաձայնություն-առաջարկ, որով պահանջում էր, որ հայկական ու ադրբեջանական ուժերը միաժամանակ դուրս գան Շուշիից, Լաչինից, Շահումյանից և Մարտակերտից: Միայն այս քայլից հետո էր փաստաթուղթը նախատեսում փախստականների կամավոր վերադարձ նախկին բնակության վայրերը: Փաստաթուղթը ստորագրվեց Մինսկի խմբի բոլոր անդամների կողմից, բացառությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի[4]:

Հռոմի հանդիպումը պետք է քննարկեր ինչպես Շուշիի ու Լաչինի, այնպես էլ Շահումյանի և Մարտակերտի իրադարձություններից հետո ստեղծված իրավիճակը, սակայն Թուրքիան ու Ադրբեջանը շարունակում էին Լաչինի հարցն առաջնահերթ համարել և պնդում էին, որ Շահումյանի և Մարտակերտի հարցերը քննարկվեն միայն Լաչինի հարցի քննարկումից հետո (ի դեպ սա նաև Իտալիայի նախագահության դիրքորոշումն էր): Թուրքիան ու Ադրբեջանը վետո դրեցին մասնակիցների կողմից Ռաֆայելլիին ուղղված այն առաջարկության վրա, ըստ որի նա պետք է կրակի դադարեցման կոչով դիմեր Հայաստանի, Լեռնային Ղարաբա-

---

[1] *Ազգ, 1992, մայիս 27:*

[2] *Balanian Peter, Khajagian Gourgen. From Shushi to Rome. A Chronicle. Armenian International Magazine. August/ September. 1992, AIM Inc., Glendale, CA, p. 22.*

[3]*Ազգ, 1992, հունիս 25:*

[4] *Balanian Peter, Khajagian Gourgen, , op. cit., p. 22.*

ղի և Ադրբեջանի իշխանություններին[1]: Թուրքիան ընդդիմացավ Ռուսաստանի Դաշնության այն առաջարկին, ըստ որի վերջինս հավակնում էր լինել Արցախում կրակի դադարեցման նախաձեռնողը: Հայաստանի պատվիրակությունը նախընտրում էր հանդես չգալ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների անունից, քանի որ Արցախի ներկայացուցիչների բացակայությունը հանգեցնում էր նրան, որ Մինսկի խմբի երկրների ներկայացուցիչները նույնացնում էին Ղարաբաղը և Հայաստանը և վերջինիս մեղադրում այն բանի համար, որ օգտվելով Լեռնային Ղարաբաղի բացակայությունից, խուսափում է շոշափել որոշակի հարցեր[2]:

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղը ամեն գնով պետք է ձգտեր մասնակցել կարգավորման գործընթացին, ներառյալ Մինսկի խորհրդաժողովը նախապատրաստող աշխատանքներին: Ըստ նրա, Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը պետք է գործեին հետևյալ կերպ. նախ հասնեին կրակի դադարեցմանն ամեն գնով, և ապա՝ գործեին Լեռնային Ղարաբաղի համար որևիցե կոնկրետ կարգավիճակ ձեռք բերելու ուղղությամբ, այլապես Հայաստանն ու ԼՂՀ-ն վերջին հաշվով հաղթած դուրս չէին գա[3]:

Երկար բանակցություններից և Ղարաբաղում ծավալված ներքաղաքական պայքարից հետո ԼՂՀ իշխանությունները որոշեցին մասնակցել Մինսկի խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքներին և հուլիսի 1-ին Հռոմ մեկնեցին ԼՂՀ փոխվարչապետ Բ.Առուշանյանը, պատգամավորներ Ռոբերտ Քոչարյանը և Հրանտ Խաչատրյանը[4]:

Մինսկի խմբի երրորդ հանդիպման ժամանակ, հունիսի 29-ից հուլիսի 8-ը, որը համընկավ Մարտակերտի վրա ուժգին հարձակման հետ, հակամարտող երկու կողմերը Հայաստանն ու Ադրբեջանը, մերժեցին Խմբի առաջարկը դադարեցնել ռազմական գործողությունները 30 օրով: Ադրբեջանը, կրելով ժամանակավոր հաջողություններ, հույս ուներ մինչև Մինսկի հորիրդաժողովի գումարումը հասնել տարածքային առավելության: Հայկական պատվիրակությունը պահանջեց Ադրբեջանի ագրեսիայի «պաշտոնական դատապարտում» և, արդյունքի չհասնելով, լքեց խորհրդակցությունը:

Հուլիսի 9-10-ը Հելսինկիում կայացած ԵԱՀԽ անդամ պետությունների ղեկավարների հանդիպման ընթացքում, որտեղ քննարկվում էր Ղարաբաղում իրավիճակի բարդացման հարցը, ԵԱՀԽ անդամ պետությունների ղեկավարները չկարողացան մշակել որևէ հայտարարություն, որը հակամարտ կողմերին կդիմեր կրակը դադարեցնելու կոչով: Խորհրդակցության մասնակիցները չկարողացան անգամ գալ ընդանուր կարծիքի, թե ինչպես պետք է փաստաթղթում անվանվեր Լեռնային Ղարաբաղը[5]:

Խոսելով Ադրբեջանի և Հայաստանի հրադադարի մասին, հայկական կողմը նկատի ուներ բացառապես հայ-ադրբեջանական սահմանը չհավակնելով խոսել Լեռնային Ղարաբաղի իշխանությունների անունից: Որպես հրադադարի ստո-

---

[1] *Голос Армении. 1992, 26 июнь.*
[2] *Նույն. 1992, հունիս 25:*
[3] *Голос Армении. 1992, 23 июль.*
[4] *Там же.*
[5] *Минаев В. Г., Карабахский Конфликт в Контексте Международных Отношений. Армения Проблемы Независимого Развития. Российский Институт Стратегических Исследований. Москва. 1998, стр. 506.*

րագրման նախապայման Ադրբեջանը պահանջում էր, որ հայկական զորքերը ազատեն Լաչինն ու Շուշին և հեռանան Լեռնային Ղարաբաղից[1]:

Կողմերի ավելի անզիջում դառնալու և ռազմական իրադրության սրման հետևանքով ԵԱՀԽ գործընթացում սառեցման միտում նկատվեց հետագա օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, և դրական որևէ արդյունք չարձանագրվեց կողմերի բացարձակ հակադրության պատճառով[2]: Սեպտեմբերի 19-ին Սոչիում Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ստորագրված հրադադարը Հայաստանի ու Ադրբեջանի պաշտպանության նախարարների միջև անակնկալ էր բազմաթիվ դիտորդների համար: Կողմերը պարտավորվում էին սեպտեմբերի 25-ից դադարեցնել ռազմական գործողությունները[3]: Զինադադարի համաձայնությունը Գրաչովի ղեկավարած ՌԴ պաշտպանության գերատեսչության վճռական գործողությունների արդյունքն էր, որը հակամարտող կողմերին ներկայացրեց խնդրի լուծման սեփական նախագիծը: 1992 թ. մայիսին ՌԴ ԱԳՆ-ին կից Լեռնային Ղարաբաղի խնդրով դիվանագիտական աշխատանները կոորդինացնելու նպատակով ստեղծված Միջնորդական առաքելության ղեկավար, դիվանագետ Վ.Կազիմիրովը դիտավորյալ դուրս թողնվեց բանակցություններից[4]: Զինադադարը ուժի մեջ էր մտնելու սեպտեմբերի 25-ից: Համաձայնությամբ նախատեսվում էր երկամսյա զինադադարի հաստատում, մի շարք ռազմա-տեխնիկական բնույթի միջոցառումներ, ներառյալ զորքերի և զրահատեխնիկայի, համապատասխանաբար 5 և 20 կմ ետքաշում և այլն: Համաձայն սեպտեմբերի 25-ին Մոսկվայում Առչիի համաձայնության շրջանակներում ստորագրված հատուկ արձանագրության, նույն օրը, հակամարտության գոտում դիտորդություն կատարելու նպատակով, Ռուսաստանից Հայաստան ուղարկվեցին 50 ռազմական դիտորդներ:

Մոսկովյան արձանագրությունը չիրագործվեց, քանի որ Ղազախստանի, Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի դիտորդները, որոնք պետք է վերահսկեին ԼՂՀ-ի և հայ-ադրբեջանական սահմանի իրենց հատվածները, տարբեր պատրվակներով և պատճառներով այդպես էլ չժամանեցին[5]: Հոկտեմբերի 3-ին, նշված օրը, ԱՊՀ անդամ-պետություններից իրենց դիրքերում էին միայն Ռուսաստանի զինվորական դիտորդները[6]: Սրանք ստիպված ետ մեկնեցին մի քանի շաբաթ անց: Ադրբեջանի ղեկավարությունը դեռևս չէր գիտակցում ռազմաճակատի իրադրության փոփոխումը[7]: Ավելին, Ադրբեջանը հոկտեմբերի 7-ին վերջնականապես խզեց կապերը ԱՊՀ-ի հետ, երբ ադրբեջանական միլլի մեջլիսը որոշում ընդունեց չանդամակցել ԱՊՀ-ին[8]:

Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունները հավասարակշռելու քաղաքականությունը՝ նույնանման «կառուցվածքային կախվածության» առկայությունը, հանգեցրեց այնպիսի մի ռազմաքաղաքական միջավայրի ստեղծման, որը, չնայած տվյալ ժամանակահատվածում Անդրկովկասում Ռուսաստանի դիր-

---

[1] *Ազգ, 1992, օգոստոս 27:*

[2] *Митяев, Ук. Соч., стр. 506.*

[3] *Там же, стр. 504-505.*

[4] *Suny Ronald G. and Latin David D., Armenia and Azerbaijan: Thinking a Way Out of Karabakh - (Middle East Policy Journal, vol. VII, N.1, oct.1999), p: 159. Հոդվածը զետեղված է նաև ինտերնետում (տես http://www.mepc.org/journal/9910_laitinsuny.html):*

[5] *Голос Армении, 1992, 6 октября.*

[6] *Голос Армении, 1992, 9 октября.*

[7] *Митяев, Ук. Соч., стр. 505.*

[8] *Голос Армении, 1992, 9 ноября.*

քերի հարաբերական անկայունությանը, Ռուսաստանին ընձեռեց ԼՂ խնդրում առաջատար դեր խաղալու հնարավորություն: «Կրասնայա Զվեզդա» թերթին տված հարցազրույցում Գրաչովը անկեղծորեն նշել է, թե դեռևս մի քանի ամիս առաջ էր կանխատեսում, որ ռազմական հյուծվածությունը և պահեստամասերի ու ռազմամթերքի կարիքը կողմերին կստիպեն վերսկսել բանակցությունները, որոնցում Ռուսաստանը գլխավոր դեր էր խաղալու[1]:

[1] *Mesbahi Mohiaddin. Russia and the Geopolitics of the Muslim South.Central Asia and the Caucasus after the Soviet Union: domestic and international dynamics. 1994, University Press of Florida, pp. 302-303.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ժ., ՄԱՐԳԱՐՅԱՆ Հ.
ЭРЕБУНИЙСКИЙ РИТОН СО ВСАДНИКОМ 3

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. Ռ. ՌԱՆՈՎԻՉԻ «ՀԵԼԼԵՆԻԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐԾԱՐԾՎՈՂ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 13

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ
ՀԱՅՈՑ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ (10-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 22

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ (X – XIVԴԴ.) 29

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1813-1823pp 40

ՍԵՐԳԵՅ ՍԻՆԱՍՅԱՆ
УЧАСТИЕ АРМЯН ДЖАВАХКА В КРЫМСКОЙ ВОЙНЕ 1853-1856ГГ. 49

ԱՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ /19-ՐԴ ԴԱՐ/ 56

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 60

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ
Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱԿԵՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ /1890-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐ/ 72

ԼԻԼԻԹ ԱՍՈՅԱՆ
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 1897Թ. ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ 79

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԱՄԱՍԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 20 ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 86

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ
ԱՍՈՐԻՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 90

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 94

ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 100

ՄԱՐԻԱՄ ԴԵՎՈՐԳՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ (1912-1914 pp.) 108

ԼՈՒՍԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԱՂԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 113

ՄԱՆՈՒԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 118

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1914-1916թթ.) 123

ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՄԵԾ ԵՂԵՌՆԸ «ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ /1915-1916ԹԹ./ 129

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1918-1920ԹԹ.) 136

ԱՆՈՒՇ ՍԿՐՏՉՅԱՆ
ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2-ՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..145

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ
/ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ/ 149

ՍԱՍՈՒՆ ՔԱՌՅԱՆ
1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 158

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 166

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ /1941-2001ԹԹ./ 175

ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
1952 թ. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂՊՏԻՆԵՐԸ 181

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԼՂԻՄ-Ը ՀԽՍՀ-ԻՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ (1923-1988թթ.) ..190

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ /1988Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ/ 200

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ 1988-1994 ԹԹ. 212

ՎԱՀԵ ԻՍԱՀԱԿՅԱՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԸՆԹԱՑՔԸ ԵԱՀԽ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 1992 ԹՎԱԿԱՆԻՆ 220

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220090558